ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բուհական ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 2005

Գիրքը որպես ուսումնական ձեռնարկ տպագրության է երաշխավորել
Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի գիտխորհուրդը

ԴԿՀ 911.3 (479.25)(075)
ԳՄԴ 65.9 (2Հ)04 g73
Մ 539

Մասնագետ խմբագիր՝ աշխարհագրագետ, պրոֆեսոր **Յու. Ամիրջանյան**
Գրախոս խմբագիր՝ աշխ. գիտ. թեկնածու դոցենտ **Գ. Միքայելյան**

Մելքումյան Սերգեյ
Մ 539 **Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն.** – Եր.: Զանգակ – 97, 2005. – 448 էջ

Մ $\frac{1805060000}{0003(01)2000}$ 2005 թ. ԳՄԴ 65.9 (2Հ)04 g 73

ISBN 99930–2–135–0

© «Զանգակ – 97»
© Ս. Մելքումյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Տնտեսական աշխարհագրությունը» տնտեսագիտական բուհերի բոլոր մասնագիտությունների համար կարևորագույն առարկաներից մեկն է համարվում: Դեռ ավելին, այն ապագա տնտեսագետների համար համընդհանուր մասնագիտական առարկա է: Խնդիրը կայանում է նրանում, որ անհնար է լիարժեք տնտեսագետ–մասնագետ դառնալ առանց բազմակողմանի պատկերացում ունենալու բնական պայմանների ու ռեսուրսների տնտեսական գնահատման, դրանց վերարտադրության, հումքային ռեսուրսների խնայողաբար, նպատակային, համալիր օգտագործման ժամանակակից հիմնահարցերի մասին: Տնտեսագետ–ուսանողը պետք է գիտելիքներ ունենա նաև բնակչության և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունների, սկզբունքների, արտադրության ճյուղերի կառուցվածքի, ամբողջ տնտեսության համակարգի, շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերի մասին: Ահա այս ոչ լրիվ թվարկված հարցերի մասին պատկերացում է տալիս «Տնտեսական աշխարհագրություն» դասընթացը: Նրա բաղկացուցիչ մասն է կազմում «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրությունը», որին էլ նվիրված է սույն ուսումնական ձեռնարկը:

Ձեռնարկը կազմվել է հաշվի առնելով ՀՀ և ԼՂՀ տնտեսության համակարգում 1990–ական թվականների սկզբներից տեղի ունեցած արմատական փոփոխությունները, սեփականաշնորհման քաղաքականության հետևանքները, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզման հետևանքով դրանց արտաքին տնտեսական կապերի համակարգում տեղի ունեցած փոփոխությունները:

ՀՀ և ԼՂՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման խնդիրները քննարկված են նաև ըստ նոր վարչական կառուցվածքի:

Բացի տնտեսագիտական բուհերի ուսանողներից, գիրքն օգտակար կլինի նաև աշխարհագրական և էկոլոգիական ֆակուլտետների ու մասնագիտությունների ուսանողների, ինչպես նաև դասախոսների, պետական, տնտեսական մարմինների, գիտական, նախագծային կազմակերպությունների աշխատողների համար: Այն օգտակար կլինի նաև հանրակրթական դպրոցների աշակերտների, միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների, ինչպես նաև ուսուցիչների, ընթերցող լայն հասարակության համար:

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՏԱՐԱԾՔԸ, ԴԻՐՔԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ : Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքը 29,8 հազ. կմ^2 է: Այն կազմում է պատմական Հայաստանի կամ Մեծ Հայքի տարածքի (որն ուներ ավելի քան 300 հազ. կմ^2 տարածք) շուրջ 1/10 մասը միայն: Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է հյուսիսային լայնության 38,5 և 41,18 աստիճանների ու արևելյան երկայնության 43,3 և 46,37 աստիճանների միջև: Հազարամյակների բարդ պատմություն ունեցող հայ ժողովուրդն իր երկրի աշխարհագրական յուրատիպ դիրքի պատճառով ստիպված է եղել անդադար ազատագրական պայքար մղել ռազմատենչ ցեղերի ու հզոր, նվաճող պետությունների դեմ, որի հետևանքով նա կորցրել է իր տարածքի 90 տոկոսը: Այսպիսով՝ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի միայն հյուսիսարևելյան փոքր մասը: Հյուսիսային մասում այն սահմանակից է Վրաստանին (որի հետ սահմանագծի երկարությունը 196 կմ է), նրա արևելյան մասում գտնվում է 1991 թ. սեպտեմբերի 2–ին անկախություն հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հյուսիսարևելյան մասում սահմանակից է Ադրբեջանին, հարավային մասում՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը (որը մնում է բռնակցված Ադրբեջանին): Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության սահմանագծի երկարությունը (Վարդենիսի լեռնաշղթայի Մարալ լեռնագագաթի մոտակայքից մինչև Արաքսի հովիտ) կազմում է շուրջ 290 կմ:

Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանագծի երկարությունը 220 կմ է: Նախիջևանի ԻՀ հետ Հայաստանի Հանրապետության սահմանագծի երկարությունը 195 կմ է:

Հարավային և հարավարևմտյան մասում Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է Թուրքիային (որի հետ սահմանագիծը 280 կմ է), իսկ հարավարևելյան մասում՝ Իրանին (որի հետ սահմանագիծը 42 կմ է):

Հանրապետության սահմանագծի ընդհանուր երկարությունը կազմում է 1431 կմ: Սակայն Հայաստանի Հանրապետության աշխարհագրական, հատկապես աշխարհաքաղաքական դիրքը տրանսպորտային, արտաքին տնտեսական կապերի զարգացման առումներով ներկայումս այնքան էլ նպաստավոր չեն: Աշխարհագրական դիրքի հետ կապված տրանսպորտատնտեսական կապերի դժվարությունները Թուրքիայի հետ բարդացել են թուրքերի կողմից՝ 1,5 մլն հայերի ցեղասպանության և Արևմտյան Հայաստանի զավթման կապակցությամբ, իսկ Ադրբեջանի հետ՝ Արցախի ազատագրական պատերազմի (1988–1994 թթ.) ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման կապակցությամբ:

Հանրապետության աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն ծովերից բավականին հեռու է, որը բացասական ազդեցություն է թողնում նաև կլիմայական պայմանների առումով: Կասպից ծովից Հայաստանի Հանրապետության սահմանագիծը հեռու է 193, Սև ծովից՝ 163, Միջերկրական ծովից 750, Պարսից ծոցից՝ շուրջ 1000 կմ:

Հայաստանի Հանրապետության ամենամեծ ձգվածությունը կազմում է 360 կմ (հյուսիսարևմտյան ծայրից հարավարևելյան ծայր), արևմուտքից արևելք ձգվածությունն ընդամենը 200 կմ է:

Պատմական անցյալում մեր հայրենիքի Հայաստանի աշխարհագրական դիրքը շատ կարևոր դեր է խաղացել նրա տնտեսական զարգացման գործում, քանի որ Հայաստանի տարածքով էին անցնում արևմուտքից արևելք և հարավից հյուսիս անցնող միջազգային նշանակություն ունեցող առևտրական մի շարք կարևոր ճանապարհներ: Մյուս կողմից էլ, Հայաստանի աշխարհագրական այդ շատ կարևոր դիրքի պատճառով օտար, ռազմատենչ տերությունները միշտ էլ ձգտել են նվաճել այն: Ահա թե ինչու մեր հայրենիքը միշտ եղել է կռվախնձոր Պարսկաստանի, Բյուզանդիայի, արաբների, թաթար–մոնղոլների, թուրքերի ու այլ նվաճողների համար:

Այժմ էլ Մեծ Հայքից 300 հազ. կմ^2 տարածքից դառը ճակատագրի բերումով մեզ բաժին մնացած ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, չնայած իր փոքր տարածքին, աշխարհագրական շատ հարմար դիրքի շնորհիվ ռազմավարական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ահա թե ինչու

Ռուսաստանը՝ Հայաստանի առավել հուսալի դաշնակիցը, ԽՍՀՄ–ի փլուզմից հետո էլ մեծ հետաքրքրություն է ցուցաբերում իր ներկայությունն այստեղ միշտ ունենալու հիմնահարցի նկատմամբ: Ահա թե ինչու նաև այս տարածքում իրենց ազդեցությունը ունենալուն մեծ նշանակություն են տալիս ԱՄՆ–ը, Թուրքիան, Պարսկաստանը և եվրոպական խոշոր պետությունները:

1988–1994 թթ. տեղի ունեցած Ղարաբաղյան ազատագրական պատերազմի հետևանքով Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ստեղծված հարաբերությունների հետ կապված, Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի հնարավորությունները (ինչպես ասվել է) արտաքին տրանսպորտատնտեսական կապերի առումով խիստ սահմանափակվել են: Ցամաքային ճանապարհով արտաքին աշխարհ դուրս գալու մեր ուղիները կարող են անցնել առայժմ Վրաստանով և Իրանով: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկաթուղային ճանապարհով մենք կարող ենք արտաքին աշխարհ դուրս գալ միայն Վրաստանի տարածքով, և որ այդ երկաթուղին էլ Աբխազիայի տարածքում դեռևս չի գործում (աբխազա–վրացական հարաբերությունների սրման պատճառով), ապա դժվար չէ պատկերացնել, թե ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի արդի վիճակն ինչպիսի դժվարություններ է ստեղծում մեր հանրապետության տնտեսության համար:

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ: Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է: Նրա միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1837 մետր: ՀՀ այժմյան տարածքը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի (որի տարածքը 400 հազ. կմ2 է) հյուսիսարևելյան մասը: Իսկ Հայկական լեռնաշխարհը մտնում է Ալպ–Հիմալայան սեյսմիկ գոտու մեջ: Ըստ որում, Հայկական լեռնաշխարհը սեյսմիկ այդ գոտու մեջ մտնող Անատոլական ու Իրանական բարձրավանդակներից բարձր է ավելի քան 800 մետրով և հանդիսանում է յուրատիպ «Լեռնային կղզի» շրջապատի նկատմամբ: Հայկական լեռնաշխարհի բարձրագույն կետը Մեծ Արարատն է (Մասիսը)՝ 5165 մ բարձրությամբ, որի կողքին է փոքր Արարատը (Սիսը)՝ 3925 մ բարձրությամբ: Հրաշագեղ Մեծ Արարատը մշտապես ձյունածածկ է, նրա վրա կան մեծ ու փոքր 30 սառցադաշտ, ձյան սահմանագիծն անցնում է 4250 մ բարձրությունից: Դրանք հանգած հրաբուխներ են, որպիսիք շատ են այս լեռնաշխարհում: Դրանց թվին է պատկանում նաև Արագած լեռը: Սակայն Հայկական լեռնաշխարհում այժմ էլ կան գործող հրաբուխներ: Դրանք Թոնդրակ (Ծաղկունյաց և Վասպուրական լեռնաշղթաների հատման վայրում) և Նեմրութ (Բզնունյաց լեռնաշղթայի սկզբնամասում) հրաբուխներն են: Երկուսն էլ գտնվում են Վանա լճի ավազանում:

Հայկական լեռնաշխարհն այժմ էլ մնում է որպես շատ ակտիվ սեյսմիկ գոտի, որտեղ շատ հնուց տեղի են ունեցել և այժմ էլ տեղի են ունենում ավերիչ երկրաշարժեր: Դրանցից առավել ավերիչներն էին 341 թ., 725 թ.՝ Վայքի, 9–րդ դարի վերջին՝ Դվինի, 1319 թ.՝ Անիի, 1679 թ.՝ Երևանի, 1827 թ.՝ Ծաղկածորի, 1840 թ. Արարատի, 1926 թ.՝ Շիրակի, 1988 թ. դեկտեմբերի 7–ին Սպիտակի երկրաշարժերը:

Միլիոնավոր տարիների ընթացքում հրաբուխները, երկրաշարժերը, երկրակեղևի ուղղաձիգ, հորիզոնական շարժումներն այստեղ առաջացրել են ռելիեֆի բարդ, բազմազան ձևեր:

Հայաստանի Հանրապետության տարածքը, հանդիսանալով Հայկական լեռնաշխարհի բաղկացուցիչ մասը, բնութագրվում է ռելիեֆի նույն ձևերով, նույն ապառատեսակներով:

ՀՀ տարածքում դաշտավայրեր չկան, ամենացածր վայրերը Մեղրու կիրճն է և Դեբեդ գետի հովիտը (Նոյեմբերյանի տարածաշրջանում), որոնք ծովի մակերևույթից ունեն 370–390 մ բարձրություն: Հանրապետության տարածքի ամենաբարձր կետը Արագած լեռան գագաթն է, որը ծ. մ. ունի 4090մ բարձրություն: Տիպիկ լեռնային լինելուց բացի, Հայաստանի Հանրապետության մակերևույթը՝ ռելիեֆը, խիստ կտրտված է լեռնահովիտներով, գետահովիտներով, կիրճերով: Ինչպես մակերևույթի խիստ կտրտվածությունը, այնպես էլ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը բացասական ազդեցություն են թողնում արտադրողական ուժերի տեղաբաշխման վրա: Հետևաբար՝ շատ կարևոր նշանակություն ունի արտադրողական ուժերի տեղաբաշխման հիմնահարցերը լուծելիս հանրապետության տարածքի ռելիեֆային առանձնահատկությունների տնտեսական բազմակողմանի գնահատումն ու հաշվի առնումը:

Աղյուսակ 1

Հանրապետության տարածքի բաշխումն ըստ բացարձակ բարձրության

Բարձրությունը ծովի մակարդակից (մետր)	Մակերեսը (կմ²)	Տոկոսը
1	2	3
Մինչև 500	20	0,1
500–1000	2900	9,8
1000–1500	5430	18,3
1500–2000	9300	31,3
2000–2500	7290	24,5

1	2	3
2500–3000	3800	12,6
3000–3500	970	3,3
3500–ից բարձր	30	0,1
Ընդամենը	29740	100

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության տարածքի ավելի քան 90%–ը ծովի մակերևույթից ունի հազար մետրից ավելի բարձրություն: Այսպիսով՝ հանրապետության տարածքում կա ընդամենը շուրջ 3 հազ. կմ^2 տարածք, որը, ռելիեֆային առանձնահատկություններից ելնելով, լավ պայմաններ ունի տնտեսական գործունեության համար: Այդ տարածքը հիմնականում համապատասխանում է Արարատյան գոգավորության ցածրադիր մասին, որն էլ տնտեսական առումով շատ լավ է յուրացված:

Իսկ ընդհանուր առմամբ հանրապետության տարածքում արտադրողական ուժերի տեղաբաշխման, բնակչության ապրելակերպի, բնակավայրերի կառուցապատման համար ռելիեֆային լավ և համեմատաբար նպաստավոր, նվազ նպաստավոր պայմաններ ունեն ծովի մակերևույթից մինչև 2000մ բարձրություն ունեցող վայրերը: Այսպիսի պայմաններ ունեցող վայրերը կազմում են հանրապետության ամբողջ տարածքի շուրջ 60%–ը (կամ մոտ 18 հազ. կմ^2):

Սակայն, ընդհանուր առմամբ, հանրապետության տարածքի՝ ծովի մակերևույթից մինչև 2000 մետր բարձրություն ունեցող վայրերը արտադրողական ուժերի տեղաբաշխման համար համեմատաբար նպաստավոր լինելով հանդերձ, մակերևույթի մեծ մասի խիստ կտրտվածության և մեծ թեքությունների պատճառով հատկապես դժվարություններ են առաջացնում գյուղատնտեսական արտադրության համար:

Քանի որ այդ տարածքներում գյուղատնտեսական հողահանդակները գերազանցապես կտրտված, մասնատված են մինչև 100 և ավելի մետր խորություն ունեցող ձորակներով, կիրճերով, գետահովիտներով, ապա այդ հանգամանքը բացասական մեծ ազդեցություն է թողնում հողագործության ռացիոնալ մեթոդների կիրառման, առանձնապես մեքենայական աշխատանքի լայնորեն օգտագործման վրա: Այդ առումով բացասական մեծ ազդեցություն են թողնում նաև մակերևույթի մեծ թեքությունները:

Հայաստանի Հանրապետությունում մինչև 6 աստիճան թեքություն ունեցող վայրերը կազմում են ամբողջ հանրապետության ցամաքային տարածքի շուրջ 35%–ը: Սա էլ այն տարածքն է, որը համեմատաբար նպաստավոր է հողագործության և առհասարակ արտադրողական ուժերի տեղաբաշխման ու զարգացման համար: Չնայած այստեղ էլ՝ հատկապես 4–6 աստիճան թեքություն ունեցող վայրերում արդեն գյուղատնտեսական մեքենաների աշխատանքը նկատելիորեն դժվարանում է, դրանց արտադրողականությունն ընկնում է, մեծապես դժվարանում են նաև ինքնահոս ոռոգման աշխատանքները:

Հանրապետության տարածքի ծովի մակերևույթից 2000մ ավելի բարձրություն ունեցող վայրերում, որը կազմում է ամբողջ տարածքի 40%–ը, արտադրողական ուժերի զարգացման համար պայմանները խիստ անբարենպաստ են: Լավագույն դեպքում դրանց ցածրադիր որոշ հատվածներ օգտագործվում են որպես ամառային արոտավայրեր:

Իսկ ընդհանուր առմամբ, մինչև 6 աստիճան թեքություն ունեցող տարածքներն էլ մեր հանրապետության արտադրողական ուժերի տեղաբաշխման, հատկապես հողագործության համար այսպես ասած, շատ հարմար ու նպաստավոր վայրերն են:

Բավականին ընդարձակ տարածություններ են զբաղեցնում 6–16 աստիճան թեքություն ունեցող հողատարածքները: Դրանք մոտավորապես հավասար են մինչև 6 աստիճան ունեցող տարածքներին և կարևոր տեղ ու դեր ունեն հանրապետության արտադրողական ուժերի տարածքային կազմակերպման համակարգում: Չնայած, ընդհանուր առմամբ, 6–16 աստիճան թեքություն ունեցող վայրերը բարենպաստ են գյուղատնտեսական աշխատանքների և առհասարակ արտադրության զարգացման համար, սակայն ռելիեֆային տեսակետից մեծ թեքությունների պատճառով այս վայրերում արտադրողական ուժերի տեղաբաշխումն ու զարգացումը պահանջում են լրացուցիչ, համալիր հսկայական միջոցառումներ և ծախսեր, որոնք անկասկած մեծապես բացասաբար են անդրադառնում աշխատանքի արդյունավետության վրա: Մասնավորապես՝ մեծ դժվարությունների հետ է կապվում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, լրացուցիչ խոշոր ծախսեր են պահանջվում այդպիսի թեք լանջային տարածքներում հողերի էրոզիան կանխելու համար: Այս վայրերում համարյա ամենուրեք բարդությունների հետ է կապված նաև շինարարական բոլոր տեսակի աշխատանքների իրականացումը: Այստեղ ոչ միայն մեծ ծախսեր պահանջող լրացուցիչ մեթոդներ պետք է կիրառվեն քաղաքացիական, արդյունաբերական և տրանսպորտային շինարարության իրականացման համար, այլև արդեն իսկ կառուցված օբյեկտների, հատկապես ավտոճանապարհների, երկաթուղիների, էլեկտրահաղորդիչ գծերի, ջրանցքների շահագործումը մշտապես պետք է գտնվի հսկողության տակ:

Չնայած այդպիսի դժվարություններին և խոշոր ծախսերին, քանի որ Հայաստանի Հանրապետությունը խիստ սակավահող է, ապա կենսական նշանակություն ունի այսպես կոչված միջին թեքություն ունեցող այդ վայրերի հողատարածքների մաքսիմալ օգտագործումը հաշվի առնելով ռելիեֆային բոլոր առանձնահատկությունները:

Ռելիեֆային պայմանների տեսակետից անբարենպաստ են հանրապետության տարածքի այն մասերը, որոնք ունեն 16–30 աստիճան թեքություններ: Այս վայրերում հատկապես մեծ դժվարություններ են ներկայացնում դաշտավարության աշխատանքները: Հարավահայաց մեծ թեքությունները առանձին դեպքերում հնարավոր է օգտագործել այգեգործության ու պտղաբուծության համար կիրառելով արհեստական, մեծ աշխատանք պահանջող մեթոդներ: Այսպիսի թեքություններ ունեցող վայրերը զգալի դեր ունեն նաև որպես արոտավայրեր ու խոտհարքեր: Այստեղ լրացուցիչ մեծ ծախսերի հետ են կապված նաև շինարարական և տրանսպորտային աշխատանքները: Հանրապետության ցամաքային տարածքի զգալի մասը (շուրջ 5%) ունի 30 աստիճանից ավելի թեքություն, այսինքն՝ խիստ թեք է, որի նշանակությունը արտադրողական ուժերի տեղաբաշխման համար ծայրահեղ սահմանափակ է: Կլիմայական համեմատաբար բարենպաստ պայմաններ ունեցող այդպիսի վայրերում, (հարավահայաց լանջերին) դարավանդային մեթոդով թերևս հնարավոր է պտղաբուծության զարգացումը (այն էլ մինչև 40 աստիճան թեքություն ունեցող վայրերում միայն): Իսկ ընդհանրապես հանրապետության այդպիսի մեծ թեքություն ունեցող վայրերը, հիմնականում պիտանի են մանր եղջերավոր անասնապահության համար, որպես արոտավայրեր: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ այդ վայրերի տարածքի զգալի մասը լերկ ժայռեր են, ապա հասկանալի պետք է լինի, որ այստեղ արոտավայրերը նույնպես շատ սահմանափակ են: Այսպիսով՝ ելնելով ռելիեֆային առանձնահատկություններից, ինչպես տեսանք, հանրապետության արտադրողական ուժերի տեղաբաշխման տարածքային պայմանները շատ սահմանափակ ու բարդ են, դրանց օգտագործումը պետք է դրվի խիստ նպատակային դիրքերի վրա:

Ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհում, ՀՀ տարածքում նույնպես միլիոնավոր տարիների ընթացքում առաջացել են ծալքաբեկորավոր, հրաբխային լեռնաշղթաներ, լեռնազանգվածներ, սարահարթեր, միջլեռնային գոգավորություններ:

Ծալքաբեկորավոր լեռնաշղթաներն են՝ Բազումի, Փամբակի, Ծաղկունյաց, Արեգունու, Սևանի, Վիրահայոց, Գուգարաց, Միափորի, Վայքի լեռնաշղթաները:

Հրաբխային են՝ Եղնախաղի, Ջավախքի, Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաներն ու Արագածի, Արայի լեռնազանգվածները, Սյունիքի բարձրավանդակը:

Առավել ընդարձակ միջլեռնային գոգավորություններ են՝ Լոռու, Շիրակի, Աշոցքի (որոնք անվանվում են նաև սարահարթեր), ինչպես նաև Փամբակի, Դեբեդի, Աղստևի, Սևանի գոգավորությունները: Հանրապետության համար առանձնահատուկ դեր ունի Արարատյան կամ Միջինարաքսյան գոգավորությունը, որը ՀՀ առավել ընդարձակ հարթավայրն է: Այս վերջինի հետ միասին ՀՀ տնտեսական կյանքում շատ կարևոր դեր ունեն Շիրակի, Լոռու, Աշոցքի սարահարթերը, Սյունիքի բարձրավանդակը, Ապարանի, Եղվարդի, Կոտայքի սարավանդները և Սևանի գոգավորությունը, որոնք, ի տարբերություն Արարատյան գոգավորության, սևահողային լեռնատափաստաններ են ու հանդիսանում են ՀՀ հացահատիկային տնտեսության գլխավոր վայրերը: Իսկ Արարատյան գոգավորության կիսաանապատային որոշ վայրերում տիպիկ անապատային տարածքները փաստորեն մելիորացված, կուլտուրականացված տարածք է, այգեգործության, պտղաբուծության, բանջարաբուծության ուղղվածությամբ:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ : Արտադրողական ուժերի տեղաբաշխման ու առհասարակ մարդու կենսագործունեության համար շատ կարևոր նշանակություն ունեն կլիմայական պայմանները:

Հանրապետության մակերևույթի տիպիկ լեռնային բնույթը, խիստ կտրտվածությունը, ծովային ավազաններից հեռու լինելը, անկասկած, իրենց ազդեցությունն են թողնում կլիմայական պայմանների ձևավորման վրա: Եթե ավելի կոնկրետ նշենք, ՀՀ կլիմայի ձևավորման գործում կարևոր դեր են խաղում հետևյալ գործոնները՝ շրջապատի նկատմամբ լեռնային բարձր դիրքը, մակերևույթի խիստ կտրտվածությունն ու լեռների դիրքադրությունը, ծովային ավազաններից ունեցած հեռավորությունը, ժամանակ առ ժամանակ Կովկասյան մեծ լեռնաշղթան շրջանցելով հանրապետություն թափանցող հյուսիսային ցուրտ հոսանքները, երբեմն էլ հարավից՝ արաբական անապատներից տաք, չոր քամիների, խորշակների ներթափանցումները: Հենց այդ գործոնների հետևանքով, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության կլիման խիստ ցամաքային է և բնութագրվում է ամառվա ու ձմեռվա ջերմաստիճանների մեծ տատանումներով: Տարեկան միջին ամենաբարձր ջերմաստիճանը կազմում է 13,8 աստիճան (այն բնորոշ է Մեղրու կիրճին), իսկ ամենացածր տարեկան միջին ջերմաստճանը –2,7 աստիճան է (որը բնորոշ է Արագած լեռան բարձրադիր մասին):

Շատ ավելի մեծ են ամառվա ու ձմեռվա բացարձակ ջերմաստիճանների տատանումները: Հանրապետության տարածքում ամենաբարձր կամ բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +42 աստիճան է, այն գրանցվել է Արարատյան դաշտում (Արմավիրի տարածաշրջանում):

Հանրապետության տարածքում երբևէ գրանցված ամենացածր ջերմաստիճանը կամ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը –46 աստիճան է, այն գրանցվել է հանրապետության հյուսիսարևմտյան մասում Արփի լիճ–ջրամբարի արևելյան ափին գտնվող Պաղակն (նախկին Շուրաբադ) բնակավայրում:

Այսպիսով ՀՀ տարածքում բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ջերմաստիճանների ամպլիտուդան կազմում է 88 աստիճան: Ջերմաստիճանների այսպիսի տատանումները առաջին հերթին բացասական ազդեցություն են թողնում գյուղատնտեսական արտադրության, հատկապես խաղողագործության և պտղաբուծության վրա: Ահա թե ինչու Արարատյան դաշտի գյուղացիները դեռ հնուց ցրտահարությունից խուսափելու նպատակով խաղողի վազերը ձմռանը ծածկում էին հողով: Իսկ ամեն տարի կրկնվող այսպիսի աշխատանքը մեծ չափով բարձրացնում է խաղողագործության աշխատատարությունը:

Ամենատաք ամիսները հուլիսն ու օգոստոսն են, որոնց միջին աստիճանը տատանվում է 9–26 աստիճանների միջև: Իսկ ընդհանուր առմամբ Արարատյան դաշտում շատ հաճախ է լինում, որ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 39–40 աստիճան, Տավուշում՝ 37–38 աստիճան և այլն:

Ամենացուրտ ամիսը հունվարն է, որի միջին ջերմաստիճանը տատանվում է +1,2° և –12,8°–ների միջև: Սակայն առանձին օրերի, տարիների օդի ջերմությունը կարող է ավելի շատ իջնել: Օրինակ, Արարատյան դաշտում երբեմն ձմռանը ջերմությունն այնքան է իջնում, որ ոչ միայն խաղողի վազերը, այլև պտղատու ծառերը ցրտահարվում են:

Հատկապես գյուղատնտեսական արտադրության համար կարևոր նշանակություն ունի սառնամանիքային ժամանակաշրջանի ու օրերի թվի ճիշտ հաշվի առնումը և կանխագուշակումը: Դրանք շատ հաճախ մեծ վնասներ են հասցնում ցրտահարելով խաղողի այգիները, պտղատու ծառերն ու բանջարաբոստանային մշակաբույսերը:

Հանրապետության ցածրադիր վայրերում ոչ սառնամանիքային օրերի թիվը կազմում է 224–234 օր, նախալեռնային ու միջին լեռնային վայրերում՝ 118–196 օր, բարձր լեռնային վայրերում՝ 90–92 օր:

ՀՀ գյուղատնտեսական արտադրության համար վճռական դեր խաղացող վայրերում գարնանային ամենավաղ ցրտահարությունը սկսվում է

մարտի առաջին տասնօրյակում, վերջանում՝ ապրիլի վերջերից մինչև մայիսի առաջին տասնօրյակը ընկած ժամանակահատվածում:

Այդ նույն վայրերում աշնանային ցրտահարությունը սկսվում է հոկտեմբերի սկզբից, ավարտվում՝ նոյեմբերի վերջին տասնօրյակում:

Ամպամած օրերի թիվը հանրապետությունում տարեկան կազմում է 18-ից (Մարտունի) մինչև 64 օր (Իջևան):

Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է արևափայլքի երկար տևողությամբ: Արևափայլքի տևողությունը այստեղ կազմում է 1924–ից (Իջևան) մինչև 2779 (Մարտունի) ժամ: Արևափայլքի այսպիսի բացառիկ տևողությունը կարևոր նշանակություն ունի ջրային ռեսուրսներով ապահովված գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերի համար, այդ թվում հատկապես Արարատյան դաշտի խաղողագործության և պտղաբուծության համար, որտեղ արտադրվում են աշխարհում եզակի բարձր շաքարայնություն ունեցող խաղող և անուշահամ պտուղներ:

Սակայն Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է նաև մթնոլորտային տեղումների սակավությամբ: Հանրապետության տարածքում, ըստ ուղղահայաց գոտիների, դրանք տարեկան միջին չափով կազմում են 211–970մմ: Ամենից քիչ տեղումներ թափվում են Արարատյան դաշտում 211–309 մմ, ամենից շատ՝ Եռաթմբում և Արագածի բարձրադիր մասում 905–970 մմ: Քանի որ հանրապետության գյուղատնտեսական վճռական դեր խաղացող վայրը Արարատյան դաշտն է, որտեղ տեղումների քանակը խիստ անբավարար է, ապա այստեղ խոշոր նշանակություն ունի արհեստական ոռոգումը:

Աղյուսակ 2

Հանրապետության տարածքում տարեկան տեղումների քանակը ըստ ուղղահայաց գոտիների

Գոտիները	Տարեկան տեղումների քանակը (մմ)
Ցածրադիր գոտի	211–300
Միջին բարձրության գոտի	300–600
Բարձր լեռնային գոտի	600–1000

Ընդհանուր առմամբ հանրապետության տարածքում տեղումների միջին քանակը 600մմ է:

Տեղումների մեծ մասը թափվում են ապրիլ, մայիս, հունիս ամիսներին: Այդ ժամանակ դրանք հաճախ թափվում են տեղատարափ ձնով, որոնք ուղեկցվում են կարկուտով: Վանաձորում, Ապարանում տեղում է այնպիսի կարկուտ, որն ունենում է 21–24մմ տրամագիծ: Հակակարկուտային միջոցառումներ չլինելու դեպքում այն մեծ վնաս է հասցնում գյուղատնտեսությանը: Տեղումների քանակը զգալի է նաև սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին: Լեռնային վայրերում հաճախակի տեղատարափ անձրևներ են լինում:

Ձյան շերտի հզորությունը տատանվում է ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության: Արարատյան դաշտում կայուն ձյան շերտ կամ չի լինում, կամ դրա հզորությունը շատ աննշան է լինում (մինչև 10սմ): Իսկ այս հանգամանքը շատ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական արտադրության վրա: Նախալեռնային վայրերում ձյան շերտի հզորությունը կազմում է մինչև 1մ, լեռնային մասերում՝ մինչև 1.5մ, երբեմն հասնում է 2 մ–ի: Հանրապետության տիպիկ լեռնային, կտրտված ռելիեֆը պայմանավորում է նաև քամիների հաճախականությունն ու դրանց ուղղությունների փոփոխականությունը: Քամու արագությունը հանրապետության տարածքում ընդհանուր առմամբ տատանվում է 0,5–9,0 մ/վ սահմաններում, միջին տարեկան արագությունը տատանվում է 1,6–ից (Երևան) մինչև 7,7մ/վ–ի (Սիսիանի լեռնանցք) սահմաններում: Քամու արագությունը ամենից մեծ է Սիսիանի լեռնային մասերում (այդ թվում հատկապես լեռնանցքում), որտեղ այն կազմում է 6,1–9,0 մ/վ:

Աշոցքում, Գյումրիում, Քաջարանում, Տաշիրում և լեռնային այլ վայրերում երբեմն լինում են 25–35 մ/վ արագությամբ ավերիչ քամիներ:

Հանրապետության հատկապես լեռնային մասերում հաճախակի տեղի ունեցող ուժեղ քամիները խիստ բացասական են անդրադառնում հողի էրոզիայի վրա, ձմռանը դրանք ձյունը քշում կուտակում են հովտային մասերում, մի կողմից՝ մերկացնելով ցանքատարածությունները, մյուս կողմից՝ դժվարացնելով ավտոճանապարհների նորմալ աշխատանքը: Այնուհանդերձ, հանրապետության շատ լեռնային վայրերում մշտապես փչող քամիների ուժը, որպես բնական ռեսուրս, հնարավոր է օգտագործել էլեկտրաէներգիա արտադրելու համար (թեկուզ տեղական նշանակության):

Հայաստանի Հանրապետության ռելիեֆային ու կլիմայական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը, դրանց տնտեսական գնահատականը հնարավորություն կտա այդ յուրատիպ բնական ռեսուրսները ճիշտ օգտագործել գյուղատնտեսական արտադրության, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի արդյունավետության

բարձրացման, բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների նպատակային ու ռացիոնալ կազմակերպման գործում:

Տիպիկ լեռնային մակերևույթի հետևանքով Հայաստանի Հանրապետության տարածքում բնական գոտիները արտահայտված են ուղղաձիգ (վերընթաց) բնույթով: Հետաքրքիր է, որ այս փոքր տարածքում արտահայտված են բնական համարյա բոլոր գոտիները, բացառությամբ հասարակածային և արևադարձային գոտիների:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արտահայտված են ուղղաձիգ (վերընթաց) հետևյալ գոտիները անապատային և կիսաանապատային, չոր տափաստանային, լեռնատափաստանային, լեռնաանտառային, լեռնամարգագետնային (ալպյան) և լեռնատունդրային: Այս գոտիները տարածքով համեմատաբար փոքր են, սակայն այստեղ արտահայտված են նշված գոտիներին յուրահատուկ առանձնահատկությունները, որոնք և պետք է հաշվի առնել արտադրողական ուժերի տարածքային կազմակերպման հիմնահարցերը լուծելիս:

✓ *ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ* : Բնական ռեսուրսների տնտեսական գնահատականը տալու նպատակով անհրաժեշտ է լինում դրանք բաժանել խմբերի: Այդ խմբավորումը կամ դասակարգումը կարևոր նշանակություն ունի արտադրության ճյուղերի ռացիոնալ տեղաբաշխման, բնական ռեսուրսների խնայողաբար, նպատակային օգտագործման հիմնահարցերը ճիշտ լուծելու համար:

Ընդունված է բնական ռեսուրսները բաժանել երկու խմբի՝ **սպառվող և չսպառվող:** Սպառվող ռեսուրսները իրենց հերթին լինում են՝ **վերականգնվող** և **չվերականգնվող**: Չվերականգնվողների ենթախմբին են պատկանում բոլոր այն ռեսուրսները, որոնք առհասարակ չեն վերականգնվում կամ վերականգնվում են միլիոնավոր անգամ ավելի դանդաղ, քան դրանց օգտագործման ժամանակն է: Վերջիններիս թվին են պատկանում քարածուխը, նավթը: Առհասարակ չվերականգնվողների թվին են պատկանում մետաղային և ոչ մետաղային այլ օգտակար հանածոներ: Սպառվող ռեսուրսներից վերականգնվողների թվին են պատկանում տորֆը և նստվածքային շատ ռեսուրսներ: Իսկ չսպառվող ռեսուրսներն անվանում են նաև վերականգնվող ռեսուրսներ: Մասնավորապես, վերականգնվող բնական ռեսուրսների թվին են պատկանում՝ **հողային, բուսական, կենդանական, կլիմայական, տիեզերական ռեսուրսները,** ինչպես նաև լճերում, ծովերում առաջացող նստվածքային աղերը:

Այս ռեսուրսների տնտեսական հիմնավոր գնահատականը տալու, դրանց օգտագործումը ռացիոնալ հիմքերի վրա դնելու նպատակով, անհ-

ռաժեշտ է հաշվի առնել, թե դրանք ինչ արագությամբ են վերականգնվում: Համեմատաբար արագ են վերականգնվում ջրային, բուսական և կենդանական ռեսուրսները: Դրանց վերականգնումը կարող է տևել ամիսներ, տարի կամ մի քանի տարի՝ կախված միջավայրի, բնական պայմանների առանձնահատկություններից: Շատ ավելի արագ է վերականգնվում ջուրը:

Հողը վերականգնվում է շատ դանդաղ: Բավական է ասել, որ հարյուր տարվա ընթացքում առաջանում է ընդամենը 1 սմ հաստությամբ սնահողի շերտ:

Ինչպես ասվել է, ***չվերականգնվող*** ռեսուրսների թվին են պատկանում բոլոր օգտակար հանածոները (մետաղային, ոչ մետաղային, վառելիքային):

Չսպառվող ռեսուրսներ են՝ արևային էներգիան, քամու էներգիան, հոսող ջուրը, կլիմայական ռեսուրսները:

Բնական ռեսուրսների այս կարգի դասակարգումը բխում է դրանց խնայողաբար օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության, արտադրողական ուժերի տեղաբաշխման գիտագործնական հիմնահարցերի լուծման կարևորությունից:

Բացի դրանից, անհրաժեշտություն է զգացվում բնական ռեսուրսները դասակարգել նաև տնտեսության ոլորտներում դրանց օգտագործման առանձնահատկություններից ելնելով: Մասնավորապես, այդպիսի բաժանմամբ առանձնացվում են՝

ա) Նյութական արտադրության բնագավառում օգտագործվող ռեսուրսներ, որոնք ընդգրկում են՝ մետաղային, վառելիքային, ոչ մետաղային, ջրային, հողային, բուսական, կենդանական ռեսուրսները:

բ) Ոչ արտադրական ոլորտում օգտագործվող ռեսուրսներ, որոնց թվին դասվում են՝ խմելու նպատակով օգտագործվող ջուրը, հանգստի ու սանիտարական նշանակություն ունեցող կանաչապատված տարածքները, հանգստի ու սպորտային նշանակության ջրավազանները և այլն:

Եվ, վերջապես, կա նաև բնական ռեսուրսների այլ դասակարգում՝ հաշվի առնելով դրանց բնական առանձնահատկությունները: Այդպիսի դասակարգմամբ դրանք բաժանվում են հետևյալ խմբերի՝ օգտակար հանածոներ, ջրային, հողային, կենսաբանական (այդ թվում՝ բուսական, կենդանական) ռեսուրսներ: Ներկայումս առանձնացնում են նաև կլիմայական և ռեկրեացիոն ռեսուրսների խմբերը:

Բնական ինչպես վերականգնվող, այնպես էլ չվերականգնվող ռեսուրսների խնայողաբար օգտագործման հիմնահարցը խոշոր նշանակություն ունի բոլոր երկրների համար, սակայն այն առավել կենսական նշանակություն ունի այն երկրների համար, որոնց բնական ռեսուրսները շատ սուղ են,

և որոնց տնտեսությունը մեծ չափերով հիմնված է ներմուծվող հումքատեսակների վրա: Հայաստանի Հանրապետությունը պատկանում է վերջիններիս թվին:

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության տարածքում կան բնական բազմատեսակ ռեսուրսների զգալի պաշարներ, որոնց ռացիոնալ օգտագործումը խոշոր դեր կարող է խաղալ նրա էկոնոմիկայի վերականգնման և հետագա զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսների համակարգում գործնական նշանակության տեսակետից խոշոր նշանակություն ունեն *մետաղային և ոչ մետաղային հանածոները*:

✓ Մետաղային օգտակար հանածոներից հայ ժողովրդի համար դեռ անհիշելի ժամանակներից կարևոր դեր են խաղացել գունավոր մետաղները:

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ դեռևս մ.թ.ա. VI հազարամյակի վերջերին Հայաստանի տարածքում բավականին զարգացած է եղել պղնձի և այլ մետաղների հանույթի ու ձուլման, դրանցից տարբեր տեսակի իրերի արտադրության գործը:

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մետաղի հանույթի ու ձուլման վառ ապացույցները նրա տարբեր մասերում հայտնաբերված մետաղածուլարանների շատ լավ պահպանված մնացորդներն ու հետքերն են: Այդ առումով առավել մեծ հետաքրքրություն ներկայացնողը Մեծամորի մետաղածուլարանի հայտնաբերումն է, որը վերաբերում է մ.թ.ա. II–I հազարամյակներին: Այստեղ հայտնաբերվել են մետաղածուլարանի բավականին պահպանված ձուլման վառարանը, մետաղածուլության թափոնները՝ խարամը: Իսկ մոտակա ժայռի հարթ տարածքում հայտնաբերվել է քարի վրա քանդակված այդ ձուլարանի ամբողջ կառուցվածքը՝ նախագիծը: Դատելով այդ նախագծից՝ Մեծամորի մետաղածուլարանը ունեցել է արտադրական լրիվ ցիկլ՝ հումքի հարստացումից մինչև պատրաստի արտադրանքի թողարկումը:

Հնագիտական պեղումների, հայ և օտար հնագույն ժամանակաշրջանների պատմիչների տվյալներով պատմական Հայաստանում գունավոր մետաղներից առավել շատ արդյունահանվել է պղինձ, կապար, ցինկ, արծաթ, ոսկի:

Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում հայտնաբերված գունավոր և հազվադեպ մետաղներից գործնական նշանակություն ունեն կամ կարող են ունենալ պղինձը, մոլիբդենը, բազմամետաղները (հատկապես կապարն ու ցինկը), ոսկին, ալյումինի հումքը, տիտանը, նիկելը, վոլֆրամը, կոբալտը, վանադիումը, բիսմութը: Այս թանկարժեք մետաղները

հիմնականում ի հայտ են գալիս պղնձի, մոլիբդենի, բազմամետաղների հետ նույն հանքավայրերում, երբեմն նաև առանձին: Հայտնաբերված են նաև սուրմայի, մկնդեղի, սնդիկի ու հազվադեպ այլ մետաղների երևակումներ:

Հանրապետության տարածքում հայտնաբերված գունավոր մետաղներից գործնական նշանակության տեսակետից ինչպես միշտ, այժմ էլ առաջին տեղը պատկանում է ***պղնձին***: Երկրաբանական տվյալներով՝ այս գունավոր մետաղը մեզ մոտ, մյուս գունավոր մետաղների համեմատությամբ, առաջին տեղն է նաև իր տարածվածությամբ:

Երկրաբանական–հետախուզական ուսումնասիրությունների տվյալներով՝ հանրապետության տարածքում հայտնաբերված պղնձի պաշարների 80–90 տոկոսը կենտրոնացված են ***Կապանի, Քաջարանի, Ագարակի*** հանքավայրերում: Կարևոր է իմանալ, որ ***Քաջարանի*** ու ***Ագարակի*** հանքավայրերում հանքանյութը պղնձից բացի պարունակում է նաև մոլիբդեն (այդ պատճառով կոչվում են պղնձամոլիբդենային հանքավայրեր), ինչպես նաև հազվադեպ այլ մետաղներ: Արդյունաբերական նշանակություն ունեցող պղնձի պաշարներով հաջորդ տեղը պատկանում է *Հյուսիսային Հայաստանին,* մասնավորապես՝ *Թումանյանի տարածաշրջանին:* Այստեղ հատկապես նշանավոր են երկու հանքավայրեր՝ ***Ալավերդու և Շամլուղի:*** Հեռանկարային մեծ նշանակություն կունենա **Արմանիսի** (Ստեփանավանի տարածաշրջան) հանքավայրը:

Պղնձի նշված հանքավայրերից առավել հին պատմություն ունեն ***Ալավերդու և Կապանի*** հանքավայրերը, որոնք սկսել են շահագործվել շատ հնուց:

Հանրապետության պղնձի նշված հանքավայրերի հանքանյութի մեջ պղնձի պարունակությունը կազմում է 1,5–5%: Իսկ Կապանի հանքավայրի որոշ հատվածներում այն հասնում է 10–14%–ի:

Պղինձը տնտեսական մեծ նշանակություն ունեցող գունավոր մետաղ է, այդ պատճառով միջազգային շուկայում այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում և ունի բարձր արժեք:

Պղինձը հեշտ մշակվող, բայց շատ երկարադիմացկուն մետաղ է, այդ պատճառով այն օգտագործվում է մեքենաշինության բոլոր բնագավառներում: Դրանցից արտադրվում են մեքենաների դետալներ, մասեր: Պղնձից արտադրված խողովակները օգտագործվում են արդյունաբերության շատ բնագավառներում: Գունավոր այդ մետաղից է արտադրվում նաև էլեկտրահաղորդիչ լարերի մեծ մասը, հատկապես բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ լարերը (որոնցով էլեկտրաէներգիան մղվում է մեծ հեռավորությունների

վրա, ինչպես նաև տրամվայներն ու տրոլեյբուսները սնուցող էլեկտրալարերը) հիմնականում արտադրվում են պղնձից: Դրանք ալյումինի լարերի համեմատությամբ շատ երկարադիմացկուն են:

Պղնձից են արտադրվում նաև կենցաղային նշանակություն ունեցող շատ արտադրատեսակներ: Սակայն պղնձի տնտեսական նշանակությունը նշվածներով չի սահմանափակվում:

Պղնձի ծուլման պրոցեսում անջատվում են ծծմբային գազեր, որոնք հումք են հանդիսանում ծծմբաթթվի արտադրության համար, իսկ վերջինս արժեքավոր քիմիկատ է, որը օգտագործվում է տնտեսության շատ բնագավառներում: Իսկ պղնձածուլության թափոնները օգտագործվում են մի այլ արժեքավոր քիմիկատի՝ պղնձարջասպի արտադրության համար, որը, որպես արդյունավետ թունաքիմիկատ, օգտագործվում է խաղողի ու պտղատու այգիների սրսկման համար (այսինքն՝ գյուղատնտեսության բերքատվության բարձրացման համար):

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված գունավոր մետաղների շարքում գործնական նշանակության տեսակետից շատ կարևոր է ***մոլիբդենի*** դերը: ***Պղնձամոլիբդենային*** հանքավայրերում մոլիբդենից ու պղնձից բացի կան նաև այլ, այդ թվում ***հազվադեպ*** մի շարք մետաղներ (ռենիում, սելեն, թելուր, գերմանիում, տիտան, բիսմութ, ցինկ, մկնդեղ, արծաթ, ոսկի և այլ): Հայաստանի Հանրապետության պղնձամոլիբդենային հումքի պաշարներ ընդգրկող տարածքը նախկին Խորհրդային Միության՝ նման մետաղներ պարունակող շրջաններից առավել խոշորներից է:

Հանրապետությունում առկա մոլիբդենի (կամ ավելի ճիշտ՝ պղնձամոլիբդենային) տասնյակ հանքավայրերից ու երևակումներից գործնական նշանակության տեսակետից առավել կարևորներն են **Քաջարանի** ու **Ագարակի** հանքավայրերը, որոնք գտնվում են Սյունիքի մարզում (Քաջարանի հանքավայրը՝ Կապանի տարածաշրջանում, իսկ Ագարակի հանքավայրը՝ Մեղրու տարածաշրջանում): **Քաջարանի** հանքավայրի հանքանյութի մեջ մոլիբդենի պարունակությունը կազմում է 0.1–0.2%, իսկ պղնձինը՝ 3–4%: Սյունիքի մարզում հայտնաբերված են նաև մի շարք այլ հանքավայրեր, որոնցից հեռանկարում նշանակալից դեր կարող են խաղալ **Դաստակերտի** (Սիսիանի տարածաշրջանում) և **Շիկահողի** (Կապանի տարածաշրջանում) հանքավայրերը:

Այսպիսով՝ հայտնաբերված և համեմատաբար լավ ուսումնասիրված պղնձամոլիբդենային հանքավայրերի մեծ մասը գտնվում է Սյունիքում:

Այսպիսի մետաղներ պարունակող հանքավայրեր ու երևակումներ են հայտնաբերված նաև Հյուսիսային Հայաստանում, հատկապես Գուգարքի

ու Թումանյանի տարածաշրջաններում, Հրազդանի տարածաշրջանում՝ **Հանքավանի** հանքավայրը, ինչպես նաև Սևանի ավազանում՝ **Լիճքի** հանքավայրը:

Այս և նշված պղնձամոլիբդենային հանքավայրերից 1950–ական թվականներից շահագործվում և հանրապետության տնտեսության համար խոշոր դեր են խաղում **Քաջարանի** ու **Ագարակի** հանքավայրերը, որոնք լավ ուսումնասիրված են: Իսկ **Դաստակերտի** հանքավայրը մինչև 1960–ական թվականները շահագործվել է, բայց հետագայում այստեղ դադարեցվել են արդյունահանման աշխատանքները: Հետաքրքիր է, որ մոլիբդենի համաշխարհային պաշարների 7–9%-ը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում:

Մոլիբդենի տնտեսական նշանակությունը շատ խոշոր է: Այն առաջին հերթին հանդիսանում է որպես լեգիրող մետաղ: Մասնավորապես՝ մոլիբդենը պողպատի արտադրության մեջ օգտագործվում է վերջինիս որակը բարձրացնելու (նրա դիմացկունությունը, կռելիության աստիճանը բարձրացնելու) համար, այսինքն՝ լեգիրելու համար: Այն հատկապես օգտագործվում է հատուկ նշանակություն ունեցող սորտային պողպատ արտադրելու համար: Ահա թե ինչու մոլիբդենի նշանակությունն առավել մեծ է մետաղահատ հաստոցաշինության, ռազմական մեքենաշինության, տիեզերական մեքենաշինության բնագավառներում և ունի բարձր արժեք միջազգային շուկայում:

Մոլիբդենը խոշոր նշանակություն ունի նաև էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ, նրանից արտադրված մոլիբդենի թելը օգտագործվում է էլեկտրալամպերի արտադրության համար:

Հանրապետության տարածքում հայտնաբերված են նաև ***բազմամետաղների*** հանքավայրեր, որոնք բնութագրվում են ցինկի, կապարի, ինչպես նաև պղնձի ու մի շարք այլ գունավոր մետաղների հանքանյութերի պարունակությամբ: Հետաքրքիր է, որ այսպիսի մետաղների կոմպլեքսային պարունակություն ունեցող հանքավայրերի ու երևակումների թիվը բավականին մեծ է, որոնք ընդգրկում են հանրապետության տարածքի զգալի մասը: Մասնավորապես, բազմամետաղային՝ հիմնականում ցինկ–կապար պարունակող հանքավայրերը գտնվում են **Սյունիքի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի** մարզերի տարածքներում: Երկրաբանների գնահատմամբ հանրապետությունում ուսումնասիրված բազմամետաղային մի քանի տասնյակ հանքավայրերից արդյունաբերական նշանակություն ունեն կամ կարող են ունենալ **Ախթալայի** (Թումանյանի տարածաշրջանում), **Կապանի, Ղազմայի** (Եղեգնաձորի տարածաշրջանում) հանքավայրերը: Հեռանկարային

նշանակություն ունեն Մեղրու, Վայքի, Ստեփանավանի տարածաշրջաններում և այլ վայրերում հայտնաբերված բազմամետաղային հանքավայրերը:

Վերը նշված հանքավայրերից մինչև հիմա փաստորեն գործնական նշանակություն ունի Ախթալայի բազմամետաղային հանքավայրը, որտեղ կառուցված է հարստացուցիչ ֆաբրիկա:

Ի դեպ, **Ախթալայի** հանքավայրում բազմամետաղների արդյունահանումը շատ հին պատմություն ունի և Ալավերդու պղնձի արդյունաբերության հասակակիցն է:

Բազմամետաղները, այդ թվում ցինկն ու կապարը, լայն կիրառություն ունեցող գունավոր մետաղներ են, որոնց նշանակությունը հատկապես մեծ է ճշգրիտ մեքենաշինության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության և այլ բնագավառներում:

Ինչպես արդեն ասվել է, Հայաստանի Հանրապետության տարածքում կան տիտանի, նիկելի, կոբալտի, վոլֆրամի, ծարիրի (սուրմա), սնդիկի, բիսմութի, մագնեզիումի և այլ գունավոր ու հազվադեպ մետաղների պաշարներ:

Այսպիսի մետաղների զգալի պաշարներ կան ինչպես պղնձամոլիբդենային (Քաջարանի, Ագարակի, Դաստակերտի) հանքավայրերի հանքանյութի բաղադրության մեջ, այնպես էլ հանրապետության տարբեր վայրերում հայտնաբերված կոմպլեքսային այլ հանքավայրերում: Այսպես, օրինակ, տիտանի պաշարներ կան նաև Արագածոտնի, Կոտայքի մարզերի տարածաշրջանների որոշ հատվածներում, նիկելի և կոբալտի պաշարներ՝ Գեղարքունիքի (Սոթքի հանքավայր) և Շիրակի (Ամասիայի հանքավայր) մարզերի տարածքում, վոլֆրամի պաշարներ կան Լոռու (Գուգարքի երևակում), Կոտայքի (Հանքավանի հանքավայր) մարզերի ու այլ տարածքներում, ծարիրի պաշարներ կան Գեղարքունիքի (Սոթքի հանքավայր), Վայոց ձորի (Ազատեկի, Հերհերի հանքավայրեր), Շիրակի (Ամասիայի հանքավայր) մարզերի տարածքում, վոլֆրամի պաշարներ կան Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերի տարածքներում, բիսմութի պաշարներ են հայտնաբերված Սյունիքի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերի տարածքներում, մկնդեղի պաշարներ՝ Շիրակի (Ամասիայի հանքավայր), Սյունիքի, Լոռու մարզերի տարածքներում: Գունավոր այս մետաղների պաշարները հեռանկարային մեծ նշանակություն կարող են ունենալ հանրապետության ճշգրիտ մեքենաշինության պահանջները բավարարելու, ինչպես նաև միջազգային շուկայում հսկայական եկամուտ ստանալու համար:

Հայաստանի Հանրապետության տարածքում կան նաև մետաղային մագնեզիումի ու մետաղային ալյումինիումի արտադրության համար անհ-

ռաժեշտ հումքի խոշոր պաշարներ: Մետաղային մագնեզիումի արտադրության համար բազա կարող են հանդիսանալ դոլոմիտների խոշոր պաշարները: Այդ տեսակետից գործնական նշանակություն կարող են ունենալ Արզականի (Կոտայքի մարզ) և Լուսաձորի (Տավուշի մարզ, Իջևան քաղաքի մոտ) դոլոմիտների հանքավայրերը, որոնք հանգամանորեն ուսումնասիրված են:

Բացի դրանցից, մագնեզիտի հանքավայրեր ու երևակումներ են հայտնաբերված Գեղարքունիքի մարզում (Շորժայի, Ձիլի և այլն):

Մետաղային ալյումինիումի արտադրության համար խոշոր հումքային բազա կարող են հանդիսանալ այստեղ առկա նեֆելինային սիենիտների պաշարները: Այս առումով, մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թեժ սարի նեֆելինային սիենիտների շատ խոշոր պաշարները (Թեժ սարը Փամբակի լեռնաշղթայի հարավային ճյուղերից մեկն է և գտնվում է Հրազդան քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա): Դրանք շատ հանգամանորեն ուսումնասիրված են: Դեռ ավելին, այդ հումքի բազայի վրա մշակվել է ալյումինի արտադրության տեխնոլոգիա: Հրազդան քաղաքում կառուցվել էին այդ հումքի կոմպլեքսային մշակման կոմբինատի շենքերը, սակայն, էկոլոգիական նկատառումներից ելնելով, նպատակահարմար է հարմարվել՝ կուրորտային այդ կարևոր շրջանում շահագործման չհանձնել շրջակա միջավայրը աղտոտող այդ խոշոր օբյեկտը: Ալյումինի հումքի (նեֆելինային սիենիտների) պաշարներ կան նաև Մեղրու տարածաշրջանի Շվանիձոր գյուղի մոտ: Փաստն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը ունի ալյումինի արտադրության համար անհրաժեշտ հումքի խոշոր պաշարներ, որոնք հեռանկարում՝ էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիա մշակելուց հետո, հնարավոր կլինի օգտագործել:

Մագնեզիումը և ալյումինիումը, որպես թեթև մետաղներ, շատ խոշոր նշանակություն ունեն ինքնաթիռաշինության, ռազմական արդյունաբերության և շատ այլ բնագավառներում:

Հանրապետության տնտեսության համար առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն այստեղ հայտնաբերված ***ազնիվ մետաղների*** պաշարները: Դրանցից բավականին ժամանակ է գործնական նշանակություն ունի հատկապես ***ոսկին:*** Հայաստանի Հանրապետության տարածքի ընդերքում ոսկին ի հայտ է գալիս տարբեր ձևերով: Այն առկա է գունավոր մետաղների կոմպլեքսային հանքավայրերում, բազմամետաղների, պղնձի, մոլիբդենի հետ: Սակայն նրա հիմնական պաշարները գտնվում են զուտ ոսկու հանքավայրերում: Այդպիսի հանքավայրերի թիվն այստեղ անցնում է մեկ տասնյակից, որոնք հիմնականում գտնվում են Գեղարքունիքի, Կոտայքի և Լոռու մարզերի տարածքներում: Ոսկու հանքավայրերից առայժմ գործնական խոշոր նշանակություն ունեն Սոթքի (Սևանի ավազանի արևելյան ծայրում) և Մեղրածորի (Մարմարիկ գետի ավազանում) հանքավայրերը, որտեղ կատարվում են արդյունահանման աշխատանքներ:

Ազնիվ մյուս մետաղների՝ ***արծաթի ու պլատինի*** պաշարները աննշան են, դրանք հանդես են գալիս կոմպլեքսային հանքավայրերում: Մասնավորապես արծաթը ի հայտ է գալիս գունավոր այլ մետաղների (բազմամետաղների, պղնձի, մոլիբդենի և այլ) հետ, իսկ պլատինի որոշակի նշաններ նկատվում են սև մետաղների ուսումնասիրված հանքավայրերում:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են նաև ***սև մետաղների*** զգալի պաշարներ:

Այստեղ առկա սև մետաղներից գործնական նշանակություն կարող են ունենալ առաջին հերթին երկաթի հանքաքարի պաշարները: Մասնավորապես հայտնաբերված բազմաթիվ հանքավայրերից մոտակա ժամանակաշրջանում արդյունաբերական նշանակություն կարող են ունենալ ***Կապուտանի, Հրազդանի և Սվարանցի*** հանքավայրերը:

Կապուտանի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Կապուտան գյուղի մոտ, Երևանից ունի մոտ 25 կմ հեռավորություն, այն հանգամանորեն ուսումնասիրված է, մետաղի միջին պարունակությունը 28–30% է կազմում: Այս հանքավայրի հաստատված արդյունաբերական պաշարները կազմում են շուրջ 244 մլն տ, իսկ հեռանկարային պաշարները ավելի քան 400 մլն տ:

Հրազդանի հանքավայրը գտնվում է անմիջապես Հրազդան քաղաքի մոտ, այն հանգամանորեն ուսումնասիրված է, մետաղի միջին պարունակությունը 32% է, արդյունաբերական պաշարները կազմում են 50 մլն տ, հեռանկարային պաշարները՝ 150 մլն տ:

Այս երկու հանքավայրերն էլ ունեն արդյունահանման համար շատ նպաստավոր լեռնաերկրաբանական ու տրանսպորտային պայմաններ:

Համեմատաբար խոշոր են ***Սվարանցի*** հանքավայրի պաշարները: Այն գտնվում է Սյունիքի մարզում՝ Գորիսի նախկին վարչական շրջանի Սվարանց գյուղից զգալի չափով հարավ: Այս հանքավայրում մետաղի պարունակությունը կազմում է 21 տոկոս, կանխագուշակված պաշարները գնահատվում են շուրջ 1 մլրդ տ: Նշված երկու հանքավայրերի համեմատությամբ Սվարանցի հանքավայրի շահագործման տրանսպորտային, բնակլիմայական պայմանները դժվարին են: Բավական է նշել, որ այդ հանքավայրի բարձրությունը ծովի մակերևույթից ավելի քան 2500մ է, սակայն մասնագետների կարծիքով այստեղ հնարավոր է հանույթը կազմակերպել բաց մեթոդով:

Կարևոր է նշել, որ Կապուտանի ու Սվարանցի հանքավայրերի երկաթի հանքաքարը բարձր որակի է և հնարավորություն կտա կազմակերպել էլեկտրատեխնիկական մեքենաշինության պահանջների համար անհրաժեշտ բարձրորակ պողպատի արտադրություն:

Հանրապետության տարածքում երկաթի հանքաքարի պաշարներ հայտնաբերված են նաև Սյունիքի մարզի հարավային մասում (Մեղրու տարածաշրջանում), Բազումի լեռնալանջերին, Նոյեմբերյանի տարածաշրջանում (Կողբի հանքավայրը) և այլ վայրերում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված երկաթի հանքաքարի կանխագուշակված պաշարները գնահատվում են շուրջ 3,8 մլրդ տ:

Հանրապետության տարածքում սև մետաղներից հայտնաբերված են նաև ***մանգանի ու քրոմի պաշարներ:***

Կատարված երկրաբանական–հետախուզական ուսումնասիրությունները հաստատում են, որ չնայած մանգանի հանքանյութի պաշարներ կան հանրապետության շատ վայրերում, սակայն արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրեր դեռևս չեն հայտնաբերված:

Այնուհանդերձ, մանգանի հայտնաբերված հանքավայրերից և երևակումներից համեմատաբար լավ են ուսումնասիրված Արփայի ավազանում՝ Կարմրաշենի ու Մարտիրոսի հանքավայրերը, Գուգարքի տարածաշրջանում՝ Սևնում՝ Մեղրուտի, Սյունիքում՝ Սվարանցի, Իջևանի տարածաշրջանում՝ Սևքարի ու Սարիգյուղի, Նոյեմբերյանի տարածաշրջանում Ղարաչայի ու Կոթի գյուղի հանքավայրերը: Այդպիսի մետաղի պաշարներ հայտնաբերված են նաև Սևանի ավազանում և այլ վայրերում: Հայտնաբերված մանգանի պաշարները մեծ չեն, դրանց կանխագուշակված պաշարները գնահատվում են 29 մլն տ:

Հանրապետության տարածքում հայտնաբերված են նաև քրոմի բազմաթիվ հանքավայրեր ու երևակումներ:

Նշենք, որ հանրապետությունում մինչև 1950–ական թվականների սկզբները արդյունահանվել է որոշ քանակությամբ քրոմ, որն օգտագործվել է տեղում կաշվի մշակման պահանջների համար: Հետագայում տեղում այդ հանքանյութի արդյունահանումը դադարեցվել է, քանի որ Ուկրաինայից և ԽՍՀՄ այլ վայրերից ներմուծվում էին ավելի բարձր արդյունավետ քրոմի աղ:

Հանրապետության տարածքում հայտնաբերված քրոմի երկու տասնյակից ավելի հանքավայրերից ու երևակումներից համեմատաբար լավ են ուսումնասիրված և կարող են գործնական նշանակություն ունենալ Սևանի

ավազանում գտնվող Ձիլի ու Շորժայի (երկուսն էլ Ճամբարակի տարածաշրջանում) հանքավայրերը: Այս հանքանյութի կանխագուշակված պաշարները հանրապետությունում գնահատվում է շուրջ 20 մլն տ:

Մանգանը և քրոմը լեգիրող մետաղներ են, դրանք մեզ մոտ նպատակահարմար կլինի օգտագործել այն ժամանակ, երբ հանրապետության երկաթի հանքաքարի բազայի վրա կկազմակերպվի սև մետաղաձուլություն:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում հանրապետությանն անհրաժեշտ սև մետաղներն ամբողջապես, ինչպես նաև բազմատեսակ պատրաստի գունավոր մետաղներ, ներմուծվում էին Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղազախստանից ու մյուս հանրապետություններից:

Այժմ նախկին կապերը գոյություն չունեն, մեծ դժվարություն է ներկայացնում այդպիսիների ներմուծումն արտասահմանից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ հրամայական պահանջ է առաջանում հանրապետության տարածքում հայտնաբերված գունավոր ու սև մետաղների պաշարների ռացիոնալ օգտագործման ուղիների մշակման համար՝ նպատակ ունենալով հնարավորին սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության սեփական պահանջները:

✓ ***ՈՉ ՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ*** Հայաստանի Հանրապետության տարածքում առավել լայնորեն տարածված են քարանյութերը: Հանրապետության տարածքը համարյա ամբողջապես ծածկված է հրաբխային քարանյութերի համատարած շերտով: Հայկական լեռնաշխարհը քարանյութերի տեսակներով և պաշարներով երկրագնդի հազվադեպ շրջաններից է: Այստեղ հայտնաբերված են գիտությանը հայտնի համարյա բոլոր քարատեսակները: Քարն այստեղ այնքան շատ է, որ երբեմն երկիրը՝ Հայաստանը, անվանում են «քարաստան»:

Հայաստանի տարածքի քարաշատ լինելը նախկինում համարվել է չարիք, սակայն իրականում քարը հրաշք նյութ է, որի գաղտնիքները գնալով ավելի ու ավելի են բացվում: Բավական է նշել, որ միայն մեկ քարատեսակից՝ պեռլիտից, հնարավոր է ստանալ շուրջ 110 տեսակի թանկարժեք նյութեր:

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից քարն օգտագործել է իր կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Այդ առումով շատ դիպուկ է ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի հետևյալ միտքը.

«Քարի վրա է ծնվել հայը, քարի վրա ապրել, քարը քարին դրել, քարերի վրա բարձրացել, քարեր բարձրացրել:

Քարերի մեջ է աճել մանուկը, քարով խաղ արել, քարն իմացել, քարի պես ամրացել»:

1920–ական թվականներից մինչև 1980–ական թվականների վերջերը հանրապետության տարածքում հայտնաբերվել են տարբեր տեսակի քարանյութերի ավելի քան 700 հանքավայրեր: Գործնական նշանակության տեսակետից Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված քարանյութերից ներկայումս առավել կարևորները ***տուֆերը, բազալտները, անդեզիտները, պեմզան, պեռլիտները, հրաբխային խարամները, մարմարները, գրանիտները, կրաքարերը, բենտոնիտները, հրակայուն կավերն են:*** Տնտեսական խոշոր նշանակություն կարող են ունենալ նաև այստեղ առկա *դոլոմիտները, դիատոմիտները* և շատ այլ տեսակի հրաբխային ու նստվածքային քարանյութեր:

Հանրապետության քարանյութերի համակարգում տնտեսական նշանակության տեսակետից մինչև այժմ առաջին տեղը պատկանում է ***տուֆքարերին:***

Տուֆերն իրենց հատկություններով հավասարը չունեցող բնական շինանյութեր են: Դրանք ծակոտկեն թեթև քարատեսակներ են, որոնք առաջացել են հրաբխային ժայթքումների արգասիքներից:

Նախկին ԽՍՀՄ տարածքում տուֆերի հանքավայրեր կան Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Արևելյան Սիբիրում, Արևմտյան Ուկրաինայում, Հեռավոր Արևելքում, ինչպես նաև աշխարհի մի շարք այլ երկրներում: Սակայն պաշարների, արդյունահանման բնական և տնտեսական հնարավորությունների, որակական հատկանիշների տեսակետից առայժմ արդյունաբերական նշանակություն ունեն *Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հանքավայրերը:*

Այստեղ հայտնաբերված են ***տուֆքարի*** ավելի քան 110 հանքավայրեր, որոնց երկրաբանական պաշարները գնահատվում են ***2,5 միլրդ խորանարդ մետր:***

Հանրապետության տուֆերի հանքավայրերի հիմնական առավելություններից մեկն այն է, որ դրանց գերակշռող մասը գտնվում է անմիջապես երկաթուղուն մոտ կամ նրանից 20 կմ հեռավորության վրա: Իսկ այդ հանգամանքը բարձրացնում է տուֆքարի օգտագործման տնտեսական նշանակությունը:

Պետրոգրաֆիական, ֆիզիկամեխանիկական և այլ հատկանիշներից ելնելով՝ Հայաստանի հրաբխային տուֆերը բաժանվում են հինգ հիմնական տիպերի՝ Արթիկի, Երևանյան, Անիական, Բյուրականի և ֆելզիտային:

Արթիկի տիպի տուֆեր, որոնցով հայտնի են Արթիկի, Տուֆաշենի, Ջառինջ–Չիթնանքի, Կաթնաղբյուրի, Մարալիկի, Մաստարա–Սառնաղբյուրի հանքավայրերը, լինում են տարբեր գույների՝ վարդագույն, կարմրավուն, մանուշակագույն, սև, մոխրագույն:

Անիական տիպի տուֆեր կան Անիպեմզայի, Հայկաձորի և Խարկովի (բոլորն էլ Անիի տարածաշրջանում) հանքավայրերում: Դրանք դեղին են, բաց կարմրավուն, մուգ կարմիր, մուգ վարդագույն, նարնջագույն են:

Երևանյան տիպի տուֆերը, որոնցից կան Անիի (Անիի տարածաշրջան), Ալագյազի, Ապարանի, Երնջատափի (Ապարանի տարածաշրջան), Վահրամաբերդի, Ջաջուռի, Մայիսյանի, Մարմաշենի, Հայկավանի, Կապսի, Խաչքարի (Ախուրյանի տարածաշրջան), Վարդ Բաղի, Չերքեզի ձորի (Գյումրիի հանգույց), Արաքսի, Լուկաշենի, Մրգաշատի, Հոկտեմբերյանի (Արմավիրի տարածաշրջան), Կարմրաշենի, Կաթնաղբյուրի, Մաստարայի, Թալինի (Թալինի տարածաշրջան), Արագյուղի, Եղվարդի, Օհանավանի (Աշտարակի տարածաշրջան), Արչուտի, Դարպասի, Դիմացիսարի, Լեռնապարի, Մակարաշենի (Գուգարքի տարածաշրջան), Արամուսի, Առինջի, Գառնիի, Գեղարդի, Զրվեժի, Ձորաղբյուրի, Մայակովսկու (Աբովյանի տարածաշրջան), Արգավանդի, Բաղրամյանի, Նորակերտի, Փարաքարի, Շորբուլաղի (Էջմիածնի տարածաշրջան) և այլ հանքավայրերում, ունեն կարմիր, վառ կարմիր, մոխրագույն, սև, գորշ, մուգ գորշ, վարդագույն, գորշ մանուշակագույն գույներ զանազան երանգներով:

Բյուրականի տիպի տուֆերով հայտնի են Ագարակի, Աշտարակի, Բյուրականի, Կոշ–Ուջանի, Թալիշ–Շամիրամի, Փարպիի, Օշականի (Աշտարակի տարածաշրջան), Աղավնատան (Էջմիածնի տարածաշրջան), հանքավայրերը, որոնք ունեն սև բծերով կարմիր, վարդագույն, սև բծերով, գորշ սև ու այլ գույներ:

Ֆելզիտային տիպի տուֆերով հայտնի են Ծաթեր–Ղաչաղանի, Թումանյանի (Թումանյանի տարածաշրջան), Մեղովկայի, Շահնազարի (այժմ Մեծավան), Ղարաքիլիսայի (Տաշիրի տարածաշրջան), Դեբեդի, Շահալուի (Գուգարքի տարածաշրջան), Նորադուզի (Գավառի տարածաշրջան), Ծովագյուղի (Սևանի տարածաշրջան), Մարտիրոսի (Վայքի տարածաշրջան), Աղասաֆինի, Գետափի (Եղեգնաձորի տարածաշրջան), Բերթախի, Բարեկամության, Ղալաչու, Քորփլուի (Նոյեմբերյանի տարածաշրջան), Գուլաքարակի (Ստեփանավանի տարածաշրջան), Այգեձորի, Կարմիրաղբյուրի (Տավուշի տարածաշրջան) հանքավայրերը:

Ֆելզիտային տուֆերը ունեն կարմրավուն, վարդագույն կարմիր, կապտավուն, գորշ, սպիտակ, բաց երկնագույն, կաթնագույն և այլ գույներ:

Հայկական տուֆերի նշված գույներն, իհարկե, բոլորը չեն: Դրանցից շատերի վրա բնությունը ստեղծել է գույների այնպիսի ներդաշնակություն, աստիճանաբար մեկը մյուսին անցնող այնպիսի երանգներ, շերտեր ու նախշեր, որոնց կնախանձեր յուրաքանչյուր հմուտ գեղանկարիչ:

Տուֆաքարերը ձայնի ու ջերմության վատ հաղորդիչ են, որը բարձրորակ բնական քարանյութի կարևոր առանձնահատություններից մեկն է: Որպես անգերազանցելի բնական քարանյութեր, տուֆերի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ երկարակեցությունն է: Բնական մյուս բոլոր տեսակի որմնանյութերի համեմատությամբ տուֆերի առավելություններից է նաև ծակոտկենությունն ու թեթևությունը: Շնորհիվ ծակոտկենության, տուֆերը բնական միջավայրում թրծված են և ջերմաստիճանի տատանումները սրանց վրա չնչին ազդեցություն են թողնում, որը և երկարադիմացկունության հիմնական պայմաններից մեկն է: Բացի դրանից, տուֆերը հեշտ մշակվում, ցանկացած ձևի կոտրվում, հիանալի սղոցվում և մեխվում են:

Տուֆերն ունեն նաև թթվակայուն, ձայնամեկուսիչ բարձր հատկություններ: Եթե այս բոլորին ավելացնենք նաև, որ հրաբխային տուֆերից կառուցված շենքերը լրացուցիչ արտաքին երեսապատման կարիք չունեն և կառուցումից հետո անհրաժեշտություն չի լինում տները արտաքինից վերանորոգել, որը շինարարության համար խոշոր առավելություն է, ապա պարզ կլինի, որ դրանք, հիրավի անգերազանցելի բնական շինանյութեր են:

Բացի անգերազանցելի որմնանյութ լինելուց, տուֆերը օգտագործվում են նաև թեթև լցանյութեր (խիճ, ավազ) արտադրելու համար. դրանք նաև օգտագործվում են որպես ֆիլտրող նյութեր, մանրացված տուֆը կարելի է օգտագործել հողի բերքատվությունը բարձրացնելու համար (մանրացված տուֆը հողի հետ խառնելով՝ դրանք անձրևների ժամանակ կլանում են խոնավությունը և հետո դանդաղ հաղորդում հողին):

Հայաստանի տարածքում պահպանված, հազարամյակների պատմություն ունեցող կանգուն ու կիսականգուն ճարտարապետական հազարավոր անզուգական կոթողների մեծ մասը կառուցված են տուֆաքարից:

Ամբողջապես տուֆաքարերով են կառուցված Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքները, ինչպես նաև գյուղական բնակավայրերի մեծ մասը: Ի դեպ, պատմական Հայաստանի մայրաքաղաքներից մեկը՝ Անին, նույնպես ամբողջապես տուֆից է եղել կառուցված:

Հայաստանի Հանրապետության քարանյութերի համակարգում տնտեսական նշանակության տեսակետից շատ խոշոր դեր են խաղում նաև ***բազալտներն ու դրա խմբին պատկանող մյուս ապարները (անդեզիտները, անդեզիտաբազալտները):*** Հրաբխային ժայթքումների ժամանակ երկրի մակերես է դուրս եկել հսկայական քանակությամբ լավա, որի սառչելուց հետո առաջացել են էֆուզիվ բազմատեսակ ապարներ՝ հատկապես բազալտներ, անդեզիտներ, դացիտներ, անդեզիտաբազալտներ:

Հայաստանի տարածքում հրաբխային բոլոր տեսակի ապարներից ամենից լայն տարածում ունեն բազալտները ու դրանց տարատեսակները: Բազալտների պաշարները հատկապես խոշոր են Ախուրյանի, Անիի, Աբովյանի, Աշտարակի, Վայքի, Թումանյանի, Գորիսի, Գավառի, Կապանի, Մարտունու, Սևանի, Սպիտակի, Սիսիանի, Թալինի տարածաշրջաններում և հանրապետության մյուս վայրերում: Դրանց պաշարները մեծ են նաև Երևան քաղաքի շրջակայքում:

Բազալտներից և անդեզիտներից կազմված հրաբխային ապարները Սյունիքի մարզի միայն Գորիսի ու Սիսիանի ենթաշրջաններում զբաղեցնում են 2400, Սևանի ավազանի Մարտունու և Գավառի ենթաշրջաններում՝ 1600, Աբովյանի տարածաշրջանում՝ 850, Վայքի տարածաշրջանում՝ 700 կմ^2 տարածություն:

Հայկական հրաբխային լեռնաշխարհի շատ վայրերում կարելի է հանդիպել մեծ հատաքրքրություն ներկայացնող բազալտե ուղղաձիգ սյունաշարերի: Բնական այդպիսի հրաշագեղ տեսարաններ կան Գառնու ձորում, Արփա գետի կիրճում, Որոտանի անդնդախոր կիրճում, Երևանի մանկական երկաթուղու մոտ՝ Հրազդան գետի կիրճում և շատ այլ վայրերում:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված բազալտի երկրաբանական պաշարները գնահատվում են 125 մլրդ մ^3:

Տուֆաքարի համեմատությամբ բազալտները շատ ավելի ամուր, դիմացկուն, կարծր, թթվակայուն, համեմատաբար դժվար մշակվող քարանյութեր են:

Մեծ ամրության, երկարադիմացկունության և բարձր թթվայնության շնորհիվ բազալտները դեռ անհիշելի ժամանակներից օգտագործվել են Հայաստանում բնակավայրերի, եկեղեցական շինությունների կառուցման համար: Երևանի և հանրապետության մյուս բոլոր քաղաքների տուֆակերտ բոլոր շենքերի հիմքերն ու ստորին հարկերը կառուցված են կամ երեսապատված սրբատաշ և դրվագված բազալտաքարերով (հաշվի առնելով այդ քարանյութի մեծ դիմացկունությունն ու հատկապես խոնավ պայմաններում երկարադիմացկունությունը): Առանձնահատուկ նշանակություն ունեցող շենքերն ամբողջապես կառուցվում են կամ երեսապատվում են սրբատաշ բազալտով: Այսպես, օրինակ, Երևան քաղաքում Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) շենքը ամբողջապես կառուցված է բազալտաքարով: Ամբողջապես բազալտաքարով է կառուցված նաև Երևանի գինու կոմբինատի յուրատիպ շենքը:

Խնդիրը կայանում է նրանում, որ բազալտաքարը շատ մեծ դիմացկունությունից բացի ունի նաև ջերմամեկուսիչ բարձր հատկանիշներ: Իսկ քա-

նի որ Մատենադարանում պահպանվող և համազգային անգնահատելի արժեք ներկայացնող, դարերի խորքերից մեզ հասած ձեռագրերը շենքի ներսի ջերմաստիճանների տատանումներից շուտ շարքից կարող են դուրս գալ, ապա այդ եզակի շենքը կառուցվել է բազալտով, որպեսզի նրա ներսի ջերմաստիճանները ամռանն ու ձմռանը մեծ տատանումներ չտան: Այդ նույն նկատառումներով բազալտից է կառուցվել նաև գինու կոմբինատի շենքը, որպեսզի նրա նկուղներում պահպանվող գինու տեսակները չորակազրկվեն (այդ նկուղներում այժմ պահվում են 1880–ական թվականներից մինչև այժմ արտադրված գինու բոլոր տեսակները):

Որպես կարծր ու առավել դիմացկուն շինանյութ բազալտները Հայաստանում կիրառվում են նաև կամուրջների, հիդրոտեխնիկական և շատ այլ բարդ կառույցներում: Այստեղ այդ քարանյութը լայն կիրառություն ունի նաև քանդակագործության և հուշարձանների կառուցման գործում: Այն օգտագործվել է Երևանի «Հաղթանակ» կամրջի ու Հրազդանի մեծ կամրջի կառուցման համար: Բազալտաքարերով են ձևավորված Ծիծեռնակաբերդում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված հուշահամալիրը, Հաղթանակի այգու մոտ կանգնեցված մեծ Հոկտեմբերի 50–ամյակին նվիրված հուշարձանը: Ի դեպ, ամբողջապես բազալտից է եղել Ի դ. կառուցված Գառնու տաճարը, որը նույն շինաքարով էլ վերականգնվել է: Որպես երկարադիմացկուն շինաքար բազալտը լայնորեն օգտագործվել և օգտագործվում է հանրապետության քաղաքների փողոցների, հատկապես մայթերի ձևավորման, բնակելի ու մյուս շենքերի աստիճանների կառուցման համար:

Բացի դրանից, բազալտը մանրացված վիճակում, որպես խիճ, լայնորեն օգտագործվում է բարձրորակ բետոնի արտադրության համար:

Սակայն հայկական բազալտաքարերի տնտեսական նշանակությունը դրանով չի սահմանափակվում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք նաև բարձրորակ հումք են ձուլածո քարի արտադրության համար: Քարածուլման արտադրության կազմակերպումը հատկապես Հայաստանի Հանրապետության համար ունի տնտեսական կարևոր նշանակություն: Նախ այն պատճառով, որ տեղում կան նրա համար անհրաժեշտ որակյալ հումքի պաշարներ, մյուս կողմից, հանրապետությունը արտասահմանից ներմուծում է չուգունե և պողպատե բոլոր տեսակի խողովակներն ու առհասարակ սև մետաղները ամբողջապես:

Քարածուլման արտադրության (պետրուրգիա) կազմակերպումը հնարավորություն կտա տեղում ձուլածո բազալտից թողարկել տարբեր չափսերի, էժան, դիմացկուն, ինչպես նաև չուգունին ու պողպատին փոխարինող բազմատեսակ իրեր:

Բացի բազալտների խմբին պատկանող ապարներից, Հայաստանի Հանրապետության տարածքում լայն տարածում ունեն նաև ***անդեզիտներն ու անդեզիտաբազալտները:*** Սրանք բազալտներից տարբերվում են համեմատաբար թեթևությամբ, ծակոտկենությամբ և բարձր թթվայնությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործնական նշանակություն ունեցող անդեզիտի ու անդեզիտաբազալտների հանքավայրերից հատկապես նշանավոր են Անիի, Արզնու, Կապուտանի, Մեղրուտի, Կիրովականի (այժմ Վանաձոր), Խնձորուտի հանքավայրերը:

Անիի հանքավայրի երկրաբանական պաշարները կազմում են ավելի քան 24 մլն մ^3, անդեզիտի շերտի հզորությունն այստեղ հասնում է 50 մետրի: Հանքավայրը գտնվում է Անի երկաթուղային կայարանի մոտ, այդ պատճառով նրա տնտեսական նշանակությունը բարձր է: Այս հանքավայրը շահագործում էր «Անիպեմզա» կոմբինատը, որը մինչև 1990–ական թվականները տարեկան արտադրում էր 10–15 հազ. տոննա անդեզիտի ալյուր և տարբեր տեսակի շինանյութեր:

Անդեզիտի ալյուրը խոշոր նշանակություն ունի քիմիական արդյունաբերության, հատկապես թթուներ թողարկող արտադրամասերի հարդարման համար, քանի որ ունի բարձր թթվայնություն:

Անդեզիտի ալյուրի պահանջը շատ մեծ է, և Հայաստանը հանդիսանում էր այդ նյութի նախկին ԽՍՀՄ–ի հիմնական մատակարարողը:

Հայկական անդեզիտից արտադրվում էին նաև «գարնիտուրներ», որոնք օգտագործվում են թղթի ու ցելյուլոզի արդյունաբերության մեջ փայտի զանգվածը մանրացնելու համար:

Այդպիսի արտադրատեսակներ թողարկելու համար վերը նշված բոլոր հանքավայրերի անդեզիտներն ու անդեզիտաբազալտները շատ պիտանի են:

Հանրապետության բնական քարանյութերի շարքում առանձնահատուկ կարևոր տեղ ունեն ***մարմարները:***

Մարմարներն իրենց դեկորատիվ և ֆիզիկամեխանիկական հատկությունների տեսակետից մյուս բոլոր քարանյութերի շարքում յուրահատուկ տեղ են գրավում: Պատահական չէ, որ դեռ հնագույն ժամանակներից այդ քարանյութը լայնորեն օգտագործվել է Հունաստանի, Իտալիայի ու քաղաքակիրթ մյուս երկրների ճարտարապետական կարևորություն ունեցող շինությունների կառուցման, հարդարման համար: Աթենքի, Հռոմի, Վենետիկի, Ճենովայի, իտալական և հունական մյուս նշանավոր քաղաքների շենքերի մեծ մասը կառուցված, ձևավորված են շատ նրբորեն մշակված մարմարով:

Ի դեպ, մարմարը բարձրորակ դեկորատիվ նյութ է շենքերի ոչ միայն արտաքին ձևավորման, այլև ներքին հարդարման համար:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են մարմարի ու մարմարեցված կրաքարի 28 հանքավայր, որոնցից 7–ը շատ հանգամանորեն ուսումնասիրված են: Ուսումնասիրված հանքավայրերի (ներառյալ մարմարեցված կրաքարերը) պաշարները կազմում են ավելի քան 21 մլն մ^3, որից արդյունաբերական կարգի 17 մլն մ^3:

Բնական այս կարևոր քարանյութի պաշարներով հայտնի են Արարատի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի մարզերը: Այժմ հանրապետության տարածքում եղած մարմարի հանքավայրերից գործնական նշանակություն ունեն, այսինքն՝ արդյունահանման աշխատանքներ են կատարվում Արարատի, Իջևանի ու Ենոքավանի, Աղվերանի հանքավայրերում:

Երևանի, Մոսկվայի ու նախկին ԽՍՀՄ մյուս խոշոր քաղաքների ճարտարապետական շատ կառույցների ներքին հարդարման համար օգտագործվել են հայկական մարմարների տեսակներ: Մասնավորապես, դրանք լայնորեն օգտագործվել են Հայաստանի Կառավարական տան ներքին ձևավորման, ինչպես նաև Մոսկվայի մետրոպոլիտենի «Հեղափոխության հրապարակ», «Սվերդլովի հրապարակ», «Կինյան» և այլ կայարանների ձևավորման համար:

Յուրահատուկ է Խոր Վիրապի հանքավայրի մարմարը, այն ունի սև գույն՝ սպիտակ, դեղին երանգներով, որոնք այդ շինանյութին տալիս են շատ ճոխ բնական գեղեցկություն: Այս շինանյութը տարբեր ժամանակներում և տարբեր չափերով կիրառվել է Երևանի, Թբիլիսիի, Բաքվի, Մոսկվայի ու այլ քաղաքների հատուկ կարևորություն ունեցող կառույցների ներքին ձևավորման համար:

Գործնական կարևոր դեր է խաղացել մարմարի Աղվերան–Արզական հանքավայրերի խումբը: Հանրապետության տարածքում առաջին անգամ այստեղ է սկսվել մարմարի արդյունաբերական եղանակով հանույթը:

Այս հանքավայրի մարմարը կիրառվել է հանրապետությունում և նախկին ԽՍՀՄ տարբեր խոշոր քաղաքներում: Հատկապես այն մեծ չափով օգտագործվել է Հայաստանի Կառավարության տան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի, Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի, Մոսկվայի մետրոպոլիտենի «Նովոկուզնեցկայա», «Պավելեցկայա» և այլ կայարանների ձևավորման համար:

Այդ հանքավայրերի խմբից այժմ շահագործվում են Աղվերանի հանքավայրերի կենտրոնական և Եղնիկասարի հատվածները:

Ներկայումս արդյունաբերական խոշոր նշանակություն ունի Իջևանի մարմարի հանքավայրը: Այս և մյուս հանքավայրերից արդյունահանված մարմարը մշակվում է Նուռնուսի քարամշակման գործարանում և Երևանի «Հայմարմար» կոմբինատում:

Իջևանի մարմարը լայնորեն օգտագործվել է Սունդուկյանի անվան թատրոնի, մարզահամերգային համալիրի, Երևանի պետական համալսարանի, Երևանի մետրոպոլիտենի, Սարդարապատի ազգագրական թանգարանի և շատ այլ կառույցների ներքին հարդարման համար:

Հանրապետության շինանյութերի արդյունահանման համակարգում յուրահատուկ դեր է խաղացել Մարմարաշենի (Մասիսի տարածաշրջանում) ***օնիքսանման մարմարի*** հանքավայրը: Այն ունի սպիտակավուն , ոսկյա դեղին, կանաչավուն և այլ տարբեր երանգներ:

Այժմ գործնական նշանակություն ունի Արտավազդի ***օնիքսանման մարմարի*** հանքավայրը, որը գտնվում է Վեդի ավանից ոչ մեծ հեռավորության վրա: Այստեղ այդ բարձրորակ դեկորատիվ շինանյութի արդյունաբերական պաշարները կազմում են 500 հազ. մ^3: Ճարտարապետական շատ կոթողների ներքին հարդարման համար օգտագործվում է նաև հայկական ***կոնգլոմերատը:*** Առավել հայտնի է Իջևանից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող կոնգլոմերատի հանքավայրը, որն իր դեկորատիվ հատկություններին տեսակետից բացառիկ շինանյութ է: Այն օգտագործվել է Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի ու այլ քաղաքների ճարտարապետական եզակի կառույցներում, այդ թվում Մոսկվայի Կրեմլի համագումարների պալատի ճեմասրահի հարդարման համար:

Հայկական գունավոր մարմարները ոչ միայն բարձրորակ հումք են շինարարության տարբեր բնագավառներում օգտագործվող երեսապատման սալեր արտադրելու համար, այլև այն օգտագործվում է քանդակագործության մեջ, ինչպես նաև լայն սպառման առարկաների, զարդերի արտադրության համար: Հանրապետությունն ունի նաև կրաքարի ու տրավերտինի խոշոր պաշարներ: Կրաքարի առավել խոշոր պաշարներ կան Արարատի, Կապանի տարածաշրջաններում, Ջաջուռի շրջակայքում և այլուր:

Արարատի հանքավայրի կրաքարը օգտագործվում է ցեմենտի, ինչպես նաև կրի արտադրության համար: Բարձրորակ տրավերտինի պաշարներով հատկապես հանրահայտ է Արարատ քաղաքի մոտ գտնվող հանքավայրը, որտեղ 2001 թվականից սկսվել են արդյունահանման խոշոր աշխատանքներ: Այստեղից արդյունահանված տրավերտինը մշակվում է Աբովյան քաղաքում կառուցված ժամանակակից խոշոր գործարանում: Այդ քարատեսակից արտադրվում են երեսապատման սալիկներ, որոնք որակով չեն զի-

ջում իտալական տրավերտինին: Արտադրված երեսապատման սալիկները արտահանվում են ԱՄՆ և այլ երկրներ:

Հայաստանի Հանրապետության տարածքում կան նաև ***գրանիտի խոշոր պաշարներ:*** Դրանց առավել խոշոր հանքավայրերը գտնվում են Գուգարքի, Նոյեմբերյանի, Մեղրու, Կապանի, Սիսիանի, Հրազդանի, Թումանյանի տարածաշրջաններում: Հանրապետության տարածքում հայտնաբերված գրանիտների խմբի ապարների հանքավայրերի թիվը հասնում է հիսունի: Գրանիտների հետախուզված պաշարները կազմում են ավելի քան 30 մլն մ^3:

Անհիշելի ժամանակներից գրանիտները Հայաստանում օգտագործվում են հուշարձանների պատրաստման համար: Այժմ դրանք առավել լայնորեն օգտագործվում են նաև շինարարական նպատակներով: Առավել մեծ չափերով մեզ մոտ գրանիտները սղոցվում են և արտադրվում են երեսապատման սալիկներ, հիմնականում օգտագործվում շենքերի ներքին ձևավորման, աստիճանների կառուցման և այլ նպատակների համար: Առանձին դեպքերում դրվագված գրանիտը օգտագործվում է նաև կառույցների արտաքին ձևավորման համար:

Այսպես, օրինակ, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնի շենքը կառուցված է Փամբակի գրանիտով: Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայումս գրանիտի շահագործվող խոշոր հանքավայրը Փամբակի հանքավայրն է (Գուգարքի տարածաշրջանում), որը գտնվում է Վանաձորից ոչ մեծ հեռավորության վրա: Փամբակի հանքավայրում գրանիտի շերտի հզորությունը հասնում է 250 մետրի, արդյունաբերական պաշարները՝ 7 մլն մ^3: Այս հանքավայրի գրանիտը մանրահատիկ է և դասվում է բարձրորակ դեկորատիվ գրանիտների շարքը: Հեռանկարային մեծ նշանակություն ունի Լերմոնտովի գրանիտի (գաբրո) հանքավայրը, որը գտնվում է Վանաձորից 15 կմ դեպի արևելք:

Գրանիտի խոշոր պաշարների առկայությունը, ինչպես նաև արդյունահանման ու մշակման համար ստեղծված ներկայիս պայմանները հնարավորություն են տալիս Հայաստանի Հանրապետությունում այդ բարձրորակ դեկորատիվ շինաքարի արդյունահանումը մեծ չափով ավելացնել: Դրա շնորհիվ հնարավորություն կստեղծվի գրանիտը լայնորեն օգտագործել ոչ միայն շենքերի արտաքին ձևավորման, այլև հանրապետության քաղաքների փողոցներն այդ դիմացկուն և գեղեցիկ քարանյութով սալահատակելու համար:

Տուֆաքարերից, բազալտաանդեզիտային ապարներից, մարմարներից, գրանիտներից, կրաքարերից, դոլոմիտներից, հրակայուն ապարներից

բացի ՀՀ տարածքը հարուստ է հրաբխային ծագում ունեցող թեթև լցանյութերի՝ ***հրաբխային խարամների, պեմզայի ու պեռլիտների պաշարներով:***

Հրաբխային խարամները բնական թեթև, ծակոտկեն ապարներ են, որոնք հրաբխային ժայթքումների արդյունք են, ունեն կարմիր, սև գույներ՝ իրենց բազմաթիվ երանգներով: Դրանք բնական վիճակում լինում են մանր և խոշոր կտորներով: Խարամները առաջացել են թեթևահալ մագմայից, և ծակոտկենությունը պեմզայի համեմատությամբ ավելի ուժեղ է արտահայտված: Հանրապետության տարածքում հայտնաբերված և հետազոտված են հրաբխային խարամների երեսունից ավելի հանքավայրեր: Դրա պաշարներով առավել հարուստ են՝ ***Թալինի, Բաղրամյանի, Արթիկի, Սիսիանի, Գորիսի, Գավառի, Վայքի*** տարածաշրջանները: Հրաբխային խարամները բարձր որակի թեթև լցանյութեր են, որոնց բազայի վրա արտադրվում է թեթև և ֆիզիկամեխանիկական բարձր հատկություններ ունեցող բետոն, այն օգտագործվում է նաև որպես ֆիլտրող նյութ, ձայնամեկուսիչ իրեր և շատ այլ արտադրանք թողարկելու համար:

Հանրապետության հրաբխային խարամի շահագործվող խոշորագույն հանքավայրը ***Կարմրաշենի*** հանքավայրն է (Բաղրամյանի տարածաշրջանում), որի պաշարները կազմում են շուրջ 53 մլն մ^3:

Նշանավոր են նաև Քարահունջի, Շինուհայրի, Գավառի, Լճաշենի, Պեմզաշենի ու այլ հանքավայրեր: Այդպիսի քարանյութի խոշոր պաշարներ կան նաև Վայքում ու հանրապետության այլ վայրերում:

Պեմզան հրաբխային ժայթքման արդյունք է: Բնական վիճակում այն լինում է մանր ավազի ու ավելի խոշոր կտորների ձևով:

Հանրապետության տարածքում կա պեմզայի շուրջ 70 հանքավայր, որոնցից առավել խոշորները գտնվում են Անիի, Աբովյանի, Ապարանի, Արթիկի, Գորիսի, Հրազդանի տարածաշրջաններում:

Գործնական նշանակության տեսակետից առավել կարևոր են Անիի ու Պեմզաշենի հանքավայրերը: Այս հանքավայրերի պեմզան առավել թեթև ու ծակոտկեն է և պատկանում է «Անիի տիպին»: Այն օգտագործվում է թեթև միջնորմային սալիկներ ու բլոկներ արտադրելու համար, բացի դրանից, այդ տիպի պեմզան լայնորեն օգտագործվում է որպես բարձրորակ ֆիլտրող, մաքրող նյութ և հղկանյութ:

Հայաստանի Հանրապետության տարածքում ավելի խոշոր պաշարներ ունեն ***լիթոիդային պեմզաները:*** Լիթոիդային պեմզաները փաստորեն պեռլիտների տարատեսակ են, որոնք ավելի քիչ ծակոտկեն են, ավելի

կարծր ու ամուր: Դրանք լայնորեն օգտագործվում են երկաթբետոնե կոնստրուկցիաների ու շաղախ արտադրելու համար:

Պեռլիտները մեծ հետաքրքրություն ներկայացնող քարանյութեր են, որոնց գաղտնիքները այժմ գիտությունը պարզում է: Պեռլիտները հրաբխային ծագում ունեն, կազմված են այսպես կոչված հրաբխային ապակուց: Համեմատաբար ոչ բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ պեռլիտները փափկում են, իսկ դրանց մեջ բնականորեն պարունակվող աննշան ջուրը վերածվում է գոլորշու, որի ներքին ճնշման ազդեցությամբ փքված պեռլիտի ծավալային կշիռը մեծ չափով իջնում է: Իսկ դա հնարավորություն է տալիս պեռլիտից արտադրելու գերթեթև երկաթբետոնե ու շինարարական շատ այլ իրեր, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն Հայաստանի սեյսմիկ պայմաններում բարձրահարկ շենքերի կառուցման համար: Բացի շինանյութերից, պեռլիտներից կարելի է ստանալ հարյուրից ավելի արտադրատեսակներ, այդ թվում՝ ֆիլտրող նյութեր, ապակու բոլոր տեսակները, ապակե պլաստիկա և այլն:

Պեռլիտների պաշարներով ու դրանց որակով Հայաստանի Հանրապետությունը աշխարհում եզակի տեղ ունի:

Այստեղ հայտնաբերված են պեռլիտների տասնյակ հանքավայրեր, որոնք հիմնականում գտնվում են Աբովյան–Հրազդան հանգույցում ու Արագածի լեռնալանջին: Առավել հանրահայտ հանքավայրը, որը աշխարհում ճանաչված է, Արագածի հանքավայրն է (Թալինի տարածաշրջանում): Հանրապետության պեռլիտների հանքավայրերում պեռլիտի հետ միասին կան նաև ***օբսիդիանի*** պաշարներ: Դրանք հիմնականում սև գույնի են, սակայն կան նաև շատ այլ երանգներ ունեցող օբսիդիան: Դա շատ կարծր հրաբխային ապակի է, որը դեռ հնուց հայերը օգտագործել են որպես կտրող գործիք, որսորդական զենքերի համար և այլն: Տեխնիկայի արդի պայմաններում օբսիդիանը լայնորեն մշակվում, հղկվում, և արտադրվում են ամենատարբեր տեսակների զարդեր, լայն սպառման իրեր, որոնք մեծ պահանջարկ ունեն:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են ***բենտոնիտների ու դիատոմիտների խոշոր պաշարներ:***

Բենտոնիտների առավել խոշոր պաշարներ կան Իջևանից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Սարիգյուղի մոտ: Բենտոնիտային կավերը մեծ պահանջարկ ունեն նավթարդյունաբերության և երկրաբանության մեջ, ինչպես նաև օգտագործվում են որպես մաքրող նյութ: Նույն նպատակների համար են օգտագործվում նաև դիատոմիտային կավերը, որոնց պաշարներով հայտնի են Արտաշատի ու Սիսիանի տարածաշրջանները:

Հետաքրքիր է, որ հանրապետության տարածքում կան բենտոնիտների 55 հանքավայր ու երևակում: Այս հումքի ուսումնասիրված արդյունաբերական պաշարները շուրջ 63 մլն տ է:

Հանրապետության տարբեր հատվածներում հայտնաբերված են նաև իսլանդական շպատի, կվարցի, ազբեստի երևակումներ: Գործնական նշանակության տեսակետից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այստեղ գտնվող ***քարաղի*** խոշոր պաշարները: Առավել հանրահայտը Երևանի ու նրա շրջակայքում գտնվող բարձրորակ կերակրի աղի պաշարներն են: Այդպիսի հումքի խոշոր պաշարներ կան նաև Արարատյան դաշտի արևմտյան հատվածում՝ Հոկտեմբերյանի (այժմ Արմավիրի) շրջակայքում:

Հանրապետությունում հայտնաբերված քարաղի կանխագուշակված պաշարները գնահատվում են 300–320 մլրդ տոննա:

Այն ոչ միայն բարձր որակական հատկանիշներ ունի որպես խոհանոցային աղ, այլև սննդի արդյունաբերության բոլոր բնագավառներում ու քիմիական արդյունաբերության մեջ օգտագործելու համար:

Այժմ շահագործվում է Երևան քաղաքի Ավան թաղամասի տարածքում գտնվող աղի հանքավայրը: 2003–2004 թթ. տվյալներով, այս հանքավայրից տարեկան արդյունահանվում է 30–32 հազ. տոննա աղ (արդյունահանվում է «էքստրա» տեսակի աղ, քարաղ և մանրացված աղ: Նույն տարիների տվյալներով ՀՀ–ից արտահանվում է 2,7–3,0 հազ. տոննա աղ (հիմնականում՝ Վրաստան):

✓ **<u>ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ:</u>** Հողը կենսական նշանակություն ունեցող բնական ռեսուրսների թվին է պատկանում: Այն վերականգնվող ռեսուրս է, սակայն, վերականգնվող ռեսուրսներից այն ամենադանդաղ վերականգնվողն է: Բավական է ասել, որ հարյուր տարվա ընթացքում կարող է առաջանալ մեկ սանտիմետր սնահող:

Հողը զբաղեցնում է երկրակեղևի վերին շերտը և օժտված է բերրիության հատկանիշով, հետևաբար, հիմք է հանդիսանում մարդկության համար կենսական նշանակություն ունեցող արտադրության ճյուղի՝ գյուղատնտեսության համար: Այսպիսով՝ հողը գյուղատնտեսական արտադրության հիմնական արտադրամիջոցն է: Ի տարբերություն մյուս արտադրամիջոցների, այն ոչ միայն չի մաշվում, այլև ճիշտ, ռացիոնալ մեթոդներով օգտագործելու դեպքում ավելի որակով է դառնում:

Քանի որ հողը վճռական դեր է խաղում բուսականության, դրանց ֆոտոսինթեզի, երկրակեղևի վերին շերտի ջրային ռեժիմի կարգավորման համար, ապա այդ ռեսուրսի դերը հիրավի անփոխարինելի է:

Հողի մեջ պարունակվում են քիմիական բազմատեսակ տարրեր, որոնցից հատկապես կալիումը, կալցիումը, ֆոսֆորը, ազոտը վճռական դեր են խաղում բույսերի համար:

Իրենց որակական հատկանիշներով, ֆիզիկամեխանիկական կառուցվածքով հողերը լինում են տարբեր տեսակի:

Առավել բարձր որակ, բարձր բերրիություն ունեն այսպես կոչված ***սևահողերը,*** որոնց մեջ հումուսը (բույսերի համար անհրաժեշտ սննդային զանգվածը) բարձր է և հասնում է մինչև 10 և ավելի տոկոսի:

Երկրագնդի վրա այդպիսի բերրի հողատարածքները շատ անհավասարաչափ են տեղաբաշխված:

Ընդհանուր առմամբ, երկրագնդի 149 մլն կմ^2 ցամաքային տարածքից գյուղատնտեսական հողահանդակները կազմում են միայն 46 մլն կմ^2, այդ թվում վարելահողերն ու բազմամյա տնկարկները՝ ընդամենը 15 մլն կմ^2: Հողահանդակների ավելի մեծ մասը զբաղեցնում են արոտավայրերը ու խոտհարքերը:

Իսկ երկրագնդի ցամաքի, գյուղատնտեսական արտադրության համար նպաստավոր պայմաններ ունեցող զգալի հողատարածքներ էլ՝ շուրջ 3 մլն կմ^2, զբաղեցնում են քաղաքները, բնակավայրերը, ճեռնարկությունները, ճանապարհները:

Այսպիսով՝ երկրագնդի ամբողջ ցամաքի մեծ մասը՝ 100 մլն կմ^2–ին, գյուղատնտեսական արտադրության համար դեռևս տեխնիկապես օգտագործելի չէ:

Իսկ գյուղատնտեսական արտադրության պիտանի հողատարածքներն էլ, ինչպես ասվել է, խիստ անհավասարաչափ են տեղաբաշխված մայրցամաքների ու պետությունների միջև:

Կան պետություններ, որոնք շատ լավ կամ լավ են ապահովված լավորակ և ընդարձակ վարելահողերով, մյուսները այդ տեսակետից սուղ պայմաններ ունեն:

Այս վերջիններիս թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հանրապետության հողային ֆոնդը (այսինքն՝ տարածքը) 1998 թ. հունվարի 1–ի դրությամբ կազմում է 2974,3 հազ. հեկտար:

Քանի որ Հայկական լեռնաշխարհը, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, տիպիկ լեռնային երկիր է, ունի խիստ կտրտված մակերևույթ, տարածքի զգալի մասը լերկ ժայռեր են, ապա նրա գյուղատնտեսական արտադրության համար պիտանի հողատարածքները սահմանափակ են:

1998 թ. հունվարի 1–ի դրությամբ հանրապետության գյուղատնտեսական ամբողջ հողատեսքերը կազմում են 1391,4 հազ. հեկտար, որից վարելահողերը՝ 494,3 հազ. հեկտար, բազմամյա տնկարկները՝ 63.8 հազ. հա, խոտհարքերը՝ 139,8 հազ. հա, արոտավայրերը՝ 694,0 հազ. հա, խոպան հողեր՝ 0,4 հազ. հա:

Նույն տարվա տվյալներով՝ 1582,9 հազ. հա հողատարածքներ զբաղեցնում են անտառները, թփուտները, բնակավայրերը և անօգտագործելի հողատարածքները: Այսինքն՝ այդ քանակի տարածք չի կարող օգտագործվել գյուղատնտեսական արտադրության համար: Իսկ դա կազմում է հանրապետության տարածքի կեսից ավելին, շուրջ 55%–ը: Նշված տարածքի մեջ են մտնում նաև անտառային ֆոնդի հողերը, որոնք կազմում են շուրջ 428 հազ. հա:

Հայաստանի Հանրապետության հողերը բնութագրվում են խիստ բազմազանությամբ, որը պայմանավորված է կլիմայական ու ռելիեֆային պայմանների բազմազանությամբ, տարածքի ուղղաձիգ գոտիականությամբ:

Այստեղ առկա են անապատային, կիսաանապատային, աղուտային, անտառային դարչնագույն, լեռնային շագանակագույն, լեռնամարգագետնային, լեռնամարգագետնատափաստանային հողեր՝ իրենց տարատեսակներով և ֆիզիկամեխանիկական յուրահատկություններով:

Հումուսի պարունակությունը ամենից մեծ է լեռնամարգագետնային և մարգագետնային սևահողերում, որտեղ այն կազմում է միջինը 9%, առանձին վայրերում՝ 12%, անտառային հողերում՝ 4–9%, կիսաանապատային հողերում՝ մինչև 2%:

<u>ԿԻՍԱԱՆԱՊԱՏԱՅԻՆ,</u> որոշ տեղերում տիպիկ անապատային և աղուտային հողատարածքները ընդգրկում են Արարատյան դաշտը: Սրանք հանրապետության այն հողատարածքներն են, որոնք բնական վիճակում շատ աննշան բերք կարող են տալ կամ առհասարակ չտալ: Սակայն, քանի որ դրանք իրենց ռելիեֆային դիրքով հարմար են մշակման համար, ապա այստեղ դեռ շատ հնուց, իսկ ավելի ինտենսիվ վերջին հարյուրամյակում մելիորատիվ աշխատանքների, ոռոգման սիստեմի ստեղծման շնորհիվ, այդ հողատարածքները կուլտուրականացված են և լայնորեն օգտագործվում են հատկապես խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման համար: Հենց այդ վայրն էլ (այսինքն՝ Արարատյան դաշտը) այժմ համարվում է հանրապետության գյուղատնտեսության առավել ինտենսիվ զարգացման ռեգիոնը:

Արարատյան դաշտի կուլտուրականացված այդ հողերը այժմ զբաղեցնում են ավելի քան 100 հազ. հեկտար տարածք: Դրանք տարածված են հիմնականում Արարատյան գոգավորության մինչև 1000 մ բարձրություններում:

ԳՈՐՇ ԼԵՌՆԱՅԻՆ ՀՈՂԵՐԸ ընդգրկում են Արարատյան գոգավորության հիմնականում 1000–1300 մ բարձրությունները: Սրանք բնութագրվում են կրանյութի մեծ պարունակությամբ, հումուսը կազմում է մաքսիմում մինչև 2 տոկոս (բնական ծնով), զգալի տարածություն են զբաղեցնում այստեղ քարքարոտ վայրերը, որոնք կոչվում են «ղռեր»:

Այս հողատարածքները նույնպես մարդու կողմից կուլտուրականացված են, օգտագործվում են հիմնականում այգեգործության և պտղաբուծության համար:

Արարատյան գոգավորության ավելի բարձրադիր մասերում՝ 1300–1600մ բարձրություններում, ինչպես նաև Արփա գետի հովտում տարածված են ***լեռնաշագանակագույն հողերը***, որտեղ հումուսի պարունակությունը հասնում է մինչև 5 տոկոսի: Տարածքի առումով այս հողերը կազմում են հանրապետության ամբողջ հողային ֆոնդի շուրջ 15 տոկոսը:

Մելիորատիվ աշխատանքների շնորհիվ սրանք դարձել են հանրապետության գյուղատնտեսական արտադրության համար հիմնական ռեգիոններից մեկը:

Հայաստանի Հանրապետության հողատեսակներից ամենաընդարձակ տարածքը զբաղեցնում են ***լեռնային սնահողերը,*** որոնք կազմում են ողջ հողային ֆոնդի ավելի քան 25 տոկոսը:

Հանրապետության սնահողերը հիմնականում ընդգրկում են Շիրակի դաշտը, Լոռու սարահարթը, Ապարանի սարահարթը, Կոտայքի մարզի տարածքը, Սևանա լճի ավազանի տարածքը (Գեղարքունիքի մարզ), ինչպես նաև Զանգեզուրի հյուսիսային մասը՝ Սիսիանի ու Գորիսի տարածաշրջանները: Այս վայրերում սնահողերը պարունակում են մաքսիմում 10 տոկոս հումուս և հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հացահատիկային տնտեսության, կարտոֆիլի ու կերակուլտուրաների աճեցման հիմնական վայրերը: Լեռնային սնահողերը զբաղեցնում են 1300–2400մ բարձրություններ ունեցող տարածքները:

Բավականին ընդարձակ տարածություններ են զբաղեցնում ***դարչնագույն անտառային հողերը*** (հողային ֆոնդի շուրջ 20%), որոնք տարածված են հիմնականում Տավուշի մարզի (Նոյեմբերյանի, Իջևանի ու Տավուշի տարածաշրջանների), Լոռու մարզի (Թումանյանի ու Գուգարքի տարածաշրջանների), ինչպես նաև Սյունիքի մարզի (Կապանի տարածաշրջանի) անտառածածկ վայրերում: Դրանք կղզիների ձևով տարածված են նաև Հրազդանի տարածաշրջանի (Ծաղկունյաց լեռների լանջերին), Արագածի փեշերի, Արփայի ավազանի անտառածածկ վայրերում: Անտառային այս հողատեսակը տարածված է ծովի մակերևույթից 900–2400 մ բարձրություն-

ներում: Հումուսի պարունակությունն այս հողատեսակում զգալի չափով բարձր է (կազմում է մինչև 6–7%): Քանի որ դրանք ծածկված են անտառներով, ապա հնարավոր է գյուղատնտեսական նպատակներով օգտագործել միայն անտառային բացատների տարածքները, որոնք հանրապետության անտառային վայրերում քիչ չեն:

Հանրապետության տարածքի ավելի բարձրադիր մասերում (1900–4000մ) տարածված են ***լեռնամարգագետնային հողերը***: Որոշ վայրերում դրանց ստորին սահմանը կազմում են լեռնային սնահողերը, իսկ այլ վայրերում՝ անտառային դարչնագույն հողերը:

Սրանք այն հողերն են, որոնք ձևավորվում են համեմատաբար կլիմայական ցուրտ ու խոնավ պայմաններում: Բարձր խոնավության պատճառով էլ զգալի չափով հումուս պարունակող այդ հողերը ճմային բնույթ ունեն, բնութագրվում են նաև ալպյան բազմազան ու առատ խոտային բուսականությամբ: Դրանք հանրապետության այն տարածքներն են, որոնք հիմնականում օգտագործվում են որպես ամառային արոտավայրեր ու խոտհարքեր:Ծովի մակերևույթից մինչև 2400մ բարձրություն ունեցող վայրերում լեռնամարգագետնային հողերի սահմանային հատվածներում տարածված են ***լեռնամարգագետնատափաստանային*** հողերը, որոնցում հումուսի պարունակությունը անցնում է 10%–ից: Սրանց տնտեսական նշանակությունը հատկապես բարձր է մշակաբույսերի աճեցման, խոտհարքերի ու արոտային անասնապահության բնագավառում:

Լեռնամարգագետնային ու լեռնամարգագետնատափաստանային հողերը միասին զբաղեցնում են ամբողջ հանրապետության հողային ֆոնդի շուրջ 25%–ը: Դրանք ռացիոնալ օգտագործելու դեպքում շատ խոշոր դեր կարող են խաղալ գյուղատնտեսական արտադրանքի, հատկապես անասնապահական մթերքների ավելացման գործում:

Քանի որ ՀՀ գյուղատնտեսական արտադրության համար նպաստավոր պայմաններ ունեցող հողահանդակները կազմում են ամբողջ հողային ֆոնդի փոքր մասը, իսկ եղած հողահանդակներն էլ հիմնականում ունեն ռելիեֆային և կլիմայական բարդ պայմաններ, ապա հանրապետության համար կենսական նշանակություն ունի հողային ռեսուրսների ռացիոնալ, խնայողաբար ու նպատակային օգտագործումը: Մեծ թեքությունների պատճառով հանրապետության հողատարածքների ավելի քան 70, այդ թվում նաև վարելահողերի մինչև 60 տոկոսը ենթակա են ջրի ու քամու էրոզիոն ակտիվ ազդեցությանը: Մինչդեռ հայտնի է, որ էրոզիայի ենթարկված հողերի բերքատվությունը 2–3 անգամ ավելի պակաս է լինում:

Վարելահողերի քայքայման պրոցեսները ավելի են արագացնում մեծ թեքությունները (հատկապես 10 աստիճանից ավելի բարձր) ոչ ճիշտ, ոչ գիտական մեթոդներով մշակելը, ոռոգման աշխատանքների իրականացումը և արոտավայրերի գերարածեցումը: Մասնագետների հաշվարկներով ջրի, քամու էրոզիայի, ինչպես նաև ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով միայն վերջին 30 տարիներին հանրապետության գյուղատնտեսական արտադրության համար օգտագործելի հողատարածքները կրճատվել են շուրջ 20%–ով, ավելի շատ կրճատվել են վարելահողերի ու արոտավայրերի տարածքները (շուրջ 30%–ով):

Անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության համար (որը այժմ հնարավորություն չունի անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ ներմուծել մատչելի գներով) կենսական նշանակություն ունի եղած հողատեսակները աղակալումից, ճահճակալումից, էրոզիայից պահպանելու, մեծ թեքություններ ունեցող հողերի, ոռոգման և պարարտացման գիտական մեթոդների լայն արմատավորման, դարավանդային ու բուսապատման մեթոդների կիրառման շնորհիվ լուծելու գյուղատնտեսական մթերքների արտադրությունը զգալիորեն մեծացնելու հիմնախնդիրը:

√ **ԲՈՒՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ:** Բուսականությունը կենսական նշանակություն ունեցող այն ռեսուրսն է, որով պայմանավորված է մարդու գոյությունն ու նրա կենսագործունեությունը: Դեռ ավելին, բուսական ռեսուրսներով է պայմանավորված նաև երկրագնդի մյուս բոլոր օրգանիզմների գոյությունն ու օրգանական ծագում ունեցող նյութերի ստեղծումը:

Բուսականության դերն ու նշանակությունը մարդու կյանքում միշտ վճռական է եղել, սակայն արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց փոխվել ու կատարելագործվել են այդ ռեսուրսների օգտագործման չափերը, ձևերը, ստեղծվել են դրանց վերարտադրության, մշակման, վերամշակման նոր մեթոդներ: Չկա մարդու գործունեության մի բնագավառ, որտեղ չօգտագործվի այս կամ այն բուսատեսակը կամ դրանից արտադրված արտադրանքը:

Բացի նրանից, որ բուսատեսակների անմիջական կամ դրանց վերամշակված ձևով օգտագործմամբ ապահովվում է մարդու կենսագործունեությունը, ֆոտոսինթեզի շնորհիվ բուսական աշխարհը մթնոլորտում ապահովում է թթվածնի այն քանակությունը, որը դարձյալ կենսական նշանակություն ունի մարդկության համար:

Այս նշվածներից բացի, գիտնականների հաշվարկներով, երկրագնդի ամբողջ բուսականությունը տարեկան սինթեզում է ավելի քան 375 մլրդ տ օրգանական նյութեր, որոնք մեր մոլորակի բնակիչներին՝ մարդկանց, կենդանիների ու միկրոօրգանիզմների սննդի միակ աղբյուրն են: Այդ պրոցեսում մթնոլորտից յուրացվում է 650 մլրդ տ ածխաթթու գազ, հողից՝ 5 մլրդ տ ազոտ, շուրջ 1 մլրդ տ ֆոսֆոր և 10–15 մլրդ տ հանքային տարրեր: Այս բոլորի փոխարեն մթնոլորտը հարստանում է 350 մլրդ տ ազատ թթվածնով (տե՛ս Է.Մ Հայրապետյան և ուրիշներ, «Բնության պահպանության հիմունքներ», Ե., 1983, էջ 124):

Բուսական աշխարհը մարդուն ապահովում է բազմատեսակ սննդային ու բուժիչ բուսատեսակներով, պտուղներով, փայտանյութերով, որոնց բազայի վրա թողարկվում են շինանյութեր, կահույք, հազարավոր տեսակների այլ իրեր, սպիրտ, սինթետիկ կաուչուկ ու թելեր, խեժեր ու շատ այլ արտադրանք:

Եվ վերջապես, բուսականությունը կլիմայապաշտպան, հողապաշտպան, ջրապաշտպան, ռեկրեացիոն, սանիտարական խոշոր նշանակություն ունի:

Ահա թե ինչու բուսական աշխարհի հարուստ ռեսուրսներ ունենալը յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է:

Հայաստանի Հանրապետությունը չնայած պատկանում է աշխարհի համեմատաբար սակավանտառ երկրների թվին, սակայն այն բնութագրվում է բուսատեսակների մեծ բազմազանությամբ: Իսկ բուսականության բազմազանությունն այստեղ պայմանավորված է ռելիեֆի տիպիկ լեռնային բնույթով և կլիմայական պայմանների խիստ բազմազանությամբ: Այդ պատճառով էլ հանրապետության տարածքում վերընթաց ձևով արտահայտված են բնական համարյա լանդշաֆտային բոլոր գոտիները՝ իրենց յուրատեսակ բուսատեսակներով:

Գիտնականների կարծիքով Հայաստանը բուսատեսակների բազմազանությամբ երկրագնդի հազվադեպ շրջաններից է: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բուսատեսակները հասնում են 3000–ի: Այսպիսի բազմազանությունը ակադեմիկոս Ա. Թախտաջյանը բացատրում է Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքով, որտեղ իրար սահմանակցում են իրենց բնույթով միանգամայն տարբեր բուսաբանական երեք մարզեր՝ Կովկասյան, Արմենոիրանական և Հիրկանյան (տե՛ս Է. Մ. Հայրապետյան, Բնության պահպանության հիմունքները, Ե., 1983, էջ 127):

Բացի բուսատեսակների մեծ բազմազանությունից, հանրապետության տարածքը բնութագրվում է նաև էնդեմիկ բուսատեսակների բազմազանությամբ, իսկ դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Այսպիսով՝ տնտեսական և գիտական տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որպեսզի հանրապետության ռե-

լիեֆային և կլիմայական այդ բարդ պայմաններում առկա բուսատեսակները ոչ միայն լավ ճանաչվեն, ուսումնասիրվեն, այլև պահպանվեն դրանք հետագա սերունդների համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրապետության տարածքում աճող բնական բուսատեսակների զգալի մասն ունի բուժիչ նշանակություն, որոնք մեր նախնիները դեռևս հնուց օգտագործել են այդ նպատակով:

Հայաստանի Հանրապետության ցածրադիր մասերում, հիմնականում Արարատյան դաշտում, բնական ծնով աճող բուսատեսակները համապատասխանում են անապատային և կիսաանապատային բուսականությանը, որը պայմանավորված է բնակլիմայական համապատասխան պայմաններով: Սակայն, քանի որ Արարատյան գոգավորությունն ինտենսիվ կերպով վերածվել է կուլտուրականացված լանդշաֆտի, ապա այստեղ պահպանվել են անապատային և կիսաանապատային շատ սահմանափակ բուսատեսակներ: Այստեղ պահպանվել և հազվադեպ հանդիպում է դեռևս բորակաթուփը (հատկապես աղակալած հողերում), որի պտուղները օգտակար շատ վիտամիններ են պարունակում:

Արարատյան դաշտում, Մեղրու կիրճում, Վայքում հանդիպում են ֆրիգանոիդ բուսատեսակը, նշենին, փռշնին, բարձիկանման բույսերը, գազը, ոզնաթուփը, կան նաև վարդակակաչներ, սագախոզուկներ, ինչպես նաև շատ նոսր ու սակավ հանդիպող այլ բուսատեսակներ, որոնք հատկապես աճում են քարքարուտներում, ժայռերի ճեղքերում: Հատկապես կիսաանապատային պայմաններ ունեցող վայրերում աճում են շատ կարճ կյանք ունեցող բուսատեսակները, այսպես կոչված էֆեմերները: Սակայն այս գոտու հիմնական բուսատեսակը հոտավետ օշինդրն է, տարածված է նաև կապարը:

Կարևոր է նշել, որ Արարատյան գոգավորության համեմատաբար բարձրադիր մասերի կիսաանապատային վայրերում հանդիպում են նաև վայրի ցորենի, գարու, աշորայի տեսակներ, որոնք գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Հայաստանի անապատային ու կիսաանապատային բուսատեսակների զգալի մասը բնակչությունը շատ հնուց օգտագործել է որպես սնունդ և դեղամիջոց: Դրանցից են՝ սիբեխը, կապարը, թրթնջուկը ու այլ բուսատեսակներ:

Արարատյան գոգավորության անապատային ու կիսաանապատային կուլտուրականացված ամբողջ տարածքում աճեցվում են խաղողի, բազմատեսակ պտղատու (հատկապես դեղձ, ծիրան, կեռաս, բալ, խնձոր) այգիներ, բանջարաբոստանային մշակաբույսեր:

Հանրապետության տարածքում առավել բազմազան է ***լեռնատափաստանային բուսականությունը:***

Քանի որ լեռնային տափաստանները հանրապետության դաշտավարության հիմնական շրջաններն են, հետևաբար ինտենսիվ կերպով մշակվել ու այժմ էլ մշակվում են, ապա տափաստանային բնական բուսատեսակների զգալի մասը վերացել է՝ դրանց տեսակները կրճատվել են: Այդպիսիների տարածման վայրերում այժմ համատարած կերպով աճեցվում են հացահատիկային մշակաբույսեր, կարտոֆիլ, բանջարեղեն, այլ մշակաբույսեր:

Գիտնականների կարծիքով բնական բուսատեսակներից հանրապետության լեռնային տափաստաններում աճում են միայն Հայաստանին բնորոշ վայրի հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, տարեկան, գարի, ինչպես նաև մի շարք էնդեմիկ բուսատեսակներ, ուղտավարդ, կառլեանա, երնջակ, թրաշուշան: Այստեղ շատ են տարածված շյուղախոտը, փետրախոտը, կորնգանը և այլ խոտաբույսեր:

Մեծ տարածք են զբաղեցնում նաև մարգագետնային բուսատեսակները (հանրապետության տարածքի շուրջ 25%), որոնք բաժանվում են երկու ենթախմբի՝ մերձալպյան և ալպյան:

Բազմազան է նաև ***մարգագետնային բուսականության տեսականին***՝ ավելի քան 100 տեսակ: Այս բուսատեսակները տարածված են անտառային գոտուց վեր, հիմնականում 2700–2800մ բարձրություններից սկսած: Չնայած բնական պայմանները այստեղ խիստ են, վեգետացիոն շրջանը կարճ, այնուամենայնիվ ենթալպյան և ալպյան գոտում բուսականությունը շատ առատ է, տեսականին՝ մեծ: Այս գոտին բնութագրվում է ծաղկառատությամբ, որոնք ամռանն այստեղ այնքան շատ են, որ այդ տարածքները հիշեցնում են հրաշագեղ գորգեր: Շատ են տարածված հատկապես եռատամ զանգածաղիկը, խատուտիկը, քիմոնը, անմոռուկը, գնարբուկը և բազում այլ խոտային բուսատեսակներ:

Մարգագետնային բուսականության այդ տարածքներն էլ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ամառային արոտային անասնապահության և խոտհարքային հիմնական վայրերը:

Բուսական ռեսուրսների համակարգում մարդկության համար առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն ***անտառները:*** Դրանք բազմաբնույթ նշանակություն ունեցող բնական այն ռեսուրսների թվին են պատկանում, որոնցով որոշվում են տվյալ երկրի զարգացման հնարավորությունների չափերը:

Հայաստանի Հանրապետությունը աշխարհի սակավանտառ երկրների թվին է պատկանում: Պատմական փաստերը հավաստում են, որ նախկինում այժմյան Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև ամբողջ Հայկական լեռնաշխարհի զգալի մասը անտառածածկ է եղել: Դրանց մեծ մասը

տարբեր ժամանակներում այստեղ հայտնված թշնամիները հրդեհել ու ոչնչացրել են, իսկ որոշ մասն էլ լեռնաշխարհի բնակիչներն են հատել՝ հողահանդակներ ստեղծելու նպատակով:

Հայտնի է նաև, որ հատկապես արաբների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի անտառների արժեքավոր փայտանյութ ունեցող ծառատեսակներն անխնա հատվում ու արտահանվում էին: Այդ պատճառներով, ինչպես նաև ռելիեֆային բարդ պայմաններում գտնվող այդ անտառաշերտերի բոլորովին անխնամ լինելու հետևանքով պատմական Հայաստանի անտառները խիստ դեգրադացիայի են ենթարկվել: Միայն վերջին 200 տարվա ընթացքում անտառների ընդհանուր տարածությունը կրճատվել է ավելի քան երկու անգամ: Հետևանքը եղել է այն, որ Շիրակը, Սևանի ավազանը, Արարատյան գոգավորության նախալեռնային վայրերը անտառազրկվել են:

Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքի ընդամենը 10–12%–ն է անտառածածկ: Մինչդեռ երկրագնդի անտառները կազմում են ցամաքի ավելի քան 30%–ը, Հյուսիսային Ամերիկայում՝ շուրջ 34%–ը, Հարավային Ամերիկայում՝ ավելի քան 50%–ը, Վրաստանում՝ ավելի քան 37%–ը և այլն:

Անտառային տնտեսության ընդունված կանոնակարգով, եթե տվյալ ռեգիոնի անտառները չեն կազմում նրա տարածքի առնվազն 25%–ը, այդ վայրերում արգելվում է անտառի համատարած հատումը:

Մեր հանրապետության անտառների սահմանափակ լինելու պատճառով նույնպես անթույլատրելի է այդպիսի հատումը: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ռելիեֆը տիպիկ լեռնային ու խիստ կտրտված է, ապա այդ հանգամանքը հաշվի առնելով առավել ևս նպատակահարմար չէ մեր անտառներում համատարած փայտահատումը: 1990–ական թվականների առաջին կեսին, ելնելով հանրապետությունում ստեղծված վառելիքաէներգետիկ ծանր կացությունից, անխնա կերպով հատվել են անտառների զգալի մասը (շուրջ 17 հազ.հեկտար):

Քանի որ Հայաստանի Հանրապետության անտառները բացառապես ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, կլիմայապաշտպան, ռեկրեացիոն նշանակություն, ապա այստեղ թուլատրելի է հատում կատարել միայն սանիտարական նպատակներով:

Հետևաբար ՀՀ անտառները առաջին հերթին պետք է գնահատվեն նշված տեսանկյուններով:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև 1990–ական թվականների սկիզբները, հանրապետության անտառներում արդյունաբերական փայտահատում համարյա չէր իրականացվում, և ժողովրդական տնտեսության պահանջնե-

ը, փայտանյութի բնագավառում ապահովելու նպատակով, ամեն տարի Ռուսաստանից ներմուծվում էր շուրջ 1 մլն մ^3 փայտանյութ:

Վերջին տվյալներով (1999 թ. հունվարի 1–ի) հանրապետության անտառների, թփուտների զբաղեցրած ընդհանուր տարածքը կազմում է ավելի քան 463,3 հազ. հեկտար, որից անտառներով ծածկված է շուրջ 334 հազ. հեկտարը:

Հանրապետության յուրաքանչյուր բնակչին ընկնում է միայն 0,09 հեկտար անտառածածկ տարածք:

Հայաստանի Հանրապետության տարածքում անտառաշերտերը տեղաբաշխված են անհավասարաչափ: Բնական անտառաշերտերը հիմնականում տարածված են հանրապետության հյուսիսարևելյան, հյուսիսային և հարավարևելյան մասերում: Ըստ որում, անտառների ամբողջ տարածքի 62%–ը բաժին է ընկնում ՀՀ հյուսիսարևելյան և հյուսիսային հատվածին, 36%–ը՝ հարավարևելյան մասին: Մնացածը բաժին է ընկնում մյուս տարածքներին: Մասնավորապես, անտառային ռեսուրսները գերազանցապես գտնվում են Տավուշի մարզում (Նոյեմբերյանի, Իջևանի և Տավուշի տարածաշրջաններում), Սյունիքի մարզում (հատկապես Կապանի տարածաշրջանում), ինչպես նաև Լոռու մարզում (Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում): Անտառաշերտերով նշանակալից տեղ է զբաղեցնում նաև Հրազդանի տարածաշրջանը: Թփուտային անտառներ կան Արագածի լանջերին, Արարատյան գոգավորության լեռնալանջային հատվածներում, Վայքում և հանրապետության այլ վայրերում: Հենց հիմնականում այդ մասերում, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Եղվարդի, Կոտայքի սարահարթերում, Զանգեզուրի հյուսիսային մասում, ինչպես նաև Սևանի ավազանում խորհրդային իշխանության տարիներին ստեղծվել են արհեստական անտառաշերտեր:

Սևանա լճի մակարդակը իջեցնելու հետևանքով ջրից ազատված ամբողջ տարածքն այժմ զբաղեցնում են արհեստական անտառաշերտերը:

Աղյուսակ 3

ՀՀ անտառային ֆոնդն ըստ մարզերի
(1999 թ. հունվարի 1–ի տվյալներով)

Մարզերը	Մակերեսը հազ. հա
1	2
Երևան	1,3
Արագածոտնի	12,3

1	2
Արարատի	29,2
Արմավիրի	0,8
Գեղարքունիքի	33,7
Լոռու	98,3
Կոտայքի	23,5
Շիրակի	5,2
Սյունիքի	95,8
Վայոց ձորի	17,9
Տավուշի	145,0
Ընդամենը	463,3

Հանրապետության անտառներում աճող ծառատեսակները շատ բազմազան են ու արժեքավոր:

Մասնավորապես, այստեղ աճում են ավելի քան 200 ծառատեսակ, այդ թվում՝ հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, թխկի, կեչի, կաղամախի, գիհի ու շատ այլ ծառատեսակներ: Առավել լայն տարածված ծառատեսակը հաճարենին է, որից հետո՝ կաղնին ու բոխին: Սրանք կազմում են ամբողջ անտառների շուրջ 81 տոկոսը: Հանրապետության բոլոր անտառներում փայտանյութի ողջ պաշարը գնահատվում է ավելի քան 30 մլն մ^3, որի ավելի քան 90 տոկոսը բաժին է ընկնում հաճարենուն, կաղնուն, բոխուն: Սրանք էլ մեր հանրապետության անտառների առավել բարձրարժեք փայտանյութ ունեցող ծառատեսակներն են:

Հայաստանի Հանրապետության անտառներում լավ աճում և տարածված են նաև վայրի պտղատու բազմազան ծառեր: Հատկապես աճում են ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի, հոնի, զկռենի, սզնի, տկողնի: Ամենուրեք անտառներում տարածված են մասրենու և մոշի թփերը: Սևանի ավազանի արհեստական անտառներում լավ արմատավորվել է փշարմավը, որի պտուղներից ստացվող յուղը բուժիչ նշանակություն ունի:

Ինչպես արդեն ասվել է, Հայաստանի Հանրապետության անտառներն արդյունաբերական նշանակություն չունեն, դրանք բացառապես ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, ռեկրեացիոն, կլիմայապաշտպան նշանակություն: Ահա թե ինչու մինչև 1970–ական թվականների սկզբները այստեղ մթերվել է մաքսիմալ 59 հազ մ^3 փայտանյութ, այն էլ սանիտարական նպատակով:

Դրանից հետո՝ մինչև 1990–ական թվականների սկզբները, փայտահատումը տարեկան կազմել է միայն 8 հազ. մ^3: Իսկ հանրապետության փայ-

տանյութի ամբողջ պահանջարկը բավարարվել է (հատկապես Կրասնոյարսկի երկրամասից, Իրկուտսկի մարզից) ներմուծված անտառանյութով:

Հանրապետության անտառային ռեսուրսներին մեծ վնասներ են հասցնում անտառային հրդեհները, անօրեն ծառահատումները, անտառային վնասատուները և հիվանդությունները, անտառային տարածքի հողազավթումները, որոնց դեմ պետական մակարդակով միջոցառումներ պետք է կիրառվեն:

Այսպիսով Հայաստանի Հանրապետության անտառները, ինչպես նաև բուժիչ մեծ կարևորություն ներկայացնող բուսատեսակները, որոնց տեսակները շատ բազմազան են, բայց և խիստ անխնա են օգտագործվում, ոչ միայն խնամքով պահելու, այլև վերարտադրության մեծ կարիք ունեն:

✓ **<u>ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ:</u>** Բացի մարդկության համար բարձրարժեք սննդամթերքի հայթայթման կարևոր աղբյուր լինելուց, կենդանական աշխարհը բնության մեծ կարևորություն ներկայացնող բաղադրիչներից մեկն է: Խոշոր է կենդանական աշխարհի դերը նյութերի կենսաբանական շրջանառության, լանդշաֆտների ձևավորման, հողառաջացման, բույսերի փոշոտման և բուսատեսակների տարածման, վերարտադրության, բնական միջավայրի սանիտարական առումով կարգավորման ու շատ այլ բնագավառներում: Եվ վերջապես, կենդանիները բնության զարդն են, անկենդան բնությունը նման կլինի գերեզմանային անհրապույր միջավայրի:

Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը նույնպես շատ բազմազան է : Միայն ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում կան կենդանիների այնքան տեսակներ, որքան ողջ Եվրոպայում: Միայն ողնաշարավորների տեսակները այստեղ հասնում են 453–ի, որոնցից կաթնասուններ՝ 74, թռչուններ՝ 302, սողուններ՝ 41, ձկներ՝ 26, երկկենցաղներ՝ 6 տեսակի:

Միջատների տեսակներն այստեղ անցնում են 10 հազարից, իսկ անողնաշարավորները՝ 5 հազար տեսակից (տե՛ս է.Մ. Հայրապետյան և ուրիշներ, Բնության պահպանության հիմունքները, Ե., 1983, էջ 212):

Պատմական փաստերը հավաստում են, որ նախկինում Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհն ավելի բազմազան է եղել, այդ թվում շատ ավելի բազմազան են եղել լճերի ու գետերի ձկնատեսակները:

Սակայն, հատկապես վերջին 70 տարիներին, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, շինարարության զարգացման հետ կապված, հանրապետության շատ տարածքներից կենդանիների զգալի մասը թողել, հեռացել է, իսկ զգալի թվով էլ պարարտանյութերի ու թունաքիմիկատների ամենամյա համատարած օգտագործման հետևանքով ոչն-

չացել են: Մասնագետների ուսումնասիրություններով պարզվել է, որ միայն վերջին տասնամյակներում հանրապետության տարածքից վերացել են բազմատեսակ կաթնասուններ, թռչուններ, ձկներ: Իսկ շատ տեսակներ էլ անհետացման վտանգի տակ են և մտցված են այսպես կոչված «Կարմիր գրքի» մեջ: Դրանց թվին են պատկանում հայկական մուֆլոնը (վայրի ոչխար), ընձառյուծը, լեռնային հնդկահավը, ցախաքլորը, գառնանգղը, քարարծիվը, սև արագիլը, անտառային կատուն, արջը, բեզոարյան այծը և այլն:

Հանրապետության տարածքում վայրի կենդանիների տեսակները հիմնականում պահպանվել են անտառներում և գյուղատնտեսական ակտիվ շրջանառության մեջ չգտնվող հողավանդակներում, լեռնային վայրերում:

Հայկական վայրի ոչխարը և բեզոարյան այծը բնության մեջ շատ հազվադեպ են մնացել, այն էլ բարձր լեռնային շատ դժվարամատույց վայրերում: Այժմ աշխատանքներ են տարվում դրանք և անհետացման եզրին կանգնած կենդանիների այլ տեսակներ հատուկ կազմակերպված տնտեսություններում բազմացնելու համար:

Կենդանական աշխարհը համեմատաբար հարուստ ու բազմազան է հանրապետության անտառներում: Այստեղ հանդիպում են այծյամը, վայրի խոզը, արջը, անտառային կատուն, լուսանը, աղվեսը, գայլը, սկյուռը:

Դաշտային մասերում տարածված են դաշտամուկը, ճագարամուկը, կուրամուկը, գետնասկյուռը, կզաքիսը: Հանրապետությունում երբեմն հանդիպում է նաև հովազը:

Ավելի բազմազան են թռչունների տեսակները, հատկապես տարածված են շիկահավը, փայտփորիկը, սոխակը, սարյակը, արտույտը, արագիլը, բուն, լորը, կաքավը, ագռավը, կաչաղակը, լեռներում՝ լեռնային հնդկահավը, գառնանգղը, կովկասյան ցախաքլորը և այլն: Հանրապետությունում հասնում են 349-ի:

ՀՀ տարածքում խիստ կրճատվել են նաև սողունների տեսակները, դա հիմնականում կապված է անապատային և կիսաանապատային լանդշաֆտների վերափոխման, կուլտուրականացման հետ: Այնուհանդերձ, այժմ հանրապետության տարածքում կա օձերի 30 տեսակ, որոնցից թունավոր են գյուրզան, հայկական իժը, տափաստանյան իժը, եղջերավոր իժը: Նշված պատճառներով խիստ կրճատվել են նաև միջատների տեսակները:

Հայաստանի Հանրապետության լճերում և գետերում պահպանված ձկնատեսակների թիվը հասնում է 26-ի: Ձկնապաշարներով վճռական տեղը պատկանում է Սևանա լճին, որը շատ հնուց էլ փառաբանված է եղել իշխան ձկով ու նրա տարատեսակներով: Սակայն լճի մակարդակի իջեցման պատճառով խախտվել է նրա էկոլոգիական հավասարակշռությունը, որը և խիստ բացասաբար է անդրադարձել ոչ միայն իշխան ձկնատեսակի բազմացման վրա, այլև առհասարակ լճի կենդանական աշխարհի վրա: Այժմ ստեղծված է արհեստական ձկնաբուծարան այդ շատ եզակի ձկնատեսակը անհետացումից փրկելու համար: Տասնամյակներ առաջ Լադոգա լճից սիգ ձկնատեսակը տեղափոխվել և արմատավորվել է Սևանա լճում, որտեղ այն շատ արագ զարգացավ և այժմ լճի հիմնական ապրանքային ձկնատեսակն է: Սևանում կան նաև կողակ ու այլ ձկնատեսակներ:

Արփա, Որոտան և մյուս գետերում ապրում և բազմանում են կարմրախայտը ու այլ ձկնատեսակներ, Արաքս գետում՝ լոքոն, բեղլուն, սպիտակաձուկը, այլ տեսակներ, Արփի լիճ-ջրամբարում՝ ծածանը, խրամուլին և այլն: Վերջին տասնամյակներում Արարատյան դաշտում ու այլ վայրերում ստեղծված լճային տնտեսություններում, խոշոր ջրամբարներում զգալի չափերի է հասել ձկնաբուծությունը, որտեղ հատկապես աճեցվում է կարպ, պնդաճակատ ձկնատեսակներ, ինչպես նաև իշխանի որոշ տեսակ: Ինչպես արդեն ասվել է, հատկապես վերջին 70 տարիներին հանրապետության տարածքում խիստ կրճատվել է կենդանական աշխարհի տեսականին, և այդ միտումը շարունակում է նկատվել, չնայած իշխանություններն ունեն հատուկ որոշումներ կենդանական աշխարհի ոչ միայն պահպանության, այլև վերարտադրության համար:

Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության գործում ավելի լայն ու արդյունավետ աշխատանքներ կարելի է իրականացնել Դիլիջանի, Խոսրովի, Շիկահողի ու մյուս արգելանոցներում, արգելավայրերում, Սևանի ազգային պարկում: Այդ բնագավառում շատ վճռական պետք է լինեն կառավարության միջոցառումները Հայաստանի բնության դեմքը բնորոշող կենդանիների, թռչունների, սողունների, ձկան որսի խիստ կարգավորման, դրանց վերարտադրության պայմանների ստեղծման բնագավառներում: Այդպիսի լայնամասշտաբ աշխատանքների իրականացման շնորհիվ միայն հնարավոր կլինի ոչ միայն պահպանել հանրապետության կենդանական աշխարհը, այլև հեռանկարում այն դարձնել պետության եկամտի կարևոր աղբյուր:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ: Երկիր մոլորակի վրա մարդկության, կենդանական և բուսական աշխարհի գոյությունը պայմանավորված է ջրի առկայությամբ: Առհասարակ կենդանական բոլոր պրոցեսները հնարավոր չէ առանց ջրի, հետևաբար առանց ջրի հնարավոր չէ պատկերացնել նաև կյանքի գոյությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուսական օրգանիզմներում ջուրը կազմում է մինչև 90%, իսկ կենդանական օրգանիզմներում՝ մինչև 75%:

Քաղաքակրթության զարգացման հետ մարդը իր կենսագործունեության մեջ ավելի մեծ քանակությամբ ջուր է օգտագործում:

Վերջին տվյալներով, ժամանակակից քաղաքակիրթ մարդուն օրական անհրաժեշտ է ավելի քան 500 լիտր ջուր: Միայն սննդառության պրոցեսը նորմալ կազմակերպելու համար մարդուն ամեն օր անհրաժեշտ է լինում 10 լիտր ջուր:Չնայած այդ առումով Հայաստանի Հանրապետության բնակչությունը դեռևս լավ է ապահովված, սակայն մեր հանրապետությունն ընդհանուր առմամբ աշխարհի սակավաջուր երկրների թվին է պատկանում: Հետևաբար ջրային ռեսուրսների տնտեսական համակողմանի գնահատումը, դրանց նպատակային, խնայողաբար օգտագործումն ու պահպանությունը կենսական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար:

Հանրապետության տարածքում մթնոլորտային տեղումներից (միջին հաշվով շուրջ 600մմ) տարեկան առաջանում է 18 մլրդ մ^3 ջուր: Այս ծավալից մոտ 54 % գոլորշիանում է, իսկ 46%, այսինքն՝ 8 մլրդ մ^3, առաջանում է մակերեսային և ստորերկրյա հոսք: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր բնակչին հասնում է տարեկան 2,5 հազ. մ^3 ջուր, (իսկ առանձին տարիների, երբ տեղումները նվազում են, այն կազմում է 1,5–2 հազ. մ^3): Այս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը մեծ չափերով զիջում է աշխարհի շատ երկրների: Մասնավորապես, Ռուսաստանում այն կազմում է 35 հազ մ^3, Լատվիայում՝ 7,2, Տաջիկստանում՝ 17,5, Վրաստանում՝ 12, Էստոնիայում՝ 8,5 հազ. մ^3 և այլն:

Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Հայաստանի Հանրապետությունն այդ ցուցանիշով գերազանցում է Թուրքմենիային՝ 0,5, Մոլդովային 0,2, Ուզբեկստանին՝ 1,1, Ադրբեջանին՝ 1,7 հազ. մ^3:

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը սակավաջուր երկիր է: Հանրապետության տարածքում կա 1700 գետ ու գետակ, սակայն դրանց մեծ մասը փոքր ու սակավաջուր են: Այստեղ 10 կմ–ից ավելի երկարություն ունեցող միայն 200 գետ կա:

Չնայած գետերը սակավաջուր են, բայց քանի որ դրանք լեռնային բնույթի են, հոսում են մեծ թեքությամբ, ապա ունեն էներգետիկ կարևոր նշանակություն: Իսկ ընդհանուր առմամբ հանրապետության գետերն ունեն արդյունաբերական (այդ թվում հիդրոէներգետիկ), ոռոգման, կենցաղային նշանակություն: Այդ տեսակետից հատկապես կարևոր դեր ունեն ***Արաքս, Հրազդան, Որոտան, Դեբեդ, Ախուրյան, Աղստև, Արփա, Քասախ*** գետերը:

Հայաստանի Հանրապետության ջրային վճռական դեր խաղացող ավազանը ***Սևանա լիճն է***, որն աշխարհի ամենաբարձրադիր, խոշոր, քաղցրահամ լճերից մեկն է: Նրա մեջ թափվում են 28 մանր գետեր, դուրս է գալիս միայն մեկը՝ Հրազդան գետը:

Սևանը հիրավի բնության հրաշալիք է և հայ ժողովրդի ազգային մեծ հարստությունը, որն ունի տնտեսական և էկոլոգիական բացառիկ նշանակություն: Այն ապահովում է շրջակա տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, մեղմում է կլիմայական պայմանները: Շատ խոշոր է Սևանի դերը Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռում: Այն մինչև մակարդակի իջեցնելը ընդգրկում էր հանրապետության ջրային պաշարների շուրջ 80%–ը (59 մլրդ մ^3):

Անհեռատես ձևով Սևանա լճի մակարդակի շուրջ 19 մ–ով իջեցման հետևանքով նրանում այժմ կա 32 մլրդ մ^3 ջուր: Մակարդակի իջեցման հետևանքով Սևանա լճի ջրի հայելու մակերեսը այժմ կազմում է 1240,5 կմ^2 (նախկինում եղած 1416 կմ^2–ի փոխարեն): Մինչև մակարդակի իջնելը Սևանի մաքսիմալ խորությունը 99մ է եղել:

Քանի որ Սևանը եզակի դեր ունի հայ ժողովրդի կյանքում, ապա նրա մակարդակը թեկուզ 5–6 մետրով բարձրացնելու նպատակով կառուցվել է Արփա–Սևան 48 կմ երկարությամբ ստորգետնյա ջրատար թունելը, որով Արփա գետից (այդ նպատակով կառուցված Կեչուտի ջրամբարից) Սևան է հոսում տարեկան 250–270 մլն մ^3 ջուր: Բացի դրանից, արդեն ավարտված է Որոտան–Կեչուտի ջրամբար ձգվող 20 կմ երկարությամբ ստորգետնյա ջրատար թունելը, որով լրացուցիչ Որոտան գետից (Սպանդարյանի ջրամբարից) տարեկան 150 մլն մ^3 ջուր կհոսի դեպի Կեչուտի ջրամբար, այստեղից էլ Սևանա լիճ: Այս միջոցառումների շնորհիվ Սևանը Արփայից ու Որոտանից տարեկան կստանա 375–400 մլն մ^3 ջուր, որի շնորհիվ մոտակա հեռանկարում լճի մակարդակը կբարձրանա 5–6 մետրով, կվերականգնվի ջրի էկոլոգիական հավասարակշռությունը:

Աղյուսակ 4

Հայաստանի Հանրապետության գլխավոր գետերի հիմնական ցուցանիշները

Գետի անվանումը	Երկարությունը (կմ)	Ծախսը (մ³/վ)	Տարեկան հոսքը (մլն մ³)
Ազատ	40	8.4	202
Ախուրյան	205	31.8	847
Աղստև	99	2.18	290
Արաքս	99	86.2	272
Արգիճի	51	4.64	147
Արփա	90	21.5	879
Գավառագետ	47	3.82	121
Դեբեդ	152	37.0	1169
Կարճաղբյուր	25	1.19	38
Հրազդան	141	22.6	714
Մարմարիկ	35	5.2	164
Մեծամոր	45	33.1	1046
Մեղրի	36	3.23	102
Ողջի	56	9.6	303
Որոտան	119	51.5	679
Վարդենիկ	28	1.77	56
Վեդի	58	2.02	64
Քասախ	89	6.75	213
Ջորագետ	71	16.6	531
Փամբակ	86	8.96	283

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, էլեկտրաէներգետիկ տնտեսության, Հրազդան գետի ավազանի բնակավայրերի զարգացման գործում անգնահատելի դեր է խաղում Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործումը:

Առանց Սևանա լճի հնարավոր չէ պատկերացնել Արարատյան դաշտի ժամանակակից հզոր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, ինչպես նաև Սևանից սկիզբ առնող Հարազդան գետի ավազանում գտնվող բոլոր բնակավայրերի գոյությունը: Այդ գետի վրա կառուցված է 6 հիդրոէլեկտրակայան: Սևանա լիճը ունի նաև ռեկրեացիոն խոշոր նշանակություն:

Սակայն հանրապետության համար կենսական դեր խաղացող այդ լճի մակարդակը ինչպես ասվել է, անհեռատես ձևով իջեցվել է:

Լճի մակարդակի իջեցման հետևանքով (1933–1981թթ.) նրանում տեղի ունեցան էկոլոգիական խիստ բացասական փոփոխություններ: Մասնավորապես, ավելի քան 42%–ով փոքրացավ լճի ջրի ծավալը, բարձրացավ ջրի միջին տարեկան ջերմաստիճանը, վատացան թթվածնային պայմանները, բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ջրիմուռների աճի համար, հետևաբար՝ նաև լճի ճահճացման համար: Բացասական խոշոր փոփոխություններ են կատարվել լճի ֆաունայի ու ֆլորայի համակարգում: Մինչև մակարդակի իջեցումը Սևանա լճի մակարդակը ծովի մակերևույթիվ ուներ 1916 մ բարձրություն, նրա մակարդակը իջեցվել է շուրջ 19 մետրով: Այն շրջափակված է Գեղամա, Վարդենիսի, Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:

Լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանությունը ողջ հայության սուրբ պարտականությունն է: Սևանա լճի պահպանման առաջին խոշոր միջոցառումը Արփա–Սևան ջրատար թունելի կառուցումն էր, մյուսը, ինչպես ասվել է, Որոտան–Կեչուտ ջրաթունելի կառուցումը, որով Արփա և Որոտան գետերի ջրերի որոշ մասը հասնում է Սևան: Սևանա լճից բացի հանրապետության տարածքում կան 65 լիճ և լճակներ, որոնց ջրի ընդհանուր ծավալն ընդամենը 19 մլն մ³ է:

Հատկապես նշանավոր են Արփի լիճ–ջրամբարը, Մեծամոր լիճը, Պարզ լիճը, Քարի լիճը (Արագածի վրա), Ակնա լիճը, Սև լիճը:

Արփի լիճ–ջրամբարի (Աշոցքի սարահարթում) բարձրությունը ծովի մակերևույթից 2025 մ է, ջրի ծավալը 105 մլն մ³, Քարի լճի բարձրությունը ծ. մ. 3030 մ է, ջրի ծավալը՝ 2500 հազ. մ³, Սև լճի (Մեծ Իշխանասար) բարձրությունը ծ. մ. 2666 մ է, ջրի ծավալը՝ 9000 հազ. մ³, Պարզ լճի (Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջեր) բարձրությունը ծ. մ. 1400 մ է, ջրի ծավալը՝ 84 հազ. մ³:

Մյուս լճերից հայտնի են նաև Կապուտան լիճը (Քաջարանց գետի ակունք), Մեծ և Փոքր Ալ լճերը (Ղարաբաղի բարձրավանդակում) և այլն:

Հայաստանի Հանրապետության տարածքում գետերի հոսքը կարգավորելու, ոռոգման հարցերը լուծելու համար կառուցվել է ընդհանուր առմամբ շուրջ 45 համեմատաբար խոշոր արհեստական ջրամբար: Դրանցից առավել խոշորներն են՝ ***Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Ջողազի, Տոլորսի, Կեչուտի*** ու այլ ջրամբարներ:

Հայաստանի Հանրապետության գլխավոր ջրամբարների հիմնական ցուցանիշները

Ջրամբարի անվանումը	Մակերեսը (հա)	Ծավալը (մլն մ^3)	Առավելագույն խորությունը (մ)
Ախուրյանի	4180	525	55
Ազատի	260	70	2,5
Արփի լիճ–ջրամբար	2000	105	2,5
Ապարանի	750	91	40
Կեչուտի	145	25	50
Հրազդանի	170	5.6	6
Մանթաշի	70	8,2	26
Ջողազի	210	45	55
Տոլորսի	650	96,8	33
Շամբի	104	13,6	12
Սպանդարյանի	1425	277	76

Բացի աղյուսակում նշված համեմատաբար խոշոր ջրամբարներից, հանրապետությունում կան նաև բազմաթիվ մանր ջրամբարներ: Ընդհանուր առմամբ հանրապետությունում կառուցված ջրամբարների թիվը հասնում է 80–ի (որոնց ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 1 մլրդ մ^3), այդ թվում 74–ը՝ մելիորատիվ, 6–ը՝ էներգետիկ նշանակության: Նշենք նաև, որ հանրապետության տարածքում մթնոլորտային տեղումներից գոյացող 18 մլրդ մ^3 ջրից այժմ հնարավոր է կուտակել և օգտագործել միայն 7.4 մլրդ մ^3–ը, մնացածը՝ գոլորշանում, ինչպես նաև հոսում, դուրս է գալիս հանրապետության տարածքից:

Հնարավոր է Դեբեդ, Աղստև, Ոսկեպար, Հախում, Տավուշ, Խնձորուտ (Կուր գետի ավազան), Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ, Վեդի, Արփա, Որոտան, Ողջի, Մեղրի (Արաքսի ավազան) գետերի ուսումնասիրված հատվածներում, բացի գործող ջրամբարներից, կառուցել ևս 80 մանր ու միջին տարողության ջրամբարներ, որոնցում հնարավոր կլինի կուտակել 1 մլրդ մ^3 ջուր:

Հանրապետության տարածքում կան նաև ստորերկրյա և հանքային ջրերի զգալի պաշարներ: Ստորերկրյա ջրերով համեմատաբար հարուստ է Արարատյան դաշտը, որտեղ դրանց պաշարները հասնում են 28 մլրդ մ^3–ի:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն Արաքս գետից ստորերկրյա այդ ջրային ավազանը տարեկան ստանում է շուրջ 3 մլրդ մ^3 ջուր:

Ստորերկրյա ջրի զգալի պաշարներ կան նաև հանրապետության մյուս հարթ և գոգավոր տարածությունների ընդերքում (հատկապես Շիրակի, Լոռու սարահարթերի, Սևանի ավազանի, Սիսիանի տարածաշրջանների ընդերքում):

<u>ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ:</u> Ներկա ժամանակաշրջանում՝ ամբողջ աշխարհում մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում մարդու առողջության պահպանման և հանգստի կազմակերպման պայմանների, ռեսուրսների ուսումնասիրման, գնահատման, օգտագործման հարցերին: Հենց այդ ռեսուրսներն էլ անվանում են ռեկրեացիոն կամ հանգստի ռեսուրսներ:

Ռեկրեացիոն ռեսուրսները լինում են բնական և մարդածին: Բնական ռեկրեացիոն ռեսուրսները շատ բազմազան են: Դրանց թվին են պատկանում մարդու հանգստի, առողջության համար նպաստավոր պայմաններ ունեցող ծավալինյա ու գետափնյա վայրերը, լեռնային մաքուր օդը, զուլալ աղբյուրները, արևային էներգիայի առատությունը, ձյունածածկ ու ալպյան մարգագետիններով հարուստ լեռները, անտառները (հատկապես մեղմ կլիմայական պայմաններում գտնվող փշատերև անտառները), հանքային բուժիչ աղբյուրները, հանքային բուժիչ ցեխը, գեղատեսիլ լանդշաֆտները, բնական հուշարձանները և բնական այլ ռեսուրսներ, որոնց բազայի վրա հնարավոր է կազմակերպել հանգստյան տներ, սանատորիաներ, սպորտային և զբոսաշրջային բազաներ:

Սակայն մարդը կարող է իր հանգիստը լիարժեք կազմակերպել, ուժերն ու առողջությունը վերականգնել ոչ միայն բնական նշված ռեկրեացիոն ռեսուրսները օգտագործելով, այլև հաճախելով թանգարաններ, թատրոններ, դիտելով պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող կոթողներ, հուշարձաններ, քաղաքներ, արգելանոցներ և մարդու կողմից ստեղծված այլ օբյեկտներ:

Բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով աշխարհում առավել հանրահայտ են Իտալիան, Հունաստանը, Իսպանիան, Ֆրանսիան, Եգիպտոսը, Հնդկաստանը, Չինաստանը, որոնք էլ հանդիսանում են միջազգային զբոսաշրջության առաջատար երկրները:

Համաշխարհային արդյունաբերության բուռն զարգացման արդի պայմաններում, երբ շրջակա միջավայրը ավելի ու ավելի մեծ չափերով է աղտոտվում, ռեկրեացիոն ռեսուրսների պահպանումը, վերականգնումը ու օգտագործումը առավել հրատապ են դառնում:

Հայաստանի Հանրապետությունն ունի բնական և մարդածին ռեկրեացիոն բազմատեսակ ռեսուրսներ:

Հանրապետության բնական ռեկրեացիոն ռեսուրսներից գործնական կարևոր նշանակություն ունեն հանքային բուժիչ ջրի բազմազան աղբյուրները, ինչպես նաև տորֆի որոշ պաշարները:

Հանրապետության տարածքում հայտնաբերված են հանքային ջրի հարյուրավոր աղբյուրներ, որոնցից վաղուց արդեն լայն ճանաչում ունեն ***Ջերմուկի*** հանքային տաք աղբյուրների խումբը (ավելի քան 40 ելքով), ***Արզնու, Հանքավանի, Դիլիջանի, Իջևանի, Բջնու, Արարատի*** աղբյուրները: Հանքային ջրի աղբյուրներ կան նաև Վայքի այլ վայրերում, ***Որոտան*** գետի ավազանում, ***Սևանի*** ավազանում և հանրապետության այլ տարածքներում: Բուժման համար օգտագործվող տորֆի պաշարներ կան Լոռու մարզում և Սևանի ավազանում:

Նշված վայրերում էլ հանքային ջրերից բացի առկա են լեռնային մաքուր օդի, արևային ուլտրամանուշակագույն էներգիայի նախապայմանները սանատորիաների ու հանգստյան տների կազմակերպման համար: Իսկ Սևանա լճի ափերը դրանցից բացի անզուգական են մասսայական հանգստի, սպորտային միջոցառումների ու զբոսաշրջության համար: ***Դիլիջանը*** իր հանքային ջրով, բազմազան կենդանական աշխարհով ու բուսատեսակներով հարուստ անտառներով, Պարզ լճով շատ նպաստավոր է առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման համար: Հանգստի կազմակերպման համար շատ նպաստավոր են նաև Վանաձորի ու առհասարակ ***Դեբեդ*** գետի ավազանը, ***Լոռու*** սարահարթը, ***Կապանի*** անտառաշատ տարածաշրջանը, Արագածի զուլալ, մաքուր օդ ունեցող լեռնափեշերը:

Հանրապետության նշված և մյուս վայրերի հանգստյան, սանատոր–բուժման ռեսուրսներից (հանքային ջրեր, մաքուր օդ, զուլալ աղբյուրներ, Սևանա լիճ ու ջրամբարներ, անտառներ, ալպյան մարգագետիններ ու ձյունածածկ լանջեր) բացի մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական ռեկրեացիոն ռեսուրսների շարքին պետք է դասել նաև այստեղ առկա հրաբխային լեռնագոյացումները (կոները), որոնցից շատերի խառնարաններում կան զուլալ ջուր ունեցող լճեր, Հրազդան, Արփա, Որոտան, Դեբեդ, Քասախ և այլ գետերի անդնդախոր կիրճերն ու հովիտները, իրենց հրաշագեղ բնական բազալտասյուներով, Զանգեզուրի բնական քարակերտ հուշարձանները, քարանձավային բնակավայրերը և այլն: Սրանք մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական ռեկրեացիոն ռեսուրսներ են, որոնք հատկապես սպորտի, զբոսաշրջության զարգացման նախապայմաններ են հանդիսանում:

Զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեր հազարամյակների պատմություն ունեցող պատմաճարտարապետական կոթողները, բերդավանները, եկեղեցական համալիրները:

Դրանցից հատկապես հանրահայտ են Էջմիածնի, Զվարթնոցի, Գառնու, Գեղարդի, Տաթևի, Նորավանքի, Գլաձորի, Սանահինի, Խոր Վիրապի, Հաղարծնի, Հաղպատի ու շատ այլ կոթողներ: Մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են մեր նորօրյա հուշարձանները, թանգարանները և Երևան քաղաքը ամբողջապես:

Բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով հանրահայտ է նաև Արցախ աշխարհն իր անզուգական անտառներով, գետահովիտներով, հինավուրց Ամարասով, Գանձասարով, Դադիվանքով, Շուշիով, Ազոխի քարանձավային համալիրով և բազում այլ հուշարձաններով:

Հայաստանի Հանրապետության բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսները, որոնք մինչև հիմա աննշան չափով են օգտագործվել, կարող են դառնալ կարևոր բազա միջազգային նշանակություն ունեցող հանգստի ու զբոսաշրջության այնպիսի ինդուստրիա ստեղծելու համար, որը զգալի նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետության տնտեսության համար որպես եկամտի կարևոր աղբյուր:

Մինչև 1990–ական թթ. սկզբները հանրապետությունում գործում էին 110 առողջարանային և հանգստյան տներ, որոնք տարեկան սպասարկում էին ավելի քան 600 հազ. մարդ, գործում էին տուրիստական 30 հանգրվաններ՝ 6000 տեղով:

1987 թ. Հայաստան է այցելել 100 հազ. արտասահմանցի զբոսաշրջիկ (առանց նախկին ԽՍՀՄ–ի): 1990–ական թթ. սկզբներից դրանց թիվը խիստ կրճատվել է և 1996 թ. կազմել է միայն 13 հազ., որից հետո նորից սկսել է աճել և 1999 թ. կազմել է 40 հազ.: Իսկ 2003 թ. հանրապետություն այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 206 հազար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր ռեկրեացիոն ռեսուրսների հնարավորությունները ճիշտ օգտագործելու դեպքում հանրապետությունը մոտակա հեռանկարում տարեկան կարող է ընդունել շուրջ 1 մլն զբոսաշրջիկ:

1.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ներկա ժամանակաշրջանում սերունդների բարեկեցությունը կախված է նրանից, թե ինչ մեթոդներով են արդյունահանվում բնական ռեսուրսները, և ինչպես են դրանք օգտագործվում տնտեսության մեջ: Բնական ռեսուրս-

ների մեծ մասը, հատկապես չվերականգնվող ռեսուրսների պաշարները սահմանափակ են: Մյուս կողմից, համաշխարհային էկոնոմիկայի արագաթափ աճող պահանջներին համապատասխան, տարեցտարի մեծ չափերով ավելանում են բնական ռեսուրսների օգտագործման ծավալները:

Աշխարհի չափանիշով այժմ արդեն ամեն տարի ընդերքից արդյունահանվում և օգտագործվում է շուրջ 126 միլիարդ տոննա տարբեր տեսակի հումք, վառելիք:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ հումքատեսակների, այդ թվում հատկապես նավթի, գազի, գունավոր որոշ մետաղների պաշարները շատ սահմանափակ են և կարող են շուտ սպառվել, եթե օգտագործման արդի տեմպերն ու չափերը այսպես շարունակվեն: Հետևաբար՝ բնական բոլոր տեսակի, այդ թվում հատկապես չվերականգնվող ռեսուրսների խնայողաբար, նպատակային և համալիր օգտագործումը մարդկության համար կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիր է:

Բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործումը կենսական նշանակություն ունեցող հիմնահարց է բոլոր երկրների համար, սակայն այն առավել կենսական նշանակություն ունի այն երկրների համար, որոնց բնական ռեսուրսները խիստ սահմանափակ են:

Հայաստանի Հանրապետությունը պատկանում է վերջիններիս թվին: Խորհրդային իշխանության շուրջ 70 տարիների ընթացքում տեղի բնական ռեսուրսների լայնորեն օգտագործման և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից ներմուծվող հսկայական քանակությամբ հումքատեսակների բազայի վրա, հանրապետությունում ստեղծվել է բազմաճյուղ հզոր արդյունաբերություն, մեքենայացված գյուղատնտեսություն, բազմաճյուղ տրանսպորտ և շինարարական ինդուստրիա:

Սակայն, դրանց զուգահեռ պատշաճ ուշադրություն չդարձնելով հանրապետության բնական ռեսուրսների խնայողաբար, նպատակային ու համալիր օգտագործման հույժ կարևոր հիմնահարցերին, հսկայական վնասներ է հասցվել այդ ռեսուրսների պաշարներին, մեծապես աղտոտվել նաև շրջակա միջավայրը:

Անկախություն ստացած Հայաստանի Հանրապետության տնտեսության կարգավորման և հետագա զարգացման համար առաջնակարգ նշանակություն ունեն հետևյալ հիմնահարցերը: Մետաղային օգտակար հանածոների խնայողաբար օգտագործումը թերևս հանրապետության հեռանկարային զարգացման գլխավոր հիմնահարցերից մեկն է:

Հայաստանի Հանրապատության այժմյան տարածքում պղնձի, ոսկու և այլ գունավոր մետաղների արդյունահանում և ծուլում իրականացվել է դեռ

հարյուրամյակներ առաջ: Այդ մետաղների, ինչպես նաև մոլիբդենի ու բազմամետաղների արդյունահանումը ավելի ինտենսիվ կերպով իրականացվել է խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում: Սակայն, այդ ամբողջ ժամանակաշրջանում, ինչպես նաև այժմ միջազգային շուկայում շատ մեծ արժեք ունեցող պղնձի, մոլիբդենի, ոսկու, բազմամետաղների արդյունահանումը, հարստացումն ու ծուլումը իրականացվել է ոչ ռացիոնալ ձևով:

Խնդիրը կայանում է նրանում, որ այդ մետաղներից յուրաքանչյուրի հանքավայրում հանքանյութի մեջ հիմնական մետաղից՝ պղնձից, մոլիբդենից, ցինկից ու կապարից բացի կան նաև բազմաթիվ այլ թանկարժեք մետաղներ: Սակայն մինչև այժմ հանքանյութից կորզվում են միայն նշված մետաղները, այն էլ երբեմն կիսով չափ, իսկ մնացածները՝ այսպես կոչված «պոչանքի» կամ «թափոնի» հետ նետվում շրջակա միջավայր: Այսպես, օրինակ, 1950–ական թվականների սկզբներից մինչև այժմ Քաջարանի, այնուհետև Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերում արդյունահանված կոմպլեքսային հումքից, որի մեջ պարունակվում է շուրջ 15 տեսակի հազվադեպ թանկարժեք մետաղներ, պղինձն ու մոլիբդենը (ոչ ամբողջությամբ) կորզվել է, իսկ մյուսները՝ «պոչանքի» հետ նետվել են շրջակա միջավայր: Մոտավոր հաշվարկներով, Ողջի գետի հովտում ու նրա հարակից վայրերում կուտակված է ավելի քան 120 մլն տոննա այդպիսի «պոչանք», որի բաղադրության մեջ կան թելուր, սելեն, բիսմութ, ռենիում, գալիում, ինչպես նաև պղինձ, մոլիբդեն ու շատ այլ մետաղներ: Այսպիսով՝ մենք կորցնում ենք ոչ միայն մեծ քանակությամբ թանկարժեք գունավոր մետաղներ, այլև շրջակա միջավայրը նետած հսկայական «պոչանքի» ազդեցությամբ շարքից հանել ենք Ողջի գետի զուլալ ջրային ռեսուրսները, որը այնքան է աղտոտվել, որ ոչ մի նպատակի համար հնարավոր չէ այն օգտագործել: Մինչդեռ արտադրական բարձր կուլտուրայով հնարավոր է ոչ միայն Քաջարանի ու Ագարակի հանքավայրերի հանքանյութի մեջ առկա բոլոր մետաղները կորզել, այլև դրանից հետո առաջացած ամբողջ թափոնի բազայի վրա կազմակերպել սիլիկատային շինանյութերի հզոր արտադրություն, որը կբավարարի ամբողջ Զանգեզուրի շինարարական ինդուստրիայի պահանջները: Վերը նշված ոչ ռացիոնալ մեթոդներով են օգտագործվում նաև Կապանի, Ալավերդու պղնձի, Ախթալայի բազմամետաղների, Սոթքի ու Մեղրաձորի ոսկու հանքանյութի պաշարները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ նշված հանքավայրերի հանքանյութի մեջ եղած հիմնական մետաղների՝ պղնձի արդյունահանված հումքի միայն 65–66 տոկոսն է կորզվում, մոլիբդենի շուրջ 70,

բազմամետաղների միայն 50 տոկոսը և այլն: Ցածր է նաև ոսկու կորզման տեսակարար կշիռը:

Այսպիսով՝ ***պղնձի, մոլիբդենի, բազմամետաղների, ոսկու և գունավոր մյուս մետաղների, հետագայում նաև երկաթի հանքաքարի պաշարների ռացիոնալ օգտագործումը, դրանց բազայի վրա անթափոն արտադրության կազմակերպումը խոշոր նշանակություն կունենան ոչ միայն Հայաստանի Հանրապետության տնտեսության կարգավորման, հետագա զարգացման, այլև այդ մետաղատեսակների արդյունահանման և վերամշակման ձեռնարկություններին հարակից տարածաշրջանների (Ողջի գետի ավազանի, Մեղրու կիրճի, Դեբեդի ավազանի, Սոթքի ոսկու հանքավայրի, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի և այլ) էկոլոգիական հավասարակշռության*** վերականգնման գործում:

Հայաստանի Հանրապետության տնտեսությանը և շրջակա միջավայրին տասնամյակներ շարունակ մեծ վնաս է հասցվել տուֆաքարի, բազալտաքարի, մարմարի, գրանիտի ու բնական մյուս քարանյութերի արդյունահանման ու մշակման ոչ ռացիոնալ կազմակերպման հետևանքով:

Հանրապետության տուֆաքար արդյունահանող խոշորագույն ձեռնարկությունը՝ «Արթիկտուֆ» կոմբինատը, 1928 թվականից մինչև 1990–ական թվականների սկիզբները շինաքար արտադրելու նպատակով Արթիկ քաղաքի շրջակայքում գտնվող հանքավայրից արդյունահանել է շուրջ 45 մլն մ^3 տուֆի զանգված, որից շուրջ 19 մլն մ^3–ը օգտագործվել է որպես շինանյութ, իսկ մյուս մասը նետվել է շրջակա միջավայր՝ որպես «թափոն»: Իրականում ինչ է այդ «թափոն» կոչվածը և տնտեսաէկոլոգիական ինչ հետևանքներ է ունենում:

Տուֆաքարի թափոնը ընդերքից արդյունահանված զանգվածի այն մասն է, որը հիմնականում մանրուք է՝ ավազի և խճի տեսքով կամ էլ որպես որմնանյութ ստանդարտին չի համապատասխանում: Սակայն ի՞նչ է նշանակում քարի թափոն, այն ամբողջապես հնարավոր է օգտագործել որպես բնական թեթև լցանյութեր՝ ավազ կամ խիճ, որի պահանջը շատ մեծ է շինարարական ինդուստրիայում: Դրանցից կարելի է արտադրել նաև արհեստական տուֆաբլոկներ, որոնք իրենց ֆիզիկամեխանիկական հատկանիշներով չեն զիջում բնական որմնանյութերին:

Հայտնի է, որ Ռուսաստանում, Ուկրաինայում և շատ այլ երկրներում կավից արտադրում են արհեստական լցանյութեր (կերամզիտ, ագլոպորիտ և այլն) և օգտագործում են շինարարության մեջ:

Իսկ մեր բնական այդ բարձրորակ, անզուգական լցանյութերը (տուֆի մանրուքը) հիմնականում միշտ նետել են շրջակա միջավայր: Այսպիսով՝

հսկայական աշխատանք կատարելով, ֆինանսական միջոցներ ծախսելով՝ արդյունահանում ենք տուֆի ու բնական այլ քարանյութերի հսկայական զանգված և դրա կեսից ավելին նետում շրջակա միջավայր ու առհավետ կորցնում այդ չվերականգնվող ռեսուրսները: Մինչդեռ այս ամբողջ հումքն օգտագործելու դեպքում հնարավորություն կստեղծվի արտադրվող շինանյութերի ծավալը ավելի քան 1,5 անգամ մեծացնել, իսկ ինքնարժեքն էլ այդքան անգամ ցածրացնել: Բացի դրանից, արդյունահանված ամբողջ հումքի անմնացորդ օգտագործումը հնարավորություն կտա բնական ռեսուրսները խնայել հետագա սերունդների համար: Այդ բոլորից բացի հանրապետության քարհանքերում ամեն տարի առաջացող հսկայական քանակությամբ «թափոնների» լրիվ օգտագործումը (իսկ դա ռեալ հնարավորություն է) կլուծի նաև էկոլոգիական մի կարևոր հիմնահարց: Միայն Արթիկ քաղաքի շրջակայքում 1928 թվականից մինչև այժմ տուֆաքարի թափոնների տակ և լքված քարահանքերով զբաղեցրած է ավելի քան հազար հեկտար բերրի սնահողեր (հանրապետության տուֆաքարի համարյա բոլոր հանքավայրերը գտնվում են սնահողային լեռնատափաստաններում): Իսկ ընդհանուր առմամբ հանրապետության ամբողջ տարածքում այդ ձևով շարքից հանվել է 4,5–5,0 հազ. հեկտար գյուղատնտեսական հողահանդակ:

Հայաստանի Հանրապետությունը աշխարհի ամենասակավահող երկրներից է, հետևաբար, 4,5–5,0 հազ. հեկտար սնահողային տարածությունը մեծ հարստություն է: Քարանյութերի թափոնների օգտագործումը հողատարածությունները աղտոտումից փրկելուց բացի մեծ դեր կխաղա շրջակա միջավայրի օդային զանգվածի, ջրային ավազանների մաքրությունը վերականգնելու գործում: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության բնական ռեսուրսների օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերից մեկն էլ ***քարանյութերի պաշարների ռացիոնալ և խնայողաբար օգտագործումն է:***

Հրապետության շրջակա միջավայրի պահպանության կարևորագույն խնդիրներից մեկը մթնոլորտ արտանետվող, հողերն ու ջրային ռեսուրսները աղտոտող նյութերի կրճատումը և դրանց օգտագործումն է որպես հումք:

Միայն անշարժ աղբյուրներից (օբյեկտներից) 1999 թ. ընդհանուր առմամբ մթնոլորտ է արատանետվել 21,7 հազ. տոննա վնասակար նյութեր: Այդ նշանակում է, որ հանրապետության մեկ շնչի հաշվով թունավոր արտանետումները կազմել են 5,7 կգ, իսկ մեկ քառակուսի կմ–ի հաշվով (առանց Սևանա լճի հայելու մակերեսի, որը նույն տարում կազմել է 1240,5 կմ^2) 763,0 կգ:

Հանրապետությունում շրջակա միջավայրը աղտոտող 1371 ձեռնարկություններն ու կազմակերպությունները (1999 թ.) մթնոլորտ են արտանետում ածխաջրածիններ, մուր, ծծմբական թթու, մանգանի օքսիդ, ամոնիակ, քլորաջրածին, ազոտական թթու, ացետոն, տոլուոլ, քսիլոլ, բենզին և շատ այլ թունավոր նյութեր:

Առավել մեծ քանակությամբ թունավոր նյութեր են արտանետվում մթնոլորտ տրանսպորտի կողմից: Մասնավորապես, միայն 1999 թ. այդ ճյուղից արտանետումները կազմել են 138,3 հազ. տոննա, իսկ 1985 թ. այն կազմել է 474,0 հազ. տոննա:

Աղյուսակ 6

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից՝ ըստ մարզերի (տոննա)

Մարզերը	Տարիները			
	1996	1997	1998	1999
Ընդամենը այդ թվում՝	13865,7	14241,2	16439,7	21747,0
Երևան	4771,0	2309,7	7662,6	8464,8
Արագածոտնի	18,8	12,6	42,6	39,3
Արարատի	2852,8	9478,2	8076,6	8670,2
Արմավիրի	375,6	26,6	26,4	653,9
Գեղարքունիքի	176,9	35,2	28,1	123,4
Լոռու	465,5	36,0	3238,7	419,5
Կոտայքի	4670,8	2141,4	3219,0	2888,2
Շիրակի	106,2	46,5	5,5	3,1
Սյունիքի	306,3	89,1	21,1	397,9
Վայոց ձորի	61,5	32,2	1,0	12,6
Տավուշի	80,3	33,7	27,1	74,1

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, անշարժ աղբյուրներից մթնոլորտ նետվող թունավոր նյութերի մեծ մասը բաժին է ընկնում Արարատի մարզին, Երևան քաղաքին, Կոտայքի, Արմավիրի, Լոռու, Սյունիքի մարզերին: Երևան քաղաքում այդ բնագավառում բացասական խոշոր դեր ունեն քիմիական, շինանյութերի ձեռնարկությունները, Կոտայքի ու Արարատի մարզերում՝ ցեմենտի գործարանները, Լոռու և Սյունիքի մարզերում՝ լեռնահանքային արդյունաբերության և մետաղածուլության ձեռնարկությունները:

Ինչպես նշվել է, անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետվող նշված քանակների թունավոր նյութերից զատ հանրապետության մթնոլորտը առավել մեծ չափերով աղտոտում է ավտոտրանսպորտը:

Աղյուսակ 7

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային արտանետումները ավտոտրանսպորտից՝ ըստ մարզերի (1999 թ.)

Մարզերը	տոննա	այդ թվում		
		ազոտի օքսիդ	ածխածնի օքսիդ	ածխաջրածիններ
Ընդամենը այդ թվում՝	1383030	6840	114490	17000
Երևան	73750	3470	61100	9180
Արագածոտնի	4100	200	3400	500
Արարատի	9120	400	7650	1070
Արմավիրի	7770	400	6500	870
Գեղարքունիքի	6510	600	5110	800
Լոռու	9120	470	7540	1110
Կոտայքի	8310	400	6940	970
Շիրակի	8840	400	7340	1100
Սյունիքի	4550	200	3750	600
Վայոց ձորի	2080	100	1730	250
Տավուշի	4180	200	3430	550

Ինչպես տեսնում ենք ավտոտրանսպորտից մթնոլորտի աղտոտումը անհամեմատ մեծ է, և դրանում խոշոր տեղ են զբաղեցնում հատկապես այն մարզերը, որտեղ կան խոշոր քաղաքներ, հետևաբար նաև առավել մեծ թվով ավտոմեքենաներ (Երևան, Արարատի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի մարզեր):

Հանրապետության վիճակագրության պետական ծառայության տվյալներով՝ վերջին տարիներին միայն արտադրական ձեռնարկությունների, կազմակերպությունների տարածքում կուտակված թափոնների քանակը կազմում է ավելի քան 77 մլն տոննա:

Իսկ ընդհանուր առմամբ հանրապետության տարածքում կուտակված թափոնների քանակը գնահատվում է ավելի քան 113 մլն տոննա:

Սակայն ճշմարտությունն այն է, որ հանրապետության ամբողջ տարածքում առկա թափոնների քանակն առնվազն 2 անգամ ավելին է: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի Ողջի գետի հունում գտնվող պոչանքի պահեստներում կուտակված, այսպես կոչված «թափոնների» քանակը գնահատվում է ավելի քան 120 մլն տոննա: Սրանք Քաջարանի կոմբինատում պղնձամոլիբդենային հումքի հարստացումից հետո առաջացած այն թափոններն են, որոնք պղնձի ու մոլիբդենի կորզումից հետո նետվում են շրջակա միջավայր: Սակայն դրանցում առկա են 10–ից ավելի թանկարժեք հազվադեպ հանդիպող մետաղներ, որոնք մեծ արժեք են ներկայացնում:

Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի արդյունահանվող հումքը օգտագործվի կոմպլեքսային ձևով, դրանից կորզվեն առկա բոլոր էլեմենտները, իսկ դատարկ ապառը օգտագործվի շինանյութեր արտադրելու համար: Դրանով ոչ միայն մեր անկախություն ստացած հանրապետությունը կստանա ավելի մեծ արդյունավետություն, այլև հումքային ռեսուրսները կօգտագործվեն խնայողաբար, իսկ շրջակա միջավայրը կփրկվի աղտոտումից: Ի դեպ, այդպիսի հսկայական թափոնապահեստներ կան նաև Ագարակի, Կապանի, Ախթալայի, Արարատի ոսկու կորզման ու այլ ձեռնարկությունների շրջակայքում, որտեղ կուտակված «թափոնների» օգտագործումը նույնպես հրամայական պահանջ է:

Հրամայական պահանջ է նաև հանրապետության հատկապես քաղաքների աղբանոցներում կուտակվող աղբի օգտագործումը: Միայն Երևան քաղաքում ամեն տարի առաջանում է ավելի քան 1 մլն մ^3 աղբ, որը փաստորեն կոմպլեքսային հումք է, որի վերամշակումից հնարավոր է ստանալ բազմատեսակ արժեքավոր արտադրանք: Նախատեսված է Երևանի քաղաքային աղբանոցում (Նուբարաշենում) կուտակվող այդ հումքի բազայի վրա կառուցել աղբավերամշակման գործարան:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի հետագա զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը ***հողահանդակների պահպանումն ու ռացիոնալ օգտագործումն է:***

Լեռնային բարդ ռելիեֆի մեր պայմաններում հողատարածքները քայքայվում, էրոզիայի են ենթարկվում անձրևների, ձնհալի, քամու, ոչ գիտական մեթոդներով դրանց օգտագործման (ոռոգման, մշակման ժամանակ և այլն) հետևանքով: Միայն վերջին հարյուրամյակում էրոզիան խլել է երկրագնդի բերքատու հողատարածքների շուրջ 25%–ը: Իսկ ընդհանուր առմամբ մինչև այժմ մարդկությունն այդ ճանապարհով կորցրել է շուրջ 2 մլրդ հեկտար վարելահող և այժմ ունի 1.5 մլրդ հեկտար այդպիսի հող (տես է.

Հայրապետյան և ուրիշներ, «Բնության պահպանության հիմունքները», Ե., 1983, էջ 83): Մեր հանրապետության հատկապես նախալեռնային ու լեռնային վայրերի հողերի ռացիոնալ օգտագործման և էրոզիայից պահպանելու համար կարևոր նշանակություն ունի ակոսավորված մշակումը, որի շնորհիվ մասնագետների կարծիքով այդպիսի դաշտերում մինչև 2,5 անգամ շատ ձյուն և ջուր է պահպանվում: Բացի դրանից, կանխվում է հողի էրոզիան, իսկ բերքատվությունը բարձրանում է հեկտարից շուրջ երեք ցենտներով: Այդ տեսակետից բարձր արդյունք է ստացվում նաև ցանքը խաչածն և նեղաշար եղանակներով, քարերով, թփուտներով ամրացված դարավանդերի ստեղծման շնորհիվ, որի հետևանքով կանխվում է ջրի ու քամու էրոզիայի պրոցեսները:

Իսկ առավել թեք լանջերի, այդ թվում նաև էրոզիայի ենթարկված հողերի պահպանման համար խոշոր դեր կարող է խաղալ դրանց բուսապատումը: Այդ դեպքում ոչ միայն կպահպանվեն հողերը, այլև կվերականգնվեն: Մեր հանրապետության թեք լանջային տարածություններում, որտեղ հաճախակի են նաև ուժեղ քամիները, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը անհրաժեշտություն է:

Ժամանակի ընթացքում հանրապետության բոլոր վայրերում տարբեր պատճառներով գյուղատնտեսական շրջանառությունից դուրս են մնացել հսկայական վարելահողային տարածքներ: Ինչպես արդեն վերը նշել ենք, միայն լքված քարհանքերն ու ու քարանյութերի թափոնները զբաղեցնում են մինչև 5 հազ. հեկտար տարածք: Այդ և այլ ճանապարհներով դուրս մնացած հողատարածքների ռեկուլտիվացումը՝ վերականգնումը, զգալիորեն կբարելավի հողապահովվածությունը մեր հանրապետությունում:

Այդ տեսակետից, դրական զգալի նշանակություն կունենա աղակալված և ճահճացած հողատարածքների բարելավումը, յուրացումը:

Արարատյան դաշտում աղակալված (որոշ տեղերում նաև ճահճակալված) հողատարածքները հասնում են 30 հազ. հեկտարի, որոնց յուրացումը հեռանկարային հիմնահարցերից մեկն է:

Հրամայական պահանջ է դարձել հանրապետության հատկապես քաղաքային բնակավայրերի աղբանոցների տակ զբաղեցված հսկայական հողատարածքների օգտագործումը: Իսկ դա հնարավոր կլինի, ինչպես ասվել է, միայն աղբավերամշակման ձեռնարկությունների ստեղծման շնորհիվ, որպիսիք վաղուց գործում են բոլոր երկրներում:

Մյուս կարևոր հիմնահարցը <u>բուսական ռեսուրսների ռացիոնալ</u> օգտագործումն ու պահպանությունն է: Ինչպես արդեն նշվել է, Հայկական լեռնաշխարհի անտառների անխնա օգտագործման հետևանքով միայն վեր-

ջին 200 տարվա ընթացքում դրանց տարածքը կրճատվել է ավելի քան երկու անգամ: Քանի որ եղած անտառները էլ կազմում են հանրապետության տարածքի միայն 10–12%–ը և հիմնականում ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, կլիմայապաշտպան, ռեկրեացիոն նշանակություն, ապա դրանց պահպանությունն ու վերարտադրությունը մեզ համար կենսական նշանակություն ունի:

Առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձնել հանրապետության մինչև 1000–1100 մ բարձրություն ունեցող գոտիների անտառների պահպանության և այս վայրերում նոր անտառաշերտերի ստեղծման վրա:

Չոր կլիմայական պայմաններ ունեցող վայրերում համատարած անտառաշերտեր չկան, դրանք հիմնականում թփուտային բնույթի անտառակողմներ են (բացառությամբ Կապանի տարածաշրջանի):

Մեր հանրապետության անտառները ծեր անտառներ են, և այդպիսի անտառների ծառատեսակները կամաց–կամաց կորցնում են իրենց կենսունակությունը և վերարտադրության բնական ընթացքը: Հետևաբար՝ հատկապես մեծ թեքություններում գտնվող այդպիսի ծառատեսակները պետք է շատ խնամքով, գիտական մեթոդներով փոխարինել նորերով:

Հանրապետության անտառներին մեծ վնաս են հասցնում տարբեր տեսակի հիվանդությունները, որոնց դեմ վերջին տասնամյակներում արդյունավետ միջոցներ չեն կիրառվում: Մեծ վնաս են հասցնում մեր հանրապետության անտառներին անհատական և խիստ անկանոն հատումները, որոնց դեմ պետք է կազմակերպվի պետական մակարդակի պայքար, ստեղծվի վառելիքային բալանսի այնպիսի համակարգ, որը կբացառի անտառահատումը, վառելիքափայտ հայթայթելու համար:

Տնտեսաէկոլոգիական առումով հեռանկարային կարևոր նշանակություն կունենա անտառաշերտերի ստեղծումը: Հայտնի է, որ ընկուզենին մեծ խնամք չի պահանջում, բայց մշտապես բերք է տալիս և ունի հողապաշտպան, ջրապաշտպան խոշոր դեր: Մեր հանրապետության բոլոր վայրերում, հատկապես ստորին և միջին բարձրություններում ընկուզենին լավ աճում և բերք է տալիս: Հայաստանի Հանրապետության բնության կարևոր ***հիմնահարցերից է կենդանական ռեսուրսների պահպանությունն ու վերարտադրությունը*** : Ցավոք, հանրապետության տարածքում դեռևս շատ աննշան քանակությամբ պահպանվող կենդանատեսակների (լեռնային ոչխարի, բեզոարյան այծի, օձերի ու թռչունների մի շարք տեսակների), որոնք անհետացման վտանգի տակ են, վերարտադրության բնագավառում պետական հոգածություն ու համեմատաբար լայն միջոցառումներ չեն ձեռնարկվում:

Առանձնահատուկ տնտեսաէկոլոգիական, գիտական հետաքրքրություն ներկայացնող հիմնահարց է Սևանա լճի ու հանրապետության ջրային մյուս ավազանների կենդանական աշխարհի պահպանությունը:

Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող հիմնահարց է ***ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործումն ու աղտոտումից պահպանումը:***

Այս բնագավառում առավել կենսական խնդիրը Սևանա լճի մակարդակի բարձրացումը, աղտոտումից պահպանումը և նրա էկոլոգիական հավասարակշռության վերականգնումն է: Լճի մակարդակը 19 մետրով իջեցնելուց հետո փոխվել է նրա ջերմային ռեժիմը, որը խիստ բացասաբար է անդրադարձել նաև բուսական ու կենդանական աշխարհի վրա: Հատկապես վերացման վտանգի առաջ է կանգնել Սևանի զարդը՝ իշխան ձուկը: Ինչպես ասվել է, Սևանը փրկելու համար Վարդենիսի լեռնաշղթայի տակով կառուցվել է 48 կմ երկարությամբ Արփա–Սևան ջրատար թունելը, որով, նախագծի համաձայն, Արփա գետից ու նրա վտակ Եղեգիսից տարեկան մինչև 270 մլն մ^3 ջուր պետք է հոսի Սևանա լիճ (ջրատարը վաղուց գործում է, սակայն ընդհատումներով): Սակայն, որպեսզի լճի մակարդակը բարձրացվի 5–6 մետրով, և վերականգնվի նրա էկոլոգիական հավասարակշռությունը, անհրաժեշտ է նաև լրացուցիչ ջրի աղբյուր: Այդ նպատակով արդեն կառուցվել է նաև Որոտան–Կեչուտ, 20 կմ երկարությամբ ջրատար թունելը, որով Որոտան գետի վերին հոսանքից տարեկան մինչև 165 մլն մ^3 ջուր կհոսի դեպի Կեչուտի ջրամբար, այստեղից էլ Արփա–Սևան թունելով դեպի Սևան:

Բացի դրանից, Սևանը պետք է փրկել նաև նրա ավազանում գտնվող բազմաթիվ բնակավայրերի, արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունների աղտոտված ջրերից: Այդ նպատակով, խիստ անհրաժեշտ է լճի շուրջը օղակաձև կոլեկտորի (խողովակաշարի) կառուցման ավարտումը: Այն սկսվել էր կառուցվել դեռ 1980–ական թվականներին և մեծ տրամաչափի այդ խողովակաշարով Սևանի ավազանում առաջացող աղտոտված ամբողջ ջուրը պետք է մղվի մինչև Քաղսի գյուղ, որտեղ էլ հատուկ կառուցվելիք ձեռնարկությունում պետք է մաքրվեր, ու մաքրված ջուրը նոր միայն բաց թողնվեր Հրազդան գետը: Խիստ անհրաժեշտ է այդ գաղափարի վերակենդանացումն ու իրականացումը:

Այս միջոցառումների իրականացումը կփրկի աղտոտումից Սևանա լիճն ու Հրազդան գետը (վերջինս շարունակվում է խիստ աղտոտվել):

Սպիտակ, Վանաձոր, Ալավերդի ու այդ հանգույցի մյուս բնակավայրերի ձեռնարկությունների և քաղաքային տնտեսության կենցաղային թափոնների ազդեցությամբ խիստ աղտոտվել է Դեբեդ գետը: Առավել վատթար վիճակում է

Ողջի գետը, որը 1950–ական թվականներից Քաջարանի-ու Կապանի լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունների թափոններով այն աստիճանի է աղտոտվել, որ նրա ջրերը ոչ մի նպատակի համար հնարավոր չէ օգտագործել:

Այսպիսով՝ մեր սակավաջուր հանրապետության ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գլխավոր հիմնախնդիրներից մեկը բոլոր լճերի, ջրամբարների, գետերի ու ստորերկրյա ջրավազանների ջրերը աղտոտումից փրկելն է: Մյուս հիմնահարցը ջրի խնայողաբար օգտագործումն է:

Դեռևս հսկայական քանակությամբ անանպատակ ջուր է կորչում ջրանցքներում հողերի ոչ գիտական մեթոդներով ոռոգման ընթացքում: Ջրի խնայողաբար օգտագործումը չի կարգավորված արդյունաբերական ձեռնարկություններում և կենցաղում:

Հայաստանի Հանրապետության բնության պահպանության բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունեն պետության կողմից հատուկ պահպանվող տարածքների՝ արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի առանձնացումը, ստեղծումը:

Մասնավորապես, այժմ հանրապետության տարածքում ստեղծված են 1 ազգային պարկ («Սևան»), 5 պետական արգելանոցներ (Դիլիջանի, Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու և Սև լճի), ինչպես նաև 22 պետական արգելավայրեր: Ըստ որում, բնության հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 311 հազ. հա (ներառյալ նաև Սևանա լճի հայելու մակերեսը), որը կազմում է ՀՀ ընդհանուր տարածքի 10,8%–ը: Այստեղ պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի ավելի քան 60%–ը: Հատուկ պահպանվող տարածքները, բացառությամբ «Սևան» ազգային պարկի, անտառային լանդշաֆտներ են:

«Սևան» ազգային պարկը ստեղծվել է 1978 թ., ընդգրկում է Սևանա լճի հայելին և լճի մակարդակի իջեցման պատճառով ազատված հատակային տարածքները: Այն զբաղեցնում է 150,1 հազ. հա մակերես, որից 24,8 հազ. հա–ն ցամաքային է: Այստեղ կա 7200 հա ռեկրեացիոն նշանակության տարածք, որից 3000 հա–ն ցամաքային է: Պարկի տարածքում կա 267 տեսակի թռչուններ, 34 տեսակի կաթնասուններ, 17 տեսակի սողուններ, 9 տեսակի ձկներ և 3 տեսակի երկկենցաղներ:

«Խոսրովի» պետական արգելոցը ստեղծվել է 1958 թ., տեղադրված է Գեղամա լեռնաշղթայի հարավային և Ուրծի ու Երանոս լեռների արևմտյան լանջերին, Ազատ և Խոսրով գետերի ավազաններում, տարածքը՝ 29196 հա: Արգելոցի ֆլորան պարունակում է 1686 բուսատեսակ, 213 կենդանատեսակ, 142 տեսակ թռչուն, 5 ձկնատեսակ:

«Շիկահողի» պետական արգելոցը ստեղծվել է 1958 թ., գտնվում է հանրապետության հարավային մասում՝ Ծավ և Շիկահող գետերի ավազաններում, զբաղեցնում է 10 հազ. հա մակերես:

«Էրեբունու» պետական արգելոցը ստեղծվել է 1981 թ. գտնվում է Երևան քաղաքի հարավարևելյան մասում, զբաղեցնում է 89 հա տարածք: Այստեղ հաշվառված են 290 բուսատեսակ, որից 48–ը հազվադեպ:

«Սև լիճ» պետական արգելոցը ստեղծվել է 1987 թ. գտնվում է հանրապետության հարավում, Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասարի արևելյան խառնարանային մասում՝ 2658 մ բարձրության վրա, և զբաղեցնում է 240 հա մակերես: Այստեղ հաշվառված են 160 բուսատեսակ, որոնցից 7–ը՝ հազվադեպ:

Բացի դրանցից, կան նաև 22 արգելավայրեր, որոնք ստեղծվել են 1950–70–ական թվականներին և նպատակ են հետապնդում ապահովելու էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների պահպանությունն ու վերարտադրությունը: Արգելավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 89,9 հազ. հա:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

2.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՇԱՐԺԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բնակչությունը առաջին արտադրողական ուժն է: Հետևաբար՝ նրա թվաքանակի, վերարտադրության, տեղաբախշման, ազգային ու սեռատարիքային կազմի, աշխատանքային ռեսուրսների տարբեր կողմերին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը, քննարկումը, սերտորեն կապված է արտադրողական ուժերի տեղաբաշխման հիմնահարցերի հետ:

Հայերն աշխարհում հնագույն ժողովուրդների թվին են պատկանում, իսկ Հայկական լեռնաշխարհը մարդու ծագման բնօրրաններից է: Այստեղ մարդը հանդես է եկել հին քարի դարում, և հասարակական կյանքը առայսօր անընդմեջ շարունակում է գոյատևել:

Հայերը պատկանում են եվրոպեոիդ ռասայի *արմենոիդ* մարդաբանական տիպին և որպես էթնիկական կազմավորում առաջացել են հնդեվրոպական ընդհանրական լեզվի տրոհման հետևանքով:

Դեռևս նոր քարի (նեոլիթի) դարաշրջանում Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել արմենոիդ ցեղի բնակիչներով՝ հայերով: Իսկ դա նշանակում է, որ հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկ ժողովուրդն են:

Գիտական բազմակողմանի ուսումնասիրություններով պարզված է, որ դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին Հայկական լեռնաշխարհի հիմնական բնակիչները՝ հայերը, ունեին իրենց հասարակական, պետական կազմավորումները: Սակայն հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, մեկ միասնական պետականության մեջ նրա միավորումը հիմնականում իրականացավ մ.թ.ա. IX–VI դարերում: Ըստ որում, Հայկական լեռնաշխարհում հայերից բացի ապրում էին տարբեր ցեղեր, ցեղախմբեր, որոնք հայ ժողովրդի կազմավորումից հետո դադարել են առանձին գոյություն ունենալուց: Ինչպես ցույց են տալիս պատմական աղբյուրները, հույն և օտարազգի այլ հեղինակներ իրենց աշխատություններում, Հայաստանը այդ ժամանակներից սկսած ներկայացնում են որպես միալեզու՝ հայ ժողովրդի երկիր:

Հնագույն ժամանակներից սկսած՝ Հայկական լեռնաշխարհի բնակչության բացարձակ գերակշռող մասը միշտ եղել են հայերը: Նրանց թիվը առավել մեծ է եղել Արարատյան դաշտում, Վասպուրականում, Տուրուբերանում, Սյունիքում, Արցախում:

Քանի որ բնակչության թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ստացվում են միայն մարդահամարներով, իսկ այդպիսիք բնականաբար չէին անցկացվում հնում (Ռուսաստանում առաջին մարդահամարը անց է կացվել 1897 թ., ԱՄՆ–ում՝ 1790 թ., Շվեդիայում՝ 1800 թ., Մեծ Բրիտանիայում՝ 1801 թ., Արևելյան Հայաստանում աշխատանքային նպատակների համար բնակիչների ցուցակագրությունները կատարվել են 1829–1832 թթ., հետևաբար Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի բնակչության վերաբերյալ ստույգ տվյալներ չկան: Այդ ժամանակների բնակչության թվաքանակի վերաբերյալ պատմական աղբյուրներում բերվող փաստերը մոտավոր են, շատ դեպքերում ենթադրաբար:

«Հիմք ընդունելով զորքի քանակը, հարկերի տվյալները (գլխաքանակը և զանազան այլ անուղղակի հիշատակություններ)՝ կարելի է եզրակացնել, որ հին Հայաստանում հայ բնակչության թիվը չի անցել 5–6 միլիոնից: Հավանական պետք է համարել, որ բուն Հայաստանի բնակչության թիվը 5–6 մլն–ի է հասել XII դարում, մոնղոլների ավերիչ արշավանքների նախօրյակին» (տե՛ս Թ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Ե., 1967, էջ 72):

Քանի որ Հայաստանը գտնվում էր Եվրոպան Ասիայի հետ կապող հին ճանապարհների խաչմերուկում, բազմիցս ենթարկվել է Արևելքից դեպի Արևմուտք արշավող բարբարոս ցեղերի հարձակումներին, եղել է Պարսկաստանի ու Բյուզանդիայի, այնուհետև Պարսկաստանի ու Թուրքիայի միջև մղած երկարատև պայքարի կռվախնձոր, ապա իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի կյանքում տեղի են ունեցել քանակական խիստ փոփոխություններ: Պարսիկների, բյուզանդացիների, արաբների, սելջուկների, թաթար–մոնղոլների, թուրք բարբարոսների հարձակումների հետևանքով հայ բնակչության խոշոր զանգվածներ ոչնչացվել, բռնի կերպով քշվել են օտար երկրներ, իսկ որոշ մասն էլ ստիպված բռնել են գաղթի ուղին և ցրվել ամբողջ աշխարհով մեկ: Այդ պատճառների հետևանքով Հայաստանի բնակչության թվաքանակում հաճախակի տեղի են ունե-

ցել կտրուկ նվազումներ, ավելացումներ, փոփոխություններ տեղաբաշխման և ազգային կազմի մեջ:

Այսպես, օրինակ, հայտնի է, որ Հայաստանի թագավոր Տիգրան Մեծը իր հաղթական արշավանքների ժամանակ 300 հազ. բնակիչ է գաղթեցրել այլ երկրներից և բնակեցրել մայրաքաղաք Տիգրանակերտում ու Հայաստանի այլ քաղաքներում: Անվանի աշխարհագրագետ–պատմաբան Թ. Հակոբյանի վկայությամբ, նրանք բաղկացած էին հույներից, ասորիներից և հրեաներից: Այդպիսի պատճառներով, հին Հայաստանի տարբեր մասերում բնակեցվել են նաև պարսիկներ, վրացիներ, աղվաններ: Հետագայում, արաբական երկարատև արշավանքների հետ կապված, նպատակային ձևով արաբ կառավարողները Հայաստանի տարբեր մասերում բնակեցրել են որոշ թվով արաբներ, իսկ XI–XII դարերից այստեղ են ներխուժել սելջուկները, թաթար–մոնղոլները, հետագայում՝ թուրքերը:

Այսպիսով՝ մի կողմից բռնի կերպով Հայաստանում բնակեցվում էին օտար, հիմնականում հայ ժողովրդի նկատմամբ վայրագ ձևով տրամադրված ցեղեր, մյուս կողմից՝ բռնի կերպով այստեղից դուրս էր տարվում հայերի զգալի մասը:

Հայաստանի բնակչության թվաքանակի, ազգային կազմի, տեղաբաշխման մեջ խոշոր տեղաշարժեր են կատարվել Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելուց (1828 թ.) հետո: Դա տեղի էր ունենում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև Պարսկաստանից մեծ թվով հայեր Արևելյան Հայաստան տեղափոխվելու հետևանքով: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, Ռուսաստանից այստեղ են տեղափոխվել մեծ թվով ռուս զինվորականներ, սպայական կազմ, իրենց ընտանիքներով, ինչպես նաև զգալի թվով ռուսազգի վարչական աշխատողներ: Բացի դրանից, Հայաստանի տարբեր վայրերում բնակեցվում են Ռուսաստանից աքսորված աղանդավորներ: Ըստ որում, ցարական կառավարությունը հատուկ նպատակներով նրանց բնակեցնում է տրանսպորտային ու ռազմական մեծ կարևորություն ունեցող լեռնանցքներում: Այդպես են ձևավորվել Բազարչայ գյուղը Սիսիանի լեռնանցքում, Սեմյոնովկան և Ելենովկան (այժմ Սևան) Սևանի լեռնանցքում, Միխայլովկան (այժմյան Ճամբարակ), Ֆիոլետովոն, Գոլովինոն (այժմ Դիլիջանի կազմում), Վորոնցովկան (այժմ Տաշիր): Այսպիսով՝ պարսիկների հեռանալուց հետո Արևելյան Հայաստանի բնակչության ազգային կազմը փոխվել է ի օգուտ այստեղ տեղափոխված ռուսների:

Ինչպես ասվել է, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո մեծ թվով հայեր այստեղ են տեղափոխվել Պարսկաստանից և թուր-

քական բռնապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից: Այս հոսքը հատկապես մեծացել է ռուս–թուրքական պատերազմից հետո, երբ 1878 թ. Ռուսաստանին միավորվում է նաև Կարսի մարզը:

1831 թ. Արևելյան Հայաստանի բնակչությունը եղել է 161,7 հազ. մարդ, 1897 թ. համառուսական առաջին մարդահամարով այն կազմել է արդեն 797.9 հազ, իսկ 1913 թ. ավելի քան 1 մլն մարդ:

Այսպիսով՝ 1831–1913 թթ. Արևելյան Հայաստանի բնակչությունը աճել է ավելի քան 6 անգամ:

Բնակչության աճը պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանի տիրապետության տակ Արևելյան Հայաստանը ավելի երկար ժամանակ ապրեց: Իսկ 1914–1920 թթ. հայ ժողովուրդը նոր ահավոր փորձություններ ապրեց, Արևմտյան Հայաստանում թուրքական բարբարոսները կազմակերպեցին հայերի Մեծ եղեռնը, տեղի ունեցավ նաև Առաջին համաշխարհային պատերազմը, իսկ Ռուսաստանում՝ նաև, այսպես կոչված, Հոկտեմբերյան (1917 թ.) հեղափոխությունը, որի հետևանքով ամբողջ Ռուսական կայսրությունում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում, ստեղծվեց կոմունիստական բռնապետություն: Այս իրադարձությունները, անկասկած, բացասական մեծ ազդեցություն թողեցին Արևելյան Հայաստանի բնակչության վրա: Արևմտյան Հայաստանում 1915 թ. կատարված ցեղասպանության հետ կապված, այդտեղից մեծ թվով մազապուրծ եղած հայեր մերկ ու սոված, տանջանքներով անցել են Արևելյան Հայաստան: Սակայն, այդ անօթևան փախստականների զգալի մասը 1915–1920 թթ. այստեղ տեղի ունեցած սովին ու համաճարակին զոհ գնացին: Արևելյան Հայաստանի բնակչության զգալի մասն էլ զոհ դարձավ Առաջին համաշխարհային, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսված քաղաքացիական պատերազմների ու կոմունիստական բռնապետության հալածանքներին: Այդ բոլորի հետևանքով, Խորհրդային բռնապետության ստեղծվելուց անմիջապես հետո (1920 թ. նոյեմբեր), Հայաստանի բնակչությունը կազմել է ընդամենը 720 հազ. մարդ:

Հայաստանի բնակչության թվաքանակը նորից համեմատաբար արագ աճել է 1920–ական թվականներից հետո: Սակայն խորհրդային իշխանության տարիներին էլ հանրապետության բնակչության աճի վրա զգալի բացասական ազդեցություն են թողել ստալինյան բռնապետության վարած հակահայկական քաղաքականությունը, որի հետևանքով մեծ թվով հայեր աքսորվել են Սիբիր, զգալի թվով կալանավորվել, հալածվել ու գնդակահարվել են բանտերում, ինչպես նաև երկրորդ համաշխարհային պատերազմը, որտեղ զոհվել են ավելի քան 300 հազ. հայեր:

Հայ ժողովուրդը միշտ բնութագրվել է բարձր աճով: Չնայած իր դաժան ճակատագրի դժվարին պայմաններին՝ բնակչության ծնելիությունը միշտ բարձր է եղել, և չնայած նախկինում մահացությունն էլ է բարձր եղել, այնուհանդերձ, բնական համեմատաբար բարձր աճի շնորհիվ մեր ժողովուրդը գոյատևել է: Հանրապետության բնակչության աճը, ինչպես ասվել է, զգալիորեն բարձրացել է խորհրդային իշխանության տարիներին, երբ բժշկության զարգացման շնորհիվ մահացությունը խիստ կրճատվել է: Արդեն 1960–ական թվականներին հանրապետության բնակչության բնական աճը յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով հասել էր 30–33 մարդու, և այդ ցուցանիշով այն ԽՍՀՄ–ում Տաջիկիստանի հետ առաջնակարգ տեղ էր զբաղեցնում: Ցավոք, հետագայում բնական աճը անկում է ապրել՝ 1985 թ. կազմելով 18,2, 1990 թ.՝ 16,3, 1991 թ.՝ 15,1, 1992 թ.՝ 12,2, 1993 թ.՝ 8,4, 1995 թ.՝ 6,4, 1996 թ.՝ 6,2, 1997 թ.՝ 5,3, 1998 թ.՝ 4,3, 1999 թ.՝ 3,3, 2000 թ.՝ 2,7, 2002 թ.՝ 2,1 մարդ, հազար մարդու հաշվով: 1990–ական թվականներին աճի այդպիսի կտրուկ անկումը բացատրվում է հանրապետությունում ստեղծված տնտեսական, սոցիալական ծանրագույն պայմաններով, որը թեև վերջին տարիներին զգալիորեն մեղմանում է, սակայն դեռևս մնում է ծանր: Բնակչության բնական աճի այդպիսի նվազումը պայմանավորված է ինչպես ծնունդների նվազմամբ, այնպես էլ մահացությունների թվաքանակի մեծացմամբ:

Աղյուսակ 8

ՀՀ բնակչության բնական շարժի (աճի) հիմնական ցուցանիշները 1998–2002

Տարեվերջի դրությամբ, 1000 բնակչի հաշվով

	Ծնվածների թվաքանակը			Մահացածների թվաքանակը			Բնական աճը		
	1998	2000	2002	1998	2000	2002	1998	2000	2002
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ամբողջ բնակչությունը	**10,4**	**9,0**	**10,1**	**6,1**	**6,3**	**8,0**	**4,3**	**2,7**	**2,1**
Քաղաքային բնակչություն	9,7	8,4	10,1	6,1	6,2	8,1	3,6	2,2	2,0
Գյուղական բնակչություն	11,8	10,2	10,0	6,1	6,6	7,7	5,7	3,6	2,3
Ըստ մարզերի									
Ք. Երևան	9,3	8,4	9,5	6,7	6,8	8,1	2,6	1,6	1,4
Արագածոտնի	12,8	10,2	11,1	5,7	6,0	7,7	7,1	4,2	3,4

1	2	3	4	5	6	7	8	9	10
Արարատի	10,6	9,2	10,0	5,6	5,7	7,2	5,0	3,5	2,8
Արմավիրի	10,9	9,5	10,0	5,2	5,7	7,0	5,7	3,8	3,0
Գեղարքունիք	12,3	9,9	10,5	5,4	5,8	7,5	6,9	4,1	3,0
Լոռու	9,7	8,6	10,6	6,4	6,7	9,3	3,3	1,9	1,3
Կոտայքի	9,6	9,0	10,0	4,9	5,3	6,7	4,7	3,7	3,3
Շիրակի	10,7	8,4	9,9	6,1	6,3	9,0	4,6	2,1	0,9
Սյունիքի	11,8	10,6	10,3	6,7	6,6	7,6	5,1	4,0	2,7
Վայոց ձորի	10,8	10,1	10,8	5,5	6,2	7,9	5,3	3,9	2,9
Տավուշի	12,6	10,3	11,3	7,5	7,3	9,5	5,1	3,0	1,8

Միևնույն ժամանակ խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունում բնակչության թվաքանակի վրա բնական բարձր աճից բացի, զգալի դեր է խաղացել մեխանիկական աճը: Այդ տարիներին Ադրբեջանի, Վրաստանի, Միջին Ասիայի, Ռուսաստանի հայաբնակ վայրերից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից Հայաստան են ներգաղթել մեծ թվով հայեր: Միայն արտասահմանյան երկրներից մինչև 1980–ական թվականները Հայաստան են վերադարձել 240–250 հազ. հայեր: Հատկապես մեծ թվով հայեր են տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն նաև Արցախից և Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերից: Խորհրդային Ադրբեջանում 1920–ական թվականներից հետո իրականացված հակահայկական գաղութային քաղաքականության հետևանքով, արդեն մինչև ղարաբաղյան ազգային–ազատագրական շարժումների բուռն վերելքի սկսվելը (1988 թ. սկիզբը) Ադրբեջանի հայաբնակ վայրերից՝ Խանլարի, Շամխորի, Դաշքեսանի շրջաններից, Գանձակից, Բաքվից, ինչպես նաև Արցախից հարյուր հազարավոր հայեր ստիպված են եղել տեղափոխվել Հայաստան: Իսկ 1988 թ. փետրվարի 27–29–ին Սումգայիթում կազմակերպված հայ բնակչության ցեղասպանությունից անմիջապես հետո նույնպիսի ցեղասպանություն է սկսվել նաև Բաքվում, Գանձակում, Ֆիզուլիում և Ադրբեջանի մյուս բոլոր հայաբնակ վայրերում: Դրանից հետո՝ 1988–1990 թթ., բարբարոսներն այդ հանրապետության զարգացման համար վճռական դեր խաղացած հարյուր հազարավոր հայերի թալանելով, տանջահար անելով, զրկելով ունեցվածքից՝ տուն–տեղից բռնի կերպով արտաքսել են Ադրբեջանից: Այդ տարիներին Ադրբեջանից ստիպված են եղել Հայաստանի Հանրապետություն տեղափոխվել 360 հազ. հայեր (մեծ թվով հայեր էլ, մազապուրծ լինելով թուրք բարբարոսների հալածանքներից, տեղափոխվել են Ռուսաստան, Ուկրաինա և այլ վայրեր):

Աղյուսակ 9

Հայաստանի բնակչության թվաքանակի շարժը հանրապետության այժմյան տարածքում

Տարին	Բնակչության թվաքանակը հազ. մարդ	
1831	161,7	
1897	797,9	մարդահամար
1913	1000,1	
1920	720,0	
1926	881,3	մարդահամար
1939	1282,3	մարդահամար
1940	1320,3	
1959	1763,0	մարդահամար
1970	2491,9	մարդահամար
1971	2547,9	
1979	3030,7	մարդահամար
1987	3411,9	
1989	3287,6	մարդահամար
1992	3645,1	
1997	3786,3	
1998	3798,2	
2000	3803,4	
2002	3212,9	մարդահամար
2003	3210,3	

Ինչպես երևում է աղյուսակից, 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ հանրապետության բնակչության թվաքանակը 1987 թ. համեմատությամբ զգալիորեն քչացել է: Դա բացատրվում է նրանով, որ 1988 թ. դեկտեմբերի 7–ին Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի է ունեցել պատմության մեջ գրանցված առավել ավերիչ երկրաշարժերից մեկը, որի հետևանքով հիմնահատակ ավերվել են Լենինական (այժմ՝ Գյումրի), Սպիտակ քաղաքները, ինչպես նաև Ախուրյանի, Սպիտակի, Գուգարքի ու հարակից տարածաշրջանների հարյուրավոր գյուղեր: Մեծ չափով ավերվել է նաև Կիրովական (այժմյան Վանաձոր) քաղաքը: Դրա հետևանքով զոհվել են տասնյակ հազարավոր բնակիչներ, իսկ այդ քաղաքների ու շրջանների բնակիչների մեծ մասը, մնալով անօթևան, տեղափոխվել են Հայաստանի այլ

վայրեր ու նախկին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններ, որոնք որոշ ժամանակ հետո վերադարձել են իրենց բնակավայրերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ շրջանների փաստացի բնակչության զգալի մասը նշված պատճառով մարդահամարի պահին հաշվի չեն առնվել, ապա Գյումրի, Վանաձոր, Դիլիջան քաղաքներում և երկրաշարժից առավել տուժած Ամասիայի, Արագածի, Արթիկի, Ախուրյանի, Գուգարքի, Աշոցքի, Տաշիրի, Սպիտակի, Ստեփանավանի տարածաշրջաններում 1989 հունվարի 12–ից մինչև 19–ը մարդահամարի անցկացման ժամկետը հատուկ հրամանով երկարացվել է մինչև փետրվարի 11–ը՝ պահպանելով մարդահամարի անցկացման պահը՝ հունվարի 12–ը: Այսպիսով՝ վերջնական ճշտված տվյալներով, Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը 1989 թ. կազմել է 3448,6 հազ. մարդ:

Իր երկարաձիգ պատմության ընթացքում օտար ցեղերի անդադար հարձակումների, Հայաստանի տարածքը բռնակալ խոշոր երկրների միջև բաժանելու հետ կապված, դեռևս հնուց հայ բնակչությունը ստիպված է եղել տեղաշարժվել մի տեղից մի այլ տեղ, տարբեր երկրներ: Պատմական Հայաստանի տարածքը անարդարացի կերպով բզկտելու, զավթելու պատճառով հայ բնակչության հոծ զանգվածներ մնացել են Թուրքիայի տիրապետության տակ մնացած տարածքներում, Իրանում, իսկ խորհրդային բռնապետություն հաստատելուց հետո՝ նաև նորաթուխ Ադրբեջանի ու Վրաստանի ենթակայությանը հանձնված տարածքներում: Այժմ հայ բնակչության կեսից ավելին ապրում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Պատմական աղբյուրները ցույց են տալիս, որ տարբեր պատճառներով, հայերը Հայաստանից դուրս բնակություն են հաստատել, հայկական համայնքներ են ստեղծել դեռևս մ.թ.ա. I դարից սկսած:

Արտասահմանյան հայկական առավել հնագույն համայնքները ձևավորվել են Պարսկաստանի, Բյուզանդիայի տիրապետություններում, Հյուսիսային Աֆրիկայում: Հետագայում այդպիսի համայնքներ են առաջացել Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Արևելյան Եվրոպայի երկրներում, Ռուսաստանի և Ուկրաինայի հարավային մասերում: Այնուհետև, զգալի թվով հայեր տեղաշարժվել և բնակություն են հաստատել Միջին Ասիայում, Հնդկաստանում, Հարավարևելյան Ասիայի շատ վայրերում: Ավելի ուշ՝ հատկապես 19–րդ դարի վերջերին և 20–րդ դարի սկզբներին, Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կողմից կատարված հայկական ցեղասպանության հետևանքով, մեծ թվով հայեր տեղափոխվեցին եվրոպական և ամերիկյան երկրներ: Ամերիկյան կիսագնդում և Արևմտյան Եվրոպայի երկրներում

հայկական համայնքները մեծացան հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Վերջին տվյալներով՝ Ռուսաստանում ապրող հայերի թիվը գնահատվում է ավելի քան 2 մլն: Միայն Մոսկվա քաղաքում ապրում է ավելի քան 500 հազ. հայ (2004 թ.): Մեծ թիվ են կազմում Հյուսիսային Կովկասում (հատկապես Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում, Ռոստովի մարզում) ապրող հայերի թիվը: 1999 թ. միայն Կրասնոդարի երկրամասի հայերի թիվը կազմել է 800 հազ., այդ թվում՝ Կրասնոդար քաղաքում 120 հազ., Սոչիում՝ 150 հազ. (քաղաքի բնակչության 35%), Արմավիրում 40 հազ., Անապայում՝ 30 հազ:

Ամենավերջին տվյալներով՝ միայն Կրասնոդարի երկրամասում հայերի թիվը հասնում է 1 մլն–ի: Հայկական համայնքներ կան Ռուսաստանի բոլոր ռեգիոններում, այդ թվում Պետերբուրգում, Կոմի Հանրապետությունում, Յակուտիայում (Սախայում), Պովոլժիեում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում:

Հայերի թիվը Ռուսաստանում կտրուկ ավելացել է 1988 թ. դեկտեմբերի 7–ի երկրաշարժի և հատկապես 1990–ական թվականների սկզբներից ՀՀ–ում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր իրավիճակի հետ կապված: Ինչպես նշվել է, մեծ թվով հայեր են տեղափոխվել նաև Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերից՝ կապված Ադրբեջանա–ղարաբաղյան ռազմական հակամարտության և թուրք–ազերիների կողմից Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և մյուս վայրերում կազմակերպված հայերի ցեղասպանության հետ:

Այժմ Ռուսաստանից հետո ամենամեծ թվով հայեր կան ԱՄՆ–ում: 1986 թ. տվյալներով այս երկրում հայերի թիվը կազմում էր ավելի քան 800 հազ. մարդ, իսկ այժմ այն գնահատվում է ավելի քան 1,5 մլն մարդ: Հայկական համայնքը ԱՄՆ–ում սկսել է ձևավորվել 1870–ական թվականներից:

Արևմտյան երկրներից երկրորդ տեղը պատկանում է Ֆրանսիայի հայկական համայնքին, որտեղ նույն թվականի տվյալներով՝ հայերի թիվը հասնում էր ավելի քան 350 հազ. մարդու: 2004 թ. տվյալներով Ֆրանսիայում ապրող հայերի թիվը գնահատվում է ավելի քան 500 հազ. մարդ: Ըստ պատմական փաստերի՝ հայերը Ֆրանսիայում սկսել են բնակվել 13–րդ դարից:

Մինչև 1970–ական թվականները Լիբանանի հայերի թիվը կազմում էր շուրջ 250 հազ. մարդ, հետագայում այդտեղ տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հետ կապված, մեծ թվով հայեր այստեղից տեղափոխվել են ԱՄՆ և այլ երկրներ: Այժմ այս երկրում հայերի թիվը հասնում է ավելի քան 193 հազ–ի: Այստեղ հայերը հիմնավորվել են դեռևս մ.թ.ա. I դարից:

Առավել մեծաթիվ է նաև Իրանի հայկական համայնքը: Մինչև Իրանական հեղափոխությունը, Ռեզա շահի տիրապետության վերջին տարիներին այս երկրում կար ավելի քան 208 հազ. հայ, 1986 թ. տվյալներով այն իջել և կազմել է 180 հազ. մարդ: Այժմ այն գնահատվում է 200 հազ. (2004 թ.): Հայերը Իրանում հիմնավորվել են II դարից սկսած:

Վերջին ժամանակաշրջանում, այլ երկրներ տեղափոխվելու կապակցությամբ, զգալիորեն նվազել է նաև Սիրիայի հայերի թիվը: Նախկին 150 հազարի փոխարեն, այժմ այստեղ կա 120 հազ. հայ: Հայերը Սիրիայում հիմնավորվել են IX դարից:

Թվաքանակով այժմ առավել խոշորներից է Կանադայի հայկական համայնքը, վերջին տվյալներով այստեղ հայերի թիվը հասնում է 120 հազ–ի: Վերջին ժամանակաշրջանում այստեղ (ինչպես և ԱՄՆ–ում) հայերի թիվը արագորեն մեծանում է: Հայերը Կանադայում սկսվել են բնակվել 19–րդ դարի վերջերից:

Արագ է մեծանում նաև Արգենտինայի՝ ավելի քան 100 հազ., Բրազիլիայի՝ 40 հազ. (2002 թ.), Ուրուգվայի՝ 14 հազ., Չիլիի՝ ավելի քան 6 հազ. հայերի թիվը: Այս երկրներում հայկական համայնքներ սկսել են ձևավորվել 19–րդ դարի վերջերից և 20–րդ դարի սկզբներից:

Եվրոպական երկրներից համեմատաբար մեծաթիվ են նաև Լեհաստանի (ընդհանուր առմամբ գնահատվում է շուրջ 100 հազ. մարդ, որի զգալի մասը ծուլվել է), Բուլղարիայի (28 հազ.), Հունաստանի (12 հազ.), Անգլիայի (12 հազ.), Գերմանիայի (25 հազ.), Ռումինիայի (9,5 հազ.), Իռլանդիայի (4,0 հազ.), Ավստրիայի (4,2 հազ.) հայկական համայնքները: Ավելի հին պատմություն ունի Հունգարիայի հայկական համայնքը, սակայն այստեղի հայերի մեծ մասը (ինչպես նաև Լեհաստանի) ծուլվել են, այժմ այս երկրի հայերի թիվը հասնում է 1000: Հին պատմություն ունի նաև Իտալիայի հայկական համայնքը (XIդ.), որտեղ այժմ կա ավելի քան 2000 հայ: Արագ աճում են սկանդինավյան երկրների, հատկապես Շվեդիայի (2000 հայ), ինչպես նաև Շվեյցարիայի (5000 հայ), Իսպանիայի հայկական համայնքները:

Ասիական երկրներից, վերը նշվածներից բացի համեմատաբար մեծաթիվ են Իրաքի (33000 հայ), Քուվեյթի (7,8 հազ. հայ) հայկական համայնքները: Սակայն Ասիայի առավել հին հայկական համայնքներ ունեցողներից են Երուսաղեմ քաղաքը (IVդ–ից, որտեղ այժմ կա 2000 հայ), Հնդկաստանը 16դ., որտեղ հնում եղել են մեծ թվով հայեր, իսկ այժմ մնացել են ընդամենը շուրջ 1000–ը, Կիպրոսը (Vդ–ից): Աֆրիկյան երկրներից այժմ զգալի թվով հայեր են ապրում Եգիպտոսում (23 հազ., հայերը այս երկրում ապրում են VIIդ–ից), Ալժիրում, Եթովպիայում (VIIդ–ից), Սուդանում, Նիգերիայում, Կոնգոյում, ՀԱՀ–ում:

1950–ական թվականներից հետո զգալիորեն աճել է Ավստրալիայի հայկական համայնքը, որտեղ այժմ կա ավելի քան 40000 հայ, իսկ Նոր Զելանդիայի նոր ձևավորվող համայնքում 1990 թ. կար 104 հայ:

Հայեր ապրում են նաև աշխարհի շատ այլ երկրներում: Դեռևս այժմ էլ, չնայած 19–րդ դարի վերջերին և 20–րդ դարի սկզբներին տեղի ունեցած հրեշավոր ցեղասպանությանը, մեծ թվով հայեր շարունակում են ապրել Թուրքիայում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում: Ոչ ստուգ տվյալներով՝ այժմ Թուրքիայում ապրող հայերի թվաքանակը հասնում շուրջ 300 հազ–ի:

Այսպիսով՝ բացի նախկին Խորհրդային Միության կազմի մեջ եղած բոլոր հանրապետություններից, հայեր ապրում են աշխարհի ավելի քան 60 երկրներում:

* * *

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ եղած հանրապետություններից (Հայաստանից բացի) առավել մեծ թվով հայեր ապրում էին Ադրբեջանում: Հայ ազգաբնակչությունը բացարձակ գերակշռող էր Հայաստանի անբաժանելի մասը կազմող Արցախում, որը 1921 թ. բռնակցվել էր Ադրբեջանին:

Ավելի քան 400 հազ. հայ էր ապրում Բաքվում, Սումգայիթում, Գանձակում և Ադրբեջանի մյուս քաղաքներում, շրջաններում:

Ընդհանուր առմամբ, 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում հայերի թվաքանակը կազմել է 475 հազ. մարդ (այդ թվի մեջ մտցված են նաև Լեռնային Ղարաբաղի հայերը): Իրականում Ադրբեջանի հայերի թիվը կազմում էր շուրջ 600 հազ.: 1988 թ. սկսած ղարաբաղյան ազգային–ազատագրական շարժումների հետ կապված՝ այս հանրապետությունում կազմակերպվել է հայ բնակչության սպանդ, ավելի քան 360 հազ. հայեր բռնագաղթվում են Հայաստան, իսկ մեծ թվով էլ՝ Լեռնային Ղարաբաղ, Ռուսաստան, Միջին Ասիա, Ուկրաինա և այլ հանրապետություններ: Իսկ Ադրբեջանի տիրապետության տակ եղած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և Շահումյանի շրջանը միավորվեցին և 1991 թ. սեպտեմբերի 2–ին հռչակեցին Լռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը, որտեղ այժմ ապրում է ավելի քան 145 հազ. հայ:

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ եղած հանրապետություններից այժմ, ինչպես նշվել է, առավել մեծ թվով հայեր ապրում են Ռուսաստանում և Վրաստանում: 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում ապրող հայերի թվաքանակը կազմել է 448 հազ., իսկ 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ 437,2 հազ:

Ռուսաստանի Դաշնությունում 1979 թ–ի մարդահամարի տվյալներով՝ կար 365 հազ. հայ, իսկ 1989թ–ի մարդահամարի տվյալներով՝ 532,4 հազ. հայ: Այժմ հայերի թիվն այստեղ, ինչպես նշվել է, գնահատվում է ավելի քան 2,0 մլն մարդ: Այս հանրապետության տարածքում հայ բնակչությունը, ինչպես ասվել է, հատկապես տեղաբաշխված է Հյուսիսային Կովկասում (Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, Հյուսիսային Օսեթիայում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Տյումենի մարզում, Վոլգոգրադի մարզում, Յակուտիայում և այլ մարզերում):

Մեծ թվով հայեր ապրում են Ուկրաինայում (200 հազ. – 2002 թ.), Մոլդովայում (28 հազ.– 2000 թ.), Ուզբեկստանում (50 հազ.), Թուրքմենիայում, Տաջիկիստանում և նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում:

Դեռ 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ Ուկրաինայում հայերի թվաքանակը եղել է 54,2 հազ., Ուզբեկստանում՝ 50,5 հազ., Թուրքմենիայում՝ 31,8 հազ., Ղազախստանում՝ 19,1 հազ., Տաջիկստանում՝ 5,7 հազ, Բելառուսում՝ 4,9, Ղրղզստանում շուրջ 4,0 հազ., Լատվիայում՝ 3,1 հազ., Մոլդովայում՝ շուրջ 2,9 հազ., Էստոնիայում՝ շուրջ 1,7 հազ, Լիտվայում՝ շուրջ 1,7 հազ մարդ:

Ընդհանուր առմամբ, 1979 թ. մարդահամարի տվյալներով՝ նախկին ԽՍՀՄ տարածքում (ներառյալ Հայաստանը) հայերի թիվը կազմել է 4151 հազ. մարդ, իսկ 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ 4623,2 հազ. մարդ:

Վերջինից 3083,2 հազ–ը կամ 66,7%–ը բաժին էր ընկնում ՀՀ տարածքում ապրող հայերին:

Վերջին տվյալներով՝ աշխարհում հայերի թիվը գնահատվում է ավելի քան 9.0 մլն, որից շուրջ 3,2 մլն (2003 թ.) ապրում է Հայաստանի Հանրապետությունում, մյուս մեծ մասը՝ ավելի քան 60 երկրներում:

2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երկրի արտադրողական ուժերի ռացիոնալ, նպատակային զարգացման համար կարևոր դեր է խաղում բնակչության տեղաբաշխման վերաբերյալ հստակ ցուցանիշներ ունենալը: Այդ հիմնախնդիրների լուծման համար, ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ ըստ նրա վարչական միավորների տարածական հանգույցների որոշվում է բնակչության խտությունը: Իսկ բնակչության խտությունը դա յուրաքանչյուր 1կմ² տարածքի վրա բնակվող մարդկանց թիվն է:

Հանրապետության բնակչության միջին խտության ցուցանիշը որոշելու համար ամբողջ հանրապետության բնակչության թիվը բաժանվում է տարածքի վրա: Իսկ եթե այս կամ այն վարչական շրջանի, մարզի բնակչության խտությունն ենք ցանկանում որոշել, ապա տվյալ շրջանի կամ մարզի բնակչության թիվն է բաժանվում այդ շրջանի կամ մարզի տարածքի վրա:

Բնակչության խտության վերաբերյալ ճշգրիտ ցուցանիշներ ունենալը հնարավորություն է տալիս ավելի ռացիոնալ կերպով կազմակերպել արտադրության ճյուղերի տեղաբաշխումը ըստ ռեգիոնների կամ վարչական շրջանների՝ հաշվի առնելով աշխատանքային ռեսուրսների առկայությունը:

Մարդկության զարգացման ստորին փուլերում աշխարհի բոլոր վայրերում բնակչությունը կենտրոնացվել էր հարթավայրերում, ծովափնյա հարմարավետ վայրերում, գետահովիտներում: Արտադրողական ուժերի զարգացման հետ միասին զգալիորեն նվազել է բնակչության տեղաբաշխման վրա բնական գործոնի ազդեցությունը, գնալով ավելի ու ավելի են յուրացվում լեռնային, հյուսիսային վայրերը, թուլանում են բնակչության տեղաբաշխման միջև եղած խիստ տարբերությունները: Այնուհանդերձ, այդ տարբերությունները հատկապես աշխարհի բոլոր լեռնային երկրներում դեռևս մեծ են և շատ երկար կպահպանվեն:

Հայաստանի Հանրապետության, որպես լեռնային երկրի, բնակչության տեղաբաշխման վրա նույնպես խոշոր ազդեցություն են թողել բնական պայմանները, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական–քաղաքական, սոցիալ–տնտեսական առանձնահատկությունները:

ՀՀ տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է ավելի քան 1800 մ: Ըստ որում, ինչպես վերը նշվել է այստեղ չկան ցածրավայրեր և դաշտավայրեր, իսկ ծովի մակերևույթից մինչև 1000մ բարձրության համեմատաբար նպաստավոր պայմաններ ունեցող վայրերը կազմում են ամբողջ հանրապետության տարածքի ընդամենը 10,5%–ը: Հենց այս վայրերում էլ տեղաբաշխված են ՀՀ ամբողջ բնակչության կեսից ավելին (մոտ 55%–ը): Առավել խիտ է բնակեցված Արարատյան դաշտը: Ըստ վերջին տվյալների՝ ՀՀ բնակչության միջին խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 2003 թ. տվյալներով կազմում է շուրջ 107 մարդ (1989 թ. մարդահամարի տվյալներով եղել է 127 մարդ): Արարատյան հարթավայրում, որն արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի զարգացման տեսակետից Հայաստանի Հանրապետության առավել նպաստավոր պայմաններ ունեցող ռեգիոնն է, բնակչության խտությունը ավելի քան 3,5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Այստեղ բնակչության խտությունը 1կմ² վրա անցնում է 450 մարդուց: Սա նախկին

ԽՍՀՄ տարածքում եղած ամենախիտ բնակեցված ռեգիոններից է (համեմատության համար նշենք, որ նախկին Միության ամենախիտ բնակեցված հանգույցները Մոսկվայի, Կիևի և Տաշքենդի մարզերն են, որտեղ 1990 թ–ի տվյալներով խտությունը համապատասխանաբար կազմել են 334, 158, 275 մարդ): Արարատյան դաշտի բնակչության այդպիսի բարձր խտությունը առաջին հերթին բացատրվում է այստեղ գտնվող Երևան քաղաքով, որտեղ կենտրոնացված է հանրապետության բնակչության գրեթե 1/3–ը:

Սակայն, առանց Երևան քաղաքի էլ Արարատյան դաշտի բոլոր տարածաշրջանները խիտ են բնակեցված: Առավելապես խտությունը բարձր է Մասիսի, Էջմիածնի, Արմավիրի, Արտաշատի տարածաշրջաններում: Այս տարածաշրջաններում բնակչության խտությունը հանրապետության միջին ցուցանիշը գերազանցում է 1,5–2,0 անգամ:

Արարատյան դաշտում բնակչության այսպիսի կուտակումը մի կողմից պետք է բացատրել կենսագործունեության համար համեմատաբար նպաստավոր պայմաններով, մյուս կողմից՝ խորհրդային իշխանության տարիներին արտադրողական ուժերի տեղաբաշխման բնագավառում իրականացված անհեռատես քաղաքականությամբ: Այդ տարիներին Երևանում և մերձերևանյան գոտում են տեղաբաշխվել աշխատատար պրոցեսներ ունեցող ձեռնարկությունների մեծ մասը: Իսկ նախալեռնային և լեռնային շրջանները, ընդհուպ մինչև 1960–ական թթ. չունեին կամ աննշան թվով ունեին վերամշակող արդյունաբերության ձեռնարկություններ: Հետևանքը եղել է այն, որ այդ շրջանների գյուղական բնակչությունը, չունենալով մշտական աշխատանք, ստիպված է եղել թողնել իր բնակավայրը և տեղափոխվել Երևան, հետագայում նաև հանրապետական ենթակայության մյուս քաղաքներ:

Հետագա ժամանակաշրջանում արտադրողական ուժերի տեղաբաշխման բնագավառում կատարված ռացիոնալ տեղաշարժերի, նախալեռնային ու լեռնային շրջաններում արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման, քաղաքային բնակավայրերի ձևավորման շնորհիվ բնակչության հոսքը զգալիորեն կրճատվում է, աճում է այդ շրջանների բնակչության թվաքանակը, հետևաբար նաև մեծանում է բնակչության խտությունը:

Մասնավորապես, Արարատյան գոգավորության նախալեռնային շրջաններից բնակչության խտությունը զգալիորեն բարձր է Կոտայքի, Աշտարակի տարածաշրջաններում: Վերջին տասնամյակներում Հրազդան և Չարենցավան քաղաքների արտադրողական ուժերի արագ զարգացման հետ մեծացել է Հրազդանի տարածաշրջանի բնակչության խտության ցուցանիշը, այն հասել է ավելի քան 133 մարդու:

Այդ նույն պատճառով զգալիորեն բարձրացել է նաև Սևանի ավազանի բնակչության խտությունը:

Հանրապետության տարածքում 1995թ–ին իրականացվել է վարչական նոր բաժանում: Ըստ այդ բաժանման՝ հանրապետության տարածքը բաժանվել է 10 մարզի, իսկ Երևան քաղաքը առանձին վարչական միավոր է մարզի կարգավիճակով:

Աղյուսակ 10

Ստորև տրվում է հանրապետության մարզերի տարածքները, բնակչության թիվն ու խտությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով

Մարզերը	տարածքը կմ²	Բնակչության թիվը (հազ. մարդ)	Բնակչության խտությունը 1կմ² վրա (մարդ)
Արագածոտնի	2753	138,5	50
Արարատի	2096	272,1	130
Արմավիրի	1242	276,8	223
Գեղարքունիքի	5348[1]	238,0	45
Լոռու	3789	285,0	75
Կոտայքի	2089	272,4	130
Շիրակի	2681	282,5	105
Սյունիքի	4506	152,8	34
Վայոց ձորի	2308	55,9	24
Տավուշի	2704	134,3	50
Երևան քաղաք	227	1102,0	4855

Ինչպես երևում է աղյուսակից, Երևան քաղաքից հետո, հանրապետության մարզերից բնակչության ամենաբարձր խտություն ունեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի, Շիրակի մարզերը, որոնց ցուցանիշները հանրապետության միջինից (107 մարդ) բարձր են (բացառությամբ Շիրակի):

Հանրապետության մարզերից բնակչության խտությունը միջինից շատ ցածր է Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերում: Այսպիսով՝ ինչպես ամբողջ աշխարհի երկրներում, այնպես էլ Հայաստանում բնական, պատմա-քաղաքական, սոցիալ–տնտեսական պայմանների հետևանքով բնակչությունը անհավասարաչափ է տեղաբաշխված: Ընդհանուր առմամբ աշխարհի բնակչության շուրջ 80%–ը տեղաբաշխված է ցածրավայրերում և ծովի մակերևույթից մինչև 500մ բարձրություն ունեցող տարածքներում: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում ցածրավայրեր չկան, իսկ մինչև 500մ բարձրություն ունեցող վայրերն էլ աննշան են, ապա այս առումով հանրապետությունը աշխարհի երկրների շարքում յուրահատուկ տեղերից մեկն է գրավում, որի բնակչության շուրջ 55%–ը տեղաբաշխված է մինչև 1000, իսկ 45%–ը՝ ավելի բարձրադիր (հիմնականում մինչև 2000մ) վայրերում:

Այս առումով Հայաստանի Հանրապետությունը կարելի է համեմատել միայն Բոլիվիայի, Պերուի, Մեքսիկայի, Աֆղանստանի ու Եթովպիայի հետ, որոնց բնակչության 65%–ը տեղաբաշխված է ավելի քան 1000մ բարձրության վրա: Իսկ, օրինակ, Լեհաստանում, Նիդեռլանդիայում, Ֆրանսիայում և շատ այլ երկրներում բնակչությունը համարյա ամբողջապես տեղաբաշխված է ծովի մակերևույթից մինչև 500մ բարձրություն ունեցող վայրերում:

Այսպիսով՝ քանի որ Հայաստանի Հանրապետության բնակչությունը, բնական պայմաններից ելնելով, տեղաբաշխված է ծովի մակերևույթից մեծ բարձրության վրա, շատ դեպքերում մեծ թեքություն ունեցող լանջերին տեղաբաշխված բնակավայրերում, ապա արտադրողական ուժերի տեղաբաշխումն ու զարգացումը այստեղ ունի մի շարք առանձնահատկություններ, դժվարություններ:

Բնակչության միջին խտությամբ Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ կազմի մեջ եղած հանրապետություններից զիջում է միայն Մոլդովային (որտեղ 1990 թ. այն կազմել է 129,4 մարդ կմ² վրա): Նույն տարում ՀՀ–ում բնակչության խտությունը կազմել է 127 մարդ կմ² վրա: Իսկ հետագա ժամանակաշրջաններում, ինչպես վերը հանգամանորեն նշվել է, հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական, սոցիալ–տնտեսական խոշոր իրադարձությունների հետ կապված այդ ցուցանիշը նույնպես իջել և դարձել է 107 մարդ կմ² վրա:

2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Արտադրողական ուժերի զարգացման, աշխատանքի հասարակական բաժանման հետ միասին, ժամանակի ընթացքում մարդկանց զգալի մասը սկսել է զբաղվել արհեստագործությամբ, արդյունագործությամբ, առևտրով

[1] Ներառյալ Սևանա լիճը

և այլն: Այդպիսով՝ տեղի է ունենում արդյունաբերական, առևտրի, սպասարկման բնագավառների աշխատանքի առանձնացումը հողագործությունից ու անասնապահությունից: Դա էլ իր հերթին բերել է քաղաքային բնակավայրերի առաջացման ու դրանք գյուղական բնակավայրերից առանձնացման գործընթացին:

Հասարակության զարգացման հետ արագորեն ավելանում է քաղաքային բնակավայրերի թիվը, մեծանում այդպիսի բնակավայրերում ապրող մարդկանց թվաքանակը:

Քանի որ քաղաքների զարգացումը ուղղակիորեն կապված է արդյունաբերության, առևտրի, տրանսպորտի, սպասարկման ոլորտի, առողջապահության և կուլտուրային տնտեսության զարգացման հետ, իսկ վերջիններս հիմնականում արագաթափ սկսել են զարգանալ կապիտալիստական արտադրահարաբերությունների ձևավորման հետ, քաղաքների և քաղաքային բնակչության վերելքը հիմնականում կապված է դրա հետ: Այս գործընթացը հատկապես արագ սկսեց զարգանալ 19–րդ դարի վերջերին և 20–րդ դարի սկզբներին:

20–րդ դարի սկզբին աշխարհի բնակչության ավելի քան 10%–ն էր ապրում քաղաքներում, 1940 թ.՝ 25, իսկ 1983 թ.՝ 40.5%–ը: Այժմ աշխարհի բնակչության շուրջ 50%–ը կազմում է քաղաքային բնակչությունը: 20–րդ դարի սկզբին աշխարհում կար ավելի քան 100 հազ. բնակիչ ունեցող ընդամենը 360 քաղաք, իսկ 1980–ական թթ. սկզբին դրանց թիվը հասել էր 2368–ի: Իսկ այժմ այդպիսի քաղաքների թիվը մեծ է: Շատ արագորեն աճում է 1 մլն–ից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը: Եթե 1900 թ. աշխարհում կար 10 այդպիսի քաղաք, ապա այժմ դրանց թիվը անցնում է 300–ից: Այժմ աշխարհի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը տարեկան աճում է 0,4%–ով, այդ նշանակում է, որ այժմ քաղաքային բնակչությունը ամեն տարի ավելանում է 80–90 միլիոնով, այսինքն՝ 2 անգամ շատ, քան գյուղական բնակչությունը: Այժմ արդեն, ինչպես նշվել է, քաղաքային բնակչությունը կազմում է աշխարհի բնակչության շուրջ կեսը: Սակայն աշխարհի տարբեր երկրներում այդ ցուցանիշները շատ տարբեր են: Քաղաքային բնակչությունը, քաղաքները այժմ այն աստիճանի են արագ զարգանում, որ զարգացած երկրներում առաջացել են քաղաքային բնակավայրերի մեկը մյուսի շարունակությունը կազմող կուտակումներ՝ ագլոմերացիաներ:

Այսպիսով՝ քաղաքը դա այն բնակավայրն է, որի բնակչության ավելի քան 70%–ը զբաղված է արդյունաբերության, առևտրի, գիտության, մշակույթի ու սպասարկման ոլորտներում:

Քաղաքային բնակավայրերի առանձնացման չափանիշները տարբեր երկրներում տարբեր են, սակայն բոլոր դեպքերում էլ հաշվի են առնվում բնակչության թվաքանակը և իրականացվող ֆունկցիան:

Արտասահմանյան շատ երկրներում քաղաքային բնակավայր կոչվելու մինիմալ սահմանը 3, 5 և 10 հազ. բնակիչ ունենալն է: Իսկ որոշ երկրներում նույնիսկ մի քանի հարյուր բնակիչ ունեցող բնակավայրը նույնպես քաղաքային է համարվում:

Ռուսաստանի Դաշնությունում 1957 թ. ընդունած որոշման համաձայն շրջանային ենթակայության քաղաքներ են կոչվում այն բնակավայրերը, որոնք ունեն ոչ պակաս 12 հազ. բնակիչ, և որոնց բնակչության 85%–ը կազմում են բանվորները, ծառայողները ու դրանց ընտանիքի անդամները: Իսկ հանրապետական, մարզային ենթակայության քաղաքները պետք է ունենան ավելի քան 50 հազ. բնակիչ:

Հայաստանի Հանրապետությունում, դեռևս խորհրդային իշխանության տարիներին ընդունված որոշման համաձայն, քաղաքների թվին էին դասվում այն բնակավայրերը, որոնց բնակչության թվաքանակը կազմում է առնվազն 3000 մարդ, և որոնց բնակչության 66%–ից ավելին կազմում են բանվորները, ծառայողները, սպասարկման ոլորտի աշխատողները: Բացի դրանից, քաղաքային բնակավայրերի շարքին էին դասվում այն առողջարանները, որոնք ունեն առնվազն 2000 բնակիչ, և որտեղ բուժվողների, հանգստացողների տարեկան թիվը կազմում է մշտական բնակչության կեսը:

Վերջին տարիներին ընդունվել են նոր որոշումներ քաղաքային բնակավայրերի կարգավիճակի վերաբերյալ: Ըստ այդ որոշումների՝ մեր հանրապետությունում այժմ քաղաք են անվանում նաև այն բնակավայրերը, որոնց բնակչության թիվը նույնիսկ ընդամենը մի քանի հարյուր մարդ է: Ըստ որում, այդ բնակավայրերի բնակչության մեծ մասը զբաղված պետք է լինի արդյունաբերության կամ սպասարկման բնագավառներում:

Հայաստանում, որպես աշխարհի հնագույն քաղաքակիրթ երկիր, քաղաքներ առաջացել են մեր թվարկությունից շատ առաջ: Հայաստանի տնտեսական, քաղաքական և ռազմապաշտպանական կյանքում հատկապես խոշոր դեր են խաղացել Վան, Էրեբունի (Երևան), Մանազկերտ, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Դվին, Անի և հին շատ այլ քաղաքներ:

Ինչպես ամբողջ Հայաստանը, այնպես էլ նրա հնագույն քաղաքները ժամանակ առ ժամանակ երկրաշարժերի հետևանքով, ինչպես նաև օտար բարբարոս ցեղերի հաճախակի հարձակումների հետևանքով բազմիցս ավերվել են, վերականգնվել, վերացվել, նորերը կառուցվել: Դրանք, հանդիսանալով արհեստագործության, առևտրի ու տրանսպորտային ուղիների

խոշոր կենտրոններ,ունեցել են մեծաթիվ բնակչություն և կարևոր դեր են խաղացել երկրի կյանքում:

Մինչև 1920–ական թվականները Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքում կար 4 քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի), Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) և Դիլիջան: Հայաստանի քաղաքային բնակչության թվաքանակը 1913թ–ին եղել է 90 հազ. մարդ, որը կազմել է ամբողջ բնակչության 9%–ը:

1920–ական թվականներից հետո Հայաստանում արդյունաբերության բոլոր ճյուղերի արագ աճի, սպասարկման ոլորտի, տրանսպորտային ցանցի ընդլայնման, գիտության, մշակույթի, առողջարանների զարգացման շնորհիվ մեծ զարգացում են ապրել հին քաղաքները, ձևավորվել են և ստեղծվել բազմաթիվ նոր քաղաքներ: Այս բոլորի հետևանքով հանրապետության քաղաքային բնակչությունը արագորեն աճել է: Ըստ որում, քաղաքային բնակչության թվաքանակը մեծացել է ինչպես արտասահմանյան երկրներից հայրենադարձված, նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններից այստեղ տեղափոխված հայերի, այնպես էլ բնական աճի շնորհիվ: Սակայն հատկապես 1950–ական թվականներից հետո հանրապետության քաղաքային բնակչությունը զգալիորեն աճել է նաև գյուղական բնակչության հաշվին: Իսկ դա տեղի է ունեցել այն պատճառով, որ արտադրողական ուժերի տեղաբաշխման բնագավառում թույլ են տրվել խոշոր սխալներ: Արտադրությունը հիմնականում տեղաբաշխվել է քաղաքային բնակավայրերում, իսկ գյուղական բնակչությունը, կոլտնտեսային պայմաններում չունենալով մշտական աշխատանք, ստիպված է եղել տեղափոխվել քաղաքներ: Դրա հետևանքը եղել է այն, որ հանրապետության հատկապես լեռնային շատ գյուղեր դատարկվել են, մեխանիկորեն մեծացել է քաղաքային բնակչությունը:

Արդեն 1959 թ. հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչությունը կազմել է 50, իսկ 1989 թ.՝ 68%: Համեմատության համար ասենք, որ Վրաստանում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմում է 56, իսկ Ադրբեջանում՝ 54%:

1995 թ. հունվարի մեկի գնահատականով Հայաստանի Հանրապետության քաղաքային բնակչությունը հասել էր 2533,2 հազ. մարդու, որը կազմել է ամբողջ բնակչության մոտ 67,5%–ը: 2000 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ հանրապետության քաղաքային բնակչության թիվը 2535,7 հազ. մարդ էր, որը կազմել է ամբողջ բնակչության 66%: 2003 թ–ի տվյալներով՝ հանրապետության քաղաքային բնակչության թիվը 2062,2 հազ. մարդ էր, որը կազմել է ամբողջ բնակչության ավելի քան 64,2%: Վարչատարածքային նոր բաժանման հետ միասին, վերանայվել է քաղաքային բնակավայրերի կարգավիճակը: Ըստ նոր կարգավիճակի՝ հանրապետությունում կա 48 քաղաք: Հանրապետության խոշորագույն քաղաքը Երևանն է, որի բնակչության թիվը 1989 թ. մարդահամարով կազմել է 1218,5 հազ., իսկ 2003 թ–ի հունվարի 1–ի գնահատականով՝ 1102,0 հազ. մարդ (2001 թվականի մարդահամարի հաշվառմամբ 1103,3 հազ. մարդ):

Աղյուսակ 11

Հայաստանի Հանրապետության քաղաքային բնակավայրերի ու քաղաքային բնակչության շարժը

Տարիները	Քաղաքները		Քաղաքատիպ ավաններ	Քաղաքային բնակչության թվաքանակը (հազ. մարդ)	Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը
	ընդամենը	այդ թվում հանրապետական ենթակայություն			
Առ 15 հունվարի 1959	14	4	21	882	50
Առ 15 հունվարի 1970	23	14	28	1482	59
Առ 17 հունվարի 1979	24	21	33	1993	66
Առ 12 հունվարի 1989	27	22	31	2230	68
Առ 15 հունվարի 2003	48	–	–	2062.2	64.2

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, Հայաստանի Հանրապետությունում ուրբանիզացման (քաղաքային բնակչության թվի ավելացման և քաղաքների դերի բարձրացման) տենդենցը արագորեն աճել է հատկապես 1950–ական թվականներից հետո:

Ըստ որում, հանրապետության ամբողջ բնակչության ավելի քան 34%–ը կենտրոնացված է մայրաքաղաքում՝ Երևանում, որը ոչ մի առումով դրական համարել չի կարելի: Սա թերևս աշխարհի չափանիշով դեմոգրաֆիա-

կան եզակի երևույթներից է, երբ 48 քաղաք ունեցող հանրապետության բնակչության 1/3–ից ավելին կենտրոնացված է մեկ քաղաքում: Երևանն աշխարհի 1 մլն–ից ավելի բնակչություն ունեցող քաղաքների շարքում եզակի տեղերից մեկն է զբաղեցնում նաև բնակչության աճի տեմպով:

1831 թ. Երևանի բնակչությունը կազմել է ընդամենը 12 հազ., 1914 թ.՝ շուրջ 30 հազ., 1996 թ.՝ 1250,0 հազ., 2000 թ.՝ 1248,2 հազ., 2003 թ. 1102,0 հազ. մարդ:

Հայաստանի մայրաքաղաքի բնակչության չկարգավորված աճը, ինչպես ասվել է, տեղի է ունեցել հատկապես 1930–ական թթ. հետո, հանրապետության արդյունաբերական, մշակութային, կրթական, գիտական պոտենցիալի մեծ մասը այստեղ տեղաբաշխելու պատճառով:

Շատ արագ են աճել Գյումրիի, Վանաձորի, Աբովյանի, Հրազդանի, Չարենցավանի, Ալավերդու, Արարատի, Արմավիրի բնակչությունը: Գյումրիի բնակչությունը արդեն 1988 թ. հասել էր ավելի քան 230 հազ., իսկ Վանաձորինը՝ ավելի քան՝ 170 հազ–ի: Քանի որ այդ երկու քաղաքներն էլ խիստ տուժել են 1988 թ–ի դեկտեմբերի 7–ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից, ապա 1989 թ–ի մարդահամարի տվյալներով՝ դրանց բնակչության թվաքանակը զգալիորեն կրճատված է:

Ընդհանուր առմամբ այդ երկրաշարժը մեծ վնաս է հասցրել հանրապետության 21 քաղաքի ու շրջանի, 342 գյուղի: Գյումրիից (որի բնակելի ֆոնդի շուրջ 80%–ը ավերվել էր) և Վանաձորից բացի, առավել մեծ չափով տուժել է Սպիտակը, որը հիմնահատակ ավերվել է: Շատ են տուժել Ալավերդի, Արթիկ, Դիլիջան, Իջևան քաղաքները, Ախուրյան, Ամասիա, Ապարան, Գուգարք, Տաշիր, Աշոցք, Մարալիկ, Ծաղկահովիտ շրջկենտրոնները: Հիմնահատակ ավերվել է Հյուսիսային Հայաստանի 58 գյուղ: Ճշտված տվյալներով՝ այդ երկրաշարժին զոհ է գնացել 25 հազ. մարդ, իսկ 514 հազ. մարդ մնացել է անօթևան:

Գյումրիի, Սպիտակի ու Վանաձորի բնակչությունը՝ 1989 թ. մարդահամարի տվյալներով, զգալիորեն կրճատված է նաև այն պատճառով, որ այդ քաղաքների անօթևան մնացած բնակչության զգալի մասը ժամանակավորապես տեղափոխվել էին հանրապետությունից դուրս, որի հետևանքով հնարավոր չի եղել մարդահամարով տալ ռեալ պատկերը:

Այսպես, օրինակ, դեռ 1979 թ. մարդահամարով՝ Գյումրիի բնակչության թիվը եղել է շուրջ 207, Վանաձորինը՝ 146, Սպիտակինը՝ շուրջ 15 հազ. մարդ: Իսկ 1989 թ. մարդահամարով՝ վերը նշված պատճառներով այդ քաղաքներում համապատասխանաբար գրանցվել է 122,5 հազ., 75,6 հազ. և 3,7 հազ. բնակիչ:

Երկրաշարժից հետո՝ 1989–1992 թթ., այդ քաղաքներում իրականացված վերականգնման աշխատանքները, ժամանակավոր բնակարանների տեղադրումը հնարավորություն տվեցին իրենց մշտական բնակավայրերը վերադարձնել այլ հանրապետություններ տեղափոխված լենինականցիներին, կիրովականցիներին և սպիտակցիներին: Արդեն 2000 թ. հունվարի 1–ի գնահատականով՝ Գյումրիի բնակչության թիվը եղել է 211,6 հազ. Վանաձորինը 172,7 հազ., Սպիտակինը՝ 21,7 հազ. մարդ: 1950–ական թվականներից հետո արագորեն աճել են նաև հանրապետության մյուս քաղաքները և առհասարակ քաղաքային բոլոր բնակավայրերի բնակչության թիվը: Ցավոք սոցիալ–տնտեսական ծանր վիճակի հետ կապված ինչպես քաղաքների, այնպես էլ գյուղական բնակավայրերի բնակչության թիվը նվազել է:

1959–1989 թթ. հանրապետությունում քաղաքների թիվը 14–ից հասել էր 27–ի, իսկ 1995 թ., ինչպես նշվել է, նոր կարգավիճակ մտցնելու հետ կապված քաղաքների թիվը հասել էր 48–ի: Նախկին քաղաքատիպ շատ բնակավայրեր նոր կարգավիճակով դարձել են քաղաքներ:

Աղյուսակ 12

Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքները

Հունվարի 1–ի դրությամբ

Համայնքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Բնակչության թվաքանակը, հազ. մարդ				
			1999	2000	2001	2002	2003
1	2	3	4	5	6	7	8
Երևան	մ.թ.ա. 782թ.	–	1248,7	1248,2	1247,2	1103,3	1102,0
Աբովյան	1963	16	61,1	60,9	60,7	44,6	44,5
Ազարակ	1995	256	5,1	5,1	5,1	4,8	4,8
Արմավիր	1930	48	44,7	44,9	45,0	32,1	32,2
Ալավերդի	1938	167	24,9	24,7	24,6	16,6	16,5
Ախթալա	1995	185	4,1	4,1	4,1	2,4	2,3
Ապարան	1995	59	10,3	10,3	10,3	6,6	6,6
Աշտարակ	1963	20	29,7	29,8	29,8	20,7	20,7
Արարատ	1962	48	22,2	23,3	23,3	20,4	20,5
Արթիկ	1945	105	24,0	24,1	24,1	17,6	17,5
Արտաշատ	1961 (մ.թ.ա. 180–160թթ)	29	35,0	35,0	35,1	25,1	25,1

1	2	3	4	5	6	7	8
Բերդ	1995	199	11,8	11,8	11,8	8,8	8,7
Բյուրեղավան	1994	18	12,1	12,1	12,1	8,1	8,2
Գավառ	1924	98	34,3	34,3	34,2	26,6	26,4
Գյումրի	1840 (774–775թթ.)	116	211,7	211,6	210,9	150,7	149,9
Գորիս	1924	246	29,2	29,3	29,4	23,3	23,2
Դաստակերտ	1995	231	0,6	0,6	0,6	0,3	0,3
Դիլիջան	1951	101	30,9	30,9	30,8	16,1	16,1
Եղեգնաձոր	1995	119	11,7	11,7	11,7	8,2	8,2
Եղվարդ	1995	22	13,5	13,6	13,7	11,7	11,7
Իջևան	1961	137	20,8	20,8	20,7	20,2	20,3
Թալին	1995	66	7,6	7,6	7,6	5,6	5,6
Թումանյան	1995	152	2,5	2,5	2,5	1,9	1,8
Ծաղկաձոր	1984	58	1,5	1,5	1,5	1,6	1,6
Շամլուղ	1995	203	1,7	1,7	1,7	0,8	0,7
Ճամբարակ	1995	118	6,6	6,6	6,6	6,4	7,4
Կապան	1938	316	46,8	46,7	46,6	45,6	45,6
Մարալիկ	1995	95	7,9	7,9	7,9	5,8	5,8
Մարտունի	1995	130	14,5	14,6	14,6	11,7	11,7
Մասիս	1995	17	27,1	27,1	27,0	21,4	21,4
Մեծամոր	1992	48	12,5	12,5	12,5	9,9	9,9
Մեղրի	1984	400	5,6	5,6	5,6	4,8	4,8
Նոյեմբերյան	1995	185	6,5	6,5	6,5	5,5	5,5
Նոր Հաճն	1991	18	12,9	12,9	12,9	10,2	10,1
Հրազդան	1950	50	63,9	63,7	63,5	52,8	52,7
Չարենցավան	1961	38	36,3	36,4	36,2	25,0	24,8
Ջերմուկ	1961	170	10,3	10,3	10,3	5,4	5,4
Սիսիան	1974	210	19,0	19,1	19,1	16,8	16,8
Սպիտակ	1960	100	21,7	21,7	21,7	15,0	15,0
Ստեփանավան	1938	144	25,0	25,0	24,9	16,3	16,2
Սևան	1961	66	30,9	31,0	31,0	21,4	21,4
Տաշիր	1983	162	154,3	14,2	14,1	9,5	9,4
Քաջարան	1992	342	8,8	8,8	8,8	8,4	8,4
Վայք	1995	135	7,7	7,7	7,7	6,0	6,0
Վաղարշապատ	1924 (117–140 թթ.)	21	65,5	65,6	65,7	56,4	56,4
Վանաձոր	1924	120	172,7	172,5	171,6	107,3	106,3
Վարդենիս	1995	168	17,6	17,6	17,6	12,8	12,7
Վեդի	1995	48	14,4	14,5	14,6	13,0	13,0

Բնակչության թվաքանակը հաշվի առնելով՝ քաղաքները բաժանում են մի քանի խմբերի.

1. փոքր քաղաքներ, որոնք ունեն մինչև 20 հազ. բնակիչ,
2. միջին մեծության քաղաքներ, որոնք ունեն մինչև 100 հազ. բնակիչ,
3. մեծ քաղաքներ, որոնք ունեն մինչև 250 հազ. բնակիչ,
4. խոշոր քաղաքներ, որոնք ունեն մինչև 500 հազ. բնակիչ,
5. խոշորագույն քաղաքներ, որոնք ունեն 1 մլն բնակիչ,
6. 1 մլն և ավելի բնակիչ ունեցող քաղաքներ:

Մեզ մոտ մինչև վերջերս փոքր քաղաքների բնակչության թվաքանակի ստորին սահմանը ընդունվում էր 10 հազ. բնակիչը, սակայն այժմ այդ խմբի մեջ են մտցվում նաև 10 հազարից շատ ավելի քիչ բնակիչ ունեցող այնպիսի քաղաքներ, որոնք ունեն առանձնահատուկ նշանակություն:

Հանրապետության 1 մլն–ից ավել բնակչություն ունեցող միակ քաղաքը Երևանն է, որը բնորոշվում է մայրաքաղաքային առանձնահատուկ նշանակությամբ, արդյունաբերության հզորությամբ, ինչպես նաև որպես տրանսպորտային, գիտության, մշակութային խոշոր կենտրոն: Մեծ քաղաքները այժմ երկուսն են՝ Գյումրի, Վանաձոր, որոնք բնութագրվում են որպես արդյունաբերական խոշոր կենտրոններ, տրանսպորտային հանգույցներ, կրթության, գիտության նշանավոր օջախներ: Համեմատաբար մեծ թիվ են կազմում միջին մեծության քաղաքները՝ Աբովյան, Հրազդան, Վաղարշապատ, Կապան, Արմավիր, Չարենցավան, Գավառ, Դիլիջան, Ստեփանավան, Ալավերդի, Արտաշատ, Աշտարակ, Գորիս, Արթիկ, Արարատ, Սպիտակ:

Հանրապետության մյուս քաղաքներն այժմ դասվում են փոքր քաղաքների խմբին: 1950–ական թթ. հետո հանրապետության քաղաքների արագ աճի, այսինքն՝ ուրբանիզացման հետևանքով մի շարք վայրերում արտադրողական ուժերի ոչ հեռանկարային տեղաբաշխման պատճառով առաջացել են քաղաքային բնակավայրերի խմբավորումներ կամ այսպես կոչված քաղաքային ագլոմերացիաներ: Համեմատաբար փոքր տարածության վրա ձևավորվող քաղաքները մեկը մյուսի հետ սերտորեն կապված են արտադրական, սպասարկման, գիտամշակութային անխզելի ցանցով և փաստորեն մեկը մյուսի շարունակությունն են կազմում: Այդ խմբավորումներից՝ ագլոմերացիաներից խոշորը Արարատյան կամ Երևանյան ագլոմերացիան է, որի միջուկը Երևան քաղաքն է: Արդյունաբերական, տրանսպորտային, գիտական, մշակութային այս հզոր կենտրոնի ազդեցությամբ, դրանից ոչ մեծ հեռավորության վրա ձևավորվել են Արարատ, Արտաշատ, Մասիս, Վաղարշապատ, Աշտարակ, Արմավիր, Աբովյան, Բյուրեղավան, Նոր Հաճըն և այլ քաղաքներ:

Քաղաքային բնակավայրերի համեմատաբար փոքր խմբավորումներ են առաջացել նաև Շիրակում, Լոռի–Փամբակում, Հրազդան–Աբովյան գոտում, Սյունիքում, Սևանի ավազանում:

Շիրակում՝ Գյումրի խոշոր քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա ու նրա ազդեցությամբ ձևավորվել են Արթիկ, Մարալիկ քաղաքները:

Լոռի–Փամբակում՝ Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան քաղաքներից բացի ձևավորվել են Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները:

Հրազդանի գոտում ձևավորվել են Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքները:

Քաղաքային բնակավայրերի յուրատիպ խմբավորում է ձևավորվում Սյունիքում: Այստեղ Կապան, Գորիս, Սիսիան քաղաքներից բացի ստեղծվել են Քաջարան, Դաստակերտ, Մեղրի, Ագարակ քաղաքները:

Սևանի ավազանում ձևավորվել են Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, ճամբարակ քաղաքները:

Արփայի ավազանում ձևավորվել են ***Ջերմուկ, Եղեգնաձոր, Վայք*** քաղաքները: Քաղաքային բնակավայրերից յուրաքանչյուրը զարգանում է բնական, տնտեսական առանձնահատկություններով և հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում մեկ կամ մի քանի կարևոր դեր է խաղում:

Օրինակ՝ ***Երևանը,*** ինչպես նշվել է, մայրաքաղաքային դերից բացի, հանրապետության համար ունի արդյունաբերական, տրանսպորտային կապերի, կրթական, գիտական ու մշակութային վճռական դեր:

Գյումրին ու Վանաձորը հիմնականում բնութագրվում են արդյունաբերական, տրանսպորտային նշանակությամբ, որտեղ բնորոշ է դառնում նաև մշակույթը, կրթությունը:

Կապանը, Ալավերդին, Քաջարանը, Ագարակը, Ախթալան, Շամլուղը ձևավորվել են որպես լեռնահանքային արդյունաբերության կենտրոններ, ***Արթիկը, Արագածը, Արարատը***՝ որպես շինանյութերի արդյունաբերության, ***Ջերմուկը, Դիլիջանը, Արզնին, Ծաղկաձորը***՝ որպես առողջարանային կենտրոններ և այլն: Հանրապետության քաղաքների մեծ մասը վարչական կենտրոններ լինելուց բացի, հանդիսանում են արդյունաբերական նշանավոր կենտրոններ (Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Իջևան, Գավառ, Կապան, Արտաշատ, Սևան և այլն):

Այսպիսով՝ հատկապես 20–րդ դարի 50–ական թթ. սկսած՝ Հայաստանում շատ արագ մեծացել է քաղաքային բնակավայրերի թիվը, մեծ չափով ավելացել է դրանց բնակչության թվաքանակը: Ի տարբերություն քաղաքային բնակավայրերի, վերջին 70 տարիների ընթացքում հանրապետության

գյուղական բնակավայրերի թիվը ոչ միայն չի ավելացել, այլ զգալի չափով կրճատվել է:

Նախորդ հարյուրամյակում՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց (1828 թ.) հետո, մինչև խորհրդային կարգերի հաստատումը հանրապետության այժմյան տարածքում գյուղական բնակավայրերի թիվը մեջ չափով ավելացել է: Այդ ժամանակաշրջանում Արարատյան դաշտում, Սևանի ավազանում, Շիրակում, Սյունիքում և այլուր ստեղծվել են բազմաթիվ նոր գյուղեր, մեծացել է եղած գյուղերի բնակչության թվաքանակը: Այդ գործում զգալի դեր է խաղացել Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայաբնակ վայրերից մեծ թվով հայերի տեղափոխությունը Հայաստանի այժմյան տարածք:

19–րդ դ. վերջերին և 20–րդ դ. սկզբներին հանրապետության այժմյան տարածքում հաշվվում էր հազարից ավելի գյուղական բնակավայր:

Սակայն խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, կոլտնտեսային համակարգի ստեղծման, արտադրողական ուժերի խիստ անհավասարաչափ, ոչ ռացիոնալ տեղաբաշխման հետևանքով, մինչև 1970–ական թթ. հատկապես լեռնային շրջանների շատ գյուղեր դատարկվել են, դրանց բնակչությունը հիմնականում տեղափոխվել է Երևան ու հանրապետության նոր ստեղծված քաղաքներ, որոշ մասն էլ բնակություն է հաստատել Արարատյան դաշտի գյուղերում կամ հանրապետությունից մեկնել է դուրս:

1979 թ. մարդահամարի տվյալներով՝ հանրապետությունում կար 916, իսկ 1989 թ. մարդահամարով՝ 912 գյուղական բնակավայր: Մեծ թիվ են կազմում հատկապես 200–2000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը: 1979 թ. հանրապետությունում եղել է այդպիսի 676, իսկ 1989 թ.՝ 605 բնակավայր: 2003 թ. տվյալներով հանրապետությունում կա 952 գյուղ, որոնք միավորված են 871 գյուղական համայնքում:

Այդ տարիներին զգալիորեն աճել է մինչև 5000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը: 1989թ. մարդահամարի տվյալներով կար 2001–5000 բնակիչ ունեցող 159 գյուղ: Նույն տվյալներով 16 գյուղական բնակավայրեր ունեին 5000–ից ավելի բնակիչ, այդ թվում 9 գյուղ ուներ 6000–ից ավելի բնակիչ:

Գյուղական բնակավայրերից առավել խոշորից է Մարտունու տարածաշրջանի Վարդենիկ գյուղը, այստեղ դեռ 1996 թ. կար 9460 բնակիչ: Նույն տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղը ունի 7940 բնակիչ, Կարճաղբյուրը՝ 6348 բնակիչ:

Գավառի տարածաշրջանի Սարուխան գյուղի բնակչությունը 8730 մարդ է, Տաշիրի տարածաշրջանի Մեծավան գյուղինը՝ 7546 բնակիչ և այլն:

Գյուղական բնակավայրերի մեծ խտությամբ աչքի է ընկնում Արարատյան դաշտը: Այստեղ դրանք այնքան խիտ են տեղաբաշխված, որ փաստորեն մի գյուղը մյուսի շարունակությունն է կազմում: Դա պետք է բացատրել Արարատյան դաշտի հողատարածությունների օգտագործման բարձր աստիճանով, դրանց ոռոգման խիտ ցանցի ստեղծմամբ, նպաստավոր բնական պայմաններով, տրանսպորտային հարմար ուղիներով, խոշոր քաղաքների առկայությամբ:

Մոտավորապես նույն նախապայմանների շնորհիվ գյուղական բնակավայրերը խիտ են Շիրակի, Լոռու, Ապարանի հարթավայրային մասերում, Սևանի ավազանի մերձլճային գոտում, Աղստև, Որոտան, Ողջի, Արփա ու մյուս գետերի ցածրադիր հովտային վայրերում:

Աղյուսակ 13

ՀՀ գյուղական բնակչության շարժը վերջին տարիներին ըստ մարզերի

Հունվարի 1–ի դրությամբ, հազար մարդ

ՀՀ մարզերը	1999	2000	2001	2002	2003
Հայաստանի Հանրապետություն	1262,2	1267,7	1270,0	1147,3	1148,1
Երևան քաղաք	–	–	–	–	–
Արագածոտն	119,8	120,5	120,8	105,5	105,6
Արարատի	211,3	211,9	212,2	192,0	192,0
Արմավիրի	198,4	199,3	199,7	178,0	178,3
Գեղարքունիքի	175,6	176,4	176,5	158,8	158,4
Լոռու	128,5	129,3	129,5	116,5	116,6
Կոտայքի	127,6	128,3	128,4	118,6	188,8
Շիրակի	118,2	118,7	119,2	109,2	109,4
Սյունիքի	48,5	48,7	48,9	48,6	48,9
Վայոց ձորի	40,7	40,8	40,9	36,4	36,4
Տավուշի	93,6	93,8	93,9	83,7	83,7

2.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Հայ ժողովրդի զգալի մասը դաժան ու բարդ ճակատագրի բերումով ստիպված է եղել մի տեղից մի այլ տեղ տեղաշարժվել, ցրվել աշխարհով մեկ: Միևնույն ժամանակ զգալի թվով այլ ազգություններ բնակություն են հաստատել Հայաստանի տարածքում:

Վերջին տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունը թերևս աշխարհի ամենամիատարր բնակչություն ունեցող երկրներից մեկն է:

1979 թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի բնակչության 89,7 տոկոսը կազմել են հայերը, իսկ 1989 թ. մարդահամարի տվյալներով հայերի տեսակարար կշիռը դարձել է 93,3 տոկոս:

1988 թ. բուռն վերելքով սկսված ղարաբաղյան ազգային–ազատագրական շարժման հետ կապված, ինչպես արդեն նշվել է, Ադրբեջանից բռնագաղթվել է այնտեղ ապրող ամբողջ հայությունը, (որը առանց Լեռնային Ղարաբաղի կազմում էր շուրջ 350–400 հազ. մարդ): Դրա հետ կապված՝ ՀՀ տարածքից տեղափոխվել են ադրբեջանցիները, որոնց թիվը 1979 թ. կազմել էր 160,3 հազ. մարդ, 1989 թ.՝ 84,8 հազ. մարդ, իսկ այժմ այդպիսի ազգությամբ հոծ բնակչություն այստեղ չկա:

Վերջին գնահատականով՝ հայերի տեսակարար կշիռը Հայաստանի Հանրապետությունում կազմում է շուրջ 96 տոկոս:

Իսկ ընդհանուր առմամբ, ՀՀ–ում ապրում են 25 այլ ազգությունների ներկայացուցիչներ: Դրանցից թվաքանակով զգալի են ռուսները, քրդերն ու եզդիները, ասորիները, ուկրաինացիները, գերմանացիները, հրեաները: Կան նաև բելոռուսներ, վրացիներ և այլ ազգություններ: 1989 թ. մարդահամարի տվյալներով ռուսների թվաքանակը կազմել է 51,6 հազ. մարդ:

Ռուս բնակչությունը տեղաբաշխված է հիմնականում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում, Սևանի, Ճամբարակի, Տաշիրի, Ստեփանավանի տարածաշրջաններում: Այժմ ռուսների թիվը զգալիորեն կրճատվել է:

Զգալի է նաև եզդիների (քրդերի հետ միասին) թվաքանակը: 1989 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում կար 56,1 հազ. եզդի և քուրդ (1979 թ. եղել է 50,8 հազար): Քրդերը և եզդիները ապրում են Արագածի, Աշտարակի, Թալինի, Էջմիածնի, Արմավիրի ու Մասիսի տարածաշրջաններում: Սրանց թիվը նույնպես կրճատվել է:

Ռուսների ու քրդերի (եզդիների հետ) թվաքանակը փոքր տարբերությամբ այժմ էլ պահպանվում է: Ասորիների թիվը կազմում է 7.0 հազ., ուկ-

ռաինացիները՝ 2,0 հազ., գերմանացիները՝ 1,5 հազ., հրեաները՝ 1.0 հազ. մարդ և այլն:

Հայ ժողովուրդը շատ հնուց էլ մեծ հարգանքով է վերաբերվել Հայաստանում ապրող բոլոր ազգություններին: Հանրապետությունում ապրող փոքրամասնություններն ունեն իրենց համայնքները, դրանք մշտապես գտնվում են *հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում:*

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման հարցերի լուծման համար շատ կարևոր դեր են խաղում ոչ միայն տվյալ շրջանի բնակչության, աշխատանքային ռեսուրսների թվաքանակի, այլև դրանց սեռատարիքային կազմին վերաբերող ճշգրիտ ցուցանիշների առկայությունը:

Կան արտադրության ճյուղեր, որտեղ գերազանցապես օգտագործվում է տղամարդկանց աշխատուժը (լեռնահանքային արդյունաբերություն, մետաղաձուլություն և այլ), իսկ որոշ բնագավառներում առհասարակ արգելվում է կանանց աշխատանքը (ստորերկրյա աշխատանքներում, քիմիական արդյունաբերության թունավոր արտադրամասերում և այլն):

Եվ հակառակը, կան արտադրության ճյուղեր, որտեղ առավել նպատակահարմարը կանանց աշխատանքի կիրառումն է (տեքստիլ արդյունաբերություն, ճշգրիտ մեքենաշինություն, սննդի արդյունաբերության շատ բնագավառներ և այլն):

Ելնելով այս կարևոր պահանջներից՝ աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ սեռային ու տարիքային կազմի ճշգրիտ ցուցանիշների առկայությունն ըստ մարզերի, տարածաշրջանների, բնակավայրերի խիստ անհրաժեշտ է:

Բնակչության սեռային կազմը ժամանակի ընթացքում կարող է փոփոխման ենթարկվել: Այդ ցուցանիշի վրա զգալի ազդեցություն են թողնում պատերազմները: Այսպես, 1941–1945 թթ. պատերազմի պատճառով նախկին ԽՍՀՄ ամբողջ բնակչության թվաքանակում մեծ թվով տղամարդկանց զոհվելու հետ կապված, վերջիններիս տեսակարար կշիռը զգալիորեն իջել է և դեռևս պատերազմից 6 տարի հետո էլ՝ 1951 թ., կազմել է 44%: Հետագայում այդ տարբերությունը նկատելիորեն կրճատվել է, և 1989 թ. մարդահա-

մարի տվյալներով տղամարդկանց տեսակարար կշիռը նախկին ԽՍՀՄ–ում կազմել է ավելի քան 47 %: Նշված պատճառով բնակչության սեռային կազմի ցուցանիշների փոփոխություններ են կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում: Այսպես, 1940 թ. (պատերազմը սկսելուց առաջ) Հայաստանի բնակչության թվաքանակում տղամարդկանց թիվը եղել է 666 հազ., իսկ կանանցը՝ 654 հազ. մարդ: Այսինքն՝ որոշ չափով տղամարդկանց տեսակարար կշիռը մեծ է եղել: Իսկ 1959 թ. մարդահամարի տվյալներով տղամարդկանց թիվը եղել է 842 հազ., կանանց թիվը՝ 921 հազ. մարդ: 1989 թ. մարդահամարով այդ տարբերությունը շատ ավելի կրճատվել է:

1985 թ. հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում տղամարդկանց տեսակարար կշիռը կազմել է 48,9 %, իսկ 1995 թ. 48,4 տոկոս, կանանց տեսակարար կշիռը՝ 51,6 տոկոս:

2001 թ. մարդահամարի տվյալներով ու 2003 թ. գնահատականով հանրապետության բնակչության ընդհանուր քանակում կանանց տեսակարար կշիռը կազմում է 51,9 % (1666,7 հազ.), իսկ տղամարդկանցը՝ 48,1% (1543,6 հազ.):

Սոցիալ–տնտեսական տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում բնակչության սեռային կազմի ցուցանիշները տարիքային կտրվածքով:

Աղյուսակ 14

ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի

Տարեսկզբին, հազար մարդ

	2000		2001		2002		2003	
	կին	տղա–մարդ	կին	տղա–մարդ	կին	տղա–մարդ	կին	տղա–մարդ
Ընդամենը այդ թվում	1954,4	1849,0	1953,9	1848,5	1670,5	1542,4	1666.7	1543,6
1	2	3	4	5	6	7	8	9
0–4	99,9	112,9	92,4	106,0	74,0	84,7	88,6	101,5
5–9	159,0	168,8	144,0	153,6	116,4	126,2	116,2	126,0
10–14	185,7	195,2	184,0	192,9	157,5	164,0	156,9	163,2
15–19	178,4	186,6	183,6	190,6	158,6	160,2	158,2	159,8
20–24	155,4	162,3	158,7	166,7	140,0	138,0	139,4	137,9
25–29	138,7	144,4	142,8	146,6	118,0	111,0	117,2	110,8
30–34	143,0	135,8	136,9	136,0	107,4	97,8	106,4	97,5

1	2	3	4	5	6	7	8	9
35–39	170,5	152,5	162,9	145,2	122,7	109,4	121,8	109,1
40–44	164,7	145,7	172,0	154,0	146,2	132,4	145,4	131,8
45–49	123,3	106,1	130,7	111,6	117,5	104,6	116,8	103,9
50–54	82,7	69,5	92,7	78,1	88,5	76,6	87,9	75,7
55–59	63,2	51,4	55,6	44,8	48,1	39,5	47,5	38,7
60–64	94,2	76,6	94,8	76,0	76,0	60,0	75,0	58,6
65–69	70,9	56,5	70,4	55,9	69,5	55,1	68,0	52,9
70–74	65,3	50,4	69,4	53,2	63,1	48,2	60,9	45,4
75–79	30,4	17,6	33,1	20,1	41,8	24,8	39,2	22,5
80–84	15,0	7,6	15,8	7,6	14,9	6,0	13,2	5,2
85+	14,1	9,1	14,1	9,6	10,3	3,9	8,1	3,1

Ինչպես ցույց են տալիս փաստերը, հանրապետության մինչև 25 տարեկան հասակի բնակչության ընդհանուր թվաքանակում գերակշռում են տղամարդիկ: Ավելի բարձր տարիք ունեցող բնակչության թվաքանակում նկատելիորեն, տարիքային կառուցվածքի բարձրացման հետ միասին, բարձրանում է նաև կանանց տեսակարար կշիռը: Այդ տարբերությունը ցայտուն կերպով արտահայտվում է հատկապես 70 տարեկանից սկսած:

Այսպես 1989 թ. մարդահամարի տվյալներով հանրապետությունում 15–19 տարեկան բնակչության ընդհանուր թվաքանակում յուրաքանչյուր 1000 կնոջը ընկնում է 1081 տղամարդ, 64 տարեկան բնակչության մեջ այդ ցուցանիշը կազմում է 833, իսկ 70–74 տարեկան բնակչության մեջ՝ 539, հետագա տարիներին այդ միտումը հիմնականում պահպանվել է:

Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ինչպես աշխարհի քրիստոնյա մյուս երկրներում, մեզ մոտ նույնպես կանանց կյանքի միջին տարիքը տղամարդկանց համեմատությամբ բարձր է:

Արտադրողական ուժերի զարգացման հիմնահարցերի քննարկման ընթացքում կարևոր դեր են խաղում բնակչության վերարտադրության (աճի) և աշխատանքային ռեսուրսներին վերաբերող ցուցանիշների առկայությունը:

Հայ բնակչությունը հնուց սկսած միշտ բնութագրվել է բնական բարձր աճով: Իսկ այս հանգամանքը մեր լեզվի ու մշակույթի հետ միասին վճռական դեր է խաղացել հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի հարատևության գործում:

Բնակչության բնական աճը դա մեկ տարվա ընթացքում ծնված ու մահացած մարդկանց թվաքանակների միջև եղած տարբերությունն է: Ամբողջ հանրապետության, առանձին շրջանների ու բնակավայրերի բնակչության աճի ցուցանիշները ավելի պարզ ու համեմատելի լինելու համար, դրանք

հաշվարկվում են յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով: Այսպես, վերջին տարիների տվյալներով նախկին ԽՍՀՄ–ում բնակչության բնական աճը յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով կազմել է 10 մարդ: Իսկ այդ նախկին միության կազմի մեջ եղած այժմ անկախ երկրներում բնակչության բնական աճը շատ ավելի ցածր է, որոշ երկրներում այն բացասական է: Մասնավորապես Ռուսաստանում արդեն 1998 թ. 1000 մարդու հաշվով ծնվածների թիվը կազմել է 9, իսկ մահացածներինը՝ 14 մարդ, այսինքն՝ բնական աճ չկա, –5 մարդ է: Այդպիսի վիճակ է նաև Էստոնիայում:

Հայաստանի Հանրապետությունում բնակչության բնական աճը, ինչպես վերը ասվել է, մինչև 1960–ական թթ. ԽՍՀՄ–ում ամենաբարձրերից մեկն է եղել: 1960 թ. Հայկական ԽՍՀ բնակչության բնական աճը յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով կազմել է 33,3 մարդ, իսկ հետագա տարիներին մեծ չափով իջել և 1970 թ. կազմել է 17 մարդ, 1985 թ.՝ 18, իսկ 1994 թ.՝ 7,1 մարդ: Հետագա տարիներին այդ ցուցանիշը ավելի է փոքրացել: 1999 թ. հանրապետությունում բնակչության բնական աճը 1000 մարդու հաշվով կազմել է ընդամենը 3,3, իսկ 2002 թ.՝ 2,1 մարդ: Եթե չինացիների, ռուսների, ուկրաինացիների ու աշխարհի մյուս խոշոր ազգերի համար բնակչության բնական աճի անկումը ճակատագրական խոշոր նշանակություն չունի, ապա մեզ համար դա խիստ բացասական ժողովրդագրական երևույթ է: Եթե մեր ժողովուրդը դարեր շարունակ այդպիսի ցածր աճ ունենար, ապա հայությունը վերացման վտանգի տակ կլիներ: Հետևաբար՝ բնակչության բնական աճն ամենուրեք մեր պետության և ժողովրդի կողմից պետք է խրախուսվի:

Բացի բնական աճից, կա նաև բնակչության «մեխանիկական աճ» հասկացությունը: Այն կապված է մի երկրից մյուս երկիր, մի շրջանից մի այլ շրջան բնակչության մեխանիկական տեղաշարժի հետ:

Օրինակ, Հայաստանի Հանրապետության բնակչությունը 1940–ական թթ. հետո ավելացել է նաև արտասահմանյան երկրներից ու նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններից հայրենադարձված հայերի հաշվին: Ինչպես ասվել է, 1988–1990թթ. Ադրբեջանում կազմակերպված հայերի ցեղասպանության հետ կապված, այդ հանրապետությունից Հայաստան է բռնագաղթվել 360 հազ. հայ:

Բնակչության մեխանիկական տեղաշարժերը տեղի են ունենում տարբեր պատճառներով՝ պատերազմների, բռնագաղթերի, սոցիալ–տնտեսական պայմանների և այլն: Հայ ժողովուրդն իր դաժան ճակատագրի հետ կապված այդ ու այլ պատճառներով բազմիցս ստիպված է եղել տեղաշարժվել մի տեղից մի այլ տեղ: Այդ է պատճառը, որ այսօր ցրված է աշխարհով մեկ:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման հարցերի քննարկման ժամանակ, ինչպես նշվել է, կարևոր դեր են խաղում նաև աշխատանքային ռեսուրսների քանակական ցուցանիշների առկայությունը: Աշխատանքային ռեսուրսները բնակչության աշխատունակ մասն են: Աշխատանքային օրենսդրությամբ այժմ մեզ մոտ աշխատունակ են հաշվվում 16–65 տարեկան տղամարդիկ և 16–60 տարեկան կանայք: Բնակչության հենց այս մասն էլ հանդիսանում է յուրաքանչյուր հասարակարգի արտադրողական ուժերի վճռական դեր խաղացող բաղադրամասը:

Բացի նշված տարիքների տղամարդկանցից ու կանանցից, առհասարակ աշխատանքային ռեսուրսների ամբողջ պոտենցիալի մասին պատկերացում ունենալու համար (որ խիստ անհրաժեշտ է տնտեսական, ռազմական անհետաձգելի հիմնահարցեր լուծելու նպատակով), հաշվի է առնվում նաև բնակչության ոչ աշխատանքային տարիքի (հիմնականում 14–16 տարեկան) ու կենսաթոշակային տարիքի (որոնք շարունակում են աշխատանքային գործունեությունը կամ կարող են շարունակել) մարդկանց թվաքանակը:

Աշխատանքային ռեսուրսներին վերաբերող այդ հույժ կարևոր ցուցանիշները ճշգրիտ կերպով հաշվարկվում են մարդահամարների տվյալների հիման վրա, իսկ մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում՝ բնակչության ընթացիկ հաշվառման հիման վրա: Աշխատանքային ռեսուրսների ակտիվ ու օժանդակ մասերի ցուցանիշների ճշգրիտ հաշվարկն ըստ շրջանների ու բնակավայրերի անհրաժեշտ է արտադրության ծյուղերի ռացիոնալ, նպատակային կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ աշխատանքային ռեսուրսները կազմում են յուրաքանչյուր երկրի բնակչության մինչև 55%–ը, առանձին երկրներում այդ ցուցանիշը կարող է լինել մի փոքր ցածր կամ բարձր:

1989 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանի Հանրապետության աշխատանքային ռեսուրսների ակտիվ մասը՝ աշխատունակ տարիքի ամբողջ բնակչությունը, կազմել է 1858308 մարդ, այսինքն՝ ամբողջ բնակչության թվաքանակի 50,3%: Ըստ որում, հանրապետության աշխատանքային ռեսուրսների կառուցվածքում թվաքանակով տղամարդիկ զգալիորեն գերազանցում են կանանց: Նույն մարդահամարի տվյալներով աշխատունակ տարիքի տղամարդիկ կազմել են 951036 մարդ, կանայք՝ 907272 մարդ: Աշխատանքային ռեսուրսների, դրանց նպատակային օգտագործման հարցերի համակարգում կարևոր նշանակություն ունեն բնակչության կրթական մակարդակին վերաբերող ցուցանիշները: Այս առումով, Հայաստանի Հանրապետությունն աշխարհի երկրների շարքում առաջնակարգ տեղերից

մեկն է զբաղեցնում: 1989 թ. մարդահամարի տվյալներով նախկին ԽՍՀՄ–ում 15 և ավելի տարիք ունեցող 1000 մարդուց միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեին 812–ը, իսկ Հայաստանում՝ 901–ը, և այդ ցուցանիշն այդ միության կազմում եղած 15 հանրապետություններից ամենաբարձրն էր: Ըստ որում, 15 և ավելի տարիք ունեցող 1000 մարդուց նախկին ԽՍՀՄ–ում միջին հաշվով բարձրագույն կրթություն ունեին 108, իսկ Հայաստանում՝ 138 մարդ: Կրթական այսպիսի բարձր մակարդակը հայ ժողովրդի ազգային հարստության գլխավոր աղբյուրներից մեկն է, որի նպատակային օգտագործումը Հայաստանի Հանրապետության անկախ տնտեսության հետագա զարգացման կարևորագույն նախապայմանն է:

1990–ական թթ. հետո ՀՀ–ում տեղի ունեցած սոցիալ–տնտեսական փոփոխությունների, այդ թվում սեփականաշնորհման, երկրում ստեղծված սոցիալական ծանր պայմանների հետևանքով տեղի ունեցած բնակչության արտահոսքերի ու այլ պատճառներով զգալի փոփոխություններ են կատարվել աշխատանքային ռեսուրսների քանակի, զբաղվածության բնագավառներում: 2003 թ. տվյալներով ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 1236,4 հազ. մարդ, որոնց 89,9 %–ը կամ 1111,6 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 10%–ը կամ 124,8 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, պաշտոնապես գրանցված են եղել որպես գործազուրկ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների 93,8 %–ը կազմել է քաղաքային բնակչությունը: Նույն տարվա պաշտոնապես գրանցված գործազուրկներից կանայք կազմել են 68,8 %:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական Հայաստանը աշխարհի այն եզակի երկրներից մեկն է, որտեղ դեռ անհիշելի ժամանակներից սկզբնավորվել է տարբեր տեսակի մետաղային հումքի հանույթի ու ձուլման գործը:

Մասնավորապես, Հայկական լեռնաշխարհը հայտնի է եղել պղնձի, ցինկի, կապարի, ոսկու, արծաթի, երկաթի հանքաքարի պաշարներով:

Առավել լայն տարածվածը պղնձի հանքավայրերն էին: Գործնական տեսակետից հատկապես կարևորները՝ Սյունիքի, Գուգարքի տարբեր գավառներում, Հանքավանի, Տիգրիս գետի վերին ավազանի պղնձի հանքերն էին, որտեղ արդյունահանվել և ձուլվել է մեծ քանակությամբ այդպիսի մետաղ, ու որի զգալի մասն արտահանվել է: Ոսկու պաշարներ կային Սևանի ավազանում (որտեղ այժմ էլ արդյունահանվում է), Վանա լճի ավազանում, Ճորոխ գետի ավազանում, իսկ արծաթ արդյունահանվում էր Հայաստանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Գյումուշխանա հանքավայրում:

Ինչպես նշում է Թ. Խ. Հակոբյանը, «Հայաստանի պատմական աշխարհագրություն» գրքում (Ե., 1984 թ., էջ 51), ոսկու հանքավայրերից առավել նշանավորը Ճորոխ գետի ավազանում (Սպեր գավառում) գտնվող հանքավայրն էր, որին դեռ մ.թ.ա. Ալեքսանդր Մակեդոնացին (336–323 թթ.) տիրելու համար Մենոն զորավարի հրամանատարությամբ մի զորաբաժին է ուղարկում այնտեղ, սակայն տեղի բնակիչները ջարդում և հետ են շպրտում:

Դեռ հնուց Հայաստանում նշված մետաղների համեմատությամբ ավելի լայնորեն էր օգտագործվում երկաթը, որը հանվում և ձուլվում էր Աղձնիք և Տուրուբերան նահանգներում: Հատկապես հանրահայտ էր Աղձնիք և Վասպուրական նահանգների սահմանագլխին գտնվող «Երկաթահատ» հանքավայրը (Թ. Խ. Հակոբյան, նույն տեղում):

Ի դեպ, այստեղ երկաթի հետ միասին հանվում էր նաև կապար: Հատկապես այժմյան Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն Հայկական լեռնաշխարհի այս փոքր տարածքում եղել են մետաղի հարյուրավոր հին «ձուլարաններ»:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվածներից առավել նշանավորը Մեծամորի հազարամյակների պատմություն ունեցող մետաղաձուլարանն է (Մեծամոր լճի մոտ): Այստեղ, ինչպես արդեն ասվել է, ոչ միայն հայտնաբերվել են ձուլման վառարանի, մետաղաձուլական խարամի մնացորդներ, այլև պահպանված է մոտակա ժայռի վրա քանդակված մետաղաձուլարանի տեխնոլոգիական սխեման:

Մետաղի հանույթի, ձուլման շատ հին պատմություն ունեցող հետքեր, հավաստի փաստեր են հայտնաբերված նաև Զանգեզուրի, Արցախի, Սևանա լճի ավազանի, Հյուսիսային Հայաստանի տարբեր վայրերում:

Պատմական Հայաստանը հայտնի է եղել նաև կերակրի աղի (քարաղի) արդյունագործությամբ: Առավել հանրահայտը Նախիջևանի, Կաղզվանի ու Կողբի հանքավայրերն են, որոնք այժմ էլ նշանավոր են, և որտեղից բարձրորակ աղ էր հանվում ու վաճառքի հանվում ոչ միայն Հայաստանի տարբեր վայրերում, այլև արտահանվում էր:

Ի դեպ, Կողբի աղի հանքերում հայտնաբերված քարե գործիքները ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում աղահանքերը շահագործվել են դեռևս քարի դարաշրջանից սկսած (Թ. Խ. Հակոբյան, նշված գիրքը, էջ 50):

Հայաստանում, որպես քարաշատ երկրի, անհիշելի ժամանակներից զարգացել է նաև քարագործությունը: Քարի հանույթը, մշակումը, օգտագործման ձևերը Հայաստանում իրենց կատարելությանն էին հասել դեռևս մեր թվարկությունից առաջ: Հայ ժողովուրդը քարն օգտագործել է իր կյանքի հնարավոր բոլոր բնագավառներում: Մինչև մեր թվագրության սկիզբները Հայաստանում բնակավայրերի, ամրոցների, պարիսպների կառուցման համար օգտագործվում էին բազալտաքարը, որի հանույթը և մշակումը մեծ դժվարությունների հետ էր կապված: Այնուհետև դրան զուգահեռ, իսկ հետագայում ավելի մեծ չափերով սկսել են հանել, մշակել և օգտագործել տուֆաքարերը, որոնց մշակումն ու կիրառումը ավելի դյուրին է: Բազալտ և տուֆ արդյունահանվել, մշակվել և օգտագործվել է Հայաստանի բոլոր նահանգներում: Պատկերացնելու համար թե քարի հանույթը դեռ հազարամյակներ առաջ ինչ չափեր ուներ Հայաստանում, նշենք, որ բնակավայրերի մեծ մասը, այդ թվում ժամանակին 100 հազ. բնակիչ ունեցող մայրաքաղաք Անին ամբողջապես կառուցված է եղել տուֆից: Այս քարանյութից է կառուցված նաև պատմական Հայաստանում և հազարամյակների խորքերից մեզ

հասած կանգուն, կիսականգուն եկեղեցական շինությունների, բերդերի, պարիսպների, հուշարձանների մեծ մասը:

Քարի, հատկապես տուֆի հանույթից, մշակումից ու որպես որմնանյութ օգտագործումից բացի հայ քարագործ վարպետները դեռ շատ հնուց յուրացրել էին քար սղոցելու, դրանից երեսապատման սալիկներ, ծածկանյութեր արտադրելու արհեստը: Հայկական հնագույն բոլոր եկեղեցիները ծածկված են քարից արտադրված և մեծ վարպետությամբ տեղադրված սալիկներով (կղմինդրով):

Տարբեր տեսակի մետաղների, քարի, կավի, գյուղատնտեսական հումքի բազայի վրա դեռ հնուց Հայաստանում զարգացել են արհեստագործության մի շարք ճյուղեր, որոնք հետագայում ավելի զարգացել, ընդլայնվել ու վեր են ածվել արտադրության ճյուղերի: Այդ տեսակետից հատկապես կարևոր տեղ էր զբաղեցնում մետաղագործությունն ու սրա վրա հիմնված՝ զինագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը: Քարաշատ այս երկրում, ինչպես նշվել է, հնուց զարգացել է քարի մշակման գործը, քարտաշությունը, որմնադրությունը: Սրանց հետ սերտորեն կապված էր ծեփագործությունը, ներկարարությունը, հյուսնությունը:

Առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում կավագործությունը, կավից ջրատար խողովակների, կղմինդրի, կարասների ու կենցաղային բազմատեսակ ամանեղենի արտադրությունը:

Զարգացած էր նաև կաշվի, մորթու վերամշակման, բամբակի, մետաքսի, բրդի հումքի վրա ջուլհակագործության գործը:

Հայաստանը նաև խմիչքների արտադրության հայրենիք է: Փաստերը ցույց են տալիս, որ դեռ անհիշելի ժամանակներից հայերը սկսել են արտադրել գարեջուր: Իսկ խաղողագործական շրջաններում արմատավորված էր գինու արտադրությունը: Հայաստանի այն շրջաններում, որտեղ զարգացած էր քնջութի, գանգրավուշի (կտավատ) աճեցումը, գործում էին բազմաթիվ ձիթհանքեր, և արտադրվում էին քնջութի և կտավատի ձեթ:

Գյուղատնտեսության ճյուղերից զարգացած էր խաղողագործությունը, պտղաբուծությունը (հատկապես դեղձի, ծիրանի, կեռասի, սալորի, բալի, տանձի, խնձորի, նռան, սերկևիլի աճեցումը), բանջարաբուծությունը, բամբակի, կտավատի, քնջութի, կանեփի աճեցումը:

Ամենուրեք պահում, աճեցնում էին ոչխար, այծ, կով, թռչուններ, ձի, եզ, գոմեշ, ջորի, էշ: Վերջիններս խոշոր դեր էին խաղում որպես տրանսպորտի միջոց և քաշող ուժ գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար:

Հայաստանում շատ հնուց առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում և հռչակված էր ձիաբուծությունը:

Ձիերը պատմական Հայաստանի արտաքին առևտրի համար կարևոր տարրերից էին: Հայ և օտար պատմագիրները գովեստով էին խոսում Հայաստանի ձիերի, նրանց գեղեցկության և արագավազության մասին:

Հատկապես փառաբանված էին Արցախի ձիերը: Այս առումով հանրահայտ էր նաև Սյունիքը:

Պատմական Հայաստանում զարգացած էին նաև շերամապահությունն ու մեղվաբուծությունը:

Շերամապահությունն առավելապես տարածված էր Արցախում, Սյունիքում, Արարատյան դաշտում, Վանի շրջակայքում, այսինքն՝ այն վայրերում, որոնք նպաստավոր պայմաններ ունեն թթենու այգիների աճեցման համար (թթենու տերևը շերամի կերի բազան է): Ի դեպ, արտադրվող շերամի բոժոժը բավարարում էր տեղի մետաքսագործության պահանջը: Ըստ որում, Հայաստանից արտահանվում էր ոչ միայն մետաքսի գործվածք, այլև բոժոժ:

Լեռնային բոլոր շրջաններում զարգացած էր մեղվաբուծությունը: Սակայն, Հայաստանի տնտեսության զարգացման բնագավառում արագ փոփոխություններ են տեղի ունեցել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելուց հետո ու հատկապես 19–րդ դարի վերջերից, երբ որ Հայաստանում սկսվեց կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը ու այստեղ հոսել ֆրանսիական, ռուսական և եվրոպական այլ երկրների կապիտալը: Հայաստանի տնտեսական զարգացման գործում այդ ժամանակաշրջաններում խոշոր դեր են խաղացել Թբիլիսի–Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի–Կարս) (1899 թ.) և Ալեքսանդրապոլ–Երևան (1902 թ.) երկաթուղիների կառուցումը:

Անդրկովկասում ցարական Ռուսաստանի տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրը Բաքվի նավթի, Ճիաթուրայի մանգանի, Ալավերդու և Զանգեզուրի պղնձի հանքավայրերի, բնական մյուս հարստությունների օգտագործումն էր: Անդրկովկասի հարստությունները իրենց վրա գրավեցին նաև եվրոպական կապիտալի ուշադրությունը:

Արտասահմանյան և ռուսական կապիտալի ներհոսքը արագ խթանեց Հայաստանում խոշոր արդյունաբերության ստեղծմանը, որը հիմնականում ներկայացված էր պղնձի, գինու–կոնյակի արտադրության ճյուղերով: Ըստ որում, պղնձի արդյունաբերության մեջ տիրապետում էր ֆրանսիական կապիտալը, իսկ գինու–կոնյակի արտադրության մեջ՝ ռուսականը:

Հայաստանի պղնձահանքերի հարստությունները գիշատչորեն շահագործող արտասահմանյան ամենախոշոր ֆիրման 1897 թ. Փարիզում կազմակերպված «Կովկասյան արդյունաբերական, մետալուրգիական» ընկերությունն էր, որը 1900 թ. ձեռնամուխ եղավ Հայաստանի պղնձի ձուլմանը:

1901 թ. այդ ընկերության Հայաստանում գտնվող պղնձաձուլական գործարանները տվել են 59769 փութ պղինձ, որը կազմում էր այդ թվականին Հայաստանում ձուլված պղնձի ամբողջ քանակի 50.8%–ը:

1900–1913 թթ. արտասահմանյան կապիտալը Հայաստանի պղնձի արդյունաբերության տնօրենն էր: Այդ ժամանակաընթացքում այստեղ ֆրանսիական կոնցեսիոներների կողմից ձուլվել է 1742813 փութ պղինձ:

Ֆրանսիական կապիտալիստները Հայաստանի լեռնահանքային հարստությունների օգտագործման միջոցով ստացել են 12,5 մլն ֆրանկ շահույթ:

1905 թ. Հայաստանում արտադրվել է 145347 փութ պղինձ, որը կազմում էր այդ նույն թվականին Ռուսաստանում ձուլված պղնձի 28%–ը:

Նախախորհրդային Հայաստանում ամենից շատ պղինձ արտադրվել է 1911 թ.՝ 383634 փութ, որը կազմել է այդ նույն թվականին Ռուսաստանում արտադրված պղնձի 18%:

Հայաստանում արտադրված համարյա ամբողջ պղինձն արտահանվում էր (տեղում դրա օգտագործման համար համապատասխան արտադրաճյուղեր չկային): Հայկական պղինձը գերազանցապես սպառվում էր Ռուսաստանում: Եթե Ալավերդիում և նրա շրջակայքում գտնվող պղնձաձուլական գործարանները մոտ էին երկաթուղուն, ու դրանց արտադրանքն արտաքին շուկա տեղափոխելը կապված չէր մեծ դժվարությունների հետ, ապա Զանգեզուրում արտադրված պղինձը տրանսպորտի հարմար միջոցի բացակայության պատճառով դժվարությամբ էր արտահավում, և դրա պատճառով նրա զարգացումն արգելակվում էր:

Զանգեզուրում արտադրված պղինձը սայլերով, շատ դեպքերում ուղտերով Գորիս և Շուշի քաղաքներով անցնող լեռնային դժվարին ճանապարհներով տեղափոխվում էր Թբիլիսի–Բաքու երկաթուղու Եվլախ կայարանը, այստեղից էլ ուղարկվում Ռուսաստան: Ֆրանսիական վերը նշված ընկերությունը Հայաստանի պղնձահանքերի գիշատիչ շահագործման հետ միասին զբաղվում էր նաև կոլչեդանի արտադրությամբ: Վերջինս արտահանվում էր Բաքու՝ Նոբելի նավթային արդյունաբերության, ինչպես նաև Հյուսիսային Կովկաս՝ լեռնային և քիմիական արդյունաբերության գործարանների համար:

Նախախորհրդային Հայաստանում արդյունաբերության համեմատաբար զարգացած մյուս ճյուղը ***գինու–կոնյակի արտադրությունն էր:***

Դեռևս մինչև խոշոր ու կատարելագործված գործարանների երևան գալը Հայաստանում հնուց առկա էր գինու–օղու տնայնագործական արտադրությունը: Գինու, օղու և սպիրտի կատարելագործված առաջին գործարանը հիմնել է Ն. Թաիրովը (1887 թ.), սակայն Հայաստանում խոշոր

գործարանային տիպի գինու–կոնյակի–օղու արտադրությունը հիմնականում կապված է ռուս կապիտալիստ Շուստովի անվան հետ: Նա 1899 թ. գնելով Թաիրովի գործարանը, կարճ ժամանակում այն ընդարձակում է մի քանի անգամ: Իսկ 1907 թ. նա Երևանում կառուցում է կոնյակի նոր, խոշոր, ինչպես նաև օղեզտիչ գործարան:

Այդ ժամանակ Հայաստանի կոնյակի, սպիրտի և գինու արտադրությունը համարյա ամբողջապես կենտրոնացված էր Շուստովի ձեռքին:

1895 թ. Հայաստանում արտադրվել է 588200, իսկ 1900 թ.՝ 1180114 դույլ գինի:

1913 թ. միայն Երևանի նահանգում արտադրվել է 3290,3 հազ. դույլ գինի, 16606,2 հազ. աստիճան սպիրտ և 7248,6 հազ. աստիճան կոնյակ:

Հայաստանում արտադրվող գինին, կոնյակը, օղին և սպիրտը արտահանվում էին Ռուսաստան և եվրոպական երկրներ: Սննդի արդյունաբերության ճյուղերից, մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում նշանակալից դեր էր խաղում նաև ***պանրի արտադրությունը:*** Հատկապես հանրահայտ էր Լոռիում արտադրվող պանիրը: 1907–1913 թթ. Լոռիում կային պանրի ու յուղի արտադրության երկու տասնյակից ավելի գործարաններ, որտեղ արտադրվում էր տարեկան մինչև 30 հազ. փութ պանիր: Իսկ առհասարակ 1913 թ. Հայաստանում կար պանրի ու յուղի շուրջ 60 գործարան, որոնք տարեկան տալիս էին 80–85 հազ. փութ պանիր և 20–25 հազ. փութ յուղ: Խոշոր առևտրականները Լոռիում և Հայաստանի այլ շրջաններում կազմակերպել էին իրենց գնման կետերը, որտեղից հայկական պանրի արտադրանքի շուրջ 80%–ը արտահանվում էր Մոսկվա, Պետերբուրգ, Ռոստով, Օդեսա, Ռուսաստանի շատ այլ քաղաքներ և Լեհաստան:

Թեթև արդյունաբերության ճյուղերից հատկապես զարգացած էր ***գորգագործությունը:***

Դեռ շատ հնուց բարձրորակ գորգերի արտադրությամբ առավել հայտնի էին Զանգեզուրը, Արցախը, Նոր Բայազետը (այժմ Գավառ), Երևանի նահանգը, Նախիջևանը:

Միայն Զանգեզուրի գավառը տարեկան տալիս էր (19–րդ դ. վերջերին և 20–րդ դ. սկզբներին) ավելի քան 3000 գորգ:

Երևանի նահանգում տարեկան արտադրվում էր ավելի քան 300 հազ., Նոր Բայազետում՝ 17 հազ. ռուբլու գորգ:

Ըստ որում, արտադրված գորգերի մեծ մասը Շուշիի, Թբիլիսիի ու Ելիզավետպոլի (այժմ՝ Գյանջա) վաճառականները գնում էին և տեղափոխում ու վերավաճառում Անդրկովկասի, Ռուսաստանի, ինչպես նաև եվրոպական երկրների տարբեր քաղաքներում: Հատկապես մեծ համբավ ունեին Նա-

խիջևանի նուրբ գորգերը, որոնք հիմնականում արտադրվում էին արտասահման արտահանելու համար: Միայն Շուշի քաղաքի վաճառականները տարեկան ավելի քան 5000 ռուբլու հայկական գորգ էին տեղափոխում Ֆրանսիայի Մարսել քաղաք և այնտեղ վաճառում:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում անկասկած տեղի են ունեցել առաջընթացի զգալի փոփոխություններ:

Սակայն, նա մինչև 1920–ական թթ. սկիզբները, այնուհանդերձ, մնացել էր որպես ցարական Ռուսաստանի ծայրամասային, հիմնականում հումքային բազան: Հայաստանի տնտեսության վերը նշված ճյուղերը համարյա լրիվ քայքայվել էին Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմների տարիներին, լրիվ անկման էր հասել գյուղատնտեսությունը:

Հանրապետության տնտեսության զարգացման, նրա ճյուղային կառուցվածքում արմատական խոշոր փոփոխություններ են կատարվել 1920–ական թթ. սկսած, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո:

Ինչպես նախկին Խորհրդային Միության կազմի մեջ եղած մյուս 14 հանրապետությունների, այնպես էլ Հայաստանի տնտեսությունը շուրջ 70 տարի հանդիսացել է ԽՍՀՄ միասնական տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ օղակը: Այն զարգանում էր նախօրոք կազմված միասնական միութենական պլանի պահանջներին համապատասխան: Տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման համար հաշվի էին առնվում ոչ միայն տեղի՝ Հայաստանի, այլև առաջին հերթին Միության պահանջները (շատ դեպքերում հաշվի չառնելով հումքային, ջրային ռեսուրսների, էկոլոգիական պայմանների առանձնահատկությունները):

Այսպիսով՝ տեղի ու հիմնականում ԽՍՀՄ մյուս հանրապետություններից ներմուծվող հումքատեսակների բազայի վրա ստեղծվել էր ծանր արդյունաբերության զարգացած շատ ճյուղեր՝ էլեկտրաէներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, գունավոր մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, բազմաճյուղ մեքենաշինություն, շինանյութերի ու փայտամշակման արդյունաբերություն: Այդ տարիներին բարձր զարգացման են հասել նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը: Հանրապետության արդյունաբերական արտադրանքն արտահանվում էր աշխարհի 80 երկրներ:

Հանրապետության ժողովրդական տնտեսության համակարգում պատկառելի տեղ զբաղեցրին գյուղատնտեսությունն ու տրանսպորտը իրենց ենթաճյուղերով, շինարարական ինդուստրիան, առևտուրն ու նյութատեխնիկական մատակարարումը:

1990–ական թթ. սկզբներից, կապված ԽՍՀՄ փլուզման և հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր պայմանների հետ, Հայաստանի Հանրապետության (ինչպես նաև նախկին ԽՍՀՄ կազմի մեջ եղած բոլոր հանրապետությունների) տնտեսության բոլոր ճյուղերն անկում ապրեցին, գործազրկությունը հսկայական չափերի հասավ:

Անկախություն ստանալուց հետո, կապված արդյունաբերական ձեռնարկությունների ու հողի հապճեպ մասնավորեցման հետ, Հայաստանի Հանրապետության տնտեսությունը մեծապես անկում ապրեց, կազմալուծվեցին արդյունաբերական շատ ձեռնարկություններ, արտաքին առևտրաշրջանառության նախկին ակտիվ հաշվեկշիռը դարձավ պասիվ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ արդեն 1999–2003 թթ. հանրապետության տնտեսության մեջ սկսվեց աճի ու կայուն զարգացման միտում: Այդ տարիներին հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը կազմում էր 9–12 %: Իսկ դա նշանակում է, որ մոտակա տարիներին զգալիորեն կակտիվանա նաև արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշիռը:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

4.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության նյութական արտադրության համակարգում թողարկվող արտադրանքի ծավալի ու նշանակության տեսակետից առաջին տեղը պատկանում է արդյունաբերությանը: Նրա տեսակարար կշիռը հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերում թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում 1970–1990 թթ. կազմել է 56–68 տոկոս:

Դա ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը դարձել է զարգացած ինդուստրիալ երկիր: Շնորհիվ արդյունաբերության զարգացման բարձր տեմպի, վերջին յոթանասուն տարիների ընթացքում արմատապես փոխվել է հանրապետության սոցիալ–տնտեսական ամբողջ դեմքը: Այս ճյուղի զարգացումը հնարավորություն է տվել ինդուստրացման ենթարկել նաև հանրապետության գյուղատնտեսական աշխատանքները, շինարարության ու մյուս բնագավառները:

Արդյունաբերության զարգացման շնորհիվ, հատկապես 1960–ական թվականներից սկսած, լուծվել էր հանրապետության աշխատանքային ռեսուրսների լրիվ ու նպատակային օգտագործման կենսական հիմնահարցը:

1988 թ. տվյալներով՝ հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ աշխատողների թիվը կազմել է 1430,5 հազ. մարդ, այդ թվում բանվորների ու ծառայողների թիվը կազմել է 1363,2 հազ. մարդ: Նույն տարվա տվյալներով արդյունաբերության մեջ աշխատողների թվաքանակը կազմել է 459,9 հազ. մարդ (1970 թ. եղել է 272,8 հազ.մարդ):

Ինչպես նշվել է, հանրապետությունը այդ տարիներին դարձել է բարձր զարգացած ինդուստրիալ հանրապետություն:

1988 թ. տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում գործում էր արդյունաբերական 713 խոշոր ձեռնարկություն:

Արդյունաբերության ճյուղերից ձեռնարկությունների թվով և դրանցում աշխատողների անձնակազմով առաջին տեղը զբաղեցնում էր մեքենաշինությունը, այնուհետև թեթև, սննդի արդյունաբերությունը:

Հանրապետության արդյունաբերության շատ արտադրատեսակներ լայն ճանաչում էին գտել ոչ միայն ԽՍՀՄ կազմի մեջ եղած բոլոր հանրապետություններում, այլև արտասահմանյան ավելի քան 80 երկրներում: Հայկական ճշգրիտ մետաղահատ հաստոցները, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, գորգերը, կոնյակները, պանրի, պահածոների տեսակները, ինչպես նաև շատ այլ արտադրատեսակներ միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում բազմիցս արժանացել են ոսկե մեդալների ու դիպլոմների:

Ցավոք, 1988 թ–ից սկսած Հայաստանի արդյունաբերության ռիթմիկ աշխատանքը խախտվել, իսկ 1991 թ–ից, այսպես կոչված անկախ տնտեսական զարգացման ուղին բռնելուց հետո այն կարելի է ասել կազմալուծվել է:

Այդ գործում բացասական խոշոր դեր են խաղացել Ադրբեջանի, այնուհետև Վրաստանի տարածքով ձգվող տրանսպորտային բոլոր ուղիների շրջափակումը, հայ ժողովրդի դեմ թշնամաբար տրամադրված Ադրբեջանի կողմից Հայաստանի հասցեով ուղարկված բոլոր բեռների թալանումը, որը շարունակվում էր մինչև 1994 թ.:

Հայաստանի տնտեսության վիճակը առավել ծանրացել է Վրաստանում տիրող քաղաքական իրավիճակի սրման, Աբխազիայի տարածքում շարունակվող պատերազմի հետ կապված, որի հետևանքով դադարեցվել է Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի–Երևան երկաթուղու աշխատանքը:

Հանրապետության տնտեսության, այդ թվում առաջին հերթին արդյունաբերության կազմալուծման գործում խոշոր դեր խաղաց նաև ձեռնարկությունների շուտափույթ սեփականաշնորհման քաղաքականությունը, որը այժմ էլ շարունակվում է:

Խախտվել է հումքի ռիթմիկ ներմուծման նախկին համակարգը, ձեռնարկությունների մեծ մասը արդեն 1992 թ. չէին գործում: Իսկ 1992 թ. վերջին էներգետիկ ճգնաժամի, գազի, մազութի բացակայության, էլեկտրաէներգիայի խիստ անբավարար լինելու պատճառով, հանրապետությունում արտադրական բոլոր խոշոր ձեռնարկությունների մեծ մասը կանգնեցվել էին, բացառությամբ հացի գործարանների:

Ահա այդ ծանր վիճակում էր Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը 1991–1992 թթ.:

Արդյունաբերության անկման պրոցեսը շարունակվում էր նաև հետագա տարիներին: Իսկ 1995 թ–ից նկատվել է կայունացման որոշ միտում, սակայն հանրապետության երբեմնի հզոր արդյունաբերության 1980–ական թվականների վերջի մակարդակին հասնելու սահմանը դեռևս շատ հեռու է: Միայն պաշտոնական գրանցված գործազուրկների թիվը 2003 թ. կազմել է՝ 124,8 հազար: Արդյունաբերության վերակենդանացման և աշխատատեղերի ստեղծման համար պահանջվում է հսկայական կապիտալ ներդրում: Այդպիսին հատկապես խիստ անհրաժեշտ է սեփական ռեսուրսների օգտագործման ու վառելիքաէներգետիկ համակարգի կարգավորման համար:

1998 թ. ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 261167,6 մլն դրամ, իսկ 1999 թ.՝ 283484,8 մլն դրամ:

ՀՀ տնտեսության, այդ թվում հատկապես արդյունաբերության նկատելի աճ սկսվեց 2000–2003 թթ.: Մասնավորապես արդյունաբերական արտադրանքը 2000 թ. կազմել է՝ 300549,7, իսկ 2003 թ.՝ 423717,4 մլն դրամ:

Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Երևան քաղաքն ու մարզերը 2003 թ. տվյալներով ունեն հետևյալ պատկերը (մլն դրամ)

Աղյուսակ 15

Ընդամենը ՀՀ	423717,4
Երևան քաղաք	209100,5
Արագածոտնի	7777,7
Արարատի	36520,9
Արմավիրի	20815,8
Գեղարքունիքի	13255,2
Լոռու	18751,3
Կոտայքի	57309,8
Շիրակի	11630,6
Սյունիքի	41486,0
Վայոց ձորի	3493,4
Տավուշի	3576,2

Տնտեսական առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև Երևան քաղաքի ու հանրապետության մարզերի տեսակարար կշիռները արդյունաբերական արտադրանքի ընդհանուր կառուցվածքում (%–ով):

Աղյուսակ 16

Մարզերը	Տարիները				
	1998	1999	2000	2001	2002
Ընդամենը Հայաստանի Հանրապետությունում	100	100	100	100	100
Երևան քաղաք	43,5	46,1	46,2	49,3	46,8
Արագածոտնի	1,6	1,7	1,5	1,0	1,5
Արարատի	5,0	6,2	5,8	5,1	9,2
Արմավիրի	9,3	11,0	8,5	7,1	7,1
Գեղարքունիքի	3,1	2,8	2,9	1,7	2,4
Լոռու	5,1	4,2	5,7	5,0	4,9
Կոտայքի	20,7	16,5	16,6	17,8	14,4
Շիրակի	3,9	3,8	3,5	3,1	3,2
Սյունիքի	5,5	5,5	7,0	8,1	8,6
Վայոց ձորի	0,9	0,8	1,0	0,9	0,9
Տավուշի	1,4	1,4	1,3	0,9	1,0

2003 թ. տվյալներով հանրապետությունում կա մեծ ու փոքր 2053 արդյունաբերական ձեռնարկություն, որոնց բացարձակ գերակշռող մասը սեփականաշնորհված է:

Ինչպես երևում է բերված աղյուսակից, ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալում շարունակում է վճռական դեր խաղալ Երևան քաղաքը: Իսկ մարզերից կարևոր տեղ ունեն Կոտայքի, Արարատի, Սյունիքի, Արմավիրի մարզերը: Երբեմնի հզոր արդյունաբերություն ունեցող Շիրակն ու Լոռին դեռևս իրենց արժանի տեղը չեն վերականգնել:

ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական նշանակություն ունեցող վառելիքի պաշարներ դեռևս չեն հայտնաբերված: Շարունակվում են հետազոտական աշխատանքներն այդ բնագավառում, քանի որ, երկրաբանական օրինաչափություններից ելնելով, ենթադրվում է, որ այնուհանդերձ, այստեղ պետք է լինեն հանքային վառելիքի պաշարներ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են աննշան քանակությամբ ցածրորակ ածխի (գորշ) պաշարներ, որոնք սակայն արդյունաբերական կարևոր նշանակություն չեն կարող ունենալ:

Քարածխի այստեղ հայտնաբերված հանքավայրերից համեմատաբար նշանակալից են՝ Ջերմանիսի (Արարատի տարածաշրջանում), Ջաջուռի (Ախուրյանի տարածաշրջանում), Դիլիջանի և Իջևանի հանքավայրերը: Որակական հատկանիշների տեսակետից համեմատաբար բարձր հատկանիշներ ունեն վերջին երկու հանքավայրերի պաշարները: Իջևանի հանքավայրում փորձնական, տեղական նշանակության արդյունահանում է կատարվել վերջին մի քանի տարում: Այդպիսի արդյունահանում է կատարվել նաև Ջաջուռի գորշ ածխի հանքավայրում և օգտագործվել է շրջակա բնակավայրերում որպես վառելիք:

Մասնավորապես հանրապետության էներգետիկական ճգնաժամի առավել ժամանակաշրջանում՝ 1995 թ., Ջաջուռի հանքավայրում արդյունահանվել է 25 հազ. տոննա գորշ ածուխ, որը որպես վառելիք վաճառվել է անհատ քաղաքացիներին, իսկ մի մասն էլ բաշխվել մանկապարտեզներին ու դպրոցներին:

Այրվող թերթաքարի մի քանի երևակումներ է հայտնաբերվել Երևանի շրջակայքում (Ավան, Ջորաղբյուր, Արզնի), Դիլիջանում, Շիրակում և այլուր, սակայն դրանց պաշարները տնտեսական հետաքրքրություն չեն կարող ներկայացնել:

Հանրապետության տարածքում հայտնաբերված վառելիքի պաշարներից համեմատաբար հետաքրքրություն է ներկայացնում տորֆը: Ընդհանուր առմամբ, այստեղ երկրաբանական ծառայության կողմից գրանցված է տորֆի 60 հանքավայր, որոնցից հետախուզված է 16–ը:

Տորֆի համեմատաբար նշանակալից հանքավայրեր կան Լոռու մարզում (Տաշիրի, Ստեփանավանի, Գուգարքի տարածաշրջաններում), Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիսի տարածաշրջանում: Վերջինս էլ այն միակ հանքավայրն է, որտեղ զգալի քանակությամբ տորֆ արդյունահանվում և օգտագործվում է հիմնականում որպես պարարտանյութ, բժշկական նպատակներով ու այլ բնագավառներում: Այն օգտագործվում է նաև որպես տեղական նշանակություն ունեցող վառելանյութ: Ընդհանուր առմամբ հանրապետության տարածքում հայտնաբերված տորֆի պաշարները գնահատվում են ավելի քան 21 մլն մ^3:

Սակայն Հայաստանի Հանրապետության վառելիքի պահանջը դրանցով անհնար է բավարարել: Սկսած 1920–ական թվականների սկզբներից տարեցտարի աճող մեծ քանակությամբ նավթամթերք, քարածուխ, իսկ հետագայում նաև բնական այրվող գազ է ներմուծվել դրսից: Մասնավորապես, նավթ ներմուծվել էր Ադրբեջանից և Ռուսաստանից, քարածուխ՝ Ռուսաստանից և Ուկրաինայից, իսկ բնական գազ սկզբում Ադրբեջանից ու Իրանից, իսկ հետո՝ Ռուսաստանից և Թուրքմենիայից: Այժմ նավթ, նավթամթերք և բնական գազ հիմնականում ներմուծվում է Ռուսաստանից (Հյուսիսային Կովկաս, Պովոլժիե):

Ներմուծվող քարածուխը նախկինում օգտագործվել է որպես վառելիք ձեռնարկություններում, ջեռուցման սիստեմներում, ինչպես նաև որպես հումք քիմիական արդյունաբերության մեջ:

Նավթամթերքները մեծ չափերով օգտագործվում են էներգետիկ տնտեսության մեջ (մազութը), տրանսպորտի ճյուղերում (բենզին և դիզելային վառելիք), մեքենաշինության տարբեր բնագավառներում (քսայուղեր):

Բնական գազը գերազանցապես օգտագործվում է էլեկտրաէներգետիկ տնտեսության մեջ և կենցաղում:

Նախատեսվում է մոտակա ժամանակաշրջանում բնական այրվող գազ ներմուծել նաև Իրանից: Արդեն սկսված է Իրան–Հայաստան գազամուղի կառուցումը:

Հանրապետությունը ներմուծում է նաև միջուկային վառելիք, որը բացառապես օգտագործվում է էլեկտրաէներգետիկ տնտեսության մեջ: Այն ներմուծվում է Ռուսաստանից:

Ներմուծվող վառելիքատեսակների (նավթի, գազի, միջուկային վառելիքի) և սեփական հիդրոէներգառեսուրսների բազայի վրա, խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է հզոր էլեկտրաէներգետիկ տնտեսություն: Այսպիսով՝ հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսությունը բաղկացած է երկու ենթաճյուղերից:

1.Ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսություն: Սա հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսության վճռական դեր խաղացող ենթաճյուղն է, որը տալիս է արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի 80–85 տոկոսը (չնայած վերջին տարիներին որոշ չափով բարձրացել է հիդրոէներգետիկ տնտեսության տեսակարար կշիռը):

Ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսությունը այստեղ ձևավորվել է նախկին ԽՍՀՄ տարբեր շրջաններից ներմուծվող բնական այրվող գազի, նավթի–մազութի, քարածխի բազայի վրա: Մազութն ու գազը օգտագործվում է ջերմաէլեկտրակայաններում՝ էլեկտրաէներգիա արտադրելու համար: Իսկ քարածուխը օգտագործվում էր բնակելի շենքերը ջեռուցելու համար: Հետագայում քարածխի օգտագործումը այդ նպատակով դադարեցվեց, քանի որ այն էկոլոգիական առումով անարդյունավետ էր: Բացի էներգետիկ նպատակներով օգտագործելուց, ներմուծվող գազը, նավթը և քարածուխը կիրառվում են նաև քիմիական արդյունաբերության տարբեր բնագավառներում:

Ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսության մեջ օգտագործելու արդյունավետության տեսանկյունից մեծ առավելություն ունի ներմուծվող բնա-

կան գազը: Հանրապետությունը բնական գազ սկսեց ներմուծել 1960–ական թվականների սկզբներից Աղստաֆա–Իջևան–Սևան–Հրազդան–Երևան գազամուղով: Հետագայում այս մայր գազամուղը ճյուղավորվեց, և ամբողջ հանրապետության տարածքում ստեղծվեց գազամուղային ցանց, որով բոլոր բնակավայրերը ապահովվեցին այդ վառելիքով: Մեծ քանակությամբ բնական գազից բացի, որը սկզբում ներմուծվում էր Ադրբեջանից ու Իրանից, իսկ այնուհետև Ռուսաստանից, հանրապետությունը տարեկան ներմուծում էր նաև ավելի քան 1 մլն տոննա նավթամթերք, ինչպես նաև մեծ քանակությամբ քարածուխ: Նավթամթերքները սկզբում ներմուծվում էին Ադրբեջանից, իսկ այնուհետև՝ Ռուսաստանից, իսկ քարածուխը՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, քիչ քանակությամբ՝ Վրաստանից:

Սա այդ ռեսուրսների բազայի վրա հանրապետությունում ջերմաէլեկտրաէներգետիկ տնտեսություն ստեղծվեց 1960–ական թվականներից սկսած: Իսկ մինչ այդ հանրապետությունում ամբողջ էլեկտրաէներգիան արտադրում էր հիդրոէներգետիկ տնտեսությունը:

Հայաստանի Հանրապետությունում կառուցված առավել խոշոր ջերմաէլեկտրակայանը Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանն է՝ պշէկը, որի հզորությունը կազմում է շուրջ 1,1 մլն կվտ: Մյուս համեմատաբար խոշոր ջերմաէլեկտրակայանը Երևանի ջերմաէլեկտրակենտրոնն է՝ ջէկը, որի հզորությունը կազմում է 550 հազ. կվտ: Ջերմաէլեկտրակենտրոն՝ ջէկ է կառուցվել նաև Վանաձորում, որի նախագծային հզորությունը կազմում է 45 հազ. կվտ:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսության վերելքի բնագավառում խոշոր դեր խաղաց Հայկական ատոմային էլեկտրակայանի կառուցումը, որի հզորությունը կազմում է 815 հազ. կվտ: Այն կառուցվել է Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր) քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա՝ Մեծամոր քաղաքում: Ատոմային էլեկտրակայանի կառուցումը Հայաստանում հիմնավորված է այն առումով, որ այստեղ ջերմաէներգետիկ հանքային ռեսուրսներ դեռևս չկան, իսկ հիդրոէներգոռեսուրսները չէին կարող ապահովել հանրապետության բուռն թափով աճող պահանջները էլեկտրաէներգիայի բնագավառում: Հետևաբար առանց էլեկտրաէներգիայի այդ տարիներին արագ թափով վերելք ապրող տնտեսության և սոցիալական կյանքի զարգացման մասին խոսք լինել չէր կարող: Սա թե ինչու խիստ անհրաժեշտ էր նաև ատոմային էլեկտրակայանի կառուցումը:

2. Հիդրոէներգետիկ (ջրաէներգետիկ) տնտեսությունը, ինչպես ասվել է, մինչև 1960–ական թվականները հանրապետության էլեկտրաէներգիա արտադրող միակ բնագավառն էր:

Մինչև 1920–ական թվականների սկզբները Հայաստանում գործում էին մանր–մունր մի քանի հիդրոէլեկտրակայաններ: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կառուցված առաջին հիդրոէլեկտրակայանը այժմյան մանկական երկաթուղու ձորում, Հրազդան գետի վրա կառուցված Երևանի հիդրոէլեկտրակայանն էր (Երևանի հէկ–1), այն շահագործման է հանձնվել 1926 թ.: Իսկ 1932 թ. շահագործման է հանձնվել Դեբեդ գետի վտակ Ձորագետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանը (Ձորահէկը):

Սակայն հանրապետության համար առավել խոշոր նշանակություն ունեցան Սևան–Հրազդան ու Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգերի (կասկադների) կառուցումը:

Մասնավորապես, Հրազդան գետի վրա կառուցվեց 6 հիդրոէլեկտրակայաններից բաղկացած կասկադ: Այդ հիդրոէլեկտրակայանների կասկադի առաջին աստիճանը Սևանի լճային կայանն է: Այն կառուցված է Հրազդան գետը Սևանից սկիզբ առնելու մասում, նրա 7–կիլոմետրանոց թունելային ուղու սկզբում, որտեղ Սևանի մակարդակը իջեցնելու պատճառով գետի համար փորվել է արհեստական՝ ստորերկրյա հուն: Սա թե ինչու այդ հէկը երբեմն անվանում են նաև լճային հէկ, դրա հզորությունը ավելի քան 34 հազ. կվտ է: Հրազդան գետի վրա կառուցված մյուս հիդրոէլեկտրակայաններն են հերթականությամբ՝ Աթարբեկյանի (Հրազդան քաղաքի մոտ)՝ 82 հազ. կվտ, Գյումուշի (Լուսակերտի ձորում)՝ 224 հազ. կվտ, Արզնու՝ 70 հազ. կվտ, Քանաքեռի՝ 102 հազ. կվտ ու Երևանի՝ 44 հազ. կվտ, վերջինս կառուցվել է Երևանի հէկ– 1–ի մոտ, իսկ Երևանի հէկ–1–ը այժմ չի գործում:

Սևան–Հրազդան կասկադի 6 հիդրոէլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմում է 550 հազ. կվտ: Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների առանձնահատկությունը այն է (բացառությամբ Սևանի հէկի), որ դրանք անմիջապես գետի վրա չեն կառուցված, այլ կառուցված են դերիվացիոն եղանակով (այսինքն՝ գետից սկիզբ առնող ջրանցքով, որը անցնում է գետին զուգահեռ, ջուրը հասցվում է համապատասխան բարձունք, որտեղից էլ այն խողովակաշարով իջեցվում է նորից գետահովիտ՝ շարժման մեջ դնելով հիդրոէլեկտրակայանի շենքի մեջ տեղադրված հիդրոտուրբինները):

Հայաստանի Հանրապետությունում կառուցված հիդրոէլեկտրակայանների մյուս յուրատիպ համակարգը Որոտանի կասկադն է: Այն ընդգրկում է Տաթևի՝ 157 հազ. կվտ, Շամբի՝ 171 հազ. կվտ ու Սպանդարյանի՝ 176 հազ. կվտ հէկերը:

Փոքր հիդրոկայան է գործում նաև Շիրակի ջրանցքի վրա: Մինչև 1970–ական թվականները, երբ արդեն գործողության մեջ էին դրվել վերը նշված

ջերմաէլեկտրակայաններն ու հիդրոէլեկտրակայանները, անհեռատես ձևով դադարացվել էին հանրապետության տարբեր վայրերում կառուցված բազմաթիվ մանր հէկեր: Վերջին տասնամյակում, երբ հանրապետությունը անկախություն ձեռք բերելուց հետո, ինչպես նաև Ադրբեջանի կողմից շրջափակվելու հետ կապված, հայտնվել էր էներգետիկ ճգնաժամի մեջ, աշխատանքներ տարվեցին այդ փոքր հիդրոէլեկտրակայանները նորից վերագործարկելու համար: Այդպիսիք գործարկվեցին Ջերմուկում, Արմավիրի մոտ և այլ վայրերում: Այժմ ընդհանուր առմամբ հանրապետությունում գործում են 30–ից ավելի մեծ ու փոքր հէկեր:

Փոքր հիդրոէլեկտրակայանների հետագա կառուցումը մեր լեռնային արագահոս գետերի վրա հանրապետության էներգետիկ տնտեսության զարգացման գլխավոր ուղիներից մեկն է:

Դեռևս խորհրդային իշխանության տարիներին հանրապետության բոլոր էլեկտրակայանները իրար հետ բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ գծերով միավորվել էին, ստեղծվել էր միասնական էներգոհամակարգ, որով կարգավորվում է էլեկտրաէներգիայի մատակարարումը հանրապետության բոլոր շրջաններին:

Այդ տարիներին Հայաստանի էներգահամակարգը միավորվել էր Անդրկովկասյան միասնական համակարգին: Նախկինում Հայաստանը որոշ քանակությամբ էլեկտրաէներգիա էր ստանում Անդրկովկասյան միասնական էներգացանցից: Հետագայում, երբ գործարկվեցին Հրազդանի պշէկը և Հայկական ատոմակայանը, Հայաստանն ինքն սկսեց էլեկտրաէներգիա մատակարարել Նախիջևանի Հանրապետությանը:

Հանրապետության էլեկտրաէներգետիկ տնտեսության զարգացման վերաբերյալ բերենք մի քանի փաստացի տվյալներ:

1919 թ. Հայաստանում գործող էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը կազմում էր 1,5 հազ. կվտ, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 1,7 մլն կվտ/ժ, 1940 թ.՝ համապատասխանաբար 113,1 հազ. կվտ և 395,3 մլն կվտ/ժ, 1970 թ.՝ 1706,9 հազ. կվտ և 6107 մլն կվտ/ժ, իսկ 1981 թ.՝ 3546 հազ. կվտ և 14322,9 մլն կվտ/ժ:

1988 թ. հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը հասել էր 15,3 մլրդ կվտ/ժ–ի: Սա Հայաստանի Հանրապետությունում երբևիցե արտադրված էլեկտրաէներգիայի ամենաբարձր ցուցանիշն է: Այդ տարիներին հանրապետության յուրաքանչյուր բնակչի հաշվով արտադրվում էր ավելի քան 4,5 հազ. կվտ/ժ էլեկտրաէներգիա և այս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը մեծ չափերով գերազանցում էր ոչ միայն հարևան Թուրքիային, այլև աշխարհի շատ այլ երկրների:

1988 թ., երբ սկսվում են ղարաբաղյան ազգային–ազատագրական շարժումները, և հանրապետությունը տնտեսական շրջափակման մեջ է դրվում Ադրբեջանի կողմից, դադարում կամ մինիմումի է հասնում վառելիքի ներմուծումը, կտրուկ անկում է ապրում նաև էլեկտրաէներգետիկ տնտեսությունը: Մինչև 1994 թ. հանրապետության ջերմաէլեկտրակայանները աշխատում էին իրենց հզորության 10–15%–ով, քանի որ նավթ ու գազ չէին ներմուծվում: Բացի դրանից, հայկական ատոմակայանը էկոլոգիական նկատառումներով կանգնեցվել էր: Հայաստանի Հանրապետությունը ընկնում է էներգետիկ խոր ճգնաժամի մեջ, բնակչությունը էլեկտրաէներգիա ստանում էր օրական 1–2 ժամ: Սիա այս ծանր տարիներին Սևանում, նրա մակարդակը բարձրացնելու համար խնայված ջուրը ստիպված բաց է թողնվում Հրազդանի կասկադը լրիվ հզորությամբ աշխատեցնելու համար: Այսպիսով՝ Սևանը նորից է փրկում հայ ժողովրդին, բայց իր մակարդակը անթույլատրելի չափով իջնելու գնով:

Միայն 1994 թ. մայիսից հետո, երբ սկսվում է հայ–ադրբեջանական ռազմական հակամարտության զինադադարը, վիճակը կամաց–կամաց շտկվում է: Վերականգնվում է Թուրքմենիայից գազի մատակարարումը, վերագործարկվում է հայկական ատոմային էլեկտրակայանի առաջին բլոկը: 1994 և 1996 թթ. տվյալներով հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 5,7 և 6,2 մլրդ կվտ/ժ:

Իսկ 1996 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 5,7 մլրդ կվտ/ժ: Այդ տարվա տվյալներով՝ հայկական ատոմային էլեկտրակայանը տվել է հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի 36,3, ջէկերը՝ 42,7, հէկերը՝ 21,0%:

Աղյուսակ 17

Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը 1995–2003թթ.

	Տարիները							
	1995	1996	1997	1998	1999	2001	2002	2003
էլեկտրաէներգիայի արտադրությունը մլն կվտ/ժ	5575,9	6229,0	6029,8	6191,0	5717,0	5745,0	5519,0	5500,6

Ինչպես վերը նշվել է 1988 թ. հանրապետությունում արտադրված 15,3 մլրդ կվտ/ժ փոխարեն վերջին 9–ը տարիներին այդ հույժ կարևոր արտադրանքի չափը տատանվել է 5,5–6,2 մլրդ կվտ/ժ սահմաններում: Արտադրության այս չափերը լրիվ բավարարում են հանրապետության պահանջները, քանի որ նախկին հզոր արդյունաբերությունը, որը էլեկտրաէներգիայի ամենախոշոր սպառողն էր, այժմ գոյություն չունի, եղածներն էլ գործում են ոչ լրիվ հզորությամբ:

Դեռ ավելին, հանրապետությունը նույնիսկ զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա է վաճառում Վրաստանին:

Այժմ հայկական էներգացանցը Մեղրու կիրճով միացած է Իրանի ցանցին և երկու երկրների միջև կնքված պայմանագրով անհրաժեշտ քանակությամբ էլեկտրաէներգիա կփոխանցվի այդ գծով:

Քանի որ հայ–ադրբեջանական հակամարտությունը դեռ շարունակվում է, և հայտնի չէ, թե երբ կվերանա Հայաստանի տնտեսական շրջափակումը Ադրբեջանի կողմից, ապա Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունի սեփական բավարար էներգետիկ բազայի ստեղծումը, մասնավորապես, անհրաժեշտ է.

ա) Հայկական ատոմային էլեկտրակայանը վերակառուցել տեխնիկայի ժամանակակից պահանջներին համապատասխան և լրիվ հզորությամբ շահագործման հանձնել.

բ) մեծացնել Երևանի ու Վանաձորի ջէկերի հզորությունը,

գ) շարունակել հանրապետության լեռնային գետերի վրա փոքր հէկերի կառուցումը,

դ) ինտենսիվ աշխատանքներ տանել հանրապետության տարածքում արևային էներգիայի, քամու ուժի, ընդերքի ջերմային էներգիայի օգտագործման բնագավառներում:

Մասնագետների հաշվարկներով, բացի այժմ գործող 30 հէկերից, հնարավոր է ՀՀ–ում կառուցել նս 217 փոքր հիդրոէլեկտրակայան, 257 հազ. կվտ ընդհանուր հզորությամբ: Դա զգալիորեն կթեթևացնի հանրապետության հոգսը այդ բնագավառում:

ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱՂԱՀՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Սա Հայաստանի արդյունաբերության թերևս ամենահին ենթաճյուղն է: Մետաղների հանույթը և ձուլումը Հայկական լեռնաշխարհում հազարամյակների պատմություն ունի: Դրա ապացույցները այս լեռնաշխարհի տարբեր վայրերում պահպանվող հանքահորերը, մետաղների արդյունահանման հանքավայրերի, մետաղաձուլական «կոմբինատների», ձուլարանների, մետաղաձուլական խարամի ու այլ հետքերի առկայությունն է: Այդ տեսակետից շատ մեծ հետաքրքրություն ներկայացնողը Մեծամորի հազարամյակների պատմություն ունեցող մետաղաձուլական «կոմբինատի» մնացորդների ու մոտակա ժայռի վրա նրա քանդակված նախագծի հայտնաբերումն է, որի մասին նշվել է:

Հայաստանը դեռ շատ հնուց առավել հայտնի է եղել գունավոր մետաղների հանույթի ու ձուլման բնագավառում:

Ինչպես արդեն ասվել է, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1928 թ.) այստեղի գունավոր մետաղների, հատկապես պղնձի պաշարները մեծ հետաքրքրություն են առաջացրել ռուսական, ֆրանսիական և արտասահմանյան այլ արդյունաբերողների համար:

Արդեն 19–րդ դարի վերջերին ու 20–րդ դարի սկզբներին Զանգեզուրի ու Հյուսիսային Հայաստանի պղնձաձուլությունը այն աստիճանի է զարգացել, որ Հայաստանը տալիս էր Ռուսաստանում ձուլվող պղնձի պատկառելի մասը: Մասնավորապես, ինչպես նշվել է, 1905 թ. Հայաստանում արտադրվել է 145347 փութ պղինձ, որը կազմում է այդ նույն թվականին Ռուսաստանում ձուլված պղնձի 28 տոկոսը, իսկ 1911 թ. այստեղ ձուլվել է 383634 փութ պղինձ: Լեռնահանքային արդյունաբերությունն ու գունավոր մետաղաձուլությունը Հայաստանում որակական, քանակական և կառուցվածքային բարձր զարգացում ունեցավ հատկապես խորհրդային իշխանության տարիներին: Գունավոր մետաղաձուլությունը այդ ժամանակաշրջանում դարձել է Հայաստանի Հանրապետության ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը, որի արտադրատեսակները կարևոր դեր էին խաղում ամբողջ Խորհրդային Միության համար:

Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերությունն ու գունավոր մետաղաձուլությունը ընդգրկում է ***պղնձի հումքի արդյունահանումը, հարստացումն ու ձուլումը, մոլիբդենի հումքի արդյունահանումը, հարստացումը, բազմամետաղների հումքի*** (կապարի, ցինկի և այլն) ***արդյունահանումը և հարստացումը, ոսկու արդյունահանումն ու կորզումը*** հարստացուցիչ ֆաբրիկայում: Մինչև 1990–ական թվականների սկզբները հանրապետությունում արտադրվում էր նաև մետաղային ալյումին: Սակայն այդ արտադրությունը դադարեցված է, բայց ներմուծվող պատրաստի ալյումինից արտադրվում է գլանվածք:

Պղնձաձուլություն: Մինչև 1990–ական թվականների սկզբները հանրապետության պղնձաձուլական խոշոր ձեռնարկությունը Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատն էր: Այստեղ ձուլվում էր Հյուսիսային Հայաս-

տանում՝ Ալավերդու և Շամլուղի հանքավայրերում արդյունահանվող պղնձի հումքը: Մինչև 1930–ական թվականները պղնձածուլական ձեռնարկություն էր գործում նաև Կապանում: Դրանից հետո նպատակահարմար համարվեց Կապանի շրջանի հանքավայրերում արդյունահանվող պղնձի հումքը Կապանի հարստացուցիչ ֆաբրիկայում հարստացնելուց հետո խտանյութը տեղափոխվել և ծուլել Ալավերդու կոմբինատում: 1990–ական թվականների սկզբներին, էկոլոգիական նկատառումներով, Ալավերդու խոշոր կոմբինատը, որը հարյուրամյակների պատմություն ունի (այն հիմնվել է 1770 թ.) ու լայնորեն ճանաչված էր ԽՍՀՄ–ում, փակվեց 1989 թ.: Ոչ մի առումով այդ քայլը հիմնավորված չէր, փոխանակ արտադրության կուլտուրան բարձրացնելու, փակվել է մի հզոր, հանրապետության համար հույժ կարևոր կոմբինատ: Գիտակցելով *այդ մեծ սխալը՝ հանրապետության* կառավարությունը որոշեց վերականգնել Ալավերդիում պղնձածուլությունը, սկզբում տարեկան 5 հազ. տոննա հզորությամբ: Մինչդեռ 1990–ական թվականները այդտեղ տարեկան ծուլվում էր 40–50 հազ. տոննա ռաֆինացված պղինձ: Երբեմնի այդ հզոր կոմբինատի տեղը այժմ գործում է սեփականաշնորհված *փոքր ձեռնարկություն՝ «Մանես–Վալեքս»:*

Ի դեպ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն Լոռու մարզի՝ Շամլուղի, Ալավերդու, Արմանիսի, Թեղուտի պղնձի հանքավայրերը կարող են ավելի քան 100 տարի ապահովել Ալավերդու պղնձածուլական ձեռնարկության պահանջը հումքով: Ավելի խոշոր են Զանգեզուրի պղնձի պաշարները:

Ալավերդու պղնձածուլական կոմբինատի համար անցած տասնամյակներում Ալավերդու, Շամլուղի, Կապանի պղնձի հանքավայրերից բացի, հումքային բազա են հանդիսացել նաև Քաջարանի ու Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերը: Այժմ Ալավերդիում վերականգնված «Մանես–Վալեքս» պղնձածուլական ձեռնարկությունը (որի արտադրանքը չափը դեռևս քիչ է) հումք է գնում նաև Քաջարանից և Ագարակից: Բացի դրանից, Ալավերդու պղնձածուլության համար հումքային բազա է դարձել նաև ԼՂՀ Մարտակերտի *շրջանի Դրմբոնի հանքավայրը:* Այստեղ արդեն շահագործման է հանձնվել հարստացուցիչ ֆաբրիկան, որի հարստացված խտանյութը ավտոմեքենաներով ուղարկվում է Ալավերդի՝ ծուլման համար: Վերջին տարիների (1998–2003 թթ.) տվյալներով հանրապետությունում տարեկան ծուլվում է 5–6 հազ. տոննա սև պղինձ, իսկ պղնձի խտանյութի արտադրությունը կազմում է տարեկան 8.5–9.2 հազ. տոննա: Նախատեսվում է 2010 թ. հանրապետությունում պղնձի ծուլումը հասցնել 40, իսկ 2015 թ.՝ 60 հազ. տոննայի:

Մոլիբդենի արդյունահանում և հարստացում: Հանրապետության տարածքում առկա մոլիբդենի հանքավայրերից ներկայումս երկուսը ունեն

արդյունաբերական նշանակություն: Դրանցից առավել խոշորը Քաջարանի հանքավայրն է, որի բազայի վրա 1950–ական թվականների սկզբներից գործում է հանրապետության լեռնահանքային արդյունաբերության ամենահզոր ձեռնարկությունը՝ Զանգեզուրի (Քաջարանի) պղնձամոլիբդենային կոմբինատը: Քանի որ այստեղ մոլիբդենից բացի հանքանյութի մեջ պարունակվող տասից ավելի գունավոր մետաղներից առավել մեծ չափով պղինձ է պարունակվում, ապա հանքավայրն էլ, կոմբինատն էլ կոչվում են «պղնձամոլիբդենային»: Քաջարանի հանքավայրում արդյունահանվող մոլիբդենի ու պղնձի հումքը տեղի հզոր կոմբինատում հարստացվում է ու ստացված պղնձի խտանյութը մատակարարվում է Ալավերդու կոմբինատին ծուլելու համար, իսկ մոլիբդենի խտանյութը երկար տարիներ մատակարարվում էր Ռուսաստանի վերամշակող ձեռնարկություններին:

1990–ական թվականների սկզբներից ստեղծված տնտեսական շրջափակման հետևանքով այդ կոմբինատի աշխատանքները խիստ սահմանափակվել են, թողարկող արտադրանքն էլ (հարստացված հումքը) Մեղրու կիրճով անցկացված ճանապարհով տեղափոխվում է Իրան, վաճառվում: Արտադրվող մոլիբդենի հումքի մի մասն էլ արդեն մշակվում, դրանից ֆերոմոլիբդեն է արտադրվում տեղում (Քաջարանում) և Երևանի փոշեմետալուրգիական գործարանում:

Լեռնահանքային նմանատիպ կոմբինատ էլ 1963 թ. շահագործման է հանձնվել Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի բազայի վրա: Այստեղ արդյունահանվող պղնձի հումքը նույնպես հարստացվելուց հետո մատակարարվում էր Ալավերդու կոմբինատին, իսկ մոլիբդենի խտանյութը՝ Ռուսաստանի ձեռնարկություններին: Վերջին տարիներին, ինչպես ասվել է, Քաջարանի կոմբինատի հարստացվող մոլիբդենի խտանյութի որոշ մասը Երևանի փոշեմետալուրգիայի գործարանում մշակվում և արտադրվում է ֆերոմոլիբդեն: Ի դեպ, ինչպես նշվեց վերը, այդպիսի արտադրանքի թողարկման հիմք է դրվել նաև բուն Քաջարանի կոմբինատում: Իսկ դա խոսում է այն մասին, որ մոտակա հեռանկարում ՀՀ–ում արդյունահանվող մոլիբդենի հումքը լրիվ կմշակվի տեղում և կարտահանվի պատրաստի արտադրանք: Վերջին տվյալներով ՀՀ–ում տարեկան արտադրվում է 5–6 հազ. տոննա մոլիբդենի խտանյութ:

1990–ական թվականների սկզբներից Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրանքը նույնպես արտահանվում է Իրան:

Լեռնահանքային արդյունաբերության նմանատիպ, բայց համեմատաբար փոքր կոմբինատ էլ կառուցվել է Դաստակերտի (Սիսիանի նախկին վարչական շրջանում), պղնձամոլիբդենային հանքավայրի բազայի վրա, որը սա-

կայն հետագայում դադարել է գործելուց, քանի որ մետաղի պարունակությունը հումքի մեջ աննշան է:

Բազմամետաղների արդյունահանում և հարստացում: Հանրապետության տարածքում առայժմ արդյունաբերական նշանակություն ունեցող բազմամետաղների (ցինկի, կապարի և այլն) հանքավայրը Ախթալայի (Թումանյանի տարածաշրջանում) հանքավայրն է: Այս հանքավայրի բազայի վրա տեղում կազմակերպվել է հարստացուցիչ ֆաբրիկա, որտեղ արդյունահանվող հումքից կորզվում է հիմնականում ցինկ, կապար, պղինձ:

Իսկ ընդհանուր առմամբ, հանրապետության լեռնահանքային արդյունաբերության և գունավոր մետաղածուլության վերը նշված ձեռնարկությունները արդյունահանվող հանքանյութից՝ պղնձից, մոլիբդենից, ցինկից, կապարից բացի կորզում են նաև որոշ քանակությամբ ոսկի ու արծաթ: Սակայն, ինչպես նշվել է, բոլոր հանքավայրերում էլ այդ մետաղներից բացի կան նաև բազմատեսակ այլ թանկարժեք էլեմենտներ, որոնք դեռևս թափոնների հետ նետվում են շրջակա միջավայր:

Ոսկու արդյունահանում: Հանրապետության գունավոր մետաղածուլության առավել մեծ հեռանկար ունեցող ենթաճյուղերից մեկը ոսկու արդյունաբերությունն է: Հայաստանում ոսկու արդյունահանումը գալիս է դեռևս մ.թ.ա. 2–3 հազարամյակներից: Մինչև մեր օրերն են հասել այն հորատանցքերը, որ բացվել էին այդ ժամանակներում, ոսկու արդյունագործության նպատակով:

Ենթադրվում է, որ մեր հանրապետության տարածքում գտնվում է Անդրկովկասի ոսկու պաշարների կեսից ավելին:

Ինչպես արդեն ասվել է, այստեղ հայտնաբերված է ոսկու 21 հանքավայրեր ու երևակումներ: Դրանցից այժմ արդյունաբերական նշանակություն ունեն երկու հանքավայրեր, որոնցից առաջինը, որտեղ խորհրդային իշխանության ժամանակաշրջանում (1960–ական թվականներից) առաջինը սկսվեց արդյունահանման աշխատանքները, Զոդի (Սոթքի) հանքավայրն է: Այն գտնվում է Սևանի ավազանում, Վարդենիսի տարածաշրջանում: Մյուսը Մեղրաձորի հանքավայրն է, որը գտնվում է համանուն գյուղի մոտ, Հրազդան–Հանքավան ճանապարհի վրա: Այս երկու հանքավայրերում արդյունահանվող ոսկու հումքը տեղափոխվում և մշակվում է Արարատ քաղաքի մոտ կառուցված ոսկու կորզման ֆաբրիկայում: Բացի դրանից, որոշ քանակությամբ ոսկի կորզվում է նաև պղնձամոլիբդենային և արդյունահանվող այլ գունավոր մետաղների հանքանյութերից:

Այժմ ՀՀ–ում տարեկան արտադրվում է 5–6 տոննա ձուլածո ոսկի, սակայն հնարավորությունները մեծ են, հեռանկարում դրա արտադրությունը կընդլայնվի:

Հայ–կանադական, հայ–հնդկական և արտասահմանյան այլ կազմակերպությունների միացյալ ուժերով նախատեսված է մեծ ներդրումների միջոցով շահագործել Սոթքի ու Մեղրաձորի ոսկու հանքավայրերը: Ըստ որում, նախատեսվում է Սոթքում տարեկան արդյունահանել մինչև 650 հազ. տոննա հումք, որի յուրաքանչյուր տոննայից կստացվի 7,42 գ ոսկի, իսկ Մեղրաձորում կարդյունահանվի տարեկան 125 հազ. տոննա հումք, որի յուրաքանչյուր տոննայից կստացվի 9,58 գ ոսկի:

Ալյումինի արտադրություն: Ալյումինի արտադրությունը հանրապետությունում հիմնադրվել է 1950–ական թվականների սկզբներին, երբ Քանաքեռի հէկում արտադրվող էլեկտրաէներգիայի հիման վրա Լենինգրադի գիա, իսկ մյուս կողմից՝ շրջակա միջավայրը խիստ աղտոտում էր: Ահա թե ինչու տասնամյակներ հետո, հատկապես էկոլոգիական տեսանկյունից ելնելով, 1980–ական թվականների վերջերին Քանաքեռի ալյումինի գործարանում մետաղային ալյումինի արտադրությունը դադարեցվեց: Այսինքն՝ այդ գործարանի կառուցումը տնտեսաէկոլոգիական տեսանկյունով հիմնավորված չէր: Այժմ նշված գործարանը ներմուծում է պատրաստի մետաղային ալյումին և դրանից արտադրում գլանվածք՝ փայլաթիթեղ, ալյումինի թերթեր և այլ արտադրանք, որը էկոլոգիական առումով անվտանգ է:

Այժմ այս գործարանում տարեկան արտադրվում է 1000–1300 տոննա ալյումինի փայլաթիթեղ և մինչև 500 տոննա ալյումինի գլանվածք:

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ճյուղերից հեռանկարային զարգացման հնարավորությունների տեսակետից առաջնակարգ տեղերից մեկն անկասկած գունավոր մետաղածուլությանն է: Այդ թվում հատկապես լայն են հնարավորությունները պղնձածուլության, բազմամետաղների, մոլիբդենի ու ոսկու բնագավառներում: Սակայն, քանի որ այդ բոլոր մետաղների հանքավայրերում հիմնական մետաղներից բացի կան նաև բազմաթիվ գունավոր և հազվադեպ այլ մետաղներ, ապա այդ ճյուղի զարգացման գլխավոր հիմնախնդիրը արդյունահանվող հումքի համալիր ու անթափոն օգտագործումն է:

Հանրապետությունն ունի նաև հեռանկարային հնարավորություններ **սև մետաղածուլության** զարգացման համար, առկա բարձրորակ երկաթի հանքաքարի մի շարք հանքավայրերի (հատկապես Սվարանցի, Կապուտանի ու Հրազդանի) բազայի վրա:

Մինչև այժմ հանրապետության սև մետաղածուլությունը ներկայացվել է այսպես կոչված «փոքր մետաղածուլությամբ»: Այսինքն՝ մեքենաշինական խոշոր ձեռնարկություններում ստեղծվել են ձուլման արտադրամասեր, որտեղ ներմուծվող թուջից (չուգուն) վերածուլման եղանակով արտադրվում էին անհրաժեշտ իրեր: Իսկ 1960–ական թվականներին Չարենցավանում ստեղծվել էր կենտրոնացված այդպիսի մի ձուլարան (Ցենտրոլիտ գործարանը), որը շատ կարևոր դեր է խաղացել հանրապետության մեքենաշինության և այլ ճյուղերի պահանջները բավարարելու համար: Բացի դրանից, Երևան քաղաքում կազմակերպվել է փորձնական փոշեմետաղածուլական գործարան, որի նպատակը հանրապետությունում առկա ռեսուրսների բազայի վրա հումքից՝ մետաղից ուղղակի վերականգնման մեթոդով սև մետաղածուլության զարգացումն է: Սև մետաղածուլության ձևավորումը, ինչպես նաև շատ վաղուց լայն ճանաչում ստացած գունավոր մետաղածուլության վերակառուցումը Հայաստանի Հանրապետության ճշգրիտ մեքենաշինության հետագա զարգացման վճռական դեր խաղացող պայմանն է:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Քիմիական արդյունաբերությունը ժամանակակից համաշխարհային արդյունաբերության առավել արագ թափով զարգացող և բարդ կառուցվածք ունեցող ճյուղերից մեկն է: Այս ճյուղի կարևոր առանձնահատկություններից մեկը նրա հումքային բազայի բազմազանությունն է: Արդյունաբերության ոչ մի ճյուղ չունի այդպիսի լայն ու բազմազան հումքային բազա, ինչպիսին ունի քիմիական արդյունաբերությունը: Որպես հումք այս ճյուղն օգտագործում է նավթը, քարածուխը, գազերը, աղերը, ֆոսֆորիտները, փայտանյութը, արդյունաբերության տարբեր ճյուղերի թափոնները և շատ այլ հումքատեսակներ:

Շատ բազմազան է նաև քիմիական արդյունաբերության արտադրանքի տեսականին, իսկ քանի որ դրանք մեծ հաջողությամբ փոխարինում են բնական հումքից թողարկվող արտադրատեսակներին (որոնց չափերը այժմ արդեն չեն կարող ապահովել մարդկության պահանջները), ապա քիմիական մեթոդներով թողարկվող հազարավոր արտադրատեսակների նշանակությունը անգնահատելի է:

Քիմիական արդյունաբերության ժամանակակից կարևորագույն հիմնախնդիրներից մեկը անթափոն արտադրության կազմակերպումն է: Հակառակ դեպքում նրա արտանետած թունավոր գազերը, փոշին, թափոնը կարող են օդային ավազանը, ջրային ավազանները, հողերը այն աստիճանի թունավորել, որի հետևանքով էլ կառաջանա էկոլոգիական հավասարակշռության խախտում:

Հայաստանի Հանրապետությունը քիմիական արդյունաբերության, հատկապես «մեծ քիմիայի» զարգացման համար լայն հնարավորություններ չունի: Այդ ճյուղի համար անհրաժեշտ հումքային ռեսուրսները մեզ մոտ շատ սահմանափակ են: Չունենք նաև համապատասխան վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, քաղցրահամ ջրի ու անտառային խոշոր ռեսուրսներ, որոնք նույնպես շատ կարևոր են այդ ճյուղի զարգացման համար:

Չնայած դրան, խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի Հանրապետությունում անհեռատես ձևով ստեղծվել է քիմիական հզոր արդյունաբերություն իր բազմաթիվ ենթաճյուղերով: Այնուհանդերձ հանրապետությունում կան (նաև կային) որոշ նախապայմաններ, որոնք էլ հիմք են հանդիսացել քիմիական արդյունաբերության զարգացման համար: Դրանցից հատկապես կարևորներից են.

ա) բարձրորակ կրաքարի պաշարները, որոնց հիման վրա կազմակերպվել է սինթետիկ կաուչուկի արտադրություն,

բ) պղնձածուլության պրոցեսում անջատվող ծծմբային գազերն ու առաջացող թափոնները, որոնք էլ կարևորագույն հումքատեսակներ են քիմիական արդյունաբերության երկու ենթաճյուղերի՝ ծծմբաթթվի ու պղնձարջասպի արտադրության զարգացման համար,

գ) այստեղ կան նաև գունավոր տուֆաքարի պաշարներ, որոնք նաև հումքային բազա են լաքերի ու ներկերի արտադրություն կազմակերպելու համար,

դ) մյուս կարևոր նախապայմանը համեմատաբար էժան հիդրոէներգիայի արտադրություն էր, որի սպառումը մինչև 1950–ական թվականները հանրապետությունում սահմանափակ էր, քանի որ արդյունաբերական բազամաճյուղ հզոր արտադրություն դեռևս մինչ այդ չէր ձևավորվել,

ե) այժմ քիմիական արդյունաբերության զարգացման համար մենք ունենք նաև մեկ այլ նախապայման՝ կերակրի աղի պաշարների առկայությունը, որոնք հանգամանորեն ուսումնասիրված են և ունեն արդյունաբերական նշանակություն:

Հայաստանի Հանրապետությունում քիմիական արդյունաբերությունը հիմնականում սկսվել է ձևավորվել 1930–ական թվականների սկզբներից, այն ավելի հզորացել ու բազմաճյուղ է դարձել 1950–ական թվականներից հետո:

Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում ձևավորվել են քիմիական արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերը:

1. Սինթետիկ կաուչուկի արտադրություն. այս ենթաճյուղը ստեղծվել է 1930–ական թվականների սկզբներին: Դրա համար հումքային բազա է հանդիսացել ներկայիս Արարատ քաղաքի մոտ գտնվող բարձրորակ կրաքարի հանքավայրի պաշարները: Մինչ այդ ԽՍՀՄ–ում սինթետիկ կաուչուկ արտադրվում էր սննդային հումքատեսակներից՝ կարտոֆիլից և հացահատիկից: Ըստ որում, կարտոֆիլից մեկ տոննա սինթետիկ կաուչուկ արտադրելու համար անհրաժեշտ էր ծախսել մինչև 19 տոննա կարտոֆիլ, իսկ հացահատիկից արտադրելու դեպքում պահանջվում է 10–11 տոննա հացահատիկ: Առաջին անգամ ԽՍՀՄ–ում ոչ սննդային հումքից՝ կրաքարից հայ գիտնականների կողմից մշակվեց սինթետիկ կաուչուկ արտադրելու տեխնոլոգիա, որը այդ ժամանակվա համար խոշոր նվաճում էր: Այսպիսով՝ Արարատի կրաքարի բազայի վրա Երևան քաղաքի հարավային արվարձանում կառուցվեց սինթետիկ կաուչուկի գործարան, այժմյան Նաիրիտ գիտաարտադրական միավորումը: Դրա էներգետիկ բազան Քանաքեռի հէկն էր:

Արարատից բերվող կրաքարի բազայի վրա այդ գործարանի կարբիդի արտադրամասում արտադրվում էր կարբիդ–կալցիում, իսկ վերջինիս բազայի վրա էլ՝ ացետիլեն, որն էլ սինթետիկ կաուչուկի արտադրության հումքն էր:

Սակայն, կրաքարից սինթետիկ կաուչուկի արտադրության տեխնոլոգիան մի կողմից շատ բարդ է, ինչպես նաև պահանջվում էր մեծ քանակությամբ էլեկտրաէներգիա, մյուս կողմից էլ կարբիդի արտադրության պրոցեսը խիստ աղտոտում էր Երևան քաղաքի օդային ավազանը, և այդ պատճառով քաղաքի հարավային կեսը մշտապես պատած էր թունավոր գազերի, փոշու ամպով: Այսինքն՝ էկոլոգիական առումով այդ տեխնոլոգիան վնասակար է:

1960–ական թվականների սկզբներից, երբ բնական գազը մուտք գործեց Երևան, կրաքարի փոխարեն սինթետիկ կաուչուկի արտադրության համար սկսեց օգտագործվել բնական գազը (այդ ժամանակ ԽՍՀՄ–ում նշված նպատակով օգտագործվում էր բնական գազը, նավթը, փայտանյութը և այլ հումքատեսակներ):

Իսկ հետագայում նպատակահարմար համարվեց Երևանի նշված գործարանում որպես հումք օգտագործել ներմուծվող կիսաֆաբրիկատը (նավթից ստացվող), որի հիման վրա էլ արտադրվում է քլորոպրենային կաուչուկ:

Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը երկար ժամանակ հանդիսացել է ԽՍՀՄ–ի բարձրորակ սինթետիկ քլորոպրենային կաուչուկ արտադրող միակ խոշորագույն ձեռնարկությունը, որի արտադրանքը առանձնահատուկ դեր ուներ սոցիալիստական բոլոր երկրների համար (հատկապես արդյունաբերության համար):

ԽՍՀՄ փլուզման նախօրյակին, էկոլոգիական նկատառումներով, որոշ ժամանակ դադարեցվեց այդ կոմբինատում կաուչուկի արտադրությունը, որը անկասկած բացասական խոշոր ազդեցություն թողեց հանրապետության էկոնոմիկայի վրա:

Վերջին տարիներին այն նորից գործարկվեց: Հայկական սինթետիկ կաուչուկը մեծ պահանջարկ ունի միջազգային շուկայում: Այն օգտագործվում է անվադողերի, ռետինատեխնիկական իրերի, կոշիկի արտադրության և այլ բնագավառներում:

1995–1998 թթ. այդ ձեռնարկությունում արտադրվել է 1.5–3.8 հազ. տոննա սինթետիկ կաուչուկ: Հանրապետության համար այդ եզակի խոշոր ձեռնարկության նորմալ գործունեությունը պարբերաբար խաթարվում է ներդրումային հիմնախնդիրների հետ կապված:

Սակայն քիմիական արդյունաբերության այս ենթաճյուղը մեզ համար հեռանկարային է թողարկվող բարձրորակ կաուչուկի ու դրա արդյունավետության առումներով: Նշենք, որ սինթետիկ կաուչուկի արտադրության տեխնոլոգիան հատուկ պայմաններով ներդրվում է Չինաստանում:

2. Պոլիմերային իրերի ու պլաստմասսաների արտադրություն. այս ենթաճյուղը ձևավորվել է հիմնականում 1950–ական թվականներից հետո: Սինթետիկ կաուչուկի արտադրության հարևանությամբ, Երևան քաղաքում ձևավորվել է քիմիական արդյունաբերության մի այլ խոշոր ձեռնարկություն՝ պոլիվինիլացետատ գործարանը: Այն թողարկում է բազմատեսակ պոլիմերներ, թաղանթներ, պոլիվինիլային սպիրտ, սոսինձ, տարբեր խեժեր, վինիլացետատ, վինիֆլեքս, պոլիվինիլ բուտիրոլ, ացետատ ցելյուլոզ (վերջինս հումք է հանդիսանում արհեստական թելերի արտադրության համար): Այս գործարանը տնտեսության տարբեր բնագավառներում լայնորեն օգտագործվող նշված և այլ արտադրատեսակներով ԽՍՀՄ–ում առաջնակարգ տեղ էր զբաղեցնում:

Հանրապետության քիմիական արդյունաբերության համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տարբեր գույների ու տեսակների պլաստմասսաների արտադրությունը, որը իրականացվում էր էջմիածնի պլաստմասսաների և Երևանի պոլիպլաստ գործարաններում: Այդ արտադրանքը հատկապես մեծ նշանակություն ունի հանրապետության ճշգրիտ մեքենաշինության և էներգետիկ տնտեսության, կենցաղային պահանջների համար:

3. Ագոտային պարարտանյութերի, գիանամիդի, գիանայավի ու այլ նյութերի արտադրություն. քիմիական արդյունաբերության այս հարակից

արտադրատեսակների թողարկումը կազմակերպվել է Վանաձորի (նախկին Կիրովականի) քիմիական կոմբինատում:

Այստեղ թողարկվող ազոտային պարարտանյութերը (որպես հումք հիմնականում օգտագործվում էր մթնոլորտում գտնվող ազոտը), սինթետիկ ամիակը, կաուստիկ սոդան, կարբիդ կալցիումը և նշված մյուս քիմիկատները լայն սպառում ունեին ոչ միայն հանրապետությունում, այլև արտասահմանյան բազմաթիվ երկրներում: Կարբիդ կալցիումի արտադրության համար որպես հումք օգտագործվում է Արարատի կրաքարը: Կաուստիկ սոդայի արտադրությունը տարեկան կազմում է 4–4,5 հազ. տոննա:

4. Ծծմաթթվի ու պղնձարջասպի արտադրություն. քիմիական արդյունաբերության այս կարևոր ենթաճյուղը կազմակերպվել է Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի համակարգում: Ծծմբաթթուն մեծ կարևորություն ներկայացնող քիմիկատ է, լայնորեն կիրառվում է ինչպես քիմիական արդյունաբերության շատ բնագավառներում, այնպես էլ տնտեսության այլ ճյուղերում: Այս քիմիկատի դերը այնքան խոշոր է, որ նրա արտադրանքի չափով (ինչպես և պողպատի, նավթի, գազի, էներգիայի ու մի շարք այլ արտադրատեսակների չափերով) բնորոշվում է տվյալ երկրի զարգացման մակարդակը: Ալավերդու կոմբինատում այս արտադրությունը կազմակերպվել էր պղնձածուլության պրոցեսում առաջացող ծծմբային գազերի օգտագործման բազայի վրա:

Նույն կոմբինատի պղնձածուլության թափոնների բազայի վրա կազմակերպվել էր նաև մի շատ կարևոր այլ քիմիկատի՝ պղնձարջասպի արտադրություն: Վերջինս որպես թունաքիմիկատ շատ կարևոր դեր է խաղում այգեգործության և պտղաբուծության համար, գյուղատնտեսական վնասակարարների դեմ պայքարելու համար (այգիները դրանով սրսկելու ճանապարհով):

Հայաստանի Հանրապետությունը Ալավերդու կոմբինատի աշխատանքի դադարեցման հետ կապված, դադարեցրել էր նաև նշված քիմիկատների արտադրությունը: Սակայն դրանց թողարկումը կվերականգնվի՝ կապված պղնձածուլության ավելի խոշոր արտադրության վերականգնման հետ:

5. Ավտոդողերի ու ռետինատեխնիկական իրերի արտադրություն. Երևանի ավտոդողերի գործարանը իր հզորությամբ և թողարկվող արտադրանքի որակով նախկին ԽՍՀՄ–ում ամենախոշորներից մեկն էր: Այն օգտագործում է ինչպես տեղական, այնպես էլ ներմուծվող հումքատեսակներ (կաուչուկ, մուր և այլն): Երևանում գործում է նաև ռետինատեխնիկական իրերի խոշոր գործարան, որը հիմնականում ներմուծվող հումքատեսակներից թողարկում է հարյուրավոր տեսակների ռետինե իրեր, որոնք օգտագործվում են տնտեսության շատ բնագավառներում, կենցաղում: Լայն ճանաչում ուներ Երևանի ավտոդողերի գործարանի արտադրանքը, որի չափերը մեծապես կրճատվել են: Այնուհանդերձ այս գործարանում տարեկան արտադրվում է մինչև 100 հազ. հատ ավտոդող:

6. Լաքերի, ներկերի, լվացքանյութերի արտադրություն. Երևանի լաքերի–ներկերի գործարանն իր հզորությամբ, արտադրանքի որակով նույնպես լայնորեն հայտնի է: Այստեղ բազմատեսակ լաքեր, ներկեր (որոնք գերազանցապես օգտագործվում են շինարարության տարբեր բնագավառներում) արտադրվում են հիմնականում ներմուծվող հումքից, իսկ մասնակիորեն օգտագործվում են նաև տեղական հումք (հատկապես տուֆ): Այստեղ գործում է նաև կենցաղային քիմիայի խոշոր գործարան, որտեղ թողարկվում են ամենատարբեր տեսակների լվացքանյութեր, մաքրող, զտող նյութեր: Երևանը հայտնի է նաև բարձրորակ լվացքահեղուկի («ժավել») արտադրությամբ: Հատկապես կենցաղում օգտագործվող այդ քիմիկատները լայնորեն հայտնի են նաև հանրապետության սահմաններից դուրս: Լաքերի ու ներկերի արտադրությունը վերջին տասնամյակում կազմել է տարեկան մինչև 280 տոննա, որը նախկինի համեմատությամբ աննշան է:

7. Սինթետիկ կորունդի ու սինթետիկ թելերի արտադրություն. Սրանք հանրապետության քիմիական արդյունաբերության համակարգի արտադրատեսակների շարքում համեմատաբար նոր են: Սինթետիկ կորունդը շատ մեծ կարևորություն ներկայացնող նյութ է, որը փոխարինում է ալմաստին: Այն Նոր Հաճնի ճշգրիտ տեխնիկական քարերի գործարանում (որն այժմ կոչվում է «Շողակն») հղկվում, մշակվում է, որից հետո ստացվում է ադամանդի տեսք ունեցող արտադրանք: Մեծ կարևորություն և դիմացկունություն ունեցող, բնական ալմաստին փոխարինող այս արտադրանքն օգտագործվում է տեխնիկական ամենատարբեր բնագավառներում՝ ճշգրիտ սարքերի, գործիքների, քար մշակող և հորատման սարքավորումների, ժամացույցների և շատ այլ արտադրատեսակների, զարդերի արտադրության բնագավառներում: Հայկական սինթետիկ կորունդը մեծ պահանջարկ ու լայն սպառում ուներ: Չնայած այժմ հանրապետության տնտեսության մեջ բավականին խոշոր տեղ է զբաղեցնում ադամանդագործությունից ստացվող արտադրանքը, սակայն, տեխնիկական նպատակներով օգտագործելու առումով շատ կարևոր է սինթետիկ կորունդի արտադրության վերակենդանացումը:

Սինթետիկ թելերի արտադրություն կազմակերպվել է Կիրովական (այժմ Վանաձոր) քաղաքում, Երևանի պոլիվինիլացետատ գործարանում

արտադրվող ացետատ ցելյուլոզի բազայի վրա: Վերջին տարիներին այս արտադրանքների թողարկումը դադարեցվել էր, սակայն կան նախադրյալներ դրանք վերականգնելու համար:

8.Քիմիական ռեակտիվների արտադրություն. Սա հանրապետության քիմիական արդյունաբերության ամենաերիտասարդ ենթաճյուղն է: Երևանում գտնվող քիմիական ռեակտիվների գործարանում թողարկվում են հազարավոր տեսակների քիմիական ռեակտիվներ, որոնք լայնորեն օգտագործվում են արտադրության, գիտության և կրթության բնագավառներում:

Հայկական քիմիական ռեակտիվները լայն ճանաչում են ստացել նաև արտասահմանյան շատ երկրներում:

Հանրապետության քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալները վերջին տասնամյակում զգալիորեն կրճատվել են: Այժմ այս ճյուղը նորից աճի տենդենց ունի: Սակայն նրա հետագա զարգացումը պետք է խստիվ պայմանավորված լինի էկոլոգիական, շրջակա միջավայրի պահպանման պահանջների իրականացման պահանջներով:

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մեքենաշինությունն ամբողջ տնտեսության զարգացման առանցքն է, այն հնարավորություն է տալիս տեխնիկապես վերազինել տնտեսության բոլոր ճյուղերը, մեքենայացնել ու ավտոմատացնել արտադրության պրոցեսները: Չկա մարդու գործունեության մի բնագավառ, որտեղ չկիրառվի մեքենաշինության այս կամ այն ենթաճյուղի թողարկած արտադրանքը: Արդյունաբերության այս կարևորագույն ճյուղն արտադրության բոլոր ճյուղերին ոչ միայն ապահովում է անհրաժեշտ մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ, այլև բնակչությանը ապահովում է կուլտուր–կենցաղային նշանակություն ունեցող ամենաբազմազան իրերով, միջոցներով: Մեքենաշինությունը ոչ միայն թեթևացնում է մարդու աշխատանքը, այլև հսկայական չափերով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը:

Հաշվի առնելով մեքենաշինության վճռական դերը տնտեսության բոլոր ճյուղերի համար՝ զարգացած բոլոր երկրներում այդ ճյուղի աճի տեմպը միշտ բարձր է լինում մյուս ճյուղերից:

Զարգացած երկրներում արդյունաբերական արտադրանքի 35–38%–ը բաժին է ընկնում մեքենաշինությանը (զարգացող երկրներում այն կազմում է 15–20%):

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության համակարգում թողարկվող արտադրանքի ծավալով և աշխատողների թվաքանակով առաջին տեղը զբաղեցնում է մեքենաշինությունը:

1987–1990 թթ. մեքենաշինության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության ամբողջ արտադրանքի ծավալում կազմել է ավելի քան 32%:

1990–ական թվականներից սկսած՝ արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման հետ կապված հանրապետության ձեռնարկությունների (ինչպես նաև մյուս ճյուղերի) մեծ մասը կազմալուծվել, անգործության են մատնվել: Հետևանքը եղել է այն, որ այս ճյուղի տեսակարար կշիռը արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքում մեծ չափերով իջել է: Մասնավորապես, 1995 թ. այն կազմել է 13,5, 1996 թ.՝ 9,3, 1998 թ.՝ 4,7%: Այս վիճակը շարունակվել է նաև հետագա տարիներին:

1988 թ. հանրապետության տարածքում գործող արդյունաբերական 713 հզոր ձեռնարկություններից, միավորումներից, կոմբինատներից 182–ը մեքենաշինական արդյունաբերության ճյուղին էին պատկանում:

Մինչև 1990 թ. սկիզբը Հայաստանի Հանրապետությունը դարձել էր բարձր զարգացած, բազմաճյուղ մեքենաշինություն ունեցող հանրապետություն: Այս ճյուղի հարյուրավոր կարևորագույն արտադրատեսակներ արտահանվում էին ոչ միայն ԽՍՀՄ բոլոր տնտեսական շրջաններ, այլ արտասահմանյան ավելի քան 80 երկիր:

Հայաստանի Հանրապետությունը առավելապես բնութագրվում էր զարգացած ճշգրիտ մեքենաշինությամբ:

Քանի որ մեր հանրապետությունը առայժմ չունի խոշոր սև մետաղաձուլություն, այսինքն՝ չունի մեքենաշինության համար անհրաժեշտ հումքային բազա, իսկ մյուս կողմից էլ այն շատ լավ ապահովված է աշխատանքային ռեսուրսներով ու բարձրորակ ինժեներատեխնիկական անձնակազմով, ապա նպատակահարմար էր այստեղ զարգացնելու մեքենաշինության այն ենթաճյուղերը, որոնք պահանջում են շատ ու բարձրորակ աշխատանք և քիչ հումք: Այդ սկզբունքից ելնելով՝ այստեղ զարգացավ ճշգրիտ մեքենաշինությունը: Հանրապետության մեքենաշինության համար անհրաժեշտ սև մետաղներն ու գունավոր մետաղների մեծ մասը միշտ ներմուծվել են Ռուսաստանից, Ուկրաինայից, Դաղստանից, Վրաստանից և նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից:

Հայաստանի Հանրապետության մեքենաշինական արդյունաբերությունն ունի հետևյալ ճյուղային կառուցվածքը:

ԺԱ) **Մետաղահատ հաստոցաշինություն.** սա հանրապետության տարածքում ստեղծված մեքենաշինության առաջին ենթաճյուղն է: Հաստոցաշինական առաջին գործարանը կառուցվել է Երևանում 1920–ական թվականների սկզբներին Լենինգրադի (այժմ Սանկտ Պետերբուրգ) մեքենաշինարարների աջակցությամբ (դա Երևանի հաստոցաշինական այն գործարանն է, որը նախկինում կոչվում էր Ձերժինսկու անվան):

Հետագայում (1950–ական թվականներից հետո) ճշգրիտ մետաղահատ հաստոցաշինական գործարաններ կառուցվեցին Կիրովականում (այժմ Վանաձոր), Չարենցավանում և Հոկտեմբերյանում (այժմ Արմավիր): Երևանում կառուցվեց հաստոցաշինական երկրորդ գործարանը՝ ֆրեզերային հաստոցների գործարանը:

Հանրապետության հաստոցաշինական արդյունաբերությունը ընդգրկում է նաև Գյումրիի քարհատ մեքենաների ու դարբնոցային մամլիչների գործարանները:

Մետաղահատ հաստոցաշինությունը մեքենաշինության այն ենթաճյուղն է, որի արտադրանքի չափը բնորոշում է տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակը:

Արդեն 1965 թ. հանրապետությունում թողարկվել էր 9200 հատ մետաղահատ հաստոց, հետագա տարիներին մեծ չափով ավելացել է այդ կարևոր արտադրանքի քանակը:

Ամբողջ նախկին ԽՍՀՄ–ի և արտասահմանյան ավելի քան 60 երկրներում լայն ճանաչում էին ստացել Վանաձորի ու Չարենցավանի ճշգրիտ հաստոցները, որոնք միջազգային ցուցահանդեսներում ու տոնավաճառներում բազմիցս արժանացել են ոսկե մեդալների ու դիպլոմների:

1990–ական թվականներին իրականացված մասնավորեցման հետ կապված՝ մեքենաշինության այս շատ կարևոր բնագավառը դեռևս իր երբեմնի փառքը չի վերականգնել: 2002 թ. հանրապետությունում արտադրվել է 287, իսկ 2003 թ. ընդամենը 177 մետաղահատ հաստոց:

բ) Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն. մեքենաշինության այս ենթաճյուղի զարգացման համար հանրապետությունում ստեղծվել են առավել լայն հնարավորություններ: Դրա համար կարևոր նախապայմաններ են ոչ միայն պղնձի, ալյումինի, կաբելի, մեկուսիչների, պլաստմասսաների ու այլ արտադրանքների առկայությունը, այլև համապատասխան բարձրորակ ինժեներատեխնիկական անձնակազմի և գիտահետազոտական նախագծային կազմակերպությունների առկայությունը: Հայաստանի Հանրապետության մեքենաշինության այս կարևոր ենթաճյուղը ընդգրկում է երկու տասնյակից ավելի հանրահայտ ձեռնարկություններ, որոնց թողարկած շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, գեներատորները, գործադիր մեխանիզմները, զոդման սարքերը, էլեկտրալամպերը և շատ այլ արտադրատեսակներ լայն ճանաչում են ստացել ոչ միայն ԱՊՀ բոլոր երկրներում, այլև արտասահմանյան ավելի քան 60 երկրներում:

Շատ կարևոր է նշել, որ էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ծավալով Հայաստանը նախկին ԽՍՀՄ–ում զբաղեցնում էր 3–րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին և Ուկրաինային:

Այդ ենթաճյուղի ձեռնարկություններից հատկապես լայն ճանաչում են ստացել Երևանի էլեկտրամեքենաշինական (Հայէլեկտրո) խոշոր գործարանը, էլեկտրալամպերի («Լույս» արտադրական միավորում), կաբելի, էլեկտրատեխնիկական, Գյումրիի էլեկտրատեխնիկական, Վանաձորի «Ավտոմատիկա», Գորիսի էլեկտրատեխնիկական ու այլ գործարաններ:

գ) Գործիքաշինություն և սարքաշինություն. Այս ենթաճյուղը ընդգրկվում է ճշգրիտ չափիչ բազմատեսակ գործիքների ու սարքերի՝ միկրոամպերմետրերի, լոգոմետրերի, տեխնոլոգիական պրոցեսները կարգավորող և հսկող սարքերի, գեղարվեստական ժամացույցների և զարթուցիչների, ճշգրիտ տեխնիկական քարերի (կորունդից) ու շատ այլ արտադրանքի թողարկումը: Թողարկվում էին նաև էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

Այս ենթաճյուղի առավել նշանավոր ձեռնարկությունները Երևանի, Գյումրիի, Վանաձորի գործիքաշինական, Երևանի ռելեի, ժամացույցի, Դիլիջանի «Իմպուլս», Հրազդանի «Հրազդանմաշ» և այլ գործարաններն են: ՀՀ–ում արդեն հիմք է դրվել ժամանակակից համակարգիչների արտադրությանը:

դ) Տրանսպորտային մեքենաշինությունը. Հանրապետության մեքենաշինության համեմատաբար նոր ենթաճյուղերից է: Այն ընդգրկում է Երևանի «ԵրԱԶ», ավտոբեռնիչների ու Չարենցավանի ավտոբեռնիչների գործարանները: Երևանում թողարկվող «ԵրԱԶ» մակնիշի ավտոֆուրգոնները լայն ճանաչում ունեն նաև ԱՊՀ երկրներում:

Հանրապետության մեքենաշինության համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում նաև **ընդհանուր մեքենաշինության** և այլ ձեռնարկություններ: Դրանք թողարկում են հիդրոպոմպեր, կոմպրեսորներ, պահեստամասեր, թեթև, սննդի արդյունաբերության, կենցաղում ու այլ բնագավառներում կիրառվող շատ արտադրատեսակներ:

Մեքենաշինությունը, հատկապես ճշգրիտ մեքենաշինությունը Հայաստանի Հանրապետության արդյունաբերության մեծ հեռանկար ունեցող ճյուղերից մեկն է, որի երբեմնի փառքը պետք է վերականգնել, և որի համար ՀՀ ունի բարձրորակ աշխատուժ ու գիտական մեծ ներուժ:

Հանրապետության մեքենաշինության նշված բոլոր ենթաճյուղերի մեծ մասը այժմ էլ չեն աշխատում, մյուսներն էլ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ:

Ստորև զետեղված աղյուսակում տրված են հանրապետության մեքենաշինական արդյունաբերության հիմնական արտադրատեսակների քանակները վերջին տարիներին.

Աղյուսակ 18

Արտադրանքի տեսակը	Միավորը	Թողարկված արտադրանքի քանակը ըստ տարիների	
		2002	2003
Մետաղահատ հաստոցներ	հատ	287	177
Ռելեներ	հազ. հատ	344,5	302,8
Ուժային ճկուն կաբելներ	կմ	4,3	4,4
Ուժային կաբելներ մինչև 14վ լարման	//	37,1	1,9
Տեղակայման հաղորդալարեր	//	721,9	81,5
Լուսավորման էլեկտրալամպեր	հազ. հատ	6613,8	3853,3
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ	հատ	2492	3218
Փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ	//	436	182
Փոփոխական հոսանքի գեներատորներ	//	50	20
Ուժային տրանսֆորմատորներ	//	34	19
Համակարգիչներ	//	1343	2080
Ջրային հաշվիչներ	//	21180	197515
Սառցարանային ցուցափեղկեր	//	//	88
Պոմպեր	//	3629	1177

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Շինանյութերի արդյունաբերությունը այն ճյուղն է, առանց որի հնարավոր չէ իրականացնել կապիտալ շինարարություն: Հետևաբար այն վճռական դեր է խաղում հանրապետության տնտեսության զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ոչ մի ճյուղ չունի զարգացման համար անհրաժեշտ այնքան լայն ու բազմազան բազա, որքան շինանյութերի արդյունաբերությունը: Հանրապետության տարածքում հայտնաբերված են գիտությանը հայտնի բոլոր քարատեսակները: Այստեղ առկա

են հրաբխային ծագում ունեցող բազմազան ապարների, ինչպես նաև նստվածքային փոխակերպված ապարների հսկայական պաշարներ, որոնք հզոր բազա են շինանյութերի բազմաճյուղ արդյունաբերության զարգացման համար: Բնական քարանյութերը անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն օգտագործել է շինարարական բոլոր բնագավառներում: Եթե դաշտավայրային ռեգիոնների երկրներում շինարարները հին ժամանակներից սկսած մասնագիտացել են կավից արտադրվող աղյուսով շենքերի կառուցման բնագավառում, ապա քարաշատ Հայաստանի շինարարը մասնագիտացել է քարագործության, բնական քարից բնակելի տների, բերդերի, պարիսպների, կամուրջների, հուշարձանների կառուցման արհեստում: Դեռ հազարամյակներ առաջ քարի մշակումը Հայաստանում հասել էր իր կատարելիության աստիճանին: Քարի շնորհիվ է, որ հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, մշակույթը հասել է այսօրվա սերունդներին: Անհիշելի ժամանակներից որպես հիմնական շինանյութ, Հայաստանում օգտագործվել է հիմնականում բազալտաքարը, իսկ մեր թվագրության սկզբներից նաև տուֆաքարը: Սրանց օգտագործումը ժամանակակից արդյունաբերական հիմքերի վրա է դրվել հատկապես 1920–ական թվականներից հետո: Բազալտաքարերից, տուֆաքարերից բացի, այդ ժամանակաշրջանից սկսած, մեզ մոտ շինարարական նպատակներով օգտագործվում են նաև անդեզիտները, կրաքարերը, տրավերտինը, գրանիտը, մարմարը, պեմզան, պեռլիտները, հրաբխային խարամները, հրակայուն կավերը, լեռնային ու գետի ավազն ու այլ բնական քարանյութեր:

Բնական այդ հումքատեսակների բազայի վրա 1920–1990 թթ. ձևավորվել են շինանյութերի արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերը:

1. **<u>Որմնանյութերի արտադրություն բնական քարանյութերից</u>**

ա) *Տուֆաքարից արտադրվող որմնանյութեր:* Տարբեր գույների տուֆերից արտադրվող որմնանյութերը միշտ վճռական դեր են խաղացել հանրապետության շինարարության պահանջները բավարարելու համար: Այս անզուգական շինաքարի օգտագործման շնորհիվ արմատապես փոխվել է հանրապետության բոլոր քաղաքների ու գյուղերի պատկերը: Այստեղ մեքենայացված եղանակով տուֆ սկսվել է արդյունահանվել 1928 թ. Արթիկում, իսկ հետագայում այն արմատավորվել է նաև տուֆի մյուս հանքավայրերում:

Չնայած տուֆաքար այժմ արդյունահանվում է բազմաթիվ հանքավայրերում, սակայն այդպիսի բնական շինաքար արդյունահանող խոշոր ձեռնարկությունը միշտ եղել է (այժմ էլ հանդիսանում է) «Արթիկտուֆ» կոմբինատը: Արթիկի վարդագույն տուֆը ոչ միայն լայնորեն օգտագործվում է

հանրապետության բոլոր ռեգիոններում, այլև այն զգալի չափով արտահանվել և օգտագործվել է ԽՍՀՄ շատ քաղաքներում, Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Դոնի Ռոստովում, Կիևում, Տաշքենդում, Թբիլիսիում և շատ այլ վայրերում:

«Արթիկտուֆից» բացի տուֆաքար արդյունահանող նշանավոր ձեռնարկություններ են գործում Պեմզաշենի, Ամի պեմզայի հանքավայրերում, Ախուրյանի, Թալինի, Աշտարակի, Արմավիրի, Բաղրամյանի տարածաշրջանների հանքավայրերում: Իսկ դեկորատիվ յուրահատուկ նշանակություն ունեցող ֆելզիտային տուֆ է արդյունահանվում Նոյեմբերյանի ու Թումանյանի տարածաշրջաններում գտնվող հանքավայրերում: Այդպիսի տուֆաքարով են կառուցված Երևանի՝ Հանրապետության հրապարակի կառավարության տունը, հյուրանոցի ու փոստի գեղատեսիլ շենքերը: Ֆելզիտային տուֆաքար է արդյունահանվում նաև Վայքում (Մարտիրոսի հանքավայրում):

Տուֆից արտադրվող շինանյութերով Հայաստանի Հանրապետությունը աշխարհում եզակի տեղ է զբաղեցնում:

Մինչև 1990–ական թթ. հանրապետությունում տարեկան արտադրվել է 1.1 մլն մ^3 տուֆի որմնաքար, որի ավելի քան 40%–ը տալիս էր «Արթիկտուֆ»–ը:

Վերջին տասնամյակում այս որմնանյութի արտադրության ծավալը մեծապես կրճատվել է՝ կապված հանրապետությունում ստեղծված տնտեսական ծանր պայմանների հետ: Մասնավորապես 2002 թ. արտադրվել է 67.5, իսկ 2003 թ.՝ 75.7 հազ. մ^3 կանոնավոր կտրվածքի տուֆաքար:

բ) *Բազալտաքարերից արտադրվող որմնանյութեր:* Հանրապետությունում արդյունահանվող և օգտագործվող բնական որմնանյութերի ընդհանուր ծավալում, տուֆաքարից հետո հաջորդ տեղը զբաղեցնում են բազալտները (այդ թվում անդեզիտաբազալտները):

Բազալտները բարձր դիմացկունություն, կարծրություն և թթվայնություն ունեցող շինանյութեր են, այդ պատճառով դրանք գերազանցապես օգտագործվում են շենքերի հիմքերի, ստորին հարկերի (որտեղ խոնավությունն ավելի բարձր է) կառուցման համար: Երևանի ու հանրապետության մյուս բնակավայրերի շենքերի հիմքերն ու նկուղային հարկերը կառուցված են բազալտաքարով: Բացի դրանից, հատուկ նշանակություն ունեցող առանձին շենքեր ամբողջապես կառուցված են դրվագված կամ սրբատաշ բազալտով, հաշվի առնելով այդ քարանյութի ջերմաձայնամեկուսիչ բարձր հատկանիշները: Հենց այդ նկատառումներով էլ ամբողջապես բազալտով են կառուցված Երևանի գինու կոմբինատի ու Մ. Մաշտոցի անվան ձեռագրերի պահպանման ինստիտուտի (Մատենադարանի) և այլ շենքեր: Անհիշելի ժամանակներից Հայաստանում բազալտաքարը օգտագործվել է նաև կամուրջների, պարիսպների, բերդերի կառուցման համար: Այժմ բազալտները մեզ մոտ օգտագործվում են նաև մայթաքարերի, աստիճանների պատրաստման, հուշարձանների կառուցման և այլ նպատակների համար:

Հանրապետությունում տարեկան արտադրվում է 500–600 հազ. մ^3 բազալտե որմնանյութ, 400–500 հազ. գծամետր բազալտե մայթաքար, 60–70 հազ. գծամետր աստիճաններ:

Քանի որ այն շատ կարծր քարանյութ է, ապա արդյունահանումը դեռևս լրիվ մեքենայացված չէ, գերակշռում է արդյունահանման կիսամեքենայացման եղանակը:

Բազալտե որմնանյութեր արդյունահանվում և արտադրվում են հիմնականում Երևանի շրջակայքի, Գորիսի ու Սիսիանի, Սևանի ավազանի, Աբովյանի, Հրազդանի, Աշտարակի, Ախուրյանի, Գուգարքի նախկին վարչական շրջանների ու այլ վայրերի բազալտե հանքավայրերում:

<u>2 Երեսապատման իրերի արտադրություն բնական քարանյութերից:</u>

ա) *Մարմարի արդյունահանում, մշակում, երեսապատման սալերի արտադրություն.* Հանրապետության տարածքում հայտնաբերված մարմարի հանքավայրերից պաշարներով առավել հայտնի են Արարատի, Արտաշատի, Ապարանի, Իջևանի, Հրազդանի, Վարդենիսի, Կապանի տարածաշրջանների տարածքներում գտնվող հաքավայրերը:

Հայաստանի Հանրապետությունում մարմարի արդյունաբերական եղանակով արդյունահանումն ու մշակումը սկսվել է 1930–ական թվականների սկզբներին:

Գործնական նշանակության տեսակետից կարևոր տեղ է զբաղեցնում Արարատի մարմարի հանքավայրը, որտեղ արդյունահանվում է մուգ գորշ և սև գույնի (տարբեր երանգներով) մարմար:

Յուրահատուկ տեղ ուներ Խոր Վիրապի հանքավայրում արդյունահանվող մարմարը (սև և գորշ գույների): Զգալի չափով սպիտակ գույնի մարմար է արդյունահանվում Արզական–Աղվերանի, Մայմեխի հանքավայրերում: Այժմ հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում Իջևանի (Ենոքավան գյուղի մոտ) հանքավայրում արդյունահանվող վարդագույն մարմարը: Յուրահատուկ հետաքրքրություն էր ներկայացնում Մարմարաշենի օնիքսանման մարմարը, որի պաշարները սակայն սպառվում են: Իսկ այժմ գործնական կարևոր նշանակություն ունի Արտավազդի օնիքսացման մարմարի հանքավայրը (Վեդի

ավանից ոչ հեռու), որտեղ արդյունահանման զգալի աշխատանքներ են կատարվում: Դեկորատիվ հատկանիշներով եզակի նշանակություն ունի Իջևանի տարածաշրջանում արդյունահանվող կոնգլոմերատը:

Այս հանքավայրերից արդյունահանվող մարմարը մշակվում է Երևանի «Հայմարմար» կոմբինատում և Նուռնուսի քարամշակման գործարանում: 1980–1990-ական թթ. հանրապետությունում տարեկան արդյունահանվել է 5–6 հազ. մ^3 մարմար, որից արտադրված տարբեր գույների սալիկները օգտագործվել են Մոսկվայի, Երևանի, Կիևի ու այլ խոշոր քաղաքների մետրոպոլիտենի կայարանների, կառավարական շենքերի, ճարտարապետական այլ շինությունների ներքին հարդարման համար: Երևանից բացի հայկական մարմարները օգտագործվում են նաև հանրապետության մյուս բնակավայրերի ճարտարապետական կոթողների, խանութների ու այլ շինությունների ներքին հարդարման համար: Վերջին տասնամյակում դրանք հատկապես լայնորեն են օգտագործվում սեփականաշնորհված շենքերի, խանութների ձևավորման համար:

բ) *Գրանիտի արդյունահանում, մշակում, երեսապատման սալերի արտադրություն.* Հայաստանի Հանրապետության տարածքում գրանիտի շահագործվող խոշոր հանքավայրը Փամբակի հանքավայրն է (Վանաձոր քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա): Այս հանքավայրի գրանիտի արդյունաբերական պաշարները կազմում են ավելի քան 7 մլն մ^3 , իսկ ընդհանուր երկրաբանական պաշարները 22 մլն մ^3 է: Այստեղի գրանիտը մանրահատիկ ու բարձրորակ է: Հեռանկարային կարևոր նշանակություն ունի Լերմոնտովի հանքավայրը (Վանաձորից 15 կմ դեպի արևելք): Այս հանքավայրի պաշարները կազմում են ավելի քան 11 մլն մ^3:

Հանրապետությունում արդյունահանվող գրանիտը հիմնականում մշակվում է Նուռնուսի քարամշակման գործարանում, ինչպես նաև հանրապետության տարբեր վայրերում գործող քար մշակող փոքր ձեռնարկություններում: Արդյունահանվող գրանիտը մշակվում, արտադրվում է երեսապատման սալիկներ, տարբեր տեսակի հուշարձաններ, սալահատակաքար: Փամբակի գրանիտով է կառուցված Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնի հիասքանչ շենքը: Այդ գրանիտից արտադրված սալերով հարդարված է Երևանի մետրոպոլիտենի, պետական բազմաթիվ շենքերի ներսը: Այն օգտագործված է բազմատեսակ հուշարձանների կառուցման համար: Իսկ Մեղրու ու Նոյեմբերյանի հանգույցներում գտնվող գրանիտի հանքավայրերում արդյունահանված գրանիտից արտադրվում են մեծ քանակությամբ խիճ, որը օգտագործվում է երկաթուղային ճանապարհների կառուցման համար:

գ) *Երեսապատման սալերի արտադրություն տուֆից, բազալտից, տրավերտինից:* Այսպիսի շինանյութեր արտադրվում են քար արդյունահանող և մշակող բազմաթիվ ձեռնարկություններում, բայց առավել շատ «Արթիկտուֆ»-ում, Պեմզաշենի, Գյումրիի, Թալինի, Սևանի, Սիսիանի, Արմավիրի, Էջմիածնի, Վայքի ու այլ ձեռնարկություններում: Այժմ տրավերտինի խոշոր արտադրություն է կազմակերպված Արարատ քաղաքի մոտ գտնվող հանքավայրում, որի հիման վրա երեսապատման սալերի արտադրության ժամանակակից հզոր գործարան է կառուցվել Աբովյան քաղաքում: Նախատեսված է այս ձեռնարկության ամբողջ արտադրանքը (հեռանկարում տարեկան 100 հազ. մ^2) արտահանել հիմնականում ԱՄՆ: Արարատի տրավերտինի պաշարները աշխարհում զիջում է միայն Իտալիայի պաշարներին, որակը շատ բարձր է:

Տուֆից ու տրավերտինից արտադրվող սալերով երեսապատվում են հատկապես երկաթբետոնե շինվածքներով կառուցված բարձրահարկ շենքերը: Բազալտե սալերով հարդարվում, երեսապատվում են հրապարակները, փողոցների մայթերը: Բնական քարանյութերից երեսապատման սալերի արտադրությունը 2002 թ. կազմել է 69.3 հազ. մ^2, իսկ 2003 թ.՝ 83.6 հազ.մ^2: Այդպիսի քարատեսակներով է ձևավորված Երևանի վերակառուցված կենտրոնական՝ Հանրապետության հրապարակը:

3.**<u>Բնական լցանյութերի արտադրություն</u>**

Լցանյութերը դրանք խիճն ու ավազն են, որոնք օգտագործվում են երկաթբետոնե կոնստրուկցիաների, շաղախի արտադրության համար, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել շինարարություն:

Հայաստանի Հանրապետությունում բնական լցանյութեր արտադրվում են հրաբխային խարամներից, պեմզայից, պեռլիտներից, տուֆից, բազալտից, գրանիտից: Ըստ որում, բազալտից ու գրանիտից արտադրված լցանյութերը կոչվում են ծանր լցանյութեր, մյուսներից արտադրվածը՝ թեթև ծակոտկեն լցանյութեր:

Բնական թեթև լցանյութերն ավելի լայնորեն օգտագործվում են բնակելի շենքերի կառուցման համար: Ծանր լցանյութերը հատկապես օգտագործվում են հատուկ ամրություն պահանջող կառույցների, հիդրոտեխնիկական, էներգետիկական շինությունների, կամուրջների, ճանապարհների կառուցման համար:

Հրաբխային թեթև լցանյութեր արտադրող առավել նշանավոր ձեռնարկություններն են՝ Կարմրաշենի (Բաղրամյանի տարածաշրջանում) լցանյութերի կոմբինատը, Պեմզաշենի, Շինուհայրի, Քարահունջի, Գավառի, Լճաշենի ու հանրապետության հրաբխային խարամի այլ հանքավայրերում գործող ձեռնարկությունները:

Պեմզայից թեթև լցանյութեր արտադրող խոշորագույն ձեռնարկությունը «Անիպեմզա» կոմբինատն է:

Պեռլիտներից (նաև լիթոիդային պեմզայից) թեթև լցանյութեր հիմնականում արտադրվում են Արագածի (Թալինի նախկին վարչական շրջանում), Զրաբերի (Աբովյան քաղաքի մոտ), Չարենցավանի ու այլ հանքավայրերում: Տուֆից թեթև լցանյութեր արտադրվում են տուֆաքար արդյունահանող խոշոր ձեռնարկություններում, հատկապես «Արթիկտուֆ»–ում, Պեմզաշենում, Թալինի, Աշտարակի հանգույցներում ու այլ վայրերում գտնվող տուֆի հանքավայրերում: Այստեղ խիճ ու ավազ արտադրվում է տուֆի արդյունահանման ժամանակ առաջացած թափոններից:

Բազալտից խիճ ու ավազ արտադրվում են բազալտ արդյունահանող խոշոր ձեռնարկություններում (Սևանի ավազանում, Սյունիքի, Կոտայքի, Շիրակի մարզերում, Վայքում), գրանիտից խիճ արտադրվում է հիմնականում Մեղրու և Այրումի հանգույցներում:

Հայկական թեթև լցանյութերը իրենց որակական բարձր հատկանիշների շնորհիվ մեծ պահանջարկ ունեին ԽՍՀՄ շատ շրջաններում: Հատկապես մեծ քանակությամբ հրաբխային խարամ, պեմզա, պեռլիտ, տուֆի խիճ ու ավազ էր արտահանվում Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Բելառուս և այլ հանրապետություններ: Իսկ հայկական պեռլիտը և որոշ այլ շինանյութեր արտահանվում են նաև հեռավոր արտասահման: Պեռլիտ մեծ քանակությամբ արտահանվում էր հատկապես Իտալիա:

Այժմ տարեկան 200 հազ. տոննա հայկական բարձրորակ պեռլիտ է արտահանվում ԱՄՆ: Ամերիկյան «Դեկալիտ» ընկերությունը 1.4 մլն դոլարով գնել է հանրահայտ «Արագածպեռլիտ» ձեռնարկության բոլոր բաժնետոմսերը: Ի դեպ, այս հանքավայրի պեռլիտը շատ բարձրորակ է և մեծ պահանջարկ ունի ամենուրեք:

Ընդհանուր առմամբ, բնական ծանր լցանյութերի հումքի արդյունահանումը 2002 թ. կազմել է 269.7 հազ, իսկ 2003 թ.՝ 325.4 հազ. մ^3: Իսկ ծակոտկեն թեթև լցանյութերի արտադրությունը նույն թվականներին համապատասխանաբար կազմել է 111.7 հազ. և 131.7 հազ. մ^3:

4. **Կապակցող նյութերի արտադրություն**

Հայաստանի Հանրապետությունում արտադրվում է կապակցող 3 տեսակի շինանյութ՝ ցեմենտ, գաջ և կիր:

Ժամանակակից շինարարության համար վճռական դեր խաղացող կապակցող նյութը ցեմենտն է, պատահական չէ, որ այն անվանվում է շինարարության «հաց»:

Հանրապետությունում ցեմենտի արտադրություն կազմակերպվել է 1930–ական թվականների սկզբներին, երբ Արարատ քաղաքում կառուցվել է ցեմենտ–շիֆերի կոմբինատ: Ցեմենտի արտադրություն այստեղ կազմակերպվել է տեղի բարձրորակ կրաքարի ու կավի բազայի վրա:

1970–ական թթ. Հրազդան քաղաքում շահագործման է հանձնվել հանրապետության ցեմենտի 2–րդ գործարանը, որը որպես հումք օգտագործում է Արարատից բերվող կրաքարը:

Նշենք, որ Հրազդանում՝ կուրորտային այդ վայրում ցեմենտի արտադրության կազմակերպումը էկոլոգիական առումով նպատակահարմար չէ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Արարատում ցեմենտի արտադրության հզորությունը կրկնապատկվել է նպատակ ունենալով Հրազդանում այդ արտադրությունը դադարեցնել:

Գաջ արտադրվում է հիմնականում Երևան քաղաքում, Զրվեժի գիպսաքարի բազայի վրա: Գաջը օգտագործվում է շենքերի ներսի պատերի հարդարման համար:

Կիր արտադրվում է հիմնականում Արարատի ցեմենտ–շիֆերի կոմբինատի համակարգում, քիչ քանակությամբ նաև Իջևանում, Կապանում և այլուր: Սակայն ներկայումս կիրը որպես կապակցող նյութ համարյա չի օգտագործվում, այն կիրառվում է քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսության ու այլ բնագավառներում:

2002 թ. հանրապետությունում ցեմենտի արտադրությունը կազմել է 354.5 հազ., 2003 թ.՝ 384.3 հազ. տոննա: Գաջի արտադրությունը 2002 թ. կազմել է 44.9 հազ. տոննա, 2003 թ.՝ 57.8 հազ. տոննա: Կրի արտադրությունը համապատասխանաբար կազմել է 4.9 և 4.4 հազ. տոննա:

5. **Երկաթբետոնե հավաքովի կառուցվածքների արտադրություն**

Ժամանակակից շինարարական ոչ մի աշխատանք չի կարող իրականացվել առանց բետոնի ու երկաթբետոնի կիրառման: Այժմ ամբողջ աշխարհում լայնորեն կիրառվում են երկաթբետոնե հավաքովի տարբեր տեսակի իրեր, կառուցվածքներ, հավաքովի տներ:

Մեր հանրապետությունում շինանյութերի արդյունաբերության այս ենթաճյուղը հատկապես արագ զարգացավ 1950–ական թվականներից: Դրա համար կարևոր հումք են հանդիսանում հանրապետությունում առկա բնական լցանյութերի խոշոր պաշարները՝ հրաբխային խարամները, պեմզան, պեռլիտը, տուֆից, բազալտից արտադրվող խիճն ու ավազը:

Երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաները հատկապես խոշոր դեր են կատարում բարձրահարկ շինությունների կառուցման համար: Արդեն 1980–ական թվականներին հանրապետությունում գործում էին երկաթբե-

տոնե հավաքովի կոնստրուկցիաներ արտադրող 50–ից ավելի ձեռնարկություններ: Միայն Երևան քաղաքում դրանց թիվը հասնում էր 25–ի, այդպիսի ձեռնարկություններ են գործում նաև Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Արտաշատում, Հրազդանում, Սևանում և մյուս քաղաքներում:

Հայաստանի Հանրապետությունում երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաներից կառուցված շենքերը երեսապատվում են հիմնականում տուֆից արտադրված սալիկներով:

Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքների արտադրությունը 2002 թ. կազմել է 69,3 հազ., իսկ 2003 թ.՝ 83,4 հազ. մ^3, իսկ ապրանքային բետոնի արտադրությունը համապատասխանաբար կազմել է 30,7 և 55,4 հազ. մ^3:

6. Ծածկանյութերի ու ազբեստախողովակների արտադրություն

Պատմական Հայաստանում որպես ծածկանյութեր օգտագործվել են կավից արտադրվող կղմինդրը, իսկ եկեղեցական շինությունների համար՝ տուֆից արտադրվող սալիկները:

1950–ական թվականներից հետո՝ Արարատի ցեմենտ–շիֆերի կոմբինատում կազմակերպվել է ազբեստացեմենտի սալերի արտադրություն, որը այժմ շարունակվում է, և որոնք օգտագործվում են որպես ծածկանյութ: Ազբեստացեմենտի սալերի արտադրությունը տարեկան կազմում է 4,3–7,6 մլն պայմանական սալ: Հանրապետությունում տարբեր վայրերում որպես ծածկանյութ օգտագործվում է նաև կղմինդրը: Այժմ որպես ծածկանյութ օգտագործվում են նաև Քանաքեռի ալյումինի գործարանում արտադրվող ալյումինե թիթեղասալերը: Որպես ծածկանյութ օգտագործվում են նաև ներմուծվող թիթեղն ու փափուկ ծածկանյութը:

Արարատի ցեմենտ–շիֆերի կոմբինատում արտադրվում են նաև ազբեստացեմենտի խողովակներ, որոնք լայնորեն օգտագործվում են բոլոր տեսակի շինություններում՝ որպես օդանցքներ, ինչպես նաև ստորգետնյա հեռախոսագծերի անցկացման համար:

7. Հախճապակե ու ապակե իրերի արտադրություն

Հանրապետության շինանյութերի արդյունաբերության համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հախճապակե իրերի արտադրությունը: Այսպիսի իրեր արտադրվում են հատկապես Երևանի ու Արտաշատի հախճապակու գործարաններում:

Այդ գործարաններում արտադրվում են շենքերի սանիտարական հանգույցները կահավորելու և ձևավորելու համար անհրաժեշտ իրեր, երեսապատման ու հատակապատման սալիկներ, կենցաղային նշանակություն ունեցող ամանեղեն, կոյուղու խողովակներ և այլ արտադրանք:

Հանրապետությունում ապակու արտադրությունը հիմնականում ներկայացված է ապակե շշերի ու բյուրեղապակյա իրերի արտադրությամբ: Ապակե շշերի արտադրությունը իրականացվում է Արզնու ու Արմավիրի ապակե տարաների գործարաններում, իսկ բյուրեղապակյա իրերի արտադրությունը՝ Բյուրեղավանի (Արզնու մոտ) գործարանում:

Ինչպես արդյունաբերության մյուս ճյուղերում, շինանյութերի արդյունաբերության արտադրատեսակների ծավալները նույնպես 1990–ական թվականների սկզբներից մեծ չափերով կրճատվել են:

Ստորև զետեղված աղյուսակում տրված են շինանյութերի արդյունաբերության գլխավոր արտադրատեսակների ծավալները վերջին տարիներին.

Աղյուսակ 19

Արտադրանքի տեսականին	Չափի միավ.	Տարիներ					
		1995	1996	1997	1998	2002	2003
Ցեմենտ	հազ. տ	228,0	282,0	293,0	314,0	354,5	384,3
Գաջ	//	33,6	17,3	18,2	15,2	44,9	57,8
Կիր	//	–	–	–	–	4,9	4,4
Երկաթբետոնե հավաքովի կառուցվածքներ	հազ. մ^3	37,0	60,0	41,0	35,0	69,3	83,4
Բնական շինանյութեր (ծանր՝ ավազ, խիճ և այլն)	//	101,0	119,0	360,0	175,0	269,7	325,4
Բնական ծակոտկեն, թեթև լցանյութեր (պեմզա, խարամ և այլն)	//	272,0	150,0	72,0	96,0	111,1	131,7
Կանոնավոր կտրվածքի տուֆ	//	75,8	69,6	87,1	85,6	67,5	75,6
Երեսապատման սալեր բնական քարից	հազ. մ^2	50,8	56,7	42,4	42,9	69,3	83,6
Ապրանքային բետոն	հազ. մ^3	9,4	11,9	22,6	28,8	30,8	55,4

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը աշխարհի սակավանտառ երկրներից է: Անտառները կազմում են հանրապետության տարածքի 10–12%–ը (մինչդեռ երկրագնդի ցամաքի 34–35% անտառածածկ է): Այդ նշանակում է, որ Հայաստանի անտառները չունեն արդյունաբերական նշանակություն: Մեր լեռնային, բարդ ռելիեֆի պայմաններում եղած անտառաշերտերը ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, կլիմայապաշտպան, ռեկրեացիոն նշանակություն: Մեր անտառներում անթույլատրելի է անտառների զանգվածային հատումը (զանգվածային հատման համար անհրաժեշտ է, որ հանրապետության տարածքի առնվազն 25%–ը անտառածածկ լինի), այստեղ թույլատրվում է միայն իրականացնել սանիտարական հատում:

Սակայն 1990–1996 թթ. հանրապետությունում ստեղծված էներգետիկական ճգնաժամի հետևանքով զանգվածային կերպով իրականացվեց անտառահատում, մթերված փայտանյութը որպես վառելիք օգտագործելու համար: Դրա հետևանքով զգալի չափով կրճատվեցին անտառաշերտերը, որոնք այժմ վերականգնվում են:

Հանրապետության անտառային ու փայտամշակման արդյունաբերությունը փաստորեն երկու ենթաճյուղ ունի (անտառային, փայտամշակման): ***Անտառային արդյունաբերությունը*** զբաղվում է անտառների պահպանության, վերարտադրության, նոր անտառաշերտերի ստեղծման և սանիտարական նպատակներով փայտանյութի մթերման հարցերով:

Փայտամշակման արդյունաբերությունը զբաղվում է մթերված անտառանյութից սղոցանյութի, կահույքի, փայտե բազմատեսակ շինանյութերի ու այլ իրերի արտադրությամբ:

Քանի որ մեր անտառները արդյունաբերական նշանակություն չունեն, իսկ հանրապետության պահանջը շատ մեծ է փայտանյութի բնագավառում, ապա խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում անհրաժեշտ ամբողջ փայտանյութը ներմուծվում էր Ռուսաստանից (հիմնականում Արևելյան Սիբիրից): Տարեկան ներմուծվում էր շուրջ 1 մլն մ^3 փայտանյութ, տեղում մթերվում էր 60–70 հազ. մ^3 փայտ: Հանրապետության փայտամշակման խոշոր կենտրոնը Երևանն է, որտեղ գործում են փայտի սղոցման բազմաթիվ ձեռնարկություններ, կահույքի ֆաբրիկաներ, փայտից շինանյութերի արտադրության բազմաթիվ կետեր:

Կահույքի և առհասարակ փայտամշակման կենտրոններ են նաև Գյումրին, Վանաձորը, Արմավիրը, Իջևանը, Կապանը, Արտաշատը, Մասիսը:

1990–ական թվականների սկզբներից հանրապետությունում ստեղծված տնտեսական ծանր իրավիճակի, դրսից ներմուծվող վառելիքի ու փայտանյութի խիստ կրճատման հետ կապված, մեծ չափով անտառաշերտեր հատվեցին և հիմնականում հատված փայտանյութը օգտագործվեց որպես վառելիք: Այդ հանգամանքը անկասկած բացասական անդրադարձավ առանց այն էլ մեր սակավանտառ հանրապետության բուսածածկույթի վրա: Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ոչ միայն վերականգնվեն հատված անտառաշերտը, այլև ստեղծվեն նոր անտառաշերտեր: Ցավոք, այժմ էլ շարունակվում են անօրեն անտառահատումները, որոնք մեծ վնասներ են հասցնում հողային, ջրային, ռեկրեացիոն ռեսուրսների, առհասարակ բնապահպանական հիմնախնդիրներին: 2000 թ. փայտանյութի մթերումը կազմել է 7,3, 2001 թ.՝ 7,3, 2002 թ.՝ 8,1 հազ. մ^3, սղոցանյութի արտադրությունը համապատասխանաբար՝ 4,0, 3,5 և 3,7 հազ. մ^2, իսկ մանրատախտակի արտադրությունը՝ 17,3, 16,4 և 8,5 հազ. մ^2:

Սրանք պաշտոնական վիճակագրական տվյալներ են, սակայն փայտանյութի մթերումը անօրեն ձևով բազմակի անգամ ավելի շատ է: Դրանք անխնա հատվում և վաճառվում են որպես վառելանյութ:

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն ծանր արդյունաբերության վերը նշված բոլոր ճյուղերի, որոնք թողարկում են հիմնականում արտադրության միջոցներ, թեթև արդյունաբերությունը թողարկում է հիմնականում լայն սպառման արտադրանք:

Հայաստանի Հանրապետությունը թեթև արդյունաբերության թողարկվող արտադրանքի ծավալով զիջում էր միայն մեքենաշինությանը:

Թեթև արդյունաբերության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում մինչև 1990–ական թվականների սկիզբը կազմել է 23–24,5%: Մեզ մոտ այս ճյուղը պետական մակարդակով սկսել է զարգանալ հիմնականում 1920–ական թվականներից, բուռն զարգացման է հասել 1950–ական թվականներից, երբ ձևավորվել են թեթև արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ: Թեթև արդյունաբերությունը մեր հանրապետությունում գերազանցապես հիմնված է ներմուծվող, մասնակիորեն նաև տեղական հումքի բազայի վրա: Տեղական հիմնական հումքատեսակները բուրդը, մորթեղենը և սինթետիկ թելերն են, որոնք բավարարում են խոշոր պահանջի փոքր մասը: Ճյուղի պահանջները բա-

վարարելու համար ներմուծվում են մեծ քանակությամբ բամբակյա, բրդյա մանվածք, պատրաստի կաշվեղեն և շատ այլ հումքատեսակներ: Հայաստանը դեռ շատ հնուց հայտնի էր բրդից, բամբակից, բոժոժից մետաքսե գործվածքների արտադրությամբ: Սակայն մինչև 1920–ական թվականների սկիզբը դրանք արտադրվում էին տնայնագործական մեթոդով: Խորհրդային իշխանության տարիներին այստեղ ծնավորվեց հզոր թեթև արդյունաբերություն՝ իր ենթաճյուղերով: Դրանցից թողարկվող արտադրանքի ծավալով առաջին տեղը զբաղեցնում էր ***տեքստիլ արդյունաբերությունը***, որը հիմնականում ընդգրկում է **բամբակյա, բրդյա և մետաքսյա** գործվածքների արտադրությունը:

Արդյունաբերական եղանակով **բամբակյա** գործվածքների արտադրություն հանրապետությունում ստեղծվել է 1920–ական թվականների սկզբներից: Այս գործում Հայաստանին մեծ օգնություն են ցույց տվել Իվանովոյի մարզի Վիչուգա քաղաքի տեքստիլագործները: Ռուս բարեկամները 1922 թ. Հայաստան են ուղարկել 450 ջուլհակագործական հաստոց և 1800 մանածագործական իլիկ, որոնք էլ հիմք են հանդիսացել Գյումրի քաղաքում տեքստիլ կոմբինատի կառուցման համար: Ի դեպ, բացի սարքավորումներ տրամադրելուց, այստեղ են ժամանել նաև մեծ թվով ռուս տեքստիլագործ մասնագետներ, որոնք կարևոր դեր են խաղացել այդ կոմբինատի ստեղծման, զարգացման համար: Գյումրիի տեքստիլ կոմբինատը, որը հանրապետության բամբակյա գործվածքներ արտադրող խոշորագույն ձեռնարկությունն էր, նախկին ԽՍՀՄ տարածքում նման առավել հայտնի ձեռնարկություններից էր: Մինչև 1950–ական թվականների վերջերը այս ենթաճյուղի համար որպես հումք օգտագործվում էր հիմնականում Արարատյան դաշտում աճեցվող բամբակը: Հետագայում, երբ նպատակահարմար համարվեց բամբակի աճեցումը այստեղ դադարեցնել (1957 թվականից), հանրապետությունը այդ նպատակով հումք (բամբակի մանվածք) սկսեց ներմուծել ԽՍՀՄ մյուս շրջաններից, հատկապես միջինասիական հանրապետություններից: Այժմ էլ տեքստիլ արդյունաբերության այս ենթաճյուղի համար անհրաժեշտ հումքը ներմուծվում է: Գյումրիում, բացի նշված խոշոր կոմբինատից, ծնավորվել էր նաև բամբակյա մանվածքային ֆաբրիկա (նախկինում կոչվում էր Լուկաշինի անվան): Զգալի քանակությամբ բամբակյա գործվածքներ արտադրվում է նաև Մարալիկի, Ալավերդու, Երևանի ու որոշ այլ վայրերում գտնվող համապատասխան ձեռնարկություններում:

Բրդյա գործվածքի արտադրության խոշորագույն ձեռնարկությունը Երևանի բրդյա նուրբ գործվածքների կոմբինատն է, բացի դրանից, Երևանում ծնավորվել էր նաև մահուդի ֆաբրիկա:

Բրդյա գործվածքների ու գորգերի արտադրության համար անհրաժեշտ հումքի՝ բրդի մի մասն ապահովվում է տեղական հումքով: Մեծ քանակությամբ հումք և կիսաֆաբրիկատ (մանվածք) ներմուծվում է դրսից:

Մետաքսյա գործվածքների արտադրությունը *հանրապետության տեքստիլ* արդյունաբերության կարևոր ենթաճյուղն է: Հնում Հայաստանում բավականին զարգացած է եղել շերամապահությունը, որի արտադրանքի՝ բոժոժի որոշ մասը տեղում օգտագործվել է մետաքսի թել ու տնայնագործական եղանակով նաև գործվածք արտադրելու համար, իսկ մեծ մասը արտահանվել է:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներում որոշ քանակությամբ բոժոժ արտադրվում էր, հետագայում անհիմն ձևով այն դադարեցվեց: Չնայած դրան, Երևանում կառուցվել է մետաքսի մի հզոր կոմբինատ, որի հումքը գերազանցապես ներմուծվում էր: Բացի դրանից, Վանաձորում կառուցվել է արհեստական մետաքսաթելի գործարան, որի արտադրանքը ներմուծվող հումքի հետ միասին օգտագործվում էր Երևանի մետաքսի կոմբինատում գործվածքներ արտադրելու համար: Այդ կոմբինատը, որը նախկին ԽՍՀՄ–ի նման ձեռնարկությունների մեջ խոշորագույներից մեկն էր, վերջին ժամանակներում արտադրական կապերի մեջ էր Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի հետ, որտեղից ստանում էր կիսաֆաբրիկատ:

Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ունեն բնական մետաքսի արտադրության համար մեծ հնարավորություններ: Այստեղ պայմանները շատ նպաստավոր են թթի պլանտացիաների ընդլայնման, շերեմապահության բուռն զարգացման և մետաքսի արտադրությունը բնական հումքով լրիվ ապահովելու համար:

Հայաստանը շատ հնուց հայտնի է նաև ***գորգագործությամբ:***

Խորհրդային իշխանության տարիներին այն նոր բնույթ է ստացել, ստեղծվել են մեքենայացած, կիսամեքենայացված գորգագործական ֆաբրիկաներ, իսկ գյուղական շատ վայրերում շարունակվում է նաև ձեռագործ գորգերի արտադրությունը: Այժմ հանրապետության գորգագործության խոշորագույն ձեռնարկությունը Իջևանի գորգագործական կոմբինատն է: Այդպիսի խոշոր կոմբինատ է գործում նաև Երևանում: Գորգագործական ձեռնարկություններ են գործում նաև Գյումրիում, Գավառում, Վարդենիսում, Արթիկում, Գորիսում, Եղեգնաձորում, Ստեփանավանում, Մասիսում և հանրապետության այլ վայրերում:

Տեքստիլ արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերից արտադրանքի ծավալով (արժեքով) առաջնակարգ տեղ է զբաղեցրել բրդյա գործվածք-

ների ու գորգերի արտադրությունը: Այս ենթաճյուղի տեսակարար կշիռը տարբեր տարիների (մինչև 1990–ական թվականները) կազմել է մինչև 29 տոկոս, բամբակյա գործվածքներինը՝ շուրջ 25, իսկ մետաքսյա գործվածքներինը՝ 10–12 տոկոս:

Տեքստիլ արդյունաբերության համակարգում բավականին բարձր տեսակարար կշիռ ունի *տրիկոտաժեղենի ու գուլպեղենի արտադրությունը:*

Հանրապետությունը տրիկոտաժեղենի ու գուլպեղենի արտադրությամբ, հատկապես թողարկվող արտադրանքի որակով հայտնի էր ամբողջ ԽՍՀՄ–ում, ինչպես նաև դրա սահմաններից դուրս:

Բարձրորակ տրիկոտաժի արտադրությամբ առավել հայտնի են Գյումրիի, Սպիտակի, Վանաձորի, Երևանի, Նուբարաշենի (նախկինում Սովետաշեն) ֆաբրիկաները: Այդպիսի ձեռնարկություններ կան նաև Գավառում, Տաշիրում, Արթիկում, Արարատում, Դիլիջանում, Արտաշատում, Գորիսում և այլուր: Մեր հանրապետության սահմաններից դուրս լայն ճանաչում էր ստացել հատկապես Սպիտակի ու Վանաձորի տրիկոտաժի ֆաբրիկաների արտադրանքը: Սպիտակի ֆաբրիկան 1988 թ. երկրաշարժի ժամանակ լրիվ ավերվել է, որը հետագայում վերականգնվել է:

Բարձրորակ գուլպեղենի արտադրությամբ առավել հայտնի են Գյումրիի ու Երևանի գուլպեղենի ֆաբրիկաները:

Հանրապետության տեքստիլ արդյունաբերության համակարգում, ինչպես նշվեց, թողարկվող արտադրանքի ծավալով մեծ տեղ է զբաղեցնում տրիկոտաժեղենի ու գուլպեղենի արտադրությունը: Այս ենթաճյուղի տեսակարար կշիռը արդյունաբերության ամբողջ արտադրանքի ծավալում մինչև 1990–ական թվականները կազմել է ավելի քան 30 տոկոս:

1970–1988 թվականներին հանրապետությունում տրիկոտաժեղենի արտադրությունը շատ արագ աճել ու 60 մլն հատից տարեկան հասել է շուրջ 106 մլն–ի: Նույն ժամանակաշրջանում գուլպեղենի արտադրությունը տարեկան 42 մլն զույգից հասել է 111.2 մլն զույգի: Իսկ գորգերի արտադրությունը 1970 թ. կազմել է 1.3 մլն մ^2, 1975 թ.՝ 2.4, 1980 թ.՝ 3.1 մլն մ^2, հետագայում զգալիորեն իջել է և 1988 թ. կազմել է 1.9 մլն մ^2:

1990 թվականից սկսած՝ հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված, արդյունաբերության մյուս ճյուղերի նման, մեծ չափերով իջել է նաև նշված արտադրատեսակների ծավալը:

Մասնավորապես, 1990 թ. տրիկոտաժի արտադրությունը կազմել է 85.5 մլն հատ, գուլպեղենը՝ 63.9 մլն զույգ, գորգերինը՝ 1.3 մլն մ^2, իսկ հետագա տարիներին դրանց ծավալը շատ իջել է:

Կարի արդյունաբերությունը թեթև արդյունաբերության համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում և շատ սերտորեն կապված է տեքստիլ արդյունաբերության հետ, քանի որ վերջինս նրա հումքային բազան է հանդիսանում: Կարուձևի գործը տնայնագործական եղանակով գոյություն ուներ Հայաստանում շատ հնուց, իսկ մինչև 1920–ական թվականները հանրապետության տարբեր վայրերում, հատկապես քաղաքատիպ բնակավայրերում կային կարի բազմաթիվ արհեստանոցներ:

Թեթև արդյունաբերության այս բնագավառը բուռն զարգացում ապրեց խորհրդային իշխանության տարիներին, հատկապես 1950–ական թվականներից հետո: Հանրապետության բոլոր քաղաքներում, շրջկենտրոններում, խոշոր գյուղերում ստեղծվեցին մեքենայացված կարի խոշոր արհեստանոցներ, իսկ շատ քաղաքներում կազմակերպվեցին կարի խոշոր ֆաբրիկաներ, միավորումներ: Դրանցից առավել հայտնի են Երևանի Կլարա Ցետկաներ, միավորումները: Դրանցից առավել հայտնի են Երևանի Կլարա Ցետկինի անվան և «Գարուն» կարի հզոր միավորումները, որոնք իրենց մասնաճյուղերն ունեին հանրապետության տարբեր վայրերում: Հանրահայտ էր նաև Գյումրիի կարի արտադրական միավորումը, որը իր մասնաճյուղերը ունի Շիրակի տարբեր գյուղերում: Այդպիսի ձեռնարկություններից հայտնի են նաև Սպիտակի, Վանաձորի, Ստեփանավանի, Ալավերդու, Գավառի, Չարենցավանի կարի ֆաբրիկաները:

Հանրապետության կարի ֆաբրիկաների արտադրանքը լայն ճանաչում է ստացել նախկին ԽՍՀՄ շատ հանրապետություններում, իսկ այժմ նաև հեռավոր արտասահմանյան երկրներում:

Կաշվե կոշիկի արդյունաբերությունը հանրապետության թեթև արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերից մեկն է: Տնայնագործական եղանակով կոշիկի արտադրությունը Հայաստանում շատ հին պատմություն ունի:

1920–ական թվականներից այն դրվել է արդյունաբերական հիմքերի վրա, իսկ 1950–ական թվականների սկզբներից այս ենթաճյուղը բուռն զարգացում է ապրում: Սկզբնական ժամանակաշրջանում կոշիկի արտադրության համար հումքային բազան հանդիսանում էր տեղի հումքը: Այն վերամշակվում է Երևանի կաշվի նախկին միավորման (Շահումյանի անվան) երկու գործարաններում: Դրանցից խոշորը Երևանի կաշվի գործարանն է, մյուսը՝ Մասիսի կոշկի նախնական վերամշակման գործարանը: Չնայած Երևանի գործարանում արտադրվող քրոմակաշին և կոշտ կաշին որակով բարձր են, սակայն տեղական հումքը հետագայում անբավարար էր, 1950–ական թվականներից բուռն թափով զարգացած կոշիկի արտադ-

ության համար: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ հանրապետության տեղական հումքից բացի սկսեց ներմուծվել մեծ քանակությամբ պատրաստի կաշվեղեն:

Եթե 1927/28 տնտ. տարում հանրապետության կոշտ կաշվի արտադրանքը կազմել է 165, 1970 թ.՝ 270, 1950 թ.՝ 549 հազ. դմ², ապա 1978 թ. այն կազմել է 2069 հազ. դմ², 1927/28 տնտ. տարում քրոմակաշվի արտադրությունը կազմել է 12,7, 1940 թ.՝ 254,4, 1988 թ.՝ 218,6 հազ. դմ²:

Հանրապետությունում արտադրվող հումքի այսպիսի աճի ու ներմուծվող մեծ քանակությամբ հումքի բազայի վրա մինչև 1990 թ. սկզբները բուռն զարգացում է ապրել կաշվե կոշկեղենի արտադրությունը:

Հատկապես 1960–ական թվականներից հետո հանրապետությունում ձևավորվել են կաշվե կոշկեղենի արտադրության ժամանակակից ֆաբրիկաներ, որոնց բազայի վրա ստեղծվել էին խոշոր միավորումներ:

Կոշկի այդպիսի առավել խոշոր միավորումը «Մասիս» արտադրական միավորումն էր: Այս միավորման մեջ մտնող ձեռնարկությունները մինչև 1990–ական թվականների սկզբները տալիս էին հանրապետությունում արտադրվող կաշվեկոշկեղենի մինչև 60 տոկոսը:

«Մասիս» միավորումից բացի հանրապետությունում ձևավորվել են նաև «Նաիրի» և «Լյուքս» միավորումները՝ իրենց ձեռնարկություններով: Հանրապետության կաշվեկոշկեղենի արտադրության խոշորագույն կենտրոնը Երևանն է, այնուհետև՝ Գյումրին ու Վանաձորը: Կարևոր է նշել, որ կոշկի արտադրությամբ Հայաստանի Հանրապետությունը մեծ ճանաչում էր ստացել ոչ միայն ամբողջ ԽՍՀՄ–ում, այլև նրա սահմաններից դուրս: Հայկական կոշկեղենը իրենց որակական հատկանիշների տեսակետից մեծ պահանջարկ էր ներկայացնում: Արդեն 1970 թ. հանրապետությունում կաշվե կոշիկի արտադրությունը կազմել է 10,3 մլն զույգ, 1980 թ.՝ 13,8 մլն զույգ, 1987 թ.՝ 20,9 մլն. զույգ, 1988 թ.՝ 20,3 մլն զույգ:

Հանրապետության թեթև արդյունաբերության համակարգում նշանակալից տեղ են զբաղեցնում Երևանի կաշվե գալանտերեայի ու Վանաձորի մորթի–մուշտակեղենի ֆաբրիկաները:

1990–ական թթ. հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների, սեփականաշնորհման հետևանքով, ինչպես արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերում, թեթև արդյունաբերության արտադրանքի ծավալները նույնպես մեծ չափերով կրճատվեցին:

Թեթև արդյունաբերության վերը նշված ենթաճյուղերի ձեռնարկությունների մեծ մասը սեփականաշնորհումից հետո կազմալուծվել են, մյուսները դեռևս աշխատում են ոչ լրիվ հզորությամբ:

Ստորև զետեղված աղյուսակում տրված են թեթև արդյունաբերության համակարգում թողարկվող հիմնական արտադրատեսակների ծավալները վերջին տարիների տվյալներով.

Աղյուսակ 20

Արտադրանքի տեսակները	Չափի միավորը	Տարիները				
		1998	1999	2000	2001	2002
Բամբակյա գործվածք	հազ.մ²	284,0	157,0	219,0	148,0	571,0
Բրդյա գործվածք	//	82,0	9,0	48,0	28,0	38,0
Մետաքսյա գործվածք	//	262,0	21,0	16,0	–	–
Գուլպեղեն	հազ. հատ	676,0	506,0	852,0	549,0	472,0
Տրիկոտաժեղեն	//	914,0	1858,0	1762,0	1996,0	517,0
Գորգեր	հազ.մ²	19,0	18,0	19,0	18,0	15,0

ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Սա արդյունաբերության այն ճյուղն է, որը բնակչությանը ապահովում է կենսական նշանակություն ունեցող բոլոր տեսակների սննդամթերքներով: Սննդի արդյունաբերությունը դեռ մինչև խորհրդային կարգերի հաստատումն էլ Հայաստանի արդյունաբերության համեմատաբար զարգացած երկու ենթաճյուղերից մեկն էր (լեռնահանքային արդյունաբերության և պղնձաձուլության հետ միասին):

Մինչև 1920–ական թթ. սկիզբները սննդի արդյունաբերության ենթաճյուղերից Հայաստանում առավել հանրահայտ էին գինու և կոնյակի արտադրությունն և պանրագործությունը, որոնց արտադրանքը արտահանվում էր նաև Ռուսաստան և եվրոպական երկրներ, իսկ շամպայն գինին՝ նաև Ամերիկա: Մյուս ենթաճյուղերից այստեղ այս կամ այն չափով զարգացած էր պահածոների (մրգերից արտադրվող), բուսական յուղի (հատկապես կտավատի ձեթի), չորացված մրգերի, ապխտած ձկան և շատ այլ սննդամթերքների արտադրությունը:

Հայաստանի սննդի արդյունաբերությունը ժամանակակից արդյունաբերական եղանակով վերակառուցվեց 1920–ական թթ. ու բուռն թափով, հատկապես 1940–ական թթ. հետո: Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում ձևավորվեցին ու զարգացան սննդի արդյունաբերության հետևյալ են-

թաճյուղերը՝ ալրաղացային, հացաբուլկեղենի, հրուշակեղենի, մսի ու երշիկեղենի, կաթի վերամշակման ու կաթնամթերքների, պանրի, կենդանական յուղի, բուսական յուղի, պահածոների, սպիրտի–օղու, գինու–կոնյակի, գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ջրի, ծխախոտի ու այլ ենթաճյուղեր: Թողարկվող արտադրանքի ծավալով (արժեքային արտահայտությամբ) սննդի արդյունաբերությունը մեքենաշինությունից ու թեթև արդյունաբերությունից հետո զբաղեցնում է հաջորդ տեղը:

Ալրաղացային արդյունաբերությունը սովորաբար տեղաբաշխվում է սպառման սկզբունքով: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ հանրապետության ալրաղացային խոշորագույն կոմբինատը կառուցվել է Երևան քաղաքում: Երևանի ալրաղացային կոմբինատը ապահովում է ոչ միայն մայրաքաղաքի, այլև ամբողջ Արարատյան դաշտի հատկապես քաղաքային բնակավայրերի հացի գործարանների պահանջները:

Քանի որ Վայքում և Սյունիքի մարզում դեռևս ալրաղացային խոշոր ձեռնարկություն չկա, ապա այս մարզերի քաղաքային բնակավայրերի հացի գործարանների պահանջներն ալյուրով հիմնականում բավարարվում է Երևանի ալրաղացային կոմբինատից ստացվող արտադրանքով:

Ալրաղացային մյուս խոշոր ձեռնարկությունը գտնվում է Սևան քաղաքում, այն հիմնականում բավարարում է Սևանի ավազանի ու Տավուշի մարզի քաղաքային բնակավայրերի հացի գործարանների պահանջները ալյուրով:Մի այլ խոշոր ալրաղաց կոմբինատ էլ գործում էր Սպիտակ քաղաքում, որը ավերվել է 1988 թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով: Այժմ այն վերականգնված է, փաստորեն կառուցվել է նոր ձեռնարկություն:

Բացի այդ նշվածներից, հանրապետության տարբեր վայրերում այժմ գործում են փոքր հզորությամբ ալրաղացներ, գյուղական շատ վայրերում վերականգնվել են ջրաղացները:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող հացահատիկը չի ապահովում հանրապետության պահանջները, ապա ալրաղացային խոշոր ձեռնարկությունների համար անհրաժեշտ հացահատիկը հիմնականում ներմուծվում է:

Հացաբուլկեղենի արդյունաբերությունը բացառապես տեղաբաշխվում է սպառման սկզբունքով: Հանրապետության մեծ ու փոքր քաղաքներում, քաղաքատիպ բնակավայրերում և որոշ գյուղերում գործում են հացի գործարաններ: Երևանում գործում են հացի մի քանի խոշոր գործարաններ և մասնավոր ձեռներեցների կողմից կազմակերպված բազմաթիվ մանր ձեռնարկություններ (հացի փուռ): Ընդհանուր առմամբ միայն Երևան քաղաքում օրական արտադրվում է 350–400 տոննա հաց: Հացի խոշոր գործարաններ կան նաև Գյումրիում, Վանաձորում, Հրազդանում, Կապանում և մյուս քաղաքներում:

Գյուղական բնակավայրերում հայկական ազգային հաց՝ լավաշ, թխում են թոնիրներում: Բոլոր գյուղերում համարյա ամեն մի գյուղական տուն ունի իր թոնիրը:

Հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրությունը հիմնականում կենտրոնացված է խոշոր քաղաքներում: Առավել հանրահայտ են Երևանի հրուշակեղենի ու մակարոնեղենի ֆաբրիկան: Մինչև 1980–ական թթ. վերջերը հանրապետությունում տարեկան արտադրվում էր 40–47 հազ. տ հրուշակեղեն: Մակարոնեղենի արտադրությունը տարեկան կազմում էր 16–20 հազ. տոննա:

Գինու–կոնյակի, օղու և սպիրտի արտադրությունը հանրապետության սննդի արդյունաբերության հին ու կարևորագույն ենթաճյուղերից է:

Դեռևս մինչև այս ենթաճյուղի խոշոր ու կատարելագործված գործարանների երևան գալը Հայաստանում առկա էր գինու–օղու տնայնագործական արտադրությունը: Ճիշտ է, գինու, օղու և սպիրտի կատարելագործված առաջին գործարանը հիմնել է Ն. Թահիրովը (1887 թ.), սակայն Հայաստանում խոշոր գործարանային տիպի գինու–կոնյակի–օղու արտադրությունը հիմնականում կապված է ռուս կապիտալիստ Շուստովի անվան հետ:

Հայկական գինին ու կոնյակը մինչև Շուստովի կողմից արևմտաեվրոպական երկրների շուկաներ մեծ չափերով դուրս բերելն էլ նախկինում նույնպես արտահանվում էր:

1899 թ. Հայաստանից արտահանվել է 77240, իսկ 1980 թ.՝ 189768 շիշ կոնյակ ու ավելի մեծ չափով գինի, որի մեծ մասը վաճառվել է Մոսկվայում, Բաքվում, Թբիլիսիում, Ղարսի մարզում և Պարսկաստանում:

Հայաստանում ու նրա սահմաններից դուրս մեծ համբավ էին ձեռք բերել հատկապես «Մադերա», «Մուսկաթ», «Պորտվեյն», «Դալմա» և այլ տեսակի գինիները:

Գինու–կոնյակի, օղու–սպիրտի արտադրությունը արմատապես վերակառուցվեց և բուռն զարգացման հասավ խորհրդային իշխանության տարիներին:

Հաշվի առնելով գինու արտադրության տեղաբաշխման հիմնական սկզբունքը՝ հումքի առկայության սկզբունքը, հանրապետության գինեգործական խոշոր ձեռնարկությունները տեղաբաշխված են նրա հումքային գլխավոր բազայում, այսինքն՝ Արարատյան դաշտում: Խորհրդային իշխանության տարիներին այդ գործարաններն ընդգրկված էին հանրահայտ «Արարատ» տրեստի կառուցվածքի մեջ:

Ըստ որում, հանրապետության գինու արտադրության խոշորագույն ձեռնարկությունը Երևանի գինու կոմբինատն է: Ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի տաղանդով կառուցված, Հրազդան գետի ափին գտնվող բազալտակերտ այդ յուրատիպ շենքում տեղավորված գործարանը նաև շատ հետաքրքիր թանգարան է:

Երևանի գինու կոմբինատի մառաններում պահվում են 1890–ական թվականներից մինչև այժմ Հայաստանում արտադրված գինու բոլոր տեսակների նմուշները: Ի դեպ, այս եզակի գործարանը այժմ սեփականաշնորհված է, և սեփականատեր ձեռներեցը արմատապես վերանորոգել է այն ժամանակակից պահանջներին համապատասխան՝ պահպանելով շուստովյան ժամանակաշրջանի բոլոր նմուշները և հետաքրքիր յուրահատկությունները: Այժմ այս գործարանում արտադրվում է ոչ միայն գինի, այլև կոնյակ և օղի՝ հետաքրքիր շշատեսակներով:

Երևանում է գտնվում նաև շամպայն գինիների արտադրության խոշոր գործարանը:

Բացի Երևանից, գինու արտադրության նշանավոր կենտրոններն են Արմավիրը, Օշականը, Էջմիածինը, Արտաշատը, Արարատը և Արարատյան դաշտի այլ բնակավայրեր: Գինու գործարաններ կան նաև Սյունիքի մարզում (Մեղրի), Վայքում (Գետափ), Տավուշի մարզում (Իջևան, Այրում, Այգեպար և այլն):

«Արարատ» տրեստը գինու արտադրության մասնաճյուղեր ուներ նաև Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Վոլգոգրադում ու այլ վայրերում:

Որակական և քանակական առումով հանրապետությունում բարձր զարգացման է հասել նաև ***կոնյակի արտադրությունը***. Երևան քաղաքում, Հրազդան գետի աջ ափի բարձունքին (Հաղթանակ կամրջի մոտ) կառուցված տուֆակերտ շենքը, որը քաղաքի ճարտարապետական առավել հմայիչ շինություններից է, հանրապետության կոնյակի խոշոր գործարան է: Այստեղ արտադրվող հայկական բազմատեսակ կոնյակները մեծ համբավ են ձեռք բերել ամբողջ աշխարհում: Կոնյակի արտադրության համեմատաբար նոր ձեռնարկություններ են ստեղծվել նաև Արմավիրում (Հոկտեմբերյանում) և Արարատյան դաշտի այլ քաղաքներում: Զգալի քանակությամբ հայկական կոնյակ թողարկվում էր նաև «Արարատ» տրեստի Մոսկվայի ու Լենինգրադի մասնաճյուղերի ձեռնարկություններում, Հայաստանից տեղափոխվող կիսաֆաբրիկատների բազայի վրա:

Եթե 1913 թ. Հայաստանում գինու արտադրությունը կազմել է 188 հազ. դեկալիտր, ապա 1979 թ. այդ կարևոր արտադրանքի թողարկումը արդեն հասել էր 9240 հազ. դեկալիտրի: Նույն ժամանակաշրջանում կոնյակի արտադրությունը 48 հազ. դեկալիտրից հասել էր 1206 հազ. դեկալիտրի:

Հայկական գինիներն ու կոնյակները, ինչպես ասվել է, լայն ճանաչում են ստացել աշխարհի շատ երկրներում: Դրանք մշտապես ցուցադրվել են միջազգային ցուցահանդեսներում, որտեղ արժանացել են ոսկե, արծաթե բազմաթիվ մեդալների ու դիպլոմների: Առաջին անգամ հայկական կոնյակը միջազգային լայն ճանաչման է արժանացել 1904 թ. Փարիզում, որտեղ այն արժանացել է «Գրան պրի» մրցանակի: Մինչև 1990–ական թթ. միջազգային ցուցահանդեսներում բազմիցս ոսկե և արծաթե մեդալների են արժանացել «Ընտիր», «Երևան», «Հայաստան», «Դվին», «Տոնական», «Նաիրի», «Հոկտեմբերյան», «Ախթամար» և այլ հայկական կոնյակներ: Այդպիսի պարգևների են նաև արժանացել «Բյուրական», «Նեկտարենի», «Աշտարակ», «Այգեշատ», «Արևշատ», «Արևիկ», «Երևանի կարմիր», «Հայկական վարդաբույր» և հայկական գինու այլ տեսակներ:

Արդեն մինչև 1984 թ. հայկական կոնյակները միջազգային ցուցահանդեսներում արժանացել էին 48, իսկ գինիները՝ 70 ոսկե մեդալների: Հետագա տարիներին դրանք նույնպես մշտապես ցուցադրվել են աշխարհի շատ երկրներում և նվաճել այդպիսի պարգևներ:

Շամպայն գինու արտադրությունը հանրապետությունում 1965 թ. կազմել է 506 հազ. շիշ, իսկ 1979 թ. դրա արտադրանքը հասել էր 5056 հազ. շշի: Հետագա տարիներին էլ մինչև գորբաչովյան կամայական քաղաքականությունը (ոգելից խմիչքների արտադրության կրճատման հանցավոր որոշումը), այսինքն՝ մինչև 1985 թ. հանրապետությունում գինու և կոնյակի արտադրությունը շարունակում էր աճել, որից հետո այն զգալի չափով անկում ապրեց: Գինուց, կոնյակից բացի հանրապետությունում մեծ զարգացում է ունեցել նաև օղու և սպիրտի արտադրությունը: Երևանից բացի այդպիսիք արտադրվում են նաև հատկապես Արարատյան դաշտի քաղաքներում:

1997 թ. սեպտեմբերին Տիրասպոլ քաղաքում կազմակերպված «Կվինտ–97» կոնյակի միջազգային մրցույթին, որին մասնակցում էին 50 երկրներ, Հայաստանը 68 նմուշների ընդհանուր ցուցադրանքում ներկայացված էր «Անի», «Տոնական», «Նաիրի», «Կիլիկիա», «Սպարապետ» կոնյակներով, որոնք բոլորն էլ արժանացան ոսկե մեդալների ու դիպլոմների, իսկ «Սպարապետը» (40 տարեկան կոնյակ) նաև «Գրան պրի» մրցանակի: Այսպիսով՝ արդեն մինչև 1997 թ. հայկական կոնյակները միջազգային մրցույթներում արժանացել են 60 ոսկե մեդալների: 1997 թ. սեպտեմբերին լրացել է Երևանի կոնյակի գործարանի 110–ամյակը: Ցավոք, 1998 թ. փառաբանված այդ գործարանը սեփականաշնորհվել և վաճառվել է ֆրանսիական հանրահայտ «Բրենդի» կոչվող խմիչք արտադրող ֆիրմային:

Գարեջրի ու ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը զգալի տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ: Հայտնի է, որ Հայաստանում գարեջուր արտադրվել է նաև շատ հին ժամանակներում: Խորհրդային իշխանության տարիներին գարեջրի խոշոր գործարաններ են կառուցվել Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Գորիսում, Աբովյանում, Վարդենիսում: Որակով առավել հայտնի են Աբովյանում և Գորիսում արտադրվող գարեջուրը: Եթե 1940 թ. հանրապետությունում գարեջրի արտադրությունը կազմել է 523 հազ. դեկալիտր, ապա 1979 թ. այն հասել էր արդեն 5468 հազ. դեկալիտրի:

Վերջին տարիներին ՀՀ–ում և արտասահմանյան շատ երկրներում մեծ համբավ են ձեռք բերել հայկական «Կոտայք» և «Կիլիկիա» գարեջրի տեսակները, որոնք արդեն միջազգային ցուցահանդեսներում բազմիցս արժանացել են ոսկե մեդալների, դիպլոմների:

Հանրապետության բոլոր քաղաքներում իրականացվում է ոչ ալկոհոլային խմիչքների (լիմոնադ և այլ) արտադրություն: Եթե 1940 թ. դրանց արտադրանքը կազմել է 511հազ. դեկալիտր, ապա 1988 թ. այն հասել է 6.2 մլն դեկալիտրի: Այժմ Երևանում և հանրապետության այլ վայրերում արտադրվում են նաև «Կոկա կոլա», «Ֆանտա» ու այլ տեսակների զովացուցիչ խմիչքներ:

Աղյուսակ 21

Ոչ ալկոհոլային խմիչքների, կոնյակի, շամպայնի, խաղողի գինու, օղու–լիկյորի, գարեջրի արտադրության շարժը վերջին տարիներին (հազ. դեկալիտր)

Տարիներ	Ոչ ալկոհոլային խմիչքներ	Կոնյակ	Շամպայն հազ. շիշ	Խաղողի գինի	Օղի և լիկյոր	Գարեջուր
1	2	3	4	5	6	7
1985	4483	1169	328	6646	1597	6037
1990	4107	614	253	4197	1706	5125
1991	2857	519	195	4333	2557	4102
1992	304	421	71	2576	665	1528
1993	157	423	58	2735	639	695
1994	133	513	87	2271	1040	705
1995	115	235	101	939	1017	535
1996	591	231	114	480	735	294

1	2	3	4	5	6	7
1997	1636	392	152	227	592	504
1999	2227,2	119,3	938,4	489,0	1113,8	842,0
2000	2165,0	287,0	795	362,0	//	794,0
2001	2743,0	503,0	772	639,0	//	997,0
2002	2678,0	605,0	621,9	654,0	//	708,0
2003	3410,2	709,3	670,0	204,2	//	731,1

Հայաստանի Հանրապետությունը լայն ճանաչում ունի նաև հանքային ջրերի արտադրությամբ: Այստեղ արտադրվող բարձրորակ, բուժիչ հանքային առավել հայտնի ջրերից են «Ջերմուկ», «Արզնի», «Բջնի», «Հանքավան», «Արարատ», «Դիլիջան», «Սևան», «Իջևան» և այլ տեսակների հանքային ջրերը: Հանքային ջրի լցման առավել խոշոր գործարանները այժմ գտնվում են Ջերմուկում և Արզնի ավանում:

Հանրապետությունը լայն հնարավորություններ ունի մեծ չափերով ավելացնելու հանքային ջրերի արտադրությունը, քանի որ այստեղ կան այդպիսի բուժիչ ջրերի հարյուրավոր հանքավայրեր, իսկ շահագործվող աղբյուրների կարողության փոքր մասն է միայն օգտագործվում:

Աղյուսակ 22

Հանքային ջրի արտադրության շարժը վերջին տարիներին

Տարիները	Արտադրությունը մլն 0.5 շիշ
1985	295,3
1990	155,8
1991	102,9
1992	15,5
1993	7,6
1994	9,7
1995	14,6
1996	22,9
1997	25,6
1999	22,5
2000	36,1
2001	40,3
2002	36,5
2003	39,0

Պահածոների արտադրությունը հանրապետության սննդի արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկն է:

Պահածոների արտադրությունը հայ ժողովրդի հնագույն զբաղմունքներից մեկն է: Սակայն, ժամանակակից արդյունաբերական եղանակով պահածոների արտադրությունը հանրապետությունում ձևավորվել է 1920–ական թվականներից սկսած, իսկ ավելի բուռն զարգացման է հասել 1950–ական թվականներից սկսած: Հայաստանի Հանրապետության պահածոների արտադրության հումքային բազան գյուղատնտեսությունն է: Դրա համար օգտագործվում են այստեղ աճեցվող արևահամ ծիրանը, դեղձը, կեռասը, բալը, հոնը, մոշը, ընկույզը և բանջարեղենի շատ տեսակներ:

Այստեղ արտադրվում են տասնյակ տեսակի պահածոներ, կոմպոտներ, մուրաբաներ, ջեմեր, բադրիջանի խավիար, տոմատի մածուկ, հյութեր, որոնք իրենց որակական հատկանիշներով լայն ճանաչում են ստացել նաև արտասահմանյան շատ երկրներում:

Հանրապետության պահածոների արտադրությունը հիմնականում տեղաբաշխված է հումքի սկզբունքով: Իսկ քանի որ այստեղ պտուղների ու բանջարեղենի արտադրությունը հիմնականում բաժին է ընկնում Արարատյան դաշտին, ապա պահածոներ արտադրող խոշոր ձեռնարկություններն էլ տեղաբաշխված են այդտեղ:

Մասնավորապես, հանրապետության պահածոների խոշորագույն ձեռնարկությունը Հոկտեմբերյանի (այժմ Արմավիր) գործարանն է, որը հայտնի է նաև թողարկվող արտադրանքի որակական բարձր հատկանիշներով: Այստեղ թողարկվում են տասնյակ տեսակների պահածոներ, սակայն որակով առավել հանրահայտ է տոմատի մածուկը:

Հզորությամբ երկրորդ ձեռնարկությունը Երևանի պահածոների գործարանն էր, որտեղ վերամշակվում էին Արարատյան դաշտի տարբեր վայրերից բերվող պտուղներն ու բանջարեղենը: Սակայն այժմ այն չի գործում:

Հայտնի են նաև էջմիածնի, Արտաշատի, Արարատի, Մասիսի ու Արարատյան դաշտի մյուս վայրերում տեղաբաշխված պահածոների գործարանները: Թողարկվող արտադրանքի որակական հատկանիշներով միջազգային շուկայում մեծ համբավ է ձեռք բերել Մեղրու պահածոների գործարանը, որը հանրահայտ է հատկապես թզի, ընկույզի, դեղձի պահածոներով: Մյուս ռեգիոններում տեղաբաշխված ձեռնարկություններից հայտնի են նաև Տավուշի, Իջևանի, Նոյեմբերյանի տարածաշրջաններում, Վանաձորում, Կապանում, Սևանի ավազանում գտնվող (Մարտունի, Վարդենիս) պահածոների գործարանները: Ստեղծվել են նաև մասնավոր բազմաթիվ նոր մանր ձեռնարկություններ ՀՀ տարբեր մարզերում:

Պահածոների արտադրությունը հանրապետության սննդի արդյունաբերության առավել լավ հնարավորություններ ու հեռանկար ունեցող ենթաճյուղերից է կապված այստեղ արտադրվող պտուղների, բանջարեղենի որակական բարձր հատկանիշների հետ:

1940 թ. հանրապետությունում պահածոների արտադրությունը կազմել է 17.3 մլն պայմանական բանկա, 1970 թ. – 241,4, 1985 թ.– 493,6, 1988 թ.– 489,2, 1990 թ. – 267,4, 1991 թ. – 181,9, 1995 թ. – 32,9, 1997 թ. – 30,8, 1999 թ. – 57,6, 2000 թ. – 66,5, 2001 թ. – 38,0, 2002 թ. – 52,6 մլն, 2003 թ. – 89,6 մլն պայմանական բանկա:

Մսի, երշիկեղենի արդյունաբերությունը թողարկվող արտադրանքի արժեքային արտահայտությամբ հանրապետության սննդի արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերից մեկն է:

Հայ ժողովուրդն անհիշելի ժամանակներից տնայնագործական եղանակով ընտանեկան կարիքները հոգալու նպատակով բանջարեղենի, պտուղների պահածոյացման հետ միասին արտադրում էր նաև ապխտած միս, հիմնականում բաստուրմայի, սուջուխի ձևով: Ապահով ընտանիքները ձմռան ամիսների համար միսը նաև մշակում և պահում էին հալած յուղի մեջ (ղաուրմա կոչվող ձևով): Իսկ 19–րդ դարի վերջերից դարձյալ հիմնականում տնայնագործական եղանակով արտադրվում են նաև երշիկի տեսակներ:

Հանրապետությունում մսի վերամշակման և երշիկեղենի ժամանակակից արդյունաբերությունը հիմնադրվել ու բարձր զարգացման է հասել խորհրդային իշխանության տարիներին:

Մինչև 1950–ական թվականների վերջերը հանրապետությունում մսի վերամշակման, երշիկեղենի արտադրության խոշորագույն ձեռնարկությունը Լենինականի (այժմ Գյումրի) մսի կոմբինատն էր, հաջորդ տեղը զբաղեցնում էր Երևանի կոմբինատը: Հետագայում Երևանի կոմբինատը վերակառուցվել, ընդլայնվել է, որն էլ այժմ հանրապետության խոշորագույն ձեռնարկությունն է:

1950–ական թթ. հետո նախկին սպանդանոցների փոխարեն մսի կոմբինատներ են կառուցվել նաև Գավառ, Կապան, Վանաձոր քաղաքներում: Հանրապետության մյուս քաղաքներում գործում են համեմատաբար փոքր հզորության, տեղական նշանակություն ունեցող ձեռնարկություններ: Հատկապես բազմազան է Երևանի ու Գյումրիի մսի կոմբինատների արտադրանքի տեսականին: Թարմ մսից բացի դրանք թողարկում են տարբեր տեսակների երշիկեղեն, բաստուրմա, սուջուխ և մսից արտադրվող այլ սննդամթերք:

1990–ական թթ. հետո հանրապետությունում ի հայտ են եկել մսամթերքներ թողարկող մասնավոր բազմաթիվ ձեռնարկություններ: Դրանք մսամթերքներ արտադրում էին հիմնականում ներմուծվող մսից: Սակայն վերջին տարիներին անասնապահական մասնավոր տնտեսությունների զարգացման հետ կապված, այժմ թարմ մսի ու երշիկեղենի արտադրությունը հիմնականում իրականացվում է տեղական հումքով: Դրա հետ կապված՝ Երևանի ու Գյումրիի մսի երբեմնի խոշոր կոմբինատների արտադրանքի ծավալները խիստ կրճատվել են:

Ընդհանուր առմամբ, խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունում արտադրվող միսը չի բավարարել տեղի պահանջները, մեծ քանակությամբ միս ներմուծվել է Ռուսաստանից և Ուկրաինայից: Այժմ էլ թեև այդ խիստ կարևորագույն սննդամթերքի զգալի մասը շարունակվում է ներմուծվել, սակայն տեղական արտադրանքը գերակշռում է:

1940 թ. հանրապետությունում մսի ապրտադրությունը կազմել է 8.6 հազ. տոննա, 1970 թ.– 27,3, 1985 թ. – 70,0, 1988 թ.– 75,1, 1997 թ. – 83,7, 1998 թ.– 86 հազ. տոննա (կենդանի քաշով): 1999 թ. այս կարևոր սննդամթերքի արտադրությունը կազմել է 35,6, 2000 թ.– 40,9, 2001 թ. – 38,4, 2002 թ. – 39,9, 2003 թ. – 41,1 հազ. տոննա:

Երշիկեղենի արտադրությունը մինչև 1940 թ. շատ աննշան է եղել, և այդ թվականներին այն կազմել է ընդամենը 900 տոննա, հետագայում դրա արտադրանքն արագ աճել և կազմել է 1965 թ. – 7,0, 1970 թ. – 12,2, 1980 թ. – 20,8, 1988 թ. – 28,5, 1990 թ. – 20,9 հազ. տոննա: Դրանից հետո այդ կարևոր արտադրանքի չափը կտրուկ իջել է: Մասնավորապես՝ 1998 թ. այն կազմել է 236, 1999 թ. – 458, 2000 թ. – 268, 2001 թ. – 1108, 2002 թ. – 1382, 2003 թ. – 1298 տոննա:

Կաթի վերամշակման, կաթնամթերքների, պանրի, կենդանական յուղի արտադրությունը նույնպես առավել բարձր զարգացում է ապրել խորհրդային իշխանության տարիներին: Կաթնամթերքների, հատկապես մածնի, պանրի տարբեր տեսակների, կաթնաշոռի արտադրությունը տնայնագործական եղանակով Հայաստանում զարգացած էր անհիշելի ժամանակներից: Գործարանային եղանակով պանրի ու կենդանական յուղի արտադրությունն այստեղ սկսել է զարգանալ հատկապես 19–րդ դարի երկրորդ կեսերին:

Այդ ժամանակաշրջանում Լոռիում արտադրվող շվեյցարական պանրի համբավը դուրս էր եկել Հայաստանի ու Անդրկովկասի սահմաններից:

Արդեն 1907–1913 թթ. Լոռիում կային պանրի ու կենդանական յուղի արտադրության երկու տասնյակից ավելի գործարաններ, որտեղ արտադրվում էր տարեկան մինչև 30 հազ. փութ պանիր: Իսկ առհասարակ, 1913 թ. Հայաստանում կար պանրի ու յուղի շուրջ 60 գործարան (բնականաբար, այդ գործարանների հզորությունները չպետք է համեմատել այժմյան ձեռնարկությունների հետ), որոնք տարեկան տալիս էին 80–85 հազ. փութ պանիր և 20–25 հազ. փութ յուղ: Խոշոր առևտրականները Լոռիում ու Հայաստանի այլ շրջաններում կազմակերպել էին իրենց գնման կետերը, որտեղից հայկական պանրի արտադրանքի շուրջ 80%–ը արտահանվում էր Մոսկվա, Պետերբուրգ, Ռոստով, Օդեսա և Ռուսաստանի շատ այլ քաղաքներ ու եվրոպական երկրներ:

Հատկապես 1940–ական թվականներից հետո հանրապետությունում արմատապես վերակառուցվեց կաթի վերամշակման, պանրի ու յուղի արդյունաբերության ամբողջ համակարգը, ստեղծվեցին ժամանակակից խոշոր ձեռնարկություններ՝ կատարելագործված սարքավորումներով: Կաթի վերամշակման երկու խոշոր կոմբինատներ ստեղծվեցին Երևանում, այդպիսիք ստեղծվեցին նաև Գյումրիում, Վանաձորում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում: Նշվածներից բացի խոշոր ձեռնարկություններ են կառուցվել Ստեփանավանում, Տաշիրում, Գորիսում, Սիսիանում, Վարդենիսում, Մարտունիում:

Պանրի արտադրության ձեռնարկություններ կան նաև Վայքում, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզերի տարբեր բնակավայրերում: Հատկապես խոշոր քաղաքներում տեղաբաշխված ձեռնարկություններում պանրից ու յուղից բացի արտադրվում է նաև շշերով կաթ: Հանրապետությունում արտադրվում են «Լոռի», «Չանախ», «Բրինզա», «Եղեգնաձոր», «Շվեյցարական», «Ռոկֆոր» և այլ տեսակների պանիրներ, որոնք իրենց որակական բարձր հատկանիշներով լայն համբավ ունեն: Չնայած սննդի արդյունաբերության այս ենթաճյուղը բարձր զարգացման է հասել, ու արտադրվող պանրի զգալի մասը (բնակչության պահանջները բավարարելուց բացի) միշտ արտահանվել է, սակայն կենդանական յուղի արտադրության չափը խորհրդային իշխանության տարիներին (ինչպես նաև այժմ) չի բավարարել տեղի պահանջները: Մասնավորապես, 1940 թ. հանրապետությունում արտադրվել է 1,6 հազ. տոննա կենդանական յուղ, 1965 թ. – 3,0, 1970 թ.– 1,7, 1980 թ. – 0,9, 1985 թ. – 0,4, 1986 թ.– 1,1, 1988 թ. – 0,8 հազ. տոննա: Հանրապետության պահանջները բավարարելու համար ամեն տարի ներմուծվում էր մինչև 50 հազ. տոննա կենդանական յուղ: Այժմ էլ հանրապետությունում տարեկան արտադրվում է ընդա-

մենը 9–12 տոննա կենդանական յուղ: Բնականաբար հանրապետության կենդանական յուղի համարյա ամբողջ պահանջը բավարարվում է Ռուսաստանից, Ֆինլանդիայից, Նոր Զելանդիայից ու այլ երկրներից ներմուծվող այդպիսի արտադրանքով:

1940–ական թվականներից շատ արագորեն աճել է պանրի արտադրությունը: Այդ թվականին այն կազմել է 2.0 հազ. տոննա, 1965 թ.– 13,5, 1970 թ. – 15,2, 1980 թ. – 22,8, 1988 թ. – 28,2 հազ. տոննա, կաթի արտադրությունը 1988 թ. կազմել է 457,5 հազ. տոննա, իսկ կաթնամթերքինը՝ 250 հազ. տոննա: Պանրի արտադրությունը ՀՀ–ում 1998–2002 թթ. տարեկան կազմել է 4,3–5,0 հազ. տոննա, իսկ կաթնամթերքներինը՝ 188–218 հազ. տոննա:

Բուսական յուղի (ձեթի) արտադրությունը որոշակի տեղ է գրաղեցնում հանրապետության սննդի արդյունաբերության համակարգում: 1950–ական թվականներից հետո Արարատյան դաշտի որոշ վայրերում՝ Էջմիածնի ու Հոկտեմբերյանի տարածաշրջաններում արմատավորված խորդենու մշակության բազայի հիման վրա այստեղ կազմակերպվել է եթերայուղի արտադրություն: Բարձրարժեք այս հումքը միշտ մատակարարվել է Ռուսաստանին ու մերձբալթյան հանրապետություններին, որտեղ այն օգտագործվում էր օծանելիքներ արտադրելու, ինչպես նաև կիրառվում էր տեխնիկական նպատակներով: Բարձր արդյունավետ այս արտադրանքի ընդլայնման հնարավորություններն այստեղ կան, և նպատակահարմար է այն վերակենդանացնել:

Բացի դրանից, հիմնականում Հյուսիսային Կովկասից և Ուկրաինայից ներմուծվող կիսաֆաբրիկատի բազայի վրա, հանրապետությունում թողարկվում է արևածաղկի ձեթ: Այն իրականացվում է Երևանի ձեթ–օճառի կոմբինատում: Այստեղ ներմուծվող բամբակի ձեթի բազայի վրա թողարկվում են նաև օճառ և այլ արտադրատեսակներ: Հին ժամանակներից սկսած Հայաստանում արտադրվել է մեծ քանակությամբ կտավատի (գանգրավուշի) ձեթ, որը բնակչության կարևորագույն սննդամթերքներից մեկն էր, այն ունի նաև բուժիչ նշանակություն: Այժմ արդեն, երբ հողը սեփականաշնորհվել է հանրապետության տարբեր վայրերում, առանձին մասնավորներ ցանում են նաև գանգրավուշ և արտադրում ձեթ, որը շուկայում ունի բարձր արժեք:

Բուսական յուղի արտադրությունը հանրապետությունում 1940 թ. կազմել է շուրջ 6,1 հազ., 1965 թ. – 8,8 հազ., 1970 թ. – 11 հազ, 1988 թ. – 7,2 հազ տոննա: 1990 թ. բուսական յուղի արտադրությունը կազմել է

6,4 հազ., 1991 թ. – 4,3, 1992 թ. – 1,5 հազ. տոննա: Իսկ 1997 թ. արտադրվել է ընդամենը 279 տ., 2002 թ. 1,2 հազ., 2003 թ. – 2,1 հազ. տոննա բուսական յուղ: Մարգարինի արտադրությունը մեզ մոտ արմատավորվել է (Երևանի ձեթ–օճառի կոմբինատում) 1965 թ. և այդ տարում արտադրվել է 5,7, իսկ 1988 թ.– 6,1 հազ. տոննա: 1940 թ. հանրապետությունում օճառի արտադրությունը կազմել է 5,9, իսկ 1988 թ. 28,1 հազ. տոննա: Հետագա տարիներին դրանց արտադրությունը խիստ կրճատվել է:

Շաքարի արդյունաբերությունը Հայաստանում հիմնադրվել է 1940–ական թվականների վերջերին, երբ Սպիտակ քաղաքում շահագործման է հանձնվել շաքարավազի արտադրության ձեռնարկությունը: Այն հիմնվել է Սպիտակի, Ախուրյանի, Արթիկի ու Ստեփանավանի տարածաշրջաններում արտադրվող շաքարի ճակնդեղի բազայի վրա:

Շաքարավազի արտադրությունը 1970 թ. կազմել է ավելի քան 16, 1979 թ. – 18,6, 1980 թ. – 20, 1987 թ. – 28,4, 1988 թ. – 25,1 հազ. տոննա: 1988 թ. դեկտեմբերի 7–ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով Սպիտակ քաղաքի հետ միասին ավերվել է նաև շաքարի գործարանը: Այն այժմ վերականգնվում է և շուտով շահագործման կհանձնվի: Այժմ հանրապետությունում օգտագործվող շաքարը ամբողջապես ներմուծվում է դրսից:

Ծխախոտի արդյունաբերությունը թողարկվող արտադրանքի արժեքային արտահայտությամբ զգալի տեղ է գրաղեցնում սննդի արդյունաբերության համակարգում: Երևանի ծխախոտի ֆաբրիկայի արտադրանքը մեծ ճանաչում է ստացել նաև հանրապետությունից դուրս: Արդեն 1980–ական թվականներին այդ ֆաբրիկան տարեկան արտադրում էր 9.8–12.0 մլրդ հատ սիգարետ:

Սննդի արդյունաբերությունը հանրապետության արդյունաբերության առավել հեռանկարային ճյուղերից մեկն է: Առավելապես լայն են հնարավորությունները գինու, կոնյակի, հանքային ջրերի, պահածոների, պանրի, տարբեր հյութերի արտադրության բնագավառում:

Աղյուսակ 23

ՀՀ սննդի արդյունաբերության հիմնական արտադրատեսակների թողարկումը 1998, 1999, 2002 և 2003 թթ տվյալներով

Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	Արտադրանքը			
		1998	1999	2002	2003
Չկան որս	տոննա	1730,5	472.2	742.0	...
Միս	հազ. տ	33,0	32.9	39.9	41.1
Երշիկեղեն	տոննա	215,3	411.8	1381.0	1262.0
Պանիր	տոննա	1480,4	4755.0	4811.0	5007.0
Պաղպաղակ	տոննա	699,8	790.3	1101.5	1298.3
Կաթ և կաթնամթերք (վերամշակված)	հազ. տ	263,9	192.0	207.0	218.1
Պահածո	հազ.պ.բ.	11371,0	57507,2	52711,0	89628,5
Այուր	հազ. տ	103,7	148,0	109,0	131,4
Ձավարեղեն	տոննա	474,1	324,0	12,0	8,1
Հաց և հացամթերք	հազ. տ	372,5	371,8	294,0	293,0
Հրուշակեղեն	տոննա	1049,2	840,4	3400,0	3730,7
Մակարոնեղեն	տոննա	688,3	713,0	1084,5	903,1
Օղի	հազ. դ լ	772,0	1113,8	1033,8	1105,3
Կոնյակ	հազ. դ լ	260,9	119,3	604,0	709,3
Խաղողի գինի	հազ. դ լ	152,6	432,0	654,0	204,2
Շամպայն գինի	հազ. շիշ	1181,3	938,4	621,9	670,0
Գարեջուր	հազ. դ լ	1322,0	842,0	708,0	731,0
Ոչ ալկոհոլային խմիչքներ	հազ. դ լ	2265,9	2227,0	2682,0	3410,2
Հանքային ջուր	հազ. 0,5լ շիշ	21977,8	22532,5	36554,0	39024,8
Աղ	տոննա	24910,9	26954,6	30300	31854,0
Սիգարետներ	մլն հատ	2488,1	3495,2	2815,3	3221,9

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ արտադրության բաժինների



ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքը 2003 թ.



Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության մարզերի 2003 թ.



- 5–հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6 –քիմիական արդյունաբերություն
- 7 –այլ ոչ մետաղային հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8–մետաղագործական արդյունաբերություն
- 9 –պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10 –մեքենաների և սարքավորումների արտադրություն
- 11 –ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12 –գործունեության այլ տեսակներ

4.2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսությունը, հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանում նյութական արտադրության երկրորդ կարևոր բնագավառն է արդյունաբերությունից հետո: Որպես նյութական արտադրության բնագավառ գյուղատնտեսությունը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է արդյունաբերությունից: Այդ առանձնահատկություններից մեկն այն է, որ գյուղատնտեսական արտադրության գլխավոր արտադրամիջոցը հողն է (արդյունաբերության մեջ գլխավոր արտադրամի-

ջոցները մեքենաները, սարքավորումներն ու արտադրական շենքերն են): Այս առանձնահատկությունն այն է, որ գյուղատնտեսական արտադրությունն ընդհատվող է (օրինակ՝ հացահատիկի կամ խաղողի բերքի հավաքումից հետո, արտադրության պրոցեսն ընդհատվում է, աշնանը կամ գարնանը նորից այն սկսվում է): Իսկ արդյունաբերության մեջ արտադրական պրոցեսը իրականացվում է անընդհատ: Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության վրա ավելի մեծ է, շատ դեպքերում՝ վճռական: Այսպես, օրինակ, ցուրտ կլիմայական պայմաններ ունեցող վայրերում չենք կարող զարգացնել խաղողագործություն, բամբակագործություն, բրնձագործություն, թեյագործություն և այլն: Ահա թե ինչու հատկապես դաշտավարությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը զարգացվում է ըստ կլիմայական գոտիների: Իսկ արդյունաբերության տեղաբաշխման համար բնակլիմայական պայմանները խոշոր կամ վճռական դեր չեն խաղում (մեքենաշինական կամ մետաղաձուլական գործարան կարելի է կառուցել ցանկացած կլիմայական գոտում):

Չնայած գյուղատնտեսական արտադրությունը այժմ նյութական արտադրության երկրորդ բնագավառն են անվանում, սակայն այն շատ ավելի հին պատմություն ունի: Հայաստանը աշխարհի այն եզակի երկրներից է, որտեղ դեռևս հազարամյակներ առաջ արմատավորվել է հողագործությունը, պտղաբուծությունը, հացահատիկի աճեցումը, անասնապահությունն ու գյուղատնտեսության այլ ենթաճյուղեր: Այդ են վկայում հայ և օտար պատմաբանների բազմաթիվ փաստեր, Հայկական լեռնաշխարհում կատարված պեղումների նյութեղեն ապացույցներ:

Սակայն, դաժան ճակատագրի բերումով հայ ժողովուրդը կորցրել է իր տարածքի, այսինքն՝ հողային ֆոնդի 90 տոկոսից ավելին: Դեռ ավելին, օտար նվաճողների, հատկապես Թուրքիայի տիրապետության տակ են մնացել Հայաստանի ամենաբերրի հողատարածքները, սնահողային դաշտերը, խոտառատ արոտավայրերը:

Հանրապետության տիպիկ լեռնային, բարդ, խիստ կտրտված մակերևույթի պատճառով ամբողջ հողային ֆոնդի միայն 46%–ն է հնարավոր օգտագործել գյուղատնտեսական արտադրության նպատակներով: Նրա տարածքի մեծ մասը լերկ ժայռեր, լեռնաշղթաներ ու անդնդախոր ձորեր են, որոնք տեխնիկապես հնարավոր չէ օգտագործել գյուղատնտեսական արտադրության մեջ:

Իսկ գյուղատնտեսական արտադրության համար պիտանի հողատարածքների օգտագործումն էլ կապված է զգալի դժվարությունների հետ:

խնդիրը կայանում է նրանում, որ մեր հողահանդակների զգալի մասն ունի մեծ թեքություն, մակերևույթի կտրտվածության հետևանքով վարելահողերն ունեն շատ փոքր տարածքներ: Բացի դրանցից, քանի որ հանրապետության տարածքը տիպիկ լեռնային է, ապա հողահանդակները քարքարոտ են, ունեն ուղղաձիգ գոտիական բնույթ: Ահա այս առանձնահատկությունների հետևանքով գյուղատնտեսական արտադրությունը կապված է մեծ դժվարությունների հետ, որոնք պայմանավորված են մեքենայացման, ոռոգման, գիտական մեթոդների կիրառման և այլ յուրահատկություններով:

Ահա թե ինչու Հայաստանի գյուղատնտեսական արտադրությունը պահանջում է ավելի մեծ չափով կապիտալ ներդրումներ, արտադրանքի ինքնարժեքը զգալիորեն բարձր է հարթավայրային երկրների համեմատությամբ:

Մինչև 1920–ական թթ. Հայաստանը էքստենսիվ գյուղատնտեսություն ունեցող երկիր էր:

Աղյուսակ 24

1998 թ. հունվարի 1–ի դրությամբ ՀՀ հողային ընդհանուր ֆոնդը և նրա կառուցվածքը ունի հետևյալ պատկերը (հազ. հեկտար)

Համ. ըստ կարգի	Հողային կատեգորիաների անվանումը	Ընդ. տարածքները	Ընդամենը գյուղատնտ. հողատեսք.	Այդ թվում					Անտառներ, թփուտներ, ջրերի տակ, շենքերի, բնակելի և այլ անօգտագործելի հողեր
				վարելահողեր	բազմամյա տնկիներ	խոպան հողեր	խոտհարքեր	արոտներ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Գյուղատնտեսական նշանակության հողեր	567,1	517,9	363,9	63,1	–	67,1	24,1	49,2
2	Բնակավայրերի (քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, գյուղական բնակավայրեր) հողեր	65,5	8,1	3,9	2,3	–	0,1	1,8	57,4
3	Արդյունաբերության, տրանսպորտի, կապի և այլ գյուղատնտեսական նշանակության հողեր	97,6	7,3	1,2	0,5	–	1,6	4,0	90,3

1	2	3	4	5	6	7	8	9	10
4	Բնապահպանական, առողջարանական, հանգստավայրերի, մարզական, պատմամշակութային հողեր	10,6	1,3	0,2	–	–	–	1,1	9,3
5	Անտառային ֆոնդի հողեր	445,9	20,2	0,6	1,9	–	3,3	14,4	425,7
6	Ջրային ֆոնդի հողեր	16,7	0,1	–	–	–	–	0,1	16,6
7	Պահեստային ֆոնդի հողեր	1770,9	836,5	114,1	8,4	0.9	66,8	646,3	934,4
	Ընդամենը	2974,3	1391,4	494,3	63,8	0.9	138,9	694,0	1582,9

Անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում զարգացած էին հացահատիկի մի շարք տեսակների, տեխնիկական որոշ մշակաբույսերի, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցումը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և անասնապահությունը: Սակայն լեռնային դժվարին, չորային պայմաններում աճեցվող բերքի, ստացվող մթերքի մեծ մասը այս լեռնաշխարհի բնակիչը ստիպված էր լինում վճարել ոչ միայն տեղի կեղեքիչներին, այլև շատ հաճախակի այստեղ ներխուժած բարբարոս օտար ցեղերի: Այս վիճակը նկատելի չափով բարելավվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828 թ.) հետո: Դրանից հետո Արարատյան դաշտում և այժմյան Հայաստանի Հանրապետության մյուս վայրերում գյուղացիները հնարավորություն ստացան համեմատաբար հանգիստ պայմաններում, առանց պարսկա–թուրքական հաճախակի հարձակումների զբաղվել գյուղատնտեսությամբ, չնայած միշտ էլ բերքի մեծ մասը վճարել են որպես հարկ: Բերքատվությունը շարունակվում էր մնալ ցածր, քանի որ ոռոգման աշխատանքները խիստ անբավարար էին:

Գյուղատնտեսության վիճակը նորից խիստ վատթարացավ Առաջին համաշխարհային, քաղաքացիական պատերազմների տարիներին, երբ այգիները, ցանքերի մեծ մասը անգործության մատնվեցին, քայքայվեցին, բնակչությունը սովի ենթարկվեց:

Դրությունը արմատապես փոխվեց 1920–ական թվականների սկզբներից, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ Ռուսաստանի օգնությամբ աշխատանքներ սկսվեցին այգիների, ցանքատարածությունների վերականգնման, ընդլայնման, ոռոգման համակարգերի ստեղծման բնագավառներում: Ավելի ուշ՝ 1920–ական թթ. վերջերից գյուղերում ստեղծվեցին կոլեկտիվ խոշոր տնտեսություններ, որտեղ

հնարավորություններ ստեղծվեցին արմատավորել գյուղատնտեսության մեքենայացման, գիտական մեթոդների կիրառման, մելիորացման և ժամանակակից շատ այլ մեթոդներ: Հանրապետության գյուղատնտեսությունը մեծ վերելք ապրեց հատկապես 1950–ական թվականներից հետո: Այդ ժամանակաշրջանում լայնորեն արմատավորվել էր մեքենայական աշխատանքը: 1988 թ. հանրապետությունում ոռոգվող հողերի տարածքը հասել էր 316 հազ. հեկտարի: Հանրապետությունը դարձել էր բազմաճյուղ գյուղատնտեսություն ունեցող երկիր: Նախկին ԽՍՀՄ–ում այն մասնագիտացված էր հատկապես խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման և այլ բնագավառներում:

1990–ական թվականների սկզբներից, երբ ԽՍՀՄ–ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը անկախացավ, այստեղ տեղի ունեցավ հողի ու անասունների սեփականաշնորհում: Կոլտնտեսային և պետական խոշոր տնտեսությունների փոխարեն գյուղերում ստեղծվեցին մասնավոր տնտեսություններ՝ իրենց հողակտորներով: Մինչև հողի սեփականաշնորհումը հանրապետության գյուղատնտեսության համակարգում կար 804 կոլեկտիվ և պետական տնտեսություն (1988 թ.) այսինքն՝ կոլտնտեսություններ (275) և սովետական տնտեսություններ (529): Հանրապետությունում հողի սեփականաշնորհումից հետո ստեղծվել է 312900 գյուղացիական տնտեսություն (1995 թ.) այսինքն՝ առաջացել է հողի այդքան սեփականատեր: 2002 թ. գյուղացիական տնտեսությունների թիվը եղել 334798: Սեփականաշնորհված ամբողջ հողատեսքերը կազմում են 396918 հեկտար: Այսպիսով՝ այժմ հանրապետության գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ունի 1.27 հեկտար հողատեսք (վարելահողեր և բազմամյա տնկարկներ):

Հանրապետության որոշ շրջաններում ստեղծվել են նաև գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ու պետական տնտեսություններ, որոնց բաժին է ընկնում հողատեսքերի փոքր մասը:

Այս հանգամանքը, անկասկած իր դրական կողմի հետ միասին, գյուղացիների համար ստեղծեց նաև դժվարություններ, մասնավոր փոքր հողակտորների (հատկապես լեռնային վայրերում) վրա մեքենայական աշխատանքի կիրառման, ոռոգման, գիտական մեթոդների ներդրման և այլ բնագավառներում:

ՀՀ գյուղական տնտեսությունների թիվը և գյուղատնտեսության համախառն արտադրանքը բոլոր կարգի տնտեսություններում

	Չափի միավոր	Տարիներ					
		1998	1999	2000	2001	2002	2003
Գյուղական տնտես. թիվը	հազ.	333,820	335,086	332,608	334,759	334,798	–
Համախառն արտադրանքը այդ թվում	մլրդ դրամ	402,1	311,7	281,2	351,0	377,6	410,1
Բուսաբուծություն	//–//	245,6	180,0	136,2	208,0	226,6	–
Անասնապահություն	//–//	156,5	131,7	145,0	143,0	151,0	–

Համառոտակի քննարկենք հանրապետության գյուղատնտեսության արդի վիճակն ու տեղաբաշխումը ըստ ենթաճյուղերի:

ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ)

Չնայած Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը, առավելապես գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ հողատարածքները սահմանափակ են, սակայն, հողակլիմայական պայմանների բազմազանությունից ելնելով, այստեղ հնարավոր է զարգացնել բուսաբուծության շատ ենթաճյուղեր: Ներկայումս հանրապետության բուսաբուծությունը ունի հետևյալ ենթաճյուղային կառուցվածքը՝ ***հացահատիկային, տեխնիկական մշակաբույսերի մշակություն, կարտոֆիլի ու բանջարաբոստանային մշակաբույսերի մշակություն, այգեգործություն և պտղաբուծություն:*** Բուսաբուծությանը բաժին է ընկնում գյուղատնտեսական ամբողջ համախառն արտադրանքի շուրջ 60 %–ը: Ինչպես նշվել է վերը զետեղված աղյուսակում, վերջին տվյալներով հանրապետության գյուղատնտեսական ընդհանուր հողատեսքերը կազմում են 1391,4 հազ. հեկտար, որից գյուղատնտեսական մշակաբույսերի բոլոր ցանքերը 1998 թ. կազմեցին 323,8, իսկ 2002 թ.–305,7 հազ. հա: Վերջինիս կառուցվածքում պատկառելի տեղ է զբաղեցնում ***հացահատիկային մշակաբույսերի մշա-***

կությունը: Հայաստանը աշխարհի այն եզակի երկրներից է, որտեղ հացահատիկային մշակաբույսերի աճեցումը արմատավորվել է անհիշելի ժամանակներից: Կարմիր բլուրում և Հայաստանի հազարամյակների պատմություն ունեցող մյուս բնակատեղիներում հայտնաբերված կարասների մեջ մինչև այժմ պահպանվել է ցորենի տեսակներ: Հայաստանի տարածքում, այդ թվում Երևան քաղաքի Էրեբունի թանգարանի շրջակայքում գիտնականները հայտնաբերել են վայրի ցորենի տեսակներ:

Իսկ ընդհանուր առմամբ, շատ հնուց հայերը արմատավորել են իրենց երկրում ցորենի, տարեկանի, գարու, հաճարի ու այլ հացահատիկային մշակաբույսերի բազմատեսակ սորտերի աճեցում:

Մինչև 1920–ական թթ. Հայաստանում հացահատիկային մշակաբույսերի աճեցումը (ինչպես նաև գյուղատնտեսական մյուս մշակաբույսերի) իրականացվում էր հիմնականում էքստենսիվ եղանակով: Այսինքն՝ արտադրությունը զարգանում էր լայնությամբ (հացահատիկի արտադրությունը մեծացվում էր ցանքատարածությունների ընդլայնման ճանապարհով): Խորհրդային իշխանության տարիներին խոշոր աշխատանքներ կատարվեցին՝ հացահատիկի արտադրության մեջ արմատավորվեց ինտենսիվ եղանակը, այսինքն՝ այն զարգացավ հիմնականում խորությամբ բերքատվության բարձրացման ճանապարհով: Այդ նպատակով կիրառվեցին գիտական մեթոդներով ցանքերի կատարման, պարարտացման, բարձր բերքատու սորտերի արմատավորման, աշխատանքների մեքենայացման, հողատարածքների նպատակային օգտագործման ուղիները, որոնց շնորհիվ մեկ հեկտարից ստացվող հացահատիկի բերքը զգալիորեն բարձրացավ:

Հայաստանի Հանրապետության տարածքում հացահատիկային մշակաբույսերի աճեցման հիմնական վայրերը հումուսով հարուստ սնահողային տարածքներ ունեցող շրջաններն են, իսկ սնահողերը զբաղեցնում են ամբողջ հանրապետության տարածքի միայն 25%–ը:

Դեռևս շատ հնուց Հայաստանի հացահատիկի արտադրության առավել նշանավոր շրջանը Շիրակի դաշտն էր: Այժմ էլ այն այդ տեսակետից պահպանում է իր կարևոր տեղը: Հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ նշանավոր են նաև Լոռու, Ապարանի սարահարթերը, Կոտայքի մարզը, Սևանի ավազանը (հատկապես Մարտունու, Վարդենիսի տարածաշրջանները), ինչպես նաև Սյունիքի մարզի հյուսիսային մասը (Գորիսի ու Սիսիանի տարածաշրջանները): Հացահատիկ աճեցվում է նաև հանրապետության այլ վայրերում, սակայն վճռական դեր խաղացողները նշվածներն են:

Այստեղ աճեցվող հացահատիկի հիմնական տեսակը աշնանացան և գարնանացան ցորենն է: Աճեցվում է նաև գարի, տարեկան, հաճար, վարսակ (նախկինում Հայաստանի գետահովտային մասերում աճեցվում էր նաև բրինձ):

Աղյուսակ 26

Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների շարժը Հայաստանի Հանրապետությունում

Տարիները	Տարածքը (հազ. հա)
1913	308,5
1940	340,0
1965	219,2
1970	186,4
1979	155,6
1985	135,6
1990	138,2
1995	174,9
1996	183,9
1998	198,7
2000	181,1
2002	191,9
2003	200,8

Ինչպես երևում է աղյուսակից, 1940 թ. հետո հացահատիկային մշակաբույսերի ցանքերը կրճատվել են: Դա իրականացվել է մի կողմից տնտեսության ինտենսիվ զարգացման, մյուս կողմից նախկինում հացահատիկի տակ զբաղեցված հողատեսքերի հաշվին կերային և բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերի ընդլայնման նպատակով:

Հետագայում՝ հողի սեփականաշնորհումից հետո (1990 թ. հետո), ինչպես նկատվում է աղյուսակից, մասնավոր տնտեսությունները նորից սկսել են ընդլայնել հացահատիկի ցանքատարածությունները:

Եթե 1985 թ. հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների տեսակարար կշիռը հանրապետության գյուղատնտեսական ամբողջ մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում կազմել են 30.4%, ապա 2001 թ. այն կազմել է ավելի քան 60%: Ընդ որում, աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքերը (հիմնականում ցորեն և գարի) կազմում են

ամբողջ հացահատիկային մշակաբույսերի ցանքերի ավելի քան 30%–ը, մյուս մեծ մասը կազմում է գարնանացանը:

Հայաստանի ագրոկլիմայական պայմանների ու գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առանձնահատկությունների հետևանքով հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը մեկ հեկտարից խիստ տատանվող է եղել միշտ:

Աղյուսակ 27

Հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվությունը մեկ հեկտարից

Տարիները	Բերքատվությունը մեկ հեկտարից (ցենտներ)
1913	5,6
1940	6,6
1970	13,5
1975	17,2
1977	19,1
1979	20,5
1985	20,9
1990	19,6
1991	19,9
1993	15,3
1994	13,5
1998	19,4
2001	18,6
2002	21,9

Հանրապետությունում աճեցվող հիմնական հացահատիկը ցորենն է, որի բերքատվությունը տարբեր ռեգիոններում տարբեր է: Մասնավորապես, վերջին տարիների տվյալներով, երբ ընդհանուր առմամբ գյուղատնտեսական վերակառուցման հետ կապված բերքատվությունը իջել էր, ցորենի նվազագույն բերքատվությունը մեկ հեկտարից կազմել է 6, միջինը՝ 16, առավելագույնը՝ 36,1 ցենտներ: Ցորենի բերքատվությամբ հատկապես կարևոր տեղ են զբաղեցնում Արթիկի, Ախուրյանի, Հրազդանի, Կոտայքի, Վարդենիսի, Մարտունու, Գորիսի, Սիսիանի տարածաշրջանները, որտեղ շատ գյուղերում բերքատվությունը կազմում է 25–30 g:

Իսկ ընդհանուր առմամբ ցորենի միջին բերքատվությունը ՀՀ–ում 1999 թ. կազմել է 19,2, 2001 թ. – 22,3, 2002 թ. – 23,9 ցենտներ:

Աղյուսակ 28

Հացահատիկի համախառն բերքն ըստ տարիների

Տարիները	Համախառն բերքը (հազ. տոննա)
1913	174,3
1940	222,8
1970	251,9
1975	195,6
1977	317,3
1979	318,4
1985	283,5
1990	271,0
1991	304,0
1993	315,7
1994	238,1
1995	174,9
1996	183,9
1997	257,4
1998	325,7
2000	229,8
2001	367,3
2002	415,5
2003	310,0

Հացահատիկի արտադրության չափերով հանրապետությունում առաջնակարգ տեղեր են զբաղեցնում Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Սյունիքի մարզերը:

Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքատվության անկումը և համախառն բերքի նվազումը 1990–ական թվականներին կապված էր սոցիալ–տնտեսական ծանր պայմանների, գյուղատնտեսության վերակառուցման հետ, որի հետևանքով այդ ճյուղի գիտատեխնիկական բազան մեծապես թուլացավ: Խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունը տարեկան ներմուծել է ավելի քան 1 մլն տոննա հացահատիկ, քանի որ տեղում արտադրվող հացահատիկը չէր կարող բավարարել բնակչության և ա-

նասնապահության ամբողջ պահանջը: Այժմ էլ հանրապետության հացահատիկի պահանջի մեծ մասը ներմուծվում է դրսից:

Տեխնիկական մշակաբույսերի աճեցումը Հայաստանում նույնպես շատ հին պատմություն ունի: Մասնավորապես, դեռ հնուց այստեղ աճեցվող տեխնիկական մշակաբույսերից կարևորներն էին բամբակը, գանգրավուշը (կտավատը), քնջութը և կանեփը: Ըստ որում, բամբակ աճեցվում էր հիմնականում Արաքս, Արածանի, Արևմտյան Եփրատ գետերի հովիտներում ու Վանա լճի ավազանում: Հետաքրքիր է, որ այդ ժամանակներում Հայաստանում արտադրվող բամբակը ոչ միայն բավարարում էր սեփական պահանջները, այլև զգալի չափով արտահանվում էր: Լեռնաշխարհի շատ վայրերում աճեցվող կտավատի, քնջութի ու կանեփի բազայի վրա գործում էին բազմաթիվ ձիթահանքեր:

Խորհրդային իշխանության տարիներին, դարեր շարունակ Հայաստանում արմատավորված տեխնիկական այս մշակաբույսերը շրջանառությունից դուրս են մղվել: *Բամբակի աճեցումը Արարատյան* դաշտում շարունակվում էր մինչև 1957 թ.: Դրանից հետո բամբակի պլանտացիաների փոխարեն Արարատյան դաշտում ընդարձակվեցին հիմնականում բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը, որոնց արդյունավետությունը բամբակի համեմատությամբ ավելի բարձր է:

Տեխնիկական մշակաբույսերից Հայաստանի Հանրապետությունում՝ Շիրակի դաշտում (հատկապես Ախուրյանի ու Արթիկի տարածաշրջաններում), Սպիտակի ու Ստեփանավանի տարածաշրջաններում մինչև 1988 թ. կործանարար երկրաշարժը աճեցվում էր նաև շաքարի ճակնդեղ: Այն հումքային բազա էր հանդիսանում Սպիտակի շաքարի գործարանի համար, որը ավերվել է երկրաշարժից: Այժմ արդեն կառուցվում է նոր գործարան, և մոտակա ժամանակաշրջանում նշված վայրերում կվերսկսվի ճակնդեղի աճեցումը:

Ներկայումս հանրապետության տարածքում համեմատաբար զգալի ցանքատարածություններ զբաղեցնող տեխնիկական մշակաբույսը ծխախոտն է: Հայկական լեռնաշխարհում ծխախոտի աճեցումը արմատավորվել է հարյուրամյակներ առաջ: Սակայն տեխնիկական նկատառումներով այն որպես հումքային բազա արմատավորվել է խորհրդային իշխանության տարիներին: Դրա բազայի վրա էլ Երևանում կառուցվել է ծխախոտի խոշոր ֆաբրիկա: Ծխախոտագործությամբ զբաղվում են հանրապետության բազմաթիվ վայրերում, սակայն նրա տարածման հիմնական ռեգիոններն են՝ Արարատյան գոգավորության նախալեռնային տարածքները, Գեղարքունիքի, Վայոց ձորի և հատկապես Տավուշի մարզերը:

Իջևանի, Տավուշի տարածաշրջաններում կան գյուղեր, որոնք կոլտնտեսային կարգերի ժամանակ հիմնականում զբաղվում էին ծխախոտագործությամբ: Նշենք, որ վերը նշված ռեգիոններում ծխախոտագործությունը բուսաբուծության առավել եկամտաբեր ենթաճյուղերից է:

Հանրապետությունում ծխախոտի ամենից շատ ցանքեր եղել են 1965 թ., որոնք կազմել են 7,9 հազ. հեկտար, հետագայում դրանց տարածքը կրճատվել և 1988 թ. կազմել է 3,4 հազ. հեկտար: Ծխախոտի բերքատվությունը մեկ հեկտարի միջին հաշվով 1976–1980 թթ. կազմել է 24,2 ցենտներ, իսկ համախառն արտադրանքը՝ 16,9 հազ. տոննա, 1986–1988 թթ. բերքատվությունը մեկ հեկտարից եղել է 28,5 ցենտներ, իսկ համախառն բերքը տարեկան 10,9 հազ. տոննա (համախառն բերքի կրճատումը կապված է ցանքերի կրճատման հետ): Հանրապետության տարածքում արմատավորվել են ծխախոտի «Սամսունգ», «Տրապիզոն» սորտերը, որոնք որակական հատկանիշներով բարձր են գնահատվում: Այժմ ծխախոտագործությունը հանրապետությունում նորից սկսել է վերակենդանանալ (վերջին տարիներին նրա ցանքերը խիստ կրճատվել էին):

Հողի սեփականաշնորհումից հետո ծխախոտագործությունը ինչպես ասվեց, անկում է ապրել: Այժմ թեև դրա ցանքատարածությունները դեռևս մեծ չեն, սակայն արդյունավետությունը բարձր է, բավականին բարձր է նաև բերքատվությունը: Մասնավորապես, 2001 թ. այն մեկ հեկտարից կազմել է 23,4, իսկ 2002 թ.՝ 30,5 ցենտներ:

1950–ական թվականներից հետո Արարատյան դաշտում (Էջմիածնի ու Հոկտեմբերյանի տարածաշրջաններում) արմատավորվել է մի այլ տեխնիկական մշակաբույս՝ *խորդենի*: Այն բարձր արդյունավետ մշակաբույս է, որից արտադրվում է եթերայուղ, իսկ վերջինս օգտագործվում է օծանելիքների արտադրության և տեխնիկական նպատակներով: Սակայն դրանց ցանքերը քիչ էին, դրանով զբաղվում էին նշված շրջանների սահմանափակ գյուղեր:

Հայաստանի Հանրապետության պայմանները նպաստավոր են յուղատու՝ գանգրավուշի (կտավատ) աճեցման համար, հետևաբար անհրաժեշտ է այդ բարձր սննդարար յուղի արտադրությունը ապահովելու համար վերականգնել դրա երբեմնի տեղը գյուղատնտեսության կառուցվածքում:

Բանջարաբոստանային մշակաբույսերի ու կարտոֆիլի աճեցում: Հայ ժողովուրդը բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցմամբ զբաղվում է անհիշելի ժամանակներից: Բանջարեղենի տարբեր տեսակներ աճեցվում էին Հայաստանի բոլոր վայրերում, այդ թվում հատկապես միջին լեռնային բարձրություններում: Իսկ բոստանային մշակաբույսեր, հատկա-

պես ձմերուկ, սեխ հիմնականում աճեցվում է ցածրադիր լեռնահովտային, ոռոգվող տարածքներում: Իսկ ընդհանուր առմամբ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը բուսաբուծության կառուցվածքում փոքր տեսակարար կշիռ ունեին: 1913 թ. այս մշակաբույսերի ցանքերը կազմում էին ընդամենը 3,3 հազ. հեկտար: 1920–ական թվականներից սկսած, հատկապես 1940–ական թվականներից, ցանքերը զգալիորեն ընդլայնվեցին: Դա հիմնականում կապված էր ոռոգման համակարգի կառուցման և ոռոգվող հողատարածքների մեծացման հետ: 1940 թ. բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը կազմել են 5,0, 1979 թ.՝ 18,1, 1996 թ.՝ 21,1 հազ. հեկտար:

Ընդհանուր առմամբ, բանջարեղեն աճեցվում է հանրապետության բոլոր վայրերում, սակայն դրանց աճեցմամբ վճռական տեղը պատկանում է Արարատյան դաշտին:

Հայաստանի Հանրապետությունում բանջարաբոստանային մշակաբույսերից աճեցվում է ձմերուկ, սեխ, դդում, սոխ, սխտոր, բադրիջան, կաղամբ, վարունգ, պոմիդոր, սամիթ, համեմ, թարխուն, ռեհան, կոտեմ, գազար և այլն:

1998–2002 թթ. ՀՀ–ում բանջարեղենի ցանքերը կազմել են 19,3–20,2 հազ. հեկտար, իսկ բոստանային մշակաբույսերինը՝ 3,3–4,2 հազ. հեկտար: Համախառն բերքը համապատասխանաբար՝ 395,2– 466,0 հազ. տոննա և 60,4– 89,7 հազ. տոննա: Բանջարեղենի համախառն բերքը 2003 թ. կազմել է 569,4, իսկ բոստանային մշակաբույսերինը՝ 115–4 հազ. տ:

Հատկապես 1940–ական թվականներից հետո մեծ չափերով ընդարձակվել են նաև *կարտոֆիլի ցանքերը:*

Վաղահաս կարտոֆիլ աճեցվում է հիմնականում ցածրադիր վայրերում, հատկապես Արարատյան դաշտում: Իսկ ընդհանուր առմամբ, հանրապետության կարտոֆիլի աճեցման վճռական դեր խաղացող ռեգիոններն են Սևանի ավազանը և Լոռին (Տաշիրի, Ստեփանավանի տարածաշրջաններ): Այս տեսակետից զգալի տեղ ունեն նաև Ապարանի, Արագածի, Հրազդանի, Գորիսի, Սիսիանի տարածաշրջանները: Կարտոֆիլ աճեցվում է նաև հանրապետության մյուս վայրերում, սակայն թե՛ ցանքատարածությամբ և թե՛ բերքատվությամբ վճռական տեղը պատկանում է վերը նշված ռեգիոններին:

1913 թ. հանրապետության այժմյան տարածքում կարտոֆիլի ցանքերը կազմել են 7,0 հազ. հեկտար, 1940 թ. հասել է 13,2, 1979 թ.՝ 19,4, իսկ 1996 թ.՝ 32,6 հազ. հեկտարի: Կարտոֆիլի միջին բերքատվությունը մեկ հեկտարից 1913 թ. կազմել է 69, 1940 թ.՝ 73, 1970 թ.է 150, 1979 թ.՝ 115,

1986–1988 թթ. միջին հաշվով՝ 126, իսկ 1996 թ.՝ 95,7 ցենտներ: Հետագա տարիներին կարտոֆիլի բերքատու սորտերի արմատավորման շնորհիվ նրա բերքատվությունը նկատելիորեն բարձրացել է: Մասնավորապես.

1998 թ. բերքատվությունը մեկ հեկտարից կազմել է 134,6 g
1999 թ. – 130,6 g
2000 թ. – 87,3 g
2001 թ. – 114,6 g
2002 թ. – 122,8 g

Ինչպես բանջարեղենի, այնպես էլ կարտոֆիլի ցանքատարածությունների ընդլայնման ու բերքատվության բարձրացման շնորհիվ մեծ չափով ավելացել են դրանց արտադրության ծավալները: 2003 թ. բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը կազմել են 27,1 հազ., իսկ կարտոֆիլինը՝ 32.3 հազ. հեկտար: 1972–1975 թթ. բանջարեղենի համախառն բերքը տարեկան միջին հաշվով կազմել է 328,2, իսկ կարտոֆիլինը՝ 199,0 հազ. տոննա, 1986–1988 թթ.՝ համապատասխանաբար 569,2 և 256,3 հազ. տոննա, իսկ 1996 թ.՝ 443,5 և 423,0 հազ. տոննա: 1997 թ. հանրապետությունում բանջարեղենի արտադրությունը կազմել է 370,5, իսկ կարտոֆիլինը՝ 360,6 հազ տոննա: 1998 թ. դրանց արտադրությունը համապատասխանաբար կազմել է 395,2 և 440,0 հազ. տոննա:

Հետագա տարիներին բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի, կարտոֆիլի համախառն բերքի շարժը ունի հետևյալ պատկերը

Աղյուսակ 29

Արտադրատեսակի անվանումը	չափման միավորը	Տարիները				
		1999	2000	2001	2002	2003
Բանջարեղեն	հազ. տ.	449,0	375,7	456,0	466,0	569,4
Բոստանային	//–//	88,5	52,8	54,8	89,7	115,4
Կարտոֆիլ	//–//	414,1	290,3	363,8	274,3	507,5

Այսպիսով՝ հանրապետությունը նշված շատ կարևոր մշակաբույսերի արտադրությամբ ոչ միայն ապահովում է բնակչության պահանջը, այլև զգալի քանակությամբ կարտոֆիլ է արտահանում:

Բանջարեղենի համախառն արտադրանքով հանրապետությունում առաջին տեղը պատկանում է Արարատի, այնուհետև՝ Արմավիրի ու մյուս մարզերին, կարտոֆիլի արտադրությամբ՝ Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի ու մյուս մարզերին: Հանրապետության տարածքում առկա բնական ա-

ռանձնահատկությունները՝ արևային էներգիայի առկայությունը, թեք լանջային արևադեմ տարածքները, ոռոգման ստեղծված լայն հնարավորությունները դեռևս անբավարար են օգտագործվում բանջարաբոստանային մշակաբույսերի ավելի մեծ չափերով արտադրության համար: Ընդհանուր առմամբ ցածր է դրանց և կարտոֆիլի բերքատվությունը: Իսկ բերքատվության բարձրացումը կարևոր դեր կխաղա ոչ միայն բնակչության պահանջը ավելի մեծ չափերով բավարարելու, դրանց բազայի վրա տարբեր տեսակների պահածոների արտադրությունը ընդլայնելու, այլև բանջարեղենի, կարտոֆիլի, պահածոների ինքնարժեքը իջեցնելու գործում:

Կերային մշակաբույսերի աճեցումը հանրապետությունում բուսաբուծության կառուցվածքում հատկապես 1960–ական թվականներից հետո լայն չափերի է հասել: Դա կապված էր անասնապահության ինտենսիվ զարգացման, դրա համար ամուր կերային բազա ստեղծելու անհրաժեշտության հետ:

Այդպիսի մշակաբույսեր աճեցվում են հանրապետության բոլոր վայրերում, սակայն դրանց ցանքատարածությունների մեծ մասը բաժին է ընկնում Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերին: Ջգալի տեղ են զբաղեցնում նաև Արարատյան գոգավորության նախալեռնային վայրերը:

Աճեցվում են միամյա և բազմամյա կերային մշակաբույսեր (առվույտ, երեքնուկ և այլն): Կերային բազայի համար աճեցնում են նաև եգիպտացորեն (սիլոսի համար), կերային արմատապտուղներ (ճակնդեղ, գազար և այլն):

1913 թ. հանրապետության այժմյան տարածքում կերային մշակաբույսերի ցանքերը կազմում էին 44 հազ. հեկտար, 1944 թ.՝ 37,7 հազ., 1970 թ.՝ 173,7 հազ., 1976 թ.՝ 200,1 հազ., 1979 թ.՝ 224,1 հազ., 1998 թ.՝ 264,8 հազ. հեկտար: Հետագա տարիներին, գյուղատնտեսության սեփականաշնորհման հետ կապված, այդպիսի մշակաբույսերի ցանքերը մեծ չափով կրճատվել և 1994 թ. կազմել են 125,1 հազ., իսկ 2002 թ. – 57,8 հազ, հեկտար:

Խաղողագործությունը և պտղաբուծությունը հայ ժողովրդի հնագույն զբաղմունքներից են:

Սակայն դրանք ինտենսիվ զարգացման հիմքերի վրա է դրվել 1920–ական թթ. հետո, առավելապես 1950–ական թվականներից: Ոռոգման լայն ցանցի ստեղծման, ագրոտեխնիկական ժամանակակից մեթոդների, մեքենայական աշխատանքի կիրառման շնորհիվ, մինչև 1980–ական թթ., խաղողագործությունն ու պտղաբուծությունը դարձել էին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առաջատար, մասնագիտացված ենթաճյուղերից մեկը:

Չնայած խաղողագործության և պտղաբուծության համար հանրապետության ներկայիս տարածքում արևային էներգիայի առկայության ու հողային պայմանները նպաստավոր են, սակայն ընդհանուր առմամբ կլիմայի խիստ ցամաքային լինելու (հատկապես Արարատյան դաշտում, որը խաղողագործության հիմնական վայրն է) հետևանքով, այս բնագավառում զգալի դժվարություններ են առաջանում: Քանի որ Արարատյան դաշտում ձմռանը երբեմն ջերմաստիճանն իջնում է մինչև -33^0, ապա այսպիսի պայմաններում խաղողի վազը ցրտահարվում է: Ահա թե ինչու դեռ հնուց Արարատյան դաշտի գյուղացիները աշնան վերջերին խաղողի բերքը հավաքելուց հետո, վազերը թաղում են հողի տակ, իսկ գարնան սկզբին հորից հանում: Իսկ այդ ամենը մեծ չափով դժվարացնում է աշխատանքները, բարձրացնում խաղողի ինքնարժեքը: Իսկ քանի որ այստեղ աճեցվող խաղողն ու պտուղը իրենց որակով, շաքարայնությամբ շատ բարձր են և անուշահամ, ապա չնայած դժվարություններին, այն դարձել է Արարատյան դաշտի գյուղատնտեսության հիմնական ճյուղը: Եվրոպական երկրներից խաղողագործությամբ հանրահայտ են Իսպանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բուլղարիան, Ուկրաինան, Մոլդովան, Ռուսաստանի հյուսիսկովկասյան շրջանը: Մեր հարևան երկրներից այն զարգացած է ԼՂՀ–ում, Վրաստանում և Ադրբեջանում: Այս երկրների խաղողագործական վայրերը աշխարհագրական համարյա նույն լայնությունների վրա են, ինչ որ Հայաստանում, իսկ Ուկրաինայի, Մոլդովայի ու Ռուսաստանի խաղողագործական վայրերը զգալիորեն ավելի բարձր լայնությունների վրա են: Սակայն նշված բոլոր երկրներում խաղողի վազը ձմռանը չի թաղվում հողի տակ, քանի որ կլիմայական պայմանները այնպիսի խիստ ցամաքային տիպի չեն, ինչպիսին Արարատյան դաշտում:

Դարերի փորձը ցույց է տալիս, որ Արարատյան դաշտի, Ջանգեզուրի հարավային մասի, Արփայի ավազանի քարքարոտ, ավազային հողերում խաղողը շատ լավ աճում, բարձր բերք է տալիս, հատկապես ոռոգման պայմաններում: Խնդիրը կայանում է նրանում, որ խաղողագործության համար նորմալ պայմաններ կարող են լինել այն վայրերում, որտեղ տարեկան մթնոլորտային տեղումները միջինը առնվազն 1000 մմ է: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության խաղողագործական վայրերում նշված քանակի 30–35% չափով են լինում: Այդ տեսակետից հատկապես անբավարար է տեղումները Արարատյան դաշտի անապատային ու կիսաանապատային վայրերում: Ահա թե ինչու մեզ մոտ խաղողագործությունը, ինչպես նշվել է, պայմանավորված է արհեստական ոռոգմամբ: Հանրապետության տարածքում անջրդի պայմաններում խաղող կարելի է աճեցնել Տավուշի մարզի

լեռնալանջային արնադեմ որոշ հատվածներում, որտեղ տեղումների քանակը համեմատաբար մեծ է:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության խաղողի այգիների բացարձակ գերակշռող մասը տեղաբաշխված է Արարատյան դաշտում: Այստեղ խաղողագործությամբ զբաղվում են Արարատի, Արտաշատի, Էջմիածնի, Բաղրամյանի, Աշտարակի, Թալինի տարածաշրջաններում (այսինքն՝ այժմյան Արարատի, Արմավիրի մարզերում ու Արագածոտնի մարզի ցածրադիր վայրերում):

Մյուս ռեգիոններից խաղողագործությունը զարգացած է Արփա գետի ավազանում (Վայոց ձորի մարզում), Սյունիքի մարզի հարավում (հատկապես՝ Մեղրու տարածաշրջանում) և Տավուշի մարզում (Նոյեմբերյանի, Իջևանի ու Տավուշի տարածաշրջանների ցածրադիր մասերում):

Հանրապետությունում խաղողի այգիների տարածքը կտրուկ սկսել է մեծանալ 1940–ական թթ. մինչև 1990– ական թթ. սկիզբները, որից հետո ՀՀ գյուղատնտեսության այդ խիստ կարևոր և եկամտաբեր ենթաճյուղի զբաղեցրած տարածքները աննկարելի կերպով սկսեցին կրճատվել: Դա կապված էր գյուղատնտեսության կառուցվածքում սեփականաշնորհման հետ, որի հետևանքներից մեկն էլ արտադրվող խաղողի իրացման բնագավառում ստեղծված դժվարություններն էին: Այդ է պատճառը, որ գյուղացիների զգալի մասը իրենց խաղողի այգիները վերածեցին բանջարանոցների կամ հացահատիկի դաշտերի, որոնց բերքի իրացումը այդ պայմաններում նրանց համար ավելի հեշտ և արդյունավետ է:

Աղյուսակ 30

Խաղողի այգիների տարածքն ու համախառն բերքը 1965–2003 թթ.

Տարիները	Խաղողի այգիների տարածքը (հազ. հեկտար)	Խաղողի համախառն բերքը (հազ. տոննա)
1	2	3
1965	36,1	161,2
1975	35,0	205,6
1978	37,1	222,3
1980	36,2	205,5
1988	37,1	214,0
1995	23,1	154,9
1996	21,9	158,2

1	2	3
1998	15,8	106,0
2000	15,0	119,8
2001	14,8	116,5
2002	13,0	104,0
2003	...	81,6

1913 թ. հանրապետության այժմյան տարածքում խաղողի համախառն բերքը կազմել է 58,5, իսկ 1940 թ.՝ 65,6 հազ. տոննա: Հետագայում, ինչպես ասվել ու երևում է վերը զետեղված աղյուսակից, հանրապետությունում խաղողի այգիների տարածքը մեծ չափերով ընդլայնվել է և 1913 թ. 8 հազ. հեկտարից 1978 թ. հասել 37,1 հազ. հեկտարի: Որից հետո նշված պատճառով դրանց տարածքները զգալիորեն կրճատվել է: Խաղողի բերքատվությունը մեկ հեկտարից 1913–1994 թթ. միջին հաշվով կազմել է 75–95,6 ցենտներ: Ամենից բարձր միջին բերքատվությունը եղել է 1985 թ. և կազմել է մեկ հեկտարից 95,8 ցենտների: Առանձին տնտեսություններում այն հասել է 150 և ավելի ցենտների:

Ամենավերջին տվյալներով խաղողի բերքատվությունը մեկ հեկտարից եղել է 1998 թ.– 69,4, 1999 թ. – 74,7, 2000 թ.– 78,0, 2001 թ. – 81,9, իսկ 2002 թ. – 82,8 ցենտներ:

Խաղողագործության համեմատությամբ ավելի ընդարձակ է ***պտղաբուծության աշխարհագրությունը:*** Սակայն, ինչպես խաղողագործությունը, հանրապետության պտղատու այգիների մեծ մասը նույնպես տեղաբաշխված է Արարատյան դաշտում, որտեղ դրանց համար կան բնական նպաստավոր պայմաններ, արևային առատ էներգիա, համապատասխան հողատեսակներ, ոռոգման խիտ ցանց:

Այստեղ դեռ շատ հնուց արմատավորված են դեղձի, ծիրանի, կեռասի, բալի, տանձի, խնձորի, սալորի ու այլ պտուղների աճեցումը: Դրանք բնութագրվում են բարձր շաքարայնությամբ և հիրավի արևահամ են: Ահա թե ինչու Արարատյան դաշտի պտուղներից արտադրված պահածոները շատ մեծ պահանջարկ ունեն նաև արտասահմանյան երկրներում:

Այդպիսի պտղաբուծությամբ հանրահայտ են նաև Արփայի ավազանը (Վայոց ձորի մարզ), Սյունիքի հարավային մասը (հատկապես Մեղրու կիրճն ու Կապանի տարածաշրջանի ցածրադիր մասերը), Տավուշի մարզի ցածրադիր հատվածները (հատկապես Նոյեմբերյանի ու Իջևանի տարածաշրջանները): Վերը նշված պտուղներից բացի այս ռեգիոններում շատ

հնուց արմատավորված են նաև նռենին, թզենին, ընկուզենին, նշենին: Լոռու, Տավուշի, Կապանի անտառներում տարածված են հոնին, վայրի տանձենին, խնձորենին, զկռենին, մոշենին ու շատ այլ պտղատու, հատապտղատու բուսատեսակներ:

Վերջին տասնամյակներում պտղատու մի շարք ծառատեսակների աշխարհագրությունը մեծապես ընդլայնվել է: Խնձորի ու տանձի (ցրտադիմացկուն, բարձր որակի) այգիներ են ստեղծվել Սևանի ավազանում, Աշտարակի, Նաիրիի, Կոտայքի, Սիսիանի, Գորիսի տարածաշրջաններում, Լոռու, Գուգարքի, նույնիսկ Շիրակի մարզերի տարբեր հատվածներում:

Հանրապետության ցածրադիր մասերում, հատկապես Արարատյան դաշտում, Զանգեզուրում, հյուսիսարևելյան Հայաստանում շատ վաղուց արմատավորված է նաև թթենին: Այս հրաշք պտուղը ունի բազմակողմանի կարևոր նշանակություն, այդ թվում բուժիչ նշանակություն: Բացի թարմ վիճակում օգտագործելուց, դրանցից արտադրվում է բարձրորակ օղի, սպիրտ, դոշաբ, չամիչ:

Աղյուսակ 31

Պտղատու այգիների տարածքն ու համախառն բերքը 1940–2003 թթ.

Տարիները	Պտղատու այգիների տարածքները (հազ. հեկտար)	Պտղի համախառն բերքը (հազ. տոննա)
1940	16,6	29,2
1970	53,4	146,3
1975	53,2	160,7
1980	52,6	130,5
1985	53,4	165,2
1988	51,4	241,1
1995	34,4	146,1
1996	34,1	157,4
1998	20,7	126,7
1999	21,6	88,1
2000	21,7	128,5
2001	21,4	102,4
2002	20,7	82,8
2003	....	101,7

1913 թ. հանրապետության այժմյան պտղատու այգիների տարածքը կազմել է 13,6 հազ. հեկտար, իսկ համախառն բերքը 14,7 հազ. տոննա: Հետագայում 1940 թվականից հետո դրանց տարածքը ու համախառն բերքը, ինչպես երևում է աղյուսակից, մեծ չափերով ավելացել է: Իսկ 1990–ական թվականների սկզբներին գյուղատնտեսության մեջ տեղի ունեցած վերակառուցումների (սեփականաշնորհման հետ կապված) պտղատու այգիների տարածքներն ու համախառն բերքը մեծ չափերով կրճատվել է: Պտղատու այգիների բերքատվությունը մեկ հեկտարից 1913–1994 թթ. միջին հաշվով կազմել է 42,1–55,2 ցենտներ, իսկ 1998–2003 թթ. այն կազմել է 39,2–60,5 ցենտներ մեկ հեկտարից: Խաղողագործություն ու պտղաբուծությունը մեր հանրապետության գյուղատնտեսության առաջատար բնագավառներն են, որոնց բազայի վրա ստեղծվել է գինու ու պահածոների հզոր արդյունաբերություն, որոնց արտադրանքը լայն ճանաչում ունի միջազգային շուկայում: Հետևաբար դրանց հետագա վերելքը (որի համար պայմանները շատ նպաստավոր են) մեր հանրապետության համար հրամայական պահանջ է:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է ալպյան մարգագետիններով, արոտավայրերով, որոնք և կարևոր դեր են խաղացել անհիշելի ժամանակներից այստեղ անասնապահության արմատավորման համար: Դաշտավարությունից, պտղաբուծությունից և խաղողագործությունից բացի հայ ժողովրդի համար միշտ կարևոր դեր է խաղացել նաև անասնապահությունը, այդ թվում խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, ձիաբուծությունը, թռչնաբուծությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը:

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի արտաքին առևտրի համակարգում զգալի տեղ են զբաղեցրել նաև անասունները, այդ թվում հատկապես ձիերը:

Դառը ճակատագրի բերումով հայ ժողովուրդը կորցրել է իր տարածքի 90%–ից ավելին, հետևաբար նաև խիստ կրճատվել են անասնապահության զարգացման համար անհրաժեշտ բնական նախապայմանները՝ արոտավայրերն ու խոտհարքերը:

Այնուհանդերձ, ՀՀ այժմյան տարածքը ունի ոչ քիչ նախապայմաններ այդ ճյուղի զարգացման համար:

Բավական է նշել, որ 1998 թ. հունվարի 1–ի դրությամբ հանրապետության արոտավայրերը կազմում են 694.0 հազ. հեկտար, խոտհարքերը՝ 138.9 հազ. հեկտար: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ կերային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմում են 35–38 հազ. հեկտար տարածք (2002 թ.) ապա կարելի է եզրակացնել, որ անասնապահության զարգացման համար նախապայմանները ընդհանուր առմամբ բավարար են: Կարևորը այդ պայմանների ռացիոնալ օգտագործումն է:

Մինչև 1930–ական թվականները Հայաստանում անասնապահությունը զարգանում էր էքստենսիվ եղանակով, որի հետևանքով մթերատվությունը ցածր էր: Հետագայում, հատկապես 1950–ական թվականներից սկսած, երբ անասնապահության բնագավառում սկսվեց կիրառվել գիտատեխնիկական առաջընթացի մեթոդները, համաշխարհային առաջավոր փորձը, հանրապետության անասնապահությունը դրվեց զարգացման ինտենսիվ ուղու վրա: Այսինքն՝ արտադրանքի աճի բնագավառում շեշտը դրվեց ոչ թե գլխաքանակի ավելացման, այլ մթերատվության (կաթնատվության, մսատվության և այլ) բարձրացման վրա:

Անհիշելի ժամանակներից Հայաստանում զարգացել են անասնապահության բոլոր հիմնական ենթաճյուղերը, չնայած որ դրանք մեծ վնասներ են կրել օտար, վայրի ցեղերի հաճախակի հարձակումներից: Հանրապետության այժմյան տարածքում ինչպես տնտեսության բոլոր ճյուղերը, անասնապահությունը զարգացման համեմատաբար կայուն բնույթ է ստացել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1828 թ. հետո): Սակայն այն նորից խիստ անկում է ապրել 1915–1920 թթ., կապված Թուրքիայի կողմից հայերի դեմ սանձազերծած Մեծ եղեռնի ու քաղաքացիական պատերազմի հետ, երբ Հայաստանում տիրում էին սովը, համաճարակը, խառնիճաղանջ քաղաքական վիճակը, որոնց հետևանքով տնտեսության բոլոր ճյուղերը, այդ թվում անասնապահությունը կազմալուծվել էին:

Այն զարգացման նորմալ հունի մեջ է դրվել միայն խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, հատկապես 1930–ական թվականներից սկսած: Ներկայումս Հայաստանի Հանրապետության անասնապահությունը ունի ճյուղային այսպիսի կառուցվածք:

Խոշոր եղջերավոր անասնապահություն: Այն միշտ էլ եղել է Հայաստանի անասնապահության գլխավոր ենթաճյուղը, որը տալիս է ամբողջ անասնապահության համախառն արտադրանքի գերակշռող մասը:

Ինչպես արդեն ասվել է, հատկապես 1950–ական թթ. սկսած մեծ աշխատանքներ են կատարվել անասնապահությունը ինտենսիվ ուղու վրա դնելու համար: Ընդհանուր առմամբ, խոշոր եղջերավոր անասնապահությունը մեզ մոտ ունի կաթնամսային ուղղություն: Սակայն հանրապետության որոշ ռեգիոններում կաթնատու ցեղերի արմատավորման շնորհիվ հիմք է դրվել կաթնային անասնապահության զարգացմանը: Դրա համար առավել հարմար վայրը Լոռին է, որը և հանդիսանում է հանրապետության խոշոր եղջերավոր անասնապահության գլխավոր ռեգիոնը մթերատվության բնագավառում: Դրա համար կարևոր դեր են խաղում Լոռու սարահարթի խոտառատ արոտավայրերն ու խոտհարքերը: Հենց այս ռեգիոնն էլ առաջատար տեղ ունի կովերի կաթնատվության, կաթի արտադրության ծավալի բնագավառում: Պատահական չէ, որ հենց այստեղ՝ Տաշիրի ու Ստեփանավանի տարածաշրջաններում են գտնվում բարձրորակ կաթնամթերքների, պանրի արտադրության խոշոր գործարանները:

Հանրապետության կաթնամսատու անասնապահության մյուս նշանավոր ռեգիոններն են՝ Շիրակի, Գեղարքունիքի (Սևանի ավազան), Կոտայքի մարզերը, Սյունիքի մարզի հյուսիսային մասը (Գորիսի ու Սիսիանի տարածաշրջանները): 1960–ական թվականներից կաթնային անասնապահությունը զգալի զարգացման էր հասել մերձերևանյան տնտեսություններում ու հանրապետության մյուս խոշոր քաղաքների հանգույցներում, այդ քաղաքների բնակչության պահանջները կաթով ապահովելու նպատակով:

Քանի որ Արարատյան դաշտում է տեղաբաշխված հանրապետության բնակչության հիմնական մասը, և միևնույն ժամանակ այստեղ չկան խոտառատ արոտավայրեր ու խոտհարքեր, ապա այստեղ հետագայում էլ նպատակահարմար է զարգացնել հիմնականում կաթնային անասնապահությունը՝ մսուրային եղանակով:

Իսկ հանրապետության նախալեռնային ու լեռնային վայրերում, որտեղ արոտավայրերը և խոտհարքերը զբաղեցնում են զգալի տարածքներ, նպատակահարմարը կաթնամսային անասնապահության զարգացումն է:

Աղյուսակ 32

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի շարժը

Տարիներ	Խոշոր եղջերավոր անասունների ընդ. գլխաքանակը (հազ. գլուխ)	Այդ թվում կովեր (հազ.)գլուխ
1	2	3
1916	708,0	231,0
1941	598,1	212,4
1971	665,1	262,1
1981	770,4	302,8

1	2	3
1986	860,7	319,3
1988	833,6	312,3
1991	640,0	250,9
1995	503,7	276,2
1996	509,1	277,8
1998	452,0	257,4
1999	478,7	262,1
2000	497,3	264,9
2001	514,9	270,1
2002	535,8	280,9

Ինչպես երևում է աղյուսակից, 1988թ–ից հետո հանրապետությունում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կտրուկ անկում է ապրել, որը բացատրվում է այդ ճյուղի սեփականաշնորհմամբ, որի հետևանքով նրա զարգացման համար եղած միջոցները կազմալուծվել են, անասնապահությունը զրկվել է միասնական տեխնիկական, գիտական, տնտեսական բազայից: Այդ հանգամանքը խիստ բացասաբար է անդրադարձել նաև կաթնատվության վրա:

Աղյուսակ 33

Մեկ կովի տարեկան կաթնատվությունը ըստ տարիների

Տարիները	Միջին տարեկան կաթնատվությունը մեկ կովից (կգ)
1	2
1940	591
1965	1142
1970	1230
1975	1418
1980	1564
1981	1652
1985	2128
1988	1876
1990	1632
1992	869

1	2
1994	819
1996	1534
1998	1670
1999	1708
2000	1668
2001	1685
2002	1708

Խոշոր եղջերավոր անասնապահության մթերատվության, այդ թվում հատկապես կաթնատվության բնագավառում չնայած վերջին տարիներին բարձրացման միտում է նկատվում, այնուհանդերձ մեր հանրապետությունում դեռևս շատ ցածր է: Այն մեծ չափերով ցածր է ոչ միայն Արևմտյան Եվրոպայի երկրներից, որտեղ մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը հասնում է 8–10 հազ. կգ–ի, այլև նախկին ԽՍՀՄ կազմում եղած մի շարք հանրապետություններից, հատկապես Մերձբալթյան երկրներից (Էստոնիա, Լատվիա, Լիտվա), որտեղ այն հասնում է 4,0–4,5 հազ. կգ–ի:

Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության անասնապահության այս ենթաճյուղի գլխավոր հիմնահարցը նրա հետագա ինտենսիվ զարգացումը և կաթնատվության բարձրացումն է: 1996 թ. տվյալներով հանրապետությունում կաթի արտադրությունը կազմել է 429,4, 1997 թ. 435,3, 2000 թ.–452, 2001 թ. 465,7, 2002 թ. – 477,7, 2003 թ. – 502,2 հազ. տոննա: Նշենք նաև, որ 1979 թ. հանրապետությունում արտադրվել է 500 հազ., իսկ 1988 թ.՝ 565,9 հազ. տոննա կաթ, որը ամենաբարձր ցուցանիշն է վերջին հարյուրամյակում:

Մանր եղջերավոր անասնապահությունը հանրապետության անասնապահության հաջորդ գլխավոր ենթաճյուղն է, որը խորհրդային իշխանության տարիներին քանակական ու որակական մեծ փոփոխություններ է կրել: Ի տարբերություն խոշոր եղջերավոր անասնապահության, որը հիմնականում տեղաբաշխված է հարթ տարածքներում, մանր եղջերավոր անասնապահությամբ աչքի են ընկնում լեռնային վայրերը: Սա, անկասկած, չի նշանակում, որ հարթ տարածքներում, հատկապես Շիրակի, Լոռու սարահարթերում անասնապահության այս ենթաճյուղը չի զարգացած:

Իսկ ընդհանուր առմամբ, մանր եղջերավոր անասնապահությունը հիմնականում զարգացած է Սևանի ավազանում (Վարդենիսի, Մարտունու, Ճամբարակի, Սևանի տարածաշրջաններում), Արագածի լեռնալանջային բոլոր բնակավայրերում (Թալինի, Աշտարակի, Ապարանի, Արագածի տա-

ռածաշրջաններում), Վայոց ձորի, Սյունիքի մարզերում և լեռնային մյուս ռեգիոններում: Մինչև 1940–ական թթ. մանր եղջերավոր անասունների ընդհանուր գլխաքանակում ոչխարներից բացի զգալի տեղ ուներ նաև այծերի գլխաքանակը: Հետագայում վերջինների գլխաքանակը իջավ, և այժմ այն շատ աննշան է:

Նախկինում Հայաստանում հիմնականում աճեցվում էին բալբաս, մազեխ, «Ղարաբաղ» ցեղի դմակավոր ոչխարներ, որոնք տալիս են կոպիտ և կիսանուրբ բուրդ: Վերջին ցեղը ունի նաև համեղ միս: Հետագայում ոչխարների տրամախաչումից ստեղծվել են նոր տեսակներ (մերինոս), որոնք տալիս են նրբագեղմ բուրդ:

Նախկինում մինչև սորտերի բարելավումը Հայաստանի ոչխարաբուծությունը ուներ մսակաթնաբրդատու ուղղություն: Իսկ այժմ հիմնականում զարգանում է բրդամսակաթնային ուղղությունը:

Աղյուսակ 34

Մանր եղջերավոր անասունների գլխաքանակի շարժը[1]

Տարիները	Ոչխարների ու այծերի գլխաքանակը (հազ. գլուխ)
1	2
1916	1217,0
1941	1221,3
1971	2062,8
1976	2330,6
1978	2345,9
1980	2322,6
1988	1799,6
1989	1450,1
1991	1186,3
1993	813,0
1994	736,0
1995	636,0

[1] Քանի որ այծերի գլխաքանքակը 1991 թվականից հետո շատ աննշան է դարձել, ապա այդ տարվանից հետո աղյուսակում ցույց տրված ցուցանիշները համարյա ամբողջապես վերաբերում են ոչխարներին:

1	2
1997	521,1
1998	546,3
1999	548,6
2000	540,0
2001	592,1
2002	602,6

Ինչպես երևում է աղյուսակից, մանր եղջերավոր անասունների ընդհանուր գլխաքանակում արդեն 1989 թ. այծերի գլխաքանակը ընդամենը մնացել էր 17 հազ., այսինքն՝ համարյա վերացել էր: Դրանից հետո կտրուկ իջել է նաև ոչխարների գլխաքանակը: Դրա հետևանքով, մեծ չափով կրճատվել է բրդի արտադրությունը: Եթե 1979 թ. հանրապետությունում բրդի արտադրությունը կազմել է 5059 տոննա, 1985 թ.՝ 4425, ապա 1991 թ. այն դարձել է 2115, 1994 թ.՝ 1688, 1997 թ.՝ 1309, իսկ 1998 թ.՝ 1270, 1999 թ.՝ 1311, 2000 թ.՝ 1310, 2001 թ.՝ 1081, 2002 թ.՝ 1120 տոննա: Մինչդեռ հանրապետության պայմանները նպաստավոր են և հնարավորություն են տալիս անասնապահության այդ ենթաճյուղը նորից վերակենդանացնել, որը կնպաստի բրդի ու մսի արտադրությունը զգալի չափով ավելացնել, ինչն իր հերթին նկատելիորեն կբարելավի բնակչության և արտադրության պահանջների ապահովումը այդ բնագավառում:

Խոզաբուծությունն անասնապահության ամենաեկամտաբեր ենթաճյուղն է: Նախկինում Հայաստանում խոզաբուծությունը հիմնականում տարածված է եղել համեմատաբար անտառաշատ վայրերում, որտեղ այդ նպատակի համար որպես կեր կարևոր նշանակություն ունեին անտառներում աճող կաղնու առատ պտուղները, ինչպես նաև մյուս պտղատեսակները:

Հետագայում, խոզաբուծության ինտենսիվ զարգացման համար իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Ստեղծվեցին արդյունաբերական բնույթի խոզաբուծական համալիրներ, որտեղ մսուրային եղանակով իրականացվում է դրանց խնամքը, կերի,ջրի մատակարարումը, սանիտարական աշխատանքները: Խոզաբուծության համար որպես կերի բազա օգտագործվում են հացահատիկի, կարտոֆիլի ու այլ արմատապտուղների զգալի մասը, կերային ճակնդեղը, ինչպես նաև քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում առաջացող սննդային մնացորդները ու թափոնները, որոնք քիչ քանակություն չեն կազմում: Խոզաբուծության ժամանակակից համալիրներ էին ստեղծվել Երևան քաղաքի ու հանրապետության մյուս խոշոր քաղաքների հանգույցներում:

Մասնավորապես, ժամանակակից այդպիսի խոշոր համալիրներ էին ստեղծվել Նուբարաշենում, Բաղրամյանի տարածաշրջանում և Արարատյան դաշտի այլ վայրերում:

Բացի դրանից, պատմականորեն ձևավորված նախապայմաններով, խոզաբուծությունը շարունակում է կարևոր տեղ զբաղեցնել հանրապետության հյուսիսարևելյան՝ անտառային շրջանների բնակավայրերում, առավելապես Թումանյանի, Նոյեմբերյանի, Գուգարքի, Իջևանի, Տավուշի տարածաշրջաններում: Այն զարգացած է նաև Սյունիքի բնակավայրերում:

Աղյուսակ 35

Խոզերի գլխաքանակի շարժը

Տարիները	Գլխաքանակը (հազ. գլուխ)
1916	16,0
1941	58,8
1971	120,5
1976	173,8
1980	236,6
1986	344,3
1989	319,4
1991	310,9
1992	224,4
1995	82,3
1996	79,6
1997	53,3
1998	86,0
1999	70,6
2000	68,9
2001	97,9
2002	111,0

Ինչպես երևում է, մինչև 1980–ական թվականների վերջերը հանրապետությունում խոզերի գլխաքանակը հսկայական չափերով ավելացել և հասել էր 344,3 հազ. գլխի, որից հետո, հատկապես 1990–ական թվականների սկզբներից կտրուկ անկում է ապրել:

Դա տեղի է ունեցել գյուղատնտեսության համակարգում կատարված սեփականաշնորհման հետևանքով, երբ անասնապահության այս ենթաճյուղը փաստորեն նույնպես կորցրեց ստեղծված արտադրական հզոր, միասնական բազան, և դադարեցին գոյություն ունենալ խոզաբուծական պետական խոշոր համալիրները:

Վերջին տարիներին խոզաբուծության նոր վերելքը պայմանավորված է մասնավոր ձեռներեցների նախաձեռնությամբ, որոնց շնորհիվ խոզի մսի հիմնահարցը հանրապետությունում հիմնականում լուծված է:

Թռչնաբուծությունը. Հայաստանում սկսել է զարգանալ շատ հին ժամանակներից, սակայն մինչև 1930–ական թվականները մեզ մոտ այն թողարկվող արտադրանքի ծավալով աննշան տեսակարար կշիռ ուներ: Միայն 1930–ական թվականներից սկսած՝ ստեղծված համարյա բոլոր կոլտնտեսություններում կազմակերպվում են թռչնաբուծական ֆերմաներ: Սակայն անասնապահության այս խիստ կարևոր ենթաճյուղը ժամանակակից արդյունաբերական մեթոդներով սկսեց զարգանալ հատկապես 1960–ական թվականներից, երբ հանրապետության տարբեր վայրերում ստեղծվեցին թռչնաբուծական խոշոր ֆաբրիկաներ: Դրանց մի մասը մասնագիտացվում է ձվատու, ձվամսատու, մյուս մասը՝ մսատու, մսաձվատու թռչնաբուծության ուղղություններով: Այդպիսի մասնագիտացված ֆաբրիկաների շնորհիվ հանրապետությունում ձվի, թռչնի մսի արտադրությունը մեծ չափերով ավելանում է, և մինչև 1980–ական թվականները տալիս էին արտադրվող ձվի ու թռչնի մսի ավելի քան 70 տոկոսը:

Թռչնաբուծական խոշոր ֆաբրիկաներ էին ստեղծվել Նուբարաշենում (Երևանում), Լուսակերտում, Գետամեջում, Արտաշատում,Կապանում, Սպիտակում, Սիսիանում, Էջմիածնում, Սևանում և այլ վայրերում: Դրանցից հզորությամբ ամենախոշորը (նաև Անդրկովկասում) Լուսակերտի ֆաբրիկան էր: Այդպիսի ֆաբրիկաներին զուգահեռ մինչև 1990–ական թթ. սկզբները կարևոր դեր էին խաղում նաև այդ ժամանակ դեռևս պահպանվող կոլտնտեսությունների թռչնաբուծական ֆերմաներն ու անհատ տնտեսությունները: Մշտապես գոյություն ունեցող թռչնաբուծությունը: Հանրապետությունում բոլոր կարգի տնտեսություններում միասին վերցրած ամենից շատ թռչուն եղել է 1987 թ.: Այդ տարում դրանց թիվը կազմել է 12629 հազ., 1989 թ. եղել է 10629,3 հազ.: Հետագա տարիներին, սեփականաշնորհման հետ կապված, այս ճյուղը նույնպես խիստ անկում է ապրել: 1995 թ. տնտեսությունների բոլոր խմբերում կար ընդամենը 2912,6, իսկ 1998 թ.՝ 3190,2 հազ. գլուխ թռչուն: Համապատասխանաբար անկում է ապրել նաև ձվի արտադրությունը: Եթե 1987 թ. ձվի արտադրությունը հանրապետությունում կազմել է 637,0 մլն հատ, 1988 թ. 618,1 մլն հատ, ապա 1993 թ. այն կազմել է 189,0, իսկ 1995 թ.՝ 197,8 մլն հատ: Դրանից հետո զգալիորեն բարձրացել

է թռչունների գլխաքանակը՝ 1999 թ. այն կազմել է 4255,1, 2000 թ.՝ 3975,2, 2001 թ.՝ 3120,3, 2002 թ.՝ 3962,7 հազ. գլուխ: Դրա հետ կապված որոշ չափով բարձրացել է նաև ձվի արտադրության չափը: Մասնավորապես, 1998 թ. այն կազմել է 219,4 մլն, 1999 թ. 325,69, 2000 թ. 385,4, 2001 թ. 448,3, 2002 թ. 477,7, 2003 թ.՝ 502,2 մլն հատ:

Անհիմն ձևով քայքայվել են թռչնաբուծական նախկին ֆաբրիկաները: Հետևանքը այն էր, որ մինչև վերջերս, հատկապես հանրապետության քաղաքային բնակավայրերում վաճառվում էր դրսից ներմուծվող հավի միս և ձու: Մինչդեռ էկոլոգիապես մաքուր հավի մսի ու ձվի արտադրությունը մեզ համար կենսական նշանակություն ունեցող խնդիր է: Այժմ մասնավոր ձեռներեցների կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, այս հիմնահարցը լուծված է, մեր բնակչությունը հիմնականում օգտագործում է տեղում արտադրված հավի միս և ձու:

Շերամապահությունը շատ հին ժամանակներից Հայաստանի ցածրադիր, հիմնականում չոր մերձարևադարձային պայմաններ ունեցող վայրերում ապրող բնակչության զբաղմունքներից մեկն է եղել: Անասնապահության այդ ենթաճյուղի զարգացման համար կերային բազա են հանդիսանում հիմնականում այդպիսի պայմաններում լավ աճող թթենու ծառերը, որոնց տերևներն էլ շերամի որդի համար կեր են հանդիսանում:

Պատմական շատ աղբյուրներում կան վկայություններ այն մասին, որ Հայաստանից շատ արտադրատեսակների հետ միասին արտահանվում էր նաև մետաքսի հումք, ինչպես նաև պատրաստի մետաքսյա գործվածք: Վերջիններիս արտադրությունը հիմնված էր այստեղ զարգացած շերամապահության վրա:

Խորհրդային իշխանության տարիներին շերամապահությամբ զբաղվում էին հանրապետության ավելի քան 10 վարչական շրջաններում: Մասնավորապես, այն առաջին հերթին զարգացած էր Մեղրու, Կապանի, մասնակիորեն նաև Գորիսի նախկին վարչական շրջաններում, Տավուշի ու Իջևանի շրջանների ցածրադիր մասերում, ինչպես նաև Արարատյան դաշտի մի շարք շրջաններում: Իսկ Մեղրիում գործում էր շերամի որդի բուծարան (գրենայի արտադրություն, որտեղից այն մատակարարվում է շերամապահական բոլոր շրջաններին):

Վերջին մի քանի տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում շերամապահությունը անուշադրության էր մատնվել, իսկ Երևանի մետաքսի հզոր կոմբինատը հիմնականում աշխատում էր ներմուծվող հումքով և արհեստական մետաքսաթելով: Սակայն ճշմարտությունը այն է, որ հանրապետության նշված շրջանները շատ հարմար են մեծ չափերով ընդլայնելու

համար շերամապահությանն անհրաժեշտ թթի պլանտացիաները և նորից վերակենդանացնելու անասնապահության այդ ենթաճյուղը, իսկ դրա բազայի վրա՝ բնական մետաքսի արտադրությունը: Թթի պլանտացիաների համար մեծ ծախսեր չեն պահանջվում, դրանց տակ կարելի է օգտագործել քարքարոտ, ավազոտ հողատարածքները, իսկ ստացող արդյունավետությունը ակնառու դեր կխաղա հանրապետության տնտեսության համակարգում:

Մեղվաբուծությունը Հայկական լեռնաշխարհի բնակիչների հնագույն զբաղմունքներից է: Ինչպես լեռնային մյուս երկրներում, այստեղ նույնպես մեղվաբուծության զարգացման համար պայմանները նպաստավոր են: Պատմական փաստերը վկայում են, որ Հայաստանի արտաքին առևտրի համակարգում դեռ հնագույն ժամանակներից իր ուրույն տեղն էր զբաղեցնում մեղրը: Հայտնի է նաև, որ մինչև 20–րդ դարի սկիզբները Հայաստանից մեծ քանակությամբ բարձրորակ մեղր էր արտահանվում նաև Ռուսաստան և եվրոպական այլ երկրներ: Սակայն խորհրդային իշխանության տարիներին այս կարևոր բնագավառին՝ մեղվաբուծությանը, լուրջ ուշադրություն չէր դարձվում: Կոլտնտեսություններում արտադրվում էր տարեկան մի քանի հազար տոննա մեղր: Դրան զուգահեռ, չնայած արհեստական խոչընդոտներին, մեղվաբուծությամբ շարունակում էին զբաղվել նաև մեծ թվով մասնավոր մեղվաբույծներ, որոնց արտադրանքը գերազանցում էր կոլտնտեսություններում արտադրվողի չափերը:

Ներկայումս, երբ հողահանդակները սեփականաշնորհվել են, ավելի լայն հնարավորություններ են ստեղծվել մեղվաբուծության զարգացման համար: Այդ նպատակի համար օգտագործվում են հանրապետության ռելիեֆային առանձնահատկությունները՝ սկսած ցածրադիր վայրերում գարնան սկզբներին պտղատու ծաղկառատ այգիների, իսկ ավելի ուշ՝ ամռան ամիսներին ու աշնան սկզբներին բարձրլեռնային ալպյան ծաղկառատ մարգագետինների լայն հնարավորությունները: Հանրապետության տարածքում մեղվաբուծության զարգացման համար լավ նախապայմաններ կան հատկապես հյուսիսային Զանգեզուրում, Վայքում, Սևանի ավազանում, Արագածի լանջերին, Շիրակի ու Լոռու, Ապարանի սարահարթերում: Սակայն մեղվաբուծության համար շատ հարմար այդ վայրերի հնարավորությունները դեռևս անբավարար են օգտագործվում: Հանրապետության պտղատու այգիների ու բարձրլեռնային, ալպյան մարգագետնային ծաղկաշատ տարածքների ռացիոնալ օգտագործման դեպքում հնարավոր է մեղվաբուծությունը դարձնել եկամտի կարևոր աղբյուրներից մեկը: Իսկ հանրապետության պտղատու այգիների համար այն կհանդիսանա նաև

բերքատվության բարձրացման (ինտենսիվ փոշոտման շնորհիվ) կարևոր միջոց:

Անասնապահության մյուս ճյուղերից Հայաստանում դեռ շատ հնուց զարգացած է եղել ***ծիաբուծությունը:*** Չին Հայաստանի արտաքին առևտրի հիմնական ապրանքատեսակներից մեկն է եղել: Օտար և հայ պատմիչների աշխատություններում հաճախ կարելի է հանդիպել Հայաստանի ծիաբուծության և հայկական ձիերի մասին: Հայտնի է, որ պարսից աքեմենյան արքայից արքաները Հայաստանից որպես հարկ տարեկան վերցնում էին 20 հազ. ձի (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 72): Հանրահայտ է, որ Հայաստանի զինվորական ուժի համակարգում վճռական տեղ էր զբաղեցնում հեծելազորը (այրուձին), ըստ որում, ձիերը ամբողջապես տեղական էին:

Հույն հանրահայտ պատմաբան և ճանապարհորդ Ստրաբոնը Հայաստանին վերաբերող իր ճանապարհորդական աշխատություններում մեծ գովեստով է խոսում հայկական ձիերի մասին: Նշենք նաև, որ հայկական ձիու ազնիվ տեսակով հատկապես հանրահայտ էին Արցախ նահանգը և Սյունիքը:

Ձիաբուծությունը հանրապետության անասնապահության համակարգում աչքի ընկնող տեղ է զբաղեցրել մինչև 1940–ական թթ.: Որից հետո, գյուղատնտեսական արտադրության մեքենայացման հետ կապված, որպես քաշող ուժ ձին կորցրել է իր դերը:

Իսկ տրանսպորտային մեքենաշինության զարգացման հետ կապված, նաև նվազագույնի է հասել ձիու դերը որպես փոխադրամիջոց:

Նախկինում շատ կոլտնտեսություններ ունեին իրենց ձիաբուծական ֆերմաները, հետագայում դրանք վերացել են: Միայն լեռնային շրջանների գյուղական անհատ որոշ տնտեսություններ շարունակում էին ունենալ ձիեր, որոնց ընդհանուր գլխաքանակը հասնում էր մի քանի հազարի:

Ներկայումս, երբ հողը սեփականաշնորհվել է, դժվարությունների հետ է կապված մեքենայական եղանակով փոքր հողակտորների մշակումը, ինչպես նաև մեքենայական տրանսպորտային միջոցների օգտագործումը, հրատապ անհրաժեշտություն է դարձել հանրապետությունում ձիաբուծության վերականգնումը:

Դրա նշանակությունը հատկապես մեծ է հանրապետության լեռնային բոլոր շրջանների համար:

1998–2002 թթ. միջին տարեկան տվյալներով Հայաստանի Հանրապետությունում կար 12 հազ. ձի:

ՀՀ–ում մեկ շնչի հաշվով արտադրվող գյուղատնտեսական հիմնական արտադրատեսակների չափերը

Արտադրանքի տեսակը	Չափի միավ.	Տարիներ				
		1998	1999	2000	2001	2002
Հացահատիկ	կգ	85,8	79,2	59,1	96,6	129,4
Կարտոֆիլ	–//–	116,0	109,6	76,3	95,7	116,6
Միս	–//–	13,5	12,9	13,0	12,7	15,6
Կաթ	–//–	118,0	120,0	118,9	122,4	152,4
Ձու	հատ	57,8	86,0	101,4	118,0	148,8

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքը



4.3. ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից հետո տրանսպորտը հանդիսանում է նյութական արտադրության երրորդ բնագավառը (բեռնատար տրանսպորտի գծով): Չնայած տրանսպորտի բնագավառում արտադ-

ռանք (որպես այդպիսին) չի թողարկվում, սակայն առանց տրանսպորտի արտադրության նորմալ գործունեությունը անհնար է: Տրանսպորտի միջոցով հումքը տեղափոխվում է մինչև վերամշակող ձեռնարկություն, պատրաստի արտադրանքը հասցվում է սպառողներին, կապեր է հաստատվում արտադրության ճյուղերի, բնակավայրերի, երկրների միջև և այլն: Այսինքն՝ տրանսպորտի համակարգում նույնպես ստեղծվում է նոր արժեք (տեղափոխման ծախսերի հետևանքով), ահա թե ինչու այս ճյուղը նույնպես կոչվում է նյութական արտադրության բնագավառ:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը տիպիկ լեռնային երկիր է՝ խիստ կտրտված մակերևույթով, ապա տրանսպորտային ուղիների կառուցումը այստեղ կապված է դժվարությունների ու համեմատաբար մեծ ծախսերի հետ: Չնայած այդ դժվարություններին, դեռևս շատ հնուց պատմական Հայաստանի տարածքով հյուսիսից դեպի հարավ և արևմուտքից դեպի արևելք կառուցվել էին առևտրական մի շարք բանուկ ճանապարհներ, որոնցով Հայաստանը առևտրատնտեսական կապեր էր պահպանում բազմաթիվ երկրների հետ:

Հանրապետության այժմյան տարածքում ժամանակակից տրանսպորտային ուղիների կառուցումը սկսվել է 19–րդ դարի վերջերից՝ կապված երկաթուղիների կառուցման հետ: Իսկ 1920–ական թվականներից սկսած ոչ միայն վերակառուցվում և զարգանում է հանրապետության երկաթուղային ցանցը, այլև ստեղծվում է ժամանակակից ավտոմայրուղիների ցանց, ինչպես նաև տրանսպորտի այլ տեսակներ:

Երկաթուղային տրանսպորտը հանրապետության տրանսպորտի առաջատար ենթաճյուղն է:

Աշխարհում երկաթուղու կառուցումը սկսվել է 1825 թ. Անգլիայում, Ռուսաստանում այն սկսվել է 1830–ական թվականների երկրորդ կեսերից, որը հատկապես արագորեն է զարգացել 19–րդ դարի վերջերից: Այդ ժամանակներում Ռուսաստանը երկաթուղիներ էր կառուցում ոչ միայն կենտրոնից դեպի վառելիքային ու մետաղային ռեսուրսներով հարուստ վայրերը, այլև դեպի իր կայսրության սահմանային շրջաններ՝ ռազմաստրատեգիական նպատակներով:

Ահա այս երկու նպատակներով էլ երկաթուղիներ էին կառուցվում նաև դեպի Անդրկովկաս, այդ թվում նաև դեպի Հայաստան:

Մինչև 19–րդ դարի վերջերն արդեն ավարտվել էր Թիֆլիս–Ալավերդի–Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի)–Ղարս երկաթուղու կառուցումը, իսկ մինչև 1906 թ.՝ նաև Ալեքսանդրապոլ–Երևան–Ջուլֆա երկաթուղու կառուցումը: Երկաթուղին Երևան է հասել 1901 թ. դեկտեմբերին: Այս ուղիների կառուցումը Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ուներ այն առումով, որ մի կողմից շահագրգռված էր Ալավերդու պղնձի պաշարների ու Արարատյան դաշտում աճեցվող բամբակի օգտագործմամբ, մյուս կողմից նաև՝ Թուրքիայի և Իրանի հետ ունեցած սահմանագծի ամրապնդման հետաքրքրությամբ:

Սակայն, այս երկաթուղիները շատ կարևոր դեր խաղացին առաջին հերթին Հայաստանի տնտեսական զարգացման համար: Այն հնարավորություն տվեց մեծ չափով ընդլայնել Հայաստանի առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի կենտրոնական շրջանների հետ: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1913 թ.)Հայաստանի տարածքում գործում էր 362 կմ երկաթուղի: Առաջին համաշխարհային ու քաղաքացիական պատերազմի տարիներին դրանց մեծ մասը կազմալուծվել, քայքայվել էր:

1920–ական թվականներից սկսած, երբ ստեղծվում են խորհրդային կարգեր, այդ ուղիների վերակառուցումից բացի, հանրապետությունում սկսվում են երկաթուղային շինարարության նոր աշխատանքներ:

Մասնավորապես, առաջին հերթին կառուցվեց Գյումրի–Արթիկ–Պեմզաշեն երկաթգիծը, որը վճռական դեր խաղաց Արթիկում և Պեմզաշենում տուֆաքարի լայն մասշտաբով արդյունահանման ու այդտեղից պատրաստի շինաքարը դեպի հանրապետության մյուս շրջաններ տեղափոխելու գործում: Մյուս կարևոր երկաթուղին Մինջևան–Կապան գիծն է, որը շահագործման հանձնվեց 1932 թ., և որը խոշոր դեր խաղաց ոչ միայն առհասարակ հանրապետության այդ կարևոր տնտեսական շրջանի ամբողջ արդյունաբերության, այլև գյուղատնտեսության զարգացման գործում: Այդ գծով Զանգեզուրը կապվեց ոչ միայն Երևանի, Արարատյան դաշտի, այլև ԽՍՀՄ մյուս ռեգիոնների հետ:

Հանրապետության երկաթուղու ցանցը զգալիորեն ընդլայնվեց և կատարելագործվեց հատկապես 1940–ական թվականների վերջերից սկսած: Հանրապետության տնտեսական կյանքում շատ կարևոր դեր խաղաց Երևան–Հրազդան–Սևան–Սոթք երկաթուղու կառուցումը: Իսկ հետագայում Հրազդանից երկաթուղին շարունակվեց մինչև Դիլիջան–Իջևան–Աղստաֆա (վերջինս գտնվում է Ադրբեջանի տարածքում): Այսպիսով՝ հնարավորություն ստեղծվեց Երևան քաղաքը ուղիղ գծով հանրապետության կենտրոնական հատվածով կապել Բաքու–Թբիլիսի երկաթուղու Աղստև կայարանի հետ:

Այս գծերի կառուցումը խոշոր դեր խաղաց Սոթքի ոսկու հանքանյութի տեղափոխման, Սևանի ավազանի, Կոտայքի, Հրազդանի, Իջևանի տարածաշրջանների տնտեսական զարգացման գործում:

Արդեն 1988 թ. հանրապետության շահագործվող երկաթուղու երկարությունը կազմեց 831 կմ (հետագայում նոր երկաթուղիներ չեն կառուցվել): Հանրապետության երկաթուղային տրանսպորտի աշխատանքների կատարելագործման բնագավառում շատ կարևոր դեր խաղաց նրա էլեկտրիֆիկացումը: Այժմ հանրապետության երկաթուղին ամբողջապես էլեկտրիֆիկացված է: Երկաթուղու տեսակարար կշիռը հանրապետության տրանսպորտային ամբողջ բեռնաշրջանառության մեջ մինչև 1980–ական թվականները կազմել է ավելի քան 53 տոկոս: 1970 թ. այս ճյուղի բեռնաշրջանառությունը կազմել է՝ 3,2, 1980 թ.՝ 5,8, 1988 թ.՝ 4,8, 1991 թ.՝ 1,28 միլիարդ տոննա–կիլոմետր, իսկ հետագա տարիներին խիստ իջել է այն՝, կապված հանրապետության շրջափակման հետ (1994 թ. երկաթուղու բեռնաշրջանառությունը կազմել է ընդամենը 378 մլն տոննա–կիլոմետր):

2002 թ. տվյալներով հանրապետության երկաթուղու բեռնաշրջանառությունը կազմել է 451,8 մլն տոննա–կիլոմետր, ուղևորաշրջանառությունը՝ 48,4 մլն ուղևոր–կիլոմետր, նույն տարում երկաթուղով տեղափոխվել է 2019,3 հազ. տոննա բեռ և 1,3 մլն ուղևոր: Հանրապետության բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում 2002 թ. երկաթուղու տեսակարար կշիռը կազմել է 27% (նախկին 53%–ի փոխարեն):

ՀՀ երկաթուղու երկարությունը 2002 թ. կազմել է 711 կմ, այն ամբողջապես էլեկտրիֆիկացված է: 1990–ական թվականների վերջերից երկաթուղու գործունեությունը նորից սկսել է աշխուժանալ, սակայն այն դեռևս հեռու է 1980–ական թվականների մակարդակից, քանի որ հանրապետությունը Ադրբեջանի կողմից դեռ շրջափակված է:

Ավտոմոբիլային տրանսպորտը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար առանձնահատուկ կարևոր դեր խաղացող ճյուղն է: Քանի որ Ադրբեջանի տարածքով անցնող երկաթուղին մեզ համար շարունակում է մնալ փակ, իսկ Վրաստանի տարածքով անցնողն էլ լիարժեք չի օգտագործվում (Աբխազիայում տիրող վիճակի հետ կապված), ապա ավտոտրանսպորտը ՀՀ–ի համար շարունակում է մնալ վճռական դեր խաղացող: Դրա կարևորությունն արտահայտվում է նաև այն տեսանկյունից, որ հանրապետության տարածքի մեծ մասը ընդգրկված չէ երկաթուղու սպասարկման ոլորտում կամ զգալիորեն կտրված է դրանից: Հանրապետությունում ավտոտրանսպորտի զարգացումը հիմնականում սկսվել է 1920–ական թվականներից հետո: Իսկ մինչ այդ հանրապետության այժմյան տարածքում կային շուրջ 2000 կմ երկարությամբ գրունտային ճանապարհներ, որոնք ձգվում էին Երևանից դեպի Սևան–Դիլիջան–Իջևան, Երևանից դեպի Ալեքսանդրապոլ (այժմյան Գյումրի), Երևանից դեպի Արտաշատ–Նախիջևան

և դեպի հանրապետության այլ ուղղություններ: Այդ ճանապարհներով էլ այն ժամանակ Երևանը կապերի մեջ էր ինչպես հանրապետության ռեգիոնների ու բնակավայրերի, այնպես էլ հարևան պետությունների հետ:

Խորհրդային իշխանության տարիներին ավտոտրանսպորտի զարգացման հետ կապված, այդ նշանավոր բոլոր ուղղություններով ճանապարհները վերակառուցվեցին, կառուցվեցին բարեկարգ, ասֆալտապատ կամ ընդհանրապես ամուր ծածկույթով ավտոճանապարհներ:

Բացի դրանից, կառուցվեցին նաև բոլորովին նոր բարեկարգ ավտոմայրուղիներ, որոնք հանրապետության մայրաքաղաքը կապում են բոլոր ռեգիոնների, քաղաքների և հարևան երկրների հետ: Կառուցվել են նաև միջշրջանային ավտոճանապարհներ: Արդեն 1988 թ. հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոխճուղիների երկարությունը կազմել է 7,7 հազ. կմ., որից 7,4 հազ. կիլոմետրը կոշտ ծածկույթով: Դրանից հետո նոր ավտոճանապարհներ դեռևս չեն կառուցվել, և այդ ցուցանիշները փաստորեն մնում են անփոփոխ: 2002 թ. տվյալներով այդպիսի ավտոխճուղիների երկարությունը կազմել է 7,53 հազ. կմ: Հանրապետության տրանսպորտային բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտը երկաթուղային տրանսպորտից հետո զբաղեցնում էր երկրորդ տեղը, նրա տեսակարար կշիռը կազմում էր ավելի քան 45%: Ավտոտրանսպորտի դերը վճռական է հանրապետության բոլոր այն ռեգիոնների համար, որտեղով դեռևս երկաթուղի չի անցնում և հեռու են երկաթուղու սպասարկման ոլորտից (Վայոց ձորի մարզ, Սյունիքի ու Գեղարքունիքի մարզերի մեծ մասը և այլն):

1990–ական թթ. սկզբներից ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունը նույնպես խիստ կրճատվել է, կապված Ադրբեջանի կողմից հանրապետության շրջափակման, վառելիքի բացակայության, տնտեսության խիստ անկման հետ: Հետագա տարիներին ավտոտրանսպորտի դերը բարձրացել է, քանի որ արտաքին բեռնափոխադրումների մեծ մասը շարունակվում է իրականացվել այս ձևով (երկաթուղու շրջափակման հետ կապված): 2002 թ. տվյալներով ավտոտրանսպորտով տեղափոխվել է շուրջ 4694,9 հազ. տոննա բեռ:

Ավտոտրանսպորտի տեսակարար կշիռը հանրապետության տրանսպորտային բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 1970 թ. 41,0, 1980 թ.՝ 43,0, 1985 թ.՝ 47,2, 1994 թ.՝ 45,2%, հետագայում զգալի տեղաշարժեր են կատարվել այս ճյուղում: 2002 թ. տրանսպորտի այս ճյուղին բաժին է ընկել բեռնափոխադրումների ընդհանուր ծավալի 62,8%–ը: Իսկ նույն թվականին այդ ճյուղի բեռնաշրջանառությունը կազմել է 74,6 մլն

տոննա–կիլոմետր, ուղևորաշրջանառությունը՝ 1715,9 մլն ուղևոր–կիլոմետր:

Այժմ հանրապետության առավել կարևորագույն ավտոմայրուղիներն են՝ Երևան–Սևան–Դիլիջան–Իջևան, Երևան–Արտաշատ–Արարատ–Վայք–Ջերմուկ–Սիսիան–Գորիս:

Գորիսից շատ բարձր կարգի, նորակառույց ավտոմայրուղին Բերձորով (Լաչինով) հասնում է Շուշի, այնուհետև Ստեփանակերտ: ԼՂՀ–ի համար կենսական նշանակություն ունեցող այս մայրուղին կառուցվել է Համահայկական հիմնադրամի միջոցներով: Հանրապետության համար շատ կարևոր մայրուղիներ են Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի (որտեղից այն շարունակվում է դեպի Ախալքալաք, Ախալցխա, այսինքն՝ հանրապետությունը կապում է Վրաստանի հետ), Երևան–Էջմիածին–Արմավիր–Անիպեմզա–Գյումրի, Երևան–Աշտարակ–Ապարան–Սպիտակ–Ստեփանավան–Տաշիր (որտեղից այն շարունակվում է դեպի Վրաստան): Շահագործման է հանձնվել Եղեգնաձոր–Սելիմի լեռնանցք–Մարտունի բարձրակարգ ավտոճանապարհը:

Խողովակաշարային տրանսպորտը հանրապետությունում սկսել է զարգանալ 1960–ական թվականների սկզբներից, երբ Երևան հասավ Ղազախ (Ադրբեջան)– Երևան գազամուղը: Այս գազամուղով հանրապետությունը գազ էր ստանում Ղարադաղի (Ապշերոնյան թերակղզու հանգույց) հանքավայրից:

Հետագայում, երբ ավարտվեց Իրանից (Պարսկական ծոցի ափերից) դեպի նախկին ԽՍՀՄ (Ադրբեջանի Աստարա քաղաք, այստեղից էլ այն ձգվեց մինչև Ղարադաղից–Ղազախ ձգվող գազամուղ և միացավ դրան) ձգվող գազամուղը: Հայաստանի Հանրապետությունը որոշ ժամանակ գազ էր ստանում Իրանից: Ավելի ուշ, երբ Հյուսիսային Կովկասից գազամուղ կառուցվեց (Խաչի լեռնանցքով) մինչև Թբիլիսի, իսկ վերջինս էլ խողովակաշարով արդեն միացված էր Ղազախ–Երևան գծին, հանրապետությունը սկսեց գազ ստանալ Ռուսաստանից (Հյուսիսային Կովկասից): Քանի որ ղարաբաղյան իրադարձությունների հետ կապված, Վրաստանից Հայաստան ձգվող գազամուղի այն հատվածում, որը անցնում էր Ադրբեջանի տարածքով (Ղազախի շրջան) ու այստեղ էլ հաճախակի այն պայթեցվում էր ադրբեջանցիների կողմից և խափանվում գազի մատակարարումը, ապա 1990–ական թթ. սկզբներին Վրաստանի տարածքից ուղիղ գծով դեպի Հայաստան անցկացվեց գազամուղի նոր ճյուղ՝ բացառելով Ադրբեջանի տարածքը: Հենց այդ գազամուղով հանրապետությունը գազ էր ներմուծում Թուրքմենիայից՝ Հյուսիսային Կովկասով: Իսկ այժմ Հայաստանի Հանրապետությունը այդ գազամուղով գազ է ներմուծում Ռուսաստանից:

Վրաստանից Հայաստան ձգվող մայր գազամուղն էլ ճյուղավորվում և ընդգրկում է ամբողջ հանրապետության տարածքը: Հիմնական գծերը ձգվում են դեպի Դիլիջան–Վանաձոր–Սպիտակ–Գյումրի, Դիլիջան–Սևան–Երևան, Երևան–Արարատ ուղղություններով, որոնք էլ իրենց հերթին ճյուղավորվում և ընդգրկում են Սևանի ավազանը, Սյունիքը, ամբողջ Արարատյան դաշտը և մյուս ռեգիոնները: Գազամուղը այժմ այն հիմնական տրանսպորտային միջոցն է, որով ներմուծվում է հանրապետության համար վճռական դեր խաղացող վառելիքը: Իսկ վերջինով պայմանավորված է նաև հանրապետության ջերմաէներգետիկ տնտեսության գործունեությունը: Իրանի հետ կնքված պայմանագրով 2005 թ. կսկսվի Իրան Հայաստան գազամուղի կառուցումը, որով ոչ միայն մեր հանրապետությունը Իրանից կստանա մեծ քանակությամբ բնական այրվող գազ, այլև Հայաստանի տարածքով Իրանի գազը կարտահանվի Եվրոպա:

Հանրապետության բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում խողովակաշարային տրանսպորտի տեսակարար կշիռը 2002 թ. կազմել է 10,1%:

Օդային տրանսպորտը, Հայաստանի Հանրապետության աշխարհագրական բարդ դիրքի հետ կապված ունի առանձնահատուկ կարևոր նշանակություն: Որպես տրանսպորտի կարևոր դեր խաղացող ճյուղ՝ այն հատկապես ձևավորվել է 1950–ական թթ. վերջերին, իսկ մինչ այդ նրա դերը շատ աննշան էր: Չնայած օդային տրանսպորտի տեսակարար կշիռը տրանսպորտային բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում փոքր է, սակայն նրա նշանակությունը անգնահատելի է: Այս ճյուղը հատկապես վճռական դեր է խաղում ոչ միայն ուղևորների տեղափոխությունն արագ իրականացնելու այլև շուտ փչացող, թանկարժեք, ոչ մեծ ծավալի բեռները արագ տեղ հասցնելու, հեռավոր շրջանների բնակչությանը շտապ բուժօգնություն կազմակերպելու և շատ այլ բնագավառներում: Օդային տրանսպորտը վճռական դեր խաղաց Արցախի ազատագրական պայքարի տարիներին, երբ Ադրբեջանը մեր հանրապետությունը բոլոր կողմերից տրանսպորտային շրջափակման էր ենթարկել, և Արցախի հետ կապող միակ և առհասարակ արտաքին հիմնական կապի միջոցը օդային ուղին էր:

1970–1991 թթ. օդային տրանսպորտի տեսակարար կշիռը հանրապետության տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառության մեջ կազմել է 0,5%: Հետագա տարիներին, վերը նշված պատճառի հետ կապված, նրա տեսակարար կշիռը բարձրացել ու արդեն 1994 թ. հասել է 1.7%–ի:

Օդային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 1970 թ. կազմել է 27, 1980 թ.՝ 35, 1988 թ.՝ 46, 1996 թ.՝ 49 մլն տոննա–կիլոմետր: Հետագա տարիներին արտաքին օդային կապերի խիստ կրճատման հետ կապված, այդ ցուցանիշը իջել է և 1994 թ. կազմել է 12 մլն տ–կմ, իսկ 2002 թ.՝ 5,8 մլն տ–կմ:

Հանրապետության խոշոր օդանավակայանը Երևան քաղաքի Զվարթնոց օդանավակայանն է, որտեղից օդային ուղիներ են ձգվում դեպի Մոսկվա ու նախկին ԽՍՀՄ մյուս բոլոր հանրապետություններ, ինչպես նաև աշխարհի տասնյակ այլ երկրներ: Երևանն ունի նաև մեկ այլ՝ Էրեբունի օդանավակայանը, որտեղից նույնպես միջազգային թռիչքներ են իրականացվում: Այդպիսի օդանավակայան է գործում նաև Գյումրիում: Ներհանրապետական նշանակության օդանավակայաններ կան Ջերմուկում, Վարդենիսում, Սիսիանում, Գորիսում և հեռավոր այլ քաղաքներում, որոնք օդային գծերով կապված են Երևանի հետ: Սակայն վերջիններից թռիչքները դեռևս չեն վերականգնված:

Աղյուսակ 37

Հանրապետության տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության դինամիկան 1970 թ. հետո ընկած ժամանակաշրջանում ունի հետևյալ պատկերը

Տարիները	Բեռնաշրջանառությունը (մլն տ/կմ)	Ուղևորաշրջանառություն (մլն ուղևոր/կմ)
1970	5595	3380
1980	10266	6942
1985	9817	8356
1987	10315	8992
1988	9527	9000
1990	6463	9757
1991	5357	7947
1992	1564	3994
1994	463	2158
1998	2526,6	2584,5
1999	1845,5	2113,9
2000	1705,1	2063,4
2001	1722,1	2450,4
2002	1547,4	2621,0
2003	1749,3	2724,6

1920–1990 թթ. ընթացքում հանրապետությունում ստեղծվել ու բարձր զարգացման էին հասել երկաթուղային, ավտոխճուղային, օդային, խողովակաշարային տրանսպորտի ձևերը: Ադրբեջանա–ղարաբաղյան ռազմական հակամարտությունների հետ կապված, հատկապես 1992 թ. սկսած, հանրապետության տնտեսության մյուս ճյուղերի հետ միասին խաթարվել է նաև տրանսպորտի աշխատանքը:

Տնտեսության այս կարևորագույն ճյուղի հեռանկարային խնդիրներից մեկը ոչ միայն նրա աշխատանքի լրիվ վերականգնումն ու տրանսպորտի բոլոր ուղիների վերականգնումն է, այլև հանրապետության բոլոր ռեգիոններն իրար հետ հուսալիորեն կապող բանուկ նոր ճանապարհների կառուցումը: Հատկապես խիստ կարևոր է Սևանի ավազանը Սյունիքի ու Արցախի հետ կապող նոր մայրուղիների կառուցումը:

Աղյուսակ 38

Հանրապետության տրանսպորտային ուղիների երկարությունը վերջին տվյալներով (կմ)

Տրանսպորտի տեսակը	Տարիները				
	1998	1999	2000	2001	2002
Երկաթուղիներ	851,9	711,0	711,0	711,0	711,0
Ավտոխճուղիներ	7527	7527	7527	7527	7527
Մետրոպոլիտեն	12,1	12,2	12,2	12,1	12,1
Ճոպանուղի	5,7	5,7	5,7	5,7	5,7

Աղյուսակ 39

Հանրապետության տրանսպորտային ուղիների բեռնափոխադրումները (հազ. տոննա)

Տրանսպորտի տիպերը	Տարիները					
	1998	1999	2000	2001	2002	2003
Երկաթուղով	1763,3	1390,0	1423,5	1398,0	2019,3	2125,5
Ավտոտրանսպորտով	3174,4	2493,0	2077,0	2609,7	4694,6	4086,2
Օդային տրանսպորտով	18,9	13,5	13,8	11,4	8,4	8,8
Խողովակաշարային տրանսպորտով	1053,5	858,5	967,6	985,9	754,5	844,1
Ընդամենը	6010,1	4755,1	4481,9	5005,0	7476,08	7064,6

Աղյուսակ 40

Հանրապետության տրանսպորտի բեռնաշրջանառությունը (մլն տ/կմ)

Տրանսպորտի տեսակները	Տարիները					
	1998	1999	2000	2001	2002	2003
Երկաթուղային	418,5	323,3	353,6	343,5	451,8	529,2
Ավտոխճուղային	71,8	42,7	40,0	43,0	74,6	78,9
Օդային	15,2	12,7	9,6	9,1	5,8	5,5
Խողավակաշա-ային	2021,0	1466,8	1301,9	1326,5	1015,2	1135,7
Ընդամենը	2526,6	1845,5	1705,1	1722,1	1548,4	1749,3

Աղյուսակ 41

Հանրապետության տրանսպորտով ուղևորների փոխադրումները (մլն ուղևոր)

Տրանսպորտի տեսակը	Տարիները					
	1998	1999	2000	2001	2002	2003
Երկաթուղով	1,6	1,3	1,1	1,2	1,3	1,08
Ավտոտրանսպորտով	117,5	97,8	100,4	121,9	129,7	148,7
Օդային տրանսպորտով	0,9	0,6	0,6	0,8	0,9	0,94
Ընդամենը	159,5	133,7	132,7	151,9	156,9	174,08

Աղյուսակ 42

Հանրապետության տրանսպորտի ուղևորաշրջանառությունը (մլն ուղևոր/կիլոմետր)

	Տարիները					
	1998	1999	2000	2001	2002	2003
Երկաթուղային տրանսպորտ	52,4	46,4	46,8	48,2	48,4	41,2
Ավտոտրանսպորտ	1480,2	1277,9	1310,0	1561,6	1715,9	1867,0
Օդային տրանսպորտ	888,8	646,8	579,2	725,1	755,3	724,3
Էլեկտրատրան-սպորտ	76,2	64,2	58,8	58,3	57,4	92,1
Ընդամենը	2584,5	2113,9	2063,4	2450,4	2621,0	2724,6

Աղյուսակ 43

Հանրապետության բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում տրանսպորտի ճյուղերի տեսակարար կշիռները (%–ով)

Տրանսպորտի տեսակը	Տարիները				
	1998	1999	2000	2001	2002
Երկաթուղային	29,3	29,2	31,8	28,0	27,0
Ավտոխճուղային	52,9	52,4	46,3	52,1	62,8
Օդային	0,3	0,3	0,3	0,2	0,1
Խողավակաշարային	17,5	18,1	21,6	19,7	10,1
Ընդամենը	100	100	100	100	100

Աղյուսակ 44

Հանրապետության ուղևորափոխադրումների ընդհանուր քանակում տրանսպորտի ճյուղերի տեսակարար կշիռները (%–ով)

Տրանսպորտի տեսակը	Տարիները				
	1998	1999	2000	2001	2002
Երկաթուղային	1,0	1,0	0,8	0,8	0,8
Ավտոտրանսպորտ	73,7	73,2	75,7	80,3	82,7
Օդային	0,5	0,4	0,5	0,5	0,6
Էլետրատրանսպորտ	24,8	25,4	23,0	18,4	15,9
Ընդամենը	100	100	100	100	100

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003 թ.



Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003 թ.



ԳԼՈՒԽ V

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Տնտեսական կապերը առաջացել ու զարգացել են աշխատանքի հասարակական բաժանման և դրա հետագա խորացման հետ միասին: Աշխատանքի հասարակական բաժանումը և տնտեսական կապերը արտադրողական ուժերի զարգացման գործոններն են:

Աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով առաջացող արտադրության ճյուղերի ու ոլորտների բարդացմանը զուգընթաց բազմանում և կատարելագործվում են նաև դրանց միջև տեղի ունեցող ապրանքափոխանակության ձևերը. Աշխատանքի բաժանումն ընդգրկում է արտադրության բոլոր ոլորտները, այդ թվում արդյունաբերության և գյուղատնտեսական արտադրության բնագավառները, որի հետևանքով անխուսափելիորեն ապրանքափոխանակություն է ստեղծվում ոչ միայն արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների, այլև գյուղատնտեսության ճյուղերի միջև:

Աշխատանքի հասարակական բաժանումն իր հերթին բերում է արտադրության մասնագիտացում, այսինքն ստեղծվում են նոր արտադրաճյուղեր: Եթե արտադրողական ուժերի զարգացումն ու մասնագիտացումը անխուսափելիորեն տանում է դեպի գոյություն ունեցող արտադրական ոլորտների, ճյուղերի բաժանում և բազմացում, ապա ապրանքափոխանակությունը դրանց միջև սերտ կապ է հաստատում, որն իր հերթին խթանում է դրանց հետագա զարգացումը:

Արտադրության զարգացման հետ ապրանքափոխանակության ձևերն ու մեթոդները նույնպես համապատասխան փոփոխությունների են ենթարկվում:

Արտադրության զարգացումը, ինչպես տարբեր ճյուղերի, այնպես էլ նույն ճյուղի ձեռնարկությունների միջև անխուսափելիորեն կապեր է ստեղծում: Այդ կապերը կարող են լինել ապրանքափոխանակման, փորձի փո-

խանակման կամ այլ ձևերով: Ձեռնարկությունների, շրջանների, երկրների միջև ստեղծված այդպիսի կապերը կոչվում են տնտեսական կապեր:

Այսպիսով՝ **տնտեսական կապերն այն կապերն են, որոնք իրականացվում են արտադրության և շրջանառության ոլորտներում**:

Տնտեսական կապերը լինում են՝

ա) ներճյուղային – նույն ճյուղերի ձեռնարկությունների միջև,

բ) միջճյուղային – տարբեր ճյուղերի ձեռնարկությունների միջև,

դ) միջշրջանային – տարբեր տնտեսական շրջաններում գտնվող ձեռնարկությունների միջև,

ե) ներշրջանային – նույն շրջանի ձեռնարկությունների միջև,

զ) միջազգային – տարբեր երկրների միջև:

Տնտեսական կապերը տարբեր հասարակարգերում իրենց բնույթով արմատապես տարբերվում են միմյանցից:

Որքան տվյալ երկրի տնտեսությունը զարգացած է, այնքան նրա տնտեսական կապերը կատարելագործված և ակտիվ են լինում:

Պատմական Հայաստանը, գտնվելով արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տանող գլխավոր ճանապարհների հանգույցում, դեռևս հնուց առևտրատնտեսական հարաբերությունների մեջ էր Հին աշխարհի շատ երկրների, այդ թվում՝ Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Եգիպտոսի, Միջագետքի, Սև և Միջերկրական ծովերի ավազանների ու դրանցից հյուսիս գտնվող երկրների հետ: Չինաստանից, Հնդկաստանից և արևելյան այլ երկրներից ապրանքները Հայաստանի վրայով եվրոպական երկրներ էին արտահանվում այն նշանավոր ճանապարհով, որը կոչվում էր Մետաքսի ճանապարհ:

Քանի որ Հայաստանը բազմիցս ենթարկվել է օտար ռազմատենչ երկրների հարձակումներին, զավթվել են նրա տարածքները, ավերվել տնտեսությունն ու բնակավայրերը, ապա խիստ փոփոխման են ենթարկվել նաև տնտեսական կապերի ձևերն ու բնույթը:

Հին ժամանակներից սկսած՝ Հայաստանից արտահանվել են մետաղատեսակներ, հացահատիկ, բամբակ, աղ, ձկնատեսակներ, ձիեր, չորացված մրգեր: Հայաստանի արտաքին առևտրատնտեսական կապերը զգալիորեն ակտիվացել են հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, առավելապես կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման, երկաթուղին Հայաստան հասցնելու հետ կապված: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանից արտահանվում էին հիմնականում սև պղինձ, գինի, կոնյակ, օղի, սպիրտ, ցորեն, գարի, բամբակ, բուրդ, պանիր, քիչ քանակությամբ պահածոներ, չորացված մրգեր, մեղր, գորգեր, անասուններ:

Ներմուծվում էին հիմնականում պատրաստի արտադրատեսակներ (հատկապես եվրոպական երկրներից և Ռուսաստանից), այդ թվում ամենատարբեր տեսակի գործիքներ, սարքեր, գործվածքներ, շաքար, պողպատ, չուգուն, փայտանյութ, ցեմենտ, քարածուխ, քիմիական նյութեր, ապակեղեն, թուղթ, լուցկի և շատ այլ արտադրատեսակներ:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ Հայաստանը դարձել էր բարձր զարգացած ինդուստրիա և մեքենայացված գյուղատնտեսություն ունեցող հանրապետություն, արմատապես փոխվել են նրա արտաքին կապերի ծավալները, բնույթն ու ձևերը:

Մինչև 1950-ական թթ. հանրապետության տնտեսական կապերը պասիվ բնույթ ունեին, այսինքն՝ արտահանումը (արժեքային արտահայտությամբ) զգալիորեն զիջում էր ներմուծմանը:

Դրանից հետո, երբ այստեղ ձևավորվել էին մեքենաշինության և վերամշակող արդյունաբերության հարյուրավոր ձեռնարկություններ, ու որոնց արտադրանքի մեծ մասը արտահանվում էր, հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության ծավալներն ու բնույթը փոխվեց: Այսինքն՝ հանրապետությունից արտահանվող արտադրանքը մեծ չափերով գերազանցեց ներմուծմանը (արժեքով):

Արտահանվող արտադրատեսակների մեջ հատկապես գերակշռում էին մեքենաշինության (շուրջ 25%), թեթև արդյունաբերության, սննդի, քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղածուլության արտադրատեսակները:

Մեքենաշինության արտադրատեսակներից արտահանվում էին հատկապես մեծ քանակությամբ մետաղահատ հաստոցներ, ուժային տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, գեներատորներ, հիդրոպոմպեր, կոմպրեսորներ, էլեկտրաճշգրիտ չափիչ սարքեր, էլեկտրալամպեր, կաբելեղեն և շատ այլ արտադրանք: Քիմիական արդյունաբերության արտադրատեսակներից մեծ չափերով արտահանվում էին սինթետիկ կաուչուկ, պոլիմերային իրեր, ավտոդողեր, ծծմբաթթու, պղնձարջասպ, քիմիական ռեակտիվներ, լաքեր ու ներկեր և այլն:

Մետաղածուլության ու լեռնահանքային արդյունաբերության արտադրատեսակներից արտահանվում էր մաքուր պղինձ, մոլիբդենի, բազմամետաղների ու ոսկու խտանյութ, ալյումինի գլանվածք:

Թեթև արդյունաբերության արտադրատեսակներից արտահանվում էին հատկապես մեծ քանակությամբ կաշվեկոշկեղեն և գորգեր, տրիկոտաժեղեն, գուլպեղեն, գործվածքներ:

Սննդի արդյունաբերության արտադրատեսակներից հանրապետության սահմաններից դուրս լայն ճանաչում էին ստացել բարձրորակ կոնյակ-

ները, գինիները, պանիրը, մրգերից ու բանջարեղենից արտադրվող պահածոները, հյութերը, հանքային ջրերը:

Արտահանվում էին զգալի քանակությամբ բնական շինանյութեր, տուֆ, տուֆի սալիկներ, մարմարի ու գրանիտի սալիկներ, պեմզա, հրաբխային խարամ, պեռլիտ, անդեզիտի ալյուր, բենտոնիտ:

Ընդհանուր առմամբ, մինչև 1990–ական թթ. սկիզբները Հայաստանը իր արդյունաբերական արտադրանքի մեծ մասը արտահանում էր ԽՍՀՄ մյուս հանրապետություններ, ինչպես նաև 200–ից ավելի կարևոր արտադրատեսակ էր արտահանում աշխարհի 80 երկիր, այդ թվում նաև ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Ճապոնիա և զարգացած մյուս երկրներ:

Հանրապետությունը իր շատ արտադրատեսակներ մշտապես ցուցադրել է միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում, որտեղ դրանցից հատկապես մետաղահատ հաստոցները, հաշվիչ մեքենաները, ճշգրիտ սարքերը, գինիներն ու կոնյակները, գորգերը, պահածոները արժանացել են ոսկե մեդալների, դիպլոմների:

Մինչև 1990–ական թթ. սկիզբները հանրապետությունից արտահանվող արտադրանքը արժեքային արտահայտությամբ զգալիորեն գերազանցում էր ներմուծվողի համեմատությամբ: Խնդիրը կայանում էր նրանում, որ այդ տասնամյակներին հիմնականում արտահանվում էին բարձր արժեք ներկայացնող ճշգրիտ մեքենաներ, սարքավորումներ, գունավոր մետաղներ, գինի, կոնյակ, քիմիկատներ: Իսկ ներմուծվող արտադրանքի մեջ գերակշռում էին հումքատեսակները և կիսաֆաբրիկատները:

Մասնավորապես, հանրապետությունը տարեկան ներմուծում էր ավելի քան 1 մլն տոննա սև և գունավոր մետաղներ, այդքան էլ նավթամթերքներ, շուրջ 1 մլն մ^3 փայտանյութ, ավելի քան 1,2 մլն տոննա հացահատիկ, հսկայական քանակությամբ տարբեր հումքատեսակներ քիմիական, թեթև, սննդի, շինանյութերի արդյունաբերության համար, պարարտանյութեր:

Ներմուծվում էին նաև տրանսպորտային բոլոր տեսակների մեքենաները, տրակտորները, գյուղատնտեսական մեքենաները, տեխնոլոգիական ամենատարբեր տեսակի սարքավորումներ:

Մեծ քանակություն էին կազմում ներմուծվող շաքարը, կենդանական և բուսական յուղը, ձկնամթերքները, պատրաստի կահույքը, հագուստեղենն ու գործվածքեղենը:

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ եղած հանրապետություններից, Հայաստանի արտաքին առևտրատնտեսական կապերի համակարգում վճռական տեղը պատկանում էր Ռուսաստանի Դաշնությանը: Նրան բաժին էր ընկնում Հայաստան ներմուծվող արտադրանքի ավելի քան 51 և արտահանվողի

52%–ը: Ռուսաստանը հատկապես վճռական դեր էր խաղում սև և գունավոր մետաղների, փայտանյութի, հացահատիկի, տրանսպորտային մեքենաների մատակարարման բնագավառներում:

Հաջորդ տեղը պատկանում էր Ուկրաինային, որին բաժին էր ընկնում ներմուծման 19 և արտահանման 20%–ը: Ուկրաինայի դերը հատկապես կարևոր էր սև մետաղների, քարածխի, աղի, քիմիական հումքատեսակների, ապակու, բուսական և կենդանական յուղի, շաքարի մատակարարման բնագավառներում:

Պատրաստի արտադրատեսակների արտահանումից և ներմուծումից բացի, հանրապետության արտաքին տնտեսական կապերը արտահայտվում էին նաև փորձի փոխանակման, կադրերի պատրաստման, տոնավաճառների ու ցուցահանդեսների կազմակերպման, ֆինանսավարկային և այլ ձևերով:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կապերի համակարգում արմատական փոփոխություններ են տեղի ունեցել 1990–ական թթ. սկզբներից, կապված ԽՍՀՄ փլուզման և անկախության ձեռքբերման հետ:

Նախկինում Հայաստանը հանդիսանում էր ԽՍՀՄ միասնական տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ մասը և տնտեսական կապերը այդ հզոր միության սահմաններում իրականացվում էր նախօրոք կազմված պլանով և անխափան կերպով:

Այժմ այդ կապերը կազմալուծված են: Բացի դրանից, այդ կապերը մեծ չափերով դժվարացել են հանրապետությունում արտադրության սեփականաշնորհման, ինչպես նաև ադրբեջանա–ղարաբաղյան ռազմական հակամարտության հետևանքով: Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության տրանսպորտային շրջափակման պատճառով, հանրապետության տնտեսությունը, հատկապես արդյունաբերությունը նույնպես կազմալուծվել է: Նախկին ակտիվ արտաքին առևտրատնտեսական կապերը այժմ խիստ պասիվ բնույթ ունեն, այսինքն՝ ներմուծումը մեծ չափերով գերազանցում է արտահանմանը:

Մասնավորապես, 1995 թ. հանրապետությունից արտահանված ամբողջ արտադրանքի արժեքը կազմել է 270943,7 հազ. դոլար, իսկ ներմուծված արտադրանքինը՝ 673917,7 հազ. դոլար: 2003 թ. հանրապետության արտահանումը արդեն հասել էր ավելի քան 678079,8 հազ., իսկ ներմուծումը 1269445,21 հազ. դոլար: Այսինքն՝ ՀՀ արտաքին առևտրային հաշվեկշիռը դեռևս պասիվ է, և այն կազմել է 591365,4 հազ. դոլար:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հանրապետության առևտրաշրջանառության ծավալը վերջին տարիներին զգալիորեն մեծանում է, այդ թվում մեծանում են նաև արտահանման ծավալները:

Վերջին տարիների տվյալներով հանրապետության արտաքին առևտրաշրջանառության շարժը ունի հետևյալ պատկերը.

1999 թ. – 1042936,8 հազ. ԱՄՆ դոլար
2000 թ. – 1185220,7 .....
2001 թ. – 1219270,2 .....
2002 թ. – 1492315,2 .....
2003 թ. – 1947524,9 .....

Հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգում շարունակում են վճռական դեր խաղալ նախկին ԽՍՀՄ հանրապետությունները (բացառությամբ Ադրբեջանի), որոնց բաժին է ընկնում արտահանման 18,7 և ներմուծման 24,4%–ը: Այդ թվում Հայաստանի Հանրապետության համար շարունակում է վճռական դեր խաղալ Ռուսաստանի Դաշնությունը, 1995 թ. ՀՀ–ից Ռուսաստան է արտահավել 90802,5, իսկ 2003 թ. 94569,2, նույն թվականին ներմուծվել է այդ երկրից 207751,8 հազ. դոլարի արտադրանք:

ԱՊՀ մյուս երկրներից հատկապես նշանակալից է նաև Ուկրաինայի, Վրաստանի, Թուրքմենիայի, Բելառուսի, Ղազախստանի տեղը այդ համակարգում:

ԱՊՀ կազմում գտնվող 11 երկրներից բացի Հայաստանի Հանրապետությունը տնտեսական կապերի մեջ է Եվրոպայի ավելի քան 30 երկրների հետ, այդ թվում բարձր զարգացած բոլոր երկրների հետ: Ներմուծվող և արտահանվող արտադրանքի ծավալներով առավել կարևոր տեղ են զբաղեցնում Ֆրանսիան, Բելգիան, Գերմանիան, Իտալիան, Նիդեռլանդները, Շվեյցարիան, Իռլանդիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ, Լյուքսեմբուրգը, Հունաստանը, նախկին սոցիալիստական երկրներից այդ կապերի համակարգում հատկապես զգալի է Բուլղարիայի, Չեխիայի, Ռումինիայի տեղը, մերձբալթյան երեք հանրապետություններից Լիտվայի տեղը: Ներկա ժամանակաշրջանում հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգում շատ կարևոր տեղ է զբաղեցնում Իրանը:

1995 թ. տվյալներով Իրան է արտահանվել 35042,1 հազ. դոլարի, իսկ 2003 թ. 22222,4 հազ. դոլարի արժողությամբ արտադրանք: Իսկ ներմուծումը այդ երկրից 2003 թ. կազմել է 66788,2 հազ. դոլար: Հետաքրքիր է,որ տարեցտարի մեծ չափերով ավելանում են այդ երկրի հետ ունեցած կապերի ծավալները:

ԱՄՆ–ից ներմուծված արտադրանքի արժեքը 1993 թ. կազմել է 26941,5 հազ., 1994 թ.՝ 96096,5, 1995 թ.՝ 114433,7, 2003 թ.՝ 101699,0 հազ. դոլար, իսկ արտահանումը համապատասխանաբար՝ 245,6 հազ., 364,6 հազ., 619.9 հազ. և 55967,6 հազ. դոլար:

Թուրքիայից ներմուծված արտադրանքի արժեքը 1995 թ. կազմել է 2589,5 հազ., 2003 թ.՝ 38111,9 հազ., իսկ արտահանումը՝ 2598,3 հազ. և 1029,3 հազ. դոլար, այսինքն՝ այս երկրի հետ կապերը նույնպես պասիվ են:

Արաբական երկրներից այս առումով ակտիվ դեր ունեն Արաբական Միացյալ Էմիրությունները, որտեղից ներմուծված արտադրանքի արժեքը 1993 թ. կազմել է 2659,7 հազ., 1994 թ.՝ 1065,8 հազ., 1995 թ.՝ 13810,3 հազ., 2003 թ.՝ 57715,4 հազ. դոլար, իսկ արտահանումը համապատասխանաբար 323 հազ., 104,9 հազ., 411,4 հազ. և 16586,6 հազ. դոլար:

Հայաստանի Հանրապետությունը տնտեսական կապեր ունի նաև Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի, Հարավային Կորեայի, Չինաստանի, Հնդկաստանի, Կանադայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և աշխարհի տասնյակ այլ երկրների հետ:

1993–2003 թթ. ՀՀ–ն ներմուծված արտադրանքի 100–ից ավելի խմբատեսակներից առավել մեծ քանակություն են կազմել վառելիքատեսակները, տարբեր տեսակների մեքենաները (այդ թվում հատկապես տրանսպորտային մեքենաները), մետաղներն ու դրանցից արտադրված իրերը, պատրաստի հագուստեղենը, կոշկեղենը, միսը և մսամթերքները, կենդանական և բուսական յուղը, հացահատիկը, սուրճը, շաքարը, խմիչքները, ծխախոտը, թանկարժեք քարերն ու մետաղները և դրանցից արտադրված իրերը, օպտիկական, բժշկական իրերն ու սարքերը, դեղանյութերը, ներկանյութերը, արհեստական շինանյութերը, պլաստմասսաները, կաշվեղենը, կենցաղային ամենատարբեր նշանակության իրերը և շատ այլ արտադրատեսակներ:

1995 թ. հետո զգալի տեղաշարժեր են կատարվել հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգում ինչպես քանակական, այնպես էլ կառուցվածքային տեսակետից:

Մասնավորապես, արտահանումը 1995 թ. շուրջ 271 մլն դոլարի փոխարեն, 2003 թ. հասել է 678 մլն դոլարի: Իսկ ներմուծումը 873,9 մլն դոլարից 2003 թ. հասել է 1269 մլն դոլարի: Այսինքն՝ հանրապետության արտաքին առևտրաշրջանառության պասիվ բնույթը շարունակվում էր:

Սակայն այդ ճեղքվածքը նկատելիորեն կրճատվում է: Շատ կարևոր է, որ արտահանման կառուցվածքը որակական առումներով դրականորեն փոխվում է:

Ստորև զետեղված աղյուսակներում 2002 և 2003 թթ. տվյալներով տրվում են հանրապետության արտահանման և ներմուծման ցուցանիշները ըստ երկրների և արտադրատեսակների խմբերի:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և առևտրային հաշվեկշռի ցուցանիշներն ըստ առանձին երկրների 2002 և 2003 թթ.

(հազ. դոլար)

Արտաքին առևտրաշրջանառություն			Առևտրային հաշվեկշիռ			
	2002 թ. հունվար–դեկտեմբեր	տեսակ. կշիռը,%	2003 թ. հունվար–դեկտեմբեր	տեսակ. կշիռը, %	2003 թ. հունվար–դեկտեմբեր	տեսակ. կշիռը, %
1	2	3	4	5	6	7
Ընդամենը	1492315,2	100,0	1947524,9	100,0	–591365,4	100,0
ԱՊՀ երկրներ	398142,3	26,7	436450,8	22,4	–182976,4	30,9
այդ թվում՝						
Ռուսաստան	257531,6	17,3	302321,0	15,5	–113182,6	19,1
Վրաստան	48077,8	3,2	54180,0	2,8	–22349,3	3,8
Ուկրաինա	53826,5	3,6	51391,9	2,6	–36772,6	6,2
Թուրքմենստան	27752,8	1,9	11091,8	0,6	–3813,7	0,6
Ղազախստան	2543,4	0,2	2958,8	0,2	–873,0	0,1
Բելառուս	3533,2	0,2	7152,3	0,4	–2984,1	0,5
ԱՊՀ այլ երկրներ	4877,8	0,3	7354,9	0,4	–3001,1	0,5
Ոչ ԱՊՀ երկրներ	1094172,8	73,3	1511074,2	77,6	–408388,9	69,1
այդ թվում՝						
ԵՄ երկրներ	453414,6	30,4	631077,3	32,4	–113768,6	19,2
Ավստրիա	3311,5	0,2	4174,0	0,2	–3974,0	0,7
Բելգիա	183380,4	12,3	253537,5	13,0	–5869,5	1,0
Ֆինլանդիա	2566,2	0,2	2728,2	0,1	–2556,3	0,4
Ֆրանսիա	13319,4	0,9	19801,3	1,0	–16007,0	2,7
Գերմանիա	71024,9	4,8	88078,5	4,5	506,4	–0,1
Հունաստան	13356,1	0,9	35841,5	1,8	–25415,4	4,3
Իտալիա	48327,6	3,2	58481,5	3,0	–20605,6	3,5
Լյուքսեմբուրգ	11024,0	0,7	25919,2	1,3	–23625,8	4,0
Նիդեռլանդներ	21298,4	1,4	33854,0	1,7	9962,5	–1,7
Մեծ Բրիտանիա	79330,5	5,3	96854,4	5,0	–17246,0	2,9
Իսպանիա	3385,2	0,2	7447,6	0,4	–5061,0	0,9
ԵՄ այլ երկրներ	3090,3	0,2	4359,6	0,2	–3777,1	0,7
Այլ երկրներ	640758,2	42,9	879996,9	45,2	–294620,4	49,8
Իսրայել	170408,7	11,4	265748,0	13,6	18946,9	–3,2
ԱՄՆ	98960,3	6,6	157657,5	8,1	–45722,4	7,7
Միաց.Արաբ. էմիրություններ	57144,7	3,8	74302,0	3,8	–41128,8	7,0
Իրան	94084,0	6,3	89010,6	4,6	–44565,9	7,5
Բուլղարիա	51091,7	3,4	31795,0	1,6	–28759,9	4,9
Թուրքիա	39667,7	2,7	39141,2	2,0	–37082,7	6,3
Շվեյցարիա	18024,7	1,2	73217,1	3,8	–9930,6	1,7
Ռումինիա	7317,3	0,5	6782,9	0,3	–6741,3	1,1
Չինաստան	14177,4	1,0	16277,1	0,8	–708202	1,2
Բրազիլիա	15580,0	1,0	8260,6	0,4	–8260,6	1,4
Կիպրոս	3750,5	0,3	10068,7	0,5	–9330,5	1,6
Ճապոնիա	12654,3	0,1	8732,6	0,4	–8520,9	1,4
Պանամա	3451,9	0,2	24160,1	1,2	–23582,3	4,0
Հնդկաստան	4604,6	0,3	6013,6	0,3	–59260,8	1,0
Այլ երկրներ	61229,5	4,1	68829,8	3,5	–36932,5	6,2

ՀՀ արտաքին առևտուրն ըստ առանձին երկրների, 2002 և 2003 թթ.

Երկրի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ				ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			
	2002 հունվար–դեկտեմբեր		2003 հունվար–դեկտեմբեր		2002 հունվար–դեկտեմբեր		2003 հունվար–դեկտեմբեր	
	արժեքը հազ. դոլար	տես. կշիռը%	արժեքը հազ. դոլար	տես. կշիռը%	արժեքը հազ. դոլար	տես. կշիռը%	արժեքը հազ. դոլար	տես. կշիռը%
1	2	3	4	5	6	7	8	9
Ընդամենը	505159,7	100,0	678079,8	100,0	987155,5	100,0	1269445,2	100,0
ԱՊՀ երկրներ այդ թվում	96331,8	19,1	126737,2	18,7	301810,6	30,6	309713,6	24,4
Ռուսաստան	64634,0	12,8	94569,2	13,9	192897,6	19,5	207751,8	16,4
Վրաստան	16606,9	3,3	15915,4	2,3	31470,1	3,2	38264,6	3,0
Ուկրաինա	8090,6	1,6	7309,7	1,1	45735,9	4,6	44082,3	3,5
Թուրքմենստան	2777,0	0,5	3639,0	0,5	24975,9	2,5	7452,8	0,6
Ղազախստան	811,8	0,2	1042,9	0,2	1731,6	0,2	1915,9	0,2
Բելառուս	1492,9	0,3	2084,1	0,3	2040,3	0,2	5068,2	0,4
ԱՊՀ այլ երկրներ	1918,6	0,4	2176,9	0,3	2959,2	0,3	5178,0	0,4
Ոչ ԱՊՀ երկրներ *այդ թվում՝*	408827,9	80,9	551342,6	81,3	685344,9	69,4	959731,6	75,6
ԵՄ երկրներ	197691,0	39,1	258654,3	38,1	255723,6	25,9	372422,9	29,3
Ավստրիա	73,7	0,0	100,0	0,0	3237,8	0,3	4074,0	0,3
Բելգիա	92272,7	18,3	123834,0	18,3	91107,7	9,2	129703,5	10,2
Ֆինլանդիա	66,6	0,0	86,0	0,0	2500,3	0,3	2642,2	0,2
Ֆրանսիա	1123,6	0,2	1897,1	0,3	12195,8	1,2	17904,1	1,4
Գերմանիա	28164,1	5,6	44292,4	6,5	42860,8	4,3	43786,0	3,4
Հունաստան	1170,2	0,2	5213,1	0,8	12185,9	1,2	30628,4	2,4
Իտալիա	11697,9	2,3	18938,0	2,8	36629,7	3,7	39542,5	3,1
Լյուքսեմբուրգ	332,5	0,1	1146,7	0,2	10691,5	1,1	24772,5	2,0
Նիդեռլանդներ	11218,1	2,2	21908,2	3,2	10080,4	1,0	11945,7	0,9
Մեծ Բրիտանիա	51091,0	10,1	39804,2	5,9	28239,5	2,9	57050,2	4,5
Իսպանիա	313,7	0,1	1193,3	0,2	3075,5	0,3	6254,3	0,5
ԵՄ այլ երկրներ	167,5	0,0	241,3	0,0	2922,7	0,3	4118,3	0,3
Այլ երկրներ	211136,9	41,8	292688,3	43,2	429621,3	43,5	587308,6	46,3
Իսրայել	87713,2	17,4	142347,4	21,0	82695,5	8,4	123400,5	9,7
ԱՄՆ	46238,3	9,2	55967,6	8,3	52722,0	5,3	101690,0	8,0
Միաց.Արաբ. էմիրություններ	14198,2	2,8	16586,6	2,4	42946,5	4,4	57715,4	4,5
Իրան	31468,6	6,2	22222,4	3,3	62615,4	6,3	667888,2	5,3
Բուլղարիա	1596,0	0,3	1517,6	0,2	49495,8	5,0	30277,4	2,4
Թուրքիա	1431,8	0,3	1029,3	0,2	38232,0	3,9	38111,9	3,0
Շվեյցարիա	7757,7	1,5	31643,3	4,7	10266,9	1,0	41573,9	3,3
Ռումինիա	88,7	0,0	20,8	0,0	7228,5	0,7	6762,1	0,5
Չինաստան	4049,9	0,8	4597,4	0,7	10127,5	1,0	11679,7	0,9
Բրազիլիա	0,1	0,0	0,0	0,0	15579,9	1,6	8260,6	0,7

1	2	3	4	5	6	7	8	9
Կիպրոս	1293,8	0,3	369,1	0,1	2456,8	0,2	9699,6	0,8
Ճապոնիա	800,9	0,2	105,8	0,0	464,5	0,0	8626,7	0,7
Պանամա	157,8	0,0	288,9	0,0	3294,1	0,3	23871,2	1,2
Հնդկաստան	325,2	0,1	43,4	0,0	4279,4	0,4	5970,2	0,5
Այլ երկրներ	14012,8	2,8	15948,7	2,4	47216,6	4,8	52881,2	4,2

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունը վերջին տվյալներով առևտրատնտեսական կապերի մեջ է Եվրոպայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Ավստրալիայի ու Օվկիանիայի 109 երկրների հետ:

Աղյուսակ 47

ՀՀ արտաքին առևտուրն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2003 թ. հունվար–դեկտեմբեր

(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզերը	Արտահանում		Ներմուծում	
	արժեքը		արժեքը	
	մլն դրամ	հազ. դոլար	մլն դրամ	հազ. դոլար
Ընդամենը ՀՀ	400584,2	663300,0	711450,2	12227215,0
Երևան	145652,4	241176,0	440316,5	759523,4
Արագածոտնի	480,7	796,0	2916,9	5031,6
Արարատի	3525,1	5837,0	7683,7	13253,9
Արմավիրի	1161,7	1923,6	4766,7	8222,3
Շիրակի	881,3	1459,3	8857,6	15278,8
Վայոց ձորի	1161,7	1923,6	2134,4	3681,6
Տավուշի	480,7	796,0	711,5	1227,2
Սյունիքի	43263,1	71636,4	29397,1	50708,5
Գեղարքունիքի	841,2	1392,9	8146,1	14051,6
Լոռու	12858,8	21291,9	8843,3	15254,3
Կոտայքի	190277,5	315067,6	197676,4	340981,7

Աղյուսակ 48

2002 և 2003 թթ. արտահանման և ներմուծման ծավալների համեմատական աղյուսակ ըստ ապրանքախմբերի

(*հազ. դոլար*)

	Արտահանում		Ներմուծում	
	2002թ. հունվար–դեկտեմբեր	2003թ. հունվար–դեկտեմբեր	2002թ. հունվար–դեկտեմբեր	2003թ. հունվար–դեկտեմբեր
1	2	3	4	5
ԸՆԴԱՄԵՆԸ	505159,7	678079,8	987155,5	1269445,2
այդ թվում				
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	2678,4	5698,9	27677,9	32329,5
բուսական ծագման արտադրանք	1753,9	3116,0	74393,5	74569,9
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0,7	176,6	18395,5	22648,1
պատրաստի սննդի արտադրանք	54779,2	72227,3	79328,4	92936,4
հանքահումքային արտադրանք	42124,0	47679,6	171413,0	176690,2
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1950,7	2985,8	62808,3	83068,8
պլաստմասսա և դրանից իրեր. կաուչուկ և ռետինե իրեր	6320,4	4807,0	22145,3	28480,9
կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	645,9	780,6	1787,6	1805,0
փայտ և փայտյա իրեր	1283,9	1526,4	7187,9	8622,5
թուղթ և թղթից իրեր	722,5	1022,9	18509,6	22145,9
մանածագործական իրեր	28626,6	30866,5	36084,7	39610,8

1	2	3	4	5
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ, իրեր	359,4	188,9	4255,8	4324,6
քարից, գիպսից, ցեմենտից	2958,3	1619,8	19214,5	21811,1
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	258327,7	349440,7	213471,1	329567,8
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	44777,8	90379,9	55691,9	76366,9
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	21434,4	20543,5	103374,5	132428,0
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	15033,0	14070,4	39867,1	73147,5
սարքեր և ապարատներ	19225,8	28483,9	20487,1	33531,9
տարբեր արդյունաբերական ապրանքներ	1406,9	1827,0	11035,3	15112,8
արվեստի ստեղծագործություններ	750,1	638,3	26,3	246,6

Ինչպես արդեն նշվել է, թեև արտահանումն ու ներմուծումը զգալի չափով ավելացել է, սակայն հանրապետության արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշիռը մնում է պասիվ:

Բացի արտադրատեսակների ներմուծումից և արտահանումից, անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունն ունի նաև արտաքին տնտեսական կապերի այլ ձևեր: Հատկապես արագորեն զարգանում է համատեղ ձեռնարկությունների կազմակերպումը: Մասնավորապես, այդ նպատակով ամերիկյան և կանադական ձեռներեցները միջոցներ են ներդնում Հայաստանի ոսկու պաշարների արդյունահանման, հարավաֆրիկյան ձեռներեցները՝ թանկարժեք քարերի մշակման, ֆրանսիական, գերմանական, անգլիական ձեռներեցները՝ սննդի արդյունաբերության (այդ թվում կոնյակի արտադրության), շինանյութերի, գունավոր մետաղների արտադրության, բժշկության և այլ բնագավառներում: Վերակենդանանում են զբոսաշրջության բնագավառի կապերը աշխարհի մի շարք երկրների հետ: Զբոսաշրջությունը կարող է դառնալ ՀՀ եկամտի կարևոր աղբյուրներից մեկը: Դեռ 1987 թ. միայն հեռավոր արտասահմանյան երկրներից եկած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 100 հազ., 2003 թ. դրանց թիվը հասել է 206 հազ.–ի, իսկ եկամուտը ավելի քան 200 մլն դոլար:

Հանրապետության արտաքին կապերի համակարգում 1990–ական թթ. սկզբներից շատ կարևոր տեղ են զբաղեցնում ֆինանսական կապերը: Մինչև 1998 թ. արտասահմանյան երկրները Հայաստանին տրամադրել են ավելի քան 800 մլն դոլար երկարաժամկետ վարկ: Դրանք տրամադրվել են հատկապես բարձր զարգացած երկրների կողմից՝ հանրապետության տնտեսական ծանր վիճակը թեթևացնելու նպատակով: 2003 թ. տվյալներով արտասահմանյան երկրների կողմից տրամադրված երկարաժամկետ վարկերը արդեն կազմել են ավելի քան 1.1 մլրդ դոլար:

Ինչպես վերն արդեն նշվել է, ներկայումս ՀՀ արտաքին տնտեսական կապերը իրականացվում են բազմազան ձևերով՝ հումքի, կիսաֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի արտահանման և ներմուծման, ֆինանսավարկային, համատեղ ձեռնարկությունների կառուցման, կադրերի պատրաստման և փոխանակման, փորձի փոխանակման, միջազգային տոնավաճառների ու ցուցահանդեսների կազմակերպման, զբոսաշրջության և այլ ձևերով: Դրանց զուգահեռ գնալով լայն չափեր է ընդունում տնտեսության ճյուղերի **ինտեգրումը** (սերտաճեցումը), ինչպես նաև **գլոբալացումը**: Հատկապես ինտեգրման բնագավառում շատ կարևոր դեր են խաղում միջազգային այնպիսի կազմակերպություններ, որոնց մեջ ընդգրկված են

բազմաթիվ երկրներ՝ իրենց տնտեսական հնարավորությունները միացյալ ուժերով օգտագործելու համար:

Միջազգային այդպիսի կազմակերպություններից ամենալայն գործունեություն և կապեր ծավալողը Միացյալ ազգերի կազմակերպությունն է (ՄԱԿ), որը ստեղծվել է 1945 թ. և ընդգրկում է ավելի քան 190 երկիր, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Այդ բնագավառում մեծ դեր են խաղում նաև «Զարգացման և վերակառուցման միջազգային կոմիտեն», որի մեջ ընդգրկված են 180 երկիր, «Համաշխարհային առևտրի կազմակերպությունը», որի մեջ ընդգրկված են 130 երկիր, այդ թվում նաև ՀՀ–ն:

Բացի համաշխարհային չափանիշի նշված ու այլ կազմակերպություններից, կան նաև միջազգային ռեգիոնալ կազմակերպություններ, որոնք նույնպես խոշոր դեր են խաղում միջազգային տնտեսական կապերի զարգացման գործում: Դրանցից են՝ «Եվրոպական միությունը», որի մեջ արդեն 2004 թ. մայիսի 1–ի դրությամբ ընդգրկված են Եվրոպայի 25 պետություն, որը և այժմ տնտեսական ինտեգրացման խոշորագույն կազմակերպությունն է աշխարհում, և որին ձգտում է անդամակցել նաև ՀՀ–ն: Այդպիսի կազմակերպություններ են նաև «Եվրոպական ինվեստիցիոն բանկը», որը ֆինանսավարկային խոշոր կազմակերպություն է, «Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկը» (ընդգրկում է 59 պետություն), «Եվրոպայի համագործակցության և անվտանգության կազմակերպությունը» (ԵԱՀԿ), ինչպես նաև Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի տարբեր ռեգիոնների նմանատիպ կազմակերպություններ:

Միջազգային տնտեսական համագործակցությամբ միավորում են ստեղծել նախկին ԽՍՀՄ հանրապետություններից 12–ը (բացի մերձբալթյան 3 հանրապետությունները), որը կոչվում է «Անկախ պետությունների համագործակցություն» (ԱՊՀ): Վերջինիս անդամ է նաև ՀՀ–ն: Ստեղծված են նաև «Սևծովյան երկրների համագործակցության կազմակերպություն», որի անդամ է նաև ՀՀ–ն:

Անկախություն ստանալուց հետո ՀՀ–ն բնականորեն պետք է ձգտեր անդամակցել միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպություններին, ինչը արդեն կամաց–կամաց իրականացվում է: Դա խիստ անհրաժեշտ է՝ կապված այն հանգամանքի հետ, որ նախ ՀՀ տարածքը շատ փոքր է, ռելիեֆը խիստ բարդ, խիստ սահմանափակ են նրա ռեսուրսները, մյուս կողմից էլ ԽՍՀՄ կազմալուծումից հետո կազմալուծվել են նաև ՀՀ նախկինում ստեղծված հզոր տնտեսությունը և բազմակողմանի տնտեսական կապերը: Հետևաբար, անհրաժեշտ է ստեղծել միջազգային տնտե-

սական կապերի նոր ձևեր: Իսկ դրա համար, Հայաստանի Հանրապետությունն ու հայ ժողովուրդն ունեն արդեն պոտենցիալ մեծ հնարավորություններ, որոնք ձեռք են բերվել 1920–1990 թթ. արտադրության կազմակերպման, կադրերի պատրաստման, գիտության և տեխնիկայի բնագավառներում: Հայաստանից միջազգային շուկա դուրս բերված արդյունաբերական ավելի քան 200 արտադրատեսակների մեծ մասը միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում արժանացել են հարյուրավոր ոսկե մեդալների ու դիպլոմների: Միայն հայկական կոնյակները, գինիները և գարեջրի տեսակները արժանացել են 200–ից ավելի այդպիսի մեդալների: Հայ էլեկտրաէներգետիկների, մեքենաշինարարների, քիմիկների, շինարարների, գիտնականների փորձը ներդրվել են Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի բազմաթիվ երկրներում: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ–ն ու հայ մասնագետները արդեն իսկ մեծ փորձ ունեն միջազգային ինտեգրացման տարբեր բնագավառներում: Այժմ արդեն ինտեգրացումը զարգանում է ***գլոբալացման*** ուղղությամբ:

Իսկ ի՞նչ է առհասարակ **գլոբալացումը** և մասնավորապես՝ **տնտեսական գլոբալացումը**, որի մասին այժմ հատկապես տնտեսագետները, տնտեսագետ աշխարհագրագետները շատ են խոսում գիտական համաժողովներում, գրում գիտական հոդվածներում ու մենագրություններում, դասագրքերում: **Գլոբալացումը**, միջազգայնացումը կամ համաշխարհայնացումը ներկա պայմաններում բնորոշ է կյանքի բոլոր բնագավառներին՝ կրթությանը, գիտությանը, մշակույթին և հատկապես տնտեսությանը:

Ներկա ժամանակաշրջանում համաշխարհային չափանիշով բնական ռեսուրսների օգտագործումը բնակչության պահանջարկի, հետևաբար նաև արդյունաբերության բուռն զարգացման հետ կապված, ամեն տարի վիթխարի չափերով աճում է: Իսկ այդ ռեսուրսներն ու արտադրության զարգացման արդի հնարավորությունները դեռևս խիստ անհավասարաչափ են տեղաբաշխված աշխարհում: Հետևաբար, որպեսզի աշխարհի բնակչությունը հնարավորություն ունենա օգտվելու այդ հարստությունից և հնարավորություններից (անկախ նրանից, թե դրանք որտեղ են տեղաբաշխված), անհրաժեշտություն է առաջանում բնության կողմից տրված բարիքների ու մարդկության կողմից ստեղծված տեխնիկական միջոցների օգտագործումը մատչելի դարձնել աշխարհի բոլոր երկրների բնակչության համար (անկախ նրանից, թե դրանք ինչպիսի ու որքան ռեսուրսներ ունեն և զարգացման ինչ մակարդակի վրա են): Այս պայմաններում իր դերը պետք է խաղան միջազգային **ինտեգրացման և գլոբալացման հումանիստական** մեթոդներ

ների կիրառումը: Աշխարհի պետությունների մեծ մասը դեռևս չունի վառելիքատեսակների հայտնաբերված պաշարներ: Իսկ առանց այդպիսի ռեսուրսների ժամանակակից ինդուստրիայի ու սոցիալական կյանքի մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար,դա չի նշանակում, որ այդ երկրները չպետք է կարողանան բնության պարգևած նշված կամ այլ ռեսուրսներից (որոնք իրենց տարածքներում կամ չկան, կամ անբավարար չափով կան) օգտվեն հավասարապես:

Կամ, ճակատագրի բերումով, աշխարհի այժմյան երկրների մեծ մասը դարեր շարունակ եղել են գաղութային, կախյալ վիճակում, ու այսօր էլ դրանց տնտեսությունը, սոցիալական կյանքը շատ ծանր վիճակում են: Սա անկասկած չի նշանակում, որ այդ երկրների բնակչությունը իրավունք չունի օգտվելու զարգացած երկրներում ձեռք բերված գիտատեխնիկական, սոցիալ–տնտեսական նվաճումների արդյունքներից: Անկասկած դա չի նշանակում նաև, որ դեռևս զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներն ու ժողովուրդները պետք է մշտապես օգտվեն զարգացած երկրներում արտադրվող բարիքներից ու տեխնիկական միջոցներից: Հետևաբար, գլոբալացման կամ համաշխարհայնացման էությունը այն պետք է լինի, որպեսզի զարգացող երկրները համեմատաբար արագ կերպով հասնեն զարգացած երկրներին, հետևաբար նաև ինտեգրացման ու գլոբալացման բնագավառում իրենց լուման ներդնեն: Այդ գործընթացը կարծես թե արդեն աշխարհի տարբեր մասերում, երբեմնի կախյալ կամ գաղութային վիճակում երկար ժամանակ եղած երկրներում իրականացվում են: Այդ երկրներից հատկապես հիշատակության արժանի են Սինգապուրը, Թաիլանդը, Հարավային Կորեան, Թայվանը, որոնք ոչ միայն միջազգային շուկա են դուրս բերում ժամանակակից ամենաբարդ տեխնիկական միջոցներ, այլև իրենց առաջընթացի փորձն են փոխանցում, ներդնում աշխարհի տարբեր երկրներում:

Այսպիսով՝ տնտեսության գլոբալացումը կամ համաշխարհայնացումը տնտեսական զարգացման այնպիսի միտում է, որի արդյունքում այս կամ այն երկրի արտադրության համապատասխան ճյուղերի նվաճումները, փորձը, արդյունքը մատչելի ու կիրառելի լինեն աշխարհի ցանկացած երկրում: Գլոբալացման միտումը բնորոշ է, ինչպես ասվել է, ոչ միայն արտադրության ճյուղերին, այլև գիտությանը, կրթությանը, մշակույթին ու մյուս բնագավառներին:

Անկասկած սա չի նշանակում, որ պետությունները գլոբալացման հետևանքով պետք է կորցնեն իրենց ազգային դեմքը, յուրահատկությունները: Այս հանգամանքը հատկապես շատ կարևոր է փոքր երկրների,

այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար: **Հայկական կոնյակի, գինու արտադրության տեխնոլոգիան, փորձը մատչելի դարձնելով աշխարհի մյուս երկրներին՝ չպետք է մենք մեր ազգային դեմքն ու յուրահատկությունները կորցնենք միջազգային շուկայում**: Այդպես պետք է պահպանել նաև արդյունաբերության մյուս ճյուղերի, մշակույթի հայկական յուրահատկությունները և դրանք փոխանցել հետագա սերունդներին:

Ինտեգրվելով եվրոպական և առհասարակ արևմտյան երկրներին, տվորելով նրանց երգարվեստն ու պարարվեստը՝ չի նշանակում, թե մենք՝ հայերս, պետք է մոռանանք, աղճատենք հազարամյակների պատմություն ունեցող հայկական ժողովրդական երաժշտությունը, անզուգական պարարվեստն ու երգարվեստը:

Այնուհանդերձ, ինչպես վերը նշվեց, գլոբալացումը իր դրական բազմազան կողմերով հանդերձ կարող է ունենալ նաև բացասական կողմեր, եթե այդ բարդ գործընթացը իրականացվի միակողմանի, հաշվի չառնվեն պարտնյոր երկրների փոխադարձ շահերն ու հետաքրքրությունները:Անկասկած, դեռևս մոտակա հեռանկարում տնտեսության գլոբալացման բնագավառում շարունակելու են վճռական դեր խաղալ զարգացած երկրներն ու դրանց տնտեսական կազմակերպությունները: Եթե դրանք նախկին ձևով իրենց կապիտալը, տեխնիկան ու փորձը ներդնեն զարգացող կամ անցման փուլում գտնվող երկրներում, ու վերջիններս շահագործվեն միայն որպես էժան հումքային ու աշխատուժի շուկա, ապա դրանք կմնան որպես ներգաղութներ: Գլոբալացման գործընթացը պետք է լինի երկկողմանի հավասար հիմունքներով: Եթե մի երկիր ունի հումքային խոշոր ռեսուրսներ ու էժան աշխատուժ, իսկ մյուսը՝ կապիտալ ու տեխնիկա, ապա երկկողմանի, համապատասխան հավասար օրինաչափություններ պետք է տեղի ունենան այդ գործընթացն ու դրանից ստացվող արդյունքի բաշխումն իրականացնելու համար:

Կան բազմաթիվ փաստեր, որ զբոսաշրջության զարգացման համար բազմազան ռեկրեացիոն ռեսուրսներ ունեցող զարգացող կամ անցման փուլում գտնվող երկրներում զարգացած երկրները հյուրանոցներ, հանգրվաններ, զվարճության վայրեր են կառուցում ու դրանցից ստացվող եկամուտների բացարձակ մեծ մասն իրենք յուրացնում, իսկ այդ երկրներին լավագույն դեպքում միայն վճարում են չնչին հարկ, որոնցով նրանք բնականաբար չեն կարողանում նույնիսկ փակել այն վնասները, որոնք հասցված են տվյալ երկրի բնությանը, շրջակա միջավայրին: Սա արդեն քաղաքակիրթ գլոբալացման հետ կապ չունեցող «գործընթաց» է, որից մեր օրերում պետք է խուսափել:

Հայաստանի Հանրապետությունն ունի միջազգային զբոսաշրջության զարգացման բազմազան ռեսուրսներ: Արտասահմանյան և ներքին որոշ ձեռներեցներ արդեն Սևանի ավազանում և հանրապետության այլ վայրերում նույնպես կառուցել կամ կառուցում են այդպիսի հանգրվաններ, սպասարկման օբյեկտներ, որոնցից ստացվող եկամուտների համապատասխան մասը պետք է տրամադրվի տվյալ ռեգիոնի, քաղաքի բյուջեին՝ համապատասխան հոգսեր հոգալու, շրջակա միջավայրի պահպանության և այլ ծախսերի, ճանապարհների վերակառուցման համար:

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄՅՈՒՍ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության նյութական արտադրության վերը նշված երեք բնագավառներից (արդյունաբերություն, գյուղատնտեսություն և բեռնատար տրանսպորտ) բացի, հանրապետության տնտեսության ամբողջ համակարգում աճող տեղ է զբաղեցնում նաև սպասարկման կամ ոչ արտադրական ոլորտը իր բազմաթիվ բնագավառներով:

Առհասարակ, որքան երկրի զարգացման մակարդակը բարձր է, այնքան ավելի բարձրանում է սպասարկման ոլորտի, ծառայությունների տեսակարար կշիռը:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես ակնառու զգացվում են այդ ոլորտի արագորեն զարգացման միտումները: Ի տարբերություն նյութական արտադրության բնագավառների, որոնք թողարկում են շոշափելի, իրեղեն արտադրանք (մետաղ, մեքենա, նավթ, փայտանյութ, կահույք, հացահատիկ, մսամթերք, կաթնամթերք և հազարավոր այլ արտադրատեսակներ), սպասարկման ոլորտի արտադրանքը ծառայություններն են, որոնք բավարարում են մարդու կենցաղային մտավոր, հոգևոր պահանջմունքները: Դրանք նաև բարելավում են բնակչության կենսագործունեության պայմանները, իսկ այդ հանգամանքը մեծապես խթանում է հասարակության նյութական արտադրության զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը: Սպասարկման ոլորտի բնագավառները բազմազան են, դրանցից ***ծառայությունների առումով*** առավել կարևորագույններից են կրթությունը, գիտությունը, առողջապահությունը, առևտուրը, զբոսաշրջությունը, կոմունալ–կենցաղային սպասարկումը, մարդատար տրանսպորտը, կապը, կառավարման համակարգերը և այլ բնագավառներ:

Կրթությունը և գիտությունը Հայաստանում և հայ ժողովրդի կյանքում ձևավորվել են մարդկային հասարակության արշալույսին: Դրա վառ ապացույցներից են Արագած, Գեղամա և մյուս լեռների լանջերին արված ժայռապատկերները, որոնք պատկանում են մ.թ.ա. VII–II հազարամյակներին: Համաշխարհային չափանիշներով գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում մ.թ.ա. II հազարամյակում այժմյան Սիսիան քաղաքի մոտ գտնվող Զորաքար բնակավայրի (Քարահունջ) քարե բազմաթիվ հուշարձանների համալիրը, որի գաղտնիքները դեռևս լիարժեք չեն պարզված: Ենթադրությունն այն է, որ Զորաքարի բազալտե յուրատիպ անցքեր ունեցող ժայռաքարերը աստղագիտական, տիեզերքի ուսումնասիրման համակարգ են:

Սակայն, գիտությունն ու կրթությունը ժամանակակից առումով սկսել է զարգանալ հատկապես V դարի սկզբներին, երբ ականավոր գիտնականներ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը ստեղծել են հայոց գրերը (այբուբենը), և որից անմիջապես հետո հենց Մաշտոցի ջանքերով դպրոցներ են հիմնադրվել Հայաստանի տարբեր վայրերում: Նշենք, որ Մ. Մաշտոցը հայոց գրերի տարածումը սկսել է Արցախից, որտեղ՝ Ամարասում, նա ստեղծել է առաջին դպրոցը: Հետագա ժամանակաշրջանում այդպիսի դպրոցներ ստեղծվել են Հայաստանի բոլոր նշանավոր եկեղեցական համալիրներում: Հենց V դարում է, որ Խորենացին ստեղծել է «Հայոց պատմությունը», իսկ VII դարում Անանիա Շիրակացին իր հանրահայտ «Աշխարհացույց» ատլասում տվել է աշխարհի պատկերը: Նա Զորդանո Բրունոյից ու Գալիլեյից շատ շուտ տվել է այն գաղափարը, որ երկիրն ունի գնդի ձև: Պատմական Հայաստանում կրթության ու գիտության բուռն վերելք է տեղի ունեցել IX–XIV դարերում, երբ իրենց աշխատություններով փայլել են Գրիգոր Մագիստրոսը, Մխիթար Հերացին, Գ. Նարեկացին ու շատ այլ հսկաներ:

Սովորական եկեղեցական դպրոցներից բացի հետագայում՝ հատկապես IX դարից սկսած, Հայաստանում ստեղծվել են նաև համալսարաններ: Դրանցից առավել հանրահայտներն էին Տաթևի ու Գլաձորի համալսարանները:

Հետաքրքիր է, որ հայ ժողովուրդը դեռևս մինչև 20–րդ դարը (երբ կրթությունը և գիտությունը Հայաստանում հիրավի նոր ու բուռն համատարած վերելք է ապրել) կրթական ու գիտական կենտրոններ են ստեղծել ոչ միայն բուն Հայաստանում, այլև դառն ճակատագրի բերումով աշխարհի բազմաթիվ երկրներում սփռված հայկական գաղթավայրերում: Մասնավորապես, կրթական ու գիտական կենտրոններ են ստեղծվել Հնդկաստանում (Կալկաթա), Վենետիկում (որտեղ մինչև այժմ էլ գործում է Մխիթարյան

միաբանությունը, և որտեղ հանճարեղ Ղևոնդ Ալիշանը ստեղծել է իր հայագիտական բազում անզուգական աշխատությունները), Վիեննայում (Վիեննայի Մխիթարյան միաբանությունը), Պոլսում, Թբիլիսիում (Ներսիսյան հանրահայտ դպրոցը), Մոսկվայում (Լազարյան հանրահայտ ճեմարանը) և աշխարհի շատ այլ վայրերում: Այժմ էլ աշխարհի ավելի քան 60 երկրներում սփռված հայկական գաղթօջախներում կան կրթական, գիտական, մշակութային բազմաթիվ կենտրոններ:

Բուն Հայաստանում կրթությունն ու գիտությունը հիրավի իր զարգացման գագաթնակետին էր հասել խորհրդային իշխանության տարիներին:

Արդեն 1988–1989 ուստարում (այսինքն՝ խորհրդային իշխանության փլուզման նախօրյակին) հանրապետությունում գործում էր հանրակրթական 1424 դպրոց, որոնցում սովորում էին 604,1 հազ., աշակերտներ: 1980–1990–ական թթ.հանրակրթական միջնակարգ դպրոցներում տարեկան ավարտում էր 50–60 հազ. մարդ:

Այդ տարիներին զարգացել է նաև արտադպրոցական և նախադպրոցական համակարգը: Մասնավորապես, 1988 թ. հանրապետությունում կար 20222 արտադպրոցական հիմնարկություն՝ պիոներական, երաժշտական, սպորտային, պատանի տեխնիկների ու այլն:

Նույն տարվա տվյալներով՝ հանրապետությունում կար նախադպրոցական 1215 հիմնարկ՝ մանկապարտեզ, մանկամսուր և այլ: Միջնակարգ կրթությանը զուգահեռ բուռն զարգացում է ապրել նաև բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթությունը: Մասնավորապես, 1988–1989 ուստարում հանրապետությունում գործում էին բարձրագույն ուսումնական 13 հաստատություն և 65 միջնակարգ մասնագիտական հաստատություն: Ըստ որում, բուհերում ուսանողների թիվը կազմում էր 57,9 հազ., իսկ միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների թիվը՝ 137 հազ.:

Մինչև 1980–ական թթ. սկիզբները հանրապետությունում բարձր զարգացման էր հասել նաև գիտությունը: Բավական է ասել, որ 1988 թ. գիտական կազմակերպությունների թիվը հասել էր 104–ի, այդ թվում 65–ը գիտությունների ակադեմիայի կազմում: Նույն տարվա տվյալներով գիտաշխատողների թիվը կազմել է 21771 մարդ, այդ թվում ակադեմիկոսներ՝ 92, գիտության դոկտորներ՝ 825, գիտության թեկնածուներ՝ 7433: Այն ժամանակվա գներով նույն տարում գիտությանը հատկացվել էր 41,9 մլն ռուբլի, որը կազմում էր ազգային եկամտի 0,7%–ը:

Անկախություն ստանալուց հետո, տնտեսական իրավիճակի հետ կապված, կրթությունը ու գիտությունը զգալի ցնցումներ են ապրել: Սակայն Հայաստանի Հանրապետությունը մնում է որպես այդ բնագավառում աշխարհի չափանիշով բարձր ցուցանիշներ ունեցող երկիր:

2002–2003 ուստարվա տվյալներով՝ ՀՀ–ում եղել է 1481 հանրակրթական պետական դպրոց, որոնցում սովորողների թիվը կազմել է 520,6 հազ. մարդ:

Միջնակարգ մասնագիտական հաստատությունների թիվը նույն տարում եղել է 77, իսկ դրանցում սովորողների թիվը կազմել է 27,6 հազ. մարդ:

Բարձրագույն ուսումնական պետական հաստատությունների թիվը 2002/03 ուստարում եղել է 20, որից 4–ը համալսարան, որոնցում ուսանողների թիվը կազմել է 54,1 հազ., այսինքն՝ հանրապետության յուրաքանչյուր 10 հազ. մարդու հաշվով պետական ԲՈՒՀ–երում սովորում է 108,3 մարդ, որը բավականին բարձր ցուցանիշ է: Նշենք, որ այժմ ՀՀ–ում կան նաև մի քանի տասնյակ մասնավոր բուհեր:

2002 թ. ՀՀ–ում եղել է 96 գիտական կազմակերպություն, որոնցում աշխատողների ընդհանուր թիվը կազմել է 6737 մարդ (1998 թ. եղել է 8133 մարդ), այդ թվում՝ գիտության դոկտորներ 476 (1998 թ. եղել է 513), գիտության թեկնածուներ՝ 1758 (1998 թ. եղել է 2106): Հանրապետությունում զարգանում են ժամանակակից գիտության բոլոր ուղղությունները: Հայ գիտնականները հատկապես փայլուն նվաճումներ են ձեռք բերել աստղագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, հաշվողական տեխնիկայի, հայագիտության բոլոր բնագավառներում: Համաշխարհային գիտության գանձարանում մեծ ներդրում ունեն և լայն ճանաչում են ստացել ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանը, Ալիխանյան եղբայրները, Ն. Միսակյանը, Ա. Շահինյանը, Մ. Ջրբաշյանը, Ս. Մերգելյանը, Ս. Եսիկոլոպյանը, Ռ. Մարտիրոսյանը, Հ. Աճառյանը, Օրբելի եղբայրները, Հ. Մանանդյանը և շատ այլ ականավոր դեմքեր:

Մշակույթի զարգացման բնագավառում հանրապետությունը նույնպես համաշխարհային ճանաչում է ստացել:

Աշխարհահռչակ ճանաչում ունեն հայկական ճարտարապետությունն ու գեղանկարչությունը: Էջմիածնի, Նորավանքի, Տաթևի, Ամարասի, Գանձասարի, Հաղպատի, Սանահինի, Դադիվանքի ու Հայկական լեռնաշխարհով մեկ սփռված բազում այլ եկեղեցական, ճարտարապետական հազարավոր կոթողներ իրենց շինարարական արվեստով, նրբություններով մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեր երկիր այցելող բոլոր հյուրերի համար: Ահա այդ հրաշալիքները տեսնելուց հետո է, որ ամերիկացի հանրահայտ նկարիչ Ռոքուել Քենթը գրել է. «Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է ավելի շատ հրաշալիքների հանդիպել, ես ամենից առաջ կտայի Հայաս-

տանի անունը: Ակամայից զարմանում ես, որ աշխարհի այս փոքրիկ անկյունում կարելի է հանդիպել այնպիսի հուշարձանների և այնպիսի մարդկանց, որոնք կարող են դառնալ ամբողջ աշխարհի զարդն ու հպարտությունը: Երիցս կեցցե՛ս դու, հո՛ղ հայկական, տաղանդների՛ օրրան, հրաշագործների՛ օրրան»: Հայկական ճարտարապետության գանձարանում մեծ ներդրում ունեցող բազում հանրահայտ ճարտարապետներ են եղել, դրանց շարքում անգնահատելի տեղ ունի Ալեքսանդր Թամանյանը, որի տաղանդով նախագծվել է այսօրվա Երևանի առաջին նախագիծը՝ Հանրապետության հրապարակը զարդարող եզակի շենքերով, ինչպես նաև Սպենդիարյանի անվան օպերայի թատրոնի շենքով: Հայ ճարտարապետության գլուխգործոցների շարքում առանձնահատուկ տեղ ունի Ռաֆայել Իսրայելյանի «Սարդարապատ» համալիրը:

Հայ գեղանկարչության համաշխարհային ճանաչման արժանացած առավել հանրահայտ դեմքերն են՝ Հ. Այվազովսկին, Մ. Սարյանը, Վ. Սուրենյանցը, Մինասը:

Հայ քանդակագործությունը միջազգային ճանաչում ունեցող շատ դեմքեր է տվել, այդ համակարգում շատ յուրատիպ է Երվանդ Քոչարը՝ իր հանրահայտ «Սասունցի Դավիթ» անզուգական արձանով:

Երաժշտության բնագավառում առավել լայն ճանաչում է ստացել Արամ Խաչատրյանը, որի ստեղծագործությունները բեմադրվում, ներկայացվում են աշխարհի բոլոր երկրներում: Անուրանալի է աշխարհռչակ երգիչ Շառլ Ազնավուրի դերը, որը նաև մեծ բարերար ու հասարակական գործիչ է: Շնորհիվ Ջիվան Գասպարյանի՝ հայկական դուդուկը փաստորեն միջազգայնացվել է, հայկական դուդուկի մեղեդիները մտել են համաշխարհային կինոարվեստ:

Հայկական թատերական և կինոյի արվեստը տվել է բազում ականավոր գործիչներ, որոնցից հանրապետության սահմաններից դուրս առավել լայն ճանաչում են ստացել Պ. Ադամյանը, Սիրանույշը, Վ. Փափազյանը, Հ. Աբելյանը, Հ. Ներսիսյանը, Վ. Վաղարշյանը, Ա. Ոսկանյանը, Մ. Սիմոնյանը, Ֆ. Մկրտչյանը: Հայ արվեստի զարգացման բնագավառում, դրա միջազգայնացման գործում շատ խոշոր ու յուրատիպ է Սերգեյ Փարաջանովի դերը:

Հայաստանի փառքը աշխարհի շատ երկրներում են ցուցադրել շախմատի աշխարհի չեմպիոն Տ. Պետրոսյանը, մարմնամարզիկներ, աշխարհի չեմպիոններ Հ. Շահինյանն ու Ա. Ազարյանը, ծանրորդներ Ս. Համբարձումյանն ու Յու. Վարդանյանը և աշխարհի բազում այլ հայ չեմպիոններ:

Հանրապետության մշակութային կյանքը բնութագրող կարևոր ցուցանիշն է ակումբների, թատրոնների, թանգարանների և դրանց այցելուների թիվը:

2002 թ. տվյալներով հանրապետությունում գործում էր 1113 գրադարան, ավելի քան 19,6 մլն գրքերով, նույն թվականին դրանցում ընթերցողների թիվը կազմել է 704,9 հազ. մարդ:

1998 թ. տվյալներով՝ հանրապետությունում գործում էր 98 թանգարան, որոնց հաճախորդների թիվը նույն տարում կազմել է 763,9 հազ. մարդ, իսկ 2002 թ. թանգարանների թիվը եղել է 77, հաճախորդների թիվը՝ 751,2 հազ. մարդ: Նույն տարիներին հանրապետությունում եղել է գործող 21 թատրոն, որոնց հաճախորդների թիվը 1998 թ. կազմել է 490 հազ. մարդ, իսկ 2002 թ. 280 հազ. մարդ:

Առողջապահությունը հանրապետության սպասարկման ոլորտի համակարգում աշխատողների թվաքանակով, ծախսերով, նշանակությամբ պատկառելի տեղ զբաղեցնող բնագավառներից է:

2002 թ. տվյալներով՝ հանրապետությունում եղել է 135 հիվանդանոցային բոլոր կարգի հիմնարկներ (1995 թ. դրանց թիվը եղել է 183), դրանցում մահճակալների թիվը եղել է 13968 (1995 թ.– 31324): Նույն թվականին բոլոր մասնագիտությունների բժիշկների թիվը կազմել է 11508 մարդ (1998 թ. եղել է 13024 մարդ): Այսպիսով՝ հանրապետության յուրաքանչյուր 10 հազ. բնակչի հաշվով բժիշկների թիվը կազմել է 35,8, մահճակալների թիվը՝ 43,5:

Վերջին տարիներին հանրապետության առողջապահական համակարգը զգալի նվաճումներ է ձեռք բերել ինչպես ծանր հիվանդությունների բուժման, այնպես էլ համապատասխան տեխնիկական միջոցների ձեռքբերման, արտասահմանյան առաջավոր փորձի կիրառման բնագավառներում:

Մասնավորապես ակնառու հաջողություններ են ձեռք բերվել սրտաբանության, սրտի վիրահատության, ինչպես նաև գինեկոլոգիայի բնագավառներում: Զգալի նվաճումներ են ձեռք բերվել առավել ահավոր հիվանդություններից մեկի՝ ՁԻԱՀ–ի բուժման բնագավառում: Այստեղ շատ մեծ է ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի ծառայությունը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների (հատկապես մեկ շնչի հաշվով) ծավալը յուրաքանչյուր երկրի զարգացման, բարեկեցության չափանիշը բնութագրող ցուցանիշ է: Այս առումով հանրապետությունում վերջին տարիներին խոշոր տեղաշարժեր են կատարվել:

Եթե 1995 թ. ՀՀ բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 53732,8 մլն դրամ, ապա 1998 թ. այն կազմել է 178165,8 մլն դրամ: Այդ թվում կենցաղային ծառայությունները համապատասխանաբար կազմել են 1074,2 և 2138,0 մլն դրամ: Ինչպես տեսնում ենք, այս շատ կարևոր բնագավառի ծառայությունների ծավալը ավելացել է երկու անգամ:

Հանրապետության սպասարկման ոլորտի համակարգում շատ կարևոր տեղ են զբաղեցնում ***կապն ու առևտուրը:***

1995 թ. հանրապետության կապի բաժանմունքների ու ձեռնարկությունների թիվը եղել է 791 միավոր, 1998 թ.՝ 908, իսկ 2002 թ.՝ 899 միավոր: Ըստ որում, բնակչությանը մատուցած կապի ծառայություններից եկամուտները նույն թվականին համապատասխանաբար կազմել են 2506,9, 11771,8 և 22731,1 մլրդ դրամ: Եկամուտների այս ծավալներում վճռական դերը պատկանում է միջքաղաքային ու ներհանրապետական խոսակցություններին, բաժանորդային վարձերին և միանվագ ծառայություններին:

Կապի սովորական ծներին զուգահեռ, վերջին տարիներին արագորեն աճում է մոբիլ հեռախոսային ապարատների (1995 թ. դրանք եղել են 4,1, 1998 թ. 7,2, 2002 թ. 71,9 հազ.) և ինտերնետի հասցեատերերի (1995 թ. եղել են 1,5, 1998 թ.՝ 4,1, 2002 թ.՝ 9,1 հազ.) թիվը:

Այս աճող ցուցանիշներին զուգահեռ պետք է նշել, որ հանրապետության բնակչության ապահովվածությունը ընդհանուր օգտագործման տնային հեռախոսային ապարատներով բավարար չէ:

Մասնավորապես, 1995 թ. յուրաքանչյուր 100 ընտանիքի հաշվով այդպիսի ապարատների թիվը եղել է 58,5, 1998 թ.՝ 56,5, 2002 թ.՝ 66,0: Այս առումով հատկապես անբավարար է կապի այս հույժ կարևոր ձևի սպասարկման վիճակը հեռավոր գյուղական վայրերում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն արտացոլում է բնակչության կողմից զանազան տեսակի ծառայությունների սպառման ծավալը և վիճակագրորեն չափվում է մատուցված ծառայությունների դիմաց վճարված դրամական միջոցների գումարով: Ընդ որում, վճարը կարող է կատարվել ինչպես անմիջապես սպառողների կողմից իրենց սպառած ծառայությունների դիմաց, այնպես էլ այն կազմակերպության միջոցով, որտեղ աշխատում է տվյալ սպառողը: Բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կենցաղային, մարդատար տրանսպորտի, կապի, բնակարանային–կոմունալ տնտեսության, մշակույթի, զբոսաշրջաէքսկուրսային, ֆիզկուլտուրայի ու սպորտի, բժշկական բնույթի, առողջարանային–սանատորական, իրավական բնույթի, բանկերի, կրթության համակարգի և այլ ծառայություններից: Այս համակարգում շատ խոշոր տեսակարար կշիռ ունեն ներքին մանրածախ առևտրի բնագավառի ծառայությունները:

Վերջին տարիներին տնտեսության համակարգում տեղի ունեցող դրական տեղաշարժերին զուգահեռ, այս բնագավառում նույնպես զգալի են դրական տեղաշարժերը:

1995 թ. հանրապետության մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 220025 մլն, 1998 թ.՝ 364258, 2002 թ.՝ 588932 մլն դրամ: Ըստ որում, մեկ շնչի հաշվով մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալը նույն տարիներին համապատասխանաբար կազմել է 58519, 95991 և 183377 մլն դրամ: Սակայն գյուղական բնակավայրերում այս ցուցանիշները դեռևս շատ ցածր են, դրանք 1995 և 1998 թթ. տվյալներով կազմել են ընդամենը 2364 և 1155 մլն դրամ:

ԳԼՈՒԽ VII

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերը մենք լուսաբանել ենք հիմնական այն նախապայմանները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար: Նշել ենք նաև, որ զբոսաշրջության սաղմերը Հայաստանում ի հայտ են եկել դեռ շատ հնուց, երբ օտարերկրյա գիտնականները, ճանապարհորդները այցելել են Հայաստան, կատարել տարբեր կարգի ուսումնասիրություններ, իսկ արտասահմանյան առևտրական քարավանները հանգրվանել են մեր մայրաքաղաքներում ու առևտրական ճանապարհների վրա գտնվող իջևանատներում:

Նրանք բոլորն էլ Հայաստանի բնության, մարդկանց, տնտեսության վերաբերյալ մեծ տպավորություններ են թողել իրենց նոթագրություններում:

Զբոսաշրջությունը, որպես այդպիսին, պետական մակարդակով Հայաստանում սկսել է զարգանալ խորհրդային իշխանության տարիներին: Ըստ որում, այդ ժամանակաշրջանում հանրապետությունում գործում էին 110 առողջարանային և հանգստի տներ, գործում էին զբոսաշրջային 30 հանգրվաններ՝ 6000 տեղով:

Կարևոր է հիշատակել հետևյալ փաստարկը՝ 1933 թ. հեռավոր արտասահմանից Խորհրդային Հայաստան այցելել է ընդամենը 19, 1934 թ.՝ 67, 1935 թ.՝ 255 քաղաքացի:

Միջազգային զբոսաշրջությունն այստեղ հիմնականում սկսել է զարգանալ 1950–ական թվականներից հետո: Մասնավորապես, 1985 թ. արտասահմանյան երկրներից (առանց ԽՍՀՄ–ի) Խորհրդային Հայաստան է այցելել 70, իսկ 1987 թ.՝ 100 հազար զբոսաշրջիկ: ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր պայմանների հետևանքով, 1990–ական թվականների սկզբներից հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թիվը խիստ կրճատվել է, և 1996 թ.՝ այն կազմել է միայն 13 հազար, որից հետո նորից սկսել է նկատելիորեն աճել և 1999 թ.՝ կազմել է 40 հազար զբոսաշրջիկ: Նշենք նաև, որ նախկին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից մինչև 1980–ական թվականները Խորհրդային Հայաստան են այցելել տարեկան միջին հաշվով ավելի քան 300 հազար զբոսաշրջիկ:

1996 թվականից հետո, երբ անկախություն ստացած Հայաստանի Հանրապետությունում սոցիալ–տնտեսական կյանքը սկսվել է նորմանալ, և այն դրվել է կայուն զարգացման ուղու վրա, այդ հանգամանքն անկասկած իր ազդեցությունն է թողել նաև միջազգային զբոսաշրջության զարգացման վրա: Դա հատկապես ցայտուն կերպով նկատելի էր 2000 թվականից սկսած, երբ մինչև այդ գոյություն ունեցած արտասահմանյան զբոսաշրջիկներ ընդունող «Արմենիա», «Երեբունի» և «Երևան» շատ թե քիչ բարեկարգ հյուրանոցների արմատական վերակառուցումից բացի հանրապետությունում սկսեցին կառուցվել բարձրակարգ, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող հյուրանոցներ: Այդ ժամանակվանից նկատելիորեն փոխվեցին նաև հյուրանոցներում սպասարկման մակարդակը, հանրապետությունում աշխուժացավ ժամանակակից ավտոմայրուղիների կառուցումը, և զբոսաշրջությունը փաստորեն ամբողջապես անցավ մասնավոր ձեռներեցների իրավասության տակ, ստեղծվեցին զբոսաշրջային բազմաթիվ կազմակերպություններ: Մասնավորապես, հանրապետության առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության զբոսաշրջության վարչության տվյալներով, այժմ (2003 թ.) հանրապետության պետական ռեգիստրով գրանցված են զբոսաշրջային 4800 կազմակերպություն, որոնցից ռեալ գործում են 150–ը: Վերջին տվյալներով հանրապետությունում զբոսաշրջիկների համար նախատեսված երեքաստղանի և ավելի բարձր հյուրանոցների թիվը հասնում է 29–ի, որոնք ընդհանուր առմամբ ունեն 2700 տեղ:

Այսպիսով՝ հատկապես 2000–2003 թթ. Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության բնագավառում զգալի տեղաշարժեր են կատարվել, որոնց վերաբերյալ պատկերացում է տրված ստորև զետեղված աղյուսակում:

Աղյուսակ 49

Հայաստանի Հանրապետության միջազգային զբոսաշրջության 2000–2003 թթ. մի քանի կարևոր ցուցանիշներ[1]

	2000 թ. հունվար–դեկտեմբեր	2001թ. հունվար–դեկտեմբեր	2002 թ. հունվար–հունիս	2002 թ. հունվար–դեկտեմբեր	2003 թ. հունվար–հունիս	2003.06/ 2002.06 %
Այցելուների քանակը, որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների, *հատ*	14	28	27	29	28	103,7%
ժամանողներ						
ժամանել են ուղևորներ, որոնք, ըստ ՀՅԿ մեթոդաբանության, հաշարկում են զբոսաշրջիկ,	84,461	123,262	58,458	162,089	74,633	127,7%
որոնցից տեղավորվել են հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	23,230	30,732	11,223	26,075	12,794	114,0%
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	61,231	92,530	47,235	136,014	61,839	130,9%
Մեկնողներ						
Մեկնել են ուղևորներ, որոնք, ըստ ՀՅԿ մեթոդաբանության, հաշարկում են զբոսաշրջիկ	111,250	109,976	56,002	130,806	73,050	130,4%
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է զբոսաշրջային կազմակերպությունների կողմից	9,174	4,423	1331	3565	2090	156,8%
ինքնուրույն	102,076	105,553	54,669	127,241	70,960	129,8%

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրության ծառայության 2003 թ. հունվար–հուլիս ամիսների տեղեկատվական ամսական զեկույցը

Ինչպես երևում է, ընդամենը երեք տարում 2000–2002 թթ. հանրապետություն այցելած զբոսաշրջիկների թիվը շուրջ 84,5 հազարից հասել է ավելի քան 162 հազարի, իսկ հանրապետությունից մեկնած զբոսաշրջիկների թիվը՝ 111.2 հազարից 130,8 հազարի:

Վերը նշվել է, որ 2003 թ. հանրապատություն այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է 206 հազ.: Կարևոր է այն հանգամանքը, որ վերակենդանանում է նաև հանրապետության ներքին զբոսաշրջությունը, որի վերաբերյալ պաշտոնական տվյալները բերված են ստորև:

Աղյուսակ 50

Հայաստանի Հանրապետության ներքին զբոսաշրջության 2001–2003թթ. մի քանի կարևոր ցուցանիշներ[1]

(մարդ)

	2001թ հունվար – դեկտեմբեր	2002 թ. առաջին կիսամյակ	2002 թ. հունվար–դեկտեմբեր	2003 թ. առաջին կիսամյակ
Ընդամենը զբոսաշրջիկներ,	117,079	50,994	121,315	52,291
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական,	45,181	25,403	49,199	20,569
հանգստի և	25,516	6,328	28,864	7,190
ժամանցի,	3,491	692	6005	3079
բուժման,	42,891	18,571	37,247	21,453
այլ				

Ինչպես երևում է աղյուսակից, չնայած ոչ մեծ չափերով, սակայն ներքին զբոսաշրջիկների թիվը նույնպես տարեցտարի զգալիորեն աճում է՝ 2001 թվականին՝ 117,1 հազարի, 2002 թվականին՝ 121,3 հազարի:

Ըստ որում,ներքին զբոսաշրջիկների 38,6%-ը կազմում են գործնական նպատակով այցելողները, 29,8%-ը՝ հանգստի ու ժամանցի, 3,0%-ը՝ բուժման, 36,6% մարզական, մշակութային, կրոնական և այլ նպատակներով այցելողները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների ավելի քան 32,5%–ը բաժին է ընկնում

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրության ծառայության 2003 թ. հունվար–հուլիս ամիսների տեղեկատվական ամսական զեկույցը

ԱՊՀ երկրներից ժամանողներին: Այդ թվում շուրջ 19,8%–ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 4,5%–ը՝ Վրաստանին: Բավականին մեծ թիվ են կազմում Եվրամիության երկրներից ժամանողները: Վերջին տվյալներով այդ երկրներին բաժին է ընկնում ՀՀ ժամանող զբոսաշրջիկների ավելի քան 25,4%–ը: Մասնավորապես, մեծ թիվ են կազմում Ֆրանսիայից (4,9%), Գերմանիայից (4,2%) և Մեծ Բրիտանիայից (7,7%): Եվրամիության մյուս երկրներից ժամանողները կազմում են 8,6%:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ժամանող զբոսաշրջիկների 67,5% բաժին է ընկնում ոչ ԱՊՀ երկրներին, որից ինչպես նշվեց 25,4%–ը ԵՄ երկրներին: Մեծ թվով զբոսաշրջիկներ են ժամանում ԱՄՆ–ից (17,3%), Իրանից (3,8%), Լիբանանից (3,4%), Կանադայից (2,7%) և այլ երկրներից, որոնց բաժին է ընկնում 18,5%–ը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2002 թ. զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 130,8 հազ. մարդ, որը 2001 թվի համեմատությամբ աճել է 18,9%–ով: Ըստ որում, զբոսաշրջային կազմակերպությունների միջոցով մեկնողների թիվը կազմել է 3565 մարդ, իսկ ինքնուրույն ձևով մեկնողների թիվը՝ 127,241 մարդ: ՀՀ–ից արտասահմանյան երկրներ մեկնող զբոսաշրջիկների ավելի քան 39,2%–ը մեկնում են հանգստի և ժամանցի նպատակով, 25,2%-ը՝ գործնական նպատակներով, այլ նպատակներով այցելողները կազմում են 35,6%–ը:

Իսկ արտասահմանյան երկրներից ժամանող զբոսաշրջիկների ընդհանուր թվի 50,1%–ը կազմում են գործնական նպատակով ժամանողները, 34,1%–ը՝ հանգստի ու ժամանցի նպատակով, 1,5%–ը՝ կրթության և բուժման, 14.3%–ը՝ այլ նպատակներով:

Ներքին զբոսաշրջիկների 38.6%–ը կազմում են գործնական նպատակով այցելությունները, 29,8%–ը հանգստի ու ժամանցի, 3,0%–ը՝ բուժման, 36,6%–ը՝ սպորտային, մշակութային, կրոնական և այլ նպատակներով:

Այսպիսով՝ բերված փաստացի տվյալները վկայում են, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներքին զբոսաշրջությունը տարեցտարի զգալիորեն աճում է: Բավական է ասել, որ արդեն 2003 թ. զբոսաշրջությունից ստացված եկամուտը կազմել է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է հանրապետության այդ տարվա ՀՆԱ–ի շուրջ 8,1%–ը: Ըստ որում, դրսից եկած յուրաքանչյուր զբոսաշրջիկ հանրապետությունում ծախսում է շուրջ 1000 դոլար:

Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ տարեցտարի ավելանում է այն երկրների թիվը, որոնց հետ ՀՀ–ն զբոսաշրջային կապերի մեջ է: Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տվյալներով, այժմ ՀՀ–ն աշխարհի 90 երկրների հետ այդպիսի կապերի մեջ է:

Նախկինում հանրապետություն այցելող զբոսաշրջիկները գերազանցապես հանգրվանում էին միայն Երևանում: Այժմ Երևան քաղաքից բացի հանրապետության տարածքում կան զբոսաշրջային 49 հանգրվան, այդ թվում՝

Արագածոտնի մարզում 1
Արարատի 1
Գեղարքունիքի 6
Կոտայքի 10
Լոռու 5
Շիրակի 7
Սյունիքի 5
Տավուշի 7
Վայոց ձորի 7

Ինչպես ասվել է, համաշխարհային չափանիշով զբոսաշրջությունը բուռն աճ է ապրում ինչպես այդ ճյուղի ներքին կառուցվածքի, այնպես էլ դրա տարածքային առումով: Ասենք նաև, որ ինչպես տնտեսության մյուս բոլոր բնագավառներում, այնպես էլ միջազգային զբոսաշրջության համակարգում տեղի է ունենում գլոբալացման գործընթաց:

Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության գործընթացին մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ 1997 թ–ից Հայաստանի Հանրապետությունը Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության անդամ է (այդ որոշումը կայացվել է նշված տարվա հոկտեմբերին ՁՀԿ-ի Ստամբուլ քաղաքում տեղի ունեցած XII ընդհանուր ժողովում):

Հայաստանի Հանրապետությունը իր բնական բազմազան նախապայմանների, ինչպես նաև մշակութային, պատմաճարտարապետական անգուգական կոթողներով լայն հնարավորություններ ունի մասնակցելու միջազգային զբոսաշրջության գլոբալացման գործընթացին: Դա հնարավորություն կտա մեր մշակութային արժեքները, բնական արժեքները, ճարտարապետությունը, երաժշտությունն ավելի լայնորեն ու խորությամբ ներկայացնելու աշխարհի մյուս ժողովուրդներին, դրանք դարձնել աշխարհի մյուս երկրների համանման արժեքների ընդհանրության բաղկացուցիչ մասը՝ պահպանելով, չաղճատելով, չկորցնելով հայկական ազգային արժեքների յուրահատկությունները, հայ ժողովրդին բնորոշ առանձնահատկությունները:

Որպեսզի զբոսաշրջության մեր ազգային արժեքները մատչելի լինեն համաշխարհային հանրությանը, այն դառնա աշխարհի համանման արժեքների ընդհանրության մաս, այսինքն՝ գլոբալացվի, անհրաժեշտ է այդ բնագավառում իրականացնել նոր խոշոր միջոցառումներ:

Կառավարության մակարդակով լուրջ միջոցառումներ ձեռնարկելով՝ կարծում ենք՝ հնարավոր է մոտակա հեռանկարում զբոսաշրջությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Այդ միջոցառումներն ուղղված պետք է լինեն իրազեկության ապահովմանը, պատմատեսարժան վայրերի բարեկարգմանն ու վերանորոգմանը, ճամփորդությունների հետ առնչվող բազմաթիվ խնդիրների լուծմանը: Այդ բոլորի իրականացումն անկասկած կպահանջի կառավարման ժամանակակից մեթոդների կիրառում զբոսաշրջությանը սպասարկող ճյուղերում (ավիաուղիներ, հյուրանոցներ և այլն): Ըստ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ միջոցառումները պետք է մրցակցային պայմաններում մրցունակ լինեն միջազգային զբոսաշրջության կազմակերպությունների համակարգում: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հայկական զբոսաշրջության կազմակերպությունները, ընկերությունները, գործակալություններն ունենան ժամանակակից պահանջներին համապատասխան առաջավոր տեխնոլոգիաներ, հմտություններ այնպիսի ասպարեզներում, ինչպիսիք են կոմերցիոն ավիացիան, հյուրանոցները, միջազգային զբոսաշրջության տնտեսական հարաբերությունները և համապատասխան հեղինակության ստեղծումը, պատմական հուշարձանների պահպանությունը և այլն:

Խիստ անհրաժեշտություն է հյուրանոցներում ներդնել համակարգչային տեխնիկայի լայնորեն օգտագործմամբ ղեկավարման ամենաժամանակակից մեթոդներ, ինչը հնարավորություն կընձեռնի բարձր մակարդակով և ժամանակին կազմակերպելու հյուրանոցային նախնական պատվերների գրանցումը, գույքագրումը, հաշվառումը, հաշվապահական և այլ գործընթացներ, բարձրացնելու դրանց արդյունավետությունը:

Ինչպես ասվել է, Հայաստանի Հանրապետությունն ունի բնական գեղատեսիլ, զբոսաշրջության համար շատ մեծ հետաքրքրություն ներկայացնող վայրեր: Սակայն, այդ վայրերում զբոսաշրջիկներին այլ գրավիչ հրապուրանքներ և հետաքրքրություններ դեռևս չեն առաջարկվում:

Մինչև 1980–ական թվականները Հայաստան այցելող զբոսաշրջիկների մեջ մեծ էր առողջարանային և մարզական (դահուկային) նպատակով այցելողների տեսակարար կշիռը: Ի դեպ, արտասահմանյան զբոսաշրջիկները խիստ պահանջկոտ են, և համաշխարհային շուկայում այդ բնագավառում մրցակցությունը շատ ուժեղ է: Այս բնագավառը Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին հասցնելու համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ և ժամանակ: Կարծում ենք, որ հիմնահարցը նպատակային, հիմնավորված ներկայացնելու դեպքում, նշված բնագավառում ներդրումային քաղաքականությանը կարող են մասնակցել նաև սփյուռքահայ մեր հայրենակիցները:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության հետագա զարգացման համար կան դեռևս ոչ լրիվ օգտագործվող կամ առհասարակ չօգտագործվող մի շարք հնարավորություններ, որոնց ռացիոնալ օգտագործումն անկախություն ստացած մեր հանրապետության համար հրամայական պահանջ է:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ինդուստրիայի զարգացման համար անհրաժեշտություն է զգացվում իրականացնել ռազմավարական հետևյալ միջոցառումները.

1. Ձևավորել զբոսաշրջության զարգացման բարենպաստ իրավական դաշտ.
2. Միջազգային օդային կապերի, ծառայությունների կազմակերպումն իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան.
3. Հանրապետության զբոսաշրջության ցրված տնտեսությունն (առավելապես վիճակագրությունը) ժամանակակից հիմքերի վրա դնել՝ օգտագործելով համակարգիչների ընձեռած մեծ հնարավորությունները.
4. Հանրապետությունում հաճախակի իրականացնել զբոսաշրջության, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրական միջազգային ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպումը.
5. Հյուրանոցային համալիրների, զբոսաշրջության ժամանակակից հանգրվանների ստեղծումն իրականացնել միջազգային սպասարկման չափանիշներին համապատասխան ձևերով, մեթոդներով.
6. Այդ բնագավառի համար պատրաստել ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ, ունենալ մայրենի լեզվով համապատասխան գրականություն (մենագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր, մեթոդական ցուցումներ).
7. Մշակել զբոսաշրջության զարգացման համար համապետական և ռեգիոնալ(տարածաշրջանային) ծրագրեր.
8. Շատ կարևոր է միջազգային զբոսաշրջության շուկաների ուսումնասիրությունը և նոր շուկաներում Հայաստանի Հանրապետությանը վերաբերող գովազդատեղեկատվական աշխատանքների ծավալումը.
9. Օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավումը՝ հանրապետության զբոսաշրջության ոլորտի ու նրա ենթակառուցվածքների ձևավորման նպատակով.
10. Պետական և մասնավոր ներդրումային քաղաքականություն ծավալել հանրապետության տարածքում սփռված պատմաճարտարապետա-

կան եզակի կոթողների վերականգնման, դրանց շրջապատի ու տրանսպորտային ուղիների կարգավորման, տեղերում համապատասխան կարճաժամկետ սպասարկման օբյեկտների ստեղծման բնագավառներում.

11. Պետական առանձնահատուկ հոգացություն ցուցաբերել Սևանա լճի պահպանման, զբոսաշրջային առանձնահատուկ նշանակություն ունեցող այդ լճի ափերի էկոլոգիական վիճակի կարգավորման, Սևանի ազգային պարկի տարբեր հատվածներում հայկական խոհանոցի կետերի, հայկական հնագույն արհեստի ու արվեստի ցուցադրման, մեծ հետաքրքրություն ներկայացնող առարկաների,հուշանվերների արտադրության համալիրների կազմակերպման խնդիրներին.

12. ՀՀ զբոսաշրջության զարգացման գործին մեծապես կնպաստի հանրապետության մարդածին ու բնական ռեկրեացիոն և զբոսաշրջության առավել մեծ հետաքրքրություն ներակայացնող ռեսուրսներին, հուշարձաններին վերաբերող հատուկ, մատչելի, բազմալեզու ուղեցույցների, նկարազարդ ալբոմների ստեղծումը, հրատարակումը:

13. Այս հույժ կարևոր ոլորտի զարգացմանը մեծապես կնպաստի նաև վերը թվարկված այդ բոլոր նյութերին, տվյալներին վերաբերող հատուկ դիսկետների ստեղծումը, կոորդինացումը և ինտեգրացումը միջազգային զբոսաշրջության համակարգին:

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՐԶԵՐԻ ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մինչև 1995 թ. Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված էր 37 վարչական շրջանների (գյուղական), կային նաև քաղաքային 10 շրջաններ (8–ը՝ Երևանում, 2–ը Գյումրիում): Հանրապետության քաղաքների թիվը կազմում էր 30, այդ թվում հանրապետական ենթակայության են 21-ը, շրջանային ենթակայության՝ 9–ը: Բացի դրանից, կային քաղաքատիպ 28 ավան: Գյուղական բնակավայրերի թիվը 942 էր, որոնք միավորված էին 865 գյուղխորհուրդներում:

1995 թ. դեկտեմբերի 4–ի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով վերը նշված վարչական միավորների փոխարեն հանրապետության տարածքը բաժանվեց ներքոհիշյալ 11 մարզերի (այդ թվում Երևան քաղաքը՝ մարզի կարգավիճակով).

Արագածոտնի մարզ
Արարատի մարզ
Արմավիրի մարզ
Գեղարքունիքի մարզ
Կոտայքի մարզ
Լոռու մարզ
Շիրակի մարզ
Սյունիքի մարզ
Վայոց ձորի մարզ
Տավուշի մարզ
Երևան քաղաք (մարզի կարգավիճակով)

Այսպիսով՝ հանրապետության տարածքի այժմյան վարչական առաջին կարգի միավորները մարզերն են և մարզային կարգավիճակ ունեցող Երևան քաղաքը:

Մարզերից բացի կան նաև երկրորդ կարգի վարչական միավորներ, դրանք գյուղական և քաղաքային համայնքներն են ու Երևան քաղաքի թաղամասերը:

2001 թ. հունվարի 1–ի դրությամբ հանրապետությունում կան 48 քաղաքներ (այդ թվում Երևան քաղաքը), 871 գյուղական համայնքներ և 952 գյուղեր, որոնցից 8–ը մտնում են քաղաքային համայնքների մեջ, ինչպես նաև թաղային 12 համայնք (Երևան քաղաքում):

Ստորև տրվում է հանրապետության վարչական նոր միավորների՝ մարզերի տնտեսաաշխարհագրական համառոտ բնութագիրը:

8.1 ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ՝ ՄԱՐԶԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն աշխարհի ամենահին քաղաքներից մեկն է, հիմնադրվել է մ.թ.ա. 782 թ. Արգիշտի թագավորի կողմից և անվանվել է Էրեբունի: Այժմյան Երևանի հարավարևելյան մասի այն բլրի վրա, որտեղ հիմնադրվել են քաղաքի առաջին շինությունները, Երևանի 2750–ամյակի առթիվ 1968 թ. կառուցվել է Էրեբունի թանգարանը:

Երևանը տեղադրված է Արարատյան դաշտի հյուսիսային ծայրին: Մինչև 1950–ական թթ. քաղաքն ընդգրկում էր այդ հատվածի հյուսիսային ու հյուսիս-արևելյան սարավանդային բարձունքներով շրջափակված գոգավորությունը: Դրանից հետո քաղաքի արագաթափ աճի հետևանքով այն ոչ միայն փռվեց դեպի Արարատյան դաշտի համեմատաբար ցածրադիր մասերը, այլև դուրս եկավ դեպի հյուսիս, հյուսիս–արևելք, հյուսիս–արևմուտք գտնվող բարձունքներ՝ հասնելով մի կողմից Եղվարդի ու Կոտայքի սարավանդների հարավային սահմանները, մյուս կողմից տարածվեց Նորքի բարձունքների վրա: Երևանի տարածքը կազմում է 227 կմ^2: Այսպիսով՝ այժմյան Երևան քաղաքի տարածքի ռելիեֆը բարդ է և կտրտված: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 900–1350 մետր: Երկաթուղային կայարանի մոտ նրա բարձրությունը կազմում է շուրջ 900, Երևանի պետական համալսարանի հին շենքի մոտ (Աբովյան փողոցի վրա)՝ 1000, իսկ Նորքի բարձունքում՝ 1350 մետր:

Երևան քաղաքով է անցնում Հրազդան գետը իր հրաշագեղ կիրճով, քաղաքով է անցնում նաև Գետառ գետը, որի հոսքը կարգավորված է, քանի

որ նախկինում այն հանկարծակի ուժեղ հորդացումների ժամանակ մեծ վնասներ էր հասցնում քաղաքին: Երևանն ունի նաև մի այլ փոքր գետակ՝ Զրվեժը:

Երևանի կլիման խիստ ցամաքային է, ամենատաք ամիսները հուլիսն ու օգոստոսն են, հուլիսյան միջին ջերմաստիճանը +25 աստիճան է, իսկ առավելագույնը երբեմն հասնում է +41 աստիճանի: Ամենացուրտ ամիսը հունվարն է, այդ ամսվա միջինը –4 աստիճան է, իսկ բացարձակ ցածր ջերմաստիճանը երբեմն հասնում է –31 աստիճանի: Միջին տարեկան ջերմաստիճանը + 11.5 աստիճան է:

Գարնան վերջերին ու ամռանը, երբ քաղաքում ջերմաստիճանը կտրուկ բարձրանում է, Արագածից, Գեղամա լեռներից փչում են զով քամիներ, երբեմն շատ մեծ արագությամբ: Դրանք Երևանին բնորոշ լեռնահովտային քամիներ են: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը շուրջ 300 մմ է, որոնք գերազանցապես թափվում են աշնանը: Գարունը Երևանում շատ կարճ է տևում, դրա փոխարեն շատ երկար է շոգ ամառը, համեմատաբար կարճ է նաև ձմեռը, սակայն ցրտաշունչ:

Երևան քաղաքի բնական հողային ծածկույթը քարքարոտ, կրաքարային, կավային հողատեսակներ են: Ահա թե ինչու բնական բուսական ծածկույթը խիստ աղքատ է եղել, իսկ արհեստական բուսածածկ ստեղծելու համար անհրաժեշտ է լինում (հատկապես քաղաքի ցածրադիր մասերում) հանրապետության մյուս շրջաններից տեղափոխել մեծ քանակությամբ սնահող: Այդպես է ստեղծվել քաղաքի դեկորատիվ բուսականությունը: Քաղաքը շրջապատող բարձունքների անտառաշերտերը ամբողջապես արհեստական են:

Երևանի ընդերքը շատ հարուստ է բազալտի հզոր շերտերով, իսկ Ավան և Զրվեժ թաղամասերի ընդերքը՝ տուֆի ու հրաբխային խարամի պաշարներով: Հատկապես Ավան թաղամասի ու շրջապատի ընդերքը հարուստ է նաև բարձրորակ կերակրի աղի պաշարներով, որտեղից արդյունահանվում է մեծ քանակությամբ աղ: Իսկ այդ աղահանքում կազմակերպված է նաև ստորերկրյա բուժարան:

Չնայած Երևանը աշխարհի առավել հին քաղաքներից մեկն է, այնուհանդերձ մինչև 1920–ական թթ. այն աչքի չէր ընկնում իր բարեկարգությամբ, բնակչության քանակով, տնտեսության զարգացման մակարդակով:

Երևանը բուռն զարգացում ապրեց խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի կողմից կազմվեց նրա հիմնավոր հատակագիծը (մինչ այդ քաղաքի հատակագիծ էր կազմվել 19–ՐԴ դարի կեսերին): Թամանյանի հատակագծով հանրապետության մայրա-

քաղաքի բնակչությունը պետք է կազմեր 250–300 հազ. բնակիչ: Նշենք, որ 20–ական թթ. սկզբներին այն ուներ 25–30 հազ. մարդ, այսինքն՝ ավելի քան երկու անգամ քիչ, քան այժմ նրա ուսանողների քանակն է: Սակայն խորհրդային իշխանության տարիներին Երևանի բնակչությունն ու տնտեսությունն այն աստիճանի արագությամբ աճեց, որ հիմնականում քաղաքի կենտրոնական մասում պահպանելով Թամանյանի նախագծի հենքը, մի քանի անգամ վերակազմվեց մայրաքաղաքի հատակագիծը, հաշվի առնելով նրա տարածքային փոփոխությունը, քաղաքաշինական, ջրամատակարարման, տրանսպորտային, էկոլոգիական յուրահատկությունները, արդյունաբերության բուռն զարգացումը և բնակչության սոցիալական պայմանների բավարարումը: Արդեն 1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ Երևան քաղաքի բնակչությունը կազմել է 1250, իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ 1102.0 հազ. մարդ (այսինքն՝ այստեղ է գտնվում հանրապետության բնակչության 1/3–ը):

1999–2003 թթ. Երևան քաղաքի բնակչության շարժը ունի հետևյալ պատկերը.

1999 թ. – 1248.7 հազ. մարդ
2000 թ. – 1248.2 հազ. մարդ
2001 թ. – 1247.2 հազ. մարդ
2002 թ. – 1103.3 հազ. մարդ
2003 թ. – 1102.0 հազ. մարդ

Երևանի տարածքը, ինչպես նշվել է, կազմում է 227 կմ^2, բնակչության խտությունը 1կմ^2 վրա կազմում է 4856 մարդ (հանրապետությունում 106 մարդ):

Երևան քաղաքի թվի բուռն աճը պայմանավորված է ոչ միայն բնական աճով, այլև մեխանիկական բարձր աճով: Հանրապետության տարածքում արտադրողական ուժերի ոչ ռացիոնալ տեղաբաշխման հետևանքով գյուղական շրջաններից մեծ թվով բնակիչներ, տասնամյակներ շարունակ թողնելով իրենց բնակավայրերը, աշխատատեղեր չլինելու պատճառով տեղափոխվել են Երևան, որտեղ կառուցվում էին նորանոր արդյունաբերական ձեռնարկություններ:

Այսպիսով՝ մի կողմից դատարկվում էին հանրապետության գյուղական բնակավայրերը, մյուս կողմից մեխանիկորեն և արագ ավելանում էր Երևանի բնակչությունը՝ ստեղծելով մեծ դժվարություններ բնակարանային շինարարության, ջրամատակարարման, տրանսպորտային, սոցիալ–տնտեսական և շատ այլ բնագավառներում: Երևան քաղաքի բնակչությունն ավելանում էր նաև մերձավոր ու հեռավոր սփյուռքից հայրենադարձված, իսկ Ադրբեջանից՝ նաև բռնագաղթված հայերի հաշվին:

Վերջին տասնամյակում, ինչպես ամբողջ հանրապետությունում, Երևանում բնակչության բնական աճը կտրուկ անկում է ապրել՝ կապված արդյունաբերության կազմալուծման, բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների վատթարացման հետ: Ըստ որում, Երևանի բնակչության բնական աճի մակարդակը զգալիորեն ցածր է մյուս բոլոր մարզերի համեմատ:

Մինչև 1995 թ. Երևան քաղաքը բաժանված էր քաղաքային 8 շրջանների՝ Լենինյան, Մաշտոցի, Մյասնիկյանի, Շահումյանի, 26 կոմիսարների անվան, Սովետական, Սպանդարյանի, Օրջոնիկիձեի: Վարչական նոր բաժանմամբ Երևան քաղաքը բաժանված է 12 թաղերի՝ **Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա–Սեբաստիա, Նոր Նորք, Նորք–Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ–Զեյթուն:**

1920–1990 թթ. Երևանը դարձել է Հայաստանի Հանրապետության արդյունաբերական, տրանսպորտային, կրթական, մշակութային, գիտական, առողջապահական խոշորագույն կենտրոնը:

Արդյունաբերության ճյուղերից այստեղ բարձր զարգացման են հասել մեքենաշինությունը (հատկապես հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը, ընդհանուր մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի, փայտամշակման, թեթև, սննդի արդյունաբերությունը):

Մինչև 1990–ական թվականների սկիզբները Երևանը տալիս էր հանրապետության արդյունաբերական արտադրանքի մինչև 40 և ավելի տոկոսը (իսկ մինչև 1960 թ. ավելի բարձր), հետագայում հանրապետության շրջաններում արդյունաբերության զգալի զարգացման հետևանքով Երևանի տեսակարար կշիռը իջել էր, իսկ քանի որ, 90–ական թվականներին ստեղծված տնտեսական ծանր վիճակի հետ կապված, հանրապետության շրջանների արդյունաբերությունը կազմալուծվեց ավելի մեծ չափերով, ապա Երևանի տեսակարար կշիռը նորից բարձրացել և 1999 թ. կազմել է 46,7%:

1996 թ. տվյալներով՝ այստեղ կար արդյունաբերական 251 ձեռնարկություն (առանց միջին ու փոքր ձեռնարկությունների), որոնցից իրենց հզորության տարբեր չափերով գործում էին 200 ձեռնարկություն: Նույն թվականի տվյալներով՝ Երևանում թողարկվել է 71725,6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 41,9%–ը: Այսքան արտադրանք Երևանի արդյունաբերությունը թողարկել է դեռևս 1966 թվականին (այսինքն՝ 32 տարի առաջ): Այդ նշանակում է, որ մայրաքաղաքի ձեռնարկությունները դեռևս աշխատում են ոչ լրիվ հզորությամբ, իսկ մի մասն էլ բոլորովին չեն աշխատում: Այդ տե-

սակետից դեռևս ավելի ծանր է հանրապետության մյուս մարզերի ձեռնարկությունների վիճակը, ահա թե ինչու Երևանի տեսակարար կշիռը թողարկվող արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում բարձրացել է: 1996 թ. մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական անձնակազմի թվաքանակը կազմել է 81,8 հազ. մարդ, այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 17,1%–ով կամ 16,8 հազ. մարդով: Այս փաստերը ցույց են տալիս, որ Երևանի երբեմնի արդյունաբերության և աշխատողների վիճակը շարունակում է մնալ ծանր:

Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը թողարկվող արտադրանքի ծավալով և որակական հատկանիշներով լայն ճանաչում են ստացել ոչ միայն նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում ու առհասարակ սոցիալիստական երկրներում, այլև կապիտալիստական շատ երկրներում: Դրանցից առավել լայն ճանաչում ստացածներն են՝ «Հայէլեկտրո» գործարանը (որը ամենահզորն է), էլեկտրատեխնիկական, էլեկտրոն, ռելե, գործիքաշինական, ժամացույցների, կոմպրեսորների, հիդրոպոմպերի գործարանները, «Նաիրիտ» միավորումը, պոլիվինիլացետատ, անվադողերի, կաբելի, էլեկտրալամպերի գործարանները, գինու կոմբինատը, կոնյակի գործարանը և այլ ձեռնարկություններ:

Մայրաքաղաքի արդյունաբերական համակարգում շատ կարևոր դեր են խաղում Երևանի էլեկտրակայանները (Երևանի ջեկը, 550 հազ. կվտ հզորությամբ) և Երևանի ու Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները:

1998 թվականից հետո Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալների շարժը ու դրանց տեսակարար կշիռները հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում տրված է ստորև զետեղված աղյուսակում:

Աղյուսակ 51

	Տարիները				
	1998	2000	2001	2002	2003
1	2	3	4	5	6
Հայաստանի Հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալը (մլն դրամ)	261167,6	300549,7	309310,4	341045,4	423717,5

1	2	3	4	5	6
Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը (մլն դրամ)	113665,0	138840,8	152490,5	159718,9	209100,5
Երևան քաղաքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (%)	43,5	46,2	49,3	46,8	49,3

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, վերջին տարիներին մայրաքաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալները տարեցտարի մեծ չափերով ավելանում, իսկ նրա տեսակարար կշիռը ամբողջ հանրապետության չափանիշով վճռական տեղ է զբաղեցնում: Այսինքն՝ Երևանը մնում է որպես ՀՀ արդյունաբերական խոշորագույն կենտրոնը: Նշենք նաև, որ Երևանում թողարկվող արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 82,2%–ը բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերությանը (2002 թ. տվյալներով), իսկ 16,9%–ը՝ էներգետիկ տնտեսությանը:

Քանի որ Երևան քաղաքի վարչական կառուցվածքում են նաև Նուբարաշենը ու երկու գյուղական բնակավայրեր, ապա մայրաքաղաքը ունի նաև գյուղատնտեսական որոշ արտադրաճյուղեր:

Մասնավորապես, քաղաքին պատկանող հողատեսքերը 1997 թ. հունվարի 1–ի դրությամբ կազմում են 8,3 հազ., խոտհարքերը՝ 0,1 հազ., արոտավայրերը՝ 2,7 հազ. հեկտար:

Դեռ 1996 թ. քաղաքի գյուղատնտեսությունը տվել է 1214տ հացահատիկ, 2158 տ կարտոֆիլ, 8162 տ բանջարեղեն, 3492 տ խաղող, իսկ 2003 թ. համապատասխանաբար 1082, 1541, 6181, 910 և 924 տոննա:

Երևան քաղաքի գյուղատնտեսության կառուցվածքում զգալի տեղ ունի նաև անասնապահությունը: 1996 թ. տվյալներով՝ այստեղ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 4,9 հազ., մանր եղջերավորներինը՝ 7.0 հազ., խոզերինը՝ 1,8 հազ. գլուխ:

Նույն տարում արտադրվել է 3,3 հազ. տ կաթ, միս՝ 1,5 հազ. տ, ձու՝ 15,7 մլն հատ, բուրդ՝ 12,0 տ, իսկ 2003 թ. արտադրվել է 1600 տ միս, 3400 տ կաթ, 55,5 մլն հատ ձու:

Սրանք Երևանի բնակչության պահանջարկի ամբողջ ծավալում աննշան տեղ են զբաղեցնում, քաղաքի պահանջը բավարարվում է մյուս մարզերից բերվող և ներմուծվող գյուղատնտեսական մթերքներով:

Երևան քաղաքը հանրապետության տրանսպորտային խոշորագույն հանգույցն է: Երկաթուղին Երևան է հասել 1901 թ. դեկտեմբերին: Այժմ Երևանից դուրս է գալիս երկաթուղու երեք գիծ: Դրանցից մեկը Երևան–Մասիս–Արմավիր–Գյումրի գիծն է, մյուսը՝ Երևան–Մասիս–Արտաշատ–Արարատ. երրորդը՝ Երևան–Աբովյան–Հրազդան գիծը: Երկաթուղին մայրաքաղաքի վճռական դեր խաղացող տրանսպորտի ճյուղերից է:

Երևանը նաև հանրապետության ավտոխճուղային խոշոր հանգույցն է: Այստեղից դուրս են գալիս և դեպի հանրապետության տարբեր շրջաններ ձգվում մի շարք ավտոճանապարհային մայրուղիներ: Դրանցից հատկապես կարևորներն են՝ Երևան–Աբովյան–Սևան, Երևան–Էջմիածին–Արմավիր, Երևան–Աշտարակ–Ապարան, Երևան–Արտաշատ–Արարատ և ուրիշները:

Երևանի տրանսպորտային համակարգում յուրահատուկ կարևոր տեղ ունի խողովակաշարային տրանսպորտը: 1960 թ. գազամուղը Իջևան–Սևան–Աբովյան գծով հասել է Երևան, իսկ քաղաքի ներսում այն ճյուղավորված է բոլոր թաղամասերում:

Այն հանրապետության օդային տրանսպորտի խոշորագույն հանգույցն է: Այստեղ գործում են երկու օդանավակայաններ: Զվարթնոց օդանավակայանը, որը առավել խոշորն է, ժամանակակից օդանավերով կապված է ոչ միայն նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների մայրաքաղաքների և խոշոր քաղաքների, այլև աշխարհի բազմաթիվ այլ երկրների (այդ թվում ԱՄՆ–ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի) հետ: Մյուսը Էրեբունի օդանավակայանն է, որն օդային կապեր ունի համեմատաբար մոտ երկրների հետ:

Երևանի ներքաղաքային տրանսպորտի համակարգն ընդգրկում է տրամվայի, մետրոպոլիտենի, տրոլեյբուսային, ավտոբուսային ուղիները:

Տրամվայի շահագործվող միագծերի երկարությունը եղել է 83 կմ, տրոլեյբուսինը՝ 295 կմ, մետրոպոլիտենի շահագործվող գծի երկարությունը՝ 10,5 կմ: Այժմ Երևան քաղաքի տրամվայի գծերի մեծ մասը հանված է:

Վերջին տվյալներով՝ Երևան քաղաքի աշխատանքային ռեսուրսները կազմում են 721,1 հազ. մարդ, որից տնտեսական ակտիվ բնակչությունը՝ 467,1 հազ. մարդ, այդ թվում զբաղվածներ՝ 423,8 հազ. մարդ: Դրանցից 0,2%–ը զբաղված է գյուղացիական տնտեսություններում, 31,4%-ը՝ բյուջետային կազմակերպություններում:

Մինչև 1990–ական թթ. սկիզբները, երբ նորմալ գործում էր հանրապետության արդյունաբերությունն ու տրանսպորտը, Երևանի աշխատանքային ռեսուրսների զգալի մասը ընդգրկված էր աշխատանքի Չարենցավանի, Աբովյանի, Արզնու, Նոր Հաճընի, Մասիսի, Արտաշատի, Էջմիածնի, Արմավիրի ու մերձերևանյան այլ բնակավայրերի ձեռնարկություններում:

Ստեղծված ծանր իրավիճակի հետ կապված՝ ճոճանակային այդ միգրացիան փաստորեն կազմալուծված է: 2003 թ. տվյալներով՝ քաղաքում միայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմել է 34.0 հազ. մարդ:

Քաղաքամայր Երևանը հանրապետության գիտական, կրթական, մշակութային խոշոր կենտրոնն է:

Այստեղ է գտնվում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան՝ իր ճյուղային մի քանի տասնյակ ինստիտուտներով:

Միջնակարգ հանրակրթական դպրոցների թիվը քաղաքում հասնում է 214–ի (հանրապետության 15,2%), որոնցում աշակերտների թիվը շուրջ 168 հազ. է (հանրապետության 28,4%):

Դպրոցների թվով Երևանը 1000 բնակչի հաշվով երկու անգամ գերազանցում է հանրապետության նույն ցուցանիշը:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը: Դեռ 1996–97 ուսումնական տարում եղել է 12 (հանրապետության 80%), ուսանողների թիվը՝ 30327 (հանրապետության 85,4%), դասախոսների թիվը 12499 (հանրապետության 85%):

Բացի դրանից, այժմ Երևանում գործում են նաև մի քանի տասնյակ մասնավոր բուհեր:

Միջնակարգ մասնագիտական կրթօջախների թիվը հասնում է 23–ի, որտեղ սովորողների թիվը կազմում է 10546:

Երևանում բուռն թափով աճել է մշակույթը, այստեղ գործում է 13 թատրոն, 44 գրադարան, 38 թանգարան:

Քաղաքի սոցիալական կյանքում անգնահատելի է առողջապահական հիմնարկների դերը: 1996 թ. Երևանում կար 47 հիվանդանոց 12286 մահճակալով:

Երևանը աշխարհի առավել գեղեցիկ, ճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող քաղաքներից մեկն է: Այդ է պատճառը, որ տարեցտարի ավելանում է Երևան այցելող արտասահմանյան զբոսաշրջիկների թիվը: Ճարտարապետական տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հանրապետության հրապարակը՝ այն շրջապատող տուֆակերտ, անզուգական, Թամանյանական կոթողներով (Կառավարական տունը, Երկրորդ կառավարական տունը, Փոստի շենքը, Միությունների տունը, թանգարանների շենքը):

Երևանի ճարտարապետական եզակի գարդ է Ալ. Թամանյանի հանճարով ստեղծված օպերայի գրանիտակուռ շենքը: Անզուգական կոթողներ են գինու, կոնյակի գործարանների շենքերը, Ծիծեռնակաբերդի մարգահամերգային համալիրի շենքը և հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված բազալտակուռ հուշահամալիրն ու թանգարանը, «Մայր Հայաստան» կոթողը և բազմաթիվ այլ կոթողներ:

Երևանը ամբողջապես կառուցված է հայկական անզուգական, տարբեր գույների տուֆաքարերից, սակայն հիմնականում Արթիկի վարդագույն տուֆից:

Հայաստանի մայրաքաղաք Երևանը եղբայրացած է աշխարհի մի շարք քաղաքների հետ: Մասնավորապես, դեռ 1970–ական թթ. սկզբներից Երևանը եղբայրացած է Կիևի, Չեռնոգորիայի մայրաքաղաք Տիտոգրադի, 1980–ական թթ. սկզբներից Մադագասկարի մայրաքաղաք Անտանանարիվու քաղաքի հետ, Իտալիայի մարմարի արդյունահանման հանրահայտ կենտրոն Կարրարա քաղաքի հետ (որի նվերը՝ մարմարակերտ ձեռքերը, դրված է Երիտասարդական մետրոյի կայարանամերձ այգում), ԱՄՆ–ի Բոստոն, Ֆրանսիայի Բանյո և այլ քաղաքների հետ:

8.2. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի տարածաշրջանները: Տարածքը կազմում է 2753 կմ^2, այսինքն՝ զբաղեցնում է հանրապետության տարածքի 9,3%–ը: Մարզային կենտրոնը Աշտարակ քաղաքն է:

Բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի գնահատմամբ կազմել է 164,6, իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ 138,5 հազ. մարդ, բնակչության խտությունը 1կմ^2 վրա կազմում է 50 մարդ: Քաղաքային բնակչությունը կազմում է 32,9 հազ., իսկ գյուղականը՝ 105,6 հազ. մարդ: Մարզի բնակչության թիվը 1999 թ. (166.7 հազ.) համեմատությամբ 2003 թ. (138,5 հազ.) կրճատվել է 28,2 հազարով:

Արագածոտնի մարզը հյուսիսարևմտյան մասում սահմանակից է Շիրակի, հյուսիսային մասում՝ Լոռու, արևելյան մասում՝ Կոտայքի, հարավարևելյան մասում՝ շատ նեղ հատվածով Երևանին, հարավային մասում՝ Արմավիրի մարզերին: Նրա արևմտյան սահմանը Հայաստանի Հանրապետության սահմանն է Թուրքիայի հետ:

Մարզի բնական պայմանները բազմազան են: Մակերևույթը խիստ կտրտված է, համեմատաբար ցածրադիր մասերը՝ Աշտարակի ու Թալինի տարածաշրջանների, Արարատյան գոգավորության նախալեռնային հատվածները, ծովի մակարդակից ունեն 1000–1500մ բարձրություն, իսկ մարզի ամենաբարձր կետը՝ Արագածի գագաթը՝ 4090 մետր է: Հետևաբար մարզի տարածքում լավ արտահայտված է բնական պայմանների վերընթաց գոտիականությունը: Կլիմայի տիպերից այստեղ արտահայտված են չոր ցամաքային, չոր, չափավոր տաք, չափավոր լեռնային, ցուրտ լեռնային տիպերը: Բազմազան են նաև հողերի ու բուսականության տիպերը, նախալեռնային մասերում (Թալինի ու Աշտարակի տարածաշրջանների ստորին մասերում) տարածված են լեռնաշագանակագույն, շատ վայրերում համատարած քարքարոտ հողերը, դրանցից ավելի բարձր վայրերում (Ապարանի, Արագածի տարածաշրջաններում) գերակշռում են լեռնային սնահողերը, Արագածի բարձրադիր լեռնալանջերին տարածված են լեռնամարգագետնատափաստանային և լեռնամարգագետնային հողերը: Հենց բարձրադիր այս մասերն էլ հարուստ են խոտային բուսականությամբ ու հանդիսանում են ամառային խոտառատ արոտավայրեր և խոտհարքեր, լեռնային սնահողային տարածքները հանդիսանում են հացահատիկի ու կարտոֆիլի աճեցման հիմնական վայրերը: Ցածրադիր, բնական բուսատեսակներով աղքատ վայրերը կուլտուրականացված են, որտեղ էլ զարգացած է այգեգործությունը, պտղաբուծությունը:

Մարզի ստորին մասերում մթնոլորտային տեղումների քանակը խիստ անբավարար է, այդ պատճառով արհեստական ոռոգումը վճռական դեր է խաղում գյուղատնտեսական արտադրության համար: Բարձրադիր մասերում (հատկապես Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում) տեղումների քանակը համեմատաբար շատ է, ձյան հզորությունը մեծ է, ձմեռը տևում է երկար:

Մարզի տարածքում կա 3 քաղաք և գյուղական 116 բնակավայր: Քաղաքներն են՝ Աշտարակը, որը մարզային կենտրոնն է: Վարչական տեսակետից Աշտարակի կառուցվածքի մեջ է մտնում Մուղնի գյուղը: Աշտարակի բնակչությունը 1997 թ. հունվարի 1–ի տվյալներով կազմել է 28,4 հազ., 2000 թ.՝ 29,8 հազ., 2003 թ.՝ 20,7 հազ. մարդ: Մյուս քաղաքներն են՝ Ապարանը, որի բնակչությունը 2000 թ. եղել է 10,3 հազ., իսկ 2003 թ.՝ 6,6 հազ. մարդ, Թալինը, որի բնակչությունը 2000 թ. եղել է 7,6 հազ., իսկ 2003 թ.՝ 5,6 հազ. մարդ:

Գյուղական բնակավայրերից բնակչության թվով խոշորներն են Արագածը (Թալինի տարածաշրջանում)՝ 6800 բնակչով, Օշականը՝ 5778 բնակչով, Բյուրականը՝ 4930 բնակչով, Ոսկեվազը՝ 4458 բնակչով, Արտենին՝ 4060 բնակչով, Կարբին՝ 3950 բնակչով, Արագածը (Արագածի տարածաշրջանում)՝ 3125 բնակչով, Սասունիկը՝ 2950 բնակչով և այլն:

Մարզի գյուղական բնակչության տեսակարար կշիռը կազմում է 72%: Բնական ռեսուրսներից գործնական մեծ նշանակություն ունեն տուֆերը, որոնց պաշարները խոշոր են Թալինի ու Աշտարակի տարածաշրջաններում, բազալտները, հրաբխային խարամները: Մարզը եզակի տեղ ունի բարձրորակ պեռլիտի խոշոր պաշարներով, առավել հանրահայտ է Արագածի (Թալինի տարածաշրջան) պեռլիտի հանքավայրը: Մարզի արևելյան մասով հոսում է Քասախ գետը, իսկ արևմտյան մասով՝ սահմանային Ախուրյան գետը: Կան նաև Արագած լեռնազանգվածից սկիզբ առնող մի շարք գետակներ: Թփուտային անտառապուրակներ կան Արագածի հարավարևելյան լանջերին: Լեռնային սնահողերի տարածքներ կան Ապարանի և Արագածի տարածաշրջաններում և Աշտարակի տարածաշրջանի բարձրադիր վայրերում:

Գյուղատնտեսական ամբողջ հողատեսքերը 137 հազ. հեկտար է, այդ թվում վարելահողեր՝ 56,2, բազմամյա տնկարկներ՝ 7,7, խոտհարքեր՝ 4,0, արոտավայրեր՝ 68,5 հազ. հա:

Մարզի տնտեսության համակարգում թողարկվող արտադրանքի ծավալով վճռական դեր խաղացողը գյուղատնտեսությունն է: 1996 թ. այստեղ գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 33126 մլն դրամ, որը կազմում է նույն տարում հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 9,7%: 2003 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 33,3 մլրդ դրամ, որը կազմել է հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի 7,4%–ը:

Մարզի բուսաբուծության համակարգում կարևոր ենթաճյուղեր են՝ հացահատիկի արտադրությունը, կարտոֆիլի, բանջարեղենի աճեցումը, պտղաբուծությունը ու խաղողագործությունը:

Հացահատիկի ցանքատարածությունը 2003 թ. կազմել է 21,8 հազ. հա, իսկ համախառն բերքը 27,8 հազ. տ (այսինքն՝ հանրապետության հացահատիկի ամբողջ համախառն բերքի 6,9%–ը): Հացահատիկի միջին բերքատվությունը մեկ հեկտարից (11.3 ցենտներ) զգալիորեն ցածր է հանրապետության միջինից (17,9 ցենտներ): Կարտոֆիլի ցանքերը մարզում կազմում են (2003 թ. տվյալներով) 1,85 հազ. հեկտար, համախառն բերքը՝ 32,3 հազ. տոննա (հանրապետության 8,6%), մեկ հեկտարի միջին բերքատվությունը (134 ցենտներ) որոշ չափով բարձր է հանրապետության միջինից (129,6 ցենտներ): Բանջարեղենի ցանքերը կազմում են 1,17 հազ. հեկտար, համախառն բերքը 21,0 հազ. տոննա (հանրապետության 5,1%):

Մարզը շատ կարևոր տեղ է զբաղեցնում պտղաբուծության բնագավառում: Պտղատու այգիների տարածքը կազմում է 4,5 հազ. հեկտար (հանրապետության 13%), իսկ համախառն բերքը 2003 թ. կազմել է 28,4 հազ. տ (հանրապետության 19%): Ըստ որում, պտղի մեկ հեկտարի միջին բերքատվությունը (71 g) մեծ չափով բարձր է հանրապետության միջին բերքատվությունից (48 g):

Արագածոտնի մարզը կարևոր տեղ ունի նաև խաղողագործության բնագավառում: Խաղողի այգիների տարածքը այստեղ կազմում է 2,8 հազ. հա (հանրապետության 13%) համախառն բերքը 2003 թ. կազմել է 1,4 հազ. տոննա (հանրապետության 9%), սակայն մեկ հեկտարի միջին բերքատվությունը (49 g) զգալիորեն ցածր է հանրապետության միջինից (73 g):

Եթե հացահատիկի ու կարտոֆիլի ցանքերը գերազանցապես գտնվում են Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում, ապա բանջարեղենի ցանքերի մեծ մասը և պտղատու այգիների բացարձակ մեծ մասը, խաղողի այգիները ամբողջապես գտնվում են Աշտարակի ու Թալինի տարածաշրջաններում:

Արագածոտնի մարզը նշանակալից տեղ է զբաղեցնում նաև անասնապահության բնագավառում:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1996 թ. տվյալներով կազմում էր 56,7 հազ. գլուխ (հանրապետության ավելի քան 11 %), 2002 թ. տվյալներով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 56,8 հազ. գլուխ, այդ թվում կովերինը՝ 30,6 հազ. գլուխ:

Անասնապահության այս ճյուղի համար պայմանները առավել նպաստավոր են Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում, որտեղ կան խոտառատ արոտավայրեր, խոտհարքեր:

Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. կազմել է ավելի քան 86,5 հազ. գլուխ (հանրապետության 17,5%): Համեմատաբար ցածր են խոզաբուծության և թռչնաբուծության տեսակարար կշիռները: Խոզերի գլխաքանակը կազմում է 5,8 հազ. գլուխ (հանրապետության 4,8%):

2003 թ. տվյալներով մարզը տարեկան արտադրում է 9,5 հազ տ միս (հանրապետության 10,3%), շուրջ 59,4 հազ. տ կաթ (հանրապետության 11,3%), ավելի քան 26,2 մլն հատ ձու (հանրապետության 6,9%), 269 տ բուրդ (հանրապետության 19,6%): Սակայն մարզի հնարավորությունները գյուղատնտեսության բնագավառում ավելի մեծ են, խնդիրը դրանց հետագա ռացիոնալ օգտագործումն է:

Մասնավորապես, Արզնի–Շամիրամ և Թալինի ջրանցքների, Ապարանի ջրամբարի ռացիոնալ օգտագործումը այդ բնագավառում շատ կարևոր դեր կարող է խաղալ:

Արդյունաբերությունը Արագածոտնի մարզում թողարկվող արտադրանքի ծավալով մեծ չափերով զիջում է գյուղատնտեսությանը: Մասնավո-

ռապես, արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 2003 թ.՝ 7777,7 մլն դրամ, այսինքն՝ վերջին 7 տարում այն աճել է ավելի քան 2,5 անգամ: Մարզի տարածքում կա արդյունաբերական 24 ձեռնարկություն, այդ թվում 7–ը Աշտարակի, 6–ը Ապարանի, 3–ը Արագածի, 8–ը Թալինի տարածաշրջաններում:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այստեղ նույնպես արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը չեն գործում, մյուսներն էլ գործում են իրենց հզորության փոքր մասերով:

Վերջին տարիների տվյալներով՝ մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի ավելի քան 55%–ը բաժին է ընկնում Աշտարակի տարածաշրջանի ձեռնարկություններին:

Ծանր արդյունաբերական ճյուղերից թողարկվող արտադրանքի ծավալում մարզում այժմ կարևոր տեղ են զբաղեցնում շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունները: Այդ թվում կարևորները Թալինի ու Աշտարակի տարածաշրջաններում գործող տուֆ, բազալտ, հրաբխային խարամ, պեռլիտ և բնական այլ շինանյութեր արդյունահանող ձեռնարկություններն են:

Մարզում կան նաև ճշգրիտ մեքենաշինության, գործիքաշինության փոքր ձեռնարկություններ, մասնաճյուղեր, թեթև արդյունաբերության, սննդի արդյունաբերության (կաթի վերամշակման, խաղողի, մրգերի, բանջարեղենի վերամշակման) ձեռնարկություններ:

Տրանսպորտի ճյուղերից մարզի համար վճռական դեր խաղացողը ավտոխճուղային տրանսպորտն է: Նրա տարածքով են անցնում Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի, Երևան–Աշտարակ–Ապարան–Վանաձոր մայրուղիները: Մարզի արևմտյան մասով անցնում է Երևան–Գյումրի երկաթուղու մի հատված: Արագածոտնի մարզը հանրապետության մյուս ռեգիոններին տալիս է բնական բազմազան շինանյութեր, ճշգրիտ սարքեր, գործիքներ, թեթև արդյունաբերության արտադրանք, պտուղներ, մրգեր, բանջարեղեն, կարտոֆիլ, միս և այլ արտադրանք:

Մարզը Երևանից ու հանրապետության մյուս ռեգիոններից ստանում է մեքենաշինության, քիմիական, թեթև, սննդի արդյունաբերության բազմատեսակ արտադրանք: Կապերը շատ լայն են հատկապես Երևանի, Գյումրիի ու Վանաձորի հետ:

8.3 ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները: մարզային կենտրոնը Արտաշատ քաղաքն է:

Տարածությունը 2096 կմ² է, որը կազմում է հանրապետության տարածքի 7%–ը: Բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ կազմել է 308,5, 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 310,8, իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 272,1 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1 կմ² վրա 130 մարդ է (միջին հանրապետական ցուցանիշից, որը կազմում է 106 մարդ, զգալիորեն բարձր): Բնակչության ավելի քան 61%–ը բնակվում է գյուղական բնակավայրերում:

Գյուղական բնակչությունը 2003 թ. կազմել է 192,0, իսկ քաղաքայինը՝ 80,1 հազ. մարդ:

Արարատի մարզը արևմտյան մասում սահմանակից է Արմավիրի մարզին և Երևանի տարածքին, հյուսիսային մասում՝ Կոտայքի ու Գեղարքունիքի, արևելյան մասում՝ Գեղարքունիքի ու Վայոց ձորի մարզերին:

Մարզի հարավային սահմանագիծը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Թուրքիայի հետ, իսկ հարավարևելյան սահմանագիծը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ:

Ռելիեֆը բազմազան է, տարածքի զգալի մասը ընդգրկում է Արարատյան դաշտի արևելյան հատվածը, որի բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 800–1500 մ: Հյուսիսային և հյուսիսարևելյան մասերում մարզի ռելիեֆը տիպիկ լեռնային է: Այդ հատվածով է ձգվում Գեղամա լեռնաշղթայի զգալի մասը, որտեղ էլ գտնվում են մարզի տարածքի ամենաբարձր կետերը: Դրանք են, Սպիտակասարը (բարձրությունը՝ ծովի մակերևույթից 3555մ), Գեղասարը (բարձրությունը՝ 3443 մ), Ծաղկավետ լեռը (բարձր կետը՝ 3076 մ), որոնք գտնվում են Արարատի ու Գեղարքունիքի մարզերի սահմանագծով ձգվող հատվածում:

Արարատի մարզի ցածրադիր մասի կլիման չոր ցամաքային է, տեղումների տարեկան քանակը խիստ անբավարար է (200 մմ), հողագործությունը առանց արհեստական ոռոգման ոչ մի դեպքում արդյունավետ չի կարող լինել:

Նախալեռնային մասերում կլիման չափավոր տաք, երբեմն չոր է: Դրանից ավելի բարձրադիր մասերում կլիման չափավոր լեռնային է, իսկ Գեղամա լեռների բարձրադիր մասերում՝ ցուրտ լեռնային: Հողային ծածկը նույնպես բազմազան է՝ սկսած Արաքսի հովտի աղուտային, կիսաանապատային

գորշ, լեռնային շագանակագույն հողերից մինչև լեռնային սնահողերն ու լեռնամարգագետնային հողերը: Կլիմայական պայմանների ու հողերի բազմազանության համապատասխան, բազմազան են նաև բուսատեսակները, որոնք փոփոխվում են վերընթաց գոտիականությամբ:

Արարատյան դաշտին բնորոշ են այս հատվածում կիսաանապատային, անապատային և աղուտային բուսատեսակները, նախալեռնային մասերում՝ չորասեր, քսերոֆիլային, լեռնատափաստաններում՝ խոտային բազմազան բուսատեսակները, բարձրլեռնային մասերում՝ լեռնամարգագետնային, ալպյան, խոտային բուսականությունը:

Մարզի նախալեռնային որոշ տարածքներում զգալի տեղ են զբաղեցնում բնական և արհեստական թփուտածածկ պուրակները, անտառային փոքրիկ շերտերը: Դրանք հատկապես բնորոշ են Խոսրովի արգելոցի տարածքներին, որոնք գտնվում են Վեդի, Ազատ գետերի միջին ու վերին ավազաններում, ծովի մակերևույթից 1400–2250 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 24 հազ. հեկտար տարածք: Այդ արգելոցը տարածված է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաբազուկների և Ուրծի լեռների հյուսիսարևելյան լանջերին: Անտառային բուսածածկը այստեղ կազմում է 8 հազ. հեկտար և ներկայացված է առանձին զանգվածներով, որոնք իրարից անջատված են ոչ մեծ սարահարթերով: Այստեղի հիմնական ծառատեսակը արևելյան կաղնին է, կա նաև վրացական կաղնի, հացենի, դաշտային թխկի, թեղի, տանձենի, խնձորենի, սալորենի և այլ ծառատեսակներ: Բարձրադիր մասերում կան կեչու փոքր ծառուտներ, մասրենի, սզնի, ցախակեռաս, կծոխուր և այլն: Զգալի տեղ են զբաղեցնում գիհու նոսր ծառուտները, գազերը: Որոշ տեղերում հանդիպում են ընկուզենու, բարդու, ուռենու, նշենու ծառուտներ:

Արարատի մարզի տարածքում հանդիպում են սողունների 15, թռչունների 115, կրծողների 31 տեսակներ: Այստեղ հանդիպում են հանրապետության կենդանական աշխարհի անհետացող և արժեքավոր տեսակներ, այդ թվում՝ հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը:

Մարզի տարածքով հոսում են Արաքսի վտակներ Հրազդան (ստորին հոսանքը), Ազատ և Վեդի գետերը, իսկ Թուրքիայի հետ ունեցած սահմանագծով հոսում է Արաքս գետը: Սակավաջուր այս մարզի համար կարևոր դեր են խաղում Արտաշատի ու Արազդայանի ջրանցքերն ու Ազատի ջրամբարը:

Արարատի մարզում կան 4 քաղաք, որոնցից բնակչության թվաքանակով խոշորը Արտաշատն է, որը 1997 թ. հունվարի 1–ի դրությամբ ուներ 35 հազ. բնակիչ, իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ 25,1 հազ. բնակիչ:

Մյուս քաղաքներն են՝ Արարատը (20,5 հազ. բնակիչ), Մասիսը (21,4 հազ. բնակիչ) և Վեդին (13 հազ. բնակիչ):

Գյուղական բնակավայրերի թիվը մարզում հասնում է 94–ի, որոնցից բնակչության թվաքանակով հատկապես խոշորներն են Այնթապը (8484 բնակիչ), Նոր Խարբերդը (5400 բնակիչ), Արարատը (7950 բնակիչ), Ոսկետափը (5190 բնակիչ), Մխչյանը (4869 բնակիչ), Ավշարը (4798 բնակիչ), Վերին Արտաշատը (4621 բնակիչ), Շահումյանը (4535 բնակիչ), Այգավանը (4300 բնակիչ): Կան նաև խոշոր շատ այլ գյուղեր, որոնց բնակչության թիվը անցնում է 3000–ից: Ինչպես ամբողջ հանրապետությունում, Արարատի մարզում բնակչության բնական աճը 1990–ական թթ. խիստ նվազել է (1996 թ. հազար մարդու հաշվով այն կազմել է 7,5 մարդ): Միգրացիան նկատելիորեն բացասական է, 1996 թ. եկողների թիվը կազմել է 1249 մարդ, մեկնողներինը՝ 1515: Հետագա տարիներին միգրացիան նույնպես նկատելիորեն մնում էր բացասական:

Մարզի աշխատանքային ռեսուրսները վերջին տվյալներով կազմում են 127,4 հազ. մարդ, այդ թվում ակտիվ բնակչությունը՝ 105,3 հազ. մարդ, դրանցից գյուղատնտեսության մեջ զբաղված են 96,7 հազ. մարդ, պաշտոնապես գրանցված գործազուրկներ են 8,6 հազ. մարդ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալով մինչև 1990–ական թթ. Արարատի մարզը պատկառելի տեղ էր զբաղեցնում, հետագայում նրա տեսակարար կշիռը մեծ չափերով իջել և հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում, այն կազմում էր ավելի քան 2,1% (1997 թ.): Այժմ մարզում կա արդյունաբերական 52 ձեռնարկություն, որոնցից 20–ը Արտաշատի, 19–ը Արարատի, 13–ը Մասիսի տարածաշրջաններում:

1997 թ. մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 7515,9 մլն դրամ, որի 72%-ը բաժին է ընկնում Արարատի տարածաշրջանի ձեռնարկություններին: Արարատի մարզի արդյունաբերական խոշորագույն ձեռնարկությունը Արարատի ցեմենտի, շիֆրի կոմբինատն է, որին բաժին է ընկնում ամբողջ մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի 40%–ը: Արարատի տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկություններից առավել հայտնի է նաև ոսկու կորզման ֆաբրիկան: Ծանր արդյունաբերության ձեռնարկություններից նշանակալից տեղ ունեն երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների (Արարատ, Արտաշատ), կերամիկական իրերի (Արտաշատ), փայտամշակման (Արտաշատ, Մասիս) ձեռնարկությունները: Մարզի տեղը նշանակալի է նաև սննդի արդյունաբերության, հատկապես գինու, կոնյակի (Արտաշատ, Արարատ), պահածոների արտադրության բնագավառներում:

Վերջին տարիներին մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը բավականին աճել և 2003 թ. կազմել է 36520,9 մլն դրամ: Եթե 1997 թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմում էր հանրապետության արդյունաբերության ամբողջ ծավալի 2,1%–ը, ապա 2003 թ. այն կազմել է ավելի քան 8%–ը:

Գյուղատնտեսությունը մարզի տնտեսության առաջատար ճյուղն է: 1996 թ. այստեղ թողարկվել է 42733 մլն դրամի գյուղատնտեսական արտադրանք, որը կազմել է այդ տարում հանրապետությունում թողարկված գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի 12,5%–ը, իսկ 2003 թ. մարզի գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 54,2 մլրդ դրամ և այն կազմել է հանրապետության գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի 13,2%: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 99,1 հազ. հեկտար, այդ թվում վարելահողեր՝ 30, բազմամյա տնկարկներ՝ 11,8, խոտհարքեր՝ 2,9, արոտավայրեր՝ 54,4 հազ. հա:

Բուսաբուծությունը մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղն է: Այստեղ զարգացած է հացահատիկի, բանջարաբոստանային մշակաբույսերի, կարտոֆիլի աճեցումը, խաղողագործությունը, պտղաբուծությունը: Վերջին տարիներին խաղողի ու պտղատու այգիների տարածքների կրճատման հաշվին մեծացել են հացահատիկի ցանքերը, որոնք 1996 թ. տվյալներով զբաղեցնում էին ավելի քան 6,9 հազ. հա (հանրապետության 3,8%), իսկ համախառն բերքը կազմել է ավելի քան 26,3 հազ. տ (հանրապետության 8%): Կարևոր է նշել, որ հացահատիկի մեկ հեկտարի միջին բերքատվությունը (38 ց) մեծ չափով բարձր է հանրապետության միջինից (17,9 ց): Մարզը շատ կարևոր տեղ է զբաղեցնում բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերի՝ նշված տարում շուրջ 4700 հա (հանրապետության ավելի քան 21%) և դրանց համախառն բերքի ավելի քան 22 հազ. տ (հանրապետության 30%), կարտոֆիլի ցանքերի (ավելի քան 1,8 հազ. հա) և համախառն բերքի (շուրջ 29 հազ. տ) բնագավառներում:

Շատ ակնառու է մարզի տեղը պտղատու և խաղողի այգիների տարածքների և համախառն բերքի բնագավառներում:

Այստեղ է գտնվում հանրապետության խաղողի այգիների ավելի քան 32% (ավելի քան 7,0 հազ. հա) և պտղատու այգիների շուրջ 15% (շուրջ 6,1 հազ. հեկտար): Խաղողի միջին բերքատվությունը մեկ հեկտարից կազմում է ավելի քան 95 ց (հանրապետությունում 73 ց) և պտղատու այգիներինը՝ 56 ց (հանրապետությունում 48 ց): Այսպիսով՝ բուսաբուծության բոլոր բնագավառներում Արարատի մարզը բերքատվությամբ առաջնակարգ տեղ է զբաղեցնում: Իսկ 2003 թ. այդ ցուցանիշները ունեին հետևյալ պատկերը.

հացահատիկի ցանքերը՝ 11,8 հազ. հա, համախառն բերքը՝ 36,7 հազ. տ, կարտոֆիլի ցանքերը 955 հա, համախառն բերքը՝ 23,8 հազ. տ, բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը 6,95 հազ. հա, համախառն բերքը՝ 48,3 հազ. տ:

2003 թ. խաղողի համախառն բերքը մարզում կազմել է 49,1 հազ. տ, իսկ պտուղներինը՝ 13,7 հազ. տ:

Չնայած խոտհարքերի ու արոտավայրերի սահմանափակությանը՝ մարզը նկատելի տեղ է զբաղեցնում նաև **անասնապահության բնագավառում:**

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. տվյալներով կազմում է 42,7 հազ. գլուխ, մանր եղջերավորներինը՝ 73,4 հազ., խոզերինը՝ 9,5 հազ. գլուխ:

Մսի արտադրությունը 2003 թ. կազմել է 8,0 հազ. տ, կաթինը՝ 38,4 հազ. տ., բրդի արտադրությունը 118 տ, ձվի արտադրությունը 38,8 մլն հատ:

Անասնապահության զարգացման համար պայմանները համեմատաբար նպաստավոր են Արտաշատի ու Արարատի տարածաշրջանների բարձրադիր մասերում, որտեղ կան արոտավայրերի և խոտհարքերի զգալի տարածքներ:

Պտղաբուծությունը և խաղողագործությունը հիմնականում զարգացած են Արարատի ու Արտաշատի տարածաշրջաններում, իսկ բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցումը հատկապես Մասիսի ու նաև մյուս երկու տարածաշրջաններում:

Տրանսպորտի ճյուղերից վճռական դեր է խաղում երկաթուղային տրանսպորտը, այստեղով է անցնում Երևան–Արտաշատ–Արարատ–Երասխավան, այնուհետև դեպի Նախիջևան ձգվող երկաթուղին (որի նշանակությունը վերջին տասնամյակում հայտնի պատճառներով խիստ նվազել է):

Այժմ շատ կարևոր դեր խաղացողը ավտոխճուղային տրանսպորտն է: Անգնահատելի է Երևան–Արտաշատ–Արարատ–Երասխավան ու դեպի Եղեգնաձոր ձգվող ավտոմայրուղու դերը:

Մարզի տարածքում գործում են նաև գազամուղային և բարձրավոլտ էլեկտրագծային ցանցերը:

Հանրակրթական դպրոցների թիվը 112 է (52144 աշակերտով), միջնակարգ մասնագիտական դպրոցներինը՝ 3 (893 սովորողներով), հիվանդանոցների թիվը՝ 7 (1405 մահճակալով), բժիշկների թիվը՝ 159:

Գործում է 1 թատրոն, 102 գրադարան, 3 թանգարան:

8.4 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Արմավիրի (Հոկտեմբերյանի), Վաղարշապատի (Էջմիածնի) և Բաղրամյանի տարածաշրջանները:

Մարզային կենտրոնը Արմավիր քաղաքն է, որը Երևանից ունի 48 կմ հեռավորություն: Տարածությունը կազմում է 1242 կմ² (հանրապետության տարածքի 4,2%), բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ՝ 318,6 հազ., 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 322,3 հազ., 2001 թ. հունվարի 1–ի դրությամբ 322,9, իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ 276,8 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1կմ² վրա 223 մարդ (ամենախիտ բնակեցված մարզն է): Մարզի բնակչության 64%–ը կազմում է գյուղական բնակչությունը:

Արմավիրի մարզը հյուսիսային մասում սահմանակից է Արագածոտնի մարզին, հյուսիսարևելյան մասում՝ Երևանի քաղաքային տարածքին, արևելյան մասում՝ Արարատի մարզին: Հարավային ու արևմտյան մասերում մարզի սահմանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Թուրքիայի հետ:

Ռելիեֆը գերազանցապես հարթ է, ընդգրկում է Արարատյան դաշտի արևմտյան կեսը: Տարածքի բարձրությունը ծովի մակարդակից 800–1100 մ է, մի փոքր ավելի բարձրադիր են Բաղրամյանի տարածաշրջանի արևմտյան և Արմավիրի տարածաշրջանի հյուսիսային հատվածները (մինչև 1300 մ):

Բնութագրվում է չոր ցամաքային կլիմայական պայմաններով, այստեղ գրանցվել է հանրապետության տարածքում բացարձակ առավելագույն +42 աստիճան ջերմություն (Արմավիրի հանգույցում), մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը չի անցնում 200–211 մմ–ից, որը խիստ անբավարար է, ու հողագործությունը առանց արհեստական ոռոգման անհնար է պատկերացնել:

Կլիմայական պայմանները հիմնականում կիսաանապատային են, ձյան ծածկույթ հազվադեպ է լինում:

Հողերը բազմազան են, Վաղարշապատի տարածաշրջանի մերձարաքսյան հատվածում զգալի տեղ են զբաղեցնում աղուտային հողերը, Բաղրամյանի տարածաշրջանում կիսաանապատային, լեռնային–շագանակագույն հողերը: Քանի որ Արարատյան դաշտը ինտենսիվ ոռոգման տակ է, ապա այստեղ հողերի մեծ մասը կուլտուրականացվել են և ձեռք են բերել ոռոգվող–մարգագետնային հողերի բնույթ:

Բնական բուսատեսակները համապատասխանում են աղուտներին և կիսաանապատային տեսակներին, տարածված է բուրավետ օշինդրը: Գարնանը կիսաանապատային տարածքները ծածկվում են բուրավետ վաղանցիկ (էֆեմեր) բուսականությամբ, որոնք ամռան սկզբին չորանում են: Քարքարոտ հողերում տարածված է լեռնաչորասեր (ֆրիգանոիդ) բուսականությունը:

Սակայն այս տարածքում առավել շատ են կուլտուրականացված բուսատեսակները:

Կենդանական աշխարհի տեսակներից այստեղ բնորոշ են կիսաանապատներին յուրահատուկ սողունները, այդ թվում հատկապես օձերը (գյուրզա, կովկասյան իժ), զանազան տեսակի մողեսներ, իսկ Արաքսի եղեգնուտներում՝ վայրի խոզը, եղեգնակատուն: Բազմազան են հատկապես թռչունների տեսակները: Ջրային ռեսուրսներից հատկապես կարևորը Արաքս սահմանային գետն է: Մարզի տարածքով է հոսում Քասախ գետի ստորին հոսանքը, Մեծամոր գետը: Շատ կարևոր դեր են խաղում ստորին Հրազդանի, Արմավիրի (Հոկտեմբերյանի) և վերջինիս հետ միացած Թալինի ջրանցքները: Մարզի տնտեսական կյանքում խոշոր դեր է խաղում Արարատյան դաշտի ստորերկրյա ջրավազանը, որը լայնորեն օգտագործվում է ոռոգման և այլ նպատակներով:

Բնական մյուս տեսակի ռեսուրսներից գործնական կարևոր տեղ են խաղում տուֆերի խոշոր պաշարները (հատկապես Բաղրամյանի ու Արմավիրի տարածաշրջաններում), հրաբխային խարամի խոշոր պաշարները (հատկապես Բաղրամյանի տարածաշրջանում):

Արմավիրի մարզում կա 3 քաղաք և գյուղական 94 բնակավայր:

Քաղաքներն են՝ Արմավիրը (մարզային կենտրոնը), որը 1997 թ. հունվարի 1–ի տվյալներով ուներ 44 հազ. բնակիչ, իսկ 2003 թ. 32,2 հազ. բնակիչ), Վաղարշապատը 1997 թ. ուներ 65,0 հազ., իսկ 2003 թ. 56,4 հազ. բնակիչ, Մեծամորը 1997 թ. ուներ՝ 12,4 հազ., իսկ 2003 թ.՝ 9,9 հազ. բնակիչ: Վաղարշապատը հայ ժողովրդի կյանքում ունի առանձնահատուկ տեղ ու դեր, այն Հայաստանի հնագույն և մայրաքաղաքային բնակավայրերից մեկն է, հանդիսանում է ամբողջ հայության կրոնական կենտրոնը, այստեղ գտնվում է Էջմիածնի Մայր տաճարը (որը կառուցվել է 4–րդ դարի սկզբին)՝ հայոց կաթողիկոսի նստավայրը:

Գյուղական բնակավայրերից բնակչության քանակով առավել խոշորներն են՝ Փարաքարը (8546 բնակիչ), Հոկտեմբերը (6324 բնակիչ), Մրգաշատը (5641 բնակիչ), Քարակերտը (5103 բնակիչ), Արմավիրը (4479 բնակիչ), Նալբանդը (4404 բնակիչ), Մյասնիկյանը (4389 բնակիչ), Բամբակաշատը (3677 բնակիչ), Գայը (3523 բնակիչ), Արգինան (3415 բնակիչ), Աղավնատունը (3419 բնակիչ) և այլ գյուղեր:

Բնակչության բնական աճը վերջին տարիների տվյալներով հանրապետության միջինից նկատելիորեն բարձր է:

Աշխատանքային ռեսուրսները 1996 թ. կազմել է 178,3 հազ. մարդ, տնտեսական ակտիվ բնակչությունը՝ 143,1 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները՝ 133,7 հազ. մարդ: Գյուղատնտեսության մեջ զբաղվածները կազմում են 90,4 հազ. մարդ կամ 67,6%, գործազուրկների թիվը 15,5 հազ. մարդ (պաշտոնական գրանցված):

Մարզից մեկնողների թիվը (1995 թ.՝ 1182, 1996 թ.՝ 1065) դեռևս շարունակում է գերազանցել եկողների թվին (1995 թ.՝ 817, 1996 թ.՝ 625): Այդպես էր վիճակը նաև հետագա տարիներին, որի պատճառով մարզի բնակչության թիվը 1999 թ. 321,1 հազ. դիմաց 2003 թ. կազմել է 276,8 հազ.:

Արդյունաբերության արտադրանքի ծավալով մարզում առաջատարը Արմավիրի տարածաշրջանն է, որին բաժին է ընկնում մարզի ամբողջ արդյունաբերական արտադրանքի 57%, իսկ Բաղրամյանի տարածաշրջանին՝ 35%–ը: Ըստ որում, վերջին տարիների տվյալներով, Արմավիրի տարածաշրջանում թողարկվող արդյունաբերական արտադրանքի 94%–ը բաժին է ընկնում Մեծամորի ատոմակայանին, իսկ Բաղրամյանի տարածաշրջանում արդյունաբերական ամբողջ արտադրանքի 90%–ից ավելին բաժին է ընկնում հացամթերքների կոմբինատին: Այս երկու ձեռնարկությունները տալիս են մարզի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 85%–ը:

1996 թ. մարզում թողարկվել է 22433,8 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որը կազմում է հանրապետության արդյունաբերական արտադրանքի 8,1%–ը: Իսկ 2003 թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 20815,8 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ Արմավիրի մարզում կա արդյունաբերական 47 ձեռնարկություն, որից 20–ը Արմավիրի, 4–ը Բաղրամյանի, 23–ը Վաղարշապատի տարածաշրջանում:

Արդյունաբերության ճյուղերից այստեղ զարգացած են՝ էլեկտրաէներգետիկ տնտեսությունը (վճռական դերը պատկանում է Մեծամորի ատոմակայանին), շինանյութերի արդյունաբերությունը (տուֆի, հրաբխային խարամի արդյունահանում, երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրություն), մեքենաշինությունը (հատկապես մետաղահատ հաստոցաշինությունը Արմավիրում), փայտամշակման արդյունաբերությունը (Արմավիրի կահույքի ֆաբրիկա), քիմիական արդյունաբերությունը (Վաղարշապատի պլաստմասսաների գործարան): Մարզը հատկապես ակնառու տեղ ունի սննդի արդյունաբերության բնագավառում: Այստեղ զարգացած է ալրաղացային և հացաբուլկեղենի արդյունաբերությունը, գինու, կոնյակի, պահածոների (հատկապես Արմավիր) արտադրությունը:

Զարգացած է նաև ռադիոէլեկտրոնիկան, կապի միջոցների արտադրությունը, թեթև արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը թողարկվող արտադրանքի ծավալով մարզի տնտեսության առաջատար ճյուղն է:

Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 80,7 հազ. հեկտար, այդ թվում վարելահողերը՝ 40,7 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 13,6 հազ. հա, խոտհարքերը՝ միայն 0,1 հազ. հա, արոտավայրերը՝ 26,5 հազ. հա:

1996 թ. մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 50430 մլն դրամ (հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի 14,7%-ը), իսկ 2003 թ. այդ ճյուղի համախառն արտադրանքի ծավալը կազմել է 58,5 մլրդ դրամ, որը կազմում է հանրապետության գյուղատնտեսության այդ տարվա ամբողջ համախառն արտադրանքի 14,3%–ը:

Արմավիրի մարզը ակնառու տեղ ունի հատկապես խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի բնագավառներում: Վերջին տարիներին նկատելիորեն բարձրացել է նրա դերը նաև հացահատիկի ու կարտոֆիլի աճեցման բնագավառներում:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 1996 թ. կազմել են 11578 հա (հանրապետության 6,3%-ը), համախառն բերքը 39,7 հազ. տոննա (հանրապետության 12,1%-ը):

Բանջարեղենի ցանքերը նույն տարում կազմել են 6,4 հազ. հա (հանրապետության 35%-ը): Շատ բարձր է մարզի տեղը նաև բոստանային մշակաբույսերի (հատկապես ձմերուկի, սեխի և այլն) բնագավառում, դրանց ցանքերը այստեղ կազմել են ավելի քան 3,2 հազ. հա (հանրապետության 85%-ը), համախառն բերքը՝ 50,3 հազ. տ (հանրապետության 83%-ը):

Չնայած խաղողի այգիների տարածքները վերջին տարիներին կրճատվել են, այնուհանդերձ, մարզը այս բնագավառում առաջատար դեր ունի:

Խաղողի այգիները այդ տարում այստեղ 6,6 հազ. հեկտար էր (հանրապետության 30%-ը), համախառն բերքը՝ 52,2 հազ. տ (հանրապետության 33%-ը): Պտղատու այգիների տարածքը 5,3 հազ. հա էր (հանրապետության 16%-ը), համախառն բերքը՝ 46,7 հազ. տ (հանրապետության 30%-ը): Կարևոր է նշել, որ այս բոլոր մշակաբույսերի գծով էլ միջին բերքատվությունը հանրապետությունում մեծ չափերով բարձր է:

2003 թ. մարզի բուսաբուծության ցուցանիշները այսպիսին էին.

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը՝ 18597 հա, համախառն բերքը՝ 58,03 հազ. տ:

Կարտոֆիլի ցանքերը՝ 1854 հա, համախառն բերքը՝ 42,9 հազ. տ:

Բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը՝ 10318 հա, համախառն բերքը՝ 105,6 հազ. տ:

Խաղողի համախառն բերքը 2003 թ. կազմել է 23,98 հազ. տ, իսկ պտուղներինը՝ 10,8 հազ. տ:

Չնայած մարզի պայմանները ***անասնապահության*** համար լայն չեն, սակայն այս բնագավառում նկատելի տեղ ունի այն:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1996 թ. եղել է 43,5 հազ. գլուխ (հանրապետության 8,5%-ը), մանր եղջերավորներինը 32,3 հազ. գլուխ (հանրապետության 5,6%-ը), խոզերինը՝ 6,9 հազ. գլուխ (հանրապետության 13%): Հետաքրքիր է, որ անասնապահական մթերքների արտադրության գծով մարզի տեսակարար կշիռը զգալիորեն բարձր է: Մսի արտադրությունը 1996 թ. կազմել է 7,6 հազ. տ (հանրապետության 9,2%-ը), կաթինը՝ 34 հազ. տ (հանրապետության 8%-ը): Հետագա տարիներին այս բնագավառում զգալի տեղաշարժեր են կատարվել: 2003 թ. մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 35,2 հազ., մանր եղջերավորներինը՝ 39,1 հազ., խոզերինը՝ 11,1 հազ. գլուխ: Նույն տարում մսի արտադրությունը կազմել է 8,4 հազ. տ, կաթինը՝ 33,2 հազ. տ, ձվի արտադրությունը՝ 34,7 մլն հատ:

Տրանսպորտի ճյուղերից վճռական դեր է խաղում երկաթուղային և ավտոխճուղային տրանսպորտը: Այս մարզի տարածքով անցնում են Երևան–Արմավիր, այնուհետև դեպի Գյումրի ձգվող երկաթուղին, ավտոմայրուղին և մի շարք այլ ավտոճանապարհներ:

Հանրակրթական դպրոցների թիվը մարզում 120 է (աշակերտների թիվը՝ 53,6 հազ), միջնակարգ մասնագիտական հաստատություններինը՝ 4 (1127 սովորողներով), հիվանդանոցների թիվը՝ 10 (1267 մահճակալներով), գրադարանների թիվը՝ 121, թանգարանների թիվը՝ 10:

8.5. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Գավառի (նախկին Կամո), Ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի ու Վարդենիսի տարածաշրջանները: Մարզային կենտրոնը Գավառ քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 98 կմ է:

Տարածքը (Սևանա լճի հետ) կազմում է 5348 կմ², այսինքն՝ զբաղեցնում է հանրապետության տարածքի 18%–ը: Բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով 275,4 հազ., 2001 հունվարի 1–ի դրությամբ 278,7 հազ., 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 238,0 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1կմ² վրա կազմում է 45 մարդ. (այսինքն՝ հանրապետության միջին խտությունից 2,5 անգամ պակաս):

Գեղարքունիքի մարզը հյուսիսային մասում սահմանակից է Տավուշի, արևմտյան մասում՝ Կոտայքի, հարավարևմտյան մասում՝ Արարատի, հարավային մասում՝ Վայոց ձորի մարզերին: Հարավարևելյան մասում մարզը սահմանակից է ԼՂՀ ազատագրված Քարվաճառի (այժմ Շահումյանի) շրջանին:

Գեղարքունիքի մարզի արևելյան սահմանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Ադրբեջանի հետ:

Մարզի տարածքի ռելիեֆը ունի բազմազան ձևեր: Փաստորեն այն մի ընդարձակ գոգավորություն է, որը շրջափակված է բարձր լեռնաշղթաներով: Այդ գոգավորության հատակի ցածրադիր մասը հիմնականում զբաղեցնում է Սևանա լիճը, որի մակերևույթի այժմյան բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1898մ (մինչև լճի մակարդակի իջեցումը նրա բարձրությունը կազմում էր 1916մ): Սևանի գոգավորության արևմտյան սահմանագծով ձգվում են Գեղամա, իսկ հարավային սահմանագծով՝ Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաները: Ըստ որում, Գեղամա լեռների ամենաբարձր գագաթը Աժդահակ լեռն է՝ 3597մ բարձրությամբ, իսկ Վարդենիսի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը՝ Վարդենիս լեռը 3522մ բարձրությամբ:

Գոգավորության հյուսիսային մասով ձգվում է Արեգունու, հյուսիս-արևելյան մասով՝ Սևանի լեռնաշղթան, իսկ արևելյան մասով՝ Արևելյան Սևանի լեռնաշղթան, որը օղակ է Սևանի ու Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Եթե Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ, քարկարկառներ: Մարզի հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900–2200 մ բարձրություն:

Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, որի տարեկան միջին տևողությունը հասնում է ավելի քան 2700 ժամի (ամենաբարձրը հանրապետությունում): Ընդհանուր առմամբ կլիման ամռանը չա-

փավոր է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ: Բնութագրվում է ամենամյա և հաստատուն ձյունածածկույթով: Մինչև լճի մակարդակի իջնելը այն հազվադեպ էր սառցակալվում, այժմ ամեն տարի սառցակալվում է:

Տեղումների միջին տարեկան քանակը բարձրադիր մասերում (լեռներում) կազմում է ավելի քան 800 մմ, իսկ լճի վրա ու շրջակա հարթ տարածություններում ավելի քան 400 մմ:

Սևանա լճի հարավային ու արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով: Բուսատեսակների մեջ գերակշռում են լեռնատափաստանային ենթալպյան և ալպյան բուսատեսակները: Վերջիններս հատկապես տարածված են Գեղամա, Վարդենիսի ու մյուս լեռնաշղթաների լեռնալանջային, բարձր լեռնային մասերում, որոնք էլ հանդիսանում են ամառային արոտավայրեր ու խոտհարքեր:

Շատ քիչ է անտառային բուսականությունը, կաղնու, գիհու և որոշ այլ ծառատեսակների նոսր, թփուտային պուրակներ կան հյուսիսարևելյան լեռնալանջերին, իսկ լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են արհեստական անտառաշերտեր:

Այստեղ զգալի տարածքներ են զբաղեցնում փշարմավի պուրակները: Կենդանական աշխարհը հարուստ չէ, լճի մակարդակի իջեցման հետևանքով խիստ կրճատվել են թռչունների ու ձկների տեսակները:

Գեղարքունիքի մարզը հանրապետությունում եզակի տեղ ունի ջրային ռեսուրսների տեսակետից, ի դեմս Սևանա լճի, որի մասին հանգամանորեն խոսվել է վերը: Սևանա լիճ է թափվում 28 գետ, որոնցից համեմատաբար նշանավորներն են՝ Մասրիկը, Գավառագետը, Արգիճին, Ձկնագետը: Սևանից է սկիզբ առնում Հրազդան գետը:

Բնական մյուս տեսակի ռեսուրսներից մարզը հանրահայտ է ոսկու պաշարներով (Սոթքի հանքավայր): Կան քրոմի ու հրակայուն ապարների զգալի պաշարներ Շորժայի հանգույցում, տուֆի ու հրաբխային խարամի պաշարներ՝ Վարդենիսի տարածաշրջանում, պեռլիտի պաշարներ՝ Մարտունու տարածաշրջանում, բազալտի պաշարներ կան համարյա ամենուրեք: Հանքային ջրի պաշարներ կան Գավառի ու Մարտունու տարածաշրջաններում:

Մարզի տարածքում կա 5 քաղաք և գյուղական 87 համայնք: Բնակչության ավելի քան 60%–ը ապրում է գյուղական բնակավայրերում: Բնակչության քանակով խոշոր քաղաքը Գավառն է (մարզային կենտրոնը), որի բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով կազմում էր 34,2 հազ.,

2001 թ.՝ 34,2 հազ., իսկ 2003 թ.՝ 26,4 հազ. մարդ: Հաջորդը Սևան քաղաքն է (որի կազմում է նաև Գագարին բնակավայրը), որը 2001 թ. ուներ 31 հազ., իսկ 2003 թ.՝ 21,4 հազ. բնակիչ, Վարդենիս քաղաքը 2000 և 2001 թվականներին ուներ 17,6 հազ., իսկ 2003 թ.՝ 12,7 հազ. բնակիչ: Մարտունին 2001 թ. ուներ 14,6 հազ., իսկ 2003 թ.՝ 11,7 հազ. բնակիչ: Ի տարբերություն նշված մյուս քաղաքների, Ճամբարակի բնակչությունը 2001 թ. 6,6 հազարից ավելացել է և 2003 թ. դարձել է 7,4 հազ. մարդ:

Գյուղական բնակավայրերից առավել խոշորներն են Վարդենիկը (9460 բնակիչ), Սարուխանը (8732 բնակիչ), Ներքին Գետաշենը (7940 բնակիչ), Ձոլաքարը (6595 բնակիչ), Կարմիր գյուղը (6348 բնակիչ), Երանոսը (5787 բնակիչ), Լիճքը (4651 բնակիչ), Ծովինարը (4661 բնակիչ), Վերին Գետաշենը, Ձորագյուղը, Հայրավանքը, Լճաշենը, Գանձակը, Ակունքը, որոնք ունեն ավելի քան 4 հազ. բնակիչ և այլ գյուղեր:

Աշխատանքային ռեսուրսները կազմում են 153,4 հազ. մարդ, ակտիվ բնակչությունը՝ 129.0 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները՝ 120,8 հազ. մարդ, որից 76,6 հազարը՝ գյուղատնտեսության մեջ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմում է 8,2 հազ. մարդ:

Տնտեսության զարգացման պոտենցիալ հնարավորություններով Գեղարքունիքի մարզը հանրապետությունում շատ կարևոր տեղ ունի:

Արդյունաբերության ճյուղերից այստեղ զարգացած է մեքենաշինությունը, լեռնահանքային, շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերությունը:

Մեքենաշինության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության առավել նշանավոր ձեռնարկություններն են Սևանի գործադիր մեխանիզմների ու Գավառի կաբելի գործարանները: Լեռնահանքային արդյունաբերությունը ներկայացված է Սոթքի ոսկու արդյունահանման ձեռնարկությամբ: Շինանյութերի արդյունաբերությունը ընդգրկում է երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրության, բազալտի, տուֆի, հրաբխային խարամի, ավազի արդյունահանման ձեռնարկությունները: Թեթև արդյունաբերությունն ընդգրկում է գորգագործական, տրիկոտաժեղենի, կարի ձեռնարկությունները:

Սննդի արդյունաբերությունն ընդգրկում է կաթի վերամշակման, պանրի, հանքային ջրի, հացաբուլկեղենի, մսի վերամշակման, (Գավառ), ալրաղացային (Սևան) ձեռնարկությունները:

Ընդհանուր առմամբ մարզում կա արդյունաբերական 48 ձեռնարկություն, որից 15–ը Գավառի, 15–ը Սևանի, 8–ը Վարդենիսի, 7–ը Մարտունու, 3–ը Ճամբարակի տարածաշրջաններում:

Մարզում 1996 թ. թողարկվել է 5654,5 մլն դրամի արդյունաբերական արտադրանք (հանրապետության շուրջ 2%), իսկ 2003 թ. 13255,2 մլն դրամի այդպիսի արտադրանք, որը կազմում է ՀՀ–ում թողարկված արդյունաբերական արտադրանքի ավելի քան 3%–ը:

Վերջին տարիներին արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը չի գործում (ինչպես ամբողջ հանրապետությունում):

Գեղարքունիքի մարզի տեսակարար կշիռը շատ ավելի ակնառու է **գյուղատնտեսության բնագավառում**: Պայմանները բավականին լայն են դաշտավարության, առավելապես լայն են անասնապահության զարգացման համար:

Մարզի գյուղատնտեսության հողատեսքերը կազմում են 240 հազ. հա, այդ թվում վարելահողերը՝ 95.2 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 1.8 հազ. հա, խոտհարքերը՝ 35.6 հազ. հա, արոտավայրերը՝ 107.4 հազ. հա: Կարևոր է նշել, որ հանրապետության վարելահողերի ավելի քան 19, խոտհարքերի շուրջ 26, արոտավայրերի ավելի քան 16%–ը բաժին է ընկնում այս մարզին:

Դաշտավարության ճյուղերից Գեղարքունիքի մարզի տեղը շատ ակնառու է հացահատիկի և կարտոֆիլի աճեցման բնագավառներում:

2003 թ. տվյալներով՝ Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 59,1 մլրդ դրամ, որը կազմում է ամբողջ ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի 14,4%–ը և այս տեսակետից հանրապետությունում զբաղեցնում է առաջին տեղը՝ մի փոքր գերազանցելով Արմավիրի մարզին:

Հացահատիկի ցանքերը այստեղ 2003 թ. կազմել են 40842 հա (որով զիջում է միայն Շիրակի մարզին 43027 հա), հացահատիկի համախառն բերքը նույն թվականին կազմել է 61,2 հազ. տ (որով առաջին տեղն է հանրապետությունում):

Կարտոֆիլի ցանքերը 2003թ. կազմել են 13050 հա (որով առաջինն է ՀՀ–ում), իսկ համախառն բերքը՝ 207,9 հազ. տ (որով նույնպես առաջինն է ՀՀ–ում):

Բանջարեղենի արտադրությունը այստեղ (հատկապես կաղամբ) 1996թ. կազմել է շուրջ 17 հազ. տ:

Պտղաբուծությունը այստեղ լավ արմատավորվել է վերջին տասնամյակներում, երբ հատկապես Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում ստեղծվել են խնձորի, տանձի այգիներ:

2003 թ. մարզում արտադրվել է 10,97 հազ. տ պտուղ:

Շատ կարևոր է Գեղարքունիքի մարզի տեղը ***անասնապահության*** բնագավառում՝ շնորհիվ խոտառատ ալպյան արոտավայրերի, խոտհարքերի:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1996 թ. կազմել է 88,8 հազ. գլուխ (հանրապետության ավելի քան 17%–ը), մանր եղջերավորներինը՝ 108 հազ. գլուխ (հանրապետության 19%–ը), խոզերինը՝ 3,8 հազ. գլուխ (հանրապետության 7%–ը):

Մսի արտադրությունը 1996 թ. կազմել է 15 հազ. տ (հանրապետության 18%–ը), կաթի արտադրությունը՝ շուրջ 70 հազ. տ (հանրապետության 16%–ը), ձվի արտադրությունը՝ 23 մլն հատ (հանրապետության 12%–ը), բրդի արտադրությունը՝ 266 տ (հանրապետության ավելի քան 19%–ը):

Հետագա տարիներին անասնապահության ցուցանիշները նկատելիորեն փոխվել են. և 2002 թ. տվյալներով այդտեղ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը եղել է 95,4 հազ. (որով առաջին տեղն է հանրապետությունում), խոզերինը՝ 7,3 հազ., մանր եղջերավորներինը՝ 99,8 հազ. (որով հանրապետությունում առաջին տեղն է) գլուխ:

Մսի արտադրությամբ մարզը 2003 թ. (շարունակում էր մնալ ՀՀ–ում առաջին տեղը), կաթի արտադրությունը՝ 91,5 հազ. տ (առաջին տեղը ՀՀ–ում), ձվի արտադրությունը՝ 35,2 մլն հատ:

Տրանսպորտի ճյուղերից վճռական դեր խաղացողը ավտոտրանսպորտն է: Անգնահատելի է նաև Սևան–Սոթք երկաթուղու նշանակությունը, որը սակայն վերջին տարիներին նորմալ չի գործում:

Մարզն ունի նաև գազամուղային և բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցեր:

Գեղարքունիքի մարզի հեռանկարային զարգացման գլխավոր ուղղություններից մեկը *զբոսաշրջության և հանգստի ինդուստրիայի զարգացումն է:* Որպես ռեկրեացիոն ռեսուրս Սևանա լիճը անզուգական է: Նրա ափերին ստեղծված են հանգստյան բազմաթիվ տներ, ստեղծված է նաև Սևանի ազգային պարկը: Սակայն այս հնարավորությունները դեռևս բավարար չեն օգտագործվում: Հանգստյան տներում, լողափերում սպասարկման պայմաններ ստեղծելու դեպքում Սևանը կարող է դառնալ հանգստի և միջազգային զբոսաշրջության կարևորագույն բազա:

Մարզը ունի կրթական, մշակույթի, առողջապահության լայն բազա:

Հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 128–ի (շուրջ 50 հազ. աշակերտներով), ունի մեկ բուհ, միջնակարգ մասնագիտական 7 հաստատություն (1.7 հազ. սովորողներով), հիվանդանոցային 122 հիմնարկություն (2115 մահճակալով), թանգարան, 147 գրադարան, 1 թատրոն:

8.6 ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Ընդգրկում է Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի նախկին տարածաշրջանները և Վանաձոր քաղաքը:

Տարածքը կազմում է 3789 կմ^2 (հանրապետության տարածքի 12.7%–ը), բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ կազմել է 393,6 հազ., 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 394,4 հազ., 2001 թ. հունվարի 1–ի դրությամբ 393,4 հազ., իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ 285,0 հազ. մարդ:

Մարզային կենտրոնը Վանաձոր քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 120 կմ է:

Լոռու մարզը արևմտյան մասից սահմանակից է Շիրակի, հարավից՝ Արագածոտնի ու Կոտայքի, արևելյան մասից՝ Տավուշի մարզերին:

Մարզի հյուսիսային սահմանը Հայաստանի Հանրապետության պետական սահմանն է Վրաստանի հետ:

Ռելիեֆը լեռնային է, բարդ, կտրտված գետահովիտներով և լեռնահովիտներով: Հյուսիսարևելյան մասից ձգվում է Վիրահայոց լեռնաշղթան, հյուսիսարևմտյան մասով՝ Ջավախքի լեռնաշղթան, իսկ մարզի տարածքի կենտրոնական մասով՝ արևմուտքից արևելք ձգվում է Բազումի լեռնաշղթան: Այդ լեռնաշղթաների միջև էլ գտնվում է Լոռու սարահարթը: Մարզի հարավային մասի ամբողջ երկարությամբ ձգվում է Փամբակի լեռնաշղթան, իսկ արևելյան մասով՝ հյուսիսից հարավ ձգվում է Գուգարքի լեռնաշղթան:

Բազումի ու Փամբակի լեռնաշղթաների միջև գտնվում է Փամբակի գոգավորությունը, իսկ Վիրահայոց ու Գուգարքի լեռնաշղթաների միջև՝ Դեբեդի գոգավորությունը: Մարզի տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 380–ից (Դեբեդի հովտում) մինչև 3196 մ (Ջավախքի լեռնաշղթայի Աչքասար գագաթը) սահմաններում:

Կլիմայական պայմանները բազմազան են: Ցածրադիր մասերում ամառը շոգ է, ձմռանը՝ մեղմ, Փամբակի ու Դեբեդի գոգավորությունները բնութագրվում են չափավոր տաք կլիմայով, որոշ հատվածներում խոնավ: Բարձրադիր մասերում կլիմայական պայմանները բարեխառն են, տեղումները առատ են, առաջանում է ձյան կայուն, երբեմն մեծ հզորություն ունեցող շերտ:

Լոռու սարահարթում գերակշռում են լեռնատափաստանային հողերը, ավելի բարձրադիր մասերում լեռնամարգագետնային, իսկ անտառային վայրերում՝ դարչնագույն լեռնաանտառային հողերը:

Սարահարթային ու բարձր լեռնալանջային մասերում տարածված են խոտային, ալպյան բուսականություն, որոնք էլ հանդիսանում են մարզի խոտհարքային ու արոտավայրային տարածքները:

Լոռու մարզը բնութագրվում է համեմատաբար ընդարձակ անտառաշերտերով: Անտառների ծառատեսակներից գերակշռում են հաճարենին, կաղնին, բոխին:

Օգտակար հանածոներից շատ կարևոր դեր ունեն պղնձի, ծծմբային կոլչեդանի ու բազմամետաղների պաշարները, որոնք տարածված են հատկապես Թումանյանի տարածաշրջանում (Ալավերդի–Շամլուղ հանգույցը, Ախթալան): Մարզը հայտնի է նաև հրակայուն ապարների (Թումանյանի հանքավայրը), գրանիտի խոշոր պաշարներով (հատկապես Փամբակի հանքավայրը), կան նաև ֆելզիտային տուֆի պաշարներ (Թումանյանի տարածաշրջանում), ինչպես նաև բազալտի պաշարներ: Մարզի տարածքով հոսում են Փամբակ գետը և Ձորագետը, որոնց միավորումից և առաջանում է իր զգալի տարածքով այդ մարզի տարածքով հոսող՝ Դեբեդ գետը: Վերջինս հանրապետության համեմատաբար ջրառատ գետերից է: Լոռու մարզը բնութագրվում է քաղաքների ու գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ թվով: Այստեղ կա 8 քաղաք և գյուղական 122 բնակավայր, որոնք միավորված են գյուղական 105 համայնքներում: Քաղաքներից խոշորը Վանաձորն է, որը մինչև 1930–ական թթ. սկիզբները կոչվում էր Ղարաքիլիսա, այնուհետև անվանվել է Կիրովական, իսկ այժմ, ինչպես ասվեց, կոչվում է Վանաձոր: Նրա բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով՝ կազմել է 172,7 հազ., 2001 թ.՝ 172,6 հազ., իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 106,3 հազ. մարդ: Բնակչության քանակով և արդյունաբերության զարգացման մակարդակով Վանաձորը հանրապետության երրորդ քաղաքն է Երևանից ու Գյումրիից հետո: Վանաձորը հանրահայտ է ճշգրիտ մեքենաշինության, քիմիական ու թեթև արդյունաբերության ձեռնարկություններով: Վանաձորը մեծ չափով տուժել է 1988 թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժից:

Բնակչության թվաքանակով հաջորդը Ալավերդի քաղաքն է (2001 թ.՝ 24,6 հազ., 2003 թ.՝ 16,5 հազ.բնակիչ), որը հանրահայտ է հին պատմությամբ և որպես պղնձաձուլության հնագույն կենտրոն: Ալավերդի քաղաքի կազմի մեջ է Ակներ գյուղը: Մյուս քաղաքը Ստեփանավանն է (2001 թ՝ 24,5 հազ., 2003 թ.՝ 16,2 հազ. բնակիչ), որը նախկինում կոչվում էր Ջալալօղլի: Բացի ամառանոցային քաղաք լինելուց, Ստեփանավանը դարձել է ճշգրիտ մեքենաշինության, թեթև ու փայտամշակման արդյունաբերության կենտրոն: Ստեփանավանի կազմի մեջ է Արմանիս գյուղը:

Մարզի տարածքում են նաև Սպիտակ (2001 թ.՝ 21,7 հազ., 2003 թ.՝ 15,0 հազ. բնակիչ), Տաշիր (2001 թ.՝ 14,1 հազ., 2003 թ.՝ 9,4 հազ. բնակիչ), Ախթալա (2001 թ.՝ 4,1, 2003 թ.՝ 2,3 հազ. բնակիչ), Թումանյան (2003 թ.՝ 1,8 հազ. բնակիչ, Քոբեր կայարանի հետ), Շամլուղ (2003 թ.՝ 1,7 հազ. բնակիչ, Ախթալա, Բենդիկ գյուղերի հետ) քաղաքները: Սպիտակ քաղաքը 1988 թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժից հիմնահատակ ավերվել է: Այժմ այն հիմնականում վերականգնված է:

Մարզի գյուղական բնակավայրերից բնակչության քանակով առավել խոշորներն են՝ Մեծավանը (7546 բնակիչ), Գուգարքը (5609 բնակիչ), Օձունը (5230 բնակիչ), Ճոճկանը (4280 բնակիչ), Ջրաշենը (3600 բնակիչ), Շնողը (3332 բնակիչ):

Վերջին տարիների տվյալները ցույց են տալիս, որ Լոռու մարզից մեկնողների թիվը նույնպես զգալիորեն գերազանցում է (1995թ.՝ 1139 մարդով, 1996 թ.՝ 730 մարդով, 2003 թ.՝1165 մարդով) այդտեղ եկածների թվին: Ցածր է բնական աճի ցուցանիշը: Աշխատանքային ռեսուրսները կազմում են 216,2 հազ (1996 թ.) մարդ, ակտիվ բնակչությունը՝ 144,6 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները 126,8 հազ. մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղված են 53,2 հազ. մարդ, պաշտոնական գրանցված գործազուրկներ՝ 17,8 հազ. մարդ (1996 թ.): 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ մարզի աշխատանքային ռեսուրսները կազմում են 201,3 հազ. մարդ, տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ 120,2 հազ. մարդ, պաշտոնապես գրանցված գործազուրկները նույն թվականին կազմում են՝ 21,4 հազ. մարդ: Այժմ էլ արտահոսքը զգալի է:

Արդյունաբերության զարգացման մակարդակի տեսակետից Լոռու մարզը հանրապետության մարզերի մեջ առաջնակարգ տեղերից մեկն է զբաղեցնում: 1996 թ. այստեղ թողարկվել է 7957,8 մլն դրամի արդյունաբերական արտադրանք (որը կազմում էր հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի ավելի քան 4%): Ըստ որում, մարզում թողարկվող այդպիսի արտադրանքի 76%–ը բաժին է ընկնում Վանաձոր քաղաքին:

2003 թ. մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 18751,3 մլն դրամ: Մարզում կա 102 արդյունաբերական ձեռնարկություն, որից 63–ը՝ Վանաձորի, 12–ը՝ Թումանյանի, 5–ը՝ Սպիտակի, 6–ը՝ Ստեփանավանի, 9–ը՝ Գուգարքի, 7–ը՝ Տաշիրի տարածաշրջաններում:

Արդյունաբերության ճյուղերից այս մարզը հատկապես նշանավոր է.

ա) լեռնահանքային արդյունաբերության և գունավոր մետաղածուլության բնագավառներում: Այդ տեսակետից կարևոր են Ալավերդու, Շամլուղի, Ախթալայի պղնձի, բազմամետաղների արդյունահանման, հարստացուցիչ ձեռնարկությունները, Ալավերդու պղնձածուլական գործարանը,

բ) մեքենաշինության, սարքաշինության բնագավառում, որոնց համակարգում առավել հայտնի են Վանաձորի ճշգրիտ հաստոցաշինական, «Ավտոմատիկա» և «Ավտոգենմաշ» գործարանները, Ստեփանավանի «Պլազմա» գործարանը,

գ) քիմիական արդյունաբերությունը որի հանրահայտ ձեռնարկությունը Վանաձորի «Պրոմեթեյ քիմ. պրոմ» ՓԲԸ է,

դ) հրակայուն իրերի արտադրությունը (Թումանյան քաղաքում),

ե) անտառային և փայտամշակման արդյունաբերությունը, հատկապես Վանաձորում, Ստեփանավանում, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջաններում,

զ) թեթև արդյունաբերությունը, որի համակարգում նշանավոր են Վանաձորի մորթի–մուշտակեղենի, կարի, Սպիտակի կարի, Մեծավանի գորգագործական և այլ ֆաբրիկաներ,

ը) սննդի արդյունաբերությունը, որն ընդգրկում է Վանաձորի, Ստեփանավանի, Ալավերդու, Սպիտակի, Տաշիրի տարածաշրջանների հացի, պանրի, յուղի, տարբեր տեսակի խմիչքների, պահածոների արտադրության ձեռնարկությունները:

Մարզն ունի նաև էներգետիկ տնտեսություն, որը հատկապես ներկայացված է Ձորահեկ, Ագարակհեկ, Այրումհեկ էլեկտրակայաններով ու Վանաձորի ջերմաէլեկտրակայանով:

Լոռու մարզի արդյունաբերության համակարգում կարևոր տեղ ունեին Սպիտակի վերելակների և շաքարի գործարանները, որոնք 1988 թ. երկրաշարժի հետևանքով ավերվել են (այժմ վերանորոգվում են):

Մարզն ունի արդյունաբերության զարգացման լայն հնարավորություններ:

Գյուղատնտեսության զարգացման համար պայմանները Լոռու մարզում նույնպես լայն ու բազմազան են:

1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմել են 192,2 հազ. հա, այդ թվում վարելահողերը՝ 48,4, բազմամյա տնկարկները՝ 4,5, խոտհարքերը՝ 39,4, արոտավայրերը՝ 99,9 հազ. հա:

Մարզը հատկապես բնութագրվում է հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի, կաթնային ու կաթնամսային անասնապահության, խոզաբուծության և մանր եղջերավոր անասնապահության բնագավառներում:

Դեռ 1996 թ. տվյալներով՝ գյուղատնտեսության համախառն բերքը մարզում կազմել է 39731 մլն դրամ (հանրապետության 11,6%):

Հացահատիկային տնտեսությունը հատկապես զարգացած է Սպիտակի, Տաշիրի ու Ստեփանավանի տարածաշրջաններում, որտեղ էլ գտնվում են սնահողային տարածքների մեծ մասը:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 1996 թ. տվյալներով կազմել են 14,4 հազ. հա (հանրապետության 7,8%), համախառն բերքը կազմել է ավելի քան 39 հազ. տ (հանրապետության 11,9%): Մեկ հեկտարի միջին բերքատվությունը (27,1g) հանրապետության միջինից (17 9 g) բարձր է:

Հատկապես բարձր է մարզի տեսակարար կշիռը կարտոֆիլի աճեցման բնագավառում: Կարտոֆիլի ցանքերը նույն տարում կազմել են շուրջ 8 հազ. հա (հանրապետության շուրջ 24%), համախառն բերքը՝ ավելի քան 103 հազ. տ (հանրապետության ավելի քան 24%): Կարտոֆիլի աճեցմամբ վճռական տեղը պատկանում է Ստեփանավանի ու Տաշիրի տարածաշրջաններին:

Զգալի է նաև մարզի տեղը բանջարեղենի աճեցման բնագավառում:

Բանջարեղենի ցանքերը կազմում են 1,6 հազ. հա (հանրապետության 7,5%), համախառն բերքը 1996 թ. տվյալներով կազմել է 17 հազ. տ (հանրապետության 4%):

Պտղատու այգիների տարածքը 3,7 հազ. հա է (հանրապետության 11%): Պտղաբուծությունը հատկապես զարգացած է Գուգարքի ու Թումանյանի տարածաշրջաններում: Դեբեդի ցածրադիր հովտում կա նաև 111 հա խաղողի այգի:

Վերջին տարիներին զգալի տեղաշարժեր են կատարվել մարզի գյուղատնտեսության բնագավառում:

2003 թ. տվյալներով՝ հացահատիկային ցանքերը կազմում են 14785 հա, համախառն բերքը՝ 15,4 հազ. տ:

Կարտոֆիլի ցանքերը նույն տարում կազմել են 6259 հա, համախառն բերքը՝ 74,99 հազ. տ:

Բանջարեղենի ցանքերը կազմել են 1342 հա, համախառն բերքը՝ 21,0 հազ. տ:

Նույն տարում մարզում պտղի արտադրությունը կազմել է 6,5 հազ. տ, իսկ խաղողի արտադրությունը 347 տ:

Լոռին վաղուց հանրահայտ է *կաթնային անասնապահությամբ,* որի համար շատ լավ բազա է Լոռու սարահարթի խոտառատ արոտավայրերը:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1996թ. կազմել է 59,9 հազ. գլուխ (հանրապետության 11,8%), մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 42,4 հազ. գլուխ, խոզերինը՝ 9,5 հազ. գլուխ (հանրապետության 17,5%): Խոշոր եղջերավոր անասնապահության բնագավառում վճռական դեր ունեն Ստեփանավանի ու Տաշիրի տարածաշրջանները, որտեղ կազմակերպվել էին տոհմաբուծական, բարձր կաթնատու անասնապահության տնտեսություններ:

Մսի արտադրությունը նշված տարում կազմել է 9,4 հազ. տ (հանրապետության 11,4%), կաթինը՝ 54,9 հազ. տ (հանրապետության 12,7%), ձվինը՝ 25,3 մլն հատ (հանրապետության 13%):

Վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կատարվել նաև անասնապահության բնագավառում:

2002 թ. այստեղ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 56,0 հազ. (այդ թվում՝ կովեր 38,1 հազ.), խոզերի գլխաքանակը եղել է 13,8 հազ., մանր եղջերավորներինը՝ 39,1 հազ:

2003 թ. մսի արտադրությունը Լոռու մարզում կազմել է 9,0 հազ. տ, կաթի արտադրությունը՝ 60,4 հազ. տ, ձվի արտադրությունը՝ 134,5 մլն - հատ:

Լոռու մարզի պայմանները ռացիոնալ օգտագործելու դեպքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալները շատ ավելին կլինեն:

Տրանսպորտի ճյուղերից վճռական դեր խաղացողը երկաթուղային և ավտոխճուղային տրանսպորտն է: Մարզի տարածքի Սպիտակ–Վանաձոր–Ալավերդի քաղաքներով է անցնում հանրապետությունից դեպի Վրաստան ձգվող երկաթուղին, բոլոր բնակավայրերը իրար հետ կապված են ավտոխճուղիներով: Գործում են նաև գազամուղային և էլեկտրահաղորդիչ բարձրավոլտ գծերի ցանցեր:

Լոռու մարզն ունի կրթական, մշակութային, առողջապահական զարգացած համակարգ:

Հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 171–ի (56463 աշակերտ), Վանաձորում գործում է մանկավարժական ինստիտուտ, ինչպես նաև Երևանի ճարտարագիտական համալսարանի և թատերական ինստիտուտի մասնաճյուղեր: Գործում են նաև միջնակարգ մասնագիտական 10 հաստատություն (3147 սովորողներով), 154 գրադարան, մեկ թատրոն (Վանաձորում), 14 թանգարան:

8.7. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Հրազդանի, Կոտայքի, Նաիրիի տարածաշրջանները: Տարածությունը կազմում է 2089 կմ^2 (հանրապետության տարածքի 7%), բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով՝ 328 հազ., 2000 թ. հունվարի 1–

ի դրությամբ՝ 329,4 հազ., 2001 թ.՝ 329,0 հազ., իսկ 2003 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 272,4 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1կմ² վրա կազմում է 130 մարդ (հանրապետության միջինից զգալիորեն բարձր): Կոտայքի մարզում գերակշռում է քաղաքային բնակչությունը, որը կազմում է ավելի քան 56%: Մարզային կենտրոնը Հրազդան քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 50 կմ է:

Սահմանակից է հյուսիսից՝ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ Գեղարքունիքի, արևմուտքից՝ Արագածոտնի մարզերին, իսկ հարավային մասում՝ Արարատի մարզին ու Երևանի քաղաքային տարածքին: Ռելիեֆը բազմազան է: Մարզի հարավային կեսը Արարատյան գոգավորության նախալեռնային մասն է, Կոտայքի ու Եղվարդի սարավանդներով, ծովի մակերևույթից 1350–1550մ բարձրությամբ: Արևելյան մասի երկարությամբ ձգվում են Գեղամա լեռները, որոնց բարձր գագաթը՝ Աժդահակը (3597 մ), գտնվում է այս մարզի տարածքում: Հրաբխային այս լեռնաշղթան (որի արևմտյան լանջերը գտնվում են Կոտայքի մարզի տարածքում), բնութագրվում է հրաբխային գեղատեսիլ կոներով, խառնարաններով, ալպյան խոտառատ մարգագետիններով:

Մարզի հյուսիսային մասով ձգվում է Փամբակի լեռնաշղթան, որի բարձր գագաթը՝ Թեժ լեռը (3101մ), գտնվում է այս մարզի տարածքում: Փամբակի լեռնաշղթայի ու նրա ճյուղերից մեկի՝ Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև գտնվում է Մարմարիկ գետի գեղատեսիլ հովիտը: Մարզի տարածքի ռելիեֆի ձևերից հետաքրքրություն են ներկայացնում Հատիս լեռը և Գութանասարը, որոնք գտնվում են Գեղամա լեռնավահանի հարավային լանջերին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում մարզի տարածքի կենտրոնով հյուսիսից հարավ ձգվող Հրազդան գետի կիրճը՝ բազալտե բնական գեղատեսիլ սյուներով, սահանքներով:

Կլիմայական պայմանները բազմազան են, համեմատաբար ցածրադիր մասերը բնութագրվում են չափավոր լեռնային, իսկ բարձրադիր մասերը՝ ցուրտ լեռնային կլիմայական պայմաններով: Հրազդանի ու Կոտայքի տարածաշրջանների բարձրադիր մասերում տեղումների քանակը զգալիորեն բարձր է, ձմեռները մշտապես առաջանում է ձյան կայուն, հզոր շերտ: Ամառները զով է լինում Ծաղկածորի, Հանքավանի անտառոտ վայրերում, որոնք էլ հանրապետության կարևորագույն հանգստյան գոտիներն են:

Ամառները չոր, շոգ է լինում Կոտայքի ու Եղվարդի սարավանդներում: Հենց այդ մասերն էլ բնութագրվում են լեռնային շագանակագույն, քարքարոտ հողերով: Իսկ մարզի տարածքի մեծ մասին (հատկապես բարձրադիր մասերին) բնորոշ են լեռնատափաստանային սևահողերը, լեռնամարգագետնային հողերը, իսկ Հրազդանի տարածաշրջանի որոշ հատվածներում՝ լեռնաանտառային գորշ հողերը: Հողատարածքային այդ յուրահատկություններին էլ համապատասխան տարածված են բուսականությունը: Սևահողային և լեռնամարգագետնային տարածքներում գերակշռում են բազմազան խոտաբույսերը, ալպյան բուսականությունը: Փամբակի, Գեղամա լեռների լանջերը իրենց խոտառատ բուսականությամբ հանդիսանում են ամառային արոտավայրեր և խոտհարքեր: Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջերին տարածված անտառներում գերակշռում են կաղնու, թխկու, հացենու, լորենու ծառատեսակները: Այդ անտառներում կան գորշ արջ, գայլ, աղվես, եղնիկ, նապաստակ և բազմազան թռչուններ: Մարզի տարածքով հոսող և հանրապետության տնտեսական կյանքում շատ խոշոր դեր խաղացող գետը Հրազդանն է: Նրա վտակներից նշանավորները Մարմարիկ և Աղվերան գետերն են: Հրազդանի դերը շատ խոշոր է ինչպես էներգետիկ, ոռոգման, այնպես էլ արդյունաբերական և ռեկրեացիոն նշանակության տեսակետից: Հրազդան գետի վրա, Հրազդան քաղաքի մոտ կառուցված է ջրամբար, որտեղ կուտակվում է մեծ քանակությամբ ջուր՝ ոռոգման նպատակների համար: Ջրամբար է կառուցված նաև Մարմարիկ գետի վրա, սակայն ինժեներական թերությունների պատճառով այն նպատակին չի ծառայում. դատարկ է:

Կան մանր լճեր Գեղամա լեռների հրաբխային խառնարաններում, որոնք օգտագործվում են ինչպես խմելու, այնպես էլ արոտավայրերի համար:

Կոտայքի մարզի տարածքում կան հանքային ջրի բազմաթիվ աղբյուրներ, որոնցից գործնական նշանակություն ունեն Արզնու, Բջնու և Հանքավանի աղբյուրները: Դրանք լայնորեն օգտագործվում են և՛ որպես սեղանի ջուր, և՛ բուժման համար:

Մետաղային հանքային հանածոներից այստեղ տարածքում հայտնաբերված են երկաթի հանքաքարի, ոսկու և ալյումինի հումքի պաշարներ: Հետազոտված և պատրաստ են շահագործման համար Հրազդանի և Կապուտանի (Կոտայքի տարածաշրջանի Կապուտան գյուղի մոտ) երկաթի հանքավայրերը: Գործնական նշանակություն ունի Մեղրածորի (Հրազդանի տարածաշրջանում) ոսկու հանքավայրը:

Շատ խոշոր են նեֆելինային սիենիտների պաշարները Թեժ լեռան հանքավայրում, որոնք կարող են օգտագործվել որպես հումք ալյումին արտադրելու համար:

Մարզը շատ հարուստ է քարանյութերի պաշարներով ու բազմազանությամբ: Մարմարի պաշարներ կան Աղվերան–Արզական հանգույցում, բազալտի պաշարներ ամենուրեք, պեռլիտների (լիթոիդային պեմզայի) խոշոր պաշարներ կան Աբովյանից մինչև Չարենցավան ընկած հատվածում:

Մարզի տարածքում կա 7 քաղաք և գյուղական 62 բնակավայր (գյուղական 60 համայնք): Բնակչության քանակով խոշորը *Հրազդան քաղաքն է*, որի բնակչությունը 1997թ. հուլիսի 1–ի տվյալներով կազմել է 64.0 հազ., իսկ 2003թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 52,7 հազ. մարդ: Հրազդանը հանրապետության արդյունաբերական խոշոր կենտրոններից է, որը արագ զարգացել է հատկապես սկսած 1950–ական թթ.: Այստեղ առավել հայտնի են ցեմենտի ու «Հրազդանմաշ» գործարանները, հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակայանը (պշէկ), Աթարբեկյանի հէկը և այլ ձեռնարկություններ: Հրազդանը երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց է: Այն, արդյունաբերական խոշոր կենտրոն լինելուց բացի, հանգստյան կենտրոն է: Հրազդանում են տեղավորվել Ադրբեջանից բռնագաղթված մեծ թվով հայեր:

Մարզի հաջորդ խոշոր քաղաքը *Աբովյանն* է, որը 1999 թ. ունեցել է 61,1 հազ., 2000 թ.՝ 60,9 հազ., 2002 թ.՝ 44,6 հազ., իսկ 2003 թ.՝ 44,5 հազ. բնակիչ: Այն գտնվում է Կոտայքի սարահարթում, Երևանից 16 կմ հեռավորության վրա: Նրա զարգացման համար շատ կարևոր դեր է խաղում Երևան–Աբովյան–Հրազդան երկաթուղին:

Այս քաղաքը արագորեն զարգացել է 1960–ական թթ. սկսած, երբ կառուցվեցին ճշգրիտ մեքենաշինության, շինանյութերի, կենսաքիմիայի, թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններ: Կառուցվեցին նոր թաղամասեր, այստեղ տեղավորվեցին Ադրբեջանի հայաբնակ վայրերից բռնագաղթված մեծ թվով հայեր:

Հաջորդ խոշոր քաղաքը *Չարենցավանն* է, որը 2000 թ. ունեցել է 36,4 հազ., 2002 թ՝ 25,0 հազ., իսկ 2003 թ.՝ 24,8 հազ. բնակիչ: Այն ձևավորվել է Լուսավան փոքր բանվորական ավանի տեղում: Այս քաղաքը նույնպես ձևավորվել է 1960–ական թթ. սկսած, երբ հիմնադրվեցին այստեղ մետաղահատ հաստոցաշինական, գործիքաշինական, «Ցենտրոլիտ» շատ լայն ճանաչում ունեցող գործարանները, իսկ հետագայում կառուցվել է ավտոբեռնիչների հզոր գործարանը:

Նոր Հաճընն քաղաքը (2003 թ.՝ 10,1 հազ. բնակիչ) առավել նոր քաղաքներից է, որը ձևավորվել է այստեղ կառուցված ճշգրիտ տեխնիկական խոշոր ու շատ հայտնի գործարանի հիման վրա:

Քաղաք է դարձել նաև *Եղվարդը* (11,7 հազ. բնակիչ), որը Նաիրիի նախկին վարչական շրջանի կենտրոնն էր: Մարզի նորագույն քաղաքներից է Բյուրեղավանը (2003 թ.՝ 8,3 հազ. բնակիչ), որը ձևավորվել է բյուրեղապակու և քարամշակման գործարանների հիման վրա:

Քաղաքի կարգավիճակ է տրված նաև *Ծաղկաձորին* (1,6 հազ. բնակիչ), որը վաղուց հայտնի է որպես հանգստի անզուգական վայր՝ շրջապատված անտառներով:

Գյուղական բնակավայրերից բնակչության քանակով առավել խոշորներն են՝ Գառնին (7353 բնակիչ), Ջրվեժը (6600 բնակիչ), Նոր Արտամետը (6235 բնակիչ), Առինջը (5723 բնակիչ), Զովունին (5087 բնակիչ), Քանաքեռավանը (4641 բնակիչ), Պռոշյանը (4616 բնակիչ) և այլ գյուղեր:

Մարզի աշխատանքային ռեսուրսները կազմել են դեռ 1996 թ. 184,0 հազ. մարդ, տնտեսական ակտիվ բնակչությունը՝ 136,8 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները՝ 125,0 հազ. մարդ (դրանցից գյուղատնտեսության մեջ՝ 58,3 հազ. մարդ), պաշտոնական գրանցված գործազուրկներ են՝ 11,8 հազ. մարդ:

Արդյունաբերությունը Կոտայքի մարզում թողարկվող արտադրանքի ծավալում մեծ չափով գերազանցում է գյուղատնտեսությանը: 1996 թ. աստեղ թողարկվել է 43621,0 մլն ռուբլու արդյունաբերական արտադրանք (հանրապետության շուրջ 19%-ը), որի 95%-ը բաժին է ընկնում Հրազդանի ու Նաիրիի տարածաշրջանների ձեռնարկություններին:

Այստեղ հատկապես զարգացած է էներգետիկ տնտեսությունը, մեքենաշինությունը, շինանյութերի, թեթև ու սննդի արդյունաբերությունը:

Էներգետիկ տնտեսության համակարգում ընդգրկված են Հրազդանի պշէկը (հանրապետության խոշորագույն ջերմաէլեկտրակայանը), Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնու հիդրոէլեկտրակայանները:

Մեքենաշինության համակարգում առավել հանրահայտ են Չարենցավանի հաստոցաշինական, գործիքաշինական, Հրազդանի «Հրազդանմաշ», Աբովյանի ճշգրիտ սարքերի ու այլ ձեռնարկություններ:

Մարզի դերը շատ խոշոր է նաև շինանյութերի արդյունաբերության բնագավառում: Այդ ճյուղի համակարգում առավել հանրահայտ են Հրազդանի ցեմենտի, Բյուրեղավանի քարի մշակման, բյուրեղապակու, Արզնու ապակե տարաների, Հրազդանի, Չարենցավանի, Աբովյանի երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների ձեռնարկությունները: Հանրահայտ են Ջրաբերի ավազանի արդյունահանման, Արզական–Աղվերան հանգույցում մարմարի, բազալտի, արդյունահանման ձեռնարկությունները:

Իսկ Նոր Հաճընը լայն ճանաչում ունի ճշգրիտ տեխնիկական քարերի, ադամանդի մշակման բնագավառում:

Սննդի արդյունաբերության համակարգում նշանավոր են Արզնու, Բջնու, Հանքավանի հանքային ջրերի, Աբովյանի գարեջրի, Հրազդանի պանրի ու այլ ձեռնարությունները:

Մարզի արդյունաբերական համակարգում այժմ հատկապես վճռական դեր են խաղում երկու ձեռնարկություններ՝ Հրազդանի պշէկը (որը տալիս է Հրազդանի տարածաշրջանի արտադրանքի ավելի քան 70%), Նոր Հաճընի «Շողակն» գործարանը (ադամանդի մշակման ձեռնարկությունը, որը տալիս է Նաիրիի տարածաշրջանի արտադրանքի 74%):

2003 թ. մարզում թողարկվել է 57309,8 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որով այն հանրապետության մարզերի շարքում առաջին տեղն է զբաղեցնում: Վերջին տարիներին այս մարզում արդյունաբերական արտադրանքի աճը հատկապես իրականացվել է ադամանդագործության, մետաղամշակման, մեքենաշինության, սննդի արդյունաբերության (հատկապես խմիչքների արտադրության) աճի շնորհիվ:

Կոտայքի մարզը արդյունաբերական զարգացման լայն հնարավորություններ ունի:

Գյուղատնտեսության զարգացման պայմանները Կոտայքի մարզում նույնպես լայն են:

Գյուղատնտեսական հողատեսքերը այստեղ կազմում են 99,8 հազ. հա, այդ թվում վարելահողերը՝ 40,6 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 7,6 հազ. հա, խոտհարքեր՝ 10,9 հազ. հա, արոտավայրեր՝ 40,7 հազ. հա:

Գյուղատնտեսական արտադրության համախառն արտադրանքը դեռ 1996 թ. կազմել է 23589 մլն դրամ, որը կազմում էր հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ 7%–ը:

Գյուղատնտեսության ճյուղերից զարգացած են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի աճեցումը, պտղաբուծությունը, որոշ չափով նաև խաղողագործությունը: Լավ է զարգացած անասնապահությունը: Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը հիմնականում տարածված են Հրազդանի, Կոտայքի, Նաիրիի տարածաշրջանների լեռնային սևահողային տարածքներում, ցանքերը 1996 թ. կազմել են 16,2 հազ. հա (հանրապետության մոտ 9%), համախառն բերքը 21,8 հազ. տ (հանրապետության շուրջ 7%):

Կարտոֆիլի ցանքերը հիմնականում Հրազդանի տարածաշրջանում են, կազմել են 1,6 հազ. հա, համախառն բերքը՝ 22,7 հազ. տ: Բանջարեղենի ցանքերը 1,9 հազ. հա էր, տարեկան համախառն բերքը 23,4 հազ. տ:

Մարզը զգալի տեղ ունի խնձորի, տանձի ու այլ պտուղների արտադրության բնագավառում: Պտղատու այգիների տարածքը կազմում է 3,8 հազ. հա (հանրապետության 11%), համախառն բերքը 1996 թ. կազմել է 13,0 հազ. տ (հանրապետության 8%):

Մարզի տարածքում (հիմնականում Նաիրիի տարածաշրջանում) կար 965 հա խաղողի այգի, համախառն բերքը՝ տարեկան 2,3 հազ. տ: Անասնապահության համար պայմանները նպաստավոր են Հրազդանի ու Կոտայքի տարածաշրջաններում: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 45 հազ. գլուխ էր, մանրերինը՝ 56,3 հազ. գլուխ, խոզերինը՝ 2,5 հազ. գլուխ:

Վերջին տարիներին տեղի ունեցած տեղաշարժերի հետ կապված՝ գյուղատնտեսության ցուցանիշները 2003 թ. տվյալներով ունեն հետևյալ պատկերը:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը՝ 14547 հա, համախառն բերքը՝ 12.6 հազ. տ:

Կարտոֆիլի ցանքերը՝ 1206 հա, համախառն բերքը 25,7 հազ. տ:

Բանջարեղենի ցանքերը 1366 հա, համախառն բերքը՝ 21,5 հազ. տ:

Նույն 2003 թ. Կոտայքի մարզում արտադրվել է 18,3 հազ. տ պտուղ և 180 տ խաղող:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. կազմել է 48,3 հազ. (այդ թվում՝ կովեր 26,6 հազ.), խոզերինը՝ 9,0 հազ., մանր եղջերավորներինը՝ 62,0 հազ. գլուխ:

Մսի արտադրությունը մարզում 2003 թ. կազմել է 11,0 հազ. տ, կաթինը՝ 52,8 հազ. տ, ձվինը՝ 200,6 մլն հատ:

Մարզի գյուղատնտեսության պայմանների ռացիոնալ օգտագործման դեպքում, դրա արդյունքները շատ ավելին կարող են լինել:

Կոտայքի մարզն ունի նաև ռեկրեացիոն ինդուստրիա, սանատորիաներ և հանգստյան տներ Արզնիում, Հանքավանում, Ծաղկաձորում, Աղվերանում: Դրանց հնարավորությունները լավ օգտագործելու դեպքում այս ճյուղը կարող է դառնալ մարզի եկամտի գլխավոր աղբյուրներից մեկը:

Տրանսպորտի վճռական դեր խաղացող ճյուղերը երկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտն է: Շատ խոշոր է Երևան–Աբովյան–Հրազդան (որտեղից էլ այն ճգվում է դեպի Սևան, իսկ մյուս ճյուղը՝ դեպի Իջևան) երկաթուղու դերը: Այդ մարզով է անցնում Երևան–Սևան–Իջևան ավտոմայրուղին, որի դերը անգնահատելի է: Մարզի տարածքի էլեկտրակայանները բարձրավոլտ գծերով կապված են Երևանի ու մյուս ռեգիոնների հետ, գործում է նաև գազամուղային ցանցը:

Բավականին զարգացած է մարզի կրթական, մշակութային, առողջապահական կյանքը:

Հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 113–ի (58032 աշակերտներով), կա նաև միջնակարգ մասնագիտական 5 հաստատություն (1798 սովորողներով), 95 գրադարան, 8 թանգարան, 9 հիվանդանոց (940 մահճակալով):

8.8. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Ախուրյանի, Ամասիայի, Աշոցքի, Արթիկի տարածաշրջանները: Մարզային կենտրոնը Գյումրի քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 116 կմ է: Մարզի տարածքը կազմում է 2681 կմ^2 (հանրապետության տարածքի 9%), բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով՝ 359,9, 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 362,3 հազ., 2002 թ.–283,3 հազ., իսկ 2003 թ.–282,5 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1 կմ^2 վրա 105 մարդ:

Բնակչության ավելի քան 60%–ը բնակվում է քաղաքային բնակավայրերում, այդ թվում ավելի քան 50%–ը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին: Շիրակի մարզը հյուսիսարևելյան մասում սահմանակից է Լոռու, հարավային ու հարավարևելյան մասերում Արագածոտնի մարզերին: Մարզի հյուսիսային սահմանը Հայաստանի Հանրապետության պետական սահմանն է Վրաստանի հետ, իսկ արևմտյան սահմանը՝ հանրապետության պետական սահմանը Թուրքիայի հետ:

Ֆիզիկաաշխարհագրական տեսակետից մարզի տարածքը Շիրակի լեռնաշղթայով բաժանված է երկու մասի: Հարավային մասը զբաղեցնում է Շիրակի սարահարթը, իսկ հյուսիսային մասը՝ Աշոցքի համեմատաբար բարձրադիր սարահարթը (2000 մ): Ընդհանուր առմամբ մակերևույթը հարթ է, թույլ կտրտված, ծածկված է հրաբխային և նստվածքային ապարներով:

Մարզի հարավարևելյան մասում վեր է խոյանում Արագածի լեռնազանգվածը, որի գագաթը (4090 մ) հանրապետության ամենաբարձր կետն է: Այստեղ իրար զուգահեռ, արևմուտքից արևելք ձգվում են Շիրակի լեռնաշղթան և Փամբակի ու Բազումի լեռնաշղթաների արևմտյան մասերը: Հյուսիսարևելյան մասում հյուսիսից հարավ ձգվում է Ջավախքի լեռնաշղթան, որի բարձր գագաթը Աչքասար լեռն է (3196 մ), իսկ հյուսիսարևմտյան մասում՝ Եղնախաղի լեռնաշղթան (3042 մ): Մարզը բնութագրվում է ցամաքային կլիմայով, ձմեռը սաստիկ ցուրտ է, ձյան շերտը ունենում է մեծ հզորություն:

Ի դեպ, հենց այս մարզում է գրանցվել հանրապետությունում բացարձակ նվազագույն ջերմաստիճան՝ –46^{0}C: Այն գրանցվել է մարզի հյուսիսարևելյան մասում՝ Արփի լճի ափին գտնվող Պաղակն (նախկին Շուրաբաղ) գյուղում:

Մարզի տարածքի հարավային և հյուսիսային մասերի միջև կլիմայական մեծ տարբերություններ կան: Հարավում ամառը նույնիսկ տաք է, իսկ

հյուսիսում (Աշոցքի սարահարթում) զով է լինում: Նշված լեռների բարձրադիր վայրերը տարվա մեծ մասը ծածկված են ձյունով:

Մարզի տարածքի մեծ մասը ծածկված է լեռնային սևահողերով, որոնք և հանդիսանում են հանրապետության հացահատիկային մշակաբույսերի աճեցման կարևորագույն բազա: Լեռնային բարձրադիր մասերում տարածված են լեռնամարգագետնային հողերը: Այդ վայրերն էլ բնութագրվում են խոտային բազմազան բուսականությամբ, բարձրադիր մասերում լեռնամարգագետնային բուսականության տեսակներով:

Շիրակի մարզի տարածքով հոսում է Ախուրյան գետը, որը մարզի հարավարևմտյան մասում դառնում է սահմանային գետ (Թուրքիայի հետ), որտեղ էլ կառուցված է հանրապետության ամենախոշոր՝ Ախուրյանի ջրամբարը: Վերջինս ունի տնտեսական խոշոր՝ նշանակություն, հատկապես ոռոգման համար: Արագածի լանջերից սկիզբ է առնում Ախուրյանի վտակ Մանթաշ գետը, որի վրա կառուցված է ջրամբար: Իսկ մարզի հյուսիսարևմտյան մասում է Արփի լիճ–ջրամբարը, որով անցնում է Ախուրյան գետը: Դրա նշանակությունը նույնպես մեծ է ոռոգման, որոշ չափով նաև ձկնաբուծության համար:

Շիրակի մարզի համար շատ կարևոր դեր է խաղում Շիրակի ջրանցքը, որն անց է կացված Ախուրյան գետից և Գյումրի քաղաքի արևելյան մասով հասնում է մինչև Մանթաշ գետը: Հենց այս ջրանցքի վրա էլ 1930–ական թթ. կառուցվել է հիդրոէլեկտրակայան:

Այսպիսով՝ Շիրակի կարևորագույն բնական ռեսուրսները բերրի սևահողերն ու ջուրն են: Սակայն մարզի տարածքը շատ հարուստ է նաև տուֆերի, բազալտների, կրաքարերի, հրաբխային խարամի, պեմզայի պաշարներով:

Տուֆի պաշարներով առավել փառաբանվածը Արթիկի տարածաշրջանն է, որտեղ կան այդ հրաշագեղ քարի 20–ից ավելի հանքավայրեր: Այդպիսի հանքավայրեր կան նաև Ախուրյանի ու Անիի տարածաշրջաններում: Այդ նույն վայրերը հայտնի են նաև հրաբխային խարամի ու պեմզայի պաշարներով:

Շիրակի մարզում կա երեք քաղաք և գյուղական 128 բնակավայր, որոնք միավորված են գյուղական 116 համայնքների մեջ: Խոշոր քաղաքը Գյումրին է (մարզային կենտրոնը), որի բնակչությունը 1997թ. հուլիսի 1–ի տվյալներով կազմել է 211,2 հազ., 2000 թ. – 211,6 հազ., 2002 թ. – 150,7 հազ., 2003 թ. – 149,9 հազ. մարդ: Բնակչության քանակով, արդյունաբերության, կրթության, մշակույթի ու մյուս բնագավառներում Գյումրին հանրապետության 2–րդ քաղաքն է Երևանից հետո: Հնում այն կոչվում էր Կումայրի, հետագայում անվանվել է Ալեքսանդրապոլ, 1924 թ. անվանվել է Լե-

նինական, իսկ Հայաստանի անկախացումից հետո վերանվանվել է քաղաքի պատմական անվանումը՝ Գյումրի:

Այն գտնվում է Շիրակի դաշտի կենտրոնում, մի քանի անգամ խիստ ավերվել է երկրաշարժերից: Վերջին անգամ Գյումրին ավերվել է 1988 թ. դեկտեմբերի 7–ին տեղի ունեցած երկրաշարժից: Այժմ այն վերականգնվում է:

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից առավել նշանավոր էին տեքստիլ կոմբինատը, մանվածքային ֆաբրիկան, քարհատ հաստոցների, էլեկտրաշարժիչների գործարանները, մսի կոմբինատը: Հանդիսանում է տրանսպորտային հանգույց, ունի օդանավակայան: Գործում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններ, մշակույթի օջախներ:

Արթիկը մարզի երկրորդ խոշոր քաղաքն է, որը 2000 թ. ուներ 24,1 հազ., իսկ 2003 թ. 17,8 հազ. բնակիչ: Այն հանդիսանում է տուֆագործների քաղաք, տուֆաքարի արդյունահանման բազայի վրա էլ ձևավորվել է այս քաղաքը: Հանրապետության տուֆ արդյունահանող խոշորագույն կենտրոնն է: Արթիկի վարդագույն տուֆը օգտագործված է հանրապետության բոլոր բնակավայրերում և նախկին ԽՍՀՄ շատ քաղաքներում: Բացի շինանյութերի արտադրության խոշոր կենտրոն լինելուց, Արթիկում գործում են նաև մեքենաշինական (վակուումային էլեկտրավառարանների), թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

Մարզի երրորդ քաղաքը **Մարալիկն** է, որի բնակչությունը 2000 թ. եղել է 7,9 հազ., իսկ 2003 թ. 5,8 հազ. մարդ: Նշանավոր է որպես շինանյութերի (տուֆի, պեմզայի), էլեկտրատեխնիկական (Երևանի «Հայէլեկտրալույս» միավորման մասնաճյուղ), թեթև ու սննդի արդյունաբերության կենտրոն:

Գյուղական բնակավայրերից բնակչության քանակով առավել նշանավորներն են Ախուրիկը (ավելի քան 10 հազ. բնակիչ), Ազատանը (5041 բնակիչ), Աշոցքը (4029 բնակիչ), Ոսկեհասկը (3400 բնակիչ), Սառնաղբյուրը (3071 բնակիչ), Փանիկը (2958 բնակիչ), Փոքր Մանթաշը (2376 բնակիչ), Մարմարաշենը (2348 բնակիչ) և այլն:

Ինչպես հանրապետության մյուս մարզերում, այստեղ ևս դեռ շարունակվում է մեկնածների թիվը գերազանցել ժամանողների թվին: Մասնավորապես, դեռ 1995 և 1996 թվականներին մեկնողների թիվը կազմել է 2006 և 1686 մարդ, իսկ եկողներինը՝ համապատասխանաբար 789 և 759 մարդ:

Մարզի աշխատանքային ռեսուրսները կազմում են 202,6 հազ. մարդ (1996 թ.), տնտեսական ակտիվ բնակչությունը 146,1 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները 48,6 հազ. մարդ, պաշտոնապես գրանցված գործազուրկները՝ 29,1 հազ. մարդ:

Արդյունաբերության զարգացման մակարդակով, տեղ ու դերով Շիրակը հանրապետությունում միշտ առաջնակարգ տեղերից մեկում էր: Վերջին 10 տարում նրա ցուցանիշները զգալիորեն իջել են, կապված 1988թ. դեկտեմբերի 7–ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի, ինչպես նաև 1990–ական թթ. ստեղծված տնտեսական ծանր վիճակի հետ:

Մարզում կա արդյունաբերական 72 ձեռնարկություն, որոնցից 39–ը Գյումրի քաղաքում, 14–ը Արթիկի տարածաշրջանում, 6–ը Ախուրյանի, 5–ական ձեռնարկություններ Ամասիայի ու Անիի, 3–ը Աշոցքի տարածաշրջանում:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 1996 թ. կազմել է 5651,3 մլն դրամ, որից ավելի քան 81%–ը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին: 2003 թ. մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 11630,6 մլն դրամ:

Արդյունաբերության ճյուղերից թողարկվող արտադրանքի ծավալով կարևորներն են թեթև արդյունաբերությունը, մեքենաշինությունը, շինանյութերի արդյունաբերությունը և սննդի արդյունաբերությունը: Թեթև արդյունաբերության համակարգում խոշորագույն ձեռնարկությունը Գյումրիի տեքստիլ կոմբինատն էր, ինչպես նաև տրիկոտաժեղենի, գուլպեղենի ֆաբրիկաները: Մեքենաշինության նշանավոր կենտրոնը նույնպես Գյումրին է, այդ ճյուղի ձեռնարկություններ կան նաև Արթիկում և Մարալիկում (որոնց մասին նշվել է):

Շինանյութերի արդյունաբերությունը ընդգրկում է տուֆի, բազալտի, հրաբխային խարամի, պեմզայի արդյունահանումը, տուֆից երեսապատման սալերի արտադրությունը, երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությունը (հատկապես Գյումրիում): Մարզը տալիս է հանրապետության տուֆի արդյունահանման 40–45%–ը: Սննդի արդյունաբերության համակարգում ընդգրկված են մսի վերամշակման և երշիկեղենի արտադրությունը, որոնց խոշոր կենտրոնը նույնպես Գյումրին է:

Գյուղատնտեսության զարգացման պայմանները լայն են մարզում: Դրա կարևոր նախապայմանը ընդարձակ, բերրի սնահողերն ու արոտավայրերն են:

Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 165,7 հազ. հա (1997 թ.), այդ թվում վարելահողերը՝ 84,5 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 0,6 հազ. հա, խոտհարքերը՝ 16,8 հազ. հա, արոտավայրերը՝ 63,8 հազ. հա: Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը 1996 թ. կազմել է 35121 մլն դրամ (հանրապետության 10%), իսկ 2003 թ. ավելի քան 40200 մլն դրամ (հանրապետության 9,8%–ը):

Շիրակը շատ հնուց առավել հանրահայտ է հացահատիկի, հատկապես ցորենի արտադրությամբ: Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 1996 թ. կազմել են 40,8 հազ. հա (հանրապետության 22%), համախառն բերքը՝ 72 հազ. տ (հանրապետության 22%): 2003 թ. հացահատիկային մշակաբույսերի ցանքերը կազմել են 43027 հա (որով առաջինն է հանրապետությունում), համախառն բերքը՝ 52,1 հազ. տ:

Կարտոֆիլի, հացահատիկի արտադրությամբ հատկապես նշանավոր են Ախուրյանի, Արթիկի, Անիի տարածաշրջանները:

Կարտոֆիլի ցանքերը 2003 թ. կազմել են ավելի քան 2,4 հազ. հա (հանրապետության շուրջ 9%-ը), իսկ համախառն բերքը՝ 39,9 հազ. տ (հանրապետության շուրջ 10%-ը): Մարզում վերջին տասնամյակներում զարգացել է նաև բանջարեղենի արտադրությունը, որի ցանքերը կազմել են շուրջ 1,23 հազ. հա, իսկ համախառն բերքը ավելի քան 22,3 հազ. տ: Այստեղ արմատավորվում է նաև պտղաբուծությունը: Պտղատու այգիների (հատկապես խնձորի, տանձի) տարածքը դեռ 1996 թ. կազմել է 338 հա, իսկ համախառն բերքը՝ 3,6 հազ. տ, իսկ 2003 թ. 1,0 հազ. տ:

Մարզի տեղը ակնառու է *անասնապահության* բնագավառում, որի համար, ինչպես նշվել է, պայմանները նպաստավոր են:

1996 թ. տվյալներով խոշոր եղջերավոր անասունների (սա գլխավոր ենթաճյուղն է) գլխաքանակը կազմել է 61,7 հազ., իսկ 2003 թ.՝ 77,7 հազ. գլուխ (հանրապետության 12%), մանր եղջերավոր անասուններինը 1996 թ. ավելի քան 51 հազ., իսկ 2002 թ.՝ 67,3 հազ. գլուխ (հանրապետության շուրջ 9%), խոզերինը 1996 թ.՝ 4,9, իսկ 2003 թ.՝ 13,7 հազ. գլուխ (հանրապետության 9%):

Մսի արտադրությունը 2003 թ. կազմել է 13,4 հազ. տ (հանրապետության շուրջ 12%), կաթինը՝ 76,6 հազ. տ (հանրապետության ավելի քան 13%), ձվինը՝ 35.2 մլն հատ (հանրապետության 14%), արտադրվում է տարեկան 123 տ բուրդ:

Մարզի բերրի հողերի, խոտառատ արոտավայրերի ինտենսիվ օգտագործման դեպքում այդ ցուցանիշները ավելի բարձր կլինեն:

Տրանսպորտի ճյուղերից վճռական դեր են խաղում երկաթուղային և ավտոխճուղային տրանսպորտը: Գյումրին հանրապետության երկաթուղային առավել հին հանգույց է: Այստեղից երկաթուղիներ են ձգվում դեպի Երևան, Վանաձոր և դեպի Թուրքիա (պատմական Հայաստանի Կարս քաղաք, այստեղից էլ՝ դեպի Անկարա, Ստամբուլ): Գյումրին երկաթուղով կապված է նաև Արթիկ քաղաքի հետ: Գյումրին նաև ավտոմայրուղիների հանգույց է, որտեղից ճանապարհները ձգվում են դեպի Երևան, Վանաձոր, Աշոցք (այնուհետև դեպի Վրաստան):

Այժմ ունի նաև օդանավակայան, որտեղից թռիչքներ են կատարվում դեպի ԱՊՀ տարբեր երկրներ:

Մարզն ունի նաև գազամուղային և բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ լարերի ցանցեր:

Շիրակի մարզը բնութագրվում է կրթության, մշակույթի, առողջապահության զարգացման մակարդակով:

Գյումրիում գործում է մանկավարժական ինստիտուտ, Երևանի ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղ: Մարզում հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 174–ի (55239 աշակերտներով), միջնակարգ մասնագիտական հաստատությունների թիվը հասնում է 9–ի (2432 սովորողներով): Այստեղ գործում է երկու թատրոն, 151 գրադարան, 8 թանգարան, 23 հիվանդանոց (1950 մահճակալով):

8.9. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Կապանի, Գորիսի, Մեղրու, Սիսիանի տարածաշրջանները: Մարզային կենտրոնը Կապան քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 316 կմ է: Մարզի տարածքը կազմում է 4506 կմ^2, որը կազմում է հանրապետության տարածքի ավելի քան 15%: Բնակչությունը 1997թ. հուլիսի 1–ի տվյալներով կազմել է 163 հազ. մարդ, 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ 163,9 հազ., 2002 թ. – 152,7 հազ., իսկ 2003 թ. – 152,8 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1կմ^2 վրա 34 մարդ է, այսինքն՝ հանրապետության միջին խտությունից ավելի քան 3 անգամ ցածր: Գյուղական բնակչությունը կազմում է ավելի քան 30%, այսինքն՝ ուրբանիզացիան Սյունիքի մարզում բավականին բարձր է: Սյունիքի մարզը զբաղեցնում է հանրապետության հարավարևելյան մասը: Հյուսիսարևմտյան մասում այն սահմանակից է Վայոց ձորի մարզին, արևմտյան սահմանագիծը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ, հյուսիսարևելյան և արևելյան մասերում սահմանակից է Քարավաճառի (այժմ ԼՂՀ կազմում գտնվող Շահումյանի), Քաշաթաղի (Լաչինի), Ղուբաթլուի և Զանգելանի ազատագրված տարածքներին (վերջիններս միավորված են նորաստեղծ Քաշաթաղի վարչական շրջանի մեջ, որը հանդիսանում է ԼՂՀ–ի շրջաններից մեկը):

Սյունիքի մարզի հարավային սահմանը, որը անցնում է Արաքս գետով (Մեղրու կիրճով) հանդիսանում է ՀՀ պետական սահմանը Իրանի հետ:

Մարզն ունի լեռնային, խոր գետահովիտներով, կիրճերով կտրտված բարդ ռելիեֆ: Նրա տարածքի ամենացածր կետը՝ Մեղրու կիրճը, ծովի մակերևույթից ունի 380մ բարձրություն, իսկ ամենաբարձր կետը՝ Կապուտջուղ գագաթը, ունի 3904 մ բարձրություն:

Արևմտյան սահմանագծի ամբողջ երկարությամբ ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան (բարձր գագաթը Կապուտջուղ): Այս լեռնաշղթայի հյուսիսային մասում գտնվող Որոտանի լեռնանցքով (2344 մ բարձրությամբ) Սյունիքի մարզը կապվում է Վայոց ձորի մարզի հետ, իսկ Բիչենեկի լեռնանցքով (2346մ) կապվում է Նախիջևանի ԻՀ հետ:

Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասում սկսվում է և իրար զուգահեռ, մարզի տարածքով արևմտյան մասից դեպի արևելյան մասն են ձգվում Բարգուշատի (բարձր գագաթը՝ Արամազդ՝ 3392մ) ու Մեղրու (բարձր գագաթը՝ Բաղացսար՝ 3256 մ) լեռնաշղթաները:

Մարզի հյուսիսային մասով ձգվում է Սյունիքի հրաբխային լեռնավահանը (բարձրավանդակը), որի բարձր գագաթներն են Ծղուկ լեռը (3581 մ) և Մեծ Իշխանասարը (3549 մ): Այդ լեռնավահանի ստորոտներում փռված են Սիսիանի, Եռաբլրի ու Գորիսի սարավանդները: Սրանք համեմատաբար հարթ, բերրի լեռնային սևահողային տարածքներ են, որոնք էլ հանդիսանում են մարզի գյուղատնտեսության հիմնական բազաները:

Հենց այդ վայրերով էլ ձգվում է Որոտանի անզուգական կիրճը (խորությունը ավելի քան 700մ) իր անձեռակերտ հրաշալիքներով: Այդպիսի հետաքրքրություն են ներկայացնում նաև Ողջի և Մեղրի գետերի հովիտները:

Սյունիքի մարզը բնութագրվում է նաև կլիմայի բազմազանությամբ: Մեղրու կիրճը, Կապանի, Գորիսի տարածաշրջանների ցածրադիր մասերը ունեն մերձարևադարձային կլիմայական պայմաններ, տեղումները այստեղ շատ քիչ են: Համեմատաբար բարձրադիր մասերը բնութագրվում են տաք, չափավոր խոնավ կլիմայական պայմաններով, իսկ հյուսիսային մասի լեռնատափաստանային մասերը՝ չափավոր լեռնային կլիմայով:

Զանգեզուրի լեռնաշղթայի ու Սյունիքի լեռնավահանի բարձրադիր մասերը ունեն լեռնային ցուրտ կլիմա:

Միջին և բարձրադիր մասերում, մինչ 900մ բարձրությունները, այսինքն՝ մերձարևադարձային լանդշաֆտներում հողերը լեռնաշագանակագույն են, Սիսիանի ու Գորիսի տարածաշրջանների սարավանդներում տարածված են լեռնային սևահողերը, ավելի բարձրադիր լեռնային մասերում՝ լեռնամարգագետնային հողերը, որոնք շատ կարևոր դեր ունեն գյուղատնտեսության համար: Անտառային վայրերում տարածված են լեռնային դարչնագույն հողերը:

Բուսականությունը նույնպես բազմազան է: Ցածրադիր՝ մերձարևադարձային վայրերում տարածված են նոսր անտառային, թփուտային, չոր տափաստանային բուսականությունը, լեռնային տափաստաններում և բարձրադիր վայրերում բազմազան խոտային, ալպյան բուսականություն է: Բարձրադիր, մինչև 2400մ բարձրություններում գտնվող անտառներում գերակշռում են կաղնու, բոխու, թխկու ծառատեսակները: Ի դեպ, Սյունիքի անտառները հարուստ են վայրի պտղատու ծառերով՝ ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի, կեռասենի, տկողնի, զկռի: Կան մոշի ու մասրենու թփուտներ:

Մարզի բուսական աշխարհում յուրահատուկ կարևոր դեր են խաղում սոսու եզակի պուրակները: Սրանք գտնվում են Շիկահողի արգելոցում (Կապանի տարածաշրջանում, Ծավ գետի ավազանում): Այն զբաղեցնում է 10 հազ. հա տարածք, ծովի մակերևույթից 700–2400մ բարձրության վրա: Սոսիներից բացի այստեղ կան կաղնու, բոխու, հաճարենու ծառուտներ:

Կենդանիների տեսակներից տարածված են գորշ արջը, վայրի խոզը, կզաքիսը, հովազը, գայլը, աղվեսը, փորսուղը:

Բազմազան են թռչունների տեսակները:

Ռելիեֆի ու բնական մյուս պայմանների բազմազանությունը իրենց հակադրություններով, Սյունիք աշխարհը դարձնում են հանրապետության ամենահետաքրքիր վայրերից մեկը:

Սյունիքի մարզը ջրային ռեսուրսներով համեմատաբար լավ է ապահովված: Նրա տարածքով է հոսում հանրապետության ջրառատ, ոռոգման և հատկապես էներգետիկ նշանակության խոշոր գետերից մեկը՝ Որոտանը: Վերջինիս վտակներից հատկապես նշանավոր են Շաքին (որի վրա է գտնվում հանրապետության գեղատեսիլ ջրվեժներից մեկը), Սիսիանը և Վարարակը: Որոտանը հոսում է Սիսիանի ու Գորիսի տարածաշրջաններով, այնուհետև անցնում է Ղուբաթլուի ազատագրված տարածաշրջանով և թափվում Արաքսի ավազանին պատկանող Հագարու գետի մեջ:

Կապանի տարածաշրջանով է հոսում Ողջի գետը, որը սկիզբ է առնում Կապուտջուղի լանջերից և անցնելով Քաջարան և Կապան քաղաքներով, այնուհետև ազատագրված Զանգելանի տարածաշրջանով թափվում է Արաքս գետը: Ողջի գետի նշանավոր վտակը Գեղին է: Մեղրու տարածաշրջանով է հոսում Մեղրի գետը, որը անցնելով Մեղրի քաղաքով, թափվում է Արաքս գետը: Մարզի տարածքում կան լեռնային բազմազան փոքր լճեր, որոնցից հատկապես նշանավորը Իշխանասարի արևելյան լանջին գտնվող Սև լիճն է: Նրա ջրային ռեսուրսների համակարգում շատ կարևոր դեր են խաղում այստեղ կառուցված երեք ջրամբարները: Դրանցից խոշորը Սպան-

դարյանի ջրամբարն է, Որոտանի վերին հոսանքում, այնուհետև Տոլորսի ջրամբարը, Որոտանի աջ վտակ Սիսիան գետի վրա, համեմատաբար փոքր է Շամբի ջրամբարը: Դրանք ունեն էներգետիկ, ոռոգողական, արդյունաբերական նշանակություն:

Սպանդարյանի ջրամբարից այժմ Որոտանի ջրի մի մասը (տարեկան 160–165 մլն մ^3) Որոտան–Կեչուտ թունելով հոսում է դեպի Սևանա լիճ: Սյունիքի մարզը ակնառու տեղ ունի հանքային բազմատեսակ ռեսուրսների բնագավառում: Շատ վաղուց գործնական նշանակություն ունի Կապանի պղնձի հանքավայրերի խումբը: 1950–ական թվականներից գործնական շատ կարևոր դեր են խաղում Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերը: Մոլիբդենի պաշարներ կան նաև Դաստակերտի հանքավայրում (որի շահագործումը առայժմ դադարեցված է): Կապանի հանգույցում հայտնաբերված են բազմամետաղների պաշարներ, իսկ Սվարանց գյուղի մոտ (Գորիսի տարածաշրջան), երկաթի հանքաքարի պաշարներ, որոնք հանգամանորեն ուսումնասիրված և հաշվարկված են:

Իսկ Մեղրու շրջանում հայտնաբերված են ոսկու հանքավայրեր, որոնցից երկուսը (Լիճքվազի և Թեյի) կարող են ունենալ գործնական նշանակություն:

Մարզի տարածքում կան բազալտների ու հրաբխային խարամի (հատկապես Սիսիանի ու Գորիսի տարածաշրջաններում), կրաքարի ու գիպսաքարի (Կապանի տարածաշրջանում), գրանիտի (Մեղրու տարածաշրջանում) խոշոր պաշարներ:

Սյունիքի մարզը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռեկրեացիոն ռեսուրսների տեսակետից: Դրանք Որոտանի անզուգական կիրճը, նրա վրա գտնվող Սատանի կամուրջը, Գորիսի շրջակայքում բնական բազմազան ու հրաշագեղ հուշարձանները, Հին Գորիսի ու Խնձորեսկի քարանձավային շինությունները, Շաքիի ջրվեժը, Մեծ Իշխանասար, Կապուտջուղ, Խուստուփ, Ծղուկ լեռնագագաթները, Տաթևի, Որոտավանքի ու շատ այլ պատմական անզուգական հուշարձաններ են:

Մարզի տարածքում կա 7 քաղաք և գյուղական 128 բնակավայր, որոնք միավորված են գյուղական 106 համայնքներում:

Քաղաքներից բնակչության քանակով և արդյունաբերության զարգացման տեսակետից խոշորը *Կապանն է*, որի բնակչությունը 1997թ. հունվարի 1–ի դրությամբ 46,8 հազ., իսկ 2003 թ. 45,6 հազ. մարդ է: Կապանը Հայաստանի պղնձաձուլության և լեռնահանքային արդյունաբերության հնագույն և խոշոր կենտրոններից է: Այստեղ գործում են նաև էլեկտրատեխնիկական, թեթև, սննդի, փայտամշակման արդյունաբերության ձեռնարկություններ:

Գորիսը մարզի հաջորդ խոշոր քաղաքն է, որի բնակչությունը 2000 թ. եղել է 29,3 հազ., իսկ 2003 թ. 23,2 հազ. մարդ: Այն գեղատեսիլ քաղաք է՝ կառուցված դեռևս մինչև խորհրդային կարգերը կազմված հատուկ նախագծով, ունի էլեկտրատեխնիկական, թեթև սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

Սիսիանի բնակչությունը 2000 թ. եղել է 19,1 հազ., իսկ 2003 թ. 16,8 հազ. մարդ, այստեղ կան էլեկտրատեխնիկական, թեթև, սննդի, շինանյութերի արդյունաբերության ձեռնարկություններ:

Քաջարանը (2003 թ. 8,4 հազ. բնակիչ) հանրահայտ է պղնձամոլիբդենային հզոր կոմբինատով: *Մեղրին* (4,8 հազ. բնակիչ) նշանավոր է պահածոների, գինու, պանրի ձեռնարկություններով:

Ագարակ քաղաքը (4,8 հազ. բնակիչ) հանրահայտ է պղնձա մոլիբդենային կոմբինատով:

Դաստակերտը նույնպես ստացել է քաղաքի կարգավիճակ (չնայած բնակչությունը 2000 թ. եղել է 600, իսկ 2003 թ. 300 մարդ):

Գյուղական բնակավայրերից բնակչության քանակով հատկապես նշանավոր են Շինուհայրը (2511 բնակիչ), Տեղը (2221 բնակիչ), Բռնակոթը (2145 բնակիչ), Խնձորեսկը (1893 բնակիչ), Անգեղակոթը (1827 բնակիչ) և այլ գյուղեր:

Արդյունաբերության զարգացման հնարավորություններով Սյունիքի մարզը ՀՀ–ում առաջնակարգ տեղերից մեկն է զբաղեցնում:

Պղնձաձուլությունը այստեղ ունի հարյուրամյակների պատմություն: Մինչև 1936 թ. Կապանում գործում էր պղնձաձուլական գործարան: Այժմ Սյունիքը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության գլխավոր շրջանն է: Այստեղ իրականացվում է պղնձի ու մոլիբդենի արդյունահանում և հարստացում: Պղինձ արդյունահանվում է Կապանի հանգույցի հանքավայրերում, հարստացումը իրականացվում է Կապանի լեռնահանքահարստացուցիչ ֆաբրիկայում: Հարստացված խտանյութը մինչև 1990–ական թթ. սկիզբները ամբողջապես ուղարկվում էր Ալավերդու կոմբինատ ձուլման համար: Այժմ հարստացված խտանյութի մի մասը Կապանից ուղարկվում է Ալավերդու վերակառուցվող պղնձաձուլական գործարան, իսկ մյուս մասը արտահանում է Իրան:

Պղնձամոլիբդենային հումք արդյունահանվում է Քաջարանի ու Ագարակի հանքավայրերում: Այստեղ գործող հանքահարստացուցիչ կոմբինատներում հարստացված պղնձի խտանյութը նույն ձևով մատակարարվում է Ալավերդու գործարանին, մյուս մասը արտահանվում է, իսկ մոլիբդենի խտանյութը արտահանվում է (նախկինում այն մատակարարվում էր Ռու-

սաստանի մշակող ձեռնարկություններին): Վերջին ժամանակներս մոլիբդենի հումքի մի մասը տեղում (Քաջարանի կոմբինատում), որոշ մասն էլ Երևանի փոշեմետալուրգիական գործարանում մշակվում և արտադրվում է ֆերոմոլիբդեն:

Ծանր արդյունաբերության մյուս ճյուղերից խորհրդային իշխանության տարիներին զգալի զարգացում է ունեցել մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը: «Հայէլեկտրալույս» (Երևանի լամպերի գործարան) միավորման մասնաճյուղեր են ստեղծվել Սիսիանում, Կապանում, միկրոտրանսֆորմատորների գործարան Գորիսում:

Բավականին զարգացել է շինանյութերի արդյունաբերությունը, Կապանի, Գորիսի, Սիսիանի տարածաշրջաններում արտադրվում է բազալտե բազմատեսակ շինանյութեր, երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաներ, արդյունահանվում է հրաբխային խարամ և այլն:

Արդյունաբերության համակարգում կարևոր տեղ ունի սննդի արդյունաբերությունը և, այդ թվում հատկապես պանրի արտադրությունը (Սիսիանի, Գորիսի տարածաշրջաններ), պահածոների արտադրությունը (Մեղրու, Կապանի տարածաշրջաններում), գինու արտադրությունը (Մեղրիում) և այլ ենթաճյուղեր:

Զարգացել է էլեկտաէներգետիկ տնտեսությունը: Որոտան գետի վրա կառուցված է երեք հիդրոէլեկտրակայան՝ Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է ավելի քան 400 հազ. կվտ:

1996 թ. Սյունիքի մարզի արդյունաբերությունը թողարկել է 9710 մլն դրամի արտադրանք, որի ավելի քան 73%–ը բաժին է ընկնում Կապանի տարածաշրջանին:

2003 թ. այստեղ թողարկվել է 41486,0 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, և այդ ցուցանիշով այն զիջել է միայն Երևան քաղաքին ու Կոտայքի մարզին:

Մարզում կա արդյունաբերական 59 ձեռնարկություն, որից 22–ը Կապանի, 17–ը Գորիսի, 11–ը Սիսիանի, 9–ը Մեղրու տարածաշրջաններում:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային (Քաջարան), Կապանի լեռնահանքահարստացուցիչ և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատներին, վերջին տարիների տվյալներով, բաժին է ընկնում մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի ավելի քան 70%–ը:

Գյուղատնտեսության զարգացման նախապայմանները Սյունիքի մարզում լայն են, հատկապես անասնապահության և հացահատիկի արտադրության համար:

Գյուղատնտեսական հողատեսքերը 1997 թ. տվյալներով կազմում են 194,3 հազ. հա, այդ թվում վարելահողերը՝ 48,4 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 2,7 հազ. հա, խոտհարքերը՝ 9,5 հազ. հա, արոտավայրեր՝ 133,7 հազ. հա:

Հացահատիկի արտադրությամբ առավել նշանավոր են Սիսիանի ու Գորիսի տարածաշրջանները: Հացահատիկի ցանքերը 1996 թ. տվյալներով կազմել են շուրջ 23 հազ. հա (հանրապետության 12,5%-ը), համախառն բերքը 1996 թ. կազմել է ավելի քան 36 հազ. տ (հանրապետության 11%-ը): Կարտոֆիլի արտադրությունը նույնպես գերազանցապես տեղաբաշխված է Սիսիանի ու Գորիսի տարածաշրջաններում: Դրա ցանքերը կազմել են 1.6 հազ. հա, համախառն բերքը 24 հազ. տ (1996 թ.):

2003 թ. այստեղ հացահատիկի ցանքերը կազմել են 20545 հա, համախառն բերքը 30.4 հազ. տ: Կարտոֆիլի ցանքերը նույն տարում կազմել են 1986 հա, համախառն բերքը 25,98 հազ. տ, բանջարեղենի արտադրությունը կազմել է 14,3 հազ. տ:

Մարզը նկատելի տեղ ունի նաև պտղաբուծության և խաղողագործության բնագավառներում, ըստ որում, խաղողագործությունը հիմնականում բաժին է ընկնում Մեղրու տարածաշրջանին, իսկ պտղաբուծությունը տարածված է ամբողջ մարզում: Պտղատու այգիների տարածքը (աճեցվում է խնձոր, տանձ, դեղձ, թուզ և այլ պտուղներ) կազմում է շուրջ 2,0 հազ. հա, համախառն բերքը՝ տարեկան շուրջ 3,2 հազ. տ (2003 թ.): Խաղողի այգիների տարածքը ավելի քան 1,5 հազ. հա է, համախառն բերքը՝ տարեկան 5.7 հազ. տ: Տարածաշրջաններում աճեցվող պտուղները շատ բարձր շաքարայնություն ունեն:

Ընդարձակ և խոտառատ արոտավայրերը լավ հնարավորություն են ստեղծում Սյունիքում *անասնապահության* զարգացման համար: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. կազմել են ավելի քան 42 հազ. գլուխ (հանրապետության 9%), մանր եղջերավորներինը՝ 57,1 հազ. գլուխ (հանրապետության 10,5%), խոզերինը՝ 4,2 հազ. գլուխ: Մսի արտադրությունը 2003 թ. տվյալներով տարեկան կազմում է 7,0 հազ. տ (հանրապետության 9,2%), կաթինը՝ 34.4 հազ. տ (հանրապետության 9,4%), ձվինը՝ 15,1 մլն հատ, բրդինը՝ 146տ: Մարզի նպաստավոր պայմանները ռացիոնալ օգտագործելու դեպքում գյուղատնտեսական արտադրության ցուցանիշները շատ ավելի բարձր կարող են լինել:

Սյունիքի մարզի տրանսպորտային պայմանները բարդ են՝ կապված տարածքի խիստ կտրտված, լեռնային բնույթի, ինչպես նաև աշխարհագրական դիրքի հետ:

Այժմ հանրապետության կենտրոնական շրջանների հետ կապի թերևս միակ ուղին Վայքից Որոտանի լեռնանցքով (2344 մ) անցնող ավտոմայրուղին է, որը ձգվում է Սիսիան–Գորիս–Կապան–Սեղրի ուղղությամբ: Գորիսից այդ մայրուղին ձգվում է դեպի Արցախ՝ անցնելով Բերձոր (Լաչին)–Շուշի–Ստեփանակերտ ուղղությամբ:

Կապան քաղաքը երկաթուղու ճյուղով կապված է Երևան–Նախիջևան–Բաքու երկաթուղու Սինջևան կայարանի հետ: Սակայն այս երկաթուղին 1998 թ. չի գործում՝ կապված ադրբեջանա–ղարաբաղյան հակամարտության հետ:

Այսպիսով, մարզի վճռական դեր խաղացող տրանսպորտը ավտոտրանսպորտն է: Սիսիանը, Գորիսը, Կապանը ունեն օդանավակայաններ, որոնք նախկինում գործում էին, այժմ դրանք դեռևս չեն գործում: Տրանսպորտի այս ենթաճյուղի վերագործարկումը շատ կարևոր է հեռավոր այդ մարզի արտաքին կապերի համար: Մարզն ունի նաև գազամուղային և էլեկտրահաղորդիչ գծերի ցանցեր:

Սյունիքի մարզը ունի կրթական, մշակույթի,առողջապահության զարգացած համակարգ:

Հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 120–ի (ավելի քան 27,3 հազ. աշակերտներով), միջնակարգ մասնագիտական հաստատությունների թիվը՝ 7 (շուրջ 1,8 հազ. սովորողներով): Մարզն ունի բուհերի երկու մասնաճյուղեր Գորիսում և Կապանում:

Գրադարանների թիվը հասնում է 178–ի, թանգարաններինը՝ 8–ի, թատրոններինը՝ 2–ի (Գորիսում և Կապանում):

Գործում է 17 հիվանդանոց (1405 մահճակալով):

8.10. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Եղեգնաձորի ու Վայքի տարածաշրջանները: Տարածքը կազմում է 2038 կմ^2 (հանրապետության տարածքի 7,8%), բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի դրությամբ՝ 68,8 հազ., 2000 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ 69,2 հազ., 2002 թ. – 56,0 հազ., իսկ 2003 թ. – 55,9 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1 կմ^2–ի վրա կազմում է 24 մարդ (հանրապետության ամենանոսր բնակեցված մարզն է), բնակչության 59%–ը բնակվում է գյուղական բնակավայրերում:

Վայոց ձոր մարզը հյուսիսային և հյուսիսարևմտյան մասում սահմանակից է Գեղարքունիքի, արևմտյան մասում՝ Արարատի, արևելյան մասում

Սյունիքի մարզերին: Հյուսիսարևելյան մասում այն սահմանակից է Քարվաճառի ազատագրված շրջանին (որը այժմ կոչվում է Շահումյանի շրջան և մտնում է ԼՂՀ կազմի մեջ), իսկ նրա հարավային սահմանը Հայաստանի Հանրապետության պետական սահմանն է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ:

Վայոց ձորի մարզի մակերևույթը տիպիկ լեռնային է, խիստ կտրտված գետահովիտներով և կիրճերով: Մակերևույթի մեծ մասը լերկ ժայռեր են: Նրա հյուսիսային մասով ձգվում է Վարդենիսի լեռնաշղթան, որի բարձր գագաթը Վարդենիս լեռն է (3522 մ): Նրա լեռնագագաթներից մեկով՝ Սուլեմայի լեռնանցքով (2410 մ բարձրությամբ), մարզը կապված է Գեղարքունիքի մարզի հետ, արևելյան մասում գտնվում են Ղարաբաղի բարձրավանդակը (հենց այդտեղ էլ գտնվում է Սառցալի լեռը՝ 3433 մ) և Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային մասը, որտեղ էլ գտնվում է այդ հատվածի ամենաբարձր լեռնագագաթը՝ Ամուլսար լեռը (2988մ բարձրությամբ):

Մարզի հարավային մասով ձգվում է Վայքի լեռնաշղթան, որի բարձր գագաթը Գոգի լեռն է (3120 մ): Մակերևույթի բարձրությունները տատանվում են 900 մ–ից (Արփայի հովտում), մինչև 3522 մ–ի սահմաններում (Վարդենիսի լեռ):

Մարզի տարածքում կան մեծ հետաքրքրություն ներկայացնող հրաբխային կոնաձև գագաթներ, լեռնահովիտներ: Անզուգական հետաքրքրություն է ներկայացնում Արփա գետի կիրճը՝ իր բազալտե սյունաշարերով:

Կլիման բնութագրվում է չոր, ցամաքային բնույթով: Բարձրադիր մասերում կլիման բարեխառն է, իսկ ավելի բարձր վայրերում՝ ցուրտ–լեռնային է: Այս մասերում ամռանը չափավոր տաք է, որոշ դեպքերում՝ խոնավ: Ձմռանը բարձրադիր մասերում, այդ թվում՝ Ջերմուկում, տեղում է առատ ձյուն, որի շերտի հզորությունը երբեմն հասնում է մեկ մետրի:

Մարզի ցածրադիր մասերը գետահովտային շատ նեղ շերտով բնութագրվում է կիսաանապատային պայմաններով (մինչև 1400 մ բարձրությունները): Այս լանդշաֆտը (որը ընդգրկում է Արփայի հովիտը) ձևավորվել է չոր, ցամաքային կլիմայի պայմաններում: Ձմեռը այստեղ չափավոր ցուրտ է, հաստատուն ձնածածկույթ հազվադեպ է լինում, ամռանը չոր է, շոգ: Հողերը գորշ լեռնային են, ոռոգման պայմաններում լավ բերք է ստացվում: Ավելի բարձրադիր մասերում (մինչև 1800 մ) տարածվում է չոր տափաստանը՝ դարչնագույն հողերով, բուսականությունը չորասեր է (ֆրիգանային): Բարձրադիր խոնավ մասերում առանձին հատվածներով ձևավորվել են լեռնատափաստանային լանդշաֆտները (տիպիկ օրինակը Ջերմուկ քաղաքի շրջակայքն է):

Այստեղի անտառներում գերակշռում է կաղնու ծառատեսակը, տարածված են գիհու նոսր թփուտները: Ավելի բարձրադիր մասերում տարածված է ալպյան խոտային բուսականությունը: Այս վայրերն էլ (հատկապես Վարդենիսի ու Զանգեզուրի լեռնաշղթաների բարձրադիր մասերը) հանդիսանում են ամառային արոտավայրեր և խոտհարքեր:

Մարզի տարածքով հոսող միակ գետը Արփան է՝ իր Եղեգիս և մի քանի ավելի մանր վտակներով: Ստորին հոսանքում Արփան հոսում է Նախիջևանի տարածքով, որտեղ էլ այն թափվում է Արաքս գետը:

Արփա գետի վերին հոսանքում՝ Ջերմուկ քաղաքի մոտ, կառուցված է Կեչուտի ջրամբարը (համանուն գյուղի տարածքում), որտեղից Արփա–Սևան 48 կմ երկարությամբ թունելով Արփայի ջուրը հոսում է դեպի Սևանա լիճ:

Արդեն ավարտվել է և շահագործման է հանձնվել Որոտան–Կեչուտ 21,5 կմ երկարությամբ թունելի կառուցումը, որով Որոտանի վերին հոսանքից (Սպանդարյանի ջրամբարից) տարեկան 160–165 մլն $մ^3$ ջուր կհոսի դեպի Կեչուտի ջրամբար, իսկ այնտեղից՝ դեպի Սևանա լիճ:

Մարզի տարածքում հայտնաբերված են մետաղային և ոչ մետաղային ռեսուրսների պաշարներ: Մետաղային ռեսուրսներից հատկապես նշանավորները բազմամետաղներն են, որոնց ուսումնասիրված հանքավայրը Ղազմայի հանքավայրն է Եղեգնաձորի տարածաշրջանում: Կան նաև ֆելզիտային տուֆի պաշարներ Մարտիրոսի հանքավայրում (Վայքի տարածաշրջանում), բազալտի, հրաբխային խարամի, կվարցային ու լեռնային ավազի պաշարներ: Սակայն Վայոց ձորի մարզը առավել հանրահայտ է հանքային բուժիչ ջրի խոշոր պաշարներով: Դրանց ելքերը շատ են, որոնցից համաշխարհային ճանաչում ունեցողները Ջերմուկի տաք հանքային ջրի աղբյուրներն են, որոնք ունեն գործնական կարևոր նշանակություն: Այդպիսի աղբյուրներ կան նաև Վայք բնակավայրի մոտ, Եղեգնաձորից մի փոքր դեպի հյուսիս և այլ վայրերում: Այսպիսով՝ ի դեմս տաք, բուժիչ հանքային ջրի պաշարների մարզը հանրահայտ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Ռեկրեացիոն ռեսուրսների համակարգում կարևոր են նաև Ջերմուկի և առհասարակ Արփա գետի հովտի զուլալ ջրերը, օդը, բնական հրաշալիքները, ինչպես նաև Նորավանքի, Գլաձորի, Գնդեվանքի ու այլ պատմաճարտարապետական անզուգական համալիրներ: Դրանք բոլորը միասին հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիայի ստեղծման կարևոր բազա են, որոնք դեռևս անբավարար են օգտագործվում:

Մարզի տարածքում կա 3 քաղաք և գյուղական 52 բնակավայր, որոնք միավորված են 41 համայնքներում: Բնակչության քանակով խոշորը մարզային կենտրոնն է՝ Եղեգնաձորը, (որի բնակչությունը 2000 թ. կազմել է 11,7 հազ., իսկ 2003 թ.՝ 8,2 հազ. մարդ): Մյուս քաղաքը Ջերմուկն է (որի տարածքի մեջ է մտած նաև Կեչուտ գյուղը): Ջերմուկի բնակչությունը 2000 թ.՝ 10,3 հազ. մարդ էր, իսկ 2003 թ.՝ 5,4 հազ. մարդ: Այն հանրահայտ է որպես կուրորտավայր, ունի շատ գեղատեսիլ դիրք: Բազմաթիվ սանատորիաներից բացի այստեղ գործում է «Ջերմուկ» հանքային ջրի մի քանի գործարան: Երրորդ քաղաքը Վայքն է (6,0 հազ. բնակիչ):

Արդյունաբերությունը Վայոց ձորում ներկայացված է ճշգրիտ մեքենաշինության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկությունների մասնաճյուղերով, շինանյութերի, սննդի ու թեթև արդյունաբերության ձեռնարկություններով: Մեքենաշինության մասնաճյուղերը տեղաբաշխված են Եղեգնաձորում և Վայքում ու որոշ գյուղերում (Մարտիրոս և այլ գյուղերում): Այդ երկու քաղաքներում կան նաև պանրի գործարաններ, գետափում գինու գործարան: Ջերմուկ քաղաքում այժմ գործում են հանրապետության հանքային ջրի խոշորագույն գործարանները, այդպիսի ձեռնարկություն կա նաև Վայք քաղաքում: Մարզի տարբեր վայրերում կան նաև գորգագործական փոքր ձեռնարկություններ, ինչպես նաև բազալտի, տուֆի, հրաբխային խարամի ու այլ տեսակի շինանյութերի արտադրության ձեռնարկություններ:

Վայոց ձորի մարզում այժմ կա արդյունաբերական 20 ձեռնարկություն, որոնք 1996 թ. տվել են 930 մլն դրամի համախառն արտադրանք: Ըստ որում, դրա 90%–ը բաժին է ընկնում Վայքի տարածաշրջանի 11 ձեռնարկություններին: Կարևոր է նշել, որ մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի ավելի քան 70%–ը բաժին է ընկնում հանքային ջրի գործարաններին:

2003 թ. մարզում թողարկվել է 3493,4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք: Ըստ որում, արդյունաբերական արտադրանքի վերջին տարիների աճը իրականացվել է հիմնականում ի հաշիվ սննդի արդյունաբերության արտադրանքի (հատկապես հանքային ջրերի ու ոգելից խմիչքների):

Գյուղատնտեսության զարգացման համար մարզն ունի շատ սահմանափակ հնարավորություններ, տարածքը համատարած քարաժայռեր են: Քարից մաքրված վարելահողերը այնքան փոքր կտորներով են, որտեղ շատ դեպքերում հնարավոր չէ մեքենաների օգտագործումը: Գյուղատնտեսական հողատեսքերը 1997 թ. տվյալներով կազմում են 75,9 հազ. հա, այդ թվում վարելահողերը՝ 20,6 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 3,3 հազ. հա, խոտհարքերը՝ 4,7 հազ. հա, արոտավայրերը՝ 47,3 հազ. հա:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է, որի համար նպաստավոր են արոտավայրերի համեմատաբար լայն տարածքները:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. կազմել է ավելի քան 20,4 հազ. գլուխ, մանր եղջերավորներինը՝ շուրջ 31,5 հազ. գլուխ (հանրապետության 7%-ը), խոզերինը՝ 1,0 հազ. գլուխ:

Մսի արտադրությունը 2003 թ. կազմել է 3,3 հազ. տ (հանրապետության 4,2%-ը), կաթինը՝ շուրջ 19,4 հազ. տ (հանրապետության 4,6%-ը), ձվինը՝ 11,6 մլն հատ (հանրապետության 5%-ը), բրդինը՝ 82 տ (հանրապետության 6%-ը):

Մարզի հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 2003 թ. կազմել են 3135 հա, համախառն բերքը՝ 37 հազ. տ: Կարտոֆիլի ցանքերը նույն տարում կազմել են 261 հա, համախառն բերքը՝ 4,6 հազ. տ, բանջարեղենի ցանքերը՝ 501 հա, համախառն բերքը՝ 5,96 հազ. տ:

Վայոց ձորի բնական պայմանները նպաստավոր են բարձրորակ պտղի ու խաղողի արտադրության համար, չնայած դրանց համար ևս տարածքները շատ սուղ են:

Պտղատու այգիների տարածքը կազմում է 3,3 հազ. հա (հանրապետության 9,6%-ը), համախառն բերքը տարեկան կազմում է 7,5 հազ. տ (հանրապետության 4,8%-ը): Խաղողի այգիների տարածքները շուրջ 770 հա է (հանրապետության 3,5%-ը), համախառն բերքը 3,6 հազ. տ (հանրապետության 2,2%-ը): Արտադրված ծիրանը, դեղձը, խաղողը բնութագրվում են բարձր շաքարայնությամբ:

Տրանսպորտի վճռական դեր խաղացող ճյուղը ավտոտրանսպորտն է: Արփայի կիրճով անցնող ավտոմայրուղով իրականացվում կապերը Արարատյան մարզի, իսկ մյուս կողմից՝ Որոտանի լեռնանցքով՝ Սյունիքի մարզի հետ: Իսկ Եղեգիսի կիրճով անցնող ավտոճանապարհով մարզը կապվում է Գեղարքունիքի մարզի հետ: Այդ ճանապարհը բարձրլեռնային է և անցնում է Սուլեմայի (Սելիմի) լեռնանցքով: Ձմռան ամիսներին երբեմն ձյունը այնքան առատ է լինում, որ այդ լեռնանցքային մասերում կապը երբեմն խախտվում է: Այժմ այդ ճանապարհը վերանորոգված է բարձր մակարդակով: Ջերմուկ քաղաքն ունի օդանավակայան, որի վերագործարկումը մեծ չափով կաշխուժացնի ոչ միայն այդ քաղաքի կուրորտային, այլ առհասարակ մարզի տնտեսական կյանքը: Ընդհանուր առմամբ, մարզի անզուգական հանքային ջրերի լայնորեն օգտագործման անհրաժեշտությունը պահանջում է նորից կյանքի կոչելու Սոքքից Ջերմուկ երկաթուղու կառուցման պլանը (որը սկսվել էր 1980–ական թվականներից): Իսկ հեռանկարում անհրաժեշտ է՝ Երասխավան–Ջերմուկ երկաթուղու կառուցումը:

Մարզն ունի գազամուղային և բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ լարերի ցանցեր:

Մարզի աշխատանքային ռեսուրսները 44,5 հազ. մարդ է, այդ թվում՝ ակտիվ բնակչությունը 38,2 հազ. մարդ, որից զբաղված են 35,9 հազարը, գործազուրկներ են 2,3 հազ. մարդ:

Հանրակրթական դպրոցների թիվը 50 է (12,6 հազ. աշակերտով), գրադարանների թիվը՝ 53, թանգարանները՝ 6, հիվանդանոցները՝ 6 (435 մահճակալով):

8.11 ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Ընդգրկում է Իջևանի, Նոյեմբերյանի, Տավուշի տարածաշրջաններն ու Դիլիջան քաղաքը:

Տարածությունը կազմում է 2704 կմ^2, բնակչությունը 1997 թ. հուլիսի 1–ի տվյալներով՝ 155,9 հազ., 2000 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ 156.8 հազ., 2002 թ.՝ 134,3 հազ., 2003 թ.՝ 134,3 հազ. մարդ: Բնակչության խտությունը 1կմ^2–ի վրա կազմում է 50 մարդ (հանրապետության միջին խտությունը 106 մարդ է): Մարզի բնակչության ավելի քան 60%–ը կազմում է գյուղական բնակչությունը: Մարզային կենտրոնը Իջևան քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 137 կմ է:

Տավուշի մարզը հարավային մասում սահմանակից է Գեղարքունիքի, իսկ արևմտյան մասում՝ Լոռու մարզին:

Մարզի հյուսիսային սահմանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Վրաստանի հետ, իսկ հյուսիսարևելյան սահմանագծի ամբողջ երկարությամբ ձգվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը Ադրբեջանի հետ:

Մակերևույթը կտրտված է գետահովիտներով և լեռնահովիտներով: Հարավային սահմանագծով ձգվում են Փամբակի և Արեգունու լեռնաշղթաները, վերջինիս զուգահեռ ձգվում է Միափորի լեռնաշղթան: Արևմտյան սահմանի երկարությամբ հյուսիսից հարավ ձգվում է Գուգարաց լեռնաշղթան իր բազուկներով:

Մարզի ռելիեֆի բարձրությունները տատանվում են 400–ից (Դեբեդի հովիտ) մինչև ավելի քան 3000 մ–ի (Հալաբ լեռ. 3016 մ) սահմաններում: Մարզի տարածքում ամենաբարձր կետերն են Հալաբ լեռը (3016 մ) Գուգարաց լեռնաշղթայի հարավային մասում և Չաթին լեռը (2244 մ) նույն լեռնաշղթայի կենտրոնական մասում: Հազարավոր տարիների ընթացքում լեռնային գետերը տարածքը բաժանել են բազմաթիվ գետահովիտ-

ների: Դրանցից համեմատաբար խոշորը Աղստևի գետահովիտն է, որը մարզի տնտեսական ամենակարևոր տարածքն է: Վերջինիս շարունակությունն է կազմում Գետիկի հովիտը:

Մակերևույթի լեռնային բնույթի ու կտրտվածության հետևանքով, այստեղ առաջացել են պարզ արտահայտված վերընթաց լանդշաֆտային գոտիներ իրենց յուրահատուկ բնական պայմաններով:

Կլիման ընդհանուր առմամբ չափավոր խոնավ է և հանդիսանում է հանրապետության ամենախոնավ մարզը: Հունվարյան միջին ջերմաստիճանը հարավային մասում կազմում է 6^0, հյուսիսային մասում (համեմատաբար ցածրադիր մասում) այն $+1^0$ է: Ընդհանուր առմամբ, հյուսիսարևելյան մասում կլիման չոր մերձարևադարձային բնույթ ունի, որտեղ ձյան ծածկույթ ամեն տարի չի առաջանում: Իսկ հարավային մասում, որը հյուսիսային մասի համեմատ խիստ լեռնային է, ձմեռը տևում է 3.4 ամիս և ամեն տարի առաջանում է ձյան հզոր շերտ:

Քանի որ մարզի տարածքի մեծ մասը ծածկված է անտառներով և հանդիսանում է հանրապետության անտառային հիմնական մարզը, ապա այստեղ գերակշռում են լեռնաանտառային գորշ և դարչնագույն հողերը: Համեմատաբար բարձրադիր մասերում տարածված են լեռնամարգագետնային, լեռնամարգագետնատափաստանային հողերը:

Այստեղ է գտնվում հանրապետության ամենանշանավոր արգելոցը՝ Դիլիջանի արգելոցը: Այն գտնվում է Աղստև և Գետիկ գետերի ավազանում, զբաղեցնում է 24,3 հազ. հա տարածք: Այստեղի հիմնական ծառատեսակներն են արևելյան հաճարենին, արևելյան կաղնին, վրացական կաղնին, բոխին, կովկասյան լորենին, կովկասյան սոճին: Մարզի տարածքում աճում են նաև կենի, կեչի, թխկի, գիհի, փռչնի ու այլ ծառատեսակներ: Անտառները մարզի տարածքում ընդգրկում են մինչև 2200 մ բարձրությունը, ցածրադիր մասերում՝ մինչև 1200 մ բարձրությունը: Գերիշխում են գիհու նոսր անտառները, որտեղ կան նաև կաղնու, փռչնու, ծառեր: Թփուտների տեսակներից տարածված են ցախակեռասը, մասրենին, մոշենին, դժնիկը: Անտառներում տարածված են վայրի պտղատու ծառատեսակները՝ հոնի, զկռի, տկողնի, տանձենի, խնձորենի, ընկուզենի և այլն:

Շատ բազմազան է կենդանական աշխարհը, հատկապես Դիլիջանի արգելոցի անտառներում՝ արջ, աղվես, նապաստակ, ազնիվ եղջերու և բազմազան թռչուններ:

Համեմատաբար ջրառատ գետը Դեբեդն է, որը իր ստորին հոսանքով հոսում է Նոյեմբերյանի տարածաշրջանով: Մյուս նշանավոր գետը Աղստևն էր իր Գետիկ և Ձողազ վտակներով: Համեմատաբար նշանավոր

են նաև Հախում և Տավուշ գետերը: Մարզի գետերը պատկանում են Կուրի ավազանին:

Չնայած վերջին տասնամյակներին Ձողազ, Տավուշ գետերի վրա կառուցվել են ջրամբարներ, սակայն փաստն այն է, որ դեռևս այս մարզի ջրային ռեսուրսները բավարար մակարդակով չեն օգտագործվում, մինչդեռ դրա կարիքը խիստ զգացվում է բոլոր բնագավառներում:

Մարզն ունի բազմազան օգտակար հանածոներ, որոնք նույնպես բավարար չեն օգտագործվում կամ առհասարակ չեն օգտագործվում: Երկաթի հանքաքարի պաշարներ են հայտնաբերված Կողբի հանքավայրում, բետոնիտների խոշոր պաշարներ կան Սարիգյուղի հանքավայրում (Իջևանի տարածաշրջան), ֆելզիտային տուֆի պաշարներ կան Նոյեմբերյանի տարածաշրջանում, դոլոմիտի, մարմարի պաշարներ՝ Իջևանի տարածաշրջանում: Այստեղ կան նաև կիսաթանկարժեք քարերի պաշարներ, հանքային ջրի աղբյուրներ, որոնցից այժմ գործնական նշանակություն ունեն Դիլիջանի մոտ գտնվող աղբյուրը, հեռանկարային է Իջևանի մոտ գտնվող աղբյուրը:

Տավուշի մարզը իր մեղմ կլիմայական պայմաններով, սոճու, եղևնու անտառներով, մաքուր օդով, զուլալ գետերով և աղբյուրներով դարձել է հանրապետության կուրորտային ու հանգստյան հիմնական ռեգիոններից մեկը: Դիլիջանը իր անզուգական արգելոցով, անտառի մեջ գտնվող Պարզ լճով հանրապետության բնակչության ամենասիրված հանգստի գոտին է:

Մարզի տարածքում կա 4 քաղաք և գյուղական 61 բնակավայր, որոնք միավորված են գյուղական 58 համայնքներում:

Քաղաքներից բնակչության քանակով խոշոր է ***Դիլիջանը***, որի բնակչության թիվը 2000 թ. եղել է 30,9 հազ., 2003 թ.՝ 16,1 հազ. մարդ: Հանրապետության ոչ մի քաղաք այսպիսի կարճ ժամանակահատվածում բնակչության այսքան նվազում չի ունեցել: Այս հանգամանքը բացատրվում է աշխատատեղերի բացակայությամբ, կրճատմամբ:

Դիլիջանը գտնվում է Աղստև գետի վերին հոսանքում, այն ունի անզուգական գեղատեսիլ դիրք, շրջապատված է խիտ անտառներով, ունի շատ մաքուր, օզոնով հարուստ օդ, մաքուր ջրեր, այդ թվում հանքային ջրի աղբյուր և հանդիսանում է շատ լայն ճանաչում ունեցող կուրորտավայր ու հանգստավայր: Բացի «Դիլիջան» հանքային ջրի գործարանից, այստեղ գործում է «Իմպուլս» ճշգրիտ գործիքաշինական գործարանը, ունի կահույքի ֆաբրիկա, կաթի վերամշակման ու կաթնամթերքի արտադրության գործարաններ:

Իջևանի (մարզային կենտրոնի), բնակչությունը 2000 թ. եղել է 20,8 հազ. մարդ, 2003 թ.՝ 20,3 հազ. մարդ: Այն գտնվում է Աղստև գետի ափին,

նրա միջին հոսանքում: Իջևանը Հայաստանի առևտրական հնագույն ճանապարհներից մեկի հանրահայտ Իջևանատունն է եղել: Ունի գեղատեսիլ դիրք, շրջապատված է անտառներով, հանդիսանում է նշանավոր հանգստավայր: Սակայն այժմ այն նաև արդյունաբերական կենտրոն է: Քանի որ նրա շրջակայքը հարուստ է անտառներով, ապա այստեղ կառուցված արդյունաբերական առաջին ձեռնարկությունը փայտամշակման կոմբինատն է: Հետագայում այստեղ կառուցվել է հանրապետության գորգագործության խոշորագույն կոմբինատը: Ունի նաև փայտամշակման սարքերի արտադրության, գինու, պանրի, հացի գործարաններ, շինանյութերի կոմբինատ:

Իջևանում գործում է Երևանի պետական համալսարանի մասնաճյուղը:

Վերջին ժամանակներում քաղաքի կարգավիճակ են ստացել ***Բերդը*** (որը 2000թ. ունեցել է 11,8 հազ., իսկ 2003 թ.՝ 8,7 հազ բնակիչ) և *Նոյեմբերյանը* (որը 2000 թ. ունեցել է 6,5 հազ., իսկ 2003 թ.՝ 5,5 հազ. բնակիչ):

Գյուղական բնակավայրերից բնակչության քանակով խոշորներն են՝ Կողբը (5457 բնակիչ), Հաղարծինը (4740 բնակիչ), Աչաջուրը (4365 բնակիչ), Բարեկամավանը (4161 բնակիչ), Ազատամուտը (3700 բնակիչ), Բագրատաշենը (3683 բնակիչ), Այգեհովիտը (3387 բնակիչ), Արծվաբերդը (3186 բնակիչ) և այլ գյուղեր:

Արդյունաբերության ճյուղերից մարզում որոշ չափով զարգացած է ճշգրիտ մեքենաշինությունը, (որի նշանավոր ձեռնարկությունը Դիլիջանի «Իմպուլս» գործարանն է, որը այժմ վերանորոգվում է վերապրոֆիլավորվում է, կթողարկի մինի տրակտորներ), շինանյութերի արդյունաբերությունը, հատկապես ֆելզիտային տուֆի արդյունահանումը (Նոյեմբերյանի տարածաշրջանում) և մարմարի և կրաքարի արդյունահանումը (Իջևանի տարածաշրջան):

Մարզը նշանավոր է փայտամշակման արդյունաբերությամբ, որի ձեռնարկություններից խոշորները գտնվում են Իջևանում, Դիլիջանում, Նոյեմբերյանում:

Նախկին ԽՍՀՄ–ում շատ հանրահայտ էր Իջևանի բենտոնիտի կոմբինատը, որը Սարիգյուղի բենտոնիտային կավի բազայի վրա արտադրում է բենտոնիտային փոշի: Իսկ վերջինս լայն սպառում ունի նավթաարդյունաբերության, քիմիական արդյունաբերության և այլ ճյուղերում:

Գորգագործությունը թողարկվող արտադրանքի ծավալով առաջնակարգ տեղ ունի՝ հանձինս Իջևանի խոշոր կոմբինատի: Սննդի արդյունաբերությունը ներկայացված է գինու (Այրումի և Իջևանի գործարաններ), պահածոների (Նոյեմբերյանի, Բերդի գործարաններ), պանրի, հացի, հանքային ջրի (Դիլիջանի գործարան) արտադրությամբ: Ընդհանուր առմամբ մարզի տարածքում կա

արդյունաբերական 33 ձեռնարկություն, որոնցից 14–ը՝ Իջևանի, 7–ը՝ Տավուշի, 5–ը՝ Նոյեմբերյանի տարածաշրջաններում, 7–ը՝ Դիլիջան քաղաքում:

1996 թ. մարզում թողարկվել է 1012 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որի ավելի քան 70%–ը բաժին էր ընկնում Իջևանի տարածաշրջանին (Դիլիջան քաղաքի հետ): 2003 թ. մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 3576,2 մլն դրամ: Այս աճը հիմնականում տեղի է ունեցել փայտամշակման ու հանքարդյունաբերության աճի շնորհիվ:

Համախառն արտադրանքի թողարկման ծավալով *մարզի* ***գյուղատնտեսությունը*** մեծ չափերով գերազանցում է արդյունաբերությանը: 1996 թ. արտադրվել է 21999 մլն դրամի գյուղատնտեսական արտադրանք (հանրապետության 6,4%-ը): Մարզի գյուղատնտեսության զարգացման պայմանները նպաստավոր են: Գյուղատնտեսական հողատեսքերը 1997 թ. կազմել են 98,8 հազ. հեկտար, այդ թվում վարելահողերը՝ 28,8 հազ. հա, բազմամյա տնկարկները՝ 6,8 հազ. հա, խոտհարքերը՝ 15,0 հազ. հա, արոտավայրերը՝ 48,9 հազ. հա: Ներկայումս մարզի բուսաբուծության կառուցվածքում կարևոր տեղ ունեն հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի արտադրությունը, պտղաբուծությունն ու խաղողագործությունը: Մինչև վերջին ժամանակներս այդ ռեգիոնը առաջնակարգ տեղ էր զբաղեցնում ծխախոտագործության բնագավառում:

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 2003 թ. կազմել են 11350 հա, համախառն բերքը 20,8 հազ. տ (հանրապետության 5,4%-ը), կարտոֆիլի ցանքերը ավելի քան 2,3 հազ. հա (հանրապետության 9%-ը), համախառն բերքը շուրջ 27,8 հազ. տ (հանրապետության 5,9%-ը), բանջարեղենի ցանքերը 1,5 հազ հա. է, համախառն բերքը՝ շուրջ 7,5 հազ. տ:

Մարզը հայտնի է դեղձի, ծիրանի, խնձորի, տանձի ու այլ պտուղների արտադրությամբ: Դրանց զբաղեցրած տարածքները կազմում են 4.5 հազ. հա (հանրապետության 13%-ը), համախառն բերքը ավելի քան 8.4 հազ. տ (հանրապետության 11%-ը):

Մարզի պայմանները ավելի լայն են ***անասնապահության*** զարգացման համար:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թ. եղել թ 37,2 հազ. (հանրապետության 8%-ը), մանր եղջերավոր անասուններինը՝ 33,2 հազ. գլուխ (հանրապետության 6%-ը): Հատկապես շատ նպաստավոր են խոզաբուծության պայմանները՝ կապված պտղատու անտառների հետ: Խոզերի գլխաքանակը շուրջ 19 հազ. է (հանրապետության 27%-ը): Սակայն անասնապահության համար շատ նպաստավոր արոտավայրերը, խոտհարքերը, անտառները դեռևս անբավարար են օգտագործվում:

Մսի արտադրությունը 2003 թ. կազմում է 6,6 հազ. տ (հանրապետության 8%-ը), կաթինը՝ 32,2 հազ. տ (հանրապետության 7,5%-ը), ձվինը՝ 23,6 մլն հատ, բրդինը՝ 68 տ:

Ընդհանուր առմամբ մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 2003 թ. եղել է 23,5 մլրդ դրամ, որը կազմել է (հանրապետության ամբողջ ծավալի 5,7%-ը):

Տրանսպորտի վճռական դեր խաղացող ճյուղը ավտոտրանսպորտն է: Հատկապես վճռական դեր ունի Սևան–Դիլիջան–Իջևան–Ազատամուտ–Նոյեմբերյան մայրուղին, որտեղից այն դուրս է գալիս դեպի Վրաստան: Կարևոր է նաև Իջևան–Բերդ ավտոճանապարհը: Կառուցված է նաև Հրազդան–Իջևան երկաթուղին, սակայն այդ շատ կարևոր ուղին դեռևս անգործության է մատնված:

Դրսից Հայաստան մտնող գազամուղը անցնում է Տավուշի մարզով, որտեղ այն ունի իր ճյուղավորությունները:

Տավուշի մարզը, հանձինս Դիլիջանի անզուգական անտառների, հանքային ջրի, մաքուր օդի, ինչպես նաև մարզի մյուս վայրերի գեղատեսիլ անտառների, գետերի, Պարզ լճի, պատմաճարտարապետական բազմաթիվ կոթողների, կարող է ունենալ կուրորտային, հանգստյան ու զբոսաշրջության իր բարձր զարգացած ինդուստրիան: Սակայն այդ լայն հնարավորությունները խիստ անբավարար են օգտագործվում:

Մարզն ունի կրթության, մշակույթի, առողջապահության լայն ցանց: Այստեղ կա հանրակրթական 81 դպրոց (շուրջ 25 հազ. աշակերտներով), միջնակարգ մասնագիտական 4 հաստատություն (680 սովորողներով), բուհի մեկ մասնաճյուղ (Իջևանում է Երևանի պետական համալսարանի մասնաճյուղը), 94 գրադարան, 6 թանգարան, 10 հիվանդանոց (880 մահճակալով):

Աշխատանքային ռեսուրսները կազմում էին 90,3 հազ. մարդ, տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ 76,6 հազ. մարդ, այդ թվում զբաղվածները՝ 70,4 հազ. մարդ, պաշտոնապես գրանցված գործազուրկները՝ 6,2 հազ. մարդ:

ԳԼՈՒԽ IX

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9.1. ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Այժմյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը զբաղեցնում է պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի՝ Արցախի տարածքի լեռնային մասը: Արցախը հին Հայաստանի ամենաընդարձակ նահանգներից մեկն էր, որը տարածվում էր Աղստևի ավազանից, Փոքր Կովկասյան լեռնաշղթայի արևելյան լեռնափեշերով հարավարևելյան ուղղությամբ, մինչև Արաքս գետի հովիտը: Արցախ նահանգը ունեցել է 11,5 հազ. կմ^2 տարածք:

Առաջին անգամ Արցախը Ուրտեխե կամ Ուրտեխինի անվանումներով հիշատակվում է Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններում:

Հին Հունական, հռոմեական, ինչպես նաև միջնադարյան հայ պատմիչների վկայությամբ՝ հնուց ի վեր Արցախը և Ուտիքը կազմել են Մեծ Հայքի անքակտելի մասը: Այդ իրողությունը հավաստող փաստագրական հարուստ նյութեր և տեղեկություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պլինուսի, Պտղեմեոսի, Մ. Խորենացու, Փ. Բյուզանդի, Ագաթանգեղոսի և հայ ու օտարազգի շատ այլ պատմիչների գործերում:

Ընդ որում, պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգներն ընդգրկում են Կուր գետի միջին ստորին հոսանքների աջափնյա ամբողջ տարածքը՝ հարավում հասնելով մինչև Արաքսի հովիտ: Ուտիքը՝ Մեծ Հայքի տասներկուերորդ նահանգը, ձգվում էր Արցախի հյուսիսարևելյան ու արևելյան ամբողջ սահմանագծով և զբաղեցնում Կուր և Արաքս գետերի՝ Միջագետքի հիմնականում հարթավայրային մասը: Իսկ Արցախը՝ Մեծ Հայքի տասներորդ նահանգը, զբաղեցնում էր Կուր և Արաքս գետերի միջև ընկած հարթավայրի զգալի մասը և դրանից դեպի արևմուտք ընկած՝ Աղստև

գետավազանից մինչև Արաքսի հովիտը ձգվող լեռնային և նախալեռնային ամբողջ տարածքը:

Այսպիսով՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած ամբողջ տարածքը Սյունիքից արևելք զբաղեցնում էին Արցախ և Ուտիք հայկական նահանգները, որոնք Կուր գետով բաժանված էին Աղվանքից: Աղվանքը սերտ կապերի մեջ է եղել Հայաստանի հետ: Ընդ որում, Հայաստանը մեծ ազդեցություն էր թողնում նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի վրա: Նրանց զորքերը, զենքերի տեսակները շատ նման էին հայկականին: Հայտնի է, որ աղվանները Տիգրան Մեծի բանակում կռվել են հռոմեական զորքերի դեմ: 370-ական թվականներին նրանք ընդունել են քրիստոնեություն: Աղվանական գրերն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Մեծ Հայքի տարածքը 387 թվականին Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո Արցախը շարունակում էր մնալ Հայաստանի կազմում մինչև 428 թվականը: Դրանից հետո Պարսկաստանը Արցախ և Ուտիք հայկական նահանգները միացրել է Աղվանքին ու ստեղծել, այսպես կոչված, Աղվանք մարզպանություն: Ընդ որում, մարզպանական Աղվանքի կազմի մեջ մտած հայկական նահանգներում ակտիվորեն գոյատևել են հայ իշխանները: Իսկ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Արցախը (ինչպես նաև Ուտիքը և Աղվանքը) մտցվել են խալիֆայության ստեղծած Արմենիա փոխարքայության մեջ:

Այսպիսով, չնայած պատմական բարդ իրավիճակին, Արցախը միշտ պահպանել է իր հայկական դեմքն ու ինքնուրույնությունը:

Բագրատունիների թագավորության հիմնադրումից սկսած (885թ.) Արցախը, ինչպես նաև Ուտիքը, մտել են հայկական այդ թագավորության մեջ:Հայկական և օտար բոլոր աղբյուրները վկայում են, որ չնայած պատմական տարբեր ժամանակներում Արցախը տարբեր անվանումներ է ունեցել, սակայն միշտ եղել է Հայաստանի անբաժանելի մասը և մշտապես՝ հայաբնակ: Եվ միայն XI դարի կեսերից սկսած, արոտային անասնապահության համար հարմար, Կուր-Արաքսյան դաշտավայրի արևելյան մասն են թափանցել Միջին ու Կենտրոնական Ասիայից եկած քոչվոր անասնապահները՝ սելջուկ-թուրքերը և մոնղոլ-թաթարները: Սրանց հետնորդներն էլ, որոնք այժմ իրենց անվանում են ադրբեջանցիներ, արմատավորվել են այստեղ, զբաղվել անասնապահությամբ: Իսկ շատ ավելի ուշ նրանց մի մասն էլ սողոսկել է Արցախի հարթավայրային հատվածները և դարձյալ զբաղվել ոչխարաբուծությամբ: Տարածքային որոշ տարբերություններով՝ հայկական այդ նահանգը՝ Արցախը, պատմական տարբեր ժամանակաշրջաններում

կոչվել է *Առան, Արցախ, Արդախ, Արձախ, Արձախա աշխարհ, Արցախամար աշխարհ, Խաչեն, Խաչենք, Փոքր Սյունիք, ավելի ուշ՝ Ղարաբաղ:*

IX–XIII դարերում Արցախը կոչվել է իր ամենախոշոր գավառի անունով՝ *Խաչեն* կամ *Խաչենք*, իսկ հետագայում՝ *Ղարաբաղ*: IX դարի երկրորդ կեսից, երբ Հայաստանը նորից նվաճեց իր անկախությունը, Արցախում արդեն կազմավորվել էին մի քանի իշխանություններ, որոնցից ամենաընդարձակն ու հզորը Խաչենի իշխանությունն էր: XVI–XVII դարերում Ղարաբաղում պահպանվել էին հինգ իշխանություններ՝ Խաչենի, Ջրաբերդի, Դիզակի, Վարանդայի, Գյուլիստանի: Այդ պատճառով դրանք միասին կոչվում էին Խամսայի (այսինքն՝ հինգ) մելիքություններ:

Հայ խոշոր պատմաբան Լեոյի բնութագրմամբ՝ Հայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիսարևելյան ծայրը, որ սահման ունի Կուր գետի հովիտը հյուսիսում և Արաքս գետի հովիտը՝ հարավում, ընդարձակ առումով այնպես, ինչպես հասկացվել է վերջին երեք դարերի ընթացքում, կարելի է ամփոփել մի ընդհանուր անվան տակ՝ Ղարաբաղ: Ամբողջ այդ տարածությունը, հյուսից հարավ և արևմուտքից արևելք, լցված է լեռնային զանգվածներով: Արևելյան կողմից լեռնակուտերի այս մեծ աշխարհն իջնում է այլ ընդարձակ տափաստանի վրա, որը կոչվում է Միլի կամ Ղարաբաղի դաշտավայր, իսկ արևմուտքում նրա պայմանական եզրագիծ կարելի է ընդունել այն ջրբաժան բարձրությունները, որոնք Սևանա լճի արևելյան կողմում ձգվում են հյուսիսից դեպի հարավ՝ միանալով Դարալագյազի լեռներին: Հարավում այս լեռներից բաժանվում է և դեպի արևելք գնում Բարգուշատի շղթան, որը Ղարաբաղի հարավարևմտյան և հարավային սահմանագիծն է կազմում՝ բաժանելով նրան Նախիջևանի գավառից:

Արցախի նահանգի մակերևույթը, խիստ կտրտված լինելով անդնդախոր ձորերով և գետահովիտներով, դեռևս հնուց բաժանված է եղել 12 գավառների: Դրանք են՝ ***Մյուս Հաբանդ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կվենք, Հարձլանք, Մուխանք, Պիանք, Պարզկանք, Սոթք, Փառնես, Կողտ:*** Չնայած այդ բաժանումներին ու տեղական ներքին յուրահատկություններին՝ պատմական Հայաստանի այս նահանգը ազգային, էթնիկական, տնտեսական գործունեության, կենցաղային սովորությունների ընդհանրության, արտաքին թշնամիների հարձակումներից միասնաբար պաշտպանվելու առումներով հիրավի խիստ ընդգծված և բնորոշ ամբողջություն է եղել: Այս ընդհանրությունների շնորհիվ Արցախ-Ղարաբաղի հայությունն իր լեռնաստանը դարեր շարունակ դարձրել էր մի միասնական կուռ ամրոց, որն անմատչելի էր հաճախակի հարձակվող արտաքին թշնամիների համար:

Անդրկովկասի արևելյան տափաստաններից այդտեղ սողոսկված թաթար–մոնղոլների հաճախ կրկնվող արշավանքների պատճառով Արցախ նահանգը ժամանակ առ ժամանակ զրկվում էր առևտրատնտեսական արտաքին կապի հնարավորությունից, բայց ներքին համախմբվածությունը, ազգային–ազատագրական բուռն ձգտումը հայ ժողովրդի այս հատվածի համար միշտ հաղթանակող է եղել:

Եթե պատմական Հայաստանի մյուս նահանգներում պարսիկների, արաբների, թաթար–մոնղոլների և մյուս թշնամի ցեղերի արշավանքի հետևանքով, ինչպես Լեոն է նշում, ջնջվում, վերանում էին ազգային իշխանության վերջին մնացորդները, ապա Ղարաբաղի հայությունը շարունակում էր պահպանել իր անկախ իշխանությունը: Նույնիսկ շրջապատից կտրված լինելու դեպքերում էլ, այստեղ ստեղծվել ու զարգացել է սեփական միջոցներով գոյատևող տնտեսությունը, լեռնային արդյունագործությունը: Ինքնապահպանման բնազդը, իրոք, այս լեռնաշխարհի բնակչության հաղթանակի ու գոյատևման վճռորոշ հատկանիշն է եղել: Տնտեսավարման ու կենցաղավարման յուրահատկությունները դարավոր արմատներ ունեն այստեղ և մինչև այժմ էլ սրբությամբ կիրառվում ու հաշվի են առնվում:

Պահպանելով իր լեռնաստանի անկախությունը՝ Արցախ–Ղարաբաղի հայությունը, որպես մայր հայրենիքի անբաժան մաս, միաժամանակ ամենակտիվ մասնակցություն է ունեցել օտար բռնակալներից ամբողջ Հայաստանը ազատագրելու պայքարում:

Ինչպես վկայում են պատմական փաստերը, ղարաբաղցիները բացառիկ քաջություն և անընկճելի հաստատակամություն են ցուցաբերել իրենց հայրենիքը թշնամիների անդադար հարձակումներից պաշտպանելու գործում: Հանրահայտ է, որ Արցախի այրուձին ակտիվ մասնակցություն է ունեցել Ավարայրի ճակատամարտին: IX դարում արաբական մեծաթիվ զորքը երկարատև պաշարման ընթացքում էլ չի կարողացել գրավել Քթիշ (այժմյան Հադրութի շրջանում) ամրոցը: Հայերի և նրանց իշխան Եսայի Երանշահիկի քաջություններից ապշած՝ արաբները ստիպված են եղել դադարեցնել ամրոցի պաշարումն ու նահանջել: Այսպիսի բազմաթիվ օրինակներից է Ղարաբաղի մելիքների ու նրանց ջոկատների ակտիվ մասնակցությունը Դավիթ–Բեկի մղած ազատագրական պայքարին: Արժանահիշատակ է նաև Ղարաբաղի կամավոր ջոկատների անօրինակ սխրանքը Սարդարապատի ճակատամարտում(1918թ.), որտեղ վճռվեց հայ ժողովրդի բախտը, և նա ազատագրվեց թուրք բռնակալներից:

Ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի առաջադեմ մտավորականությունը մեր լեռնաշխարհի փրկությունը օտար բռնակալների հաճախակի ասպատակություններից միշտ կապել է ռուս ժողովրդի հետ: Եվ պատահական չէ, որ դեռ շատ հնուց զգալի թվով ղարաբաղցիներ բնակություն են հաստատել Ռուսաստանի ընդարձակ տարածության տարբեր մասերում, հատկապես Մոսկվայում, Հյուսիսային Կովկասում, Ստորին Պովոլժիեում, հետագայում նաև Պետերբուրգում և այլուր: Այս գործընթացը հատկապես ակտիվացել է Պետրոս I թագավորի և Եկատերինա II թագուհու ժամանակ:

Հատկապես Պետրոս I–ը լայն արտոնություններ է տվել հայերին՝ Ռուսական կայսրության բոլոր վայրերում առևտրի, արհեստագործության, երկրագործության զանազան բնագավառներում: Կան պատմական բազմաթիվ փաստեր այն մասին, որ ղարաբաղցի հայերը Հյուսիսային Կովկասում կարևոր դեր են խաղացել խաղողագործության, շերամապահության, մետաքսագործության, գինեգործության հիմնադրման գործում: Նրանք մետաքսագործական ձեռնարկություններ են ստեղծել նաև Աստրախանում և Պովոլժիեի մյուս վայրերում: Այդ վայրերում, ինչպես նաև Մոսկվայում, Պետերբուրգում ղարաբաղցի վաճառականներն ունեցել են իրենց առևտրական կենտրոնները: Նրանք զգալի դեր են խաղացել Ռուսաստանի ոչ միայն ներքին, այլև միջազգային առևտրի զարգացման գործում: Կարևորվում է նաև նրանց դերը մի կողմից Ռուսաստանի, մյուս կողմից՝ Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի միջև առևտրական կապեր հաստատելու և զարգացնելու գործում:

Ղարաբաղցի վաճառականներն ակտիվորեն մասնակցել են Նովգորոդի ու Նիժնի Նովգորոդի միջազգային տոնավաճառներին:

Ղարաբաղի մելիքները նամակագրական, դիվանագիտական հարաբերություններ են ունեցել Պետրոս I–ի և Ռուսաստանի մյուս խոշոր գործիչների հետ: Նրանք մեծ ջանք են գործադրել Ռուսաստանի հետ ոչ միայն բարեկամական կապերի մեջ մտնելու, այլև՝ միավորվելու Ռուսաստանին: Հայ ժողովրդի մեծ զավակ Իսրայել Օրին Գանձասարի հայտնի ժողովից հետո Ղարաբաղի մելիքների լիազորությամբ մեկնում է Գերմանիա, այնուհետև Ռուսաստան՝ նրանց օգնությամբ Հայաստանի ազատագրության վերաբերյալ իր ծրագիրը իրականացնելու նպատակով:

Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի հետ միասին, ինչպես նաև նրանցից հետո այդ լեռնաշխարհի ազատագրության, այն Ռուսաստանին միավորելու համար շատ ջանքեր են գործադրել Ղարաբաղի հայրենասեր մելիքները: Այդ նպատակով նամակագրական կապեր են հաստատել ցարական արքունիքի, պետական ու ռազմական մեծ գործիչների հետ, բազմիցս պատվիրակություններ ուղարկել բանակցությունների համար: Ի դեպ, Ղարաբաղի

գործիչներն այդպիսի կապեր էին ստեղծել նաև ռուս մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովի հետ:

Պետրոս Ի–ի ու առհասարակ Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծելու և ռուսական զորքերի օգնությամբ Ղարաբաղը ազատագրելու հարցում մեծ գործ է կատարել Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանը: Նա ժամանակի ամենազարգացած հայ գործիչներից մեկն էր և ուներ ռուսահայաց քաղաքականություն: 1718 թ–ին Պետրոս Ի–ին ուղարկված նամակում նա Ղարաբաղի բոլոր մելիքների անունից հավաստիացրել է, որ պատրաստ են իրենց ուժերի համեմատ ընդառաջ գնալ, երբ Պետրոսի հզոր թագավորությունը ցանկանա շարժվել դեպի իրենց կողմերը: Հիրավի, 1722 թ. հայ մելիքները 12 հազար զինվորներով սպասում էին Գանձակի մոտ՝ ռուսական զորքին միանալու պայմանավորվածության համաձայն:

Սակայն այդ ժամանակահատվածում, Ռուսաստանի արտաքին քաղաքականության և ռազմական իրավիճակի փոփոխման հետ կապված, Պետրոս Ի–ը չի շարունակում Անդրկովկասը պարսկաթուրքական լծից ազատագրելու գործողությունները: Օգտվելով այդ հանգամանքից՝ թուրքերն ու պարսիկները նորից են սկսում ասպատակությունները: Հենց այդ ժամանակ էլ հայերը ռուսներից առաջին հուսախաբությունն են ապրում: Այդ ժամանակաշրջանում Արցախի հինգ մելիքություններից յուրաքանչյուրում ստեղծվում են ամրակուռ բերդեր (սղնախներ), որտեղ և կենտրոնացվում են օտար նվաճողների դեմ պայքարի հիմնական ուժերը: Նրանց ռազմական գործողությունները ղեկավարել են Եսայի Հասան–Ջալալյանը և Ավան Յուզբաշին, որոնց հրամանատարությամբ ղարաբաղցիները 1720–ական թվականներին չորս անգամ թուրքերին ջարդել ու ետ են շպրտել: 1735 թ. պարսկական զորքերը նորից են փորձում հարձակվել Ղարաբաղի վրա, սակայն, հանդիպելով հայկական հինգ մելիքությունների զինված դիմադրությանը, նահանջում են: Պարսկաստանը ստիպված է լինում ճանաչել Ղարաբաղի անկախությունը:

1795թ. պարսկական զորքը Ղաջար խանի գլխավորությամբ հարձակվում է Ղարաբաղի վրա, պաշարում Շուշի քաղաք– ամրոցը: Սակայն ղարաբաղցիների համառ դիմադրության շնորհիվ պարսիկները դարձյալ նահանջում են: Որոշ ժամանակ անց ավելի մեծաթիվ բանակով նա նորից է հարձակվում Ղարաբաղի վրա, մեծ դժվարությամբ գավթում Շուշին ու գազանաբար հաշվեհարդար տեսնում տեղի բնակչության հետ՝ ռուսական կողմնորոշման համար: Չնայած դրան՝ ղարաբաղցիները շարունակում են պայքարը: Պարսիկ բռնակալը սպանվում է Շուշիում, իսկ նրա զորքը փախչում է Ղարաբաղից:

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, հատկապես ռուս–թուրքական պատերազմների ժամանակաշրջանում, Անդրկովկասի ողջ հայությունը ռուս զինվորներին դիմավորում է որպես ազատարարի ու բազմակողմանի աջակցում նրանց: Ռուսական բարձրաստիճան ղեկավարությունը մինչև Արևելյան Հայաստանի ազատագրումն էլ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Ղարաբաղի նկատմամբ, որի բազմաթիվ զավակներ անձնվիրաբար ծառայում էին ռուսական պետական, տնտեսական, ռազմական պատասխանատու պաշտոններում:

1804 թվականին, երբ ռուսական զորքերը Վրաստանում ամրապնդվելուց հետո շարժվում են դեպի Անդրկովկասի արևելյան մասը ու վերջնականապես գրավում Գանձակը, իր անկախությունը դեռևս պահպանած Ղարաբաղը կամավոր միանում է Ռուսաստանին: Իրականանում է Արցախ – Ղարաբաղ աշխարհի հայության երազանքը:

Այսպիսով՝ 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Արևելյան Հայաստանի հյուսիսարևելյան մի շարք գավառների հետ միասին Ռուսաստանին է միավորվում նաև Ղարաբաղի խանությունը:

Դրանից հետո Ղարաբաղի խանությունը (ինչպես նաև Բաքվի, Գյանջայի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի խանությունները) որպես վարչական միավոր վերացվում է: Ռուսաստանի կողմից Անդրկովկասում ստեղծված վարչական նոր կառուցվածքով, 1867 թվականից Լեռնային Ղարաբաղը մտցվում է Ելիզավետպոլի (նախկին Գանձակի) նահանգի մեջ, որպես առանձին գավառ (Շուշիի գավառ):

Ռուսաստանը Պարսկաստանի և Թուրքիայի համեմատությամբ առաջադեմ երկիր էր, հետևաբար Ղարաբաղի միացումը Ռուսաստանին շատ կարևոր դեր խաղաց այդ լեռնաշխարհի բնակչության քաղաքական, սոցիալ–տնտեսական, մշակութային զարգացման գործում: Համեմատաբար նպաստավոր և խաղաղ պայմաններ ստեղծվեցին տնտեսական կյանքի աշխուժացման համար: Շուշի քաղաքը դարձավ առևտրի, կրթության ու մշակույթի նշանավոր կենտրոն:

Ղարաբաղի վաճառականները կապեր ստեղծեցին Ռուսաստանի ու եվրոպական երկրների նշանավոր քաղաքների հետ: Ղարաբաղում ձևավորվեցին արհեստագործական, մետաքսագործական, գորգագործական, գինու–սպիրտի արտադրության մանր ձեռնարկություններ:

Շուշին դառնում է Անդրկովկասի հայ մշակույթի ու կրթության նշանավոր կենտրոն: Այստեղ բացվում են դպրոցներ, թատրոն, հիմնվում է տպարան, տպագրվում են թերթեր: Ղարաբաղցի շատ երիտասարդներ կրթության են մեկնում Մոսկվա, Պետերբուրգ, Կիև, Խարկով, Բեռլին, Փարիզ,

Լոնդոն, Քեմբրիջ և եվրոպական այլ քաղաքներ: Նրանցից շատերն էլ դառնում են ականավոր գիտնականներ, արվեստագետներ, ռազմական գործիչներ: Այնուհանդերձ ցարական Ռուսաստանը ինչպես ծայրամասային մյուս շրջանների, այնպես էլ Անդրկովկասի նկատմամբ գաղութային քաղաքականություն էր վարում: Հատկապես 1880–ական թթ. սկսած՝ Ղարաբաղում ուժեղանում են գյուղացիների դժգոհությունները, պարբերաբար տեղի են ունենում հուզումներ ինքնակալության և տեղի կալվածատերերի դեմ: Այդ ժամանակվանից զգալի թվով ղարաբաղցի գյուղացիներ աշխատանք գտնելու նպատակով մեկնում էին Բաքու, Թիֆլիս, Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս և այլ շրջաններ: Բաքվում 1918 թ. մայիսին ստեղծվում է մուսավաթական կառավարություն: Ադրբեջանի պատմության մեջ ստեղծված այդ առաջին պետությունը հենց առաջին օրերից վարում է խիստ ազգայնամոլական, հակահայկական քաղաքականություն՝ ձգտելով իր ազդեցությունը տարածել նաև Արցախ–Ղարաբաղի, հայկական այդ երկրամասի ամբողջ տարածքի վրա: Սակայն Ղարաբաղի հայությունը բոլոր ջանքերը գործադրում է իր անկախությունը պահպանելու համար՝ ստեղծելով սեփական կառավարման տեղական մարմիններ: Հակահայկական մուսավաթական տարրերի՝ ազգամիջյան կռիվներ հրահրելու քաղաքականության հետևանքով 1918թ. գարնանը իրադրությունը Ղարաբաղում բարդանում է, սկսվում են հալածանքները հայերի նկատմամբ: Իսկ մի քանի ամիս հետո՝ նրանց կանխամտածված քաղաքականության հետևանքով, Ղարաբաղ են մտնում թուրքական զորքերը: Ղարաբաղի հայ աշխատավորությունը կազմակերպում է աշխարհազորային ջոկատներ, որոնք Ասկերանի մոտակայքում ջախջախում են թուրքական մեծաթիվ զորքին: Սակայն մուսավաթների աջակցությամբ թուրքերին հաջողվում է գավթել Շուշի քաղաքը, որը և նրանց կողմից բարբարոսաբար ավերվում ու կողոպտվում է: Ղարաբաղի կամավորական ջոկատները հերոսաբար շարունակում են պայքարը իրենց երկրամասը թուրքական, մուսավաթական բռնակալներից ազատագրելու համար: Այդ պայքարի ընթացքում նրանք մի քանի ծակատամարտ են տալիս: Դրանցից հանրահայտ է Մարտունու շրջանի Սսմնա գյուղի մոտ տեղի ունեցած մարտը: Այստեղ ճարտար, Քերթ, Քարահունջ և շրջակա մյուս գյուղերի կամավորները միացյալ ուժերով ջախջախում են թուրքական բանակի մի մեծ ջոկատ, որի մնացորդները փախչում են:

Շուտով թուրքերը ստիպված են լինում հեռանալ Անդրկովկասից: Իսկ դրանից հետո՝ 1918 թ. աշնանը, Անդրկովկաս են մտնում անգլիական զորքերը: Մուսավաթականները անգլիացիների օգնությամբ դաժան հաշվեհարդար են տեսնում հայերի հետ: Այդ ժամանակ անգլիացիները մուսա-

վաթականների աջակցությամբ Շուշի քաղաքում ստեղծում են իրենց ռազմական ծառայության կենտրոնը: Անգլիական զավթիչների ու մուսավաթական ավազակախմբի կողոպտիչ քաղաքականության հետևանքով Ղարաբաղի գյուղերը տնտեսական ծանր դրության մեջ են ընկնում:

Սակայն Լեռնային Ղարաբաղի հայ աշխատավորությունը ակտիվորեն շարունակում է պայքարը հրոսակների ու զավթիչների դեմ՝ տեղական կառավարման կարգեր հաստատելու նպատակով: Նրանք մեծ աշխատանք են ծավալում նաև մուսավաթականների կողմից հրահրվող ազգամիջյան ընդհարումները կանխելու համար: Ղարաբաղում ազատագրական շարժումները լայն թափ են ստանում հատկապես 1920թ. սկզբներին: Հենց այդ ամիսներին էլ հակահայկական վանդալները (մուսավաթականները) բարբարոսաբար հրդեհում են Շուշի քաղաքի հայկական թաղամասերը, որի հետևանքով ոչ միայն ավերվում է այդ հրաշալի քաղաքը, այլև զոհվում են տասնյակ հազարավոր (35 հազարից ավելի) հայեր: Քաղաքի հայ ազգաբնակչության կենդանի մնացած մասը ստիպված է լինում հեռանալ: Մուսավաթականների ավազակախմբերը այդպիսի ավերումներ և կոտորածներ են կազմակերպում նաև Լեռնային Ղարաբաղի մյուս վայրերում:

1920 թ. ապրիլի 28–ին հարևան Նորաթուխ Ադրբեջանում հաղթանակում է խորհրդային իշխանությունը: Այդ ժամանակ բոլշևիկների ղեկավարությամբ Ղարաբաղի բոլոր գյուղերում կազմակերպվում են հեղկոմներ, հայկական այս երկրամասում նույնպես բռնի կերպով ստեղծվում են խորհրդային իշխանության մարմիններ:

Այդ ծանր իրադրության պայմաններում տեղի աշխատավորական կամավորական զինված ջոկատների համատեղ ջանքերով 1920թ. ամռան և աշնան ամիսներին վերջնականապես ջախջախվում են մուսավաթական, հակահայկական բանդաները (ճնշվում են նաև նրանց կողմից կազմակերպված խռովությունները) և դուրս շպրտվում Ղարաբաղից:

Քանի որ 11–րդ կարմիր բանակը Ս. Կիրովի և Ս. Օրջոնիկիձեի ղեկավարությամբ սկզբում մտնում է այժմյան Ադրբեջանի տարածք և այդտեղից էլ Արցախ–Ղարաբաղ, ապա Ադրբեջանի հետ միասին խորհրդային կարգեր են ստեղծվում նաև Լեռնային Ղարաբաղում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920 թ. նոյեմբերի 29), կոմունիստական կենտրոնական և անդրկովկասյան մարմիններում Ղարաբաղի վարչատարածքային ենթակայության հարցը երկարատև քննարկման և քաշքշուկի առարկա է դառնում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 1–ին, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմա-

նովը և արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովը ուղերձ են հղում Հայաստանի հեղկոմին, որտեղ նշվում է, որ Ադրբեջանի կառավարությունը ողջունում է եղբայրական հայ ժողովրդի հաղթանակը, և այդ օրվանից Հայաստանի ու Ադրբեջանի միջև եղած նախկին սահմանները համարվում են վերացված: Նշվում է նաև, որ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասը:

Ն. Նարիմանովի հղած ուղերձի, ինչպես նաև ՌՍԴ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3–ին տեղի ունեցած նիստի որոշման հիման վրա հռչակվում է Հայաստանի ժողկոմխորհի հայտարարագիրը այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասը:

Սակայն, շատ շուտով Ն. Նարիմանովը ու մյուսները փոխում են իրենց դիրքը և պահանջում, որ Լեռնային Ղարաբաղը կցվի Ադրբեջանին: Այդ կապակցությամբ նորից է սկսվում Ղարաբաղի հարցի քննարկման քաշքշուկը: Մասնավորապես, 1921 թ. հուլիսի 4–ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նիստում, ձայների մեծամասնությամբ, որոշվում է Լեռնային Ղարաբաղը թողնել Խորհրդային Հայաստանի կազմում: Սակայն Ն. Նարիմանովը բողոքում է այդ որոշման դեմ: Այդ նույն օրը Թիֆլիս է ժամանում Ի.Ստալինը, որի պահանջով հուլիսի 5–ին նորից հրավիրվում է Կովկասյան բյուրոյի նիստ, որտեղ և առանց քննարկման ու քվեարկության, Ստալինի կամայականությամբ որոշվում է Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Այսպիսով՝ պատմական Հայաստանի անբաժանելի մասերը՝ Ղարաբաղն ու Նախիջևանը, բռնի կերպով կցվում են Ադրբեջանին:

Լեռնային Ղարաբաղը բռնի կերպով, տեղի շուրջ 95% կազմող հայ բնակչության կամքին հակառակ, Ադրբեջանի կազմի մեջ մտցնելը (հայկական այդ երկրամասի առանձին հատվածները վարչական առումով կտրված էին մեկը մյուսից) խիստ բացասական ազդեցություն է թողնում ազգային կյանքի ու տնտեսության զարգացման վրա՝ բողոքի հզոր ալիք առաջացնելով բնակչության մեջ: Այդ բողոքների արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղը 1923 թ. հուլիսի 7–ին հռչակվեց ինքնավար մարզ:

Սակայն, կանխամտածված ձևով այս մարզի անվան մեջ ազգային պատկանելիությունը չի նշվում: Մինչդեռ նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ինքնավար 8 մարզերից 7–ի անվանումներում ընդգծված էր ազգային պատկանելիությունը (Հարավ–Օսեթական, Խակասական, Ադիգեյական, Կարաչա–Չերքեզական, Հրեական, Լեռնային Ալթայի, Լեռնային Բաղախշանի): Այդ հեռահար քայլը արվել է նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության նկատմամբ, չի հասկացվում, թե որ ազգի համար է ստեղծված այդ վարչական միավորը: Մինչդեռ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող 20 ինքնավար հանրապետություններից 19–ի անվանումներով նշվում է ազգային պատկանելիությունը՝ Բաշկիրական, Թաթարական, Կարելական և այլն:

Այսպիսով՝ հայկական Արցախ–Ղարաբաղ աշխարհի տնօրինությունը սկսում են կամայականորեն իրականացնել ադրբեջանցիները: Ահա թե ինչու հայկական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս նրանք կանխամտածված ձևով մարզի մեջ չեն մտցնում Արցախ–Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը: Դուրս է թողնվում նույնիսկ Խամսայի մելիքություններից Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ Շահումյանի շրջանը, և Խանլարի շրջանի մեծ, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի մասը: Բացի դրանից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանի ղեկավարների կողմից կանխամտածված կերպով կազմած տարածքը արհեստականորեն, նեղ շերտով (ընդամենը 6 կմ լայնությամբ) կտրվում է Հայաստանի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Լեռնային Ղարաբաղի ու մայր Հայաստանի միջև եղած արցախյան հայկական տարածություններում Ադրբեջանը «ստեղծում» է Լաչինի, Քելբաջարի, Ղուբաթլուի, Զանգելանի վարչական շրջանները, որտեղից հայ բնակչությունը տարբեր պատճառներով հեռացվում է և մեխանիկորեն բնակեցվում է թուրք–ազերիներով:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի հատվածը, չորս կողմից շրջապատվում է Ադրբեջանի կազմի մեջ մտցված ու հայաթափված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայաստանից: Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից տարվող այդ քաղաքականության հետևանքով անցած յոթանասուն տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայությունը կտրված էր մայր հայրենիքից: Այդ հանգամանքը խիստ բացասաբար է անդրադարձել Ղարաբաղի հայկական մշակույթի, կրթության, լեզվի զարգացման վրա: Բացարձակ անուշադրության են մատնվել այդ երկրամասի հայկական պատմաճարտարապետական հազարավոր հուշարձաններ, դրանցից համարյա ոչ մեկը 70 տարվա ընթացքում չի վերանորոգվել: Իսկ դա այն դեպքում, երբ Ադրբեջանի ամբողջ տարածքում գտնվող բոլոր մզկիթները վերականգնվել և շքեղորեն զարդարվել են:

Արցախը պատմական Հայաստանի ինչպես գիտության, այնպես էլ մշակույթի մյուս բոլոր բնագավառներում բացառիկ կարևոր տեղ է գրավում: Հայտնի է , որ Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվում է չորս հազար պատմաճարտարապետական մեծարժեք քարե

հուշարձան: Իսկ միայն Լեռնային Ղարաբաղի տարածքում այդպիսի բոլոր կարգի հուշարձանների թիվը, ոչ լրիվ տվյալներով, անցնում է 2765–ից: Դրանք բնութագրում են Արցախի հայ բնակչության հազարամյակների պատմություն ունեցող հոգևոր մշակույթը, տնտեսական գործունեության բնույթը:

Լեռնային Ղարաբաղը, բացի եկեղեցական շինություններից, հարուստ է նաև հայկական հնագույն ճարտարապետական այլ կոթողներով՝ կամուրջներով, բերդերով, պարիսպներով, ապրանքներով, քարավանատներով, ձիթհանքերով:

Դրանք բոլորն էլ տիպիկ հայկական են, ինչը անհերքելի փաստերով ապացուցում են այդ կոթողների վրա եղած մեսրոպատառ արձանագրությունները, հայ և օտարազգի պատմիչների հավաստի աղբյուրները:

Ադրբեջանական զավթիչները, օգտվելով Խորհրդային Հայաստանի ղեկավարության անտարբերությունից, Նախիջևանի օրինակով, ակտիվորեն վարում էին մարզը հայաթափելու քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը չուներ հնարավորություն լսելու և դիտելու հայրենի ռադիո–հեռուստահաղորդումներ, դպրոցներում չէր դասավանդվում հայ ժողովրդի պատմություն, հազվադեպ երևույթ էին հայկական թեմաներով կինոնկարների ցուցադրումը և թատերական բեմականացումները: Մարզի բնակավայրերում սոցիալ– տնտեսական, մշակութային տարրական պայմանների բացակայության պատճառով հայ բնակչությունը, հատկապես երիտասարդությունը, ստիպված էր հեռանալ իր հայրենի երկրամասից: Այսինքն՝ կանխամտածված ձևով Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տարվում էր այն քաղաքականությունը, ինչ վիճակվել էր Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը, որի երբեմնի կատարելապես հայաբնակ, հայկական հողերում այժմ հայ չկա:

Բնականաբար, նման քաղաքականությունը չէր կարող դժգոհություն չառաջացնել Ղարաբաղի բնակչության մեջ: Այդպիսի բազմաթիվ բողոքներ ու Հայկական ԽՍՀ–ին վերամիավորվելու պահանջներ են ներկայացվել 1950–1960–ական թվականներին: Սակայն դրանք առավել մեծ ընդգրկում ունեցան 1987–1988 թթ.:

1987 թ. Ղարաբաղի բոլոր գյուղերում, ձեռնարկություններում, կազմակերպություններում տեղի են ունեցել կոլեկտիվների ժողովներ, որոնց ընթացքում որոշումներ են կայացվել ԼՂԻՄ–ը Հայկական ԽՍՀ–ի հետ վերամիավորվելու վերաբերյալ:

Դրանց հիման վրա 1988 թ. սկզբներին մարզի վարչական շրջանների ժողովրդական պատգամավորների խորհուրդները նույնպես որոշումներ են

կայացրել ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ–ին վերամիավորվելու վերաբերյալ:

Ընդառաջելով մարզի բացարձակ գերակշռող հայ բնակչության ցանկություններին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդը 1988 թ. փետրվարի 20–ին՝ իր արտահերթ նստաշրջանում, որոշում է կայացրել ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից դուրս բերելու և Հայկական ԽՍՀ–ին վերամիավորվելու վերաբերյալ:

Դրանից հետո՝ սկսած փետրվարի 21–ից, Հայաստանի ամբողջ աշխատավորությունը, որը երբեք անտարբեր չի եղել իր անբաժանելի հատվածի՝ Արցախ–Ղարաբաղի հայության ճակատագրի նկատմամբ, միահամուռ կերպով պաշտպանում է հայկական այդ մարզի բնակչության օրինական պահանջը: Հանրապետության ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում տեղի են ունենում կոլեկտիվների ժողովներ, իսկ Երևանում ու մյուս քաղաքներում հզոր հանրահավաքներ՝ ի պաշտպանություն Ղարաբաղի բնակչության արդարացի պահանջի:

Ի պաշտպանություն Ղարաբաղի բնակչության պահանջի՝ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները հայտարարել էին երկարատև գործադուլներ:

1988 թ. փետրվարի 26–ին հրատարակվում է ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի դիմումը՝ ուղղված Ադրբեջանի ու Հայաստանի աշխատավորությանը, որը լիակատար ըմբռնումով ընկալվեց հայ ժողովրդի կողմից: Երևանի աշխատավորությունը փետրվարի 27–ին տեղի ունեցած հանրահավաքում որոշում է դադարեցնել գործադուլը, դուրս գալ աշխատանքի, աշխատել նաև հանգստյան օրերին՝ բաց թողնվածը լրացնելու համար: Ադրբեջանական կողմը այլ պատասխան տվեց: Այնտեղի ծայրահեղականներն ու ազգայնամոլները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ ինքնորոշման վերաբերյալ ընդունած սահմանադրական պահանջները դիմավորում են սվիններով՝ բարբարոս միջոցներով, բռնություն կիրառում Ադրբեջանում ապրող շուրջ 500 հազար հայության նկատմամբ: Մասնավորապես, 1988թ. փետրվարի 27–29–ին հայ բնակչության նկատմամբ Սումգայիթ քաղաքում կազմակերպվում է արյունոտ դատաստան՝ ամենաանմարդկային ու բարբարոս ձևերով: Դրա հետևանքով զոհվում են բազմաթիվ անմեղ հայեր: Հայ բնակչության մյուս մասն էլ թողնելով տուն–տեղ, ունեցվածք ու աշխատանք՝ մեծ դժվարությամբ հեռանում և ապաստան է փնտրում Հայկական ԽՍՀՄ–ում, Ստեփանակերտում, Հյուսիսային Կովկասում և այլուր: XX դարի վերջին կազմակերպված հայ բնակչության

նկատմամբ այս նոր ցեղասպանությունը բողոքի հզոր ալիք առաջացրեց ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամբողջ աշխարհի հայության շրջանում:

Աշխարհի և Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները խստորեն դատապարտեցին Սումգայիթի ոճրագործությունը: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը և զանգվածային լրատվության աղբյուրները մինչև այժմ էլ չեն տվել, այսպես կոչված, սոցիալիստական իրավակարգի պայմաններում կատարված այդ ջարդարարության քաղաքական գնահատականը:

1988 թ. մարտի 17–ին տեղի ունեցավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումը, որը նույնպես որոշեց խնդրել ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին, հաշվի առնելով հայ բնակչության արդարացի պահանջը, քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ–ին վերամիավորելու հարցը. դրանով իսկ շտկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում թույլ տրված պատմական սխալը:

1988թ. մարտի 24–ին ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը հատուկ որոշում ընդունեցին՝ 1988–1995 թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ–տնտեսական զարգացման միջոցառումների վերաբերյալ: Այս որոշումը խելացի օգտագործելու դեպքում, անկասկած, շատ կարևոր փաստաթուղթ էր մարզի սոցիալ–տնտեսական վերելքի համար:

Այդ որոշումով մարզի տնտեսական զարգացման համար միութենական ֆոնդից հատկացված 450 մլն ռուբլին Ադրբեջանը այն բռնազավթել էր և միայն օգտագործում էր XX դարում ԼՂԻՄ–ի տարածքում ծնավորված ադրբեջանական գյուղերի զարգացման համար:

Սակայն Լեռնային Ղարաբաղի հայության ազգային և սոցիալական հարցերը հնարավոր էր լուծել՝ մարզը Հայաստանի Հանրապետությանը վերամիավորելու ճանապարհով միայն:

1988 թ. հունիսի 15–ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հատուկ քննարկեց և համաձայնություն տվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ՀԽՍՀ–ին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը: Միաժամանակ հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ քննարկել և դրականորեն լուծել այդ հարցը:

1988 թ. հունիսի 21–ին մարզի իշխանության մարմինը, ելնելով այսպես կոչված, բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին լենինյան սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունից, մեկ անգամ ևս դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20–ի նստաշրջանի որոշումը և դրականորեն լուծել հարցը:

Նման մի որոշում ևս ընդունեց ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ–ի խորհրդի 20–րդ գումարման 8–րդ նստաշրջանը՝ 1988թ. հուլիսի 12–ին: Այստեղ որոշվեց նաև սահմանված կարգով միջնորդություն հարուցել մարզի անունը փոխելու, Արցախի Ինքնավար Մարզ անվանելու մասին:

Հաշվի առնելով ստեղծված ծանր վիճակը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1988թ. հուլիսի 18–ին Ղարաբաղի հարցը դրեց հատուկ քննարկման, որին հրավիրեցին Լեռնային Ղարաբաղի, Հայկական ԽՍՀ–ի և Ադրբեջանական ԽՍՀ–ի ներկայացուցիչները:Հայ պատվիրակների ելույթներում հիմնավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հայկական ԽՍՀ–ին վերամիավորելու խիստ անհրաժեշտությունը: Սակայն, չնայած ստեղծված խիստ լարվածությանը, կուտակված հիմնախնդիրներին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը այս անգամ ևս դրականորեն չլուծեց հարցը:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված դրությունը շտկելու և լուրջ թերությունները վերացնելու համար, ԽՄԿԿ Կենտոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1988–89թթ. ընդունած որոշումներով խոշոր միջոցառումներ էին նախատեսված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսության, մշակույթի հետագա զարգացումը ապահովելու, աշխատավորների բարեկեցությունը բարձրացնելու և այլ բնագավառներում: Անհրաժեշտ նախադրյալներ էին ստեղծված Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կապերն ընդլայնելու համար, ինչպես նաև հավաստիացվում էր,որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղ ուղարկել իր ներկայացուցիչներին, որոնք Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ սերտ համագործակցելով, կգործեն ընդունված որոշումների պարտադիր կատարումն ապահովելու համար:

Քանի որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի1988թ. հուլիսի 18–ի որոշումից հետո էլ Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջ առկա հարաբերությունները մնում էին լարված, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ստեղծած հեղինակավեր հանձնաժողովի՝ Լեռնային Ղարաբաղում, Երևանում և Բաքվում կատարած ուսումնասիրությունների հիման վրա, հարցը նորից է դրվում քննարկման: Նիստը, որին մասնակցում էին Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները, տեղի ունեցավ 1989 թ. հունվարի 11–ին:

Քննարկման արդյունքների հիման վրա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է, որ ազգամիջյան հարաբերությունների շարունակվող լարվածությունը կանխելու, իրադրությունը կայունացնելու նպատակով, Ադրբեջանի ԽՍՀ–ի և Հայաստանի ԽՍՀ–ի կուսակցական ու պետական մարմինների, ինչպես նաև Ազգությունների խորհրդի հանձնաժողովի առաջարկությունների համաձայն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հատուկ ձև պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմում ինքնավար մարզի կարգավիճակը, կազմել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտե Ա. Ի. Վոլսկու գլխավորությամբ:

Դադարեցվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը: Մարզգործկոմի բոլոր լիազորություններն անցնում են ինքնավար մարզի հատուկ կառավարման կոմիտեին, որը ենթարկվում է անմիջականորեն ԽՍՀ Միության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին՝ օժտված լինելով ինքնավար մարզի: Ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ կոմիտեի նախագահը՝ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով և պարտականություններով:

Սահմանվում է, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող միութենական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև դրանց մասնաճյուղերը, արտադրամասերն ու մյուս կառուցվածքային ստորաբաժանումները, սույն հրամանագրի գործողության ժամանակաշրջանում ենթարկվելու են կոմիտեին:

Մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության, զանգվածային լրատվության մյուս միջոցների մարմինները, հրատարակչությունները, տպագրական ձեռնարկությունները, ներքին գործերի մարմինները, ինչպես նաև մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահական հիմնարկություններն ու ոչ արտադրական ոլորտի մյուս կազմակերպությունները, անկախ ենթակայությունից ու գերատեսչական պատկանելիությունից, իրենց գործունեությունն իրականացնում են կոմիտեի կամ նրա լիազորված անձանց անմիջական ղեկավարությամբ:

Չնայած տարածքային առումով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը դեռևս մնում էր Ադրբեջանի կազմում, սակայն այս որոշումը հնարավորություն էր տալիս մարզին փաստորեն ինքնուրույն կերպով տնօրինելու իր տնտեսության պլանավորումը, նյութատեխնիկական ապահովումը, կադրային ու մյուս հարցերի լուծումը:

Այս որոշմամբ համեմատաբար լայն հնարավորություններ էին ստեղծվում նաև ընդլայնելու մարզի տնտեսական, հատկապես մշակութային կապերը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 11–ի որոշումը, խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ–տնտեսական զարգացման վերաբերյալ եզակի երևույթ էր անկասկած:

Մինչև մարզի վարչաքաղաքական ենթակայության հիմնախնդրի վերջնական լուծումը այս որոշման կատարումը 1989 թ. հունվարի 20–ից սկսել էր իրականացնել այստեղ ստեղծված Հատուկ կառավարման կոմիտեն:

Սակայն ընթացքում մարզի հայ բնակչությունը «համոզվեց», որ , իբր, հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը նույնիսկ խաբուսիկ է եղել և անկեսունակ է գտնվել: Ա. Վոլսկու գլխավորությամբ ստեղծված կոմիտեի գործունեությունն այդ բարդ շրջանում մարզի ղեկավարման թերևս ճիշտ ուղին էր, որն ըստ արժանվույն չգնահատվեց: ԼՂԻՄ–ի Հատուկ կառավարման կոմիտեն հետագայում, իրավական անորոշ կարգավիճակով, զրկվել էր բնակչության վստահությունից և ի վիճակի չէր կառավարելու մարզը: Ինքնավար մարզում փաստորեն անօրեն կերպով դադարեցվել էր ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի և կուսակցական մարզային կոմիտեի գործունեությունը: Միևնույն ժամանակ Հատուկ կառավարման կոմիտեի նկատմամբ տարվում էր նախկին քաղաքականությունը: Այսպիսով՝ Հատուկ կառավարման կոմիտեն, ինչպես նաև հատուկ շրջանի պարետը (մարզում անհիմն ձևով մտցվել էր նաև ռազմական վիճակ , խիստ պարետային ռեժիմով, որը, սակայն, կիրառվում էր միայն հայ ժողովրդի նկատմամբ) բարձիթողի էր արվել մարզի հայ բնակչության բախտը, որից էլ օգտվելով Ադրբեջանի ղեկավարությունը շրջափակել էր մարզը՝ կտրելով Հայաստանի հետ ունեցած նրա բոլոր կապերը: Դեռ ավելին, ադրբեջանցիները շրջափակում են նաև մարզի շրջանները՝ կտրելով դրանք մարզկենտրոններից ու մեկը մյուսից:

Այս անտանելի վիճակից դուրս գալու նպատակով մարզի աշխատավորությունը ստիպված էր 1989 թ. մայիսից սկսել գործադուլ, որը տևեց չորս ամիս: Ինքնավար մարզի հայ բնակչության համար այդ ծանր վիճակում, նրա բախտը տնօրինելու նպատակով, 1989 թ. օգոստոսի 16–ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար:

Քանի որ իրավիճակը ԼՂԻՄ–ում ծայրահեղորեն բարդացվել էր, իսկ իշխանության մարմինների կողմից այն համապատասխան գնահատականի և պատշաճ վերաբերմունքի չէր արժանանում, ապա մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը համագումարը արձանագրում է ազգային խորհրդի՝ մարզային ինքնավար ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը:

Մարզում տիրող իրավիճակը բազակողմանի քննարկելուց հետո, հենվելով ԽՍՀՄ սահմանադրության, համամիութենական 19–րդ կուսկոնֆերանսի և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի՝ հասարակության հետագա դեմոկրատացման և ժողովրդական պետության սկզբունքն ամրապնդելու հիմնադրույթների վրա, համագումարը որոշում է՝ ռեգիոնում դրությունը կայունացնելու նպատակով, մինչև ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը, ընտրել Ազգային խորհուրդ և նրան մարզի կառավարման բոլոր ոլորտներում տալ ղեկավար մարմնի դեր կատարելու լիազորություն:

Համագումարը միաժամանակ հայտարարում է ԼՂԻՄ–ը հետևողականորեն Հայաստանի հետ վերամիավորելու իր վճռականության մասին և խստագույնս մերժում մարզի ներքին գործերին Ադրբեջանի կառավարության կողմից միջամտելու յուրաքանչյուր փորձ ու ինքնավար մարզի հանդեպ անընդունելի է համարում թելադրանքի քաղաքականությունը: Այս և մի շարք այլ հարցերի մասին համագումարն ընդունում է հայտարարագիր, որով նշվում է, որ մարզի տարածքում դադարեցվում է Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրության, ԼՂԻՄ–ի մասին Ադրբեջանական ԽՍՀ օրենքը և հանրապետական մյուս օրենքների գործունեությունը: Նշվում է, նաև , որ ինքնավար մարզի գործերին Ադրբեջանի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ և կստանա համարժեք պատասխան: Համագումարը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին է դիմում՝ Լեռնային Ղարաբաղի ազգային խորհուրդը որպես ԼՂԻՄ–ում միակ օրինական իշխանություն ճանաչելու, ինքնավար մարզի կառավարման՝ Ադրբեջանից անկախ սահմանադրական ձևերի շուտափույթ վերականգման գործում օժանդակության ցույց տալու խնդրանքով:

Հայտարարություններում նշվում է նաև, որ համագումարը աշխարհի դեմոկրատական պետությունների կառավարությունների ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարին է դիմում՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման և անկախության ձգտումներին օժանդակելու խնդրանքով:

Այսպիսով՝ Արցախ–Ղարաբաղի բնակչությունը ստեղծված ծանր կացությունում մինչև ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի կողմից մարզի վարչաքաղաքական ենթակայության հարցի լուծումը, Ազգային խորհրդի ընտրությամբ փաստորեն որոշում է իր քաղաքական վիճակի միակ ճիշտ ու ժամանակավոր ուղին:

Դրանից մի քանի ամիս հետո՝ 1989 թ. դեկտեմբերի 1–ին, Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի ու Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի միացյալ նիստում միաձայն որոշվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերամիավորել Հայաստանին: Սակայն այս պատմական որոշումից հետո էլ՝ մինչև 1991թ. վերջը, մարզի հայ բնակչության կյանքում առաջընթացի ոչ մի փոփոխություն չէր կատարվում: Խորհրդային բանակի աջակցությամբ Ադրբեջանն արդեն 4 տարուց ավելի էր, ինչ Լեռնային Ղարաբաղը լրիվ կտրել էր արտաքին աշխարհից: Երևան–Ստեփանակերտ օդային գիծը՝ մայր Հայաստանի հետ կապող միակ ուղին, գործում էր Ադրբեջանի ավազակախմբերի կողմից իրականացվող դաժան պայմաններում: Մարզի հայկական գյուղերը բոլոր կողմերից, ամեն օր ենթարկվում էին ավազակային հարձակումների, առևանգում, սպանում էին բազմաթիվ հայերի, թալանում, ավերում էին գյուղերը:

Խաթարված էր լրիվ շրջափակման մեջ գտնվող մարզի տնտեսությունը, հայ բնակչությունը զրկված էր մշակութային կյանքից: Արտակարգ դրության մեջ գտնվող մարզում թուրքերի հետ միասին իրեն սանձարձակ էր պահում նաև խորհրդային զորքը: Այս բոլորն իրականացվում էր կենտրոնի թույլտվությամբ: Ղարաբաղի հայ բնակչությունը, սակայն, հերոսաբար պայքարում էր իր ազատության համար:

Քաղաքական սոցիալ–տնտեսական պաշտպանական ծանր վիճակում գտնվող Արցախում պատմական նոր իրադարձություն տեղի ունեցավ 1991 թ. սեպտեմբերի 2–ին՝ ԼՂԻՄ–ի և 20–ական թթ. հայկական այդ մարզից բռնապոկված պատմական Արցախի բաղկացուցիչ մասը կազմող Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը:

Այնուհետև՝ 1991 թ. դեկտեմբերի 10–ին, Լեռնային Ղարաբաղում անցկացված հանրաքվեի արդյունքներով, արցախահայությունը մեկ անգամ ևս հաստատեց անկախությունը: Այդ օրը (չնայած պատերազմական ծանր վիճակին) ԼՂՀ–ի բնակչության ձայնի իրավունք ունեցողների 80%–ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99%–ից ավելին քվեարկեց անկախության օգտին:

Այսպիսով՝ աշխարհի քաղաքական քարտեզի վրա առաջացավ հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

9.2 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մինչև հանրապետություն հռչակվելը բաժանված էր 5 վարչական շրջանների՝ Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի, Մարտունու, Շուշիի: 1991թ. սեպտեմբերի 2–ին՝ մարզին վերամիավորվել էր նաև Շահումյանի շրջանը, և ստեղծվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ): Այսպիսով՝ ***ԼՂՀ–ն բաժանված էր վարչական հետևյալ շրջանների՝ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, Շահումյանի:***

Սակայն, Շահումյանի շրջանը, քանի որ մինչև 1994թ. մայիսին կնքված զինադադարը զավթված էր Ադրբեջանի կողմից, այն առ այսօր էլ մնում է նրա տիրապետության տակ:

Լաչինի շրջանը ազատագրվելուց հետո այդ նույն տարածքում (որով ԼՂՀ–ն կապվում է Հայաստանի Հանրապետության հետ) 1994թ. կազմավորվել է *Քաշաթաղի* շրջանը: Այժմ այն ԼՂՀ վարչական կառուցվածքի մեջ է: Շրջանի վարչական կենտրոնը *Բերձորն է* (նախկին Լաչին քաղաքը):

Քաշաթաղի շրջանի կազմի մեջ են մտցված նաև մինչև 1994թ. մայիսը ազատագրված Զանգելանի (այժմ Կովսական), Ղուբաթլուի (Անգեղտուն), Ջեբրաիլի տարածաշրջաններն ու Ֆիզուլու տարածաշրջանի մի մասը:

Մինչև 1994թ. մայիսը ազատագրվել էր նաև Քարվաճառի (որին թուրքերը անվանել են Քելբաջար) տարածաշրջանը, որտեղ հանգրվանել են Արցախի մի մասը հանդիսացող Շահումյանի (պատմական անցյալում Գյուլիստանի) շրջանից բռնագաղթված հայ բնակչությունը:

ԼՂՀ վարչական նոր կառուցվածքով Քարվաճառի շրջանը այժմ կոչվում է Շահումյանի շրջան (ինչպես վերը նշվեց Շահումյանի նախկին տարածաշրջանը մնում է բռնազավթված Ադրբեջանի կողմից):

Ազատագրված են նաև Դաշտային Արցախի որոշ հատվածներ (Աղդամի ու Ֆիզուլու շրջաններում), որտեղով անցնում է ԼՂՀ–Ադրբեջան հակամարտության ճակատային գիծը: Ինչպես ասվել է վերը, Ադրբեջանի կողմից օկուպացված են ԼՂՀ–ի կազմի մեջ եղած նախկին Շահումյանի (Գյուլիստանի) տարածաշրջանը, ինչպես նաև Մարտակերտի ու Մարտունու շրջանների դաշտային որոշ հատվածները, ընդհանուր առմամբ 1000 կմ^2 տարածք:

Այսպիսով՝ ԼՂՀ–ի վարչական կառուցվածքի մեջ այժմ մտնում են **Ստեփանակերտ** քաղաքը, որը ԼՂՀ մայրաքաղաքն է և ունի վարչական շրջանի կարգավիճակ, **Ասկերանի** (շրջկենտրոնը՝ Ասկերան քաղաքը), **Հադրութի** (շրջկենտրոնը՝ Հադրութ քաղաքը), **Մարտակերտի** (շրջկենտրոնը Մարտակերտ քաղաքը), **Մարտունու** (շրջկենտրոնը՝ Մարտունի քաղաքը), **Շահումյանի** (շրջկենտրոնը՝ Քարվաճառ քաղաքը), **Շուշիի** (շրջկենտրոնը Շուշի քաղաքը), **Քաշաթաղի** (շրջկենտրոնը՝ Բերձոր քաղաքը) շրջանները:

Ինչպես նշվել է, ԼՂՀ–ն պետական անկախության հռչակագիրը ընդունել է 1991թ. սեպտեմբերի 2–ին: Պետական լեզուն հայերենն է, ազգային արժույթը դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

ԼՂՀ–ն ունի ութ քաղաք: Դրանք են՝ ***Ստեփանակերտը, Շուշին, Մարտակերտը, Մարտունին, Ասկերանը, Հադրութը, Քարվաճառը, Բերձորը, Կովսականը (Զանգելան) և Միջնավանը (Մինքևան):***

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խոշոր քաղաքն է և մայրաքաղաքը: 2003թ. տվյալներով՝ ունի 57.1 հազ. բնակիչ: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1823թ–ից: Իսկ մինչ այդ հին հայկական բնակավայր էր՝ *Վարարակն* անվամբ, որն ունի ավելի քան 2000–ամյա պատմություն: Հենց այս գյուղում 1840–ական թթ. ստեղծվել է ռուսական բանակի զորակայան՝ ռազմական, վարչական, բնակելի շինություններով, որոնք էլ հիմք են հանդիսացել այժմյան քաղաքի ձևավորման համար: Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց և երկրամասը ինքնավար մարզ հռչակվելուց հետո՝ 1923թ., 26 կոմիսարների առաջնորդ, Բաքվի կոմունայի ղեկավար *Ստեփան Շահումյանի* հիշատակը հավերժացնելու համար այս բնակավայրը վերանվանվում է *Ստեփանակերտ:*

Մինչև 1978թ. Ստեփանակերտը մարզային վարչական կենտրոն լինելուց բացի նաև համանուն շրջանի կենտրոնն էր: 1978թ. հետո Ստեփանակերտի շրջանը վերանվանվում է *Ասկերանի շրջան,* իսկ շրջանի կենտրոնը դառնում է **Ասկերան** քաղաքը: Այն քաղաքային կարգավիճակ ունի 1998 թ–ից, հեռավորությունը Ստեփանակերտից 18 կմ է, բնակչությունը 2003 թ. կազմել է 2058 մարդ:

Ստեփանակերտը գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան նախալեռնային մասի ոչ մեծ հարթության վրա, Կարկառ գետի ձախափնյա գեղատեսիլ մասում: Շրջապատված է անտառներով, այգիներով, ունի մեղմ կլիմայական պայմաններ, հունվարի միջին ջերմաստիճանը –0,2^{0}C է, իսկ հուլիսինը՝ +22,4^{0}C, օգոստոսինը՝ +22,2^{0}C : Մթնոլորտային տեղումները տարեկան, միջին հաշվով, կազմում են 535 մմ:

Ստեփանակերտը ավտոճանապարհների կարևոր հանգույց է: Այստեղից սկսվում է *Ստեփանակերտ–Շուշի–Բերձոր–Գորիս–Ջերմուկ–Երևան, Ստեփանակերտ–Աղդամ–Եվլախ–Բաքու, Ստեփանակերտ–Նոգի–Մարտու-*

նի, Ստեփանակերտ–Կարմիր Շուկա–Մարտունի ավտոխճուղիները: Ստեփանակերտը երկաթգծով կապված է Բաքու–Թբիլիսի երկաթուղային մայրուղու Եվլախ կայարանի հետ: Սակայն, այժմ Ստեփանակերտ–Աղդամ երկաթուղու ճյուղը չի գործում, կապված ադրբեջանաղարաբաղյան դեռևս չլուծված հակամարտության հիմնախնդրի հետ: Ունի օդանավակայան և օդային գծերով կարող է կապվել Երևանի, Թբիլիսիի, Գյումրիի և Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքների հետ (Ստեփանակերտի օդանավակայանը այժմ արմատական վերակառուցման մեջ է):

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի արդյունաբերական խոշոր կենտրոնն է: Այստեղ կան 20–ից ավելի մեծ ու փոքր ձեռնարկություններ: Դրանց մեծ մասը մինչև 1994թ. թուրք–ազերիները ավերել են, այժմ վերականգնվում է:

Արդյունաբերության ճյուղերից համախառն արտադրանքով առաջատարը *թեթև արդյունաբերությունն է*: Այս ճյուղի խոշոր ձեռնարկությունը մետաքսի կոմբինատն է (Ղարմետաքսկոմբինատ), որն իր մասնաճյուղերը ուներ Քարինտակ, Խնձրիստան գյուղերում և Մարտակերտ քաղաքում: Գործում էր ԼՂՀ տնտեսություններում արտադրվող բոժոժի ու այլ շրջաններից ստացվող հումքի բազայի վրա: Բնական մետաքսաթելի ու գործվածքի արտադրությամբ ԽՍՀՄ–ում խոշորագույններից մեկն էր: Մինչև 1990թ. այս կոմբինատը տարեկան թողարկում էր ավելի քան 15 մլն գծամետր մետաքսի գործվածք: Այժմ այն վերակառուցման գործընթացում է:

Ստեփանակերտի թեթև արդյունաբերության մյուս խոշոր ձեռնարկությունը կոշիկի ֆաբրիկան է, որը տարեկան կարող է թողարկել 4,5–5,0 մլն զույգ կաշվե կոշիկ: Նշանավոր են նաև քաղաքի գորգագործական կոմբինատն ու կարի ֆաբրիկան:

Մյուս ճյուղերի ձեռնարկություններից հիշարժան են էլեկտրատեխնիկական, կոնդենսատորների գործարանները ու շինանյութերի կոմբինատը, ինչպես նաև կահույքի ֆաբրիկան, կաթնամթերքների, մսի, հացաբուլկեղենի, հրուշակեղենի, խմիչքների արտադրության ձեռնարկությունները:

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի կրթության, մշակութային կարևոր կենտրոնն է: 1920–ական թթ. այստեղ բացվել է գյուղատնտեսական տեխնիկում, իսկ 1940–ական թթ.՝ երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը կարճ ժամանակից հետո փակվել է: 1970–ական թթ. բացվել է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժանմունքներով: Այստեղ մինչև 1993թ. գործում էին Կիրովականի մանկավարժական և Երևանի ճարտարագիտական ինստիտուտների մասնաճյուղերը,

որոնց հիման վրա կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (Արցախի պետական համալսարանը):

Կան նաև բժշկական, երաժշտական, գեղարվեստական ուսումնարաններ, ինչպես նաև հանրակրթական 11 դպրոց և 15 մանկապարտեզ: 1924 թ. բացվել է Ստեփանակերտի ներկայիս հանրապետական գրադարանը: Բացի դրանից, մասսայական մի շարք գրադարաններ գործում են նաև քաղաքի տարբեր մասերում: Մայրաքաղաքի մշակութային օջախների շարքում իր կարևոր դերն ունի պատմության թանգարանը, որտեղ ցուցադրված են Արցախ–Ղարաբաղ աշխարհի հնագույն տնտեսական, մշակութային կյանքին, պատմությանը վերաբերող մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ նմուշներ:

Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղում Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը (հիմնադրվել է 1932թ.): Ադրբեջանական տիրապետության տարիներին հայկական մարզի միակ պետական դրամատիկական թատրոնի խաղացանկից գրեթե լրիվ հանվել էին հայ ժողովրդի պատմությանը, կյանքին վերաբերող գործերի բեմադրությունները: Նույնիսկ թատրոնի ցուցանակից հանվել էր «հայկական» բառը: Այժմ Ստեփանակերտում հայկական դրամատիկական թատրոնը նոր վերելք է ապրում, ամուր կապեր է ստեղծել Երևանի ու Հայաստանի մյուս քաղաքների թատերական օջախների հետ:

Քաղաքի ու ամբողջ Լեռնային Ղարաբաղի կյանքում 1959 թվականից յուրահատուկ դեր է խաղում հայկական երգի ու պարի պետական համույթը, որը մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում նաև Երևանում և Հայաստանի այլ բնակավայրերում:

Ստեփանակերտում կան հիվանդանոցներ, բուժարաններ, մանկական առողջարան, փոստ–հեռագրատուն, միջքաղաքային ավտոմատ հեռախոսակայան, կապի բազմաթիվ բաժանմունքներ: Այժմ Ստեփանակերտի ռադիոհանգույցը ամեն օր հայերեն բազմաբնույթ հաղորդումներ է տալիս քաղաքի ու հանրապետության ամբողջ բնակչության համար: 1960–ական թվականներից այստեղ ընդունվել են նաև հեռուստահաղորդումներ: Սակայն, ոչ միայն Ղարաբաղի հայկական բոլոր բնակավայրերը, այլև մարզային կենտրոն Ստեփանակերտը հնարավորություն չունեին դիտելու և լսելու հայկական հեռուստատեսության հաղորդումները: Ղարաբաղի՝ 88–ի հայտնի դեպքերի հետ կապված, մարզի հայության միահամուռ պահանջով 1988 թ. մայիսի սկզբին Ստեփանակերտը ոչ միայն ընդունում է հայկական հեռուստահաղորդումները, այլև մայր հայրենիքի մասնագետների աջակցությամբ այստեղ կազմակերպվեցին տեղական հեռուստահաղորդումներ: Այժմ

Ստեփանակերտում գործում է ԼՂՀ–ի հառուստահաղորդումների ընդունման, կազմակերպման, ինքնուրույն կենտրոն:

Քաղաքն ունի մարզադաշտ, որտեղ «Արցախ» ֆուտբոլային թիմն անցկացնում է իր խաղերը, ինչպես նաև կազմակերպվում են մասսայական շատ միջոցառումներ:

Արցախի այս հիանալի քաղաքի առաջին հատակագիծը 1926թ. կազմել է ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: Հետագայում քաղաքի զարգացման հետ կապված, երկու անգամ վերանայվել է այն: Մինչև 1980–ական թվականները Ստեփանակերտում կառուցվել են քարաշեն, հիմնականում 4–5-հարկանի շենքեր: Այժմ արդեն վեր են խոյանում բազմահարկ բնակելի շենքեր:

Ստեփանակերտ մտնողների վրա անջնջելի տպավորություն է թողնում նրա մուտքի մոտ՝ բլրի վրա կանգնեցված «Մենք ենք, մեր սարերը» տուֆակերտ յուրատիպ քանդակը, որը բնութագրում է ղարաբաղցու վեհությունը, նրա հավատարմությունն ու անսասանությունը:

Մինչև 1992թ. Շուշիի բարձունքից և Աղդամից ադրբեջանցիների անդադար ռմբակոծությունների հետևանքով ավերվել են Ստեփանակերտի շատ շենքեր, զոհվել են խաղաղ շատ բնակիչներ: Սակայն մայրաքաղաքի բնակչությունը դիմացել է այդ դժոխքին և պաշտպանել իր քաղաքը: Այժմ այն լրիվ վերականգնված է ու զարգացում է ապրում:

Շուշին եղել է Արցախի նախահեղափոխական ժամանակաշրջանի կենտրոնը, ինչպես նաև կրթամշակութային, արհեստագործական, առևտրական խոշոր կենտրոնը: Այդ հնագույն հայկական բնակավայրերի պատմության վերաբերյալ փաստեր, հուշարձաններ պահպանվել են հատկապես IX դարից սկսած: Այն 1752 թ. հանրահայտ բերդամրոց էր, իսկ 1840 թվականից՝ քաղաք: 1916թ. Շուշին ուներ շուրջ 43,5 հազ. բնակիչ, որի գերակշիռ մասը հայեր էին: Հեռավորությունը Ստեփանակերտից 11 կմ է:

1920 թ. Շուշիի հայ բնակչությունը (մինչև թուրքերի կողմից քաղաքի հրդեհումը) կազմել է 35 հազ. մարդ: 1988–90 թթ. ադրբեջանական ազգայնամոլները Ադրբեջանի տարբեր վայրերից զգալի թվով ադրբեջանցիներ էին բերել ու արդեն հայաթափված Շուշիում հայերին պատկանող տներում բնակեցրել: Այսպիսով՝ դեռ 1920 թ. սկզբներից նրանք սկսել էին այստեղ ավելացնել թուրք–ադրբեջանցիների թիվը՝ նպատակ ունենալով հայկական այդ քաղաքը լրիվ բնակեցնել մահմեդականներով: Սակայն 1992 թ. մայիսի 9–ին հայ ազատամարտիկները Շուշին ամբողջովին ազատագրեցին, որտեղ նորից սկսեց ծաղկել հայկական կյանքը:

Շուշին գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան նախալեռնային փոքր սարահարթի վրա: Քաղաքի բարձրությունը ծովի մակարդակից 1350–1500 մ է:

Սարահարթը, որի վրա փռված է Շուշին, երեք կողմից շրջափակված է խիստ զառիթափ, անդնդախոր, բայց անզուգական գեղեցկություն ունեցող կիրճերով, որտեղով հոսում է Արցախի կարևոր գետերից մեկը՝ Կարկառը:

Չնայած բարձրլեռնային դիրքին, այս քաղաքի կլիմայական պայմանները մեղմ են, օդի հուլիսյան միջին ջերմաստիճանը կազմում է +19^{0}C, հունվարինը –1,5^{0}C: Շատ են ամպամած, մառախլապատ օրերը: Սակայն մեղմ կլիմայի լեռնային մաքուր օդի, անզուգական դիրքի, շրջապատի գեղեցկության ու հանքային ջրի շնորհիվ, Շուշին դարձել է առողջարանային, հանգստյան ու զբոսաշրջության կարևոր կենտրոն: Շուշին, երեք կողմից շրջապատված լինելով անդնդախոր կիրճերով, մի կողմից էլ ամրակուռ բարձր պարսպով, դարձել էր անմատչելի բերդ–ամրոց: Առաջին ամրակուռ բերդապարիսպներն այստեղ սկսվել են կառուցվել 1724 թվականից: Ի դեպ, մինչև այժմ էլ այդ պարիսպները հիմնականում պահպանվում են:

Իսկ որպես բնակատեղի Շուշիի սարահարթը հայտնի է շատ հնուց: Թշնամիների հարձակումներից, հատկապես մեծ վտանգի դեպքում շրջակա գյուղերի հայությունը պաշտպանվում էր այս բերդ–ամրոցում: Որպես անմատչելի հենակետ, մինչև բարդապարիսպների կառուցումն էլ, հնուց մեծ դեր է կատարել թուրքական և պարսկական բռնակալների դեմ հայերի մղած պայքարի ժամանակ:

Թուրքական, պարսկական մեծաթիվ զորքերը բազմիցս հարձակվել, երկար ժամանակ պաշարել են, սակայն այստեղ ու նրա շրջակայքում պատսպարված հայերն արիաբար պաշտպանվել են, ջարդել ու հետ են շպրտել թշնամիներին: Այդպիսին են Շուշիի 1795թ.՝ արևնախում պարսիկ Ա-ղա–Մահմեդ Ղաջարի և 1826թ.՝ Աբբաս Միրզայի զորքերի դեմ հերոսական պաշտպանությունները:

Շուշին հանրահայտ քաղաք է 1840 թվականից: Այդ ժամանակից սկսած այն արագ զարգացել ու դարձել է ոչ միայն Արցախի մշակութային, կրթական, արհեստագործական խոշոր կենտրոնը, այլև Անդրկովկասի ամենաշքեղ հայկական նշանավոր քաղաքներից մեկը:

Իսկ ինչպե՞ս են մահմեդականները մուտք գործել Արցախի սրտում գտնվող այս անմատչելի բերդավանը: Արցախի 5 գավառներից մեկի՝ Վարանդայի մելիքության աթոռը, երբ ապօրինաբար զավթում է *Մելիք–Շահնազար Բ-ն*, Արցախի մյուս 4 մելիքները միացյալ ուժերով հանդես են գալիս այդ ինքնիշխանի դեմ: Հարևան հայրենասեր մելիքներին դիմադրելու

համար Շահնազարը բարեկամանում է քոչվոր ցեղապետ *Փանահի* հետ, նրան նվիրում Շուշիի բերդը: Այս ձևով 18–րդ դարի 2–րդ կեսին Շուշի հայկական բնակավայրում հիմնավորվում է Միլի տափաստաններում թափառող մահմեդական անասնապահ ցեղերի առաջնորդներից մեկը՝ այսպես կոչված Փանահ խանը (Վարանդայի Մելիք–Շահնազար Բ–ի դավաճանությամբ): Այսպիսով՝ ինչպես Ռաֆֆին է նշում, Ղարաբաղի մեջ մտցվեց մի օտար «ցեց»: Իսկ այդ «ցեցը» վերջնականապես արմատախիլ արվեց 1992թ. մայիսի 9–ին հայ քաջարի ազատամարտիկների սխրանքով:

Ղարաբաղը Ռուսաստանին միանալուց հետո Շուշիում հիմնվեցին մետաքսագործական, գորգագործական ֆաբրիկաներ, կոշկակարական, մետաղագործական, դարբնոցային, կարի արհեստանոցներ: Զարգացել են առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի և եվրոպական մյուս երկրների շատ քաղաքների հետ: Դրա հետ միասին, Շուշիում ծավալվել է նաև կրթամշակութային գործը: 1820–ական թթ. սկսած՝ այստեղ բացվում են դպրոցներ, տպարան, հրատարակվում են թերթեր, գրքեր: Այդ տեսակետից հատկապես մեծ դեր խաղացին Շուշիում 1838թ. բացված թեմական և 1881թ.՝ ռեալական դպրոցները: Ընդհանուր առմամբ, մինչև հեղափոխությունը այս քաղաքում գործել է տարբեր տիպի 12 դպրոց: Սակայն դրանցից հայ ժողովրդի հասարակական–քաղաքական ու մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղացել թեմական դպրոցը: Ի դեպ, հիմնականում ձեռք բերելով աշխարհիկ բովանդակություն, այն եղել է թեմի միակ ազգային դպրոցը, որտեղ բեղմնավոր աշխատանք են կատարել ականավոր մանկավարժներ, գրողներ, հասարակական գործիչներ: Մասնավորապես, անգնահատելի են Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Խորեն Ստեփանյանի ու մյուսների աշխատանքները: Անուրանալի է ղարաբաղցի խիզախ կանանցիցի մեկի՝ Մարիամ Հախումյանի ծառայությունը, որը Շանշյանի ու Պռոշյանի հետ միասին կարևոր դեր է կատարել Շուշիի Ս. Մարիամյան օրիորդաց դպրոցի բացման գործում:

Շուշիում տարբեր ժամանակներում մանկավարժությամբ են զբաղվել նաև *Հր. Աճառյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Լեոն* և հայ մշակույթի այլ նշանավոր դեմքեր:

Շուշիի տպարաններում տպագրվում էին հայ և այլազգի գրողների գրքեր, ինչպես նաև 19 հայկական և 2 ռուսական թերթեր ու հանդեսներ:

Դպրոցական, տպագրական գործի, արվեստի, արհեստագործության, առևտրի զարգացումը Շուշի քաղաքին բերել է լայն ճանաչում. այն սերտ կապերի մեջ է եղել ժամանակի խոշոր քաղաքների հետ: Մասնավորապես, այն կապեր է ունեցել Թիֆլիսի, Բաքվի, Կիևի, Մոսկվայի, Պետերբուրգի, Օդեսայի, Բեռլինի, Փարիզի, Ցյուրիխի, Լոնդոնի, Վարշավայի ու եվրոպական ուրիշ քաղաքների հետ, որտեղ կրթություն են ստացել Արցախի շատ երիտասարդներ:

Պատահական չէ, որ Շուշին տվել է մշակույթի, գիտական, ռազմական գործի, արվեստի բոլոր բնագավառների գծով նշանավոր գործիչներ, հեղափոխականներ:

Ճարտարապետական առումով Շուշին մեծ հետաքրքրություն ներկայացնող և հիմնականում հայաբնակ քաղաք է եղել մինչև 1920–ական թվականի ողբերգությունը՝ հայերի զանգվածային կոտորածը: Քաղաքի հայաբնակ թաղամասերը զբաղեցնում էին բարձրադիր մասերը և կոչվում Ղազանչեցոնց, Մեղրեցոց, Ագուլեցոց և այլ թաղամասեր: Հայկական թաղամասերն աչքի էին ընկնում բնակելի ու հասարակական, ճարտարապետական ինքնատիպ շենքերով, ունեին իրենց կենտրոնները, դպրոցները, ակումբ–գրադարանները, խանութները, հյուրանոցներն ու եկեղեցիները:

Ճարտարապետական տեսանկյունից հատկապես աչքի է ընկնում ***Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը***, որը 1920 թ. բարբարոսաբար ավերել են մուսավաթականները: Կարևոր ճարտարապետական կոթողներ էին նաև «Կանաչ ժամ», *Ագուլեցոց Ս. Աստվածածին, Մեղրեցոց Ս. Աստվածածին* եկեղեցիների, «*ժամհարյանների հիվանդանոցի*», *ռեալական ուսումնարանի* շենքները և այլ քարակերտ շինություններ: Դրանցից հիմնականում լավ է պահպանվել «Կանաչ ժամ» եկեղեցու շենքը, սակայն այն ոչ հայկական ոճով ձևափոխվել և դարձել էր հանքային ջրի ըմպասրահ: Շուշին ազատագրվելուց հետո այս եկեղեցին նույնպես վերականգնվել է, իր հայկական տեսքն է ստացել և այժմ գործում է:

1871 թ. Շուշիում կառուցվել է առաջին ջրմուղը և երկու ջրամբար: 1896 թ. Թադևոս Թամիրյանցը կառուցել է ավելի խոշոր (18 կմ) ջրատար: Դրանք մինչև այժմ էլ գործում են:

Շուշին Լեռնային Ղարաբաղի առողջարանային, հանգստյան, զբոսաշրջության գլխավոր կենտրոնն է և միաժամանակ՝ Շուշիի շրջանի վարչական կենտրոնը: Քաղաքն այժմ էլ հմայում է պահպանված հայկական ճարտարապետական հուշարձաններով:

Շուշին գտնվում է Ստեփանակերտից 11 կմ հեռավորության վրա: Ավտոխճուղիներով կապված է Ստեփանակերտի, մյուս կողմից՝ Լաչինով (այժմ Բերձոր)՝ Գորիսի, Ջերմուկի, Երևանի, իսկ Աղդամով՝ Եվլախի ու Բաքվի հետ: Շուշիում գործում էին տեղարդ կոմբինատ, գորգագործական, արևելյան երաժշտական գործիքների ֆաբրիկաներ, ինչպես նաև Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը: Քաղաքն ունի մշակութային

և արհեստագործական ուսումնարաններ, երաժշտական դպրոց, մշակույթի տուն, կապի հանգույց, հիվանդանոց, պատմության թանգարան:

Շուշի քաղաքի արևմտյան մասի սարահարթի պռնկից անսահման գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Կարկառ գետի անդնդախոր կիրճն ու մոտակա անտառածածկ լեռը:

Շուշի քաղաքում հիմնվել է ՀՀ ԳԱԱ բուսաբանական ինստիտուտի Շուշիի մասնաճյուղը: 1988 թ. քաղաքի ազատագրման 6–րդ տարեդարձի առթիվ Երևանից 700 տնկիներ է ուղարկվել, և ստեղծվել Հաղթանակի ծառուղի: Տեղում պահպանված հայկական ճարտարապետական շինությունների հետ միասին, քաղաքի երբեմնի հայ կյանքի մասին պատմում են նաև հայկական գերեզմանոցի խաչազարդ, մեսոպատառ բազմաթիվ մեծ ու փոքր հուշարձանները: Ի դեպ, վերջիններիս զգալի մասը տեղի ադրբեջանցիների կողմից բարբարոսաբար ոչնչացվել է, մի մասն էլ օգտագործվել որպես շինանյութ: Մահմեդական լծից ազատագրվելու հետո աստիճանաբար վերականգնվում է հայկական հնամենի քաղաքի տնտեսությունը, մշակութային կյանքը, որն ամբողջովին կազմալուծել էին ադրբեջանցի բարբարոսները 1988–1991 թթ.

1985 թվականից քաղաքային կարգավիճակ է տրված նաև **Մարտակերտին ու Մարտունուն**:

Մարտակերտի բնակչությունը 1990 թ. կազմում էր 9,0 հազ., իսկ 2003 թ.՝ 4,5 հազ. մարդ: Նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Մարտունու բնակչությունը 7,7 հազ. մարդ էր (1990 թ.), իսկ 2003 թ.՝ 4,7 հազ. մարդ: Նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է:

1994 թվականից հանրապետության քաղաքների թվին է պատկանում նաև ազատագրված **Բերձորը** (Լաչինը), որը արագորեն վերականգնվում է: Բերձորը Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոնն է, 2003 թ. ունի 2,9 հազ. բնակիչ: Այն արագ վերականգնվում է, հեռավորությունը Ստեփանակերտից 50 կմ է:

1995 թվականից քաղաքի կարգավիճակ ունի նաև **Քարվաճառ** քաղաքը, որը այժմյան Շահումյանի շրջանի վարչական կենտրոնն է, բնակչությունը 0,5 հազ. մարդ (2003 թ.):

Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերից, տների քանակով և բնակչությամբ խոշորը ***ճարտար*** գյուղն է: Հաջորդը *Չայլուն է*, այնուհետև՝ *Հաթերքը, Թալիշը, Բերդաշենը, Մեծ Թաղերը, Վաղուհասը, Վանքը, Ներքին Հոռաթաղը, Առաջածորը, Տողը, Ազոխը, Տումին, Մաճկալաշենը, Քերթը, Սոսը, Գիշին, Խնուշինակը, Սեյտիշենը (այժմ՝ Խաչեն), Ավետարանոցը* և այլն:

9.3 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

ԼՂՀ–ն գտնվում է Փոքր Կովկասի հարավարևելյան մասում: Մակերևույթը տիպիկ լեռնային է: Այն ընդգրկում է Ղարաբաղի բարձրավանդակի արևելյան հատվածը և արևմուտքից թեքությամբ իջնում դեպի արևելք՝ ծուլվելով Կուր–Արաքսյան ընդարձակ հարթավայրի մեծ մասը կազմող Արցախի դաշտավայրին:

Մակերևույթի այդպիսի թեքության պատճառով էլ Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր գետերը, սկիզբ առնելով հանրապետության արևմտյան և հարավարևմտյան ամբողջ երկարությամբ ձգվող բարձրաբերձ լեռներից, հոսում են դեպի արևելք և հարավ-արևելք՝ Արցախի դաշտավայրը: Լեռնային արագահոս գետերը միլիոնավոր տարիների ընթացքում Արցախ–Ղարաբաղ լեռնաշխարհի մակերևույթը վեր են ածել անդնդախոր ձորերի և գեղատեսիլ գետահովիտների:

Դրանցից հատկապես նշանավոր են համեմատաբար ընդարձակ յոթ գետահովիտներ, որոնք արևելյան հարթավայրային մասից լեզվաձև մտնում են հանրապետության լեռնային տարածքի խորքերը: Դրանք Իշխանագետ, Վարանդա, Խոնաշեն, Կարկառ, Խաչեն, Կավարտ, Թարթառ գետերի հովիտներն են: Հյուսիսային մասում զգալի տարածք է զբաղեցնում Ինջա գետի գեղատեսիլ հովիտը: Իսկ առավել ընդարձակը Թարթառ գետի հովիտն է (Մարտակերտի շրջան):

Այժմյան ԼՂՀ–ի տարածքում յուրահատուկ կարևոր տեղ է զբաղեցնում Հագարու գետի հովիտը: Այս գետը իր վերին հոսանքի բազմաթիվ վտակներով սկիզբ է առնում Ղարաբաղի բարձրավանդակի աղբյուրներից և թափվում Արաքսի ավազանին պատկանող Որոտան գետի մեջ:

Թարթառի գետահովիտը, հատկապես միջին և վերին հոսանքներում բնութագրվում է հազվադեպ ու անկրկնելի գեղեցկությամբ: Հենց այդ հատվածում է գտնվում Հաթերքի անդնդախոր ձորը իր ծեռակերտ և անձեռակերտ հուշարձաններով, ջրվեժներով: Համեմատաբար լայնաշերտ են նաև Վարանդայի ու Կարկառի հովիտները: Վերջինս անզուգական գեղեցկություն ունի հատկապես Շուշի քաղաքի մոտ: Նշված, ինչպես նաև Խաչենի, Խոնաշենի ու մյուս գետահովիտները, հատկապես հանրապետության արևելյան, համեմատաբար հարթավայրային մասում կարևոր դեր են խաղում երկրագործության համար: Սրանցից յուրաքանչյուրն էլ վտակներին համապատասխան բաժանված է ավելի փոքր գետահովիտների:

Այսպիսով՝ հանրապետության տարածքն ունի խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Համեմատաբար հարթավայրային են Մարտունու ու Մարտակերտի շրջանների արևելյան՝ ցածրադիր մասերը:

Լեռնային Ղարաբաղի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մ (Հայաստանի Հանրապետության միջին բարձրությունը ավելի քան 1800 մ է):

Հյուսիսից հարավ՝ Լեռնային Ղարաբաղի արևմտյան ամբողջ սահմանով, ձգվում է Ղարաբաղի լեռնաշղթան, որից էլ սկսվում են երկրամասի տարածքով արևմուտքից դեպի արևելք ձգվող մի շարք լեռնաճյուղեր: Հյուսիսային մասով է ձգվում Մռավի լեռնաշղթան, որտեղ էլ գտնվում են Արցախի ամենաբարձր լեռնագագաթները՝ Գոմշասարը (3724 մ) և Մռավը (3343 մ): Սրանք մտնում են Մարտակերտի շրջանի հյուսիսարևմտյան հատվածի մեջ: Ղարաբաղի լեռնաշղթայում է «Քառասուն աղջիկ» լեռնագագաթը (2828 մ), որը գտնվում է Ասկերանի շրջանում, իսկ ավելի հարավ՝ Մեծ Քիրս (2725 մ) և Դիզափայտ (2480 մ) լեռնագագաթները: Մեծ Քիրսը գտնվում է Շուշիի և Հադրութի շրջանների սահմանագլխին, իսկ Դիզափայտը՝ Հադրութի շրջանում:

Ի տարբերություն Զանգեզուրի և Հայաստանի Հանրապետության տարածքի մյուս մասերում գտնվող լեռների (որոնք հիմնականում անտառազուրկ են)՝ Արցախ–Ղարաբաղի լեռներն անտառածածկ են:

Արցախ–Ղարաբաղի լեռնաշխարհը ամբողջ Հայկական լեռնաշխարհի նման բնութագրվում է ակտիվ սեյսմիկությամբ: Մեծ տեղ են գրավում երկրաբանական անցյալում առաջացած հրաբխային ապարները: Զգալի են նաև յուրայի ու կավճի դարաշրջանների նստվածքային ապարները: Հանրապետության հատկապես բարձրադիր մասերում ակնառու կերպով արտահայտված են երկրաբանական տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած երկրակեղևի բարձրացումներն ու իջեցումները, որտեղ առկա են հրաշագեղ բնական բազալտները: Մակերևույթի այդ ձևերը ավելի ցայտուն են արտահայտված հատկապես Թարթառ, Կարկառ և Վարանդա գետերի ավազաններում:

Ընդհանուր առմամբ՝ Արցախի այժմյան երկրաբանական կառուցվածքը շատ ընդհանրություններ ունի Զանգեզուր – Դարալյագազի հետ, որտեղ հրաբխային բազմատեսակ ապարների հետ միասին լայնորեն տարածված են կրաքարերն ու նստվածքային մյուս ապարները:

ԿԼԻՄԱՆ

Լեռնային Ղարաբաղի կլիմայական պայմանները մեղմ ու չափավոր են: Այստեղ օդի տարեկան միջին ջերմաստիճանը +10.5°C: Ամենատաք ամիսներն են հուլիսը և օգոստոսը, որոնց օդի միջին ջերմաստիճանը կազմում է +21.7°C և +21.4°C: Ամենատաք վայրերը Մարտակերտի ու Մարտունու շրջանների հարթավայրային մասերն են: Մարտունու շրջանում առավել տաք է Մարտունի–Կուրոպատկինո–Գնորգավան, իսկ Մարտակերտի շրջանում՝ Մարտակերտ–Մարգուշավան գոտիները:

Հունվարյան միջին ջերմաստիճանը կազմում է – 0,2°C, փետրվարյանը՝ –0,9°C: Ձմռան ամիսներին համեմատաբար ցուրտ գոտին ընդգրկում է բարձրլեռնային՝ մասը, առավելապես հյուսիսային հատվածը, Մռավի լեռնաշղթան:

ԼՂՀ–ի տարածքում երկարատև սառնամանիքներ և շոգեր հիմնականում չեն լինում: Ցածրադիր վայրերում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը իջնում է մինչև –16°C, նախալեռնային վայրերում՝ –19°, բարձրլեռնային վայրերում՝ –23°: Իսկ բացարձակ առավելագույն ջերմաստիճանը ցածրադիր և նախալեռնային վայրերում հասնում է +40°, միջին լեռնային և լեռնային վայրերում՝+32°C–ից +37°C:

Գարնանային ցրտահարությունը միջին հաշվով վերջանում է մարտի 26–ից ապրիլի 18–ը ընկած ժամանակահատվածում:

Աշնանային ցրտահարությունը սկսվում է հոկտեմբերի 1–ից ու տևում մինչև նոյեմբերի 24–ը ընկած ժամանակաշրջանը:

Աղյուսակ 52

Օդի միջին ամսական և միջին տարեկան ջերմաստիճանները ԼՂՀ տարածքում՝ ըստ գոտիների °C–ով

Ամիսները	Գոտիները				
	Ցածրադիր գոտի (ծովի մակերևույթից մինչև 400մ բարձրությամբ)	Նախալեռնային գոտի (ծովի մակերևույթից 400–610մ բարձրությամբ)	Միջին լեռնային գոտի (ծովի մակերևույթից 700–1100մ բարձրությամբ)	Լեռնային գոտի (ծովի մակերևույթից 1300–1800մ բարձրությամբ)	Միջինը ԼՂՀ–ում
1	2	3	4	5	6
Հունվար	1,8	1,0	0,0	–2,6	–0,9
Փետրվար	3,0	2,1	1,2	–1,9	0,9
Մարտ	6,5	4,9	4,0	0,9	3,8

1	2	3	4	5	6
Ապրիլ	12,0	9,7	9,3	5,8	8,9
Մայիս	17,5	16,1	1,6	1,7	14,3
Հունիս	22,1	20,5	18,6	14,0	18,3
Հուլիս	25,6	23,8	22,1	17,2	21,7
Օգոստոս	25,2	23,3	21,8	17,1	21,4
Սեպտեմբեր	20,3	18,4	17,1	13,0	16,8
Հոկտեմբեր	14,9	12,9	11,9	8,8	11,7
Նոյեմբեր	805	7,4	6,2	3,5	6,1
Դեկտեմբեր	4,2	2,7	2,3	–0,1	2,0
Միջին տարեկանը	13,5	11,8	10,8	7,2	10,5

Աղյուսակ 53

Օդի միջին տարեկան առավելագույն և բացարձակ առավելագույն ջերմաստիճանները ԼՂՀ տարածքում՝ ըստ գոտիների

Գոտիները	Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը (°C–ով)	Օդի տարեկան միջին առավելագույն ջերմաստիճանը (°C–ով)	Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է (°C–ով)
Ցածրադիր գոտի	+40	+18,6	Մարգուշավանում՝ +40
Նախալեռնային գոտի	+40	+16,9	Մարտունիում՝ +40
Միջին լեռնային գոտի	+37	+15,6	Ստեփանակերտում՝ +37
Լեռնային գոտի	+32	+11,4	Շուշիում՝ +32

Աղյուսակ 54

Օդի միջին տարեկան նվազագույն և բացարձակ նվազագույն ջերմաստիճանները ԼՂՀ տարածքում՝ ըստ գոտիների

Գոտիները	Օդի միջին տարեկան նվազագույն ջերմաստիճանը (°C–ով)	Օդի տարեկան բացարձակ նվազագույն ջերմաստի-ճանը (°C–ով)	Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է (°C–ով)
Ցածրադիր գոտի	+8,9	–16	Մարգուշավանում՝–16
Նախալեռնա-յին գոտի	+7,1	–19	Մարտունիում՝ –19
Միջին լեռնա-յին գոտի	+6,7	–20	Հաթերքում՝ –20
Լեռնային գոտի	+3,7	–23	Լիսագորում՝ –23

Աղյուսակ 55

ԼՂՀ տարածքում թափվող միջին ամսական և միջին տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ ըստ օդերևութաբանական կայանների (մմ–ով)

Դիտակները	Ամիսները												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1.Մարտակերտ	13	17	30	52	81	73	34	26	34	30	21	13	428
2.Հաթեք	26	26	51	77	122	102	45	38	58	51	26	19	641
3.Սունջինկա	15	20	35	59	94	84	40	30	40	40	25	15	497
4.Ստեփանակերտ	18	21	37	67	103	91	42	32	40	42	28	16	535
5.Մարտունի	12	16	29	49	78	70	33	25	33	33	20	12	410
6.Ասկերան	16	21	37	63	99	89	42	31	42	42	26	16	524
7.Շուշի	27	27	48	75	122	101	46	37	55	54	28	23	643
8.Լիսագոր	25	30	43	60	110	99	39	38	50	49	33	24	600
9.Հադրութ	34	34	58	63	69	52	17	23	52	69	69	34	574

Աղյուսակ 56

ԼՂՀ տարածքում թափվող մթնոլորտային տեղումների քանակն ըստ ուղղաձիգ գոտիների

Գոտին	Միջին տարեկան տեղումների քանակը (մմ–ով)	Առավելագույն տե–ղումներով բնորոշվող ամիսը և այդ ամսում թափվող տեղումների քանակը (մմ–ով)	Նվազագույն տե–ղումներով բնո–րոշվող ամիսը և այդ ամսում թափ-վող տեղումների քանակը (մմ–ով)
Ցածրադիր գոտի (ծովի մակերևույթից մինչև 400մ բարձրությամբ)	482	Մայիս, 88	Դեկտեմբեր, 15
Նախալեռնային գոտի(ծովի մակերևույթից 400–610մ բարձրությամբ)	531	Մայիս, 111	Դեկտեմբեր, 13
Միջին լեռնային գոտի(ծովի մակերևույ-թից 700–1100մ բարձրությամբ)	651	Մայիս, 137	Դեկտեմբեր, 18
Լեռնային գոտի(ծովի մակերևույթից1300–1800մ բարձրությամբ)	698	Մայիս, 135	Դեկտեմբեր, 26

ԼՂՀ–ում գերակշռում են լեռնահովտային քամիները: Գարնան և ամառան ամիսներին (հատկապես մայիս–հունիսին) հաճախակի են ուժեղ ամպրոպները:

Մթնոլորտային տեղումների քանակը, ըստ գոտիների, տարեկան միջին հաշվով տատանվում է 480–700 մմ–ի սահմաններում: Ամենից քիչ տեղումներ թափվում են դաշտային գոտում (հատկապես Մարտակերտի ու Մարտունու շրջանների հարթավայրային մասերում), որտեղ դրանք տարեկան կազմում են 560–830 մմ: Տեղումների մեծ մասը թափվում է մայիս–հունիս ամիսներին: Այդ ամիսներին հաճախակի են նաև տեղատարափ անձրևներն ու կարկուտը, որոնք երբեմն խիստ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը (բարձրլեռնային մասերում տեղադրված էին կարկուտի դեմ պայքարի հրետանային հատուկ կետեր, որոնք հիմնականում կանխում էին դրանց վնասը): Կարկուտ տեղում է հանրապետության բոլոր շրջաններում, բացառությամբ դաշտային գոտու: Այստեղ ձյան շերտը կայուն չէ: Լեռնային Ղարաբաղի տարածքի մյուս մասերում ձյան շերտը մեծ է ու կայուն (31–36 սմ), ձյունը լեռնային գոտում տևում է շուրջ 70 օր, իսկ բարձրլեռնային գոտում՝ մինչև հունիսի սկզբները: Բարձրլեռնային գոտում ձյունը տեղում է սեպտեմբերին և մնում մինչև ամառան սկիզբը: Տեղումների նվազ քանակի պատճառով, դաշտային մասում գյուղատնտեսական մշակաբույսերը երբեմն խիստ տուժում են երաշտից: Այդ հատվածում այգեգործությունն ու պտղաբուծությունը զարգանում են բացառապես ոռոգման միջոցով: Տարվա ընթացքում մառախլապատ է լինում 100–125 օր:

Արցախ–Ղարաբաղի տարածքի զգալի մասն ունի չոր մերձարևադարձային կլիմայական պայմաններ, որտեղ աճում են խաղողը, թուզը, նուռը, թութը, արքայանարինջը, ինչպես նաև այդ պայմաններին յուրահատուկ մյուս պտուղները: Կլիմայական այսպիսի պայմաններ ունեն հատկապես Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի ու Հադրութի շրջանների ցածրադիր վայրերը:

ՀՈՂԵՐԸ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Տիպիկ լեռնային բնույթի հետևանքով Լեռնային Ղարաբաղում լավ է արտահայտված բնական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը: Դրան համապատասխան էլ բնութագրվում են ոչ միայն կլիմայական պայմանները, այլև հողերի տիպերն ու բուսականության տեսակները: Ցածրադիր վայրերում՝ Մարտունու և Մարտակերտի շրջանների արևելյան տափաստանային մասերում, հողերը կիսաանապատային, անապատատափաստանային, գորշ, բաց շագանակագույն են, որոնք աստիճանաբար, դեպի արևմուտք փոխվում են մուգ շագանակագույնի:

Նախալեռնային և լեռնային վայրերում տարածվում են մուգ դարչնագույն, պոդզոլային հողատեսակները: Բարձր լեռնալանջային մասերում տարածված են ալպիական գոտուն համապատասխանող լեռնամարգագետնային, ճմամարգագետնային, որոշ դեպքերում՝ տորֆային հողերը:

Գետահովտային գործադիր մասերում բավականին հզոր շերտերով զգալի տարածություններ են գրավում նստվածքային հողերը, որոնք բնութագրվում են բարձր բերքատվությամբ: Այդ առումով հատկապես արժեքավոր են Թարթառ, Խաչեն, Ամարաս, Կարկառ, Խոնաշեն գետերի հարթավայրային մասի ավազանների հողերը:

Լեռնային Ղարաբաղի բուսական աշխարհը բազմազան է: Այստեղ աճող բուսատեսակները հասնում են երկու հազարի: Լեռնային Ղարաբաղում լերկ ժայռեր քիչ կան, բացառությամբ բարձր լեռնագագաթային մասերի: Արցախ–Ղարաբաղի լեռները ծածկված են անտառներով, թփուտներով կամ խոտային բուսականությամբ: Ծովի մակերևույթից մինչև 300–350 մ բարձրություն ունեցող տափաստանային մասերում գերակշռում են հիմնականում կիսաանապատային տիպի բուսատեսակները: Այս վայրերում տարածված են հատկապես օշինդրը, ուղտափուշը, կապարը, ոզնախոտը, երնջակը, ինչպես նաև կածուկ ու ղլղլան (այդ բուսատեսակները այդպես են անվանում ղարաբաղցիները) կոչվող փշոտ բուսատեսակները: Աճում են նաև որոշ խոտաբույսեր, բայց նոսր: Խոտային բուսականությունը հարուստ է նախալեռնային շրջաններում, ուր աճում են նաև ցաքի ու դաշտային մոշի թփուտատեսակներ:

Շատ ավելի բազմազան են միջին լեռնային, մինչև 1500 մ բարձրություն ունեցող գոտու բուսատեսակները: Այստեղ հատկապես տարածված են թիթեռնազգի խոտաբույսերը, ավելուկը, շեպը, եղինջը, ծնեբեկը, թրթնջուկը, կնճմնճուկը, կինազոխը, իշակաթնուկը, արջաթանթուլը, հազատերևուկը, թյանգին և այլն: Մեծ տարածություններ են զբաղեցնում նաև թփուտները, հատկապես մոշուտներն ու ցաքուտները: Ձուլալ գետերի ու առվակների մեջ, դրանց ափերին աճում են ջրկոտեմ և դաղձ: Այս բարձրությունից էլ հիմնականում սկսվում է հանրապետության անտառային գոտին:

Անտառներ կան Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններում, բայց առավել անտառաշատ են Մարտակերտի, որին բաժին է ընկնում ԼՂՀ–ի

անտառների կեսից ավելին՝ 54%, Ասկերանի՝ 24% և Հադրութի՝ 16% շրջանները: Անտառներում աճում են կաղնու, բոխու, լորենու, հացենու, թեղու, թխկենու, կեչու, հաճարենու, ճապկու ծառատեսակները: Գետահովիտների երկարությամբ տարածված են ուռենիները: Ղարաբաղի անտառները շատ հարուստ են պտղատու վայրի ծառատեսակներով՝ խնձորենի, տանձենի, ընկուզենի, սալորենի, հոնի, զկռենի, տկողնի, սզնենի և այլ ծառատեսակներ: Առանձին վայրերում աճում է նաև շագանակենի: Ամենուրեք տարածված են մոշի և մասրենու թփուտները:

Անտառները կազմում են հանրապետության տարածքի շուրջ 40%–ը (ՀՀ–ում այն 10–12% է): Անտառների ընդհանուր տարածքը կազմում է 200 հազ. հա, որտեղ փայտանյութի պաշարները գնահատվում են ավելի քան 20մլն մ³(առանց Շահումյանի շրջանի): Լեռնային Ղարաբաղի անտառներն ունեն արդյունաբերական, հողապաշտպան, ջրապաշտպան և առողջարանային նշանակություն: Արդյունաբերական տեսակետից հատկապես կարևոր են Մարտակերտի շրջանի անտառները:

Անտառներում ծառերի ստվերում աճում է խազազ կոչվող բուսատեսակը, որը մոտավորապես սխտորի տեսք ու սոխի համ ունի և օգտագործվում է թարմ վիճակում: Կա նաև ծմակթափան կոչվող սունկ: Վայրի ծառատեսակների ու թփերի պտուղները, ինչպես նաև հանրապետության տարածքում աճող բույսերի շատ տեսակներ ունեն սննդարար բարձրորակ հատկություններ, և արցախյան բնակչությունը շատ հնուց դրանք թարմ, չորացված ու վերամշակված ձևով օգտագործում է որպես սննդամթերք, համեմունք, դեղամիջոցներ: Անտառների բացատներում առատորեն աճում են բազմատեսակ բուրումնավետ ծաղիկներ ունեցող բույսեր՝ մանուշակ, անտառավարդ, մասրենու վարդ (զարվարդ), կակաչ, շուշան, մեխակ, նունուֆար, երեքնուկ, անթառամ և այլն: Աճում է մոշի երեք տեսակ՝ սևամոշ, մռամոշ, գետամոշ: Արևադեմ լեռնալանջերին տարածված է բռնչի ծառատեսակը, որը տալիս է բուժիչ պտուղ, իսկ փայտը շատ ամուր է և կարծր: Անտառային գոտուց վեր, հիմնականում 2300 մ բարձրությունների վրա, սփռված են ալպիական, իսկ ավելի բարձր՝ լեռնագագաթային մասերում՝ տունդրային յուրահատուկ բուսատեսակները: Շատ բազմազան է նաև ԼՂ կենդանական աշխարհը:

Դաշտային գոտում հանդիպում են ջեյրան (եղջերուի տեսակ), վայրի այծ, եղեգնուտներում՝ վայրի խոզ: Անտառներում կան գորշ արջ, գայլ, վայրի կատու, լուսան, աղվես, նապաստակ, քնամուկ, սկյուռ, խլուրդ, ինչպես նաև վայրի խոզ:

Թռչուններից տարածված է վայրի սագը, բադը, թուրաջը (հատկապես դաշտային մասերում), կաքավը, սոխակը, արտույտը, սալամը, մոշահավը,

կաչաղակը, ագռավը, ճնճղուկը, աղավնին, արծիվը, ուրուրը (վերջին երեքը՝ հատկապես լեռնային մասերում), կկուն, տատրակը, չարդը, փայտփորիկը, հոպոպը, բուն և այլն: Դաշտավայրային մասերում և նախալեռնային քարքարոտ հատվածներում տարածված են օձերի շատ տեսակներ (այդ թվում թունավոր), մողեսներ, գետահովտային և անտառոտ վայրերում՝ լորտու, կրիա, ոզնի: Բազմազան են մորեխների, բզեզների, թիթեռների տեսակները: Համեմատաբար մեծ գետերում կան ձկներ:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հանրապետության տարածքում մթնոլորտային տեղումները միջին հաշվով տարեկան կազմում են 580մմ: Այդ նշանակում է, որ ԼՂՀ տարածքում (առանց Քաշաթաղի ու Շահումյանի շրջանների) տարեկան գոյանում է ավելի քան 2530մլն մ³ ջուր (Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 18 մլրդ մ³ ջուր): Այդ ծավալից 1390 մլն մ³–ը, այսինքն՝ 55%–ը, գոլորշիանում է, իսկ մյուս մասը՝ 1140 մլն մ³–ը, առաջացնում է մակերեսային և ստորերկրյա հոսք:

Ընդհանուր առմամբ, ԼՂՀ–ն Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի համեմատությամբ մեկ շնչի և 1 քառ. կմ տարածքի հաշվով ջրային ռեսուրսներով անհամեմատ լավ է ապահովված:

Լեռնային Ղարաբաղում կան բազմաթիվ ոչ մեծ, բայց արագահոս, զուլալ ու քչքչան գետեր ու գետակներ:Դրանց մեծ մասը պատկանում է Կուր, իսկ փոքր մասը՝ Արաքս գետերի ավազաններին: Լեռնային Ղարաբաղի գետերը ջրառատ չեն, հատկապես ամռան ամիսներին խիստ սակավաջուր են դառնում: Սնման աղբյուրներն են՝ ձնհալքը, անձրևները և աղբյուրները: Քանի որ բոլոր գետերն էլ լեռնային բնույթ ունեն, հոսում են մեծ թեքություններով, հետևաբար ունեն էներգետիկական նշանակություն: Իսկ այդ հնարավորության արդյունավետ օգտագործումը վառելիքային (հանքային) ռեսուրսներից զուրկ այս հանրապետության համար ունի հեռանկարային մեծ նշանակություն: Դրանք կարևոր են նաև դաշտային և նախալեռնային վայրերի հողատարածությունների ոռոգման համար: Սակայն, գետերի զգալի մասի ջրերը հավաքվում էին ջրամբարներում և հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվում Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս՝ Ադրբեջանի տարածքում:

Համեմատաբար խոշորը Թարթառ (պատմական անցյալում կոչվում էր Տրտու) գետն է: Այն սկիզբ է առնում Ղարաբաղի սարահարթի աղբյուրներից (Քարվաճառի տարածք) ու հարավ–արևմուտքից հյուսիս–արևելք ուղ-

ղությամբ անցնելով Մարտակերտի, Թարթառի ու Բարդայի շրջաններով, թափվում է Կուր գետը: Թարթառի վերին հոսանքի խոշոր վտակը Թրղի գետն է, որը սկիզբ է առնում Մռավի լեռնաշղթայից և Մաղավուզ գյուղից մի քանի կմ դեպի արևմուտք միանում Թարթառին: Այս գետն իր վտակներով Լեռնային Ղարաբաղի տարածքում հոսում է մեծ թեքություն ունեցող, բայց անտառապատ լեռնալանջերով: Թարթառի հովիտն իր անդնդախոր կիրճով, բազմաթիվ ջրվեժներով անկրկնելի գեղեցկություն ունի: Գետի երկարությունը հասնում է 200 կմ–ի, գետավազանի մակերեսը ավելի քան 2650 կմ² է:Գարնան վերջին ու ամռան սկզբներին առատ տեղումների և ձնհալքի հետևանքով Թարթառը հաճախակի վարարում է և դուրս գալիս իր ափերից: Վարարումները նախկինում, հատկապես նրա ստորին հոսանքում, մեծ վնաս էին հասցնում գյուղատնտեսությանը: Սարսանգի հիդրոէլեկտրակայանի ջրամբարը կարգավորել է գետի ստորին հոսանքի ռեժիմը: Սարսանգի հեկից բացի, որը շահագործման է հանձնվել 1970–ական թթ., ավելի շուտ Թարթառի վրա կառուցվել է նաև Մադաղիսի հեկը, որը շահագործման է հանձնվել 1940–ական թթ. (այժմ այն չի գործում):

Իր մեծությամբ երկրորդը **Խաչեն** գետն է, որը նույնպես հոսում է Մարտակերտի շրջանի տարածքով, համարյա Թարթառին զուգահեռ ուղղությամբ: Խաչենը սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային մասում գտվող Կարմրասար (Ալաղայա) լեռնազանգվածի լանջերից: Այն իր վտակներով հոսում է Վանք, Առաջածոր, Քոլատակ, Ծմակահող, Շահմասուր գյուղերի հողատարածություններով և դուրս գալիս Աղդամի շրջան: Խաչեն գետի մեծ վտակը Քոլատակն է, որը, սկիզբ առնելով Քառասուն աղջիկ լեռնազանգվածի փեշերից, վերին հոսանքով հոսում է Ասկերանի շրջանի տարածքով: Խաչեն գետի երկարությունը 119 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ շուրջ 660կմ²: Թարթառի նման, այս գետը նույնպես գարնան վերջին հաճախակի հորդանում և դուրս է գալիս ափերից: Հարթավայրային մասում նրա ջրերը հավաքվում էին և հիմնականում օգտագործվում Աղդամի շրջանում, ոռոգման նպատակով: Խաչենի հովիտը (վերին և միջին հոսանքում) նույնպես անտառապատ է, ունի գեղատեսիլ բնություն:

Մարտակերտի շրջանի հյուսիսային մասով է հոսում Կուր գետի մյուս վտակը՝ Ինջա գետը, որը սկիզբ է առնում Մռավի լանջերից: Այն զգալի դեր է խաղում շրջանի հյուսիսային մասի հողերի ոռոգման համար:

Մյուսը **Կարկառ** գետն է, որը բազմաթիվ վտակներով սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի Շուշվա տարածքում գտնվող բարձրաբերձ լեռնալանջերից: Այդ վտակներից մեկը՝ Քարինտակ գետը, անցնում է Շուշի քաղաքի արևմտյան և հարավային մասերով՝ անդնդախոր կիրճով, որտեղից դուրս գալով միանում է քաղաքի արևելյան մասով հոսող Ղայբալու գետին: Այս երկու վտակներից առաջացած գետը Ստեփանակերտի մոտ միանում է Կարկառին: Ասկերանի մոտերքում նրան են միանում նաև Մեղրագետ (Բալլուջա) և Բաղարա վտակները: Հարթավայրային այս հատվածում Կարկառի հովիտը զգալիորեն լայն է: Ընդհանուր առմամբ նրա երկարությունը հասնում է 115կմ, ավազանի մակերեսը՝ 1490 կմ²–ի: Վերին հոսանքում Կարկառի վտակները ունեն անկրկնելի գեղատեսիլ, անտառապատ ավազաններ, ջրվեժներ: Գետն ունի էներգետիկական և ոռոգման նշանակություն: Նրա վրա ժամանակին կառուցվել են փոքր հիդրոէլեկտրակայաններ (որոնք այժմ չեն գործում): Հարթավայրային մասում նրա ջրերը մասամբ օգտագործվում են Ասկերանի, իսկ ավելի շատ օգտագործվում էին Աղդամի շրջանի հողերը ոռոգելու համար:

Մյուս գետերից նշանավոր են **Վարանդա և Իշխանագետը**, որոնք պատկանում են Արաքսի ավազանին: Իշխանագետը սկիզբ է առնում Քիրսի հարավահայաց լանջերից և հոսում է Հադրութի շրջանի տարածքով, ունի ավելի քան 80 կմ երկարություն: Վարանդա գետը սկիզբ է առնում Քիրսի արևելյան լանջերից, երկարությունը ավելի քան 100 կմ, հոսում է Մարտունու շրջանի Թաղավարդ, Սիստորաշեն, Կարմիր Շուկա բնակավայրերի մոտով և Ֆիզուլի քաղաքի մոտ թափվում այդտեղ կառուցված արհեստական ջրամբարը: Վարանդա գետի վտակն է Ամարաս գետը, որը սկիզբ է առնում Բովուրիխանի լեռների հարավային լանջերից, հոսում է Մարտունու շրջանի Մամնա, Կոլխոզաշեն, Խերխան, Մաճկալաշեն գյուղերի և պատմական Ամարաս վանքի մոտով ու Լեռնային Ղարաբաղի սահմանագլխին միանում Վարանդա գետին:

Խոնաշեն գետը սկիզբ է առնում Բովուրխանի լեռների հյուսիսային լանջերից և հոսելով Մարտունու շրջանի Նանգի, Սպիտակաշեն գյուղերի մոտով ու Մարտունի քաղաքի միջով հասնում է Կուրապատկինո բնակավայրի մոտ գտնվող հարթավայրը: Սա սակավաջուր գետ է և չորային տարիներին Մարտունու շրջանի արևելյան մասի հարթավայրում էլ կորչում է:

ԼՂՀ առավել խոշոր գետերից է Հագարու գետը, որի նշանավոր վտակը Աղավնո գետն է: Հագարուն սկիզբ է առնում Քաշաթաղի լեռնաշղթայից (Ղարաբաղի բարձրավանդակ), թափվում է Արաքսի ավազանին պատկանող Որոտան գետը:

Բացի դրանից, բոլոր շրջաններում գարնանային ձնհալքերի ու անձրևների հետևանքով առաջանում են սելավային գետակներ, հեղեղատներ, որոնք հիմնականում ժամանակավոր հոսք ունեն:

ԼՂՀ–ի գետերն ունեն էներգետիկական և ոռոգման կարևոր նշանակություն: Էներգետիկական նշանակության տեսակետից հատկապես մեծ է

Թարթառ, Խաչեն, Կարկառ և Հագարու գետերի դերը, որոնց վերին հոսանքները ծովի մակերևույթից ունեն ավելի քան 2000մ, իսկ Թարթառինը ավելի քան 3000մ բարձրություն:

Հանրապետության խոշոր գետի՝ Թարթառի հիդրոէներգետիկական ամբողջ հնարավորությունը կազմում է 150 հազ.կվտ,որի շուրջ 80%–ը տեխնիկապես հնարավոր է օգտագործել: Առայժմ իրացված է դրա 30%–ը (50 հազ. կվտ), տարեկան 120 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությամբ:

ԼՂՀ–ի հիդրոռեսուրսները առավելագույն հնարավորությունների օգտագործման դեպքում կարելի է ոչ միայն լրիվ ապահովել հանրապետության հեռանկարային պահանջները էլեկտրաէներգիայի բնագավառում, այլև լուծել ոռոգման, նոր հողատարածությունների յուրացման, ձկնաբուծության զարգացման հարցերը: Հանրապետության մեծ ու փոքր բոլոր գետերի հնարավորությունները օգտագործելու դեպքում կարելի է տարեկան արտադրել ավելի քան 600 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, որը կարող է ոչ միայն ապահովել նրա հեռանկարային բոլոր պահանջները, այլև զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա մատակարարել մայր Հայաստանին:

Արցախ–Ղարաբաղի տարածքը հարուստ է սառնորակ աղբյուրներով: Դրանց թիվը հատկապես մեծ է լեռնային, անտառոտ վայրերում: Սարալանջերին, անտառների փեշերին այսօր էլ կարելի է տեսնել առանձին անհատների կողմից կամ նախաձեռնությամբ դեռ շատ վաղուց կառուցված, սրբատաշ բազալտով ձևավորված աղբյուրներ, որոնց շրջակայքում շոգ օրերին իրենց հանգիստն են անցկացնում այցելուները: Շատերն են հիացել Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի մոտ գտնվող, ավելի քան 2000–ամյա հսկա ծառի ստվերում կառուցված երեքակն աղբյուրով: Այդպիսի աղբյուրների թիվը շատ է Արցախ–Ղարաբաղում:

Շատ գյուղերում բնակիչներն ունեն իրենց ջրհորները: Հարթավայրային մասերում, հատկապես Մարտունու շրջանի Ճարտարի, Մարտունու, Գիշու, Նենգու դաշտերում կառուցված են Քյահրիզ կոչվող աղբյուրներ, իսկ ոռոգման համար օգտագործվում են արտեզյան աղբյուրները:

ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի տարածքում կան մետաղային և ոչ մետաղային մի շարք հանքային հանածոներ, սակայն հանրապետության տարածքը երկրաբանական հետախուզման առումով անբավարար է ուսումնասիր-

ված: Հանքային վառելիքի տեսակներից դեռևս հայտնաբերված են քարածխի երևակումներ, Մարտակերտի շրջանի Մաղավուզ,Նարեշտար և Քոլատակ գյուղերի մոտ: Մետաղային հանքային հանածոներից այստեղ դեռ հնուց հայտնաբերված են բազմամետաղների, հատկապես ցինկի, կապարի, պղնձի, ոսկու, ծծմբային կոլչեդանի, երկաթի հանքավայրեր ու երևակումներ:

Գունավոր մետաղների հանքավայրերով և երևակումներով հատկապես նշանավորը Մարտակերտի շրջանն է՝ Թարթառ և Խաչեն գետերի միջև ընկած տարածքը: Մասնավորապես, հանրահայտ է Մեհմանա գյուղի մոտ գտնվող բազմամետաղների հանքավայրը, որը համեմատաբար լավ է ուսումնասիրված, և որի օգտագործման համար «Հայգունմետնախագիծ» ինստիտուտի կողմից դեռևս տասնամյակներ առաջ կազմված է տեխնիկատնտեսական հիմնավորում: Այդպիսի հանքանյութի երևակում է հայտնաբերված նաև նախկին Շահումյանի շրջանում (Բուզլուխից հարավ):

Պղնձի ու այլ գունավոր մետաղների (այդ թվում նաև ոսկու) հանքախմբեր երևակումներ կան Դրմբոն, Գյուլաթաղ (Ծաղլաշեն), Կուսապատ, Վանք, Ղազանչի, Լիսագոր, Զարդանաշեն, Մեծ Թաղեր գյուղերի մոտ, ինչպես նաև Հաթերքից դեպի հյուսիս՝ Մռավ սարի լանջին: Արդեն գործնական աշխատանքներ են ձեռնարկված Դրմբոնի մոտ ոսկու և պղնձի արդյունահանման համար:

Ծծմբային կոլչեդանի ու այլ մետաղների պաշարներ են հայտնաբերված Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր, Վանք, Գյուլաթաղ, Կուսապատ գյուղերի մոտ: Դրանցից առավել հետաքրքիրը Գյուլաթաղի հանքավայրն է: Երկաթահանքի երևակումներ կան Ցոր և Մաղավուզ գյուղերի մոտ: Վոլֆրամի երևակում է հայտնաբերված Լիսագորի մոտ: Մանգանի երևակում կա Խութավանքի ու Էրքեջի մոտակայքում:

Առաջինը գտնվում է Մարտակերտի շրջանի արևմտյան մասում, երկրորդը՝ Շահումյանի շրջանում (նախկին):

Բարիտի հանքավայր կա Բուզլուխի (Շահումյանի նախկին շրջան), երևակում՝ Տոնաշենի և Կուսապատի մոտ: Մետաղային օգտակար հանածոներով նշանավոր են ԼՂՀ ազատագրված Քարվաճառի (այժմ Շահումյանի) ու Քաշաթաղի շրջանները:

Մասնավորապես, մանգանի, պղնձի երևակումներ կան Քարվաճառի, Քաշաթաղի շրջաններում, վոլֆրամի ու գունավոր այլ թանկարժեք մետաղների հանքավայրեր՝ Քարվաճառի (Շահումյանի) շրջանում:

Արցախ–Ղարաբաղի տարածքը համեմատաբար հարուստ է ոչ մետաղային ռեսուրսներով: Մասնավորապես, շատ են մարմարի և մարմարեց-

ված կրաքարի հանքավայրերը: Դրանցից խոշորը Ստեփանակերտ քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Հարավ գյուղի հանքավայրն է: Այդ գյուղը գտնվում է մարմարի շերտերի վրա: Հարավ գյուղի մարմարի հանքավայրերը/ պաշարներով նախկին ԽՍՀՄ–ի տարածքում ամենախոշորներից են: Այստեղ մարմարի շերտի հզորությունը հասնում է հարյուրավոր մետրերի: Հանքավայրը հետազոտված է, ունի արդյունաբերական նշանակություն, կատարվում են արդյունահանման աշխատանքներ: Այս հանքավայրի մարմարը բաց վարդագույն է, օգտագործվում է հասարակական շենքերի ներսը հարդարելու, հուշարձաններ կառուցելու և այլ նպատակների համար:

Մարմարի հանքավայրեր կան նաև Շուշի, Ստեփանակերտ (Վարարականի, Ջառինբաղի) քաղաքների, Ասկերանի շրջանի Քարագլուխ, Մարտունու շրջանի Նորշեն և Ճարտար, Ասկերանի շրջանի Խրամորթ և այլ գյուղերի մոտ: Դեկորատիվ նշանակության տեսակետից հատկապես բարձրորակ են Քարագլուխ գյուղի մոտ գտնվող հանքավայրերի վարդագույն և սպիտակավուն, ինչպես նաև Նորշեն գյուղի մոտ գտնվող հանքավայրի վարդագույն ու մոխրագույն մարմարները: Կան նաև գրանիտի մի շարք հանքավայրեր. դրանցից դեկորատիվ հատկություններ ունեն հատկապես Մարտունու շրջանի Նենգի գյուղի մոտ գտնվող հանքավայրի մուգ գորշ և սև գույնի, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող հանքավայրի սպիտակ և մոխրագույն գծերով շագանակագույն գրանիտները, ինչպես նաև Հադրութի մոտ գտնվող հանքավայրի կապտավուն գրանիտադիորիտները:

Մարտակերտի շրջանը հարուստ է տուֆի պաշարներով: Առավելապես հիշատակության արժանի են Վանք գյուղի մոտ գտնվող վարդագույն տուֆի հանքավայրը: XIII դարում այս հանքավայրի տուֆով է կառուցվել հանրահայտ Գանձասարի վանքը: Իսկ նույն շրջանի Չլրդան գյուղի մոտ կան ֆելզիտային տուֆի պաշարներ: Այստեղի տուֆը մուգ կաթնագույն է, բնական գեղեցիկ նախշերով և երեսպատման հիանալի նյութ է հանդիսանում: Երեսպատման համար կարող են օգտագործվել նաև Ասկերանի շրջանի Սեյտիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղի մոտ գտնվող դիաբազի պաշարները:

Հանրապետության բոլոր շրջանները հարուստ են բազալտի ու անդեզիտի պաշարներով, որոնք դեռ շատ հնուց ղարաբաղցիներն օգտագործել են շինարարական նպատակների համար:

Ղարաբաղի գյուղերի տների մեծ մասը կառուցված է տեղական բազալտով: Մարտակերտի ու Մարտունու շրջաններում կան կրաքարի խոշոր պաշարներ, որոնք նույնպես լայնորեն օգտագործվում են շինարարության

մեջ՝ որպես որմնանյութ: Մարտակերտի մոտ գտնվող հանքավայրի կրաքարը արդյունահանվում է մեքենայական եղանակով: Որպես որմնանյութ օգտագործելուց բացի կրաքարը Արցախ–Ղարաբաղում հնուց կիրառվել է նաև կիր ստանալու համար: Մինչև այժմ էլ կրի ստացման նախկին մեթոդն օգտագործվում է հանրապետության տնտեսություններում:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ կրաքարից կրի արտադրության նախկին ձևը այստեղ պետք է միշտ պահպանել: Կրաքարից արտադրվող կիրը, հատկապես գյուղական վայրերում, նպատակահարմար է օգտագործել ցեմենտի փոխարեն:

Լեռնային Ղարաբաղի տարածքում կա նաև ցեմենտի արտադրության հումք, որով հատկապես նշանավոր են Ասկերանի ու Մյուրիշենի (Մարտունու շրջան) հանքավայրերը:

Գրեթե բոլոր շրջաններում կան գետավազի, լեռնային ավազի պաշարներ, որոնք օգտագործվում են շինարարության մեջ: Կան կավերի, ինչպես նաև բենտոնիտային կավերի պաշարներ, որոնք, սակայն, ուսումնասիրված չեն: Գրաֆիտի պաշարների երևակումներ կան Ջանյաթաղ (Մարտակերտի շրջան), իսկ վիմագրական քարի պաշարներ՝ Հացի և Մյուրիշեն (Մարտունու շրջան), Կուսապատ (Մարտակերտի շրջան), Բուզլուխ (Շահումյանի շրջան) գյուղերի մոտ: Գործնական նշանակություն ունեն գիպսահողի (Մարտակերտի շրջան) պաշարները Շահումյանի (Վերին Հեշեն և Մանաշիդի հանքավայրեր) և Մարտակերտի շրջաններում, ինչպես նաև բարձրորակ կավի պաշարները՝ Մարտունու շրջանի Նենգի, Ղավախան, Մարտակերտի շրջանի Հաթերք, Մոխրաթաղ, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղերի մոտ:

Լեռնային Ղարաբաղի տարածքում հայտնաբերվել են նաև հանքային ջրի ռեսուրսներ: Հանքային ջրի որոշ աղբյուրներ այստեղ հայտնի են եղել դեռ շատ վաղուց: Ուսումնասիրվել է այդպիսի աղբյուրների տասից ավելի խումբ, շուրջ երկու տասնյակ ելքերով: Դրանցից հատկապես գործնական նշանակություն ունեն Լիսագորի (Շուշիի շրջան) հանքային ջրի աղբյուրները, որոնք ունեն երկաթի մեծ բաղադրություն: Ամռան ամիսներին տարբեր վայրերից մեծ թվով հանգստացողներ են գալիս այստեղ հանքային ջուր խմելու կամ լոգանք ընդունելու համար: Որոշ ժամանակ այստեղ գործում էր նաև հանքային ջրի լցման փոքր արտադրամաս: Լիսագորի հանքային ջրի աղբյուրները գտնվում են Շուշի քաղաքից 16–18 կմ հեռավորության վրա, Շուշի–Գորիս ավտոճանապարհին շատ մոտ: Հանքային ջրի աղբյուրներ կան նաև Մարտակերտի (Թարթառի հովտում), Հադրութի (Տումի) շրջաններում: Սակայն դրանք դեռևս գործնական նշանակություն չունեն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Մարտակերտի շրջանի Քոլատակի ու Հադրութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող հանքային աղբյուրները հնարավոր է շահագործել: Գործնական կարևոր նշանակություն ունի Շուշիի շրջանի Շրլան գյուղի մոտ գտնվող հանքավայրը, որի բազայի վրա Շուշի քաղաքում կառուցված է առողջարան–բուժարան: Հանքային ջրի պաշարներ են հայտնաբերված նաև Բերդաձորում և Ստեփանակերտի մոտ(Կարկառի ափին):

Հանքային բուժիչ ջրերը, մեղմ կլիման, մաքուր օդը, զուլալ գետերը, զանազան պտուղներով հարուստ անտառները, գեղատեսիլ հովիտները, ջրվեժները, անզուգական քարանձավները, Սարսանգի գեղատեսիլ ջրամբարը, Մռավ, Քիրս, Դիզափայտ և մյուս գեղատեսիլ սարերը ԼՂՀ–ի բնական ռեկրեացիոն ռեսուրսներն են: Սակայն Արցախ – Ղարաբաղ աշխարհը շատ հարուստ է նաև ձեռակերտ ռեկրեացիոն ռեսուրսներով:

Դրանք այստեղ գտնվող պատմաճարտարապետական հազարավոր հուշարձաններն են, եկեղեցական համալիրները, բերդերը, պարիսպները, կամուրջները: Դրանք կարևոր բազա են սանատորիաների, հանգստավայրերի և զբոսաշրջության ժամանակակից կենտրոնների ստեղծման համար:

Սակայն ճշմարտությունն այն է, որ Լեռնային Ղարաբաղի բնական բոլոր տեսակի ռեսուրսները կարիք ունեն հանգամանորեն ուսումնասիրման, դրանցից յուրաքանչյուրի բազմակողմանի տնտեսական գնահատման: Մասնավորապես, առաջնահերթ նշանակություն ունի ԼՂՀ տարածքում առկա գունավոր մետաղների հանքավայրերի ուսումնասիրումը, դրանց որակական և քանակական հատկանիշների որոշումը: Իսկ դա հնարավորություն կտա որոշելու, թե անկախացած երիտասարդ այդ հանրապետության նշված մետաղային հանածոները ինչ ուղղություններով է նպատակահարմար օգտագործել: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ԼՂՀ տարածքում (հատկապես նրա տափաստանային վայրերում՝ Մարտունու և Մարտակերտի ցածրադիր վայրերում) նավթի պաշարների հայտնաբերման հիմնահարցը: Որ այդ վայրերում նավթի պաշարներ պետք է լինեն, դա շատ հավանական է:

Հեռանկարային տեսանկյունից մեծ անհրաժեշտություն է ԼՂՀ–տարածքում եղած քարանյութերի՝ մարմարների, գրանիտների, կրաքարի, տուֆի պաշարների վերագնահատումը, դրանց շահագործումը ռացիոնալ հիմքերի վրա դնելու համար:

Այդ նույն նպատակով անհրաժեշտ է նաև հանքային ջրի աղբյուրների ուսումնասիրությունը: Իսկ այս բոլորը հնարավոր է իրականացնել ԼՂՀ–ում համապատասխան երկրաբանական–հետախուզական ծառայության

ստեղծման շնորհիվ: Տնտեսական նշանակության տեսակետից շատ հրատապ է նաև ԼՂՀ բուսական, հողային, կենդանական ռեսուրսների հանգամանորեն ուսումնասիրությունը և դրանց տնտեսական գնահատականը:

Այս առումով, անհրաժեշտություն է զգացվում հատկապես հանրապետության անտառային ռեսուրսների արդի վիճակի, վերարտադրության, դրանց որակական և քանակական ցուցանիշների ճիշտ հաշվարկումը, անտառային ռեսուրսների կադաստրի ստեղծումը:

9.4. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պերճախոս կերպով վկայում են պատմական, ճարտարապետական, հնագիտական, աշխարհագրական, երկրագործական հարուստ ու բազմազան տվյալները, պատմական Հայաստանի Արցախ– Ղարաբաղ նահանգի տարածքը անհիշելի ժամանակներից ամբողջապես հայաբնակ է եղել: Խոսելով Ղարաբաղի բնակչության մասին՝ Լեոն իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ գրել է, որ Լեռնաստանը միշտ անաղարտ է պահել ազգագրական կերպարանքը: Այստեղ միշտ ապրում էր հոծ և միապաղաղ հայ ազգաբնակչություն, որ բնիկ էր, չուներ բոլորովին կամ շատ քիչ ուներ իր մեջ եկվոր այլատարություն: Մի ժողովուրդ, որ անհիշելի ժամանակներից կառչում էր իր հողին ու բնությանը, նրանց աշխատակցությամբ իր հարմար բնավորություն և խառնվածք էր մշակում, իր ինքնուրույն հոգեբանությունն էր ուժեղացնում և տիրական դարձնում:

Հետագայում՝ հիմնականում XII դարի սկզբներին՝ թաթար–մոնղոլների երկարատև արշավանքներից հետո, Արցախ–Ղարաբաղ նահանգի արևելյան տափաստանային որոշ հատվածում բնակություն են հաստատել քոչվոր անասնապահ թաթարներ: Միջին Ասիայից XI դարից հետո Անդրկովկաս թափանցած թաթարների բնակության հաստատման վայրը հիմնականում Կուր–Արաքսյան դաշտավայրի արևելյան չոր տափաստանային հատվածն էր, որը հարմար էր որպես ձմեռային արոտավայր ոչխարաբուծության համար:

Լեռնային Ղարաբաղի նախկին Ինքնավար Մարզը նույնպես (ինչպես ամբողջ Արցախը), իր կազմավորման սկզբից էլ (ինչպես նշվել է) ամբողջապես հայաբնակ է եղել: Թաթար–մոնղոլների, արաբների, պարսիկների, թուրքերի պարբերաբար կրկնվող ավերիչ հարձակումների հետևանքով ինչպես ամբողջ Արցախի, այնպես էլ այժմյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի բնակչության տեղաբաշխման մեջ զգալի տեղա-

շարժեր են կատարվել, բազմիցս ավերվել են բնակավայրերը, կառուցվել նորերը: Հատկապես հարթավայրային մասերում, բնակավայրերի հետ միասին, թշնամիների կողմից ավերվել ու ոչնչացվել են նյութական, ճարտարապետական, մշակութային հազարավոր հուշարձաններ: Այդ հարձակումների հետևանքով բնակչության մեծ մասը հարթավայրային մասերից տեղաշարժվել է նախալեռնային ու լեռնային համեմատաբար դժվարամատչելի վայրե/ւն ու անտառները: Այս վայրերում էլ ղարաբաղցիները նորից են հիմնել բնակավայրեր, կառուցել ամրոցներ, եկեղեցիներ:

Արցախ–Ղարաբաղի բնակլիմայական պայմաններն այնպիսին են, որ նախկինում անբարենպաստ բնական այս կամ այն պայմանից խիստ տուժում էր բնակչությունը: Մասնավորապես, ժամանակ առ ժամանակ դաշտերն ու այգիները ուժեղ կարկտահարվում էին, երաշտից տուժվում կամ մկներն ու մորեխներն էին ոչնչացնում հացահատիկի արտերը: Այս պատճառներով էլ լեռնաշխարհի բնակիչների զգալի մասը մեկնում էր տարբեր վայրեր՝ կենսամիջոցներ հայթայթելու: Չնայած այդ տեղաշարժերին՝ XVII դարի երկրորդ կեսին Ղարաբաղի հայերի թիվը հասել էր ավելի քան 300 հազարի:

Տարբեր պատճառներով նախկինում Արցախի բնակչության որոշ մասն արտագաղթել է Իրան, Մերձավոր Արևելքի տարբեր երկրներ, Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս, Մոսկվա, Պետերբուրգ և Ռուսաստանի այլ վայրեր: Մեծ թվով ղարաբաղցիներ վաղուց բնակություն են հաստատել Բաքվում, Թիֆլիսում և Անդրկովկասի մյուս քաղաքներում: Միաժամանակ տարբեր վայրերից զգալի թվով հայեր են ներգաղթել և մշտական բնակություն հաստատել այստեղ: Մասնավորապես, նրանք ներգաղթել են Պարսկաստանի տարբեր բնակավայրերից (հատկապես Մարաղայից, Ղարադաղից, Խոյից) Զանգեզուրից, Միլի տափաստանի հայաբնակ գյուղերից: Այս մեխանիկական տեղաշարժերի հետևանքով, բնականաբար, Արցախ–Ղարաբաղի բնակչությունը քանակական փոփոխման է ենթարկվել: Նախկինում շատ քիչ, բայց նկատելի փոփոխվել է նաև ազգային կազմը: XVIII–XIX դարերում Միլի տափաստանից տեղափոխվել և միայն Շուշի քաղաքում բնակեցվել են որոշ թվով թաթարներ: Ներկայիս Մարտակերտի ու Մարտունու շրջաններում բնակեցվել են Ռուսաստանից աքսորված ռուս աղանդավորներ, իսկ Մարտակերտի Մեհմանա գյուղում մշտական բնակություն են հաստատել հույներ, որոնք հնուց հրավիրվել են այստեղ՝ որպես հանքարդյունահանման մասնագետներ:

Լեռնային Ղարաբաղի տարածքի ցածրադիր որոշ մասեր թաթար–ադրբեջանցիները թափանցել են հիմնականում XX դարում:

1921 թ. տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,4%–ը՝ եղել են հայերը, մնացած 5,6 %–ը՝ մյուս ազգությունները:

Խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության թիվը մեծ չափով պակասել է Ադրբեջանի հայաթափման քաղաքականության հետևանքով: Մինչև 70–ական թվականների վերջերը մարզի հայ բնակչության թիվը ոչ միայն չի աճել, այլ նվազել է: Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը (հատկապես աշխատունակ, ընտանիքավոր երիտասարդ տղամարդիկ) մեկնում էին հեռավոր վայրեր աշխատելու, նյութական միջոցներ հայթայթելու նպատակով, ապա խորհրդային իշխանության, ադրբեջանական գաղութատիրության տարիներին մարզից մեկնում էին հիմնականում չամուսնացած երիտասարդությունը՝ սոցիալ– տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով: Երևանում, Բաքվում, Մոսկվայում, Կիևում և մյուս քաղաքների ուսումնական հաստատություններում կրթություն ստանալուց հետո, հատկապես տեխնիկական, տնտեսագիտական մասնագիտություն ստացածները չէին վերադառնում՝ հայրենի մարզում աշխատանքային տեղեր չլինելու պատճառով: Վիճակն աննշան փոխվեց 1970–ական թվականներից հետո, երբ Ստեփանակերտում կառուցվեցին արդյունաբերական որոշ ձեռնարկություններ, իսկ գյուղատնտեսության մեջ որոշ չափով ընդգրկվեցին նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներ: Սակայն ԼՂՀ–ի աշխատունակ բնակչության, հատկապես 18–40 տարեկան երիտասարդների արտահոսքը մինչև վերջերս էլ շարունակվում էր, պատճառը համապատասխան ուսումնական հաստատությունների ու աշխատատեղերի, անհրաժեշտ պայմանների պակասն էր:

Աղյուսակ 57

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸ

Տարիները	Բնակչության թիվը (հազ. մարդ)
1	2
1921 թ. մարդահամար	131,5
1926 թ. մարդահամար	125,3
1939 թ. մարդահամար	150,8
1959 թ. մարդահամար	130,4
1970 թ. մարդահամար	150,3
1979 թ. մարդահամար	162,2
1987 թ. մարդահամար	180,2

1	2
1989 թ. մարդահամար	189,0
2001 թ. գնահատական	141,5
2002 թ. //–//	143,7
2003 թ. //–//	145,0

Թե ինչպես է փոխվել խորհրդային իշխանության տարիներին Լեռնային Ղարաբաղի բնակչության թվային կազմը, երևում է վերը զետեղված աղյուսակից:

Ինչպես երևում է, 1929–1970 թթ. Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը չի աճել: Դա բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում մեծ թվով ղարաբաղցիների զոհվելու և հատկապես մարզում սոցիալ–տնտեսական տարրական պայմանների բացակայությամբ, որի հետևանքով երիտասարդությունը հեռանում էր իր բնօրրանից:

Ի դեպ, այդ ժամանակաշրջանում մարզի բնակչության բնական աճը բավականաչափ բարձր է եղել: Այսպես՝ 1955 թ. հազար մարդուն ընկնող բնական աճը կազմել է 25,1, 1956 թ.՝ 28,8, 1957 թ.՝ 29,8, իսկ 1959 և 1961 թթ.՝ 32 մարդ: Այս ցուցանիշները Խորհրդային Միության չափանիշով առավել բարձրներից էին: Չնայած դրան՝ 1959 թ. մարզի բնակչության թիվը 1939 թ. համեմատությամբ պակասել է 20,4 հազարով: Հետագա ժամանակաշրջանում բնակչության բնական աճի ցուցանիշը մեծ չափով իջել է: Մասնավորապես, 1971 թ. 1000 մարդու հաշվով այն կազմել է 17,8, իսկ 1975 թ.՝ 15,5 մարդ:

1980–ական թթ. բնակչության բնական աճը նորից նկատելիորեն բարձրացավ և 1986 թ. հազար մարդու հաշվով կազմեց 17,7 մարդ: 1990–ական թվականներին, կապված Լեռնային Ղարաբաղին պարտադրված պատերազմի հետ, բնական աճը կտրուկ իջել է:

Սոցիալ–տնտեսական և այլ անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով, երիտասարդության հարկադրված արտահոսքի հետևանքով 1939–1979 թթ. մարզի հայ բնակչության թիվը ոչ միայն չի աճել, այլև ավելի քան 11 հազ. մարդով պակասել է: Եվ դա այն դեպքում, երբ նույն թվականներին ադրբեջանցիների թիվն աճել է 23,2 հազարով (տե՛ս աղյուսակ):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ (հազ. մարդ)

	Մարդահամարի տվյալներով					
	1926 թ.	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1989 թ.
1	2	3	4	5	6	7
Ամբողջ բնակչությունը այդ թվում	125,3	150,8	130,4	150,3	162,3	189
1	2	3	4	5	6	7
հայեր	111,7	132,8	110,1	121,1	123,1	145,4
ադրբեջանցիներ	12,6	14,1	18,0	27,2	37,3	40,5
ռուսներ	0,6	3,2	1,8	1,3	1,3	1,9
այլ ազգեր	0,4	0,7	0,5	0,7	0,6	1,0

Վիճակագրական փաստացի տվյալները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղում արագորեն, մեխանիկորեն աճել է ադրբեջանցիների թիվը: Այսպես, օրինակ, եթե 1939 թ. մինչև 1970 թ. մարզի ամբողջ բնակչության թիվը 150,8 հազարից դարձել է 150,3 հազար, այսինքն՝ քսան տարվա ընթացքում ոչ միայն չի աճել, այլ 500–ով նվազել է, ապա նույն ժամանակաշրջանում ադրբեջանցիների թիվը 14,1 հազարից հասել է 27,2 հազարի: Իսկ եթե համեմատենք 1926–1979 թթ. տվյալները, ապա պարզ կդառնա, որ այդ ժամանակահատվածում հայերի թիվը իրենց ինքնավար մարզում աճել է միայն 10%–ով, իսկ ադրբեջանցիների թիվը ավելացել է երեք անգամ: Ի դեպ, նշված ժամանակաշրջանում զգալի չափով նվազել է նաև մարզում ապրող ռուսների թիվը:

Հայերից բացի ԼՂՀ–ում ապրում են տասից ավելի ազգերի ներկայացուցիչներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հույներ, թաթարներ, հրեաներ, լեզգիներ, վրացիներ, աբխազներ և այլ ազգություններ, որոնք միասին 1970 թ. կազմել են 19–20%: Հայերը 1970 թ. կազմել են Ղարաբաղի բնակչության ավելի քան 80%–ը: 1979 թ. տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմել է 162,2 հազ. մարդ, որից հայեր՝ 123,1 հազ. (75,9%), ադրբեջանցիներ՝ 37,2 հազ. (23%), ռուսներ՝ 1,3 հազ. (0,8%), այլ ազգիներ՝ 0,6 հազ. (0,3%): Մարզի հիմնական բնակչության՝ հայերի թիվը, նշված ժամանակաշրջանում գրեթե չի աճել: Մինչդեռ ադրբեջանցիների թիվն այդ ընթացքում աճել է ավելի քան 2,6 անգամ:

Անառարկելի է այն հանգամանքը, որ եթե Ադրբեջանի գաղութային քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները ամենուրեք չոտնահարվեին, նրանք ստիպված չլինեին հեռանալ հայրենիքից, ապա ԼՂՀ–ի բնակչության թիվը արդեն 1989 թ. 189,0 հազ. փոխարեն կկազմեր շուրջ 500 հազ. մարդ:

Հանրապետության աշխատանքային ռեսուրսների ընդհանուր քանակից արտադրության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը 1979 թ. կազմել է 85,5%, 1989 թ.՝ 60,8%: Զբաղվածների թիվը ըստ նշված տարիների կազմել է 1979 թ.՝ 70503, 1989 թ.՝ 76589, 1996 թ.՝ 37508 մարդ: 1996 թ. տվյալներով՝ հանրապետության զբաղված բնակչության ընդհանուր քանակից 21,5%–ը բաժին է ընկնում արդյունաբերությանն ու տրանսպորտին, 27,2%–ը՝ գյուղատնտեսությանը, 0,5%–ը՝ այլ բնագավառներին, 50,8%–ը՝ ոչ արտադրական ոլորտին:

1989 թ. հունվարի մարդահամարի տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմել է ավելի քան 189 հազ. մարդ: Սումգայիթյան ոճրագործությունների հետևանքով Ադրբեջանի հայաբնակ վայրերից (Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից) փախած ավելի քան 22 հազ. հայեր (1989 թ, վերջին) հանգրվան են գտել Լեռնային Ղարաբաղում, այդ պատճառով երկրամասի բնակչությունը զգալի չափով ավելացել է, հայերի տեսակարար կշիռն այժմ կազմում է շուրջ 95%: Լեռնային Ղարաբաղին վերամիավորված նախկին Շահումյանի շրջանի հայ բնակչության թիվը կազմել էր 16,6 հազ. մարդ: Այսպիսով՝ մոտավոր տվյալներով՝ 1991 թ. վերջին գնահատականով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը հասնում էր 227 հազ. մարդու: Ավելացնենք, որ վերը նշված պատճառով Ադրբեջանից փախել ու բռնագաղթվել են, և Հայաստանի Հանրապետությունում հանգրվանել ավելի քան 330 հազ. հայ: Ստեղծված ծանր իրավիճակի հետ կապված ԼՂՀ բնակչության թիվը վերջին տարիներին նկատելիորեն իջել է:

1950–ական թթ. սկսած՝ զգալիորեն աճել է ԼՂՀ–ի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը: 1926 թ. այստեղ քաղաքային բնակչության թիվը կազմում էր 8,3 հազ. մարդ (այսինքն՝ մարզի բնակչության ընդամենը 6%–ը), 1989 թ. հունվարի մարդահամարի տվյալներով՝ այն հասել է 97 հազ. մարդու, որը կազմում է ամբողջ բնակչության ավելի քան 50%–ը: 1996 թ. քաղաքային բնակչությունը կազմել է 56,8%:

Բնակչության խտությունը 1 կմ^2 վրա մինչև 1990–ական թթ. վերջը կազմում էր շուրջ 43 մարդ: Համեմատաբար խիտ էր բնակեցված նախալեռնային գոտին, որտեղ խտությունը հասնում էր 65 մարդու: Կանանց տեսակարար կշիռը ԼՂՀ–ի բնակչության ընդհանուր քանակում կազմել է 1996

թ. 51,8%: 1989թ. մարդահամարի տվյալներով՝ արտադրության մեջ զբաղվածների ընդհանուր թվում բարձրագույն ու միջնակարգ-կրթություն ունեցողները կազմել են 70577 մարդ կամ ամբողջի 92%–ը:

Ինչպես արդեն վերը նշվել է, 2003 թ. տվյալներով՝ ԼՂՀ բնակչության թիվը կազմել է 145 հազ. մարդ: 1989 թ. հետո ընկած ժամանակաշրջանում Հանրապետության բնակչության թվաքանակի ակնառու նվազումը կապված էր 1988–1994 թթ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետ: Այդ տարիներին հիմնահատակ ավերվել են Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Ասկերանի շրջանների հատկապես հարթավայրային վայրերի մեծ թվով գյուղերը, որոնց բնակիչների զգալի մասը թուրք–ազերիների կողմից ցեղասպանության են ենթարկվել (առավել զարհուրելի ձևով ոչնչացվել են Լենինավանի, Մարաղայի բնակիչները), մյուս մասը վայրենաբար բռնագաղթվել է:

Ստեփանակերտ քաղաքի անդադար ռմբակոծությունների պատճառով, բնակչության զգալի մասը զոհվել է, մեծ թվով ստեփանակերտցիներ շրջակա ու այլ շրջանների քաղաքային ու գյուղական բնակիչներ ստիպված են եղել հեռանալ Արցախից: Լրիվ դեպորտացիայի է ենթարկվել Շահումյանի նախկին շրջանի բնակչությունը, որը այսօր էլ մնում է զավթված Ադրբեջանի կողմից: Պատերազմի հետ կապված հեռացել է Շուշի քաղաքի, Բերձորի (Լաչինի), Քարվաճառի (այժմ Շահումյանի) տարածաշրջանների բնակչությունը: 1994 թ. մայիսին կնքված զինադադարից հետո էլ, Արցախում ստեղծված սոցիալ–տնտեսական դժվարությունների հետ կապված, նույնպես բնակչության արտահոսք է տեղի ունեցել, որոնք շարունակվել են մինչև վերջերս: Չնայած բնակչության արտահոսքը մեծապես մեղմացել է, սակայն աշխատատեղերի բացակայության պատճառով ԼՂՀ–ից մեծ թվով մեկնածների դեռևս աննշան քանակությունն է վերադառնում: Այնուհանդերձ վերջին տարիներին հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի նկատելի աճ է զգացվում:

2003 թ. տվյալներով՝ ԼՂՀ բնակչության 57% (77,6 հազ. մարդ) կազմում է քաղաքային բնակչությունը, 43% (67,4 հազ. մարդ)՝ գյուղականը:

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այստեղ՝ ԼՂՀ–ում նույնպես բնակչության բնական աճը վերջին տարիներին մեծապես նվազել է:

Այնուհանդերձ ԼՂՀ–ում բնակչության բնական աճը, յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով, ՀՀ–ի համեմատությամբ միջին հաշվով ավելի քան երկու անգամ բարձր է: Մասնավորապես, 2000 թ. ԼՂՀ–ում բնակչության բնական աճը 1000 մարդու հաշվով կազմել է 7,3, 2001 թ.՝ 8,6, իսկ 2002 թ.՝ 6,5 մարդ: Հետաքրքիր է, որ քաղաքային բնակչության բնական աճի ցու-

ցանիշը գյուղականի համեմատությամբ 2 միավորով բարձր է: Մասնավորապես, 2002 թ. ԼՂՀ քաղաքային բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով կազմել է 7,5 մարդ, իսկ գյուղական բնակչության բնական աճը՝ 5,5 մարդ:

Շատ կարևոր է, որ բնակչության բնական աճը ԼՂՀ միջին ցուցանիշից շատ բարձր է ազատագրված և վերաբնակեցված շրջաններում: Մասնավորապես՝ Քաշաթաղի ու Շահումյանի (Քարվաճառի) շրջաններում 2001 թ. համապատասխանաբար բնակչության բնական աճը հազար մարդու հաշվով կազմել է 18,4 և 19,2, իսկ 2002 թ.՝ երկու շրջաններում էլ 16 մարդ:

Ճիշտ է նշված շրջանները, ինչպես նաև Շուշիի շրջանը դեռևս շատ դանդաղ է վերաբնակեցվում, սակայն առկա բնակչության բնական աճը, ինչպես նշվեց, բարձր է: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ արդեն ԼՂՀ–ից արտագաղթը նվազում է: Մասնավորապես, 2002 թ. ԼՂՀ է ժամանել 1813 մարդ, իսկ հանրապետությունից մեկնողների թվաքանակը կազմել է 1138 մարդ, այսինքն՝ մեխանիկական հավելաճը եղել է 675 մարդ:

Բնակչության սեռային կազմը ունի հետևյալ պատկերը՝ տղամարդկանց թիվը 2002 թ. կազմել է 69,2 հազ. մարդ կամ 49%, կանանց թիվը՝ 75,8 հազ. մարդ 51,0%:

Վերջին տարիներին առաջընթացի զգալի տեղաշարժեր են կատարվել ԼՂՀ աշխատանքային ռեսուրսների բնագավառում: 2000 թ. տվյալներով՝ հանրապետության աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թիվը կազմել է 80,16 հազ., իսկ 2002 թ.՝ 82,15 հազ. մարդ: Իսկ տնտեսապես ակտիվ բնակչությունը համապատասխանաբար կազմել է 55,6 և 57,7 հազ. մարդ, ըստ որում, տնտեսության տարբեր ճյուղերում զբաղվածների թիվը կազմել են 50,75 և 52,97 հազ. մարդ:

Գրանցված գործազուրկների թիվը հանրապետությունում 2000 թ. եղել է 3,54 հազ., 2002 թ.՝ 3,4 հազ. մարդ, այդ թվում գործազուրկների ընդհանուր թվից 3,18 հազարը կանայք էին, իսկ 219 տղամարդիկ:

2003 թ. տվյալներով՝ ԼՂՀ–ում կա 10 քաղաք, գյուղական 267 համայնք և գյուղական 320 բնակավայր:

Գյուղական բնակավայրերից բնակչության թվով, 1989 թ. տվյալներով, առավել խոշորներն են Մարտունու շրջանում՝ Ճարտար (ավելի քան 4,2 հազ. բնակիչ), Բերդաշեն (1560 բնակիչ), Գիշի (1418 բնակիչ), Սոս (1038 բնակիչ), Թաղավանդ (1280 բնակիչ), Մաճկալաշեն (599 բնակիչ), Խնուշինակ (630 բնակիչ), Ասկերանի շրջանում՝ Խրամորթ (689 բնակիչ), Բադարա (849 բնակիչ), Խնձրիստան (682 բնակիչ), Մարտակերտի շրջանում՝ Այգեստան (Չայլու) (2800 բնակիչ), Հաթերք (2654 բնակիչ), Թալիշ (2205 բնակիչ), Վաղուհաս (1395 բնակիչ), Վանք (1443 բնակիչ), Ներքին Հոռաթաղ (1423 բնակիչ), Մաղավուզ (1177 բնակիչ), Առաջաձոր (1072 բնակիչ), Հադրութի շրջանում՝ Մեծ Թաղեր (1501 բնակիչ), Տումի (904 բնակիչ), Ազոխ (733 բնակիչ) գյուղերը:

Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը հիմնականում տեղադրված են լեռնային և լեռնահովտային, բայց հարմարավետ վայրերում: Բնակավայրերի նման տեղադրումը բացատրվում է նախ՝ օտար բռնակալներից պաշտպանվելու, երկրորդ՝ հարթ հողատարածությունները չզբաղեցնելու հանգամանքով:

Սակայն ղարաբաղցին ինչպիսի դժվարին, անմատչելի վայրում էլ բնակատեղի ընտրելիս լիներ, հաշվի էր առնում խմելու ջրի ապահովվածության, բնական աղետներից պաշտպանվելու, տրանսպորտային կապի հարմարության հարցերը: Լեռնային Ղարաբաղի բոլոր հին բնակավայրերը թիկունքով հենված են լեռնալանջերին, գյուղերը հայացքով հիմնականում նայում են դեպի արևելք և հարավ:

Երկրամասի բոլոր շրջաններում կան լքված, դատարկված զգալի թվով բնակարաններ, որոնց բնակիչները տեղափոխվել են հարթավայրային գյուղերը, իսկ հիմնականում համապատասխան սոցիալ–տնտեսական պայմանների բացակայության պատճառով՝ առհասարակ հեռացել Ղարաբաղից: Դեռ 1988 թ. ԼՂՀ–ի հայկական գյուղերում, ոչ լրիվ տվյալներով, կար 6000 դատարկ տուն: Մինչդեռ բոլոր բնակավայրերի բնական պայմանները շատ նպաստավոր են բնակության համար: Սոցիալ–տնտեսական համապատասխան միջոցառումները իրականացնելու, աշխատանքի հիմնահարցը լուծելու դեպքում բնակչությունը ոչ միայն կամրապնդի տեղում, այլև մեկնածներն էլ հետ կվերադառնան:

Ինչպես պատմական Հայաստանի մյուս նահանգների, այնպես էլ Արցախ–Ղարաբաղի հայերը հայտնի են իրենց խոսակցական կենցաղային, վարվելակերպի յուրահատկություններով: Արցախ–Ղարաբաղի կանայք պատմական Հայաստանի մյուս նահանգների կանանցից արտաքուստ տարբերվել են իրենց յուրահատուկ արտահագուստով (ղարաբաղցիներն այն անվանում են խլեղ): Ափսոսանքով պետք է նշել, որ այդպիսի արտահագուստով կանայք Արցախում շատ քիչ են մնացել:

Ղարաբաղցին արտաքինով աչքի է ընկնում միջինից բարձր հասակով, գեղեցիկ ու սլացիկ, առնական ու զուսպ տեսքով: Ղարաբաղցիներն իրար հետ ընտանիքում խոսում են ղարաբաղյան բարբառով: Բայց դա երբեք չի խանգարել, որպեսզի նրանք խոսեն նաև մաքուր՝ գրական հայերենով: Ղարաբաղյան բարբառն իր հարստությամբ և կայունությամբ հայ բարբառների

շարքում առաջնակարգ տեղ ունի: Որտեղ էլ ապրելիս լինի ղարաբաղցին, երբեք չի մոռանում և գործածությունից չի հանում իր բարբառը, աշխատում է այն փոխանցել իր զավակներին ու թոռներին:

Սիլվա Կապուտիկյանն այսպես է բնութագրել Ղարաբաղի բարբառը.

Ժայռի նման է այս հին բարբառը,
Ժայռի պես կոշտ է, չհղկված,
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,
Չի պոկի նրան ոչ մի հարված,
Շուրթերի վրա այնպես է բառը,
Ինչպես որ ժայռն է հողում խրված...

Ղարաբաղցին աչքի է ընկնում աշխատասիրությամբ, համառությամբ, քաջությամբ, հպարտությամբ, վեհանձնությամբ, ինքնասիրությամբ, ճշմարտախոսությամբ: Նա հավատարիմ և անդավաճան ընկեր է, մեծ հայրենասեր: Ղարաբաղցի հայի կերպարը շատ դիպուկ է բնութագրված այս լեռնաշխարհի բանաստեղծ զավակի՝ Հրաչյա Բեգլարյանի ու նույն լեռնաշխարհի զավակ Ալեքսեյ Հեքիմյանի երաժշտությամբ ստեղծված հետևյալ երգում.

Պատվել գիտի միշտ իր հյուրին,
Գիտի գինը աղ ու հացի,
Միշտ հյուրասեր ու միշտ բարի–
Միշտ սրտաբաց ղարաբաղցին:

Ո՞ւր էլ լինես, ի՛մ բարեկամ,
Դու նրա հետ ընկերացի՛ր,
Լավ ընկերոջ համար՝ անգամ
Կյանքը կտա ղարաբաղցին:

Կռվում լինի, աշխատանքում՝
Խիզախում է ինչպես արծիվ,
Վաստակն՝ արդար, խիղճը՝ մաքուր
Արդարադատ ղարաբաղցին:

Մշակ է նա ու շինարար,
Բայց... հասարակ մարդի մի՛ կարծիր և

Գիտնական է ու զորավար
Բազմավաստակ ղարաբաղցին:
Խաղաղ է նա, համբերատար...
Բայց դու հոգով թե դառնացրիր–
Ամպի նման կորոտա
Շանթ ու կրակ ղարաբաղցին...

Ղարաբաղցու բնութագիրը, նրա կերպարի առանձնահատկությունները դիպուկ է բնութագրված նաև օտարազգի շատ հեղինակների կողմից: Նրանցից հատկապես հիշատակության է արժանի *Մագդա Նեյմանը*, որն իր 1899 թ. Ս. Պետերբուրգում հրատարակած «Հայեր» գրքում ջերմորեն է խոսում ղարաբաղցի հայերի մասին:

Մասնավորապես, նա նշում է, որ *Ղարաբաղի հերոսական որդիները վաղուց փառաբանված են խիզախությամբ. քաջությամբ և վճռականությամբ:*

Ղարաբաղի հայերը ընդհանուր առմամբ պարթևահասակ, վայելչակազմ և գեղեցիկ ժողովուրդ են, հանգիստ, բայց որոշ չափով՝ դեմքի խիստ արտահայտությամբ: Նրանց աչքերում չկան այն չարաճճիությունն ու խորամանկությունը, որոնք շատ հաճախ նկատվում են այլ վայրերի հայերի մոտ: Նրանք շատ եռանդուն, ծեռներեց և խելամիտ են...

Ռազմական գործում ղարաբաղցիներն արդեն փառք են ձեռք բերել: Մադաթովը, Բեհբութովը, Լորիս–Մելիքովը, Լազարևը, Տեր–Ղուկասովը և Շելկովնիկովը եղել են կա՛մ Ղարաբաղում ծնվածներ, կա՛մ ղարաբաղցիների սերունդներ:

Դեռևս շատ հնուց ղարաբաղցիները հայտնի են ոչ միայն Արցախ–Ղարաբաղ նահանգը, այլև ամբողջ Հայաստանը օտար բռնակալներից պաշտպանելու իրենց քաջությամբ:

Լեռնային Ղարաբաղը բազմաթիվ փառաբանված զորահրամանատարներ ու հերոսներ է տվել Առաջին համաշխարհային, քաղաքացիական և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին:

Շատ մեծ են Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, Խորհրդային Միության հերոս *Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովի* ծառայությունները՝ Միության ռազմական նավատորմի հզորացման և գերմանական ֆաշիստների ջախջախման գործում: Հ. Իսակովի նախնիները ղարաբաղցիներ են եղել: Նա 8 տարի եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի տեղակալ: Պատերազմի տարիներին ղեկավարել է Բալթյան նավատորմի մարտերը:

Արցախ–Ղարաբաղի Չարդախլու գյուղի ծնունդ են Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս *Հովհաննես Բաղրամյանն* ու զրահատանկային զորքերի մարշալ *Համազասպ Բաբաջանյանը:*

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իր սխրագործություններով փայլեց Հադրութի շրջանի Մեծ Թաղեր (Թաղլար) գյուղի ծնունդ, ավիացիայի մարշալ *Արմենակ Խանփերյանցը (Խուդյակով):* Դեռևս 1939 թ. ֆիններին դեմ մղած մարտերում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է ստացել Մարտունու շրջանի Մաշադիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն) գյուղի ծնունդ *Միքայել Պարսեղովը:*

1988–1994 թթ. Ղարաբաղյան ազգային–ազատագրական շարժման տարիներին, ադրբեջանական հրոսակախմբերի դեմ մղած պայքարում, յուրօրինակ հերոսությամբ փայլեց Ղարաբաղի ամբողջ հայությունը: Ղարաբաղյան ազատագրական պայքարին ամենաակտիվ մասնակցությունը ունեցավ ողջ հայ ժողովուրդը: Ճակատագրական, համազգային այդ պատերազմում Ղարաբաղի հայությունը կրկին ապացուցեց, որ հիրավի ինքը՝ մանուկից մինչև ծերունի, ժողովրդական հերոս է: Ազատագրական այդ պատերազմին մասնակցում էր ամբողջ հայ ժողովուրդը, նրա նվիրյալ զավակները: Սակայն առավել փայլուն դրսևորվեց Մարտունու ջոկատների հրամանատար *Մոնթե Մելքոնյանի,* Գյուլիստանի արծիվ *Շահեն Մեղրյանի, Վլադիմիր Բալայանի, լեգենդար հրամանատար Աշոտ Ղուլյանի (Բեկոր), Լեոնիդ Ազգալդյանի, Յուրա Պողոսյանի, Թաթուլ Կրպեյանի, Սիմոն Աչիկգյոզյանի, Համլետ Գալստյանի, Վարդան Ստեփանյանի, Յուրի Հովհաննիսյանի, Վիգեն Գրիգորյանի, Սերգեյ Թովմասյանի, Միքայել Մանուչարյանի, Սոս Գասպարյանի, Կարեն Բաբայանի, Սամվել Հարությունյանի, Հակոբ Ավանեսյանի, Կամո Դանիելյանի* և հայ ժողովրդի քաջարի բազում այլ զավակների հերոսությունը, որոնք իրենց մատաղ կյանքը զոհեցին Արցախ–Ղարաբաղ աշխարհը թուրք բարբարոսներից իսպառ ազատագրելու համար:

9.5. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1988–1994 թվականների ազատագրական պատերազմի տարիներին ադրբեջանական զինված ուժերի ու դրանց կրնկակոխ հետևող թուրք–ազերիների թալանչի խմբերը մեծ վնաս հասցրին նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսությանը: Հիմնահատակ ավերվեցին արդյունաբերական եղած համարյա բոլոր ձեռնարկությունները: Ավերվեցին

Ինքնավար մարզի հատկապես ցածրադիր վայրերի գյուղերը, կոլտնտեսային բոլոր կառույցները, ձեռնարկությունները (անասնապահական, պահեստային, ոռոգման կառույցները, այգիները և այլ), թալանել, գողացել են մեծ քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք, հարյուրհազարավոր գլուխ անասուններ: Ավերվել են մեծ թվով պետական, մասնավոր շենքեր, տներ, դպրոցների, մշակույթի շենքեր:

Մոտավոր տվյալներով՝ Ինքնավար մարզին հասցված վնասը գնահատվում է 2,5–3,0 մլրդ դոլար (ԱՄՆ–ի):

1994 թ. զինադադարից հետո հիմնականում Հայաստանի Հանրապետության օգնությամբ, հետագայում նաև արտասահմանյան ձեռներեցների ներդրումների շնորհիվ, ԼՂՀ տնտեսությունը անշեղորեն վերականգնվում և զարգանում է:

Դրա փաստացի ապացույցներից մեկը այն է, որ հանրապետության համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2000 թ.՝ 23148,6 մլն, 2001 թ.՝ 23880,7 մլն դրամի դիմաց 2002 թ. կազմել է 26477,9 մլն դրամ: Այսինքն՝ միայն մեկ տարում՝ 2001 թ. համեմատությամբ 2002 թ. աճել է 11,3%–ով: Միջազգային չափանիշով այսպիսի աճ ոչ բոլոր երկրները կարող են ունենալ: Այս աճի կարևոր ցուցանիշներից մեկը վերջին տարիներին ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառության ակտիվացումն է: Բավական է ասել, որ եթե 2000 թ. հանրապետության արտաքին՝ առևտրաշրջանառության ծավալը կազմել է 30325,3 հազ. ԱՄՆ դոլար, ապա 2002 թ. այն հասել էր 62205,4 հազ. դոլար, այսինքն երկու տարում այն ավելացել է ավելի քան երկու անգամ:

Հատկանշական է, որ վերջին տարիներին ԼՂՀ արդյունաբերությունը զգալի չափերով աճում է: Եթե 2000 թ. նյութական արտադրության այս բնագավառի արտադրանքը կազմել է 4854,6 մլն, 2001 թ.՝ 5903,8 մլն, ապա 2002 թ. այն հասել էր 8082,6 մլն դրամի: Ինչպես զգացվում է, արդյունաբերության աճի ցուցանիշը ակնառու է:

Այնուհանդերձ, ԼՂՀ տնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում դեռևս շարունակում է առաջատար տեղ զբաղեցնել գյուղատնտեսությունը:

2000 թ. նյութական արտադրության այս բնագավառի արտադրանքը կազմել է 13452,5 մլն, 2001 թ.՝ 13905,6 մլն, իսկ 2002 թ.՝ 15176,2 մլն դրամ:

Նշված տարիներին 15,3%–ով աճել է նաև տրանսպորտի բեռնաշրջանառությունը, 5,2%–ով կապիտալ շինարարության ծավալը, 9,7%–ով բնակչությանը մատուցված ծառայությունները:

Ստորև ավելի հանգամանորեն քննարկվում է ԼՂՀ տնտեսությունը ըստ ճյուղային կառուցվածքի:

9.6 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1920–ական թթ. Լեռնային Ղարաբաղում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկային: Սակայն գյուղական տարբեր բնակավայրերում կային մետաքսագործական մի քանի տասնյակ, այսպես կոչված, ֆաբրիկաներ, որտեղ սկզբնական վերամշակման էր ենթարկվում մետաքսի բոժոժը: Ընդ որում, արտադրված կիսաֆաբրիկատը (մետաքսահումքը և մետաքսաթելը) հիմնակաոում արտահանվում էր Պարսկաստան, Ռուսաստան և եվրոպական երկրներ: Միայն Շուշի քաղաքում այդպիսի մանր ձեռնարկությունների թիվը հասնում է 11–ի:

Դեռևս շատ հնուց Արցախ–Ղարաբաղի բոլոր այն գյուղերում, որտեղ կային թթենու այգիներ, գործում էին թթից օղու թորման գործարանատիպ կետեր: Դրանք մեծ թիվ էին կազմում և բնականաբար, սեզոնային բնույթ էին կրում: Ղարաբաղյան թթի օղու որակը բարձր է, մեծ համբավ ունի և ամենակարևորը՝ ունի բուժիչ նշանակություն:

Իսկ երկրամասի խաղողագործության վայրերում էլ կային գինի ստանալու այդպիսի կետեր: Ընդ որում, խաղողից գինի արտադրելուց հետո առաջացած մնացորդից ևս (Ղարաբաղում դրան անվանում են ջեջա) ստանում էին օղի: Այսպիսով՝ այստեղ արտադրվում էր (այժմ էլ արտադրվում է) երկու տեսակի օղի՝ թթի և խաղողի: Անտարակույս, թթի օղու որակը ավելի բարձր է:

Առանձին գյուղերում, որտեղ կային անհրաժեշտ հումքատեսակներ, գործում էին կղմինդրի արտադրության և բրուտագործական կետեր: Այդ առումով հատկապես հայտնի էին Ղավախան և Նենգի գյուղերը: Խոշոր գյուղերում գործում էին ֆուրգոնների, սայլերի արտադրության արհեստանոցներ, պայտանոցներ, գերանդիների, մանգաղների, կացինների, ցակատների և փայտից ու մետաղից արտադրվող շատ այլ իրերի արտադրության կետեր, դարբնոցներ: Մետաղագործական, հագուստեղենի, կոշկեղենի համեմատաբար կատարելագործված արհեստանոցներ կային Շուշի քաղաքում: Ամենուրեք տնայնագործական եղանակով արտադրվում էին գորգեր, կարպետներ, խուրջիններ, կոշտ գործվածքներ: Ղարաբաղյան գորգերը բարձր որակ ունեին, այդ պատճառով արտահանվում էին նաև ուրիշ երկրներ: Բացի դրանից, Ղարաբաղի շատ գյուղերում կային ձիթահան կետեր, որտեղ յուղատու վուշից (կտավատ) արտադրվում էր բարձրորակ ձեթ: Վերջինս լայնորեն օգտագործվում էր որպես սննդամթերք և բուժման նպատակով:

Գրեթե բոլոր գյուղերում կային ջրաղացներ: XX դարի սկզբներին արդեն որոշ գյուղերում ալրաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես,

Գյուլնե Ճարտար և Գյուլնե կալեր գյուղերում կային մեքենաղացներ, որոնց արտադրողականությունն անհամեմատ բարձր է:

Դեռևս խորհրդային կարգերի հաստատումից շատ առաջ Ղարաբաղում արտասահմանցիները (ֆրանսիացիները) կազմակերպել էին մետաղային հանքանյութի արդյունահանում: Դա եղել է այժմյան Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղի մոտ գտնվող բազմամետաղների հանքավայրում: Հենց այդ ժամանակ էլ այստեղ էին բերվել հույն հանքափորներ, լեռնագործներ, որոնց սերունդները ներկայումս էլ բնակվում են Մեհմանա գյուղում:

Մինչև 1920 թ. Լեռնային Ղարաբաղի միակ էլեկտրակայանը գտնվում էր Շուշի քաղաքում, որն ուներ ընդամենը 30 կվտ կարողություն: Այս լայն ճանաչում ստացած քաղաքում արդեն 1880–ական թթ. միայն հայկական թաղամասերում կար ավելի քան 370 արդյունագործական, արհեստագործական ձեռնարկություն (այն ժամանակվա չափանիշներով): Մետաքսագործությունից բացի այստեղ զարգացած էր կաշեգործությունը, փականագործությունը, պղնձագործությունը, արծաթագործությունը, աղյուսագործությունը, բամբակագործությունը, հրուշակագործությունը, կարուձևի արտադրությունը և շատ այլ ճյուղեր:

Սակայն 1905, 1918 և 1920 թթ. թուրք բարբարոսների կողմից այստեղ սանձազերծված հայերի կոտորածների ժամանակ ավերվել են նաև նրանց ձեռնարկությունները:

Գյուղատնտեսության ճյուղերից կարևոր դեր են խաղում հացահատիկային տնտեսությունը, այգեգործությունն ու անասնապահությունը: Դաշտային վայրերում աճեցվում էին աշնանացան ցորեն, գարի, կորեկ, վարսակ, որոշ վայրերում նաև բրինձ, յուղատու վուշ, սիսեռ և այլն, իսկ նախալեռնային վայրերում՝ գարնանացան ցորեն և գարի: Խաղողագործությունը հիմնականում զարգացած էր այժմյան Մարտունու շրջանի նախալեռնային գյուղերում, պտղաբուծությունը՝ լեռնային բոլոր վայրերում:

Արցախ–Ղարաբաղում լայն տարածում ունեին թթենու այգիները: Արցախյան թթի օղին, մեղրահամ դոշաբն ու չիրը և հատկապես թարմ թուքը բուժիչ նշանակություն ունեն, օգտագործվում են որպես դեղամիջոց: Սակայն գյուղատնտեսության մասին առավել հանգամանորեն տեսեք համապատասխան բաժնում: Այժմ քննարկենք ԼՂՀ–ի արդյունաբերությունն առավել հանգամանորեն:

Լեռնային Ղարաբաղի ժամանակակից արդյունաբերական ձեռնարկությունները խորհրդային իշխանության տարիների ծնունդ են:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժամանակակից արդյունաբերությունը ներկայացվում է էլեկտրատեխնիկական, թեթև, սննդի, շինան-

յութերի արդյունաբերության ճյուղերով և էլեկտրաէներգետիկ տնտեսությամբ: Այժմ նաև ձևավորվում է լեռնահանքային արդյունաբերությունը:

Արդյունաբերությունը համեմատաբար արագ է զարգացել 1950–ական թթ. հետո: Արդեն 1980 թ. դրա համախառն արտադրանքի ծավալը 1940թ. համեմատությամբ աճել էր շուրջ 20 անգամ: Այդ ժամանակ այստեղ գործող փոքր հզորություն ունեցող թեթև ու սննդի արդյունաբերական ձեռնարկությունները որոշ չափով վերակառուցվել են: Կառուցվել են նաև ժամանակակից համեմատաբար խոշոր մի քանի գործարաններ:

Հանրապետության տարածքում կար երեք հիդրոէլեկտրակայան՝ կառուցված խորհրդային իշխանության տարիներին: Դրանցից համեմատաբար հին *Ստեփանակերտի հէկն* էր, որը գործում էր 1930–ական թթ., ուներ փոքր հզորություն և երկար ժամանակ բավարարում էր միայն Ստեփանակերտի պահանջարկը: 1940–ական թթ. կառուցվել է մի փոքրիկ հիդրոէլեկտրակայան՝ Մարտակերտի շրջանի Մադաղիս բնակավայրի մոտ: Դրանք այժմ չեն գործում:

Համեմատաբար խոշորը *Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է*, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի վրա, շահագործման է հանձնվել 1976 թ. դեկտեմբերի 24–ին (50 հազ. կվտ հզորությամբ այս հիդրոէլեկտրակայանը առայժմ ԼՂՀ–ում գործող էլեկտրաէներգետիկ տնտեսության միակ նշանավոր ձեռնարկությունն է):

1940 թ. մարզում արտադրվել է ընդամենը 1,51 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, իսկ 1986 թ.՝ 57,8 մլն կվտ/ժ, 1994 թ.՝ 136,6 մլն կվտ/ժ, 1996 թ. 58,7 մլն կվտ/ժ (հանրապետության պահանջը բավարարելու համար կարևոր դեր էր խաղում նաև մայր Հայաստանից տրվող էլեկտրաէներգիան): 1997 թ. ԼՂՀ–ում էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 82,2, իսկ 1999 թ.՝ 82,8 մլն կվտ/ժ: 2002 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունը այստեղ կազմել է 108.6 մլն կվտ/ժ: Ըստ որում, ԼՂՀ–ն տարվա որոշ ժամանակաշրջանում ՀՀ–ից ներմուծում է զգալի քանակությամբ էլեկտրաէներգիա, որոշ ժամանակաշրջանում էլ ինքն է ինչ–որ չափով այդպիսին արտահանում: Մասնավորապես՝ 2000թ. ներմուծվել է 117,4 մլն կվտ/ժ, 2001 թ.–112,2 մլն կվտ/ժ, 2002 թ.–72 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Նույն թվականներին համապատասխանաբար արտահանվել է 5,5 մլն, 12,5 մլն և 33,3 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:

Լեռնային Ղարաբաղի մեքենաշինական արդյունաբերության ձեռնարկությունը (մինչև .վերջերս) *Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանն էր*, որը գործում էր 1970–ական թթ. սկզբներից: Գործարանը թողարկում է լյումինեսցենտային էլեկտրալամպերի համար անհրաժեշտ մասեր, լուսավորման պարագաներ, ինչպես նաև կենցաղային նշանակություն ունեցող արտադրանք: Այս ձեռնարկությունը Երևանի «Լույս» արտադրական միավորման հետ ինտեգրացվել էր: 1996 թ. նշված գործարանն արդեն թողարկել էր ավելի քան 70 մլն դրամի արտադրանք:

2000 թ. այս գործարանը թողարկել է 1,8 հազ., 2001 թ.՝ 0,42 հազ., 2002 թ.՝ 0,25 հազ. հատ լուսավորման պարագաներ և 106,3 մլն, 106,4, 135,5 մլն դրամի կենցաղային արտադրանք:

Այժմ Ստեփանակերտում գործում է նաև *կոնդենսատորների* ոչ մեծ գործարան, որը 1995 և 1996 թ. տարեկան թողարկել է ավելի քան 30 և ավելի քան 50 մլն դրամի արժողությամբ արտադրանք: 2002 թ. այս գործարանը թողարկել է 96,7 հազ. հատ կոնդենսատոր, ինչպես նաև 210,9 կմ մեկուսացված հաղորդակցման ու 29,5 տ էլեկտրաարտադրանք:

Արդյունաբերության ճյուղերից թողարկվող արտադրանքի ծավալով առաջատարը թեթև արդյունաբերությունն է, որը հիմնականում զարգանում է տեղի ու ներմուծվող բազմազան հումքատեսակների բազայի վրա:

Այստեղ աճեցվող շերամի բոժոժի և ներմուծվող հումքի հիման վրա գործում էր մետաքսի գործվածքների խոշոր ձեռնարկություն՝ *Ղարմետաքս կոմբինատը* Ստեփանակերտում: Սա նախկին միության նման ձեռնարկություններից առավել խոշորներից մեկն էր:

1940 թ. այս կոմբինատում արտադրվում էր 120 հազ. գծամետր մետաքսյա գործվածք, 1970 թ. այս հասել էր 977 մլն, իսկ 1978 թ.՝ 15 մլն գծամետրի: 1988–1994 թթ. Շուշիի բարձունքից Ադրբեջանի կողմից կատարված անարդար ռմբակոծությունների հետևանքով ավերվեցին նաև այս կոմբինատի արտադրամասերը, որոնք այժմ վերականգնվում են: Սակայն կոմբինատը մասնակիորեն գործում է և 1996թ. թողարկվել է 60 հազ., 1997 թ.՝ 80,4 հազ., 1998 թ.՝ 67,8 հազ. գծամետր գործվածք: 2000 թ. այս ձեռնարկությունը թողարկել է 6,2 հազ., իսկ 2002 թ. 0,75 հազ. գծամետր գործվածք: Նշենք, որ մետաքսագործությունը Ղարաբաղում հին պատմություն ունի, սակայն մինչև հեղափոխությունը այն տնայնագործական բնույթ ուներ: 1926 թ. գործարկվել է բոժոժ կարժելու առաջին արտադրամասը, որը փաստորեն, ներկայիս «Ղարմետաքս կոմբինատի» հիմքն էր կազմում: Հետագայում ստեղծվել են նոր արտադրամասեր՝ հագեցված ջուլհակագործական այն ժամանակվա համար կատարելագործված մեքենաներով ու սարքավորումներով: Կոմբինատի վերկառուցումն իրականացվել է 1980–ական թթ., երբ շահագործման են հանձնվել ընդարձակ արտադրամասերը, որտեղ արտադրական գործընթացները մեքենայացված ու ավտոմատացված էին: Սակայն այժմ արդեն արտադրա-

կան շենքերն ու սարքավորումները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին: Այստեղ իրականացվում են սկզբնական հումքից՝ բոժոժից, մետաքսյա գործվածքների արտադրության բոլոր գործընթացները, բացառությամբ՝ գործվածքի ներկումից, որը կատարվում էր Ադրբեջանի Շաքի քաղաքի նույնանման ձեռնարկությունում և փաստորեն, ամբողջ արտադրանքը թողարկվում էր վերջինիս մակնիշով: 1960–ական թթ. սկզբներից բնական հումքի օգտագործմանը զուգահեռ, կոմբինատը մետաքսյա գործվածքներ էր արտադրում նաև արհեստական մետաքսաթելից: Դրա շնորհիվ թողարկվող արտադրանքի ծավալն արագորեն աճել էր: Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի երբեմնի այս հզոր ձեռնարկությունը վերանորոգվի ժամանակակից տեխնիկական զինվածությամբ:

Մետաքսյա գործվածքներից բացի մարզում արտադրվում էր նաև զգալի քանակությամբ բամբակյա գործվածքեղեն (տարեկան 700–720 հազ. մ²): Այդպիսի արտադրանք թողարկող խոշոր ձեռնարկություններից էր *Շուշիի տեղարդկոմբինատը*, որը թողարկում էր նաև գուլպեղեն (տարեկան 800–850 հազ. զույգ): Այժմ չի գործում:

Թեթև արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեղ է գրավում *կարի արտադրությունը*: Ստեփանակերտ, Շուշի քաղաքների ու շրջկենտրոնների կարի ֆաբրիկաներն ու արհեստանոցները, 1980–1987 թթ. տվյալներով, տարեկան միջին հաշվով տալիս էին 10–11 մլն ռուբլու արտադրանք: Միայն Ստեփանակերտի կարի ֆաբրիկան 1996 թ. թողարկել է ավելի քան 15 մլն դրամի արտադրանք: 2000 թ. հանրապետության կարի ձեռնարկությունները թողարկել են 108,4 մլն, 2001 թ.՝ 154,8, 2002 թ.՝ 107,6 մլն դրամի արտադրանք:

Վաղուց ի վեր, մեծ համբավ ունեն *ղարաբաղյան գորգերը: Ստեփանակերտի գորգագործական «Ղարաբաղ» ֆաբրիկան* տարեկան թողարկում էր հազարավոր քառակուսի մետր գորգ: Գորգագործությունը դեռ շատ հնուց տարածված է եղել Արցախ–Ղարաբաղում: Այն կարևոր զբաղմունք է համարվել կանանց և աղջիկների համար: Նախկինում, չնայած տնայնագործական եղանակով, բայց վարպետորեն գործել են գեղեցիկ գորգեր, կարպետներ, ջվալներ, խուրջիններ, որոնք իրենց որակով, իրենց գեղեցկությամբ լայն ճանաչում ունեին: Դրանք թանկարժեք իրեր էին համարվում, կտակվում էին զավակներին, տրվում որպես օժիտ: Այժմ էլ յուրաքանչյուր ղարաբաղցու տանը, անկախ նրա բնակության վայրից, կարելի է տեսնել նախնիներից կտակված գորգեր կամ կարպետներ: Դրանցից շատերի վրա գործված են նաև գործողի անունը և թվականը:

«Ղարաբաղ» ֆաբրիկայում այժմ գորգեր են արտադրվում մեքենայական եղանակով, սակայն ավելի արժեքավոր են ձեռքով գործված գորգերն

ու կարպետները: Դրանք արտահանվում են ինչպես նախկին միության շատ քաղաքներ, այնպես էլ արտասահմանյան երկրներ, ցուցադրվում միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում: 1995 և 1996 թթ. այդ ֆաբրիկան տարեկան թողարկել է 6,5–8,5 մլն դրամի արժողության գորգ:

Այժմ այս ենթաճյուղը նորից վերակենդանանում է: 2000թ. ԼՂՀ–ում արտադրվել է 441,9 մ², 2001 թ.՝ 965 մ², 2002 թ.՝ 725,2 մ² տարբեր տեսակի գորգեր:

Լեռնային Ղարաբաղի թեթև արդյունաբերության համեմատաբար նոր ենթաճյուղը կաշվե կոշկեղենի արտադրությունն է: 1970–ական թթ. սկզբներին Ստեփանակերտում շահագործման է հանձնվել *կոշկի արտադրության* խոշոր ֆաբրիկա, որի արտադրանքը հետագա տարիներին աճել է: 1971 թ. մարզում արտադրվել է ընդամենը 71 հազ. զույգ, 1975 թ.՝ 1 մլն 869 հազ. զույգ, իսկ 1987 թ.՝ 4,5 մլն զույգ կոշիկ: Պատերազմից տուժած այս ֆաբրիկան նույնպես վերականգնվում է, և արդեն 1996 թ. այստեղ թողարկվել է ավելի քան 120 մլն դրամի արժողությամբ կոշկեղեն: 1997 թ. կոշիկի արտադրությունը կազմել է 51,6 հազ., 1998 թ.՝ 27,3 հազ. զույգ: Կոշիկի ֆաբրիկայի կառուցումը որոշ դեր է խաղացել Ստեփանակերտի և մոտակա գյուղերի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում: Թեթև արդյունաբերության այս ենթաճյուղը թեև դանդաղ, նույնպես վերականգնվում է: Մասնավորապես, եթե 2000 թ. այստեղ արտադրվել է ընդամենը 0,3 հազ., 2001 թ.՝ 3,81 հազ., ապա 2002 թ. արտադրվել է 4,98 հազ. զույգ կոշկեղեն: Շուշի քաղաքում գործում էր կաշվի վերամշակման ձեռնարկություն, որը մատակարարում էր տարեկան ավելի քան 1 մլն քառակուսի դեցիմետր կոշտ կաշվեղեն: Այն այժմ չի գործում:

Թեթև արդյունաբերությունից հետո, թողարկվող արտադրանքի ծավալով, հաջորդ ճյուղը *սննդի արդյունաբերությունն է*, որն ունի հացաբուլկեղենի, ոչ ալկոհոլային խմիչքների, գինու–կոնյակի, գարեջրի, պանրի, կաթի–յուղի, մսի ձեռնարկություններ: Գործարանային եղանակով հաց է արտադրվում Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում և մյուս քաղաքներում: Համարյա բոլոր գյուղական բնակավայրերում հացը թխում են թոնիրներում:

Խմիչքների ձեռնարկությունները (բացառությամբ գարեջրի) միավորված էին *Ղարաբաղի գինեգործական տրեստի* համակարգում, որը Ստեփանակերտում հիմնադրվել է 1926 թ.: Տրեստն ունի գինու, սպիրտի, օղու, կոնյակի, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն: Նրա կազմի մեջ մտնող ձեռնարկությունները տեղաբաշխված են Ստեփանակերտում, Ասկերանում (կառուցվել է 1926 թ.), Կարմիր Շուկայում (կառուցվել է 1927

թ.), Կուրապատկինոյում (Մարտունու շրջան), Գնորգավանում (Մարտունու շրջան), Լենինավանում (Մարտակերտի շրջան): *Ղարգինտրեստը* մասնաճյուղ ուներ նաև Բաքվում: 1985 թ. հետո տրեստի ձեռնարկությունները զգալիորեն կրճատել են գինու, օղու, կոնյակի արտադրության ծավալները, դրանց փոխարեն ավելացել է ոչ ալկոհոլային խմիչքների և հյութերի արտադրությունը:

1980 թ. մարզում գինու արտադրությունը կազմել է 1 մլն 946 հազ., կոնյակի արտադրությունը՝ 53,8 հազ. դեկալիտր: 1986 թ. գինու արտադրությունը կազմել է 118 հազ., իսկ կոնյակի արտադրությունը՝ 57,5 հազ. դեկալիտր: 1996 թ. գինու արտադրությունը կազմել է 25,5 հազ., 1999 թ.՝ 12,4 հազ. դեկալիտր, կոնյակինը՝ 1996 թ. 7,9 հազ., 1998 թ.՝ 21,5 հազ., 1999 թ.՝ 4,4 հազ. դեկալիտր:

ԼՂՀ սննդի արդյունաբերության ավանդական ենթաճյուղը նույնպես վերականգնվում է: Մասնավորապես.

գինի արտադրվել է	2000 թ. – 21,1 հազ. դեկալիտր
	2001 թ. – 10,5 հազ. դեկալիտր
	2002 թ. – 63,3 հազ. դեկալիտր
կոնյակ	2000 թ. – 5,2 հազ. դեկալիտր
	2001 թ. – 0,8 հազ. դեկալիտր
	2002 թ. – 0,27 հազ. դեկալիտր
օղի	2000 թ. – 13,7 հազ. դեկալիտր
	2001 թ. – 60,1 հազ. դեկալիտր
	2002 թ. – 64,8 հազ. դեկալիտր

Ստեփանակերտում գործում է սննդի ոչ մեծ կոմբինատ, որը տարբեր տեսակի պտուղներից, հատապտուղներից արտադրում է մեծ քանակությամբ պահածոներ, մուրաբաներ, ջեմ, հյութեր, չիր:

Ասկերանում գործում էր գարեջրի գործարան, որը տարեկան թողարկում էր ավելի քան 170 հազ. դեկալիտր գարեջուր: Այստեղ արտադրվում էր նաև տարեկան 100–110 հազ. դեկալիտր ոչ ալկոհոլային խմիչք:

Թողարկվող արտադրանքի ծավալով կարևոր տեղ էին գրավում նաև *կենդանական յուղի, պանրի, կաթնամթերքի* արտադրատեսակները: Տարեկան թողարկվում էր 6500–6600 տոննա կաթնամթերք, 900–960 տոննա կենդանական յուղ, 900–1000 տոննա պանիր: Ընդհանուր առմամբ, Լեռնային Ղարաբաղում գործում են *կաթի ընդունման, նախնական վերամշակման, կաթնամթերքների արտադրության* շուրջ մեկ տասնյակ օբյեկտներ: 1995 և 1996 թթ. միայն Ստեփանակերտի կաթի կոմբինատը թողարկել է համապատասխանաբար 22 և 50 մլն դրամի արժողությամբ կաթնամթերք: Վերջին տարիների տվյալներով՝ այս ցուցանիշները այսպիսին են: 2000, 2001 և 2002 թվականներին կաթի ու կաթնամթերքի արտադրությունը համապատասխանաբար կազմել է 929,0 տ, 1299 տ, և 1596,3 տ: Պանրի արտադրությունը նույն տարիներին կազմել է 3,6 տ, 25,4 տ, 31,6 տն: Իսկ մսի արտադրությունը 2000 թ.՝ 347,5 տ, 2001 թ.՝ 396,2 տն, 2002 թ.՝ 624,4 տ:

Երշիկեղենի արտադրությունը 2001 թ. եղել է 9,6 տ, 2002 թ. 6,9 տ:

ԼՂՀ–ի արդյունաբերության համեմատաբար հին ճյուղերից է *փայտամշակման արդյունաբերությունը:* Փայտից երկրագործության ու առօրյա պայմաններում օգտագործվող տարբեր գործիքների ու կենցաղային իրերի արտադրությունը Ղարաբաղում արմատավորվել է անհիշելի ժամանակներից: Լեռնային Ղարաբաղում *փայտամշակումը* դարձել է կարևոր արհեստներից մեկը: Լեռնաստանի տարբեր վայրերում կային արհեստանոցներ, որտեղ փայտից արտադրվում էին գութան, արոր, բահ, եղան, սայլ, ֆուրգոն և այլն: Փայտից այստեղ արտադրվում էին նաև երաժշտական գործիքներ, թառ, քամանչա, դհոլ, դափ, զուռնա, դուդուկ, սրինգ: Առավել բազմազան է կենցաղային պայմաններում օգտագործվող փայտե իրերի արտադրությունը: Մասնավորապես, արտադրվում էին գորգագործական դազգահներ, պահարաններ, սնդուկներ, տակառներ, դույլեր, ճախարակներ, իլիկներ, խմորի ու լվացքի տաշտեր, խոնչա, շերեփ, գդալ և այլն: Այժմ էլ դրանց զգալի մասը պահպանվում ու օգտագործվում է ղարաբաղցու կենցաղում:

Խորհրդային իշխանության տարիներին փայտամշակությունը դրվեց արդյունաբերական հիմքերի վրա, ստեղծվեցին այդպիսի ձեռնարկություններ՝ մեքենայացված աշխատանքով: Այս ճյուղն ավելի կատարելագործվեց 1950–ական թթ. հետո: Արտադրությունը հիմնված էր մասամբ տեղում մթերվող փայտանյութի, իսկ հիմնականում՝ բերվող հումքի վրա: Լեռնային Ղարաբաղում վերամշակման նպատակով փայտանյութ մթերվում է հիմնականում Մարտակերտի, որոշ չափով նաև Ասկերանի, Հադրութի շրջաններում: Ընդհանուր առմամբ 1985–1988 թթ. տարեկան մթերվում էր 2000–2500 մ^3 փայտանյութ: Սկզբում անհասկանալի էր, թե ինչ տրամաբանությամբ մթերված փայտը մատակարարվում էր Ադրբեջանի ձեռնարկություններին, իսկ տեղի կահույքի արտադրության հիմնական հումքը բերվում էր երկրի մյուս շրջաններից: Ղարաբաղի անտառներում մթերվող փայտանյութի որակն անհամեմատ բարձր է, քան երկրի հեռավոր շրջաններից բերվածը:

ԼՂՀ–ում (Մարտակերտի շրջանում) տարեկան արտադրվում էր 150–170 հազ. մ² մանրատախտակ: Կահույքի արտադրության խոշոր կենտրոնը Ստեփանակերտն էր, որտեղ տարեկան թողարկվում էր՝ ավելի քան 6 մլն (1985–1988 թթ.) ռուբլու կահույք:

Փայտամշակման արհեստանոցներ և սղոցարաններ կան Մարտակերտում, Վաղուհասում, Քոլատակում, Վանքում, Կարմիր Շուկայում, Ասկերանում, Բաղարայում: Նշված վայրերում մշակվում են տեղում մթերվող փայտատեսակները (կաղնի, հաճարենի, լորենի, ընկուզենի), իսկ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան հիմնականում մշակում էր բերովի փայտանյութը: Այժմ այն կարող է ամբողջապես անցնել տեղական հումքի օգտագործման:

Փայտամշակման ձեռնարկություններն արտադրում էին կահույքի տարբեր տեսակներ, շինարարական իրեր, մանրատախտակ, տակառներ, տեքստիլ արդյունաբերության համար անհրաժեշտ տարբեր առարկաներ: Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան թշնամու կողմից ավերվելուց հետո այժմ վերականգնվում է ու 1997 և 1998 թթ. տարեկան թողարկել է ավելի քան 70 մլն դրամի արտադրանք:

Անտառային ու փայտամշակման արդյունաբերությունը ԼՂՀ արդյունաբերության հեռանկարային ճյուղերից մեկն է, քանի որ այն ապահովված է տեղական հումքով (անտառները կազմում են ԼՂՀ տարածքի 42%–ը): Խնդիրը կայանում է նրանում, որ այդ անզուգական հումքային ռեսուրսների օգտագործումը դրվի այնպիսի հիմքերի վրա, որպեսզի անտառներում փայտանյութի մթերումը իրականացվի գիտական մեթոդներով, հաշվի առնվի անտառների վերականգնման, փայտանյութի խնայողաբար օգտագործման հիմնախնդիրները: Անտառային ու փայտամշակման արդյունաբերության ցուցանիշները վերջին տարիներին ունեն հետևյալ պատկերը.

Փայտանյութի մթերում.

2000 թ. – 19,7 հազ.մ³
2001 թ. – 22,0 հազ.մ³
2002 թ. – 39,43 հազ.մ³

Սղոցանյութի արտադրություն.

2000 թ. – 2,06 հազ.մ³
2001 թ. – 4,0 հազ.մ³
2002 թ. – 4,58 հազ.մ³

Մանրատախտակի արտադրություն.

2001 թ. – 5,0 հազ.մ²
2002 թ. – 23,93 հազ.մ²

Կահույքի արտադրություն.

2000 թ. – 74,6 մլն դրամի
2001 թ. – 93,9 մլն դրամի
2002 թ. – 111,9 մլն դրամի

Այստեղ կաղնու փայտից արտադրվում են նաև գինու, կոնյակի արտադրության մեջ օգտագործվող տակառներ:

Մասնավորապես, 2002 թ. արտադրվել է 104.5 հազ. լիտր տարողությամբ այդպիսի տակառներ, որոնց պահանջը մեծ է ինչպես ԼՂՀ–ում, այնպես էլ ՀՀ–ում:

Արտադրության ճյուղերից նշանավոր է շինանյութերի արդյունաբերությունը: Արդյունահանվում է մարմար, բազալտ, կրաքար, ավազ, արտադրվում է քիչ քանակությամբ գաջ, կղմինդր: Ընդհանուր առմամբ, թեև հանրապետության տարածքում կան շինանյութերի արտադրության համար անհրաժեշտ հումքային խոշոր ռեսուրսներ, սակայն տեղում թողարկվող արտադրանքը դեռևս հեռու է պահանջարկը բավարարելու մակարդակից:

Տեղական նշանակություն ունեցող շինանյութերի արտադրությամբ զբաղվում են հիմնականում շրջկենտրոններում տեղակայված տեղարդկոմբինատները: Շինանյութերի արդյունաբերության նշանավոր ձեռնարկությունը *Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատն է:* Վերջինս մարմար է արդյունահանում Ասկերանի շրջանի Հարավ գյուղի մոտ գտնվող հանքավայրից: Վերջին տվյալներով՝ այստեղ տարեկան արդյունահանվում էր շուրջ 8 հազ. մ³ մարմար, որի որոշ մասը մշակվում և օգտագործվում էր մարզում, իսկ նախկինում մեծ մասը՝ մատակարարվում էր Բաքվի քարամշակման գործարանին:

Մարմարից և կրաքարից ԼՂՀ–ում տարեկան արտադրվում էր մինչև 120–145 հազ. մ² երեսապատման սալեր: 1994 թ. հետո այս արտադրանքի չափերը բազմակի անգամ ավելացել են՝ կապված ավերված շենքերի վերակառուցման պահանջները բավարարելու հետ:

Մարտակերտի շրջանի (շրջկենտրոնի մոտ գտնվող) կրաքարի մեքենայացված հանքավայրից տարեկան արդյունահանվում է 2.5–2.7 մլն հատ կանոնավոր ձևի շինաքար, որն օգտագործվում է որպես հիմնական որմնանյութ բնակելի ու հասարակական շենքերի կառուցման համար:

Շրջանային տեղարդկոմբինատներում կրաքարից արտադրվում է կիր: 1985–1988 թթ. այս կապակցող նյութի արտադրությունը կազմել է տարեկան 7,5–8,0 հազ. տոննա, հետագա տարիներին այդ արտադրանքի չափերը կրճատվել են:

Ընդհանուր առմամբ, տարեկան արտադրվում են նաև 13–15 հազ. մ³ երկաթբետոնե տարբեր տեսակի կոնստրուկցիաներ: Փայտից արտադրվող շինանյութերը տարեկան կազմում են 9–10 հազ. մ²:

ԼՂՀ–ի համարյա բոլոր շրջաններում արդյունահանվում է լեռնային ու գետի ավազ: Որոշ քանակությամբ շինարարական աղյուս է արտադրվում (1,3–1,5 մլն հատ) Ստեփանակերտի աղյուսի գործարանում, կղմինդր՝ Մարտունիում, Մեծ Թաղերում և Մոխրաքաղում:

Տեղի կավից որոշ քանակությամբ բրուտագործական իրեր են արտադրվում Մարտունու շրջանի Ննգի գյուղի բրուտանոցում: Սակայն արտադրվող շինանյութերի քանակը դեռևս բավարարում է հանրապետության շինարարական աշխատանքների ծավալի պահանջարկի փոքր մասը: Հսկայական քանակությամբ շինանյութեր նախկինում մեծ ծախսերով ու դժվարությամբ բերվում էին Աղդամի, Բարդայի, Ֆիզուլու և Ադրբեջանի մյուս շրջաններից, Բաքվից, Գանձակից (Կիրովաբադ) և հեռավոր այլ վայրերից: Սակայն Ադրբեջանը մեծ խզումներով էր մատակարարում շինանյութը, իսկ վերջին տարիներին այն միտումնավոր կերպով դադարեցվել էր:

Այժմ մեծ քանակությամբ տարբեր տեսակի շինանյութեր մատակարարվում են Հայաստանի Հանրապետությունից: Ստեփանակերտում, Մարտունիում, Ճարտարում և մյուս բնակավայրերում բնակելի ու հասարակական շատ շենքեր կառուցվել են Հայաստանից բերված վարդագույն տուֆով: ՀՀ–ից մատակարարվող շինանյութերի քանակը հատկապես աճելացել է 1985 թ. հետո: Իսկ 1989–1991 թթ. այն խիստ կրճատվել էր Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կողմից շրջափակման ենթարկելու հետևանքով: 1994 թ. մայիսից սկսած, այսինքն՝ զինադադարից հետո, արդյունաբերության մյուս ճյուղերի հետ վերակառուցվում է նաև շինանյութերի արդյունաբերությունը: Այժմ ԼՂՀ շինանյութերի արդյունաբերության և շինարարական ինդուստրիայի նշանավոր ձեռնարկություններ են Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատը և շինարարական–արտադրական 1–ին և 2–րդ կոմբինատները, որոնք միասին 1995 և 1996 թթ. թողարկել են 145–185 մլն դրամի արժողությամբ արտադրանք: Գլխավոր արտադրատեսակներից բնական քարանյութերից երեսապատման սալերի արտադրությունը կազմել է.

2000 թ. – 2,6 հազ. մ²
2001 թ. – 7,03 հազ. մ²
2002 թ. – 10,3 հազ. մ²

Եզրային քարերի արտադրությունը.

2000 թ. – 5,55 հազ.գծ.մ
2001 թ. – 27,8 հազ.գծ.մ
2002 թ. – 7,3 հազ.գծ.մ

Կրի արտադրությունը կազմել է մինչև 500:

Վերջին տարիներին արտադրվում են նաև պոլիէթիլային խողովակներ, մասնավորապես 2002 թ. արտադրվել է 58,7 հազ. գծ. մետր այդպիսի խողովակներ:

Հիմք է դրվել նաև ադամանդագործությանը 2001 թ. այստեղ մշակվել է 1829,0, իսկ 2002 թ.՝ 6695,0 կարատ ադամանդ: Սակայն ԼՂՀ արդյունաբերության համակարգում մեծագույն իրադարձություն է **լեռնահանքային արդյունաբերության ստեղծումը**: Մարտակերտի շրջանի Դրամբոն գյուղի մոտ գտնվող պղնձի ու ոսկու հանքավայրում արդեն կատարվում են արդյունահանման աշխատանքներ, շահագործման է հանձնվել նաև լեռնահանքահարստացուցիչ ֆաբրիկան: Այստեղ արդյունահանված մետաղի հումքը տեղում հարստացվելուց հետո ավտոմեքենաներով ուղարկվում է ՀՀ Ալավերդի քաղաքի պղնձաձուլական «Մանես–Վալեքս» գործարանում ձուլելու համար: Տրանսպորտի այս ձևով հումքի առաքումը անկասկած բարձրացնում է արտադրանքի ինքնարժեքը: Հեռանկարում հավանաբար նպատակահարմար կլինի կա՛մ մտածել երկաթուղու կառուցման, կա՛մ տեղում վերջնական արտադրանքի թողարկման խնդրի լուծման մասին:

Ընդհանուր առմամբ, ԼՂՀ–ում այժմ գործում է արդյունաբերական մեծ ու փոքր 40 ձեռնարկություն, որոնց արտադրանքի ամբողջ ծավալը 2002 թ. կազմել է 8082,6 մլն դրամ: Ըստ որում՝ արդյունաբերության տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում այդ տարվա տվյալներով կազմում է ավելի քան 30%:

2002 թ. տվյալներով՝ ԼՂՀ արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում վճռական տեղը պատկանում է Ստեփանակերտ քաղաքին, որի տեսակարար կշիռը կազմում է 76,2%: Հաջորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Ասկերանի (9,6%), Մարտունու (5,8%), Քաշաթաղի (4,4%), Մարտակերտի (2,8%), Հադրութի (0,7%) և Շուշիի (0,5%) շրջանները:

ԼՂՀ արդյունաբերության համակարգում, 2002 թ. տվյալներով, թողարկվող արտադրանքով առաջին տեղում է **սննդի արդյունաբերությունը**, որի տեսակարար կշիռը կազմում է 37,9%: Հաջորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են.

էլեկտրաէներգետիկան – 21,7%,

Անտառային ու փայտամշակման արդյունաբերությունը – 7,5%

Թեթև արդյունաբերությունը – 5,2%
Շինանյութերի արդյունաբերությունը – 2,7%
Մեքենաշինություն –2,6%
Այլ ճյուղեր – 21,7%

Արդյունաբերության վերականգնումը և զարգացումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ամրապնդման երաշխիքն են: Հանրապետության տարածքում կան բնական բազմազան ռեսուրսների բավարար պաշարներ, որոնք նախապայմաններ կարող են հանդիսանալ համեմատաբար արագ զարգացնելու արդյունաբերության մի շարք ենթաճյուղեր: Մասնավորապես, լայն է հնարավորությունները սննդի արդյունաբերության, այդ թվում՝ գինու, կոնյակի, սպիրտի, մսի վերամշակման և մսամթերքների, բազմատեսակ պտուղներից, մրգերից, բանջարեղենից պահածոների, հյութերի արտադրությունը: ԼՂՀ–ն ունի հումքային բազա ոչ միայն կահույքի արտադրությունը վերականգնելու, այլև նախկինի համեմատությամբ մեծ չափով ընդլայնելու համար:

Հանրապետության աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, բնակչության արտահոսքի դադարեցման պահանջներից ելնելով՝ մոտակա հեռանկարում նպատակահարմար է ոչ միայն ամբողջապես վերականգնել եղած մեքենաշինական ձեռնակությունների լրիվ հզորությունները, այլև նախապայմաններ ստեղծել Ստեփանակերտում, Շուշիում և մյուս խոշոր բնակավայրերում ճշգրիտ մեքենաշինության, գործիքաշինական ձեռնարկություններ, մասնաճյուղեր ստեղծելու համար: Այդ նույն նկատառումներով հրամայական պահանջ է Ստեփանակերտ քաղաքի մետաքսի կոմբինատի վերականգնումը լրիվ հզորությամբ, ինչպես նաև նրա մասնաճյուղերի ստեղծումը մի շարք՝ համեմատաբար խոշոր բնակավայրերում:

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման անհրաժեշտությունից ելնելով՝ կարևոր է նաև Ստեփանակերտ քաղաքի կոշիկի ֆաբրիկայի վերականգնումը ամբողջ հզորությամբ:

Լայն են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հնարավորությունները շինանյութերի արդյունաբերության զարգացման համար: Մասնավորապես, անհրաժեշտ է Ստեփանակերտում և քաղաքային մյուս բնակավայրերում կազմակերպել երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրության ժամանակակից ձեռնարկություններ: Հանրապետությունը մեծ հեռանկարներ ունի լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար: Դրա հնարավորությունները մեծ են ոչ միայն Մարտակերտի, այլև Շահումյանի (Քարվաճառի) ու Քաշաթաղի շրջաններում, որտեղ կան գունավոր բազմազան մետաղների շատ հանքավայրեր:

9.7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսությունը թողարկվող արտադրանքի ծավալով դեռևս մնում է որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության առաջին ճյուղը: 2002թ. հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 26477 մլն դրամի ընդհանուր ծավալից գյուղատնտեսության բաժինը կազմել է 15176.2 մլն դրամ: Այդ նշանակում է, որ ԼՂՀ–ում արտադրվող ամբողջ համախառն արտադրանքի ավելի քան 59%–ը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը:

Ըստ որում՝ վերջին տարիներին տնտեսության այս կարևոր ճյուղը աճի տենդենց ունի: 2000 թ. ճյուղի համախառն արտադրանքի ծավալը եղել է 13451 մլն, 2001 թ.՝ 13905,6 մլն, իսկ 2002 թ. (ինչպես նշվել է) այն կազմել է 15176,2 մլն դրամ:

Լեռնային Ղարաբաղը ունի գյուղատնտեսության զարգացման համար շատ նպաստավոր պայմաններ և հնարավորություններ: 2000 թ. սկզբի տվյալներով՝ հանրապետության հողային ֆոնդը կազմել է 493.7 հազ. հա: Այդ թվում՝ գյուղատնտեսական հողահանդակները եղել են 158.5 հազ. հա, վարելահողերը՝ 73,8 հազ., բազմամյա տնկարկները՝ 6.2 հազ. հա, խոպան հողերը՝ 3,2 հազ. հա, խոտհարքերը՝ 4.8 հազ. հա, արոտավայրերը՝ 70,5 հազ. հա:

Հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է, որի համախառն արտադրանքը 2002 թ. կազմել է 9101,0 մլն դրամ: Դա նշանակում է, որ բուսաբուծության տեսակարար կշիռը գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի մեջ կազմում է 60%:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը ընդգրկում է բուսաբուծության և անասնապահության բոլոր հիմնական ճյուղերը՝ հացահատիկի մշակություն, այգեգործություն և պտղաբուծություն, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցում, խոշոր և մանր եղջերավոր անասնապահություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, շերամապահություն:

Բուսաբուծության առաջատար ճյուղը հացահատիկի մշակությունն է: Դեռևս շատ հնուց Արցախ–Ղարաբաղում արմատավորվել է հացահատիկի հիմնական տեսակների՝ ցորենի գարու, տարեկանի, վարսակի, կորեկի, հաճարի մշակությունը:

Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր գյուղերում առաջնակարգ տեղ են զբաղեցնում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները: Ընդհանուր առմամբ, 2002 թ. հանրապետության ամբողջ ցանքատարածությունները կազմել են 34462,0 հա, որից հացահատիկային մշակա-

բույսերի ցանքատարածությունները՝ 31642.5 հեկտար կամ ամբողջ ցանքատարածությունների՝ 91,8%–ը:

1940 թ. գյուղատնտեսական բոլոր ցանքատարածությունները զբաղեցրել են 82 հազ., 1987 թ.՝ 60,5 հազ. հա: Իսկ հացահատիկային մշակաբույսերի ցանքերը 1940 թ. կազմել են 70,6 հազ., 1987 թ.՝ 22,7 հազ. հա: Կրճատված հացահատիկի ցանքերի փոխարեն ավելացել են հիմնականում կերային, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը, խաղողի այգիները: Հացահատիկի ցանքատարածությունները հիմնականում գտնվում են դաշտային և նախալեռնային վայրերում: Այդ տեսակետից պայմանները նպաստավոր են հատկապես Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի շրջանների հարթավայրային հողատարածություններում: Նշենք, որ այս տեսակետից պայմանները նպաստավոր են նաև այժմյան Քաշաթաղի շրջանի հարավային հատվածներում:

Այստեղ աճեցվող հացահատիկային գլխավոր մշակաբույսը աշնանացան ցորենն է, որը զբաղեցնում է հացահատիկային բոլոր մշակաբույսերի ցանքատարածությունների մինչև 60%–ը: Զգալի տեղ է զբաղեցնում աշնանացան գարին, որը նույնպես հիմնականում աճեցվում է դաշտային վայրերում: Նախալեռնային և լեռնային մասերում աճեցվում են գարնանացան ցորեն, տարեկան, հաճար:

Ղարաբաղի ցորենը բարձր որակ ունի, կարծր է, սպիտակուցի պարունակությունը շատ է: Այդ պատճառով թխված հացը նուրբ է, փափուկ, բուրումնավետ և համեղ:

Բարձրորակ հացահատիկի արտադրությամբ հնուց ի վեր հայտնի են Ճարտար, Հերհեր, Բերդաշեն, Նորշեն, Գիշի, Թաղավարդ, Մաճկալաշեն, Մեծ Թաղեր գյուղերը: Բերքատվությունը միջին հաշվով 25–27 ց էր մեկ հա–ից, իսկ վերջին տարիներին՝ ավելի քան 30 ց: Հացահատիկի համախառն բերքը 1985–1988 թթ. կազմել է տարեկան մոտ 100 հազ. տոննա: Պատերազմի հետ կապված՝ հացահատիկի արտադրությունը նույնպես կրճատվել է: Վերջին տարիներին հացահատիկի արտադրությունը նորից մեծ չափերով ավելացվում է: Մասնավորապես, 2000 թ. այն կազմել է 36,6 հազ., 2001 թ.՝ 36,4 հազ., իսկ 2002 թ.՝ 60,9 հազ. տոննա: Հացահատիկի միջին բերքատվությունը 2002 թ. մեկ հա–ից կազմել է 19,3, իսկ աշնանացան ցորենինը՝ 19,6 ցենտներ: Հացահատիկային մյուս մշակաբույսերից վերջին տարիներին նկատելի չափով ավելացել է եգիպտացորենի հատիկի արտադրությունը (2002 թ.՝ 1099,1 տ), հաճարի արտադրությունը (2002 թ. 407,8 տ), վարսակի արտադրությունը: Հատիկաընդեղային մշակաբույսերի արտադրությունը 2002 թ. կազմել է 375,7 տ: ԼՂՀ–ն մոտակա հեռանկարում հացահատիկի արտադրությունը կարող է հասցնել 150 հազ. տոննայի և զգալի չափով հացահատիկ արտահանել Հայաստանի Հանրապետություն:

Մինչև 1960–ական թթ. Լեռնային Ղարաբաղում (Մարտակերտի շրջանում) Ադրբեջանի պահանջով զգալի հողատարածություն զբաղեցված էր բամբակի աճեցման համար: Տեխնիկական այդ մշակաբույսի պլանտացիաները կազմում էին 4000 հա: Հետագայում նպատակահարմար գտան մարզի ցանքաշրջանառությունից հանել բամբակը և դրա փոխարեն ընդլայնել խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Մինչև 1990–ական թվականների սկզբները տեխնիկական մշակաբույսերի ցանքերը զբաղեցնում էին ընդամենը 411 հա, որից ծխախոտ՝ 225 հա (1987թ.):

Տեխնիկական մշակաբույսերից համարյա բոլոր շրջանների նախալեռնային մասերում աճեցվում էր միայն *ծխախոտ*, որի ցանքատարածությունների մեծ մասը բաժին է ընկնում Մարտակերտի շրջանին: 2000 թ. այս մշակաբույսի ցանքերը եղել են 290,8, իսկ 2001 թ.՝ 53,6 հա:

Դեռևս հնուց Արցախ–Ղարաբաղի բոլոր վայրերում մեծ ուշադրություն էր դարձվում յուղատու վուշի՝ *կտավատի* աճեցմանը: Դրանից արտադրվում էր բարձրորակ ձեթ, որը ղարաբաղցու ընտանիքի գլխավոր սննդամթերքներից մեկն էր: Կտավատի ձեթը անհիշելի ժամանակներից օգտագործվում էր համարյա բոլոր կերակրատեսակներ պատրաստելիս, դրանով թխում էին Ղարաբաղի գաթա, պատրաստում հացով ճմուռ, ինչպես նաև կարևոր դեղամիջոց էր: Ընդհուպ մինչև 1950–ական թթ. Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսությունների մեծ մասը աճեցնում էին յուղատու այդ մշակաբույսը: Սակայն հետագայում անհեռատեսորեն այն հանվեց գյուղատնտեսության շրջանառությունից: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի պայմանները շատ նպաստավոր են յուղատու վուշի աճեցման համար: Հաշվի առնելով նրա բուժիչ ու սննդարար նշանակությունը նպատակահարմար է վերականգնել այդ մշակաբույսի աճեցումը: Ի դեպ, նույն ծնով 50–ական թվականներից մարզի գյուղատնտեսության շրջանառությունից համարյա ամբողջովին հանվել են նաև սիսեռը և ոլոռը, մինչդեռ դրանք նույնպես բարձր սննդարար մշակաբույսեր են:

Լեռնային Ղարաբաղի բուսաբուծության համակարգում զգալի տեղ են զբաղեցնում բանջարաբոստանային մշակաբույսերը: Հիմնականում դաշտային մասերում աճեցվում են ծմերուկ և սեխ: Սոխ, վարունգ, տաքդեղ, բադրիջան, կաղամբ աճեցվում են դաշտային և նախալեռնային հողատարածություններում: Ընդ որում, եթե ծմերուկը, սեխը և բանջարեղենի բոլոր տեսակները դաշտային մասերում աճեցվում են բացառապես ոռոգման մի-

ջոցով, ապա կարտոֆիլը աճեցվում է նախալեռնային և լեռնային վայրերում՝ անջրդի պայմաններում: Բարձրորակ կարտոֆիլ աճում է հատկապես Ասկերանի և Մարտունու շրջաններում: Գնահատվում է Չանախչի (այժմ՝ Ավետարոնց), Սղնախ, Ենգի, Ղավախան, Հարավ գյուղերի կարտոֆիլը: Այս առումով նշանավոր են նաև Քարինտակ, Չլդրան, Տումի և այլ գյուղերը:

1987 թ. կարտոֆիլի և բանջարեղենի ցանքերը մարզում կազմել են ընդամենը 1,99 հազ. հա, որից կարտոֆիլ՝ 1,24 հազ. հա: Մինչդեռ այս կարևոր մշակաբույսերի աճեցման հնարավորությունները Արցախ–Ղարաբաղում մեծ են: Լայն հնարավորություններ ունենալով հանդերձ այստեղ արտադրվող կարտոֆիլը չէր բավարարում տեղի պահանջները: Դա և այլ հարցեր բացառապես կախված էին Ադրբեջանի քմահաճույքից:

2002 թ. կարտոֆիլի ու բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքերը կազմել են 2766,8 հա, այդ թվում կարտոֆիլինը՝ 1377,4 հա: Կարտոֆիլի արտադրությունը 2002 թ. կազմել է 12,5 հազ. տ:

Լեռնային Ղարաբաղի բուսաբուծության գլխավոր ճյուղերից են ***խաղողագործությունը ու պտղաբուծությունը:***

1985–1988 թթ. տվյալներով խաղողի ու պտղատու այգիների ընդհանուր տարածությունը շուրջ 17,2 հազ. հա էր: Ընդ որում միայն խաղողի և պտղատու այգիները զբաղեցնում են ավելի քան 13,95 հազ. հա (1987 թ.), իսկ 1975 թ. դրանք կազմել են 16,5 հազ. հա: Հետագայում՝ 1985 թվականից հետո, գորբաչովյան անհեռատես քաղաքականության հետևանքով խաղողի այգիները մեծապես կրճատվել են, մինչդեռ խաղողագործությունը Արցախ–Ղարաբաղի հայության գլխավոր զբաղմունքներից մեկն էր անհիշելի ժամանակներից, և այն ընդլայնելու փոխարեն խիստ կրճատվել է: Խաղողագործությունը զարգացած է Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Հադրութի շրջանների դաշտային ու նախալեռնային մասերում:

Մինչև 1950–ական թթ. Ղարաբաղում խաղողագործությամբ զբաղվում էին հին, պապենական մեթոդներով (քուլիսարի հենակավորման այգիներով), այդ պատճառով բերքատվությունը ցածր էր: 1950–ական թթ. սկզբներին Մարտունու շրջանի Ճարտար գյուղի կոլտնտեսությունում գյուղատնտեսական արտադրության տաղանդավոր կազմակերպիչ *Սուրեն Ադամյանի* նախաձեռնությամբ սկսվում են խաղողագործության արդյունավետ զարգացման աշխատանքները:

Մինչև Ղարաբաղյան ազատագրական պատերազմի լայնածավալ սկսելը (1990–ական թվականի սկիզբը) խաղողի այգիների տարածքով առաջին տեղում էր Մարտակերտի շրջանը (ավելի քան 5,1 հազ. հա), հաջորդ տեղերը համապատասխանաբար պատկանում էին Մարտունու (ավելի քան 3,8 հազ. հա), նախկին Շահումյանի (2,05 հազ. հա), Հադրութի (1,34 հազ. հա), Ասկերանի (0,83 հազ. հա) շրջաններին: Խաղողագործության համար պայմանները նպաստավոր չեն Շուշիի շրջանում (բարձրլեռնային բնույթի ու անտառածածկ լինելու պատճառով):

Լեռնային Ղարաբաղում խաղողագործության առավել հին պատմություն և արմատավորված սովորություններ ունեն Մարտունու շրջանի գյուղերը: Այդ տեսակետից առավել հայտնի են Ճարտար, Գիշի, Խնուշինակ, Բերդաշեն, Նորշեն գյուղերը: Հադրութի շրջանում նշանավոր են Էդիլլուի (այժմ՝ Ուխտածոր), Հադրութի, Բանազուրի, Ասկերանի շրջանում՝ Խանաբադի, Նախիջևանիկի կոլտնտեսությունները: Իսկ Մարտակերտի շրջանում առաջատարը շրջկենտրոնի տնտեսությունն էր:

Խաղողագործությունն այժմ հիմնականում զարգանում է ոռոգման միջոցով, այգիների շուրջ 70%–ը ոռոգվում է, իսկ նախալեռնային վայրերում՝ հիմնականում անջրդի պայմաններում: Այդ պատճառով էլ բերքը ավելի քաղցրահամ է: Վաղուց այժմյան Մարտունու շրջանի տարածքում արմատավորված է սև խաղողի մի տեսակ՝ *խնդողի,* որից ստացված կարմիր գինին անմահական համ ունի:

Մինչպատերազմյան 15 տարիների տվյալներով՝ երկրամասում խաղողի համախառն բերքը կազմել է տարեկան 90–150 հազ. տոննա:

Լեռնային Ղարաբաղում աշխարհագրական առումով խաղողագործության համեմատ ավելի լայն տարածում ունի ***պտղաբուծությունը:*** Այս ճյուղը զարգացած է համարյա բոլոր շրջաններում և գյուղերում, չնայած պտղատու այգիներն ավելի քիչ են, քան խաղողի այգիները:

Մինչպատերազմյան տվյալներով (1987 թ.)՝ պտղատու այգիները զբաղեցնում են շուրջ 1600 հա տարածություն, որից 800 հա–ը բաժին է ընկնում Մարտունու շրջանին: Հիմնականում աճեցվում են խնձոր ու տանձ: Զգալի են նաև դեղձի, ծիրանի, թզի, նռան, սերկևիլի այգիները: Սակայն Ղարաբաղի պտղատու այգիների «ադամանդը», անկասկած, *շահ թթենին* է:

Թուքը դեռ շատ հնուց ղարաբաղցու եկամտի հիմնական աղբյուրներից մեկն է եղել: Թթենին բազմակողմանի տնտեսական ու բուժիչ նշանակություն ունի: «Շահ» թուքը թարմ վիճակում մեկ– երկու ամիս օգտագործելու դեպքում անգնահատելի դեր է խաղում առողջության համար:

Սակայն թթի կարևոր արժեքներից մեկը դրանից օղի ստանալն է: Թթի օղին անգերազանցելի է մյուս բոլոր տեսակի պտուղներից ստացված օղիների համեմատ:

Ինչպես հայտնի է, Լեռնային Ղարաբաղը երկրագործությամբ աշխարհում յուրահատուկ տեղ է գրավում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ գործում ոչ պակաս դեր է խաղում ղարաբաղյան անուշահամ «շահ» թութը:

ԼՂՀ–ում բոլոր տեսակի թթենու այգիները զբաղեցնում էին ավելի քան 2000 հա տարածություն, որից ավելի քան 960 հա «շահ» թթենու այգիներն էին: Թթենու այգիների շուրջ 900 հա–ն բաժին էր ընկնում Մարտունու, 530–ը՝ Ասկերանի, մնացածը՝ մյուս շրջաններին: Թթենու այգիներով վաղուց հայտնի են Ճարտար, Գիշի, Խնուշինակ, Մուշկապատ, Նորշեն, Թաղավարդ, Քերթ, Քարահունջ, Մաճկալաշեն և այլ գյուղեր: Լեռնային Ղարաբաղի տարածքում թթենու ամենաընդարձակ այգին գտնվում է Ամարասի հովտում (Մարտունու շրջան), որը ձգվում է 10 կմ երկարությամբ և նախկինում պատկանում էր Ամարասի վանքին:

Բացի «շահ» թթենուց, Ղարաբաղի տնտեսությունների զգալի մասը ունի ջեռ թթենու պլանտացիաներ (թոխմաչար): Դրանք աճեցվում են շերամապահության համար: Այս պլանտացիաները հիմնականում տարածված են դաշտային մասերում:

Ինչպես նշվել է, պտղատու և խաղողի այգիները խիստ տուժել են 1988–1994 թթ. ազատագրական պատերազմի տարիներին. դրանք թուրքերի կողմից ավերվել ու ականապատվել են: Այժմ այս ճյուղը վերակենդանանում է:

Վերջին տարիների տվյալներով՝ հատապտղատու ու պտղատու այգիների ընդհանուր տարածքն այսպիսին է.

2000 թ. – 1350 հա
2001 թ. – 1446,7 հա
2002 թ. – 1464,9 հա

խաղողի այգիները.

2000 թ. – 959,5 հա
2001 թ. – 1164,8 հա
2002 թ. – 1292,8 հա

թթի այգիները.

2000 թ. – 613,4 հա
2001 թ. – 578,9 հա
2002 թ. – 572,4 հա

Քանի որ խաղողի ու պտղատու այգիները դեռևս լիարժեք չեն վերականգնվել, դրանց տարածքները կրճատվել են, ապա բերքատվությունն ու համախառն բերքը նույնպես դեռևս քիչ են:

Մասնավորապես, պտուղների, հատապտուղների համախառն բերքը 2000–2001 թթ. կազմել է տարեկան 1168,8–ից 2145,8 տոննա, խաղողի համախառն բերքը եղել է .

2000 թ. – 3113,5 տ
2001 թ. – 3525,6 տ
2002 թ. – 2393,4 տ

Այս ցուցանիշները անհամեմատ աննշան են, քան ԼՂՀ հնարավորությունները են խաղողագործության և պտղաբուծության բնագավառում:

Այժմ շատ աննշան է նաև Ղարաբաղյան հանրահայտ թթի համախառն բերքը: 2000 թ. այստեղ թթի համախառն բերքը կազմել է 4223,8 տ, 2001 թ.՝ 1558,2 տ, 2002 թ.՝ 1924,5 տ:

Ինչպես խաղողագործությունը, այնպես էլ պտղաբուծությունը, այդ թվում նաև անուշահամ թթի այգիների աճեցումը նորից ԼՂՀ գյուղատնտեսության գլխավոր ու եկամտաբեր ուղղություն պետք է դարձնել:

Անասնապահության զարգացման համար Լեռնային Ղարաբաղը լավ հնարավորություններ ունի: Դրանք առաջին հերթին ավելի քան 70,5 հազ. հեկտար տարածություն գրավող արոտավայրերն ու շուրջ 5,0 հազ. հա բնական խոտհարքերն են: Բացի դրանցից, այստեղ զգալի տարածություն զբաղեցնում են կերային մշակաբույսերի ցանքերը:

Երկար տարիների միջին տվյալներով՝ Ղարաբաղի գյուղատնտեսական արտադրության համախառն արտադրանքի ծավալում անասնապահության տեսակարար կշիռը կազմել է 40–45%: Իսկ անասնապահության ճյուղերից առաջատարը ***խոշոր եղջերավոր անասնապահությունն է***, որին բաժին է ընկնում ամբողջ ճյուղի համախառն արտադրանքի կեսից ավելին:

Արոտային անասնապահության զարգացման համար նպաստավոր են բոլոր շրջանները, որոնք հարուստ են ամառային խոտառատ արոտավայրերով: Դրանք հատկապես ընդարձակ են Մարտակերտի, Շահումյանի, Քաշաթաղի, Շուշիի, Հադրութի ու Ասկերանի շրջաններում: Ալպյան խոտառատ ամառային արոտավայրերով Մարտակերտի շրջանում հայտնի են Մռավ սարի լանջերը, Կարմրասարը (Ալա–ղայան), Ասկերանի շրջանում՝ Քառասուն Աղջիկ, Մեծ Քրիսի, իսկ Հադրութի շրջանում՝ Դիզափայտի լանջերը: Այդ տեսակետից, ինչպես ասվեց, նպաստավոր են նաև Շահումյանի ու Շուշիի շրջանները:

Նախկինում խոշոր եղջերավոր անասունները նույնպես ամռան ամիսներին տեղափոխվում էին ամառային արոտավայրեր: Սակայն այդ հանգամանքը զգալիորեն ազդում էր մթերատվության վրա: Այժմ խոշոր

եղջերավոր անասնաբուծությունը (հատկապես՝ կաթնատու) զարգանում է մսուրային եղանակով:

Խոշոր եղջերավոր անասուններ պահում են Լեռնային Ղարաբաղի գյուղական բոլոր տնտեսություններում, առավելապես դաշտային և նախալեռնային վայրերում գտնվող տնտեսություններում: Ընդ որում՝ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 35–36%–ը կազմում են կովերը: Զարգացած է նաև գոմշաբուծությունը, այդ առումով աչքի են ընկնում դաշտավայրային տնտեսությունները: 1960–1987 թթ. նախկին ինքնավար մարզի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 84–99 հազ. գլուխ (այդ թվում՝ կովեր՝ 30–32 հազ. գլուխ): Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, ինչպես նաև այդ ճյուղի զարգացման հնարավորություններով ԼՂՀ–ում առաջին տեղը պատկանում էր Մարտակերտի շրջանին: Սակայն մեկ կովի տարեկան միջին կաթնատվությամբ գլխավորում էր Մարտունու շրջանը:

Մեկ կովի միջին կաթնատվությունը Լեռնային Ղարաբաղում միշտ բարձր է եղել Ադրբեջանի միջին ցուցանիշից: 1975–1987 թթ. տվյալներով այն եղել է 1750–2420 կգ: Իսկ Մարտունու շրջանում միջին հաշվով, նշված ժամանակաշրջանում, կազմել է 2000–2500 կգ: Այս շրջանում կային տնտեսություններ, որոնք այս ցուցանիշի տեսակետից Անդրկովկասում ռեկորդային տեղ էին գրավում, Միության մեջ՝ առաջնակարգ տեղերից մեկը: Օրինակ՝ Գիշի գյուղի տնտեսությունում եղել է 3100–3120 կգ, Ճարտարի տնտեսությունում՝ 2780–2970 կգ, Բերդաշենի տնտեսությունում՝ 2830–2980 կգ և այլն:

Այս ցուցանիշները զգալիորեն բարձր էին նախկին միութենական միջին ցուցանիշներից:

Ի դեպ, Ճարտարի տնտեսությունում, որտեղ ստեղծվել էր ժամանակակից անասնապահական մեքենայացված համալիր, կովերի միջին կաթնատվությունը հասել էր շուրջ 4000 կգ: Մարտակերտի շրջանում մեկ կովի կաթնատվությունը, վերը նշված ժամանակաշրջանում, տարեկան կազմում էր 1600–1690 կգ, իսկ առանձին տնտեսություններում՝ որոշ չափով բարձր էր: Այս շրջանում այդ տեսակետից առաջին տեղում էր Մարտակերտի շրջկենտրոնի տնտեսությունը (3300–3470 կգ), որին հաջորդում էին Թալիշ գյուղի (2130–2220 կգ) և Ներքին Հոռաթաղի տնտեսությունները (1830–1840 կգ):

Ասկերանի շրջանում տարեկան միջին կաթնատվությունը այդ տարիներին կազմել է 1740–1800 կգ, իսկ առանձին տնտեսություններում՝ ավելի բարձր: Օրինակ՝ Ղարաբուլաղի տնտեսությունում այն կազմել է 2100–2200 կգ, Ավետարանոցի տնտեսությունում՝ 2200–2260 կգ և այլն:

Այդ ցուցանիշով վերջին տեղում էր Շուշիի շրջանը, որտեղ միջին կաթնատվությունը 1300–1380 կգ էր: Այս շրջանի միայն Լիսագորի տնտեսությունում էր մեկ կովի տարեկան կաթնատվությունը միջինից բարձր՝ 2000–2100 կգ:

1975–1986 թթ. տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղում տարեկան արտադրվել է 40–56 հազ. տոննա, 1987 թ.՝ 39,4 հազ. տոննա կաթ: 2002 թ. ԼՂՀ–ում կաթի արտադրությունը կազմել է 28,23 հազ. տոննա: Պատերազմի տարիներին անասունների բոլոր տեսակների գլխաքանակը խիստ նվազել է:

Մասնավորապես, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը վերջին տարիների տվյալներով ունի հետևյալ պատկերը.

2000 թ. – 34,86 հազ., այդ թվում՝
կովեր – 17,59 հազ
2001 թ. – 36,75 հազ., այդ թվում՝
կովեր – 18,1 հազ.
2002 թ. – 40,5 հազ., այդ թվում՝
կովեր – 20,2 հազ. գլուխ

Ինչպես վերը նշվել է, 1980–ական թվականներին նախկին ինքնավար մարզի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասել էր շուրջ 100 հազ. գլխի: Դա նշանակում է, որ անասնապահության վճռական դեր խաղացող այդ ենթաճյուղի՝ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը այժմյանի համեմատությամբ առնվազն կարող է կրկնապատկվել:

Վերջին տարիներին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի զգալի աճին զուգահեռ նկատելիորեն ավելանում է նաև կաթնատվությունը: Մեկ կովի կաթնատվությունը, 2000 թ. 1361 կգ–ի դիմաց, 2002 թ. կազմել է 1470 կգ:

Անասնապահության մյուս կարևոր ճյուղը *ոչխարաբուծությունն է:* Մինչև 1950–ական թթ. Լեռնային Ղարաբաղում, հատկապես մասնավոր տնտեսություններում զգալի էր այծերի գլխաքանակը: Այժմ այն մեծ չափով նվազել է: Ոչխարաբուծությամբ զբաղվում են ԼՂՀ–ի բոլոր տնտեսությունները: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 1960–1986 թթ. կազմել է 275–300 հազ. գլուխ: 1987 թ. մի փոքր իջել էր՝ կազմելով 264,3 հազ. գլուխ: Բացի դրանից, Շահումյանի նախկին շրջանում կար 25 հազ. գլուխ մանր եղջերավոր անասուն: Անասնապահության այս ճյուղի համար այստեղ կան նպաստավոր պայմաններ:

Դաշտային մասում ընդարձակ տարածություններ են զբաղեցնում ծմեռային, իսկ լեռնային վայրերում՝ ամառային, ալպյան խոտածածկով հա-

ռուստ արոտավայրերը: Սակայն վերջիններս նպատակահարմար է օգտագործել ոչ թե մանր, այլ խոշոր եղջերավոր անասնապահության նպատակների համար:

Այստեղ դեռ հին ժամանակներից բազմացվել է ոչխարի «*Ղարաբաղ*» դմակավոր ցեղը, որը համեղ միս ունի: Թեև այս ցեղը կարճ և կոշտ բուրդ ունի, բայց և այնպես, ղարաբաղցին գերադասել է բուծել այդ տեսակը՝ հաշվի առնելով բարձրորակ միսը: Հետագայում, կոլտնտեսությունների կազմավորումից հետո, այստեղ *ղարաբաղ* ցեղին զուգահեռ բուծվել է նաև նուրբ բրդատու *մերինոս* ցեղը: Ի դեպ, այժմ Լեռնային Ղարաբաղի ոչխարաբուծության մեջ գերակշռում է այս ցեղը: Ղարաբաղ դմակավոր ցեղի ոչխարները հիմնականում բուծում են մասնավոր տնտեսություններում: Միջին հաշվով՝ մեկ ոչխարը տալիս է 3 կգ բուրդ: Ոչխարաբուծությամբ հատկապես հայտնի են Ճարտարի, Մարտակերտի, Նորշենի, Գիշի, Թալիշի, Տողի, Խանաբադի, Բերդաշենի և մյուս գյուղերի տնտեսությունները:

Վերը նշված պատճառներով պատերազմի տարիներին մեծ չափով նվազել է նաև մանր եղջերավոր անասունների գլխաքանակը: Մասնավորապես՝ 2000 թ. դրանց թիվը կազմել է 38,45 հազ., 2001 թ.՝ 41,0 հազ., 2002 թ.՝ 42,7 հազ. գլուխ:

Լեռնային Ղարաբաղի անասնապահության համալիրում արդյունավետ ճյուղ էր դարձել *խոզաբուծությունը:* Նախկինում այն համեմատաբար զարգացած էր այս լեռնաշխարհի հաճարենու և կաղնու անտառներով հարուստ գյուղերում: Այդ առումով վաղուց հայտնի էին Մեծ Թաղեր, Հումի, Հաթերք, Վաղուհաս, Չլդրան, Վանք, Սեյտիշեն, Ավետարանոց, Ննգի, Ղավախան, Քռանսի և այլ գյուղեր: Նախկինում խոզաբուծությունը զարգացած էր նաև այն գյուղերում, որտեղ կային թթենու ընդարձակ այգիներ: Դրանցից նշանավոր էին Թաղավարդ, Մաճկալաշեն, Հերհեր, Խերխերան, Մսմնա, Կոլխոզաշեն և այլ գյուղեր:

Մինչև 1930-ական թթ. այս լեռնաստանում բազմացվում էին հիմնականում սևամազ, մսատու խոզեր: Հետագայում սկսեցին բուծել նաև մսաճարպատու սպիտակ ցեղի խոշոր խոզեր: Տոհմային խոզաբուծությամբ մարզում հայտնի էին Ճարտարի, Մարտակերտի, Լենինավանի, Չայլուի (այժմ՝ Այգեստան), Հաթերքի, Տողի, Ավետարանոցի, Վանքի և այլ տնտեսություններ: Խոզերի գլխաքանակը 1980-ական թթ. հասցվել է 75–94,5 հազ. գլխի: 1987 թ. այն կազմել է 85,2 հազ.: Չնայած խոզերի գլխաքանակը նույնպես մեծապես նվազել է, սակայն այժմ էլ խոզաբուծությունը ԼՂՀ-ի մսի արտադրության գլխավոր ճյուղն է: Այստեղ արտադրվող մսի շուրջ 50%-ը բաժին է ընկնում այս ճյուղին: Իսկ ընդհանուր առմամբ Ադրբեջանում արտադրվող խոզի մսի ավելի քան 40%-ը տալիս էր Լեռնային Ղարաբաղը:

2000 թ. խոզերի գլխաքանակը եղել է 14,0, 2001 թ.՝ 15,0, իսկ 2002 թ.՝ 14,5 հազ.: Անասնապահության այս ենթաճյուղը կարող է դառնալ ԼՂՀ գյուղատնտեսության ամենաեկամտաբեր բնագավառներից մեկը, քանի որ դրա զարգացման համար տեղում նախապայմանները բազմազան ու նպաստավոր են:

Անասնապահության մյուս ճյուղերից զգալի դեր են խաղում՝ *թռչնաբուծությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը:* Թռչնաբուծությունը զարգացած է բոլոր գյուղերում: Նախկինում, կոլտնտեսություններից բացի, որոնք հիմնականում ունեին ծվատու թռչնաբուծական ֆերմաներ, հավեր, բադեր և հնդկահավեր, պահում էին համարյա բոլոր մասնավոր տնտեսությունները:

Թռչնաբուծությունը արդյունաբերական հիմքի վրա դնելու նպատակով Ստեփանակերտում, Մարտունիում, Մարտակերտում և այլուր ստեղծվել են ինկուբատորային կայաններ, որտեղ բազմացվում են ծվատու հավածտեր և վաճառվում մասնավոր տնտեսություններին: Թռչնաբուծությունը հատկապես զարգացած է դաշտային գյուղերում:

1960–1986 թթ. նախկին ինքնավար մարզում մսի արտադրությունը կազմել է տարեկան 6–11,2 հազ. տոննա, ձվինը՝ 19–32 մլն հատ, բրդինը՝ 561–612 տոննա: 1987 թ. արտադրվել է 10,4 հազ. տոննա միս, 12,5 մլն հատ ձու, 395 տոննա բուրդ: Այս և գյուղատնտեսական մյուս բոլոր մթերքները հանձնվում էին Ադրբեջանին:

Վերջին տարիների տվյալներով՝ ԼՂՀ անասնապահության արտադրանքի հիմնական ցուցանիշները հետևյալ պատկերը ունեն.

Մսի արտադրությունը՝	2000 թ. – 2,82 հազ. տ
	2001 թ. – 2,85 հազ. տ
	2002 թ. – 3,4 հազ. տ
Կաթի արտադրությունը՝	2000 թ. – 24,4 հազ. տ
	2001 թ. – 27,6 հազ. տ
	2002 թ. – 28,3 հազ. տ
Ձվի արտադրությունը՝	2000 թ. – 7976,7 հազ. հատ
	2001 թ. – 11796,0 հազ. հատ
	2002 թ. – 13457,3 հազ. հատ

Բրդի արտադրությունը՝ 2000 թ. – 53,7 տ
2001 թ. – 49,9 տ
2002 թ. – 60,1 տ

Հնուց Ղարաբաղում արմատավորվել է *շերամապահությունը:* Շերամի որդի կերային բազան թթենու տերևն է, իսկ թթենու պլանտացիաները տեղաբաշխված էին հարթավայրային և նախալեռնային վայրերում: Այդ գոտիների տնտեսությունները զբաղվում էին շերամապահությամբ, այդ պատճառով դրանք բոլորն էլ ստեղծել են իրենց սեփական կերային բազան, այսինքն՝ աճեցնում էին լայնատերև թթենու պլանտացիաներ: Շատ կոլտնտեսություններում շերամապահությունը եկամտի աղբյուրներից մեկն էր: Մարտունիում, Հադրութում, Լեռնավանում և այլ վայրերում գործում էին բոժոժի մթերման կետեր, որտեղ հանձնվում և նախնական մշակման էր ենթարկվում աճեցվող բոժոժը: Բնական մետաքսի այդ հումքը մատակարարվում էր Ստեփանակերտի մետաքսի կոմբինատին, որտեղ այն վերջնական մշակման էր ենթարկվում:

Լեռնային Ղարաբաղում շատ հին պատմություն ունի նաև *մեղվաբուծությունը:* Այդ լեռնաստանի լեռնային և նախալեռնային վայրերի ալպյան փարթամ, ծաղկառատ արոտավայրերը շատ նպաստավոր են մեղվաբուծության համար:

Մինչև 1930–ական թթ. Ղարաբաղում մեղուները պահում և բազմացնում էին քթոցներում: Ստացված մեղրը դեղին էր, անուշահոտ և բուժիչ: Գյուղացիների մեծ մասը ուներ սեփական մեղվաքթոցներ: Կոլտնտեսությունների կազմավորումից հետո մեղվաբուծությունն արմատավորվեց նաև կոլտնտեսություններում: Նախալեռնային գոտու շատ տնտեսությունների եկամտի զգալի աղբյուրներից մեկն էր մեղվաբուծությունը:

Հետագա տարիներին անհիմն կերպով այս կարևոր բնագավառին լուրջ ուշադրություն չի դարձվել և շատ կոլտնտեսություններ բոլորովին չէին զբաղվում մեղվաբուծությամբ: Սակայն համարյա թե բոլոր գյուղերում մեծ թվով գյուղացիներ ունեին իրենց սեփական մեղվաընտանիքները: Մեղվաբուծության զարգացման համար նպաստավոր պայմաններ ունեն հատկապես Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջանները, որտեղ լեռնալանջային ծաղկառատ տարածություններն ավելի ընդարձակ են:

Շատ հնուց Ղարաբաղը աչքի է ընկել նաև *ձիաբուծությամբ:* Ղարաբաղյան նժույգները հայտնի էին իրենց գեղեցկությամբ, դիմացկունությամբ և արագությամբ: Այդ նժույգները պատմական Արցախ–Ղարաբաղի միջազգային առևտրի գլխավոր ապրանքների թվին էին պատկանում: Ընդհուպ

մինչև 1950–ական թթ. ղարաբաղցիների համար գլխավոր փոխադրամիջոցը ձին էր: Իսկ նախկինում այն օգտագործվում էր նաև որպես քաշող ուժ հողագործության մեջ: Գյուղացու ունևորության աստիճանը որոշող կարևոր չափանիշ էր ձի ունենալը:

1935 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ Ղարաբաղում կար 7748 ձի, իսկ 1990 թ. դրանց գլխաքանակը կազմել է ընդամենը 953:

Մինչև 1950–ական թթ. վերջերը Ղարաբաղի կոլտնտեսություններում ձիաբուծությունը կարևոր դեր ուներ: Ձիասայլերով գյուղատնտեսական մթերքներ էին տեղափոխում, ցանքի զգալի մասը կատարվում էր ձիաուժի օգնությամբ: Բոլոր կոլտնտեսություններն ունեին ձիաբուծական տնտեսություն:

Գյուղատնտեսական աշխատանքի մեքենայացումը, տրանսպորտային մեքենաների լայն կիրառումը բացասաբար ազդեցին անասնապահության այդ ճյուղի վրա, մինչդեռ հատկապես լեռնային վայրերում գտնվող կոլտնտեսությունների համար փոքր տարածությունների վրա գյուղատնտեսական մթերքների, սերմի, գոմաղբի և հանքային պարարտանյութերի տեղափոխումը, ինչպես նաև այլ աշխատանքներ, նպաստավոր է իրականացնել ձիաուժի օգնությամբ:

Ղարաբաղի այս վերջին ազատագրական պատերազմը մի անգամ ևս ապացուցեց, որ այդ լեռնաշխարհի համար ձին մշտապես անհրաժեշտ է եղել, անկախ սոցիալ–տնտեսական պայմաններից: Ուստի՝ անհրաժեշտ է վերականգնել և զարգացնել ձիաբուծությունը, հատկապես լեռնային գյուղերի համար ձին պետք է դառնա հիմնական փոխադրամիջոց: Վերջին տարիներին նորից զգացվում է ձիերի գլխաքանակի աճ: 2000 թ. այստեղ դրանց թիվը եղել է 2169, 2001թ. – 2280, իսկ 2002 թ. – 2407 գլուխ:

1988–1993 թթ. Ադրբեջանի հարձակումների հետևանքով հսկայական չափերով տուժել են ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության բոլոր ճյուղերը, խիստ կրճատվել է անասունների գլխաքանակը: Այդ պատճառով տնտեսության բնութագիրը տրված է նաև մինչ այդ եղած ցուցանիշներով:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության համեմատությամբ ավելի լայն են, պայմանները՝ նպաստավոր: Մասնավորապես, պայմանները շատ նպաստավոր են հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման, ինչպես նաև խաղողագործության և պտղաբուծության զարգացման համար:

Այդ տեսակետից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությանը գյուղատնտեսական մթերք մատակարարող:

Դրա համար անհրաժեշտ կլինի առաջին հերթին վերականգնել գյուղատնտեսական այն բերրի հողահանդակները, որոնք Ադրբեջանի գաղութային տիրապետության տարիներին դարձել են արոտավայրեր կամ անգործության էին մատնվել: Մինչդեռ դրանք ռացիոնալ օգտագործելու դեպքում հացահատիկի արտադրությունը ԼՂՀ–ում մոտակա ժամանակաշրջանում ոչ միայն հնարավոր է հասցնել նախապատերազմյան մակարդակին, այլև դրա տարեկան արտադրության չափը հասցնել տարեկան մինչև 150 հազ. տոննայի: Իսկ դա նշանակում է, որ ԼՂՀ–ն հեռանկարում կարող է Հայաստանի Հանրապետություն արտահանել տարեկան առնվազն 45–50 հազ. տոննա հացահատիկ:

ԼՂՀ պայմանները շատ նպաստավոր են նաև խաղողագործության և պտղաբուծության համար: Պատերազմի հետևանքները վերացնելուց հետո, հատկապես Մարտունու և Մարտակերտի շրջանների խաղողի այգիները ականազերծելուց, ոռոգման ցանցը վերականգնելուց հետո, խաղողագործությունը հնարավոր է վերականգնել, զարգացման այն նկատառումներով, որպեսզի ԼՂՀ–ն դառնա ՀՀ–ին նաև արդյունաբերական խաղող մատակարարող:

Դեռևս ԼՂՀ–ում արտադրվող կարտոֆիլն ու բանջարեղենը չեն բավարարում տեղի բնակչության պահանջները, մինչդեռ հանրապետության պայմանները շատ նպաստավոր են զարգացնելու այդ ենթաճյուղերը այն չափով, որը ոչ միայն կարող է լրիվ բավարարել բնակչության պահանջները, այլև զգալի չափով դրանք վերամշակել ու արտահանել:

9.8. ՏՐԱՆՍՊՈՐՏՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներհանրապետական և միջհանրապետական կապերն իրականացվում են *ավտոտրանսպորտով*: Ավտոճանապարհներով հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը կապված է շրջկենտրոնների հետ, իսկ շրջկենտրոններն էլ, համապատասխանաբար, գյուղերի հետ: Սակայն ավտոճանապարհների մեծ մասը դեռևս անբարեկարգ է:

Ադրբեջանի տիրապետության մղձավանջային տարիներին հեռահար նպատակներով ուշադրություն չի դարձվել ինքնավար մարզի միջշրջանային, ներշրջանային տրանսպորտային ուղիների վրա:

Կարևոր դեր են խաղում ***Ստեփանակերտ–Ասկերան–Աղդամ–Մարտակերտ–Քարավաճառ, Ստեփանակերտ–Աղդամ–Մարտունի–Ֆիզուլի–Հադրութ, Ստեփանակերտ–Շուշի–Բերձոր, Ստեփանակերտ–Նոգի–Մարտունի, Ստեփանակերտ–Կարմիր Շուկա–Ճարտար–Մարտունի*** ավտոճանապարհները: ԼՂՀ–ի միջհանրապետական տրանսպորտային կապերը նույնպես հիմնականում իրականացվում են ավտոտրանսպորտով: Այս տեսակետից նախկինում կարևոր դեր են խաղացել Ստեփանակերտ–Աղդամ–Եվլախ–Բաքու, Ստեփանակերտ–Աղդամ–Եվլախ–Կիրովաբադ–Երևան ավտոխճուղիները: Այժմ կենսական նշանակություն ունի Ստեփանակերտ–Շուշի–Բերձոր–Գորիս–Ջերմուկ–Երևան ավտոճանապարհը, որի *Գորիս–Բերձոր–Շուշի* հատվածը Հայկական հիմնադրամի միջոցներով արմատապես վերակառուցվել և ավարտվել է 1998 թ. սեպտեմբերի 2–ին, ԼՂՀ անկախության հռչակման օրը: *Շուշի–Ստեփանակերտ* հատվածը ավարտվել է 1999 թ.:

Այս մայրուղին, որը ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխանում է, Արցախի կյանքի հիմնական զարկերակն է: Այն նախկինում Ադրբեջանի կողմից դիտավորյալ անուշադրության էր մատնված և բարձիթողի վիճակում էր: Անկախություն հռչակելուց հետո Արցախի ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող այս ավտոմայրուղին կառուցվել է ամբողջ հայ ժողովրդի ուժերով:

Հանրապետության տնտեսական զարգացման, պաշտպանության գործում խոշոր դեր կխաղա «Հյուսիս–Հարավ» ավտոմայրուղու կառուցումը: Այն կունենա 170 կմ երկարություն, սկսվում է Հադրութ քաղաքից, կանցնի Կարմիր Շուկա բնակավայրով, կհասնի Ստեփանակերտ, այնուհետև կծգվի դեպի հյուսիս և կհասնի Մարտակերտ: Այս մայրուղուց հետագայում կսկսվեն ավտոճանապարհներ, որոնցով նրա աջ ու ձախ կողմերի երկարությամբ գտնվող գյուղերը կկապվեն բարեկարգ այդ ճանապարհին: «Հյուսիս–Հարավ» մայրուղին կառուցվում է համահայկական հիմնադրամի միջոցներով, աշխարհի բոլոր հայերի աջակցությամբ: Նրա 45 կմ հատվածը արդեն կառուցված է: Այս մայրուղու ռազմավարական նշանակությունը անգնահատելի է, քանի որ ներքին անվտանգ ճանապարհով ԼՂՀ բոլոր շրջանները կարող են կապվել իրար հետ:

Նախկին ինքնավար մարզի ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունն արագորեն աճել է 1950–ական թթ. հետո: Եթե 1953 թ. տրանսպորտի այդ ճնով տեղափոխվել է 48,1 հազ. տոննա բեռ, ապա 1960 թ. այն հասել է 368,7 հազ. տ–ի, 1970 թ.՝ 719 հազ. տ–ի, իսկ 1975 թ.՝ 1467 հազ. տոննայի: Հետագա տարիներին այն զգալիորեն աճել է: Տրանսպորտի այս ճյուղը

վճռական դեր է խաղում նաև ուղևորների տեղափոխման բնագավառում: Եթե 1953 թ. տեղափոխվել է 70,8 հազ. ուղևոր, ապա 1975 թ. այն հասել էր արդեն 8 մլն 373 հազարի: Դրանից հետո, մինչև 1988 թ., այն մեծ չափով ավելացել է: Այժմ տրանսպորտի՝ այդ վճռական դեր խաղացող ճյուղը նորից վերականգնվում է:

2002 թ. ԼՂՀ ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը կազմել է 1248 կմ, որից ամուր ծածկույթով՝ 224 կմ: Հանրապետական նշանակության ավտոճանապարհները 554 կմ են, որից 207 կմ-ը՝ ամուր ծածկույթով:

Ավտոտրանսպորտի բեռնափոխադրումները 2000 թ. կազմել են 93,9 հազ., 2001 թ՝ 94,0 հազ., 2002 թ.՝ 100,2 հազ. տ:

Բեռնաշրջանառությունը նույն տարիներին համապատասխանաբար կազմել է 4420,7 հազ. տ կմ, 2001 թ.՝ 4584 հազ. տ կմ, 2002 թ.՝ 5285,6 հազ. տ կմ:

Աճում են նաև ուղևորափոխադրումները: Մասնավորապես, 2000 թ. ավտոտրանսպորտով փոխադրվել է 3145,2 հազ., 2001 թ.՝ 3761,9 հազ., 2002 թ.՝ 4503,0 հազ. ուղևոր:

Ուղևորաշրջանառությունը նույն տարիներին համապատասխանաբար կազմել է 32502,1 հազ. ուղևոր կմ, 43687,5 հազ. ուղևոր կմ և 44342,8 հազ. ուղևոր կմ:

Լեռնային Ղարաբաղի տնտեսական կյանքում 1970–ական թթ. զգալի դեր էր խաղում *երկաթուղային տրանսպորտը: Աղդամ–Ստեփանակերտ* երկաթուղու (25 կմ) շահագործումից հետո հիմնական բեռների (որմնանյութ, փայտանյութ, սև մետաղներ, քիմիկատներ, կահույք, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանք և այլն) մեծ մասը, որը նախկինում ավտոմեքենաներով էր տեղափոխվում Եվլախ կայարանից, Ստեփանակերտ էր հասցվում երկաթուղով:

Բացի բեռնափոխադրումներից, երկաթուղով էր իրականացվում նաև ուղևորների միջհանրապետական փոխադրումների զգալի մասը: Այդպիսին էին Ստեփանակերտից Երևան, Բաքու, Կիրովաբադ, Թբիլիսի, Մոսկվա, Սև ծովի առափնյա քաղաքներ և հակառակ ուղղությամբ փոխադրումները: Սակայն 1988 թ. իրադարձությունների հետ կապված՝ այդ երկաթուղին առ այսօր չի գործում:

Լեռնային Ղարաբաղի տնտեսական կյանքում կարևոր երևույթ էր նաև *օդային տրանսպորտի* զարգացումը: Երկար ժամանակ Ստեփանակերտի օդանավակայանից «ՅԱԿ–40» հարմարավետ օդանավերը թռիչքներ էին կատարում դեպի Երևան և մի շարք այլ քաղաքներ: 1988 թ. օգոստոսի 21–ին Ստեփանակերտի օդանավակայանում առաջին անգամ վայրէջք կատարեց

«ՅԱԿ–40» ինքնաթիռը՝ Լենինականից: Մինչև անկախության ձեռքբերումը Ստեփանակերտից Երևան թռիչքները՝ շատ սակավաթիվ էին, Ադրբեջանը շահագրգռված չէր այդտեղի թռիչքաղաշտը մեծացնելու, հնարավորությունները բավարարելու համար: Մինչև 1990–ական թթ. Ստեփանակերտից օդանավերը թռչում էին նաև Թբիլիսի և Հյուսիսային Կովկասի քաղաքներ: Տարեցտարի մեծ չափով ավելանում էր ուղևորների տեղափոխումը օդային ճանապարհով: Սակայն Ստեփանակերտի օդանավակայանն իր հնարավորություններով, սպասարկման մակարդակով ու ծներով չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Վերջին տարիներին այստեղից թռիչքներ են կատարում հիմնականում ուղղաթիռները: Թռիչքաղաշտը վերակառուցելու, օդանավակայանի համապատասխան շենք ունենալու, սպասարկման մակարդակը բարձրացնելու դեպքում հնարավոր կլինի տրասնպորտի այդ արդյունավետ ձևը ավելի մատչելի դարձնել ԼՂՀ բնակչության աճող պահանջների բավարարման համար, գործողության մեջ դնել ավելի հզոր ինքնաթիռներ, օդային կապեր ստեղծել նաև Հայաստանի մյուս քաղաքների ու արտասահմանյան երկրների հետ: Նպատակահարմար է նաև օդանավակայաններ կառուցել Մարտակերտի ու Մարտունու շրջաններում:

ԼՂՀ–ի տրանսպորտային կապերի մեջ ուրույն տեղ ունի *խողովակաշարային տրանսպորտը: Եվլախ–Ստեփանակերտ–Գորիս–Նախիջևան գազամուղի* կառուցումից հետո (1980–ական թթ. սկզբներին) մարզի բնակավայրերի զգալի մասը բնական գազ էր ստանում տրանսպորտի այդ ձևով: Դա զգալի բարելավել էր բնակչության մի մասի (Մարտակերտի, Ասկերանի շրջանների, Ստեփանակերտ, Շուշի քաղաքների) կենցաղային պայմանները, ձեռնարկություններում օգտագործվող վառելիքի մատակարարման վիճակը: Պատերազմական գործողությունների հետ կապված չէր գործում նաև տրանսպորտի այս ճյուղը: Սակայն մի քանի տարի է՝ ինչ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզից դեպի ԼՂՀ ձգվող գազամուղը, որով Արցախի բնակավայրերը ստանում են բնական գազ:

Էլեկտրոնային տրանսպորտի միջոցով բոլոր գյուղերին մատակարարվում է էլեկտրաէներգիա: Հանրապետության միասնական էներգահամակարգից բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ գծերը հասնում են բոլոր շրջանների բնակավայրերը: Տրանսպորտի այս ձևով ՀՀ–ից անհրաժեշտ էլեկտրաէներգիան մղվում է դեպի ԼՂՀ, իսկ երբեմն էլ այն հակառակ ուղղությամբ է մատակարարվում: Սակայն, ընդհանուր առմամբ, ԼՂՀ–ի տրանսպորտի այժմյան վիճակը դեռ հեռու է պահանջվող մակարդակից: Առավել անմխիթար վիճակում են ԼՂՀ–ի ներքին ճանապարհները:

Լեռնային Ղարաբաղի սոցիալ–տնտեսական կյանքի վրա բացասաբար էր անդրադառնում այն հանգամանքը, որ մինչև վերջերս մայր Հայաստանի հետ ուղիղ, կարճ, հարմար ու հուսալի ճանապարհ չկար: Դա հնարավոր դարձավ ստեղծել արդեն ազատագրված Գորիս–Բերձոր–Ստեփանակերտ անհամեմատ կարճ ճանապարհի արմատական վերակառուցմամբ: Իսկ հեռանկարում Սոթք–Մարտակերտ ուղղությամբ այդպիսի մայրուղու կառուցումը խիստ անհրաժեշտություն կդառնա: Նշված երկու ուղղություններով անհրաժեշտ է ունենալ ոչ միայն անխափան գործող ավտոխճուղի, այլև հեռանկարում՝ էլեկտրաֆիկացված երկաթուղի:

Այժմ ԼՂՀ տնտեսական զարգացման և ռազմավարական տեսակետից կենսական նշանակություն ունի ամբողջ հանրապետության տարածքի երկարությամբ՝ հյուսիսից հարավ ավտոմայրուղու կառուցումը, որի մասին վերը նշվել է:

Մինչև անկախության հռչակումը Լեռնային Ղարաբաղի տնտեսական կապերն իրականացվում էին հիմնականում Ադրբեջանի հետ, այն էլ՝ միակողմանի: Այստեղ արտադրվող հարյուր հազարավոր տոննա հացահատիկը, միսը, կաթը, մրգերը, բուրդը, մետաքսյա գործվածքը, գորգերը, ինչպես նաև մեծ քանակությամբ գինին, կոնյակը, մարմարը և մյուս արտադրատեսակները մատակարարվում էին Ադրբեջանին, որը միջազգային շուկա էր դուրս բերում իր մակնիշով: Անհրաժեշտ վառելիքը, մետաղը, մեքենաները և այլ արտադրատեսակներ ներմուծվում էին հիմնականում Ռուսաստանից, սակայն՝ Ադրբեջանի միջոցով, այսինքն՝ գաղութային կախվածության պայմաններով:

1987 թ. տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղից Ադրբեջան է արտահանվել շուրջ 58 մլն ռուբլու արտադրանք (այն ժամանակվա գներով), իսկ ներմուծումը կազմել է ընդամենը 18 մլն ռուբլի: Այսպիսով՝ Ադրբեջանը 70 տարի անխնա թալանել է հայկական այդ երկրամասը՝ դարձնելով այն հիմնականում որպես հումքային կցորդ:

Անկախության պայմաններում ԼՂՀ-ն կարող է միջազգային շուկա դուրս բերել մետաքսյա գործվածք, գորգեր, կաշվե կոշկեղեն, կոնդենսատորներ, լուսատուներ, գինի, թթի օղի, մրգերից և պտուղներից արտադրվող բազմատեսակ պահածոներ, մարմարից ու գրանիտից արտադրվող իրեր և այլ արտադրանք, ինչպես նաև լեռնահանքային արդյունաբերության արտադրանք՝ պղնձի, ոսկու, բազմամետաղների խտանյութ:

ԼՂՀ–ի արտաքին տնտեսական կապերը ներկայումս գերազանցապես իրականացվում են Հայաստանի Հանրապետության հետ և ՀՀ տարածքով՝ նաև արտաքին աշխարհի հետ: Ադրբեջանի կողմից ԼՂՀ–ի շրջափակման

վերացումից հետո արտաքին կապերի համար կօգտագործվեն նաև տրանսպորտային մյուս ուղիները:

Ներկայումս ԼՂՀ–ի արտաքին տնտեսական կապերը կարող են զարգանալ նաև Պարսկաստանի, ԱՊՀ երկրների ու եվրոպական շատ երկրների հետ՝ հաշվի առնելով գյուղատնտեսական հումքատեսակների, օգտակար հանածոների համատեղ վերամշակման ձեռնարկությունների ստեղծման, արտասահմանյան ինվեստիցիաների հնարավորությունները:

Աղյուսակ 59

ԼՂՀ արտաքին առևտուրը 2000–2002 թթ.
(հազ. ԱՄՆ դոլար)

Արտահանվող և ներմուծվող ապրանքների խմբերը	Տարիները					
	2000		2001		2002	
	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
1	2	3	4	5	6	7
Ընդամենը *այդ թվում*	2063,4	28261,9	5479,1	47166,9	14136,3	48069,2
Կենդանական ծագման արտադր.	68,7	605,8	181,4	1297,0	445,7	1496,5
Բուսական ծագման արտ.	706,3	4210,5	194,7	4995,9	937,6	7468,0
Պատրաստի սննդի արտադրանք	269,4	4420,5	469,8	5176,5	691,6	5647,3
Հանքահումք	78,0	8135,7	342,9	10390,6	446,2	9717,6
Քիմիական	41,2	997,9	137,9	1470,0	91,4	1662,9
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	3,5	13,8	1,4	15,7	3,1	147,4
Կաշի, մորթի և դրանցից իրեր	15,4	34,2	17,6	43,2	15,3	337,0
Փայտ, փայտե իրեր	158,1	213,5	345,4	149,4	793,0	288,0
Թուղթ, թղթե իրեր	2,7	40,2	0,0	243,1	0,1	141,4
Մանածագործական իրեր	18,4	2381,8	37,4	1583,6	48,5	1609,0
Կոշկեղեն	0,0	604,0	7,0	447,2	381,5	346,1
Ապակի, ապակե իրեր, քարե իրեր	41,5	879,1	60,2	1867,6	126,4	1067,2
Թանկարժեք քարեր	387,2	473,5	2373,2	3152,1	8276,9	10794,1

1	2	3	4	5	6	7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	177,7	391,4	1003,9	640,3	1192,9	1397,6
Մեքենաներ, սարքավորում.	53,4	538,3	90,5	12126,8	80,0	1267,0
Տրանսպորտի միջոց.	1,5	1913,7	47,0	1422,0	37,3	1809,7
Սարքեր, ապարատ.	16,3	159,3	127,9	158,9	449,3	162,7
Կահույք և այլ իրեր	16,5	655,6	33,9	628,8	72,6	299,9
Արվեստի ստեղծագ.	0,0	1,2	0,0	22,7	0,0	4,6
Այլ արտադրանք	7,7	611,2	107,1	502,6	45,8	1375,6

Ինչպես արդեն վերը նշվել է, վերջին տարիներին ԼՂՀ տնտեսությունը զգալի չափերով աճում է, որի ապացույցներից է նաև նրա արտահանման և առհասարակ արտաքին առևտրաշրջանառության աճը:

Վերը զետեղված աղյուսակում (58) բերված են 2000–2002 թթ. ԼՂՀ արտահանման և ներմուծման ցուցանիշները (հազ. ԱՄՆ դոլար):

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված փաստերը, թեև ԼՂՀ ներմուծվող արտադրանքի ծավալը 2002 թ. տվյալներով, շուրջ 3,5 անգամ գերազանցում է արտահանմանը, սակայն շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ երկու տարվա ընթացքում արտահանման ծավալը ավելի քան 6.5 անգամ մեծացել է:

ԼՂՀ տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը նրա տնտեսության հետագա էլ ավելի բազմակողմանի ինտեգրացումն է Հայաստանի Հանրապետության տնտեսությանը:

9.9 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության հեռանկարային զարգացման և եկամտաբեր ուղղություններից մեկը կարող է դառնալ զբոսաշրջության և հանգստի ինդուստրիան:

Հիրավի, Արցախի էկոլոգիական առումով մաքուր բնությունը և ռեկրեացիոն բազմազան ռեսուրսները հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիայի կազմակերպման լայն հնարավորություններ ունեն: Դրանք շատ մեղմ կլիմայական պայմաններն են, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, գուլալ և շատ մաքուր գետերն ու աղբյուրները, հանքային ջրերը, բնության անձեռակերտ հրաշալիքները և պատմաճարտարապետական հնագույն հազարավոր հուշարձանները:

Նշենք, որ Արցախի տարածքը շատ հնուց հայտնի է ոչ միայն տաք, այլև սառն հանքային ջրերով, որոնցից առավել հանրահայտը Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Երկաթաջուրն է, որի վրա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Մակար Բարխուդարյանը դեռ նախանցյալ դարում (տե՛ս Մակար եպիս. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 11):

Հենց այդ ռեսուրսներն էլ անվանում են ռեկրեացիոն ռեսուրսներ, որոնք հիմք են հանդիսանում մարդու հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար:

Լեռնային Ղարաբաղի ռեկրեացիոն ռեսուրսները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ առողջապահական, զանգվածային հանգստի ու զբոսաշրջային–մարզական:

Համեմատաբար բազմազան են առողջարանային ռեսուրսները: Դրանք են՝ առաջին հերթին հանքային բուժիչ աղբյուրները, լեռնային մաքուր օդը, ջերմության, ուլտրամանուշակագույն ճառագայթների առատությունը, մեղմ կլիման և անտառային լայն զանգվածների առկայությունը:

Նշված առանձնահատկությունների տեսակետից զբոսաշրջության, առողջապահական և հանգստի ինդուստրիայի կազմակերպման առումով կարևոր դեր կարող են ունենալ Շուշիի շրջանը, Հադրութի շրջանի հյուսիսային մասը՝ Տումի–Ազոխ–Դրախտիկ գոտին, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի հանգույցն ու Թարթառ գետի միջին հոսանքի ավազանը:

Զանգվածային հանգստի և զբոսաշրջության համար շատ նպաստավոր են Թարթառ, Հագարու, Խաչեն, Ինջա, Կարկառ, Վարանդա, Խոնաշեն գետերի միջին ու վերին հոսանքների գեղատեսիլ, անտառածածկ ավազանները, Սարսանգի ջրամբարը, բոլոր շրջաններում առկա բարձրադիր անտառածածկ սարավանդները:

Զբոսաշրջային–մարզական ինդուստրիայի կազմակերպման համար շատ նպաստավոր պայմաններ ունեն Ղարաբաղի լեռնաշղթայի, Մռավի լեռնաշղթայի ու դրանց բազմաթիվ լեռնաճյուղերի բարձրադիր գագաթների (Գոմշա-

սար, Մռավ, Քառասուն աղջիկ, Կարմրասար, Մեծ Քիրս, Փոքր Քիրս, Դիզափայտ, Բովուրխան), լեռնազանգվածների լանջերը, որոնք տարվա զգալի մասը ծյունածածկ են լինում և հարմար են նաև դահուկային մարզածների համար: Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Թարթառ, Կարկառ, Իշխանագետ, Վարանդա գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, բազմատեսակ քարանձավային համալիրները (հատկապես Ազոխի շատ եզակի քարանձավային համալիրը, այդպիսիք կան նաև Շուշիի կիրճում, Բերդաձորում, Թարթառի հովտում):

Ինչպես զանգվածային հանգստի, այնպես էլ զբոսաշրջային– մարզական ինդուստրիայի կազմակերպման լավ նախադրյալներ են Ամարասի, Գանձասարի, Դադիվանքի, Գտչավանքի, Մայրաբերդի, Շուշիի ու ԼՂՀ տարածքի հատկապես նախալեռնային ու լեռնային վայրերում գտնվող հայկական ճարտարապետական հնագույն բազմաթիվ համալիրները:

Դրանք բոլորն էլ պատմագիտական, ճանաչողական մեծ հետաքրքրություն ներկայացնող մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ են, որոնցից առանձնահատուկ ուշադրության են արժանի Ամարասի ու Գանձասարի համալիրները: Ըստ որում, Գանձասարը հայ ճարտարապետության XIII դարի հանրագիտարան է (այդպես է անվանել այս անզուգական կոթողը ռուս արվեստաբան Յակոբսոնը), որը կառուցվել է 1216–1230 թթ. (տե՛ս Բագրատ Ուլուբաբյան, Գանձասար, 1981, էջ9):

Իսկ Ամարասն էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է 4–րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի ու նրա թոռ Գրիգորիսի կողմից: Վերջինս թաղված է այստեղ: Կան փաստեր, որ Մ. Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ նա բացել է առաջին դպրոցը: Հաշվի առնելով այս բացառիկ ռեսուրսների մեծ նշանակությունը՝ ամեն տարի այստեղ են այցելում արտասահմանյան զգալի թվով մասնագետներ, պետական գործիչներ, զբոսաշրջիկներ:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի ռեկրեացիոն այդ անզուգական ռեսուրսները (մասնակի բացառությամբ՝ Շուշիի) բնակչության հանգստի, բուժման նպատակներով պետական մակարդակով չեն օգտագործվել:

Անկախություն ձեռք բերելուց հետո, երբ Արցախի ժողովուրդն ինքն է տնօրինում իր ռեսուրսները, դրանք կարող են դառնալ ԼՂՀ սոցիալ–տնտեսական զարգացման գլխավոր ուղիներից մեկը:

Լեռնային Ղարաբաղում առողջապահական հանգստի ու զբոսաշրջության, մարզական ժամանակակից համակարգի ստեղծումը ոչ միայն

կբավարարի հանրապետության բնակչության պահանջներն այդ բնագավառներում, այլև կարող է ունենալ միջազգային նշանակություն: Իսկ դա նշանակում է, որ առողջարանային, հանգստի ու զբոսաշրջության ինդուստրիան կդառնա ԼՂՀ տնտեսության բաղկացուցիչ, բարձր արդյունավետ ճյուղերից մեկը:

Առողջապահական ժամանակակից համակարգի ստեղծման եզակի պայմաններ ունի Շուշին: Այն գտնվում է ծովի մակարդակից 1450–1500 մ, բարձրություն ունեցող անզուգական գեղեցիկ սարահարթի վրա, որը շրջապատված է Ղարաբաղի լեռնաշղթայի բարձրադիր լեռնաճյուղերով: Լեռնային մաքուր օդը, չափավոր տաք ամառը, մեղմ ձմեռն այն նախապայմաններն են, որոնք հնարավորություն են տալիս Շուշիում ստեղծել ամբողջ տարին գործող առողջարանային համալիր:

Այստեղ տարեկան միջին ջերմաստիճանը +8,4^{0}C է, ամենատաք ամիսը հուլիսն է՝ +18,9^{0}C միջին ամսական ջերմությամբ: Հունվարն ամենացուրտ ամիսն է՝ –1,5^{0}C ջերմությամբ: Կլիմայական այսպիսի պայմանները շատ հարմար են մարդու առողջության, բուժման և հանգստի համար: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Շուշին կարող է լավ ապահովված լինել նրանից փոքր հեռավորության վրա գտնվող Շրլանի աղբյուրներից բերվող բուժիչ հանքային ջրով, ապա այն հիրավի առողջարանային անզուգական քաղաք կարող է դառնալ: Ավելի ճիշտ, այդ քաղաքի առողջարանային կարևոր դերը պետք է վերականգնվի ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան:

Դեռ խորհրդային իշխանության տարիներին այստեղ գործում էր հանրապետական նշանակություն ունեցող առողջարան: Սակայն 1988–1992 թթ. պատերազմական գործողությունների հետևանքով 1000 տեղանոց առողջարանի բոլոր 8 մասնաշենքերն ու բուժման, սպասարկման, օժանդակ հարմարությունները շարքից դուրս են եկել: Փաստորեն մնացել են կանգուն միայն առողջարանին կից 100 բնակարանոց բնակելի շենքի պատերը: Քանի որ Շուշին առայժմ ԼՂՀ տարածքում առողջարանային միակ կենտրոնն է, ապա խիստ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի առողջարանային համակարգը: Իսկ առողջարանային ու հանգստի ինդուստրիան ԼՂՀ եկամտի հիմնական աղբյուրներից մեկը դարձնելու նպատակով անհրաժեշտ կլինի արդեն մոտակա հեռանկարում, հատկապես Շուշիում, կոնկրետ միջոցներ ձեռնարկել ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխանող հնարավորություններ ստեղծելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շուշիում մոտակա հեռանկարում 1000 տեղանոց առողջարանային համալիրի վերականգնումից բացի կան բնական բոլոր նախապայմանները հետագայում այդտեղ առողջարանային տեղերի թիվը հասցնելու 2.5–3.0 հազարի: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի կառուցել երկու ժամանակակից առողջարանային մասնաշենք, որոնք ընդհանուր առմամբ կունենան 2000 տեղ: Նշենք, որ Շուշիից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Շրլանի հանքային ջրի աղբյուրի հնարավորությունները բավարար են այդ հարցը լուծելու համար:

Քանի որ առողջարանային տնտեսության զարգացումը պետք է իրականացվի միջազգային չափանիշներին համապատասխանող պահանջներով, ապա նպատակահարմար է Շուշիում կազմակերպել նաև համապատասխան սպասարկող անձնակազմի պատրաստման կենտրոն:

Շուշիի բնական պայմանները շատ նպաստավոր են նաև հակապալարային մանկական առողջարանի համար: Նախկինում այստեղ եղել է այդպիսի մեկ առողջարան՝ 100 տեղով, որը սակայն զուրկ է եղել տարրական հարմարություններից, իսկ այժմ էլ այն կիսավեր վիճակում է:

Կատարված սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խիստ անհրաժեշտ է այստեղ կառուցել 100 տեղանոց բոլորովին նոր այդպիսի մանկական առողջարան ժամանակակից պահանջներին համապատասխան, որտեղ կարող են բուժվել ոչ միայն ԼՂՀ բոլոր շրջանների, այլև Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի այդպիսի հիվանդությամբ տառապող երեխաները: Այսպիսով՝ մոտակա հեռանկարում ԼՂՀ զբոսաշրջության և առողջարանային ինդուստրիայի կենտրոնը կլինի Շուշին: Իսկ մոտ ապագայում, երբ Շուշին կդառնա միջազգային ճանաչում ստացած առողջարանային (սպասարկման համապատասխան համակարգով) կենտրոն, դրան զուգահեռ անհրաժեշտ կլինի համեմատաբար սահմանափակ տեղերով առողջարաններ կառուցել Հադրութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող գեղատեսիլ անտառում, որտեղ մեղմ կլիմայական պայմաններից բացի կա հանքային բուժիչ ջրի աղբյուր, ինչպես նաև Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ, որտեղ նույնպես շատ նպաստավոր բնական պայմանների (անտառ, մեղմ կլիմա, զուլալ օդ) հետ միասին կա բուժիչ հանքային ջրի աղբյուր:

Լեռնային Ղարաբաղն ունի հանգստյան տների՝ ամբողջ տարին գործող հնարավորություններով համակարգի ստեղծման նպաստավոր պայմաններ:

Մինչև 1980–ական թվականները Լեռնային Ղարաբաղում սեզոնային ձևով (միայն ամռան ամիսներին) գործող միակ հանգստյան տունը եղել է Շուշիում:

Քանի որ Շուշին պետք է զարգանա առողջարանային բուժման ժամանակակից համակարգի ստեղծման ուղղությամբ, ապա այստեղ գտնվող պատերազմից խարխլված հանգստյան տունը նպատակահարմար չէ այդ նպատակի համար վերականգնել: Տեղում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող հանգստյան տների կազմակերպման համար նպաստավոր պայմաններ կան ԼՂՀ վարչական բոլոր շրջաններում: Մասնավորապես, այդ նպատակի համար, բնական պայմանների ու տրանսպորտային առանձնահատկություններից ելնելով, նախընտրելի են Մարտունու շրջանի Թաղավարդ, Ասկերանի շրջանի Բաղարա, Մարտակերտի շրջանի Քոլատակ և Թալիշ, Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղերի հանգույցները: Դրանք բոլորն էլ ունեն գեղատեսիլ շրջապատ, պտղառատ անտառներ, մեղմ կլիմա, զուլալ գետեր և աղբյուրներ:

Իր անզուգական դիրքի, զբոսաշրջային մեծ հետաքրքրություն ներկայացնող բնական և պատմաճարտարապետական նախապայմաններից ելնելով՝ ԼՂՀ–ում միջազգային զբոսաշրջության հիմնական բազա կարող է դառնալ Շուշի քաղաքը: Այստեղ ժամանակին եղել է այդ նպատակով կառուցված երկու մասնաշենք՝ 300 տեղով: Սակայն դրանք պետք է վերակառուցվեն, վերականգնվեն ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան: Նպատակահարմար է ստեղծել 500 տեղանոց միանգամայն նոր բազա իր բոլոր հարմարություններով: Շուշիի միջազգային զբոսաշրջության այս բազան կունենա իր մասնաճյուղերը Սարսանգի ջրամբարի ափին կամ Վանք գյուղում (որտեղ հանրահայտ Գանձասարի վանքն է)՝ Մարտակերտի, Շահումյանի (նախկին Քարավաճառի), և տարածաշրջանի երթուղիները սպասարկելու համար, ինչպես նաև Թաղավարդ գյուղում (որը հանրահայտ է գեղատեսիլ անտառներով և մոտակա Սխտորաշեն գյուղի 2000 տարեկան սոսի ծառով, զուլալ աղբյուրով)՝ Մարտունու և Հադրութի շրջանների երթուղիները սպասարկելու համար:

Զբոսաշրջիկների համար առանձնահատուկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն նախկին ԽՍՀՄ տարածքում եղած ամենատարեց այս ծառն իր շքեղ տեսքով ու կայծակի հարվածից առաջացած հսկա փչակով, որտեղ տեղավորվում է 100 մարդ, այլև այն, որ այս ծառի շվաքի տակ հանգստացել են Գրիգոր Լուսավորիչը, Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսը, Մ. Մաշտոցը, Վաչագան Բարեպաշտ թագավորը, Մովսես Կաղանկատվացին, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Ռաֆֆին, Ավետիք Իսահակյանը: Իսկ Շուշիի, Ասկերանի ու Քաշաթաղի շրջանները կսպասարկվեն անմիջապես Շուշիի բազայից:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջազգային զբոսաշրջության զարգացման տեսակետից, որտեղ այս բնագավառում մինչև 1980–ական թվականների վերջերը զգալի նվաճումներ են ձեռք բերվել, ստեղծվել էր զբոսաշրջային ինդուստրիայի բազա, պատրաստվել են կադրեր, և որտեղ արդեն նորից վերականգնվում է այս կարևոր ճյուղը, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջությունը կարող է զարգանալ միայն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության հետ սերտ ինտեգրված: Այսինքն՝ ԼՂՀ զբոսաշրջային երթուղիների ցանցը պետք է դառնա ՀՀ համապատասխան ցանցի բաղկացուցիչ մասը: Դրանք պետք է իրար հետ կապվեն Տաթև–Գորիս–Բերձոր(Լաչին)–Շուշի և Սևան–Սոթք–Տաքջուր(Իստիսու)–Գանձասար երթուղիներով:

Այսպիսով՝ զբոսաշրջության և հագստի ինդուստրիան ԼՂՀ տնտեսության հեռանկարային հիմնական ուղղություններից մեկն է, որն ունի զարգացման հիմնավոր, լայն հնարավորություններ:

9.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Արցախ–Ղարաբաղը հայ հնագույն մշակույթի զարգացման գործում կարևոր դեր ունի: Դեռևս 5–րդ դարի սկզբներին, երբ Մ. Մաշտոցը հայ գրերի գյուտից հետո Հայաստանի տարբեր վայրերում դպրոցներ էր բացում, առաջին դպրոցներից մեկն էլ բացել է Արցախի հայտնի *Ամարաս* վանքում: Այսպիսով՝ Ամարասը երկար ժամանակ եղել է որպես հայ կրթության և մշակույթի խոշոր կենտրոն: Հետագայում, հատկապես X–XII դարերում ուսումնարաններ են գործել *Գանձասարի, Երեքմանկուք, Գտչա և* Արցախի շատ այլ վանքերին կից: Ավելի ուշ՝ XVIII–XIX դարերում, շատ գյուղերում բացվել են ծխական դպրոցներ: Սակայն Ղարաբաղի կրթական կյանքում հատկապես կարևոր դեր սկսեցին խաղալ Շուշի քաղաքում 1820–ական թթ. հետո բացված դպրոցները: Նշենք, որ Շուշիում տպագրությունն ավելի շուտ է սկսվել, քան Երևանում, Բաքվում և Անդրկովկասի մյուս քաղաքներում: Դա հիմնականում բացատրվում է Արևմտյան Եվրոպայի մշակութային խոշոր կենտրոնների հետ ղարաբաղցիների ստեղծած լայն կապերով և գիտության, կրթության նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ ու մտահոգությամբ:

1827 թ. Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական միսիոներական ընկերության անդամներ *Ա. Դիտրիխն ու Ֆ. Զարենբան* Շուշի քաղաքում բացում են դպրոց, ինչպես նաև տպարան: Այս դպրոցը կրոնական բնույթ ուներ, բայց կարևոր դեր է խաղացել նաև մի շարք առարկաների դասավանդման բնագավառում: Մասնավորապես, դասավանդվել են կրոն, գրաբար, աշխարհաբար, թվաբանություն, աշխարհագրություն: Ծավալվում է նաև տպագրական գործը: Շուշիում լույս է տեսնում առաջին գիրքը *«Պատմութիւն սուրբ գրոց»:*

Դրանից հետո արագորեն տպագրվում են նաև հայոց լեզու, գրականություն, պատմություն ուսումնասիրելու համար անհրաժեշտ դասագրքեր, ձեռնարկներ, ուղեցույցներ: Կարևոր է հիշատակել, որ շվեյցարական նշված ընկերությունը Շուշիում իր ստեղծած դպրոցի գոյության տարիներին (8–9 տարի) հայերեն հրատարակել է 11679 օրինակ գիրք: Սակայն, ցարական կառավարությունը այդ ընկերության գործունեությունը դադարեցնում է, դպրոցը՝ փակում: Դրանից հետո Ղարաբաղում կրթական գործով ակտիվորեն զբաղվում է տեղի հայ լուսավորչական եկեղեցու թեմը՝ *Բաղդասար Հասան–Զալալյանի* ղեկավարությամբ:

Արցախ–Ղարաբաղի կրթական կյանքում անգնահատելի դեր են խաղացել գավառական, թեմական և ռեալական դպրոցները: Առավել հայտնին *Շուշիի թեմական դպրոցն էր,* որը բացվել էր 1838 թ. հունիսի 22–ին: Դա միջնակարգ կրթությամբ դպրոց էր: Ի դեպ, այս դպրոցի շատ սաներ հետագայում դարձել են հայագիտության և այլ բնագավառների խոշոր դեմքեր: 1857–1858 թթ. այդպիսի դպրոցներ են բացվել նաև Գանձասարում և Ամարասում: Ընդհանրապես XIX դարում և XX դարի սկզբներին Ղարաբաղի շատ գյուղերում գործում էին 5–ամյա ուսուցմամբ դպրոցներ: Իսկ Շուշի քաղաքում թեմական դպրոցից բացի կային նաև 7–ամյա և միջնակարգ արական դպրոցներ, ինչպես նաև ռուսական 7–ամյա օրիորդաց դպրոց:

Բացառիկ երևույթ էր նաև 1864 թ. Շուշիում *Մարիամ Հախումյանի* ջանքերով Ղարաբաղի *տիրամայր սուրբ Մարիամ օրիորդաց* հայկական միջնակարգ դպրոցի բացումը: Մինչև այդ Ղարաբաղում ընդհանրապես չկային դպրոցներ, որտեղ կարող էին սովորել աղջիկները: Մարիամ Հախումյանի միջոցներով բացված դպրոցում նրանք սովորում էին մայրենի լեզու, գրականություն, վայելչագրություն, նկարչություն, ձեռագործություն:

1914–1915 թթ. ուստարում Լեռնային Ղարաբաղի այժմյան տարածքում գործում էր 49 դպրոց, ուր սովորում էր 4010 աշակերտ, ուսուցիչների թիվը հասնում էր ընդհամենը 79–ի: Բարձրագույն կրթություն ստանալու նպատա-

կով, Ղարաբաղի երիտասարդները մեկնում են արտասահմանյան երկրներ, հատկապես Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Ռուսաստանի քաղաքներից՝ Պետերբուրգ, Մոսկվա, Կիև, Խարկով, Օդեսա և այլուր: Այստեղ էլ նրանք, շփվելով, ծանոթանալով մարքսիստական–հեղափոխական մտքին, խորանալով գիտության տարբեր բնագավառներում, հետագայում դարձել են խոշոր գործիչներ:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Լեռնային Ղարաբաղում, առավելապես Շուշի քաղաքում, մեծ աշխատանքներ էին կատարվում տպագրական, թատերական, երաժշտական գործի և այլ բնագավառներում: Այդ մասին նշվել է Շուշի քաղաքին վերաբերող հատվածում:

Տպագրական գործի զարգացմանը մեծապես նպաստեց Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի տպարանը, որտեղ տպագրվում էին դասագրքեր, գիտական ուսումնասիրություններ, օտար լեզուներից թարգմանություններ:

1870–ական թթ. աշխուժանում են սեփական պարբերական մամուլի ստեղծման աշխատանքները: Մասնավորապես, 1874 թ. ապրիլին լույս է տեսնում *«Հայկական աշխարհ»* ամսագրի առաջին համարը, 1882 թ–ից՝ *«Գործ»* հանդեսը, հետագայում՝ *«Ծիածան»*, *«Քնար»*, *«Ղարաբաղ»*, *«Շուշինսկի լիստոկ»*, *«Շուշինսկայա ժիզն»*, *«Նեցուկ»* և այլ հանդեսներ: Հրատարակչական գործը Շուշիում ավելի է աշխուժանում 1881 թ–ից, երբ այստեղ բացվում է *Միրզաջան Մահտեսի Հակոբյանի* տպարանը: 1874–1920 թթ. Արցախում լույս է տեսնել 21 անուն թերթ ու ամսագիր, դրանցից 19–ը հայերեն, երկուսը՝ ռուսերեն:

Դրանց զուգահեռ Ղարաբաղում այդ ժամանակներից սկսվում են ընթերցարանների, գրադարանների, ակումբների կազմակերպման աշխատանքները: 1865թ. Շուշիում բացվում է առաջին գրադարան–ընթերցարանը: Իսկ 1878, 1888, 1889 թթ. այստեղ բացվում են ավելի հարուստ գրադարան–ընթերցարաններ:

1882 թ. Շուշիում բացվում է մի մասնավոր ակումբ, որն ուներ հարմարավետ թատերական դահլիճ: Այստեղ էլ տրվում էին ներկայացումներ, համերգներ:

Ստեփանակերտում (նախկինում՝ Վարարակն) կար մշտական գործող թատրոն, որտեղ ներկայացումները տրվում էին ռուսերեն: Քաղաքն ուներ մեկ գրադարան:

Սակայն, Ղարաբաղի թատերական կյանքի աշխուժացումը կապված էր Շուշիի *«Խանդամիրյան թատրոնի»* հետ:

19–րդ դարի վերջերին և 20–րդ դարի սկզբներին Շուշին դարձել էր Անդրկովկասի առավել հայտնի մշակութային կենտրոններից մեկը, որտեղ

աշխատում կամ ելույթներ էին ունենում հայ գրականության, մանկավարժության, երաժշտության և այլ բնագավառների խոշոր գործիչներ:

Առողջապահության բնագավառում նախկինում միայն մեկ փոքր հիվանդանոց էր գործում Շուշիում (45 մահճակալ) և երկու բուժկետ՝ Ճարտար և Նորշեն գյուղերում: Բժիշկները շատ քիչ էին (ընդամենը 4 բժիշկ ու բուժակ): Գյուղական վայրերում լայնորեն կիրառվում էին ժողովրդական բժշկության մեթոդները, համարյա բոլոր գյուղերում կային հեքիմներ, սնխչիներ: Սակայն բարձրագույն կրթությամբ ղարաբաղցի շատ նշանավոր բժիշկներ աշխատում էին Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում և մյուս քաղաքներում:

Ղարաբաղի կրթական և մշակութային կյանքում արմատական փոփոխություններ սկսվեցին 1920–ական թվականների սկզբներին՝ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: Այս բնագավառում կատարված առաջին հույժ կարևոր աշխատանքը ժողովրդական կրթության լայն ցանցի ստեղծումն էր: Արդեն 1922–1923 ուստարում Լեռնային Ղարաբաղում գործում էր 79 դպրոց, ուր սովորում էր 4375 աշակերտ, իսկ ուսուցիչների թիվը հասնում էր 140–ի: Այդ ուսումնական տարում Շուշիում բացվել է նաև մանկավարժական ուսումնարան և բանֆակ, Ստեփանակերտում՝ գյուղատնտեսական, Հադրութում մանկավարժական տեխնիկում, որոնք կարևոր դեր խաղացին մանկավարժության և գյուղատնտեսության բնագավառներում կադրերի պատրաստման գործում:

Շուշի քաղաքի մանկավարժական բանֆակը և Հադրութի մանկավարժական տեխնիկումը մի քանի տարի գործելուց հետո փակվել են: Հետագայում՝ 1939–1953 թթ., սկզբում Շուշիում, այնուհետև Ստեփանակերտում գործել է երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը կարևոր դեր է խաղացել հայոց լեզվի ու գրականության, ռուսաց լեզվի, մաթեմատիկայի, պատմության, քիմիայի, կենսաբանության ուսուցիչներ պատրաստելու գործում:

1970–ական թթ. Ստեփանակերտում բացվում է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժիններով:

Կրթական գործի արագ զարգացման մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ 1923–1924 ուստարում մարզում դպրոցների թիվը հասել էր 104–ի, աշակերտների թիվը՝ շուրջ 7687–ի, իսկ ուսուցիչների թիվը՝ 222–ի: Իսկ 1930 թ. այստեղ աշխատում էր ավելի քան 2000 ուսուցիչ: 1940–1941 ուստարում մարզում գործում էր 196 դպրոց, իսկ 1970–1971 ուստարում՝ 216 դպրոց՝ 40,3 հազ. աշակերտով:

1987թ. Լեռնային Ղարաբաղի (առանց Շահումյանի շրջանի) դպրոցների թիվը հասել է շուրջ 195–ի, որտեղ սովորում էր շուրջ 32 հազ. աշա-

կերտ, ուսուցիչների թիվը հասնում էր 4364–ի, որոնց մեծ մասը ուներ բարձրագույն կրթություն:

Սոցիալ–տնտեսական անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով լեռնային գյուղերի դպրոցների աշակերտների թիվը խիստ կրճատվել է, զգալի թվով դպրոցներ փակվել են:

Դա Ադրբեջանի կողմից տարված գաղութային, երկրամասը հայաթափելու այլանդակ քաղաքականության հետևանքներից մեկն էր:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, 1970թ–ից մինչև 1987 թ. ընկած ժամանակաշրջանում, այսինքն՝ 17 տարվա ընթացքում, մարզի դպրոցների թիվը կրճատվել է 21–ով, իսկ աշակերտների թիվը՝ շուրջ 8000–ով, որը մտահոգելու տեղիք էր տալիս: Շահումյանի շրջանի հետ միասին (որտեղ կար 19 դպրոց), անկախության հռչակման տարում (1991 թ.) ԼՂՀ դպրոցների ընդհանուր թիվը հասնում էր 214–ի, աշակերտների թիվը՝ 36 հազարի:

Գործում էր մեկ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ *Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը*, որտեղ ուսանողների թիվը հասնում էր 2100–ի (1987 թ.): Մինչև 1992 թ. այն Վանաձորի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղն էր, որի ու Երևանի ճարտարագիտական համալսարանի՝ Ստեփանակերտում ստեղծված մասնաճյուղի բազայի վրա կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի (այժմ՝ Արցախի) պետական համալսարանը (որը 1998 թ. ուներ 3000 ուսանող), 2002/03 ուս. տարում այս բուհում կար 3206 ուսանող:

Գործում են միջնակարգ–մասնագիտական 6 հաստատություններ, այդ թվում՝ բժշկական, երաժշտական, մշակույթի, մանկավարժական և գյուղատնտեսական տեխիկում: Դրանց սովորողների թիվը հասնում էր 2,4 հազարի (1987 թ.), 2002/03 ուստարում ուսումնական այս հաստատություններում կար 4,0 հազ. սովորող:

1920–ական թթ. սկզբներին արագորեն ընդլայնվում է գրադարանների, ընթերցասրահների, ակումբների, հետագայում նաև մշակութային օջախների ցանցը:

1924 թ. բացվել է Լեռնային Ղարաբաղի ամենախոշոր՝ *Ստեփանակերտի մարզային գրադարանը:* Նույն թվականին խրճիթ–ընթերցարաններ, ակումբներ են բացվել նաև Ճարտար, Տումի, Բալլուջա և մյուս գյուղերում:

1940 թ. մարզում գործում էր մասսայական 66 գրադարան, իսկ 1985 թ. այդ թիվը արդեն հասել էր 231–ի, դրանք ունեին 1,6 մլն գիրք:

Այդ բոլոր գյուղերը անխտիր ունեին ակումբ, որոշ գյուղեր՝նույնիսկ երկու և ավելի: Այսպես՝ Ճարտար գյուղում գործում էին երեք ակումբ և մեկ

մշակույթի տուն: Վերջին տվյալներով՝ ԼՂՀ ակումբների թիվը հասնում է 265–ի, մշտական գործող կինոտեղակայանների թիվը՝ 206–ի: Սակայն այժմ դրանց մեծ մասը դեռևս նորմալ չեն գործում: Լեռնային Ղարաբաղի խորհրդային ժամանակաշրջանի մշակութային կյանքի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց թատրոնը: Թատերական ինքնագործ, սիրողական խմբերը սկսեցին աստիճանաբար կատարելագործվել:

1932թ. Ստեփանակերտում բացվում է Մ. Գորկու անվան (այժմ՝ Վ. Փափազյանի անվան) *հայկական պետական թատրոնը*, որի կազմակերպիչներն ու առաջին դերասաններն էին Կարո Ալվարյանը, Աննա Մելիքը, Արշակ Արշակունին, Լևոն Սարգսյանը, Թամարա Մելքումյանը, Արմեն Միրզոյանը, Նինա Հովսեփյանը և ուրիշներ:

Ստեփանակերտի պետական թատրոնը ոչ միայն հաճախակի հյուրախաղերով հանդես է գալիս հանրապետության գյուղերում, այլև աջակցում է բոլոր շրջաններում թատերական ինքնագործ խմբերի կազմակերպմանը: Դրա զարգացմանը մեծապես օժանդակել են նաև Հայաստանի թատերական գործիչները, որոնց զգալի մասը հանդես են եկել ոչ միայն Ստեփանակերտում, այլև մարզի գյուղերում: Տարբեր ժամանակներում հյուրախաղերով այստեղ հանդես են եկել Վահրամ Փափազյանը, ժասմենը, Իսահակ Ալիխանյանը, Արուս Ոսկանյանը, Բաբկեն Ներսիսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Թաքուլ Դիլաքյանը և շատ ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում շատ կարևոր երևույթ էր 1958 թ. կազմակերպված *երգի ու պարի պետական համույթը*, որը մեծ համբավ է ձեռք բերել ոչ միայն մարզում, այլև Հայաստանում ու նախկին Խորհրդային Միության հայաբնակ վայրերում: Նրա օրրանի մոտ կանգնած էին երգահան Տելեմաք Տեր–Ավետիսյանը և բալետմեյստր Ազատ Ղարիբյանը, իսկ անփոփոխ ղեկավարն էր վաստակավոր արտիստ Յուրի Դավթյանը:

1928 թ–ից Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղում ռադիոն, իսկ 1960–ական թթ. նաև հեռուստատեսությունը:

Արցախ–Ղարաբաղից սերված հայագիտության շատ ականավոր գործիչներ, անվանի գրողներ, բանաստեղծներ, լրագրողներ հիմնականում գործել են իրենց լեռնաստանի սահմաններից դուրս, այլ վայրերում: Միայն 1940 թ. Ստեփանակերտում ստեղծվեց *գրողների՝ Լեռնային Ղարաբաղի մասնաճյուղը*, որը կարևոր դեր խաղաց մարզի երիտասարդ ստեղծագործողների համախմբման, զարգացման, ճանաչման ուղղությամբ: ԼՂՀ–ում

ապրող գրողների, բանաստեղծների զգալի մասը նաև Հայաստանի գրողների միության անդամ է: Այժմ էլ ԼՂՀ–ն ունի գրողների միություն, որը սերտորեն համագործակցում է Հայաստանի գրողների միության հետ:

Անկախություն ստանալուց հետո խոշոր տեղաշարժեր են տեղի ունեցել նաև ԼՂՀ սոցիալական ոլորտում, կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության բնագավառներում: Զգալիորեն ավելացել է հանրակրթական դպրոցների քանակը: Մասնավորապես, 2000/01 ուստարվա սկզբին հանրապետությունում եղել է 212, 2001/02 ուստարում 220, 2002/03 ուստարում–232 հանրակրթական դպրոց: Դրանցից համապատասխանաբար 30–ը, 32–ը և 33–ը եղել են քաղաքներում, մնացածը՝ գյուղերում:

Հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը նույն տարիներին եղել է 23400, 23878 և 23712: Այդ թվում քաղաքների դպրոցների սովորողների թիվը համապատասխանաբար եղել է 11960, 12025 և 11955: Դժվար չէ նկատել քաղաքային բնակավայրերի յուրաքանչյուր դպրոցի սովորողների թիվը մեծ չափերով գերազանցում է գյուղական դպրոցներին:

Զգալիորեն աճում է նաև դպրոցների ուսուցիչների թիվը: 2000/01 ուստարում հանրակրթական դպրոցներում աշխատում էր 3759, իսկ 2002/03 ուստարում՝ 4057 ուսուցիչ:

Անկախություն ստանալուց հետո Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի և Երևանի ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղերի բազայի վրա, ինչպես նշվել է, ստեղծվել է Արցախի պետական համալսարանը:

Այն, 2002 թ. տվյալներով, ունի 3226 ուսանող:

ԼՂՀ–ում գործում է նաև միջնակարգ մասնագիտական 4 հաստատություն (այդ թվում 1 գյուղատնտեսական, 2 գրադարանագործական և 1 բժշկական ուսումնարաններ), որոնք ունեն 1539 ուսանող:

Հանրապետությունում գործում են նաև ոչ պետական 7 համալսարաններ, որոնցում սովորում են 4363 ուսանող (2002 թ.):

1945 թ. Ստեփանակերտում կազմակերպվել էր Ադրբեջան գիտությունների ակադեմիային պատկանող բազա, որը գիտահետազոտական աշխատանքներ էր կատարում գյուղատնտեսության որոշ շատ սահմանափակ բնագավառներում:

1988 թ–ից Ղարաբաղի գիտահետազոտական այդ բազան վերակառուցվում է և դառնում է Ադրբեջանի անասնաբուծական–անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի փորձակայան: Այսինքն՝ խիստ սահմանափակվում էր առանց այն էլ միակողմանի ստեղծված այդ բազայի գործունեությունը: Ավելի ուշ հացահատիկային մշակաբույսերի՝ սերմնաբուծական փորձակայան է բացվում Մարտակերտի շրջանի Լենինավան բնակավայրում, որը մինչև Լենինավանի զավթումը և ավերումը Ադրբեջանի կողմից գործում էր ինքնուրույն և ֆինանսավորվում էր Հայաստանի համապատասխան ինստիտուտների կողմից: Այժմ գյուղատնտեսության բնագավառում գիտահետազոտական ոչ մեծ կենտրոնը գործում է Ստեփանակերտում:

Այսպիսով՝ գիտահետազոտական աշխատանքները մարզում խիստ սահմանափակ էին ու միակողմանի: Այն չէր բխում Լեռնային Ղարաբաղի տնտեսության զարգացման ուղղություններից, չէր արտացոլում նրա հեռանկարները: Իսկ տնտեսագիտության, ժողովրդագրության, սոցիոլոգիայի և մյուս բոլոր բնագավառներում առհասարակ, ուսումնասիրությունները տեղում չէին կատարվում: Ահա թե ինչու երիտասարդները ստիպված էին ուսումնասիրություններ կատարելու համար մեկնել Երևան, Մոսկվա, Պետերբուրգ և այլ քաղաքներ: Անկախություն ձեռք բերելուց հետո ԼՂՀ–ում գիտության զարգացման համար ձեռնարկվում են կոնկրետ միջոցառումներ:

Զգալի տեղաշարժեր են կատարվել նաև մշակութային կյանքում: 2002 թ. տվյալներով՝ այստեղ գործում է հանրային 9 գրադարան, որոնց գրքերի ու ամսագրերի թիվը հասնում է 373,3 հազարի: Գրադարաններ ունեն նաև գյուղական համայնքներն ու դպրոցները:

Նախկին մարզային՝ *«Խորհրդային Ղարաբաղ»* թերթը մինչև 1967 թ. լույս էր տեսնում փոքր ծավալով և ոչ ամեն օր: Այժմ այն կոչվում է *«Ազատ Արցախ»*, լույս է տեսնում հանրապետական թերթի ծավալով և ամեն օր: Հանրապետության յուրաքանչյուր շրջան ունի իր թերթը, Մարտունիում՝ *«Ամարաս»*, Մարտակերտում՝ *«Զրաբերդ»*, Ասկերանում՝ *«Խաչեն»*, Հադրութում՝ *«Դիզակ»*: Շահումյանում մինչև նրա բռնազավթումը սկսել էր լույս տեսնել «Մռավի ղողանջները»:

Լեռնային Ղարաբաղում այժմ կա 8 թանգարան: Ստեփանակերտում գործում է Արցախի պատմության պետական թանգարանը, որը ստեղծվել է նախկին երկրագիտական թանգարանի հիման վրա: Բացի դրանից, Մարտունու շրջանի Նենգի գյուղում գործում է Բոգդան Կնունյանցի, Կոլխոզաշեն գյուղում՝ գեներալ Միքայել Պարսեղովի, Հադրութի շրջանում՝ Մեծ Թաղեր գյուղում՝ մարշալ Արմենակ Խանփերյանցի (Խուդյակով) և Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում՝ Ալեքսանդր Բեկզադյանի տուն–թանգարանները:

Նախկինում եղած մեկ թատրոնի փոխարեն այժմ ԼՂՀ–ում գործում է 4 թատրոն: Արմատապես փոխվել, բարելավվել է առողջապահական համակարգը:

Հանրապետությունում գործում է 19 հիվանդանոց 735 մահճակալներով: Բացի դրանից, գործում են նաև 19 պոլիկլինիկաներ, 38 այլ կարգի բժշկական, մանկական, կանանց կոնսուլտացիաների կենտրոններ: Բոլոր մասնագիտությունների բժիշկների թիվը 2002 թ. հասել էր 273, միջին բժշկական անձնակազմի թիվը՝ 837: Ստեփանակերտի հիվանդանոցները իրենց սպասարկման, ժամանակակից սարքավորումներով զինվածության, բժշկական անձնակազմի որակական հատկանիշներով համապատասխանում են արդի պահանջներին:

ԼՂՀ–ում կրթամշակութային օջախները և բժշկական հիմնարկները խոշոր դեր են կատարում հանրապետության բնակչության գեղագիտական դաստիարակության և նրա առողջության պահպանման գործում:

Լեռնային Ղարաբաղի կրթությունը, գիտությունը, մշակույթը կադրերի մեծ պահանջ ունեն: Այս առումով, ժամանակին դառը ճակատագրի բերումով հայրենիքից հեռացած և հատկապես նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում կրթություն ստացած շատ մեծ թվով ղարաբաղցի գիտնականների, բժիշկների, ճարտարապետների, տնտեսագետների, մանկավարժների կարիքը խիստ զգում է անկախություն նվաճած Արցախ–Ղարաբաղը:

9.11 ԼՂՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ինչպես արդեն վերը նշվել է, ԼՂՀ տարածքը բաժանվում է վարչական 8 շրջանների ու այդ թվում շրջանի կարգավիճակ ունեցող մայրաքաղաք Ստեփանակերտը:

Մայրաքաղաք Ստեփանակերտի բնութագիրը տրված է «ԼՂՀ վարչական կառուցվածքն ու քաղաքները» գլխում: Ստորև տրվում է հանրապետության մյուս՝ 7 շրջանների բնութագիրը:

1. ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

Մինչև 1978 թ. կոչվում էր Ստեփանակերտի շրջան: Զբաղեցնում է ԼՂՀ տարածքի կենտրոնական հատվածը, ընդգրկում է հիմնականում Կարկառ գետի ու նրա վտակների ավազանը: Տարածքը 1138,0 կմ^2 է, բնակչությունը՝

ավելի քան 16,62 հազ. մարդ (2003 թ.): Քաղաքային բնակչությունը 2003 թ. կազմել է 2058 մարդ, գյուղականը՝ 14563 մարդ: Շրջկենտրոնը Ասկերան քաղաքն է: Ասկերան քաղաքի բնակչությունը 2058 մարդ է (2003 թ.): Մինչև 1996 թ. սկիզբը, կապված պատերազմական, այնուհետև սոցիալ–տնտեսական դժվարին պայմանների հետ, շրջանի բնակչությունը նկատելիորեն պակասել է: Ասկերանի շրջանի այժմյան տարածքի մի մասը (Կարկառի աջափնյա հատվածը) մտնում էր Արցախի Վարանդա գավառի, իսկ մյուս մասը (Կարկառի ձախափնյա հատվածը)՝ Խաչեն գավառի մեջ: Այս առումով այն Արցախ–Ղարաբաղ աշխարհի պատմության մշակույթի ու տնտեսական կյանքի զարգացման մեջ առանձնահատուկ տեղ ունի: Շրջանի մակերևույթը լեռնային է, խիստ կտրտված գետահովիտներով և անդնդախոր կիրճերով: Համարյա ամբողջապես անտառապատ է, ցածրադիր մասերում՝ թփուտածածկ: Համեմատաբար բարձրադիր է շրջանի արևմտյան հատվածը, որտեղով անցնում է Ղարաբաղի լեռնաշղթան, որի առանձին գագաթներ ունեն ավելի քան 2750 մ բարձրություն: Այստեղից էլ սկիզբ են առնում շրջանի տարածքով հոսող Կարկառ, Մեղրագետ (Բալլուջա), Բաղարա, իսկ ավելի հյուսիսում՝ *Քոլատակ* գետերը: Շրջանը հարավային մասում սահմանակից է Հադրութի, արևելյան մասում՝ Մարտունու և Աղդամի, արևմտյան մասում՝ Շուշիի և Քաշաթաղի, իսկ հյուսիսային մասում՝ Մարտակերտի շրջաններին:

Ասկերանի շրջանի տարածքում պահպանվել է հայ պատմական ճարտարապետական 674 հուշարձան: Դրանցից առանձնահատուկ ուշադրություն են ներկայացնում հատկապես Ավետարանոց գյուղի՝ Վարանդայի մելիքության՝ Բերդավանի բազմաթիվ հուշարձանները, ինչպես նաև Ասկերանի պաշտպանական պարիսպը:

Մասնավորապես, Ավետարանոց գյուղի նշանավոր հուշարձաններից են *Ս. Աստվածածին* եկեղեցին, *Կուսանաց անապատ* կոչվող հուշարձանախումբը, որի եկեղեցու գավիթը եղել է Վարանդա գավառի իշխանների՝ Մելիք–Շահնազարյանների տոհմական դամբարանը, ինչպես նաև՝ շրջակայքի պարիսպները, տարբեր նշանակության հին շինություններն ու աղբյուրները: Շրջանի առավել կարևոր հուշարձաններից են *Շոշկա վանքը* (Խաչմաչ գյուղում), Սարուշեն գյուղի մոտ գտնվող *Փիրումաշենի եկեղեցին, Շիկաքար բերդը, Բաֆֆու աղբյուր–հուշարձանը* (Դահրավ գյուղի մոտ), Կարկառ գետի վրա 18–րդ դարի սկզբներին կառուցված *«Մարգի կամուրջը»*, ինչպես նաև Ստեփանակերտի մուտքի մոտ կանգնեցված *«Մենք ենք, մեր սարերը»* տուֆակերտ ինքնատիպ հուշարձանը: Հայաստանի ժողովրդական քանդակագործ պրոֆեսոր Սարգիս Բաղդասարյանը այդ տուֆակերտ

հուշարձանով հրաշալի մարմնավորել է ղարաբաղցու հպարտությունը, անպարտելիությունը, հաստատակամությունը:

Շրջանի գյուղատնտեսական հողատեսքերը 32881,5 հա է, այդ թվում՝ վարելահողերը՝ 18178,0 հա: Շրջանի գյուղատնտեսությունը մասնագիտացել է *այգեգործության, հացահատիկի մշակության և անասնապահության* ուղղությամբ:

Շրջանը տալիս է ԼՂՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի 22,7%–ը (2002 թ.), արդյունաբերական արտադրանքի 9,6%–ը: Շրջանին բաժին է ընկնում ԼՂՀ մանրածախ ապրանքաշրջանառության 9,9%–ը, բնակչությանը մատուցած ծառայությունների՝ 5,2%–ը: Ասկերանի շրջանում գործում են արդյունաբերկան 14 ձեռնարկություններ: Ըստ որում, արդյունաբերական արատադրանքի 45,8%–ը արտահանվում է ԱՊՀ և հեռավոր արտասահմանյան երկրներ:

2003 թ. տվյալներով՝ շրջանում կա քաղաքային 1 համայնք, գյուղական 41 համայնք և գյուղական 44 բնակավայր: Ինչպես ասվել է, շրջանի վարչական կենտրոնը Ասկերան քաղաքն է:

Գյուղերից առավել նշանավոր են Ավետարանոցը, Խանաբադը, Նորագյուղը, Այգեստանը, Արցախաշենը, Խաչենը, Շոշը, Խանածախը, Դահրավը, Խնձրստանը, Բաղարան, Խրամորթը, Դաշուշենը, Կարմիր Գյուղը, Խաչմաչը:

2. ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական առավել ընդարձակ շրջաններից մեկը Մարտակերտի շրջանն է: Նրա տարածքը կազմում է 1819.0 կմ^2: Համեմատության համար ասենք, որ տարածքով այն հավասար է Հայաստանի Հանրապետության ամենաընդարձակ՝ Սիսիանի տարածաշրջանին:

Շրջանի բնակչությունը, 2003թ. հունվարի 1–ի դրությամբ, 19475 մարդ է, այդ թվում՝ քաղաքային՝ 4492 մարդ, գյուղական 14983 մարդ: Վարչական կենտրոնը Մարտակերտ քաղաքն է, որի բնակչությունը 4492 մարդ է:

Մարտակերտի շրջանը զբաղեցնում է ԼՂՀ–ի հյուսիսային մասը, Խաչեն և Քոլատակ գետերի ավազաններից դեպի հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ընդգրկում է պատմական Արցախի Ջրաբերդ գավառը և Խաչեն ու Գյուլիստան գավառների զգալի մասը:

Արցախի պատմության մեջ ունեցած դերով, այստեղ առկա հսկայական հնագույն պատմաճարտարապետական եզակի կոթողների քանակով, ինչպես նաև անզուգական բնությամբ Մարտակերտի շրջանն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Բավական է նշել, որ Լեռնային Ղարաբաղի տարածքում մինչև այժմ հաշվարկված 2765 հայկական հուշարձաններից 1100–ը գտնվում են Մարտակերտի շրջանում: Դրանցից հատկապես պատմական մեծ արժեք են ներկայացնում *Գանձասարի վանքը, Դադի* կամ *Խութավանքը, Կարմիր, Երիցմանկաց, Եղիշե առաքյալի, Ամենափրկիչ, Հոռեկա, Հավապտուկ* վանքերը, *Խոխանաբերդը, Պառավաձորի* եկեղեցին, *Կաչաղակաբերդը, Ջրաբերդը, Մելիք–Բեգլարյանների* ապարանքը, *Վանքասարը* և ճարտարապետական այլ համալիրներ:

Առանձնահատուկ է հատկապես *Գանձասարի վանքը*: «13–րդ դարի հայկական ճարտարապետական հանրագիտարան». այսպես է գնահատել ռուս անվանի արվեստաբան Անատոլի Յակուբսոնը Արցախի պատմաճարտարապետական կանգուն հուշարձանների գոհարը՝ Գանձասարի վանքը: Այն գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ: Իսկ Վանք գյուղն էլ, որը Արցախի ամենահին, պատմական հարուստ անցյալ ունեցող և խոշոր բնակավայրերից է, գտնվում է Մարտակերտից 50 կմ դեպի հարավ–արևմուտք՝ Խաչեն գետի ձախ ափին: Ի դեպ, գյուղի անվանումն էլ հենց առաջացել է Գանձասարի վանքից, քանի որ նախկինում բնակավայրը տեղադրված է եղել անմիջապես նրա շուրջը: Հետագայում բնակավայրը տեղաշարժվել է վանքից մոտ 1 կմ դեպի հյուսիս: Տեղանքը, ուր գտնվում է վանքը, ծովի մակերևույթից մոտ 1300 մ բարձրություն ունի, շրջապատված է անտառներով ու այգիներով:

Մարտակերտի շրջանի մի մասը, որտեղ Գանձասարի վանքն է, նախկինում մտել է Խամսայի հինգ մելիքություններից ամենահզորի՝ Խաչենի *մելիքության* տարածքի մեջ:

Պատմական բազմազան փաստերը, առկա խաչքարերը, կրոնական և բնակելի կիսավեր ու ավերված շինությունների վիմագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ մինչև Գանձասարի այժմյան կանգուն վանքի կառուցումը այստեղ եղել են եկեղեցական շինություններ: Սակայն եկեղեցական այդ նոր, հմայիչ համալիրի կառուցումը Խաչենի իշխանության այս հատվածում, որը տափաստանային վայրերից (որտեղից թաթար–մոնղոլական, այնուհետև թուրքական բարբարոս ցեղերը հաճախակի հարձակվում էին) դեպի Արցախի լեռնաշխարհը տանող գլխավոր մատույցն էր, մտահղացված է խելացի կերպով ու հեռանկարով: Այն պետք է դառնար և հիրավի դարձավ Արցախի ոչ

միայն կրոնական խոշոր կենտրոնը, այլև նրա պաշտպանական, քաղաքական, տնտեսական հզոր պատվարը:

Գանձասարի վանքի կառուցումը սկսվել է 1216թ. և ավարտվել 1238 թ.: Այն կառուցել է Խաչենի մեծ իշխան Հասան–Ջալալյանը (Հասան–Ջալալ–Դոլա): Հենց Հասան–Ջալալյան իշխանական տոհմի շնորհիվ էլ Գանձասարը մինչև 19–րդ դարի սկիզբները եղել է Արցախի կրոնական, քաղաքական, մշակութային, տնտեսական խոշոր կենտրոնը: Գանձասարը երկար ժամանակ՝ 15–րդ դարից հետո, եղել է Աղվանքի կաթողիկոսության մշտական, անփոփոխ աթոռանիստը: Այն ամբողջ Արևելյան Հայաստանի հոգևոր ու քաղաքական կյանքի ամենանշանակալից կենտրոններից մեկն էր:

Անգնահատելի է Գանձասարի և նրա տերերի՝ Հասան–Ջալալյանների դերը թշնամիներից ամբողջ Արցախի պաշտպանության, ազգային–ազատագրական շարժումների կազմակերպման և, որ շատ կարևոր է, Արցախը, հետևաբար նաև ամբողջ Հայաստանը, Ռուսաստանի հետ միավորելու գաղափարի ձևավորման գործում: Շուրջ 300 տարի առաջ հենց այստեղ՝ Գանձասարի վանքում են Արցախի մելիքները կազմել նամակներ, խնդրագրեր և հատուկ պատվիրակներով ուղարկել Ռուսաստանի ցարին՝ պարսկաթուրքական լծից երկրամասը ազատագրելու և Ռուսաստանին միացնելու նպատակով:

Շրջանի տարածքը հարուստ է պղնձի, բազմամետաղների, ոսկու և այլ մետաղային հանածոների, բազալտի, տուֆի, կրաքարի պաշարներով:

Մարտակերտի շրջանի տարածքով են հոսում Լեռնային Ղարաբաղի երկու համեմատաբար խոշոր՝ *Թարթառ* (նախկինում՝ Տրտու) և *Խաչեն* գետերը՝ իրենց բազմաթիվ վտակներով: Այդ լեռնային գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, զուլալ ջրերը աշխարհի բնական ամենահետաքրքիր հուշարձանների թվին կարելի է դասել:

Շրջանի մեծ մասը անտառածածկ է: ԼՂՀ անտառների կեսից ավելին գտնվում է Մարտակերտի շրջանում: Անտառներում տարածված են վայրի պտղատու ծառատեսակներ: Մարտակերտի շրջանը արևելքից սահմանակից է Աղդամի, Միր–Բաշիրի (այժմ Թարթառի), Բարդայի շրջաններին, հյուսիսային մասում՝ պատմական Արցախի Գյուլիստանի գավառի տարածքը զբաղեցնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը միավորված Ադրբեջանի կողմից օկուպացված նախկին Շահումյանի շրջանն է: Արևմտյան մասում ազատագրված Քարվաճառի շրջանն է (ԼՂՀ կազմի մեջ մտնող Շահումյանի շրջանը): Իսկ հարավային մասում այն սահմանակից է Ասկերանի շրջանին:

Շրջանի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 34318,6 հա, այդ թվում վարելահողերը՝ 14175,6:

Գյուղատնտեսության ճյուղերից առաջատարը խաղողագործությունն է և անասնապահությունը: Խաղողի այգիների տարածությունը կազմում էր ավելի քան 5 հազ. հա:

Խաղողագործությունը առավելապես տարածվում է Թարթառ գետի ավազանի հարթավայրային ու նախալեռնային հատվածներում: Անասնապահությունը զարգացած է շրջանի բոլոր գյուղերում, սակայն այն առավել մասնագիտացված ուղղություն ունի բարձրադիր վայրերում գտնվող գյուղերի տնտեսություններում: Զարգացած է նաև հացահատիկային տնտեսությունը:

Մարտակերտի շրջանի տեսակարար կշիռը ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ կազմում է 13,2% (2002 թ.):

Շրջանի գյուղատնտեսությունը խիստ տուժել է վերջին պատերազմից, դեռևս 8 բնակավայրեր, որտեղ հիմնականում զարգացած էր բուսաբուծությունը, գտնվում են թշնամու վերահսկողության տակ:

Այս խոշոր շրջանում *արդյունաբերությունը* դեռևս աննշան տեղ ու դեր ունի: 2002 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում, Մարտակերտի շրջանի տեսակարար կշիռը կազմել է 2,8%: Արդյունաբերական օբյեկտներից համեմատաբար նշանավորը Թարթառ գետի վրա կառուցված *Մարսանգի հիդրոէլեկտրակայանն է:* Մարտակերտում գործում էր Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը, փայտասղոցման կետ, շինանյութերի կոմբինատ, լիմոնադի արտադրամաս, հացի կոմբինատ, իսկ Լենինավանում եղել է խաղողի նախնական մշակման ձեռնարկություն: Վերջինս դեռևս *բռնազավթված է* Ադրբեջանի կողմից: Շրջանում իրականացվում էր նաև կրաքարի մեքենայական արդյունահանում: Մինչդեռ Մարտակերտի շրջանն ունի բոլոր հնարավորությունները գյուղատնտեսական հումքի վերամշակման հզոր ձեռնարկություններ, ինչպես նաև թեթև արդյունաբերության և ճշգրիտ մեքենաշինության, սարքաշինության գործարաններ, մասնաճյուղեր հիմնադրելու համար:

Վերջին տարիներին այստեղ նկատվում է վերամշակող արդյունաբերության (հատկապես մանրատախտակի արտադրության) աճը: Սակայն շրջանի արդյունաբերության զարգացման բնագավառում կարևորագույնը Դրմբոնի պղնձի, ոսկու հանքավայրի շահագործումը և այդտեղ լեռնահանքահարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումն է, որի հումքը տեղում հարս-

տացվելուց հետո այժմ ուղարկվում է Հայաստանի Հանրապետություն, որտեղ և (Ալավերդի) այն ձուլվում է:

Ինչպես ասվել է, 2003 թ. տվյալներով՝ Մարտակերտի շրջանում ընդհանուր առմամբ կա 45 բնակավայր, այդ թվում 1 քաղաք, գյուղական 44 բնակավայր, որոնք միավորված են գյուղական 40 համայնքներում: Բացի դրանցից, 8 բնակավայրեր դեռևս գտնվում են ադրբեջանական զավթիչների վերահսկողության տակ:

Գյուղական բնակավայրերից առավել խոշորները Չայլու (այժմ՝ Այգեստան) և Հաթերք գյուղերն են: Նշանավոր են նաև Ն. Հոռաթաղ, Մաղավուզ, Մեծ Շեն, Թալիշ, Վանք, Առաջածոր, Չլդրան, Մոխրաթաղ, Կուսապատ, Վաղուհաս, Վ. Հոռաթաղ, Դրմբոն, Քոլատակ, Ծմակահող գյուղերը:

Շրջանի գյուղերի բացարձակ մեծ մասը պատմական հարուստ անցյալ ունեցող հայկական հին բնակավայրեր են, որոնցից յուրաքանչյուրն իր անուրանալի ներդրումն ունի արտաքին բարբարոս ցեղերի դեմ պայքարելու, ամբողջ Արցախի ազատագրական շարժումների գործում: Այդ շրջանում են ծնվել ազգային–ազատագրական շարժումների բազմաթիվ ղեկավարներ, Խորհրդային Միության հերոսներ, ակադեմիկոսներ, գիտնականներ, արվեստագետներ:

Արցախի պատմության մեջ փառավոր էջեր են թողել Խաչենի խանական տոհմի բոլոր մեծերը՝ Հասան–Ջալալյանները: Նրանցից հանրահայտը, ինչպես ասվել է, Գանձասարի հիմնադիր, Խաչենի մեծ իշխան Ջալալ–Դուլան է: Նա ոչ միայն կրոնական բարձրաստիճան գործիչ էր, այլև հմուտ շինարար, տաղանդավոր ու քաջ զորավար, խելացի քաղաքագետ: Խաչենը տվել է նաև Ռուզանի նման բազմաթիվ քաջարի դուստրեր, որոնք մեծ դեր են խաղացել վայրագ ցեղերից Արցախի ազատագրական գործում: Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի ծնունդ են 1805–1811 թթ. ռուս–պարսկական պատերազմի ժամանակ իրենց հերոսություններով հայտնի դարձած Վանի և Հակոբ Յուզբաշյանները: Այստեղ են ծնվել նաև դիվանագետ *Ալեքսանդր Բեկզադյանը,* քաղաքական գործիչ *Լևոն Աթաբեկյանը* և շատ ուրիշներ:

Պետք է նշել, որ շրջանի երբեմնի հանրահայտ բնակավայրերի զգալի մասը ադրբեջանական գաղութատիրության պայմաններում ոչ միայն սոցիալ–տնտեսական զարգացում չի ապրել, այլև քայքայվել է, դատարկվել:

Շրջանի գյուղերի զգալի մասը, հատկապես լեռնային գյուղերը դեռևս չունեն սոցիալ–տնտեսական ժամանակակից պայմաններ, չեն գործում կամ չկան գրադարանները, ակումբները, կենցաղսպասարկման օբյեկտնե-

ը: Եղածների զգալի մասն էլ գտնվում է 1920–ական թթ. առաջ կառուցված մասնավոր շենքերում: Անկախություն ձեռք բերելուց հետո այս հիմնահարցերին ԼՂՀ կառավարությունը լուրջ ուշադրություն է դարձնում:

Շրջանի (ինչպես և ամբողջ Արցախի) գյուղերի մեծ մասի ճանապարհները անբարեկարգ են: Աշխատանքի բնագավառ չունենալու և ադրբեջանական իշխանությունների ստեղծած ծանր պայմանների պատճառով տասնամյակներ շարունակ շրջանի երիտասարդությունը ստիպված է եղել հեռանալ իր հայրենի լեռնաշխարհից: Պատահական չէ, որ գյուղերի մեծ մասում կարելի է տեսնել հնում կառուցված երկհարկանի, բարեկարգ, թիթեղածածկ տներ, որոնք կա՛մ դատարկ են, կա՛մ էլ դրանցում ապրում են միայն ծեր մարդիկ, իսկ որոշ գյուղերում էլ դպրոցները՝ աշակերտներ չունենալու պատճառով փակված են:

2002 թ. շրջանում գործում էր հանրակրթական 36 դպրոց, երաժշտական 1 դպրոց, հանրային 1 գրադարան, 4 հիվանդանոց, 2 ամբուլատորիա, 36 բուժկետ:

Ինչպես Մարտակերտի, այնպես էլ ամբողջ Արցախ–Ղարաբաղի գյուղերի սոցիալ–տնտեսական վերակենդանացումը, զարգացումը կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության հետ Լեռնային Ղարաբաղի սոցիալ–տնտեսական բազմակողմանի ինտեգրացման ճանապարհով:

1992 թ. ամռանը ադրբեջանական զավթիչներին հաջողվում է Շահումյանի շրջանի հետ միասին զավթել Մարտակերտի շրջանի հյուսիսային մասը, այդ թվում՝ Մարտակերտ քաղաքը: Մինչև 1994 թ. մայիս ամիսը հայ ազատամարտիկները ազատագրել էին շրջանի զավթված տարածքի մեծ մասը և շարունակվում էր ազատագրական պայքարը: 1994 թ. մայիսին ձեռք բերված հրադադարից հետո շրջանի հյուսիսարևելյան որոշ մասը (այդ թվում՝ Լենինավանը) դեռևս մնում է չազատագրված:

3. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Մարտունու շրջանը զբաղեցնում է ԼՂՀ տարածքի հարավարևելյան մասը: Մյուս վարչական շրջանների համեմատությամբ այս շրջանը համեմատաբար հարթավայրային է:

Տարածքը 1025 կմ^2 է, բնակչությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ 22990 մարդ, որից քաղաքային՝ 4695 մարդ, գյուղական՝ 18295 մարդ:

Վարչական կետնրոնը Մարտունի քաղաքն է, որի բնակչությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով 4695 մարդ է:

Այն զբաղեցնում է պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա գավառի մի մասը, գավառ, որը ոչ միայն Արցախի, այլև առհասարակ հայ ժողովրդի պատմության, մշակույթի, տնտեսական կյանքի զարգացման, արտաքին թշնամիների դեմ պայքարի ասպարեզներում յուրահատուկ, կարևոր դեր է խաղացել:

Մյուս շրջանների համեմատությամբ Մարտունու շրջանի տարածքի զգալի մասը հարթավայրային է և ծովի մակերևույթից ունի մինչև 400 մ բարձրություն: Շրջանի հարթավայրային մասում, հատկապես Մարտունի քաղաքում, Կուրապատկինոյի, Գնորգավանի, Աղբուռունի, Ալաբալու հատվածներում կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են, մթնոլորտային տեղումները՝ սակավ, ձյան կայուն շերտ համարյա չի լինում:

Շրջանի արևմտյան կեսը նախալեռնային, թույլ թեքություն ունեցող մակերևույթ ունի, այստեղի կլիմայական պայմանները առավել նպաստավոր են գյուղատնտեսության համար: Համեմատաբար բարձր են՝ Նենգի, Կաղարծի, Աշան, Գյունե, Ճարտար, Խերխան, Թաղավարդ գյուղերի մոտակայքով ձգվող լեռնաճյուղերի գագաթները, որոնք ծովի մակերևույթից ունեն 1200–1500 մ բարձրություն:

Մարտունու շրջանի տարածքով հոսող գետերից համեմատաբար ջրառատը *Վարանդան է*՝ իր *Ամարաս* վտակով: Այն թափվում է Արաքս գետը: Մյուս գետերից համեմատաբար նշանավորը *Խոնաշենն է*, որը, սկիզբ առնելով Բովուրխանի լեռնալանջերից, անցնում է Մարտունի քաղաքով և կորչում Արցախի հարթավայրում:

Ի տարբերություն անտառազուրկ, խիստ սակավաջուր, չոր կլիմայով արևելյան մասի, շրջանի արևմտյան նախալեռնային հատվածը գեղատեսիլ է, հարուստ պտղատու ծառատեսակներով, անտառներով, զուլալ գետակներով ու սառնորակ աղբյուրներով: Այս տեսակետից հատկապես անզուգական են Թաղավարդ, Զարդանաշեն, Սխտորաշեն, Ղավախան, Նենգի գյուղերին հարակից վայրերը: Արցախի և մասնավորապես Մարտունու շրջանի բնության հրաշալիքները հիշատակելիս անհնար է չնշել Սխտորաշեն գյուղի մոտ գտնվող հանրահայտ *սոսենու (*ղարաբաղցիներն անվանում են «*ենջրե*») մասին: Դա, հիրավի, բնական եզակի հրաշալիք է և մասնագետների գնահատմամբ՝ նախկին Խորհրդային Միության տարածքում գտնվող ամենատարեց ծառը (տարիքը՝ ավելի քան 2000): Անհիշելի ժամանակներում կայծակի հարվածից սոսու բունը ճեղքվել է ու առաջացել է 44 քառ. մ մակերեսով

փչակ, որտեղ կարող են տեղավորվել շուրջ 100 մարդ: Հիմքում ծառաբնի շրջագիծը ավելի քան 27 մ է, բարձրությունը՝ 54 մ:

Մարտունու շրջանի ընդերքը հարուստ է ***կրաքարի, բազալտի, մարմարի, գրանիտի, կավի պաշարներով:*** Մարմարի պաշարներով հարուստ է Նորշեն, գրանիտի պաշարներով՝ Նենգի, կավի պաշարներով՝ Նենգի ու Ղավախան գյուղերի շրջակայքը:

Արևմտյան մասում շրջանը սահմանակից է Ասկերանի, հարավային մասում՝ Հադրութի շրջաններին, արևելյան ու հարավարևելյան մասերում՝ Ֆիզուլու, իսկ հյուսիսային մասում՝ Աղդամի շրջաններին:

Շրջանի տարածքում պահպանվել են հայկական պատմաճարտարապետական 353 հուշարձան, որոնցից կանգունը, առավել հնագույնը ***Ամարասի վանքն է***: Այն գտնվում է Մարտունի քաղաքից ավելի քան 20 կմ հարավ–արևմուտք, Մաճկալաշեն գյուղի մոտ, Ամարաս գետի ձախ ափին: Ամարասի վանքը էջմիածնի հասակակիցն է, կառուցվել է IV դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի, այնուհետև՝ նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսի կողմից: Վերջինս թաղված է Ամարասում: Վանքը եղել է ոչ միայն Արցախի կրոնական խոշոր կենտրոնը, այլև մշակութային, պաշտպանական, տնտեսական հզոր պատվարը: Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ բացվել է Հայաստանի այդ ընդարձակ նահանգի առաջին դպրոցը:

Շրջանի պատմաճարտարապետական մյուս հուշարձաններից նշանավոր են՝ Ճարտար գյուղի ***Եղիշեի***, Հերհեր գյուղի ***Ս. Գրիգորիս***, Մավաս գյուղի վանքերը, Բերդաշենի ամրոցները, ***Մեծ Նահատակ, Ս. Աստվածածին*** եկեղեցիները, Հացի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին ու դպրոցի հին շենքը, Թաղավարդ գյուղի անտառածածկ սարի վրա գտնվող ***Ղևոնդաց անապատի*** հուշարձանները, Կաղարծի գյուղի ***Թարգմանչաց եկեղեցին*** և այլ հնություններ:

Շրջանում կա քաղաքային 1 համայնք, գյուղական 35 համայնք և գյուղական 38 բնակավայր:

Գյուղերից առավել խոշորներն են ***Ճարտարը, Բերդաշենը, Գիշին, Թաղավարդը, Մաճկալաշենը, Խնուշինակը, Հերհերը, Աշանը, Քերթը:***

Շրջանը տվել է հայ ականավոր բազմաթիվ քաղաքական, պետական, ռազմական գործիչներ, գիտնականներ: Առանձնապես հիշատակության են արժանի ***Բոգդան Կնունյանցի***, նաև եղբոր՝ ***Լյուդվիգ Կնունյանցի,*** քրոջ՝ ***Փառանձեմ Կնունյանցի*** անունները, ինչպես նաև Բոգդանի եղբոր որդու՝ ***Իվան Կնունյանցի*** անունը, որը ականավոր գիտնական է: Կնունյանցները

Մարտունու շրջանի Նենգի գյուղից են: Այստեղ բացված է Բոգդան Կնունյանցի տուն–թանգարանը:

Մարտունու շրջանի Խերխան գյուղից է քաղաքացիական պատերազմի լեգենդար հերոս ***Հակոբ Մելքումյանը*** (Մելքումով), որի հրամանատարությամբ գործող զորքերը Միջին Ասիայում գլխովին ջախջախել են հայ ժողովրդի դահիճ էնվեր փաշայի մեծաքանակ հրոսակախմբերին և վերջ տվել նրա անփառունակ կյանքին:

Կոլխոզաշեն գյուղի ծնունդ է Խորհրդային Միության հերոս, նշանավոր զորավար, գեներալ ***Միքայել Պարսեղովը:***

Շրջանի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 35985,3 հա, այդ թվում վարելահողերը՝ 21324,0 հա: Մարտունու շրջանը ***գյուղատնտեսության*** զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններից է: Ունի բազմաճյուղ գյուղատնտեսություն՝ հացահատիկի մշակություն, այգեգործություն և պտղաբուծություն, անասնապահություն՝ իր բոլոր ենթաճյուղերով: Խաղողի, հացահատիկի բերքատվությամբ, կովերի կաթնատվությամբ այս շրջանը մարզում միշտ առաջատար տեղ է զբաղեցրել: Միայն Ճարտար գյուղի միացյալ կոլտնտեսությունում 1970–1985 թթ. միջին հաշվով տարեկան 15–20 հազ. տոննա խաղող է արտադրվել: Խաղողագործությամբ հանրահայտ էին նաև թիվ 1 պետական տնտեսությունը, Գիշի, Բերդաշեն գյուղերը:

Մարտունու շրջանին, 2002 թ. տվյալներով, բաժին է ընկնում ԼՂՀ գյուղատնտեսական ամբողջ համախառն արտադրանքի 28,8%–ը: Կարևոր է նշել, որ ԼՂՀ հացահատիկի արտադրության 35%–ը բաժին է ընկնում Մարտունու շրջանին: Վերջին տարիներին այստեղ շահագործման է հանձնվել «Լուսակերտ» (ՀՀ) թռչնաբուծական ֆաբրիկայի մասնաճյուղը: Ընդհանուր առմամբ այժմ շրջանում գործում է 331 անհատ ձեռնարկություն, գրանցված են 594 տնտեսավարող սուբյեկտ:

Արդյունաբերական արտադրությունը դեռևս փոքր տեղ ունի շրջանի տնտեսությունում: Ադրբեջանի գաղութատիրության երկարաձիգ ժամանակաշրջանում Մարտունու շրջանը նույնպես վեր էր ածվել Ադրբեջանին գյուղատնտեսական հումք մատակարարող շրջանի: Արտադրված ամբողջ հումքը կամ կիսաֆաբրիկատը հանձնվում էր Ադրբեջանում գտնվող ձեռնարկություններին: Այս շրջանը մասնավորապես հացահատիկի, խաղողի, մրգի, բոժոժի, բրդի, մսի, կաթի արտադրությամբ Ադրբեջանի ձեռնարկությունների խոշոր մատակարարն էր: Տեղում այդ ամենի վերամշակման ոչ մի ձեռնարկություն չի ստեղծվել: Միայն Մարտունիում և Ճարտարում կային

խաղողի նախնական մշակման փոքր ձեռնարկություններ, որոնց կիսաֆաբրիկատը նույնպես մատակարարվում էր Ադրբեջանին: Մինչդեռ շրջանի գյուղատնտեսական արտադրությունը լայն հնարավորություններ է տալիս տեղում կազմակերպելու գինու, կոնյակի, բարձրորակ սպիրտի, օղու, պահածոների, հյութերի խոշոր արտադրություն:

2002 թ. տվյալներով՝ ԼՂՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում Մարտունու շրջանի տեսակարար կշիռը կազմել է 5,8%:

Լեռնային Ղարաբաղի, այդ թվում նաև Մարտունու շրջանի սոցիալ–տնտեսական զարգացման առաջնահերթ հիմնախնդիրների շարքում, գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների, ճշգրիտ մեքենաշինության մասնաճյուղերի ստեղծման հետ միասին, պետք է ուշադրություն դարձնել նաև թթենու այգիների խնամքի վերականգնման գործին:

Ինչպես մյուս շրջաններում, Մարտունու շրջանի գյուղերի սոցիալ–տնտեսական հիմնախնդիրներն էլ տասնամյակներ շարունակ բարձիթողի վիճակում են եղել: Այդ պատճառով գյուղերի մեծ մասը երիտասարդներից դատարկվել է: Գյուղերի զգալի մասը չունի կենցաղսպասարկման տարրական պայմաններ, գրադարաններ, ակումբները հին ու անբարեկարգ շենքերում են և կանոնավոր չեն գործում: Նույնիսկ Ճարտարի մշակույթի տուֆակերտ, հոյակապ տունը անգործության էր մատնված, քանի որ հայկական կյանքը մարզում տասնամյակներ շարունակ մեռցվել էր:

2002 թ. տվյալներով՝ շրջանում կա հանրակրթական 40 դպրոց, երաժշտական 1 դպրոց, 2 հիվանդանոց, գյուղական 5 բժշկական ամբուլատորիա, 29 բժիշկներ:

Մարտունու շրջանին բաժին է ընկնում ԼՂՀ մանրածախ ապրանքաշրջանառության 12,6%–ը, բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 7,4%–ը:

4. ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

Զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի հարավային մասը: Հյուսիսում սահմանակից է Մարտունու ու Ասկերանի, հյուսիս–արևմուտքում՝ Շուշիի շրջանին, իսկ հարավում, հարավ–արևելքում և հարավ–արևմուտքում՝ Քաշաթաղի շրջանին (որը ընդգրկում է Լաչինի, Ղուբաթլուի, Զաբրաթիլի ու Ֆիզուլու նախկին շրջանները):

Տարածքը 1860 կմ² է, բնակչությունը 2003թ. հունվարի 1–ի տվյալներով՝ 11825 մարդ, որից քաղաքայինը՝ 2825 մարդ, գյուղական 9000 մարդ: Վարչական կենտրոնը Հադրութ քաղաքն է, որի բնակչությունը 2825 մարդ է (2003թ.):

Մակերևույթը՝ լեռնային է, ունի անտառածածկ, գեղատեսիլ բնություն: Հանրաճանաչ դերասան Վահրամ Փափազյանը 1958թ. եղել է Հադրութում և, հմայված նրա գեղեցկությամբ, ասել է. «Եթե Ղարաբաղը մի ոսկե մատանի է, ապա Հադրութը նրա ադամանդն է»:

Այս շրջանի տարածքը համընկնում՝ համապատասխանում է պատմական Արցախի ***Դիզակի*** մելիքության տարածքին և աչքի է ընկնում հայկական պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններով: Տարածքի գերակշռող մասի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 700–900մ, իսկ ամենաբարձր կետը ***Դիզափայտ լեռան*** գագաթն է(2480մ): Այդ լեռան լանջերը հայտնի են ոչ միայն անզուգական բնական գեղեցկություններով՝ բազմազան ծաղիկներով, բուսատեսակներով, ալպյան մարգագետիններով, անտառներով, զուլալ աղբյուրներով, այլև պատմական հուշարձաններով, սրբավայրերով: Դիզափայտի «*Սպիտակ տաճարը*» հնագույն ուխտատեղի է: Շրջանի տարածքի զգալի մասը զբաղեցնում են թավ անտառները, որոնք հարուստ են բազմազան պտուղներով: Իսկ Քիրսի լեռնաշղթայի Դիզափայտ լեռան լանջերը ծաղկառատ, խոտառատ արոտավայրեր են:

Լեռնային կտրտված մակերևույթի պատճառով դաշտավարության համար նպաստավոր հողատարածքներն ավելի քիչ են: Այդ տեսակետից համեմատաբար նպաստավոր են ***Իշխանագետի*** ու նրա վտակների հովիտները: Կլիման ընդհանուր առմամբ չոր մերձարևադարձային է: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում +11,7°C է, բարձրադիր վայրերում՝ –1°C: Հունվարյան միջին ջերմաստիճանը համապատասխանաբար –0,7° C՝, հուլիսինը՝ +23,6°C: Տեղումների միջին տարեկան քանակը 500–700 մմ է: Շրջանում կա քաղաքային 1 համայնք, գյուղական 28 համայնքներ, գյուղական 41 բնակավայր: Գյուղական բնակավայրերից առավել նշանավոր են ***Մեծ Թաղերը, Հին Թաղերը, Տողը, Տումին, Ազոխը, Դրախտիկը, Ուխտաձորը, Թաղուտը, Խծաբերդը, Առաքյուլը:***

Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 22459,8 հա, որից վարելահողերը՝ 6300 հա: Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: Մասնավորապես, զարգացած են խոշոր եղջերավոր անասնապահությունը, պտղաբուծությունը, հացահատիկի մշակությունը: Շրջանին

բաժին է ընկնում ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 13,2% (2002 թ.):

Արդյունաբերությունը դեռևս աննշան չափով է զարգացած, նրա տեսակարար կշիռը ԼՂՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալում կազմում է 0,8% (2002 թ.): Սեփականաշնորհման քաղաքականության հետ կապված՝ 2003 թ. արդեն շրջանում կար 280 տնտեսավարող սուբյեկտ, որից 138 անհատ ձեռներեցներ:

Շրջանում գործում է հանրակրթական 28 դպրոց, երաժշտական 1 դպրոց, 1 հիվանդանոց, գյուղական 24 բժշկական հիմնարկներ: Շրջանին բաժին է ընկնում ԼՂՀ մանրածախ ապրանքաշրջանառության 11,2%, բնակչությանը մատուցված ծառայությունների՝ 6,1%–ը:

Հադրութի շրջանի տարածքում կա 486 հայկական պատմաճարտարապետական հուշարձան, դրանց մեծ մասը գիտաճանաչողական նշանակություն ունի: Առավել նշանավոր են Տողասարի լանջին գտնվող ***Գտիչ կամ Քթեշ վանքը*** (XII դ.), ***Օխտը դռնի վանքը***՝Տումի և Մոխրենես գյուղերի մոտ (V–VI դդ.), Տող գյուղի ***Ս. Ստեփանոս, Ա. Հովհաննես եկեղեցիները,*** Մեծ Թաղերի մոտ գտնվող **Ճոխտ պռվածառի վանքը**, այդ գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին, Դրախտիկ գյուղի մոտ գտնվող Գրիգոր Նարեկացի եկեղեցին, Ծակուռի գյուղի Ծաղկավանքը, Հակակու գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, Խանձաձորի Ս. Հովհաննես եկեղեցին, Թաղոտ գյուղի մոտ գտնվող Յոթ խաչվանքը, Դիզափայտի հուշարձանները և այլն: Եզակի հետաքրքրություն է ներկայացնում Ազոխ գյուղի մոտ գտնվող քարանձավային համալիրը: Աչքի են ընկնում նաև Իշխանագետի վրա կառուցված և այժմ էլ գործող հնագույն կամուրջները, Մեծ Թաղերի մոտ գտնվող Ծծախաչ քարանձավը, Մայրամածոր գյուղից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Վնեսա ղալա բերդը, Խծաբերդի մոտ գտնվող Բերդ քարայրը և շատ այլ հուշարձաններ:

5. ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ

Զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արևմտյան փոքր հատվածը՝ Ղարաբաղի լեռնաշղթայի կենտրոնական մասը, ԼՂՀ–ի ամենափոքր շրջանն է, տարածքը կազմում է 287 կմ²: Հյուսիսային և արևելյան մասերում սահմանակից է Ասկերանի, հարավային մասում՝ Հադրութի, իսկ արևմտյան մասում՝ Քաշաթաղի շրջաններին:

Բնակչությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով՝ 4213 մարդ է, որից քաղաքային՝ 2994 մարդ, գյուղական՝ 1219 մարդ:

Վարչական կենտրոնը Շուշի քաղաքն է, որի բնակչությունը 2994 մարդ է (2003 թ.):

Շրջանի մակերևույթը ամբողջապես լեռնային է, որը գերազանցապես ծածկված է անտառներով և թփուտներով: Նրա հարավային՝ Հադրութի շրջանի սահմանակից հատվածում է գտնվում ***Մեծ Քիրս*** լեռը, որի բարձրությունը 2725 մ է: Շրջանի տարածքով է անցնում ***Կարկառ*** գետը՝ իր վերին հոսանքով, որն այստեղ ունի բազմաթիվ արագահոս վտակներ: Դրանք բոլորն էլ հոսում են գեղատեսիլ, անդնդախոր կիրճերով, որոնցից հատկապես հիշարժան է Շուշիի մոտ գտնվող կիրճը: Այս փոքր տարածք ունեցող շրջանում կա 152 հայկական պատմաճարտարապետական հուշարձան: Դրանց զգալի մասը գտնվում է Շուշի քաղաքում:

Շրջանի գյուղատնտեսական հողատեսքերը 9726,2 հա է, որից վարելահողերը՝ 1032,0 հա:

Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, որտեղ վճռական տեղը պատկանում է անասնապահությանը: Շրջանը հանրահայտ է իր խոտառատ արոտավայրերով, խոտհարքերով: Անտառները կազմում են 8,3 հազ. հա:

Շուշիի շրջանի տեսակարար կշիռը ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ դեռևս շատ ցածր է, քան նրա հնարավորություններն են: Նրա տեսակարար կշիռը 2002թ. կազմել է 2,9%:

Ավելի ցածր է շրջանի տեսակարար կշիռը ԼՂՀ արդյունաբերության համակարգում՝ կազմելով ընդամենը 0,5% (2002 թ.):

Արդյունաբերությունը որոշ չափով զարգացած է Շուշի քաղաքում: 2003 թ. տվյալներով՝ այս շրջանում կար 1 քաղաքային համայնք, գյուղական 6 համայնք, գյուղական 8 բնակավայրեր:

Սա ԼՂՀ–ի միակ շրջանն է, որտեղ բնակչության ընդհանուր թվակազմում հայերը, 1920–1988 թթ. Ադրբեջանի կողմից ծրագրված հայաթափման քաղաքականության հետևանքով, համեմատաբար փոքր տեսակարար կշիռ ունեին: Այդ քաղաքականությունը սկսվել էր դեռևս 1918–1920 թթ. թուրք բարբարոսների ու մուսավաթականների կողմից Շուշիում և շրջակա հայկական գյուղերում կազմակերպված հայերի ջարդերով: Այդ տարիներին թուրք ավազակախմբերը միայն Շուշի քաղաքում և նրա շրջանում սպանել են ավելի քան 30 հազ. հայ: Հայաթափման քաղաքականությունը շարունակվել է նաև հետագա տարիներին: 1989 թ. տվյալներով՝ Շուշիի շրջանում կար շուրջ 20.4 հազ. մարդ, որից 13,5 հազարը՝ Շուշի քաղաքում:

Լեռնային Ղարաբաղում 1988 թ. իրադարձությունների ժամանակ դարձյալ Ադրբեջանի ղեկավար մարմինների կողմից կազմակերպված վայրագություններ կատարվեցին Շուշի քաղաքի և նրա շրջանի հայ բնակչության նկատմամբ, որի հետևանքով այդտեղի հայերի մեծ մասը ստիպված հեռացավ Ստեփանակերտ:

Շուշիի շրջանի գյուղական բնակավայրերից խոշորը հայկական ***Քարինտակ*** գյուղն է, որը Արցախի հնագույն բնակավայրերից է՝ հարուստ պատմական անցյալով: Գտնվում է Շուշի քաղաքից 2 կմ հեռավորության վրա՝ Կարկառ գետի ձախ ափին, այդ գետի անդնդախոր կիրճի զառիթափ քարաժայռի ստորոտում: Տեղանքը շատ բարդ է, բայց նաև յուրահատուկ գեղեցկություն ունի, օդն ու ջուրը մաքուր են: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, կամուրջներ, ջրաղացներ, քարանձավային շինություններ: Այդ քարանձավներից մեկի վերաբերյալ, որը գտնվում է գյուղի հյուսիսային մասում, հետաքրքիր տվյալներ է բերված Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի «Արցախ» գրքում: Հեղինակը նշում է, որ այդ քարայրի մուտքը կլոր է, դժվար անցանելի, քարայրը խորն է, սոսկալի մութ և բավականին երկար, որի ծայրը հասնում է համարյա թե մինչև Շուշվա տակը: Նա նշում է նաև, որ առանց լապտերի անհնար է մտնել և առաջ գնալ: Քարայրի խորքում ջուր կա:

Գյուղի թիկունքում գտնվող բարձրաբերձ քարաժայռի տարբեր մասերում կան շատ այդպիսի քարանձավային շինություններ, որտեղ հնագույն ժամանակներում թշնամի ուժերի հարձակումների դեպքում պատսպարվել է բնակչությունը:

Ըստ Մակար Բարխուդարյանի տվյալների՝ 1980–ական թթ. սկզբներին Քարինտակ գյուղն ուներ 174 տուն, 1068 բնակիչ: Դա վկայում է, որ այն ժամանակին հայկական խոշոր գյուղ է եղել: 1987 թ. Քարինտակն ուներ 186 տուն, 580 բնակիչ, իսկ 1989 թ.՝ 675 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Այստեղ գործում էր Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, կինոտեղակայում, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման տաղավար: Շրջապատում պահպանվել են հին գյուղատեղիներ (XV–XVII դդ.), խաչքարեր (XVIII դ.), Ս. Աստվածածին եկեղեցին (XIX դ.), ջրաղացների փլատակներ, բազմաթիվ աղբյուրներ:

Շրջանի հայաբնակ մյուս բնակավայրերից նշանավոր է փառավոր պատմություն ունեցող Բերդաձոր հովտի *Հինշեն* գյուղը (որը խորհրդային իշխանության տարիներին անվանվել էր Կիրով):

Հինշենը (ինչպես նաև պատմական Արցախի Բերդաձոր գավառի Մեծ Շեն գյուղը) երբեմն հենց այդպես էլ անվանվում է՝ *Բերդաձոր:* Այն առավել հին պատմություն ունեցող բնակավայր է, հերոսաբար պաշտպանվել է պարսկական, թաթար–մոնղոլական, թուրքական, զորքերի հաճախակի հարձակումներից: Բերդաձորի Հինշենը հաջողությամբ դիմադրել է թշնամուն ու գոյատևել դեռևս 1918–1920 թթ. թուրքական բարբարոսությունների ժամանակ: Այդ հերոսական գյուղը 1988 թ. սկզբից մինչև 1992 թ. մայիսի 9–ը, այսինքն՝ մինչև Շուշի քաղաքի լրիվ ազատագրումը, պաշտպանվում էր ադրբեջանական հրոսակների ամենօրյա հարձակումներից:

Գյուղն ունի գեղատեսիլ դիրք, մեղմ կլիմա: 1959 թ. այստեղ կար 500, իսկ 1989 թ.՝ 267 բնակիչ: Կոլտնտեսություն էր կազմակերպվել 1929թ.: Տնտեսությունը մասնագիտացված էր *անասնապահության և հացահատիկի* մշակության ուղղությամբ: Մինչև 1960–ական թթ. գյուղի միջնակարգ դպրոցն ուներ ավելի քան 250, իսկ 1988–1989 թթ.՝ ընդամենը 18 աշակերտ: Շրջանի ազատագրումից հետո աշակերտների թիվը ավելանում է: Գյուղում կան գրադարան, կապի բաժանմունք, բուժկետ, ակումբ և կենցաղի տուն: Բնակավայրը էլեկտրիֆիկացվել է 1955 թ., ապահովված է խմելու ջրով: Տները երկհարկանի են: Այն բարեկարգ ճանապարհով կապված է Ստեփանակերտ–Գորիս ավտոխճուղուն: Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգման և խնամքի կարիք ունի: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75–80 տարի է: Հինշեն գյուղի որոշ բնակիչների տարիքն անցնում է 100–ից: Գյուղի շրջակայքում նշանավոր են *Սահակ Աղբյուրը, Ներքին ջուրը, Ղուշի մանը, Ղեսյան ղուզե, Դմբլկաց անտառները, Ճաքաց հող, Թումա սեռ* արոտավայրերը: Գյուղի մոտակայքում կան պղնձահանքի երևակում և հանքային ջրի երկու աղբյուր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 196 մարդ, զոհվել՝ 62–ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Բերդաձորի հովտում նշանավոր է *Մեծ Շեն* գյուղը, որը կոչվում էր նաև Մեծ Ղարաղշլաղ: Մինչև ներկայիս բնակավայրերի հիմնադրումը այդ գյուղի բնակիչների նախնիները հնում բնակվում էին մոտակա ձորակի քարայրային բնակատեղում: Գյուղը գտնվում է բլրի վրա: Ձմեռը սառնաշունչ է, ամառը՝ զով: Մեծ Շենը 1959 թ. ուներ 300, 1985 թ.՝ 160, իսկ 1989 թ.՝ 97 բնակիչ: Կոլտնտեսություն էր կազմակերպվել 1929 թ.: Տնտեսության ուղղությունը *դաշտավարություն է:*

1988–1989 թթ. Մեծ Շենի դպրոցն ուներ ընդամենը 4 աշակերտ: Այժմ պատկերը արագ փոխվում է: Գյուղում կան ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, խանութ, միջգյուղական հիվանդանոց: Բնակավայրը էլեկտրիֆիկացվել է 1966 թ.: Տները երկհարկանի են, ճանապարհը՝ անբարեկարգ, 4 կմ ձգվող ճանապարհով կապվում է Ստեփանակերտ–Գորիս ավտոմայրուղուն: Գյուղի եկեղեցին 16–րդ դարի կառույց է: Բնակիչները աշխատասեր են: Գյուղի մոտակայքում կա պղնձահանքի երևակում:

Մյուսը *Եղցահող* գյուղն է: 1985 թ. այն ուներ մոտ 180 բնակիչ, 1987 թ.՝ 122, իսկ 1999 թ.՝ 99 բնակիչ: Դպրոցն 1988–1989 թթ. ուներ ընդամենը 6 աշակերտ:

Կոլտնտեսություն էր կազմակերպվել 1929 թ.: Տնտեսության ուղղությունը *անասնապահությունն է:* Գյուղն ունի ակումբ, գրադարան, բուժկետ, կոշկակարանոց: Բնակավայրը էլեկտրիֆիկացվել է 1966 թ.: Տները երկհարկանի են, ճանապարհը՝ անբարեկարգ, 3 կմ ձգվող ճանապարհով կապվում է Ստեփանակերտ–Գորիս ավտոխճուղուն: Բնակիչները աշխատասեր են ու հպարտ:

Եղցահող, Խերխան, Կանաչ Թալա, Ծաղկածոր գյուղերից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 190 մարդ, զոհվել է 87–ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Հերոսական այս ձորի գյուղերից նշանավոր էին նաև Ծաղկածորը, Կանաչ Թալան, Խերխանը:

1920թ. Ծաղկածորն ու Կանաչ Թալան ունեին 280, 1950թ.՝ 300 հայ բնակիչ: 1989թ. Ծաղկածորն ուներ ընդամենը 22, իսկ Կանաչ Թալան (նույն տարվա տվյալներով)՝ 96 բնակիչ:

Խերխան հայկական գյուղը վերջին ժամանակներում գրեթե անմարդաբնակ էր դարձել: Շուշիի շրջանի մյուս գյուղերը հայաթափվել էին դեռևս 1920–1988թթ.:

1988թ. սկզբից սկսած, Ղարաբաղյան ազգային ազատագրական շարժումների հետ կապված, ադրբեջանական հրոսակների կողմից մեկուսացվել էին Բերդաձորի Հին Շեն, Մեծշեն, Ծաղկածոր, Եղցահող, Քարինտակ հայկական գյուղերը: Դրանց բնակչության նկատմամբ կիրառվել են հայատյաց բոլոր մեթոդները: Բերդաձորի քաջարի հայերը շարունակել են համառ պայքարը՝ իրենց հազարամյա բնակավայրերը պաշտպանելու համար:

1991թ. մայիսին ադրբեջանական ելուզակային ջոկատները խորհրդային բանակի զորամասերի աջակցությամբ, երկարատև շրջափակումից հետո, տանկերով, հրանոթներով, զրահամեքենաներով հարձակվել են Բերդաձորի փոքրաթիվ բնակչություն ունեցող վերը նշված գյուղերի վրա, ավերել հազարամյա այդ բնակավայրերը, թալանել բնակչությանը, ստիպել նրանց հեռանալու Գորիսի շրջան:

Սակայն Արցախի ազատամարտիկների հերոսական ջանքերի շնորհիվ 1992 թ. մայիսին թուրք–ադրբեջանական գաղութարարներից ազատագրվեց Շուշի քաղաքը և շրջանը: Դրանից հետո Բերդաձորի բոլոր գյուղերից բռնագաղթված բոլոր հայերը նորից վերադարձան իրենց բնակավայրերը: Շուշիում և նրա շրջանի գյուղերում հայկական կյանքը վերստին վերակենդանանում է: 2002 թ. տվյալներով՝ շրջանում գործում է հանրակրթական 8 դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 հիվանդանոց, 6 բուժկետ, գրադարաններ: 2003 թ. շրջանում գրանցված է տնտեսավարող 145 սուբյեկտ, որից 48-ը՝ անհատ ձեռներեցներ:

6. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ

Շահումյանի նախկին շրջանը, որը կազմել է ԼՂՀ բաղկացուցիչ մասը հիմնականում համապատասխանում է պատմական Արցախի հերոսական Գյուլիստան գավառի տարածքին, 1988–1994 թթ. զավթվել է Ադրբեջանի կողմից և առայսօր գտնվում է նրա վերահսկողության տակ: Գյուլիստանի հերոսական ժողովրդի զգալի մասը այդ պատճառով ստիպված է եղել տեղափոխվել ազատագրված Քարվաճառի տարածաշրջան և բնակություն հաստատել հայրենի Արցախի այդ հատվածում:

Այժմյան Շահումյանի շրջանը հենց ազատագրված Քարվաճառի (որը թուրք–ազերիները անվանել էին Քյալբաջար) տարածաշրջանն է, որտեղ էլ 1999 թ. ձևավորվեց ԼՂՀ բաղկացուցիչ մասը կազմող այդ՝ Շահումյանի շրջանը: Այս նոր շրջանի տարածքը կազմում է 2494,0 կմ^2, բնակչությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով 2482 մարդ է, այդ թվում՝ քաղաքային բնակչությունը 549 մարդ է, գյուղականը՝ 1933 մարդ: Ինչպես տեսնում ենք, այս մեծ հետաքրքրություն ներկայացնող՝ Շահումյանի շրջանի տարածքում դեռևս շատ քիչ մարդ է ապրում: Այս հանգամանքը բացատրվում է Արցախի այս տարածքում տեղի ունեցած ազատագրական համառ մարտերի ու դրա հետևանքով բնակչության տեղաշարժերով: Մինչդեռ շրջանի բնական պայմանները, ռեսուրսները շատ նպաստավոր ու բազմազան են, որտեղ հնարավոր է ստեղծել ժամանակակից բազմաճյուղ խոշոր տնտեսություն:

Շրջանի վարչական կենտրոնը Քարվաճառ քաղաքն է, որի բնակչությունը 549 մարդ է:

Արևելքից շրջանը սահմանակից է Մարտակերտի, հարավից՝ Քաշաթաղի շրջաններին, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի ու Վայոց ձորի մարզերին: Հյուսիսային մասում Շահումյանի շրջանը սահմանակից է Ադրբեջանին դեռևս բռնակցված հայկական հողատարածքներում ձևավորված Դաշքեսանի ու Խանլարի շրջաններին:

Այժմյան Շահումյանի շրջանը զբաղեցնում է Ղարաբաղի հրաբխային գեղատեսիլ բարձրավանդակի զգալի մասը, որտեղ ձևավորվում է Արցախի խոշորագույն գետի՝ Թարթառի վերին հոսանքը: Հրաբխային այս բարձրավանդակը բնութագրվում է իր անզուգական բնական գեղեցկություններով: Այն հարուստ է բնական ռեսուրսներով, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես գունավոր բազմազան մետաղների հանքավայրերն ու երևակումները, հանքային ջրի պաշարները: Մետաղային ռեսուրսները հումքային խոշոր բազա են հեռանկարում այստեղ լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այստեղ գտնվող Տաքջուր (Իստիսու) հանքային աղբյուրների բազայի վրա կուրորտային ժամանակակից համալիր կազմակերպելու, ինչպես նաև հանքային ջրերի հզոր գործարանի կառուցման հիմնախնդիրները: Նշենք, որ այստեղի հանքային ջրի որակը հանրահայտ «Ջերմուկի» ջրի նմանակն է: Այս շրջանի բնական ռեկրեացիոն ռեսուրսները հրաշալի նախապայմաններ են զբոսաշրջության զարգացման համար: Իսկ հրաշալի, խոտառատ ալպյան, մարգագետինների ընդարձակ տարածությունները լայն նախապայմաններ են անասնապահության զարգացման համար:

Շահումյանի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 1260,0 հա, այդ թվում վարելահողերը՝ 1101,0 հա:

ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում այս շրջանի տեսակարար կշիռը ընդամենը 2% (2004 թ.) է: Սա աննշան թիվ է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ շրջանի նախապայմանները հատկապես գյուղատնտեսության բնագավառում այժմ էլ շատ լայն են: Այստեղ պայմանները շատ նպաստավոր են անասնապահության բոլոր ճյուղերի, հատկապես մանր եղջերավոր անասնապահության և մեղվաբուծության համար:

Շրջանի զարգացման գլխավոր նախապայմանը բնակեցումն է, գյուղերի վերակենդանացումն է: Այժմ շրջանի բնակչությունը կազմում է ԼՂՀ բնակչության միայն 1,7%–ը, իսկ հնարավորությունները շատ մեծ են:

2003 թ. տվյալներով՝ այստեղ կա 1 քաղաքային համայնք, գյուղական 49 համայնքներ: Շատ կարևոր հանգամանք է շրջանի սոցիալական կյանքի վերակենդանացումը այդ բնակավայրերում: 2002 թ. այստեղ կար ընդամե-

նը հանրակրթական 13 դպրոց, 1 հիվանդանոց, գյուղական բժշկական 1 ամբուլատորիա ու 14 բուժկետ:

7. ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ

Արցախի ազատագրումից հետո՝ 1994 թ. հուլիսին, նախկին Լաչինի, Ղուբալուի ու Զանգելանի շրջանների տարածքում ստեղծվեց *Քաշաթաղի* վարչական շրջանը: Ամբողջապես հայերով բնակեցված Արցախի անբաժանելի մասը հանդիսացող այդ տարածքը 1920–ական թթ. սկզբներին, երբ Արցախը բռնակցվել էր Ադրբեջանին, հայաթափվում էր, բնակեցվում քրդերով, իսկ հետո՝ թուրք ազերիներով և որպես առանձին վարչական շրջաններ մտցվում ոչ թե ԼՂԻՄ–ի, այլ անմիջապես Ադրբեջանի կազմի մեջ: Այդպիսով, այդ նեղ շերտով ամբողջապես հայաբնակ ԼՂԻՄ–ը անջատվեց մայր Հայաստանից: Ահա այդ տոհմիկ հայկական տարածքում էլ ձևավորվեց այժմյան Քաշաթաղի շրջանը:

Շրջանի տարածքը կազմում է 3404 կմ^2: Այն ընդգրկում է *Հագարու* գետի ավազանը: Արևելքից շրջանը սահմանակից է Ասկերանի ու Շուշիի շրջաններին, հարավ–արևելքից՝ Հադրութի շրջանին, իսկ արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզին (Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններին): Հյուսիսային մասում այն սահմանակից է Շահումյանի (Քարվաճառի) շրջանին:

Այսպիսով՝ Քաշաթաղի շրջանը սկսվում է Ղարաբաղի բարձրավանդակից, ընդգրկում է Հագարու գետի ամբողջ գեղատեսիլ ավազանը և ձգվում մինչև Արաքսի հովիտը:

Շրջանի բնակչությունը 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով 10281 մարդ է, որից քաղաքային՝ 2909 մարդ, գյուղական՝ 7232 մարդ:

Այս ընդարձակ շրջանում կա քաղաքային 3 համայնք (քաղաքներ՝ Բերձոր, Կովսական, Միջնավան) և գյուղական 102 բնակավայր (գյուղեր), որոնք միավորված են գյուղական 68 համայնքների մեջ:

Քաշաթաղի շրջանի վարչական կենտրոնը *Բերձոր* քաղաքն է (նախկին Լաչին): Բերձորը գտնվում է Գորիս–Ստեփանակերտ մայրուղու վրա, հայկական պատմական Հագարու գետի ձախ ափին, Ղարաբաղի լեռնաշղթայի հարավարևմտյան թփուտածածկ լանջերի վրա: 1990–ական թթ. սկզբներին տեղի ունեցած ազատագրական պատերազմի ժամանակ այս քաղաքը խիստ տուժել է, տների մեծ մասը ավերվել են:

Այժմ այն արագորեն վերականգնվում, բարեկարգվում և ասֆալտապատվում է: Այստեղ արդեն գործում են դպրոցները, մշակույթի և առողջապահական օջախները: 2000 թ. սկզբին այստեղ արդեն գործում էին 2 միջնակարգ, 1 երաժշտական, 1 գիշերօթիկ դպրոցներ:

1998 թ. մայիսին քաղաքի կենտրոնում՝ Գորիս–Ստեփանակերտ մայրուղու աջ մասում՝ շահագործման է հանձնվել բազալտակերտ *Ս. Համբարձում* եկեղեցին:

Բերձոր քաղաքը, 2003 թ. հունվարի 1–ի տվյալներով, ունի 2111 բնակիչ: Շրջանի 33 գյուղ բնակեցված է: Արդեն 1996–1997 ուստարում գործում էր հայկական 12 հանրակրթական դպրոց: Վերջին տվյալներով՝ շրջանի բնակչությունը հասնում է, ինչպես ասվել է, 10,3 հազարի: Այն արագորեն բնակեցվում է ԼՂՀ տարբեր շրջաններից և Հայաստանի Հանրապետությունից եկած բնակիչներով: Բնակիչները ամբողջապես հայեր են:

Քաշաթաղի շրջանի ռելիեֆը լեռնային է, մակերևույթը՝ խիստ կտրտված: Հյուսիսային մասում հարում է Ղարաբաղի (կամ Սյունիքի) հրաբխային բարձրավանդակին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հագարու գետի ու նրա աջակողմյան վտակ Աղավնո գետի հովիտները, որտեղ էլ տեղաբաշխված են շրջանի բնակավայրերի մեծ մասը: Այս գետերը բավականին ջրառատ են և ոչ միայն կարող են վճռական դեր խաղալ շրջանի այգեգործության, պտղաբուծության, բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման համար, այլև կարող են հեռանկարում խոշոր դեր խաղալ ամբողջ ԼՂՀ–ի ջրային հիմնահարցի լուծման գործում: Հագարու գետի կիրճը շատ հարմար է խոշոր ջրամբարի կառուցման համար, որը հնարավորություն կտա լուծելու ոռոգման, հիդրոէներգիայի արտադրության, ձկնաբուծության ու ռեկրեացիոն հիմնահարցերը:

Կլիմայական պայմանները *չոր մերձարևադարձային են:* Քանի որ տարածքի մեծ մասը լեռնային ու խիստ կտրտված է, շատ վայրերում՝ թփուտածածկ, ապա հողագործության համար նպաստավոր պայմաններ ունեն միայն նշված գետերի նեղ հովիտները: Մյուս ընդարձակ տարածքները, հատկապես բարձրադիր վայրերը, նպաստավոր են անասնապահության, հատկապես մանր եղջերավոր անասնապահության համար:

Հայկական կյանքով վերապրող այս շրջանը բնակիչների խիստ կարիք ունի: Այստեղ մշտական բնակություն հաստատած ամեն մեկին հատկացվում են տուն, հողատարածք, անասուններ և այլ արտոնություններ:

Հագարու գետի ավազանը կարող է դառնալ գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության և հանգստի մեծ հետաքրքրություն ներկայացնող ռեգիոն:

Քաշաթաղի շրջանը մայր Հայաստանը Արցախի հետ կապող կարևորագույն օղակն է: Շրջանի դերը անգնահատելի է հատկապես այն առումով, որ

նրա տարածքով է անցնում «Արցախի կյանքի ուղին», այն ավտոմայրուղին, որը կառուցվել է Համահայկական հիմնադրամով, և որի կառուցումը ավարտվել ու հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1998 թ. սեպտեմբերի 2–ին՝ ԼՂՀ–ի անկախության օրը: Վարչական ենթակայության առումով, առայժմ Քաշաթաղի շրջանի իրավասության համակարգի մեջ են մտցված նաև ազատագրված մյուս տարածքները՝ Ղուբաթլուի, Զանգելանի ու այլ տարածաշրջաններ: Այդ ամբողջ տարածքը, ինչպես նշվել է, ձգվում է Ղարաբաղի բարձրավանդակից մինչև Արաքսի հովիտը, որով ԼՂԻՄ–ը ադրբեջանական գաղութային տարիներին արհեստական կերպով անջատված էր մայր Հայաստանից:

Այս շրջանը ունի ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության զարգացման համար մեծ հնարավորություններ: Նրա գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 21736,9 հա, այդ թվում վարելահողերը՝ 11114,1 հա:

Առավել մեծ է շրջանի հնարավորությունները անասնապահության համար:

2002 թ. Քաշաթաղի շրջանի տեսակարար կշիռը ԼՂՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ կազմել է 14,9%: Սակայն շրջանի հնարավորությունները շատ ավելին են: Դեռևս շատ փոքր է արդյունաբերության տեսակարար կշիռը: 2002 թ. շրջանի տեսակարար կշիռը ԼՂՀ արդյունաբերության արտադրանքի ծավալում կազմել է միայն 4,3%:

2003 թ. հունվարի 1–ի դրությամբ՝ շրջանում արդեն գրանցված էր 10 տնտեսավարող սուբյեկտ, որից 7–ը՝ անհատ ձեռներեցներ: Նկատելիորեն վերակենդանանում է սոցիալական կյանքը: Արդեն 2002 թ. շրջանում գործում էր հանրակրթական 53 դպրոց, 2 երաժշտական դպրոց, գրադարան: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ վերականգնվում են նաև թուրք–ազերիների կողմից ավերված, թուրքացված հայկական տեղանունները՝ Բերձոր (Լաչին), Կովսական (Զանգելան), Միջնավան (Մինջևան) և այլք: Քաշաթաղի տարածաշրջանի հեռանկարային զարգացման համար խոշոր դեր կխաղա Հագարու և Աղավնո գետերի ռացիոնալ օգտագործումը: Բերձոր քաղաքի մոտ գտնվող Հագարու գետի հովիտը շատ հարմար է խոշոր ջրամբարի ու դրա հիման վրա նաև հիդրոէլեկտրակայանի կառուցման համար: Իսկ դրանք էլ վճռական դեր կխաղան արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար:

Իսկ շրջանի հատկապես հարավային մասը (Ղուբաթլուի ու Զանգելանի նախկին տարածաշրջանները) շատ ավելի հարմար են հացահատիկային և բանջարաբոստանային տնտեսության, ինչպես նաև այգեգործության ու պտղաբուծության զարգացման համար:

8.4 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ 272
8.5 ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ 276
8.6 ԼՈՌՈՒ ՄԱՐԶ 282
8.7 ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ 287
8.8 ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ 294
8.9 ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ 299
8.10 ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ 306
8.11 ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ 311

ԳԼՈՒԽ IX
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 317
9.1 ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 317
9.2 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ 336
9.3 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 345
9.4 ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 363
9.5 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 374
9.6 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 376
9.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 389
9.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ 402
9.9 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 408
9.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ 414
9.11 ԼՂՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 422
ԱՄԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ 422
ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ 424
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ 429
ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ 433
ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆ 435
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ 440
ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ 442

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՈԾԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բուհական ուսումնական ձեռնարկ

Հրատարակչության տնօրեն՝ Մաշա Մնացականյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝ Վիտալի Ասրինի
Սրբագրիչ՝ Նարինե Ներսիսյան

Պագրությունը՝ օֆսեթ
Չափը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 28 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300
Գինը՝ պայմանագրային

«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան 375051, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+374 1) 23 25 28
Ֆաքս (+374 1) 23 25 95
Էլ. փոստ info@zangak.am
Էլ. կայք՝ www.zangak.am